ՀԱՆԴԷՍ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
ԵՒ
ՊԱՏՄԱԿԱՆ

ՄՈՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.
1895

Дозволено цензурою. С.-Петербургъ, 5 февраля 1895 г.

Типогр. Х. Бархударянъ, Москва, Мясницкая, д. Ермаковыхъ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԵՐԵՍ.

I. ԴՈՆ-ԺՈՒԱՆ, *երգ առաջին*, *Լորդ Բայրընից, Թարգմ. Լ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ* 1

II. ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ «ՎԷՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԵՒ ԻՄ «ՍՕՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐԸ», *յիշող. ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑԻ* 93

III. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. 1) ԳԱՐՈՒՆ. 2) ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ. 3) ՄԱՐԳԱՐԷ (*Լերմօնտովից*). 4) ԹԷ ԻՄԱՆԱՑԻՐ. . . 5) ԿԱՐԵԿՑՈՒԹԻՒՆ. *ԳԷՈՐԳ ԴՈՌՈԽԵԱՆԻ* 105

IV. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ. Ա—Ժ. 111

V. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. 1) ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՐՕՏԸ. 2) ԳԻՐ. *ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ* 149

VI. ԼՈՒԿԻ-ԼԱՐԱՍ, *Դիմիտրիյ Բիկելասից. վէպիկ յունական ապստամբութեան ժամանակից. Մ. Բ.* 154

VII. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. 1) Ժ.Ժ. ՌՈՒՍՍՈՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ. 2) ՀԵՆՐԻԿՈՍ ԹՈՎՄԱՍ ԲՈՔԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ. 3) ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՎԲԻ ՏՕՆԻՆ և 4) ԿՆԴՈՒԿ ՊՕԶԱՏԻ և ՆՈՐԱ ՍԱՆՋՈՅԻ ՄԿԸՐՏՈՒԹԻՒՆԸ. *ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ* 242

VIII. ՊԱՏԱՍԽԱՆ ՎԱՂԵՄԻ ԸՆԿԵՐԻՍ ՆԱՄԱԿՆԵՐԻՆ. *ԱՆԴՐԷԱՍ* 251

IX. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ. ԹՈՌՄՈՒՄ Է ՔՆՔՈՅՇ... Գ. Մ. 284
X. ՄԱՃԿԱԼԻ ԵՐԳԸ. Զ. ԻՍԱՆԻ 285
XI. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ. ԻՍ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻ 289
XII. ՊՕՂՈՍ ԱՒԱԳԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ. Խ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ 319
XIII. ԾԽԱԿԱՆԱՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ. Մ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ 341
XIV. ՍԱԼԴԱՏՍԿԻ ԲԱԶԱՐԻ ՊՈՒԲԼԻՑԻՍՏԻՆ Մ. Բ. . 357
XV. ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ 368
XVI. ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ 369
XVII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՅԱՒԵԼՈՒԱԾ.

ՅԱՂԱԳՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՃԱՌ, ՄԻՔԱՅԷԼԻ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ 3



ԴՈՆ-ԺՈՒԱՆ

Difficile est proprie communia dicere.
Horatius.

ՆՈՒԷՐ.

I.

Բոլ Սուրթէյ, դու բանաստեղծ ես, և բանաստեղծ-դպրնեպսակ. դու ամբողջ բանակի ներկայացուցիչ ես, թէպէտև ներկայումս «Թորի» ես դարձել. ասենք, թէ վերջին ժամանակ սա մի շատ սովորական երևոյթ է: Իսկ այժմ, իմ ուխտադրուժ քերթող, այժմ ի՞նչ ես անում «Լեկիստներիդ» հետ, որոնք իմ կարծիքով, մեծ նմանութիւն են բերում մի կարկանդակում թխած «քսան և չորս տորդիկներին»:

II.

«Եւ երբ այս կարկանդակը կտրեցին—տորդիկները սկսան երգել, անասելի զուարճութիւն պատճառելով թագաւորին և տեղակալին». այս հնադարեան երգը և բերած նմանողութիւնս, կարծում եմ, տեղի են գալիս: Կոլրիջը

փորձեց օդումը սլանալ, բայց բաղէի նման, որի թռիչքին խառնում է գլխի զարդը, նա շփոթուեց սաստիկ, ձգտելով հասկացնել հասարակութեան իւր մետաֆիզիկան։

III.

Դու, Բոբ, յանդուգն ես. մի՞թէ չես տեսնում, որ անզօր ես քո ձայնով ուրիշ թռչունների ձայներին տիրել, պատկերացնելով այդպէս կարկանդակի միակ երգող տորդիկը։ Բաւական է, Բոբ, զուր է աշխատանքդ բնութիւնից վեր լինել, եթէ ոչ կընմանես այն թռչող ձկան, որ բերանը բաց ընկնում է օդից նաւի տախտակամածի վերայ։ Դու շատ բարձր ես թռչում, սիրելի իմ Բոբ, և ջրից դուրս շատ երկար ես մնում։

IV.

Վորդսվորտը իւր համառօտ «Excursion»-ի մէջ, որ հինգ հարիւր երեսից է բաղկացած, փորձեց ընծայել աշխարհին մի նոր սիստեմ, որ կարող է իմաստուններին անդամ խելքիցը հանել. միևնոյն ժամանակ նա հաւատացնում է, որ հէնց սորանումն է քերթողի արուեստը. սա շատ հաւանական կըլինէր տարուայ այն եղանակին, երբ շները սկսում են կատաղել և նա, որ կըհասկանայ Վորդսվորտին,—անշուշտ, ընդունակ կըլինի Բաբելայսոց աշտարակին մի նոր յարկ տալացնելու։

V.

Դուք, պարոններ, հեռացել էք և փակուել Կեսվիկում, երևի, հասարակութեան ամենալաւ մասից փախ-

չելու նպատակով, և այնտեղ ձեր մոքերը այնպէս էք միմեանց հետ յարմարեցրել, որ այժմ, իրաւ, համոզուած էք դուք, թէ քերթողների դափնիները լոկ ձեզ համար են հիւսուած. այս կարծիքը այնքան նեղ է և սխալական, որ ստիպում է ինձ 'ի սրտէ ձեզ ցանկանալ՝ լայնացնել ձեր բանականութեան լիճը մինչև Ովկիանոս:

VI.

Ոչ, թէև ինքնասիրութիւնից միայն դրդուած, ես երբէք չեմ կարող այդ կարծիքի լինել. ոչ, ձեր բոլոր փառքը անզօր է ներշնչել այդպիսի մի դաղափար, թէպէտև փառքի հետ, պէտք է ասած, դուք ձեռք էք բերել և ոսկի: Դուք ստացաք ձեր արդիւնքը, բայց մի՞թէ միայն սորա համար էր ձեր բոլոր ճիգը: Վարպետորոնը նստած է այժմ մոքստանը: Էհ, ամենքդ էլ բաւականին կեղտոտ էք, թէպէտև բանաստեղծներ էք կոչւում, և նստած էք անմահ բլրի կատարին:

VII.

Դափնեայ պսակը քողարկում է ձեր լկտի ճակատները, և, կարելի է, երեսներիդ վերայ ճնացած վերջին խիղճը: Դէհ, պինդ պահեցէք ձեր դափնիքը—ես չեմ նախանձում ոչ նոցա պատուներին և ոչ տերևներին: Իսկ որ դուք ձգտում էք փառք և անուն ստանալ,—բայց է ճանապարհը ամենքի համար և մատչելի նոցա, որոնք ղղում են իրանց մէջ բանաստեղծական բոց: Սկոտա, Բոջերս, Կեմբել, Մուր, Կրաբբէն — ամենքն էլ մրցիկու են ձեզ հետ հեատաղայ սերնդների դատաստանի առաջ:

VIII.

Իսկ իմ Մուսան ոտով է անցնում իւր ճանապարհը և բնաւին ցանկութիւն չունի ձեզ հետ միասին Պեղաս հեծնելու։ Աստուած տայ ձեզ, որքան կարելի է, մեծ անուն... և նորա հետ միասին տաղանդ, որից զուրկ էք դուք։ Իմայէք միայն, որ իսկական քերթողը ոչինչ չէ կորցնում գովասանք տալով իւր եղբայրակցին — և որ գանգատը ժամանակակիցների անտարբերութեան վերայ մի շատ վատ միջոց է՝ ապագայում փառքի արժանանալու։

IX.

Նա, որ ձգտում է իւր դափնիքը աւանդել հետագայ սերնդին, որ սովորաբար գրեթէ չէ յայտնում իւր իրաւունքները այս կտակի վերայ, նա շատ խիստ է սրխարվում առատ բերքին սպասելով, թէպէտև, ճշմարիտ է, ժամանակի լայնածաւալ ովկիանոսի միջից երբեմն ելևում են մի-մի հսկաներ հանճարի, իսկ մեծամասնութիւնը անհետանում է, Աստուած գիտէ, ուր, որովհետև նա է միայն, որ կարող է այդ իմանալ։

X.

Եթէ Միլտոնը չար լեզուների հալածանքներին ենթարկուելով, արտասուալից դիմում էր ժամանակի անաչառ միջնորդութեան և եթէ վերջինը, որի վրէժխնդրութիւնը սոսկալի է, նզովեց նորա թշնամիներին, Միլտոնի անունը զուգաւորելով «վսեմութեան» հետ—պատճառն էր, որ Միլտոնը երբէք չապականեց իւր անբիծ հոգին կեղտոտ երգերով և իւր քանքարը յանցանքի գործիք

չըշինեց. նա չանարգեց հօրը՝ որդուն գովելու համար, և մեռաւ մաքուր, ինչպէս ապրած էր՝—բռնաւորների մշտական ոխերիմ թշնամի լինելով։

XI.

Կարծում ես, որ նա, այդ կուրացած ծերուկը, եթէ հնար լինէր ղերեզմանիցը կանգնել, նման Սամուէլին, որի մարգարէութիւնը թագաւորների արիւնն էր սառցնում. եթէ նա կարողանար վերսին շունչ ստանալ, մազերը սպիտակած տարիքից և վշից, աչքերը լուսազուրկ, իւր անխիղճ զաւակների հակոդութեան մատնած, գունատ և չքաւոր ղէմքով, կարծում ես, որ նա խունկ կրվառէր սուլթանների առաջ, կարծում ես, որ նա գլուխը կկորացնէր Կաստլրիի, այդ մտաւորական նելքինու առաջ։

XII.

Սառնասիրտ եղեռնագործ, անդորր և նենգ ղէմքով. քո քնքոյշ և մատաղ ձեռքերը արիւնաթաթախ են եղել Իրլանդիայի վէրքերից, և այժմ ասպարէզդ լայնացնելու համար, արիւնածարաւ դործունէութիւնդ Անգղիա ես տեղափոխել. ո, անարդ գործիք և բռնաւորների սարուկ, քեզ տուած է միայն այնչափ քանքար, որչափ բաւական է, ուրիշների ձեռքով կռած շղթաներին մի քանի օղեր աւելացնելու և թոյնը վաղուց պատրաստած զոհերիդ առաջարկելու։

XIII.

Ոհ, անմիտ և տխմար հրապարակախօս. Ճառերդ այնքան չնչին են և սառ, որ մինչև անգամ շողոքորթներդ

չեն համարձակում գովաբանել նոցա և քո թշնամիք, իսկ քո թշնամիք՝ բոլոր ազգութիւններն են, քեզ չեն ընծայում նաև մի թեթև ժպիտ։ Եւ ոչ մի կայծ չփայլեց այդ Իքսիոնի երկանաքարից, որ անընդհատ պտտուելով, պատկերացնում է աշխարհի առաջ անվերջ աշխատանք, անվերջ աղետի և յարատև շարժման դաղափարը։

XIV.

Անարժան գործաւոր, նաև իւր զազրելի արուեստում. որ թէպէտև միշտ կարում է և կարտում, բայց և այնպէս թողնում է ամեն տեղ ծակեր իւր իշխաններին սարսափեցնելու. ազգերի ստրկութիւն, մոքի ճնշում, դաւերի և կոնդրեսների յօրինում. նա է այդ ամենի միակ պատճառը։ Կապանքների մատակարար մարդկութեան համար, ճարպիկ նորոգիչ՝ հնացած շղթաների, թող արդիւնքդ լինի՝ պատուահաս Աստուծոյ և ատելութիւն մարդկանց։

XV.

Այս անշունչ առարկան (կարող է նա մարդ կոչուել, եթէ հոգին համապատասխան է մարմնին) իւր մաշուած ուղեղով քաջ դիտէ երկու բան՝ ծառայել և կապանքներ ամրացնել, կարծելով, թէ այն շղթան, որին ինքն համբերութեամբ է տանում, կարող է տանել և ամբողջ մարդկութիւնը։ Եւարոպիոս՝ բաղմաթիւ տիրաց, կոյր օտարի արժանեաց առաջ, որպէս կոյր է աղատութեան, կոյր է խելքի և իմաստութեան վերաբերմամբ։ Մարդ աներկիւղ, որովհետև զգայողութիւնը չէ կարող ստուգի տակ մընալ. անդամ քաջ լինելով,—նա մոլի է մնում։

XVI.

Ո՞ւր գնամ, ո՞ւր փախչեմ նորա շղթաները չտեսնելու համար, որոնց համբերել համաձայնելու չեմ երբէք։ Իտալիա՞, —աւա՜ղ, հռոմէական հոգիդ մի վայրկեան յարուցուած, վերստին ճնշուեցաւ այս անարդ քաղաքական գործիքի դաւերով. ո՜, քո շղթաների ձայնը, որպէս և Իրլանդիայի վէրքերը, հնչում են և գոչում աւելի ևս բարձր քան ես։ Եւրոպան ունի ստրուկներ, դաշնակից թագաւորներ, զօրքեր, և վերջապէս քեզ, Սուլթէյ, որ այդ ամենը փառաւորում ես քո անշնորհ երգերում։

XVII.

Այնու ամենայնիւ, քեզ եմ նուիրում, զափնեպսակ պօէտ, քեզ եմ նուիրում վիպասանութիւնս այս արձակ և ճշմարիտ տողերով. եթէ ես չեմ շողոքորթում, պատճառն այն է, որ պահպանել եմ դեռ իմ «կապոյտ և դեղին գոյները». իմ քաղաքական ուղղութիւնը վերջնականապէս դեռ չէ որոշուել, թէպէտև ուխտապրժութիւնը մեր օրերում այնքան սովորական է, որ համոզմունքների պահպանութիւնը հաւասար է Հերկուլեսի սխրագործութեան. ի՞նչ կ'ասես, իմ Թորի, իմ ուլտրա-ուխտապրուժ Յուլիանոս։

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ.

I.

Ինձ պակաս է հերոս, մի անսովոր երևոյթ, նամանաւանդ մեր ժամանակ, երբ իւրաքանչիւր տարին, իւրաքանչիւր ամիսը բերում է իւր հետ հերոսների մեծ քանակութիւն. բայց, աւաղ, լրագրներում տպած ճոխ և բազմաթիւ գովաբանութիւնները կարդալուց յետոյ, դըժգոհութեամբ տեսնում ենք, որ նոցանից և ոչ մէկը ճըշմարիտ հերոս չէ: Ոչ, ես չեմ երգելու այս շարքի հերոսներին, ես կ՝ընտրեմ մեր վաղեմի բարեկամ Դոն-Ժուանին. ամենքս, անշուշտ, տեսել ենք թատրոնում, ինչպէս նա, իւր ժամանակից մի քիչ առաջ, սատանայի ձեռքը ընկաւ:

II.

Վերնոն[1], արիւնարբու Կումբերլանդ, Վոլֆ, Հավկէ, Իշխան Ֆերդինանդ, Գրանբի, Բուրդուան, Կեպպել, Հովէ, Լաւ էին, թէ վատ, ամենքն արժանացան ազգի պարծանքն դառնալ, ինչպէս մեր օրերում Վելլինգտոնը. ամենքն էլ փառքի յետևից ընկած նմանողութիւն բերեցին Բանկի թագաժառանգներին և... մի էգից ծագած ինն խոճկոր-

---

[1] Ցայտնի անգղիացւոց ցամաքային և ծովային զօրապետ էր:

ներին[1]։ Ֆրանսիայում նոյնպէս Բօնապարտէն և Դիւմուրիէն իրանց գործերով լցրել են «Մոնիտորի» և «Կուրիերի» սիւնեակները։

III.

Բարնաւ, Բրիսսօ, Կոնդորսէ, Մարատ, Պէտիօն, Կրլօսոս, Դանտոն, Միրաբօ, Լաֆայետ, ամենքդ գիտէք, Ֆրանսիացիք են եղել և միևնոյն ժամանակ նշանաւոր անձինք։ Կան և շատ ուրիշ անուններ, որոնք մոռացութեան դեռ չեն ենթարկուել, օրինակ՝ Ժուբէր, Հօշ, Մարսօ, Լան, Դէգէ, Մօրօ և այլ զօրականներ իւր ժամանակին հռչակուած, բայց սոցա անունները շատ վատ են կապվում չափերիս հետ։

IV.

Նելսոնը մի ժամանակ Մեծ Բրիտանիայի համար պատերազմի աստուած էր. նորա անունը, անշուշտ, դեռ երկար պիտի հնչէ, բայց աւաղ, յեղյեղուկ են հանգամանքները, և այժմ այլ ևս չեն յիշում Ցրանֆայլգարը՝ այս անունը հանդարտ ամփոփուած է մեր հերոսի փոշու հետ։ Այժմ ցամաքային զօրքերն են գլխաւոր դերը խաղում, զժգոհութեան առիթ տալով ծովային հերոսներին, նամանաւանդ, որ մեր թագաւորն էլ զբաղուած է միայն ցամաքային զօրքերի բարելաւութեամբ, բնաւին մոռանալով Դունկանի, Նելսոնի, Հովէի և Ջերվիրսի[2] սխրագործութիւնները։

---

[1] «Մակբէթի» կախարդները մորթելով խոզին, որ կլանում է իւր ինն խոճկորներին, հանդէս են հանում զինուորուած գլուխ—պատկեր զինուորական փառքի—և Դունկանին ժառանգող ինն թագաւորներ։

[2] Երևելի անգղիացւոց ծովապետներ։

V.

Ագամեմնոնից առաջ, անշուշտ, եղել են քաջամարտիկ, նորանից էլ յետոյ սակաւաթիւ չեն քաջ, իմաստուն և պատուարժան զօրապետներ Միկենի թագաւորին նման, թէպէտև ոչ կատարելապէս. բայց, աւաղ, նոցա անունները չեն զարդարում բանաստեղծների էջերը և այս պատճառով վաղուց արդէն մոռացութեան են ենթարկուել: Չկարծէք, որ ես ցանկութիւն ունեմ նոցա փառքը նսեմացնել—Աստուած մի՛ արասցէ, ո՛չ, յաւով պիտի խոստովանեմ, որ արդի դարում հաղիւ թէ դանէք մի հերոս վիպասանութեան, այսինքն՝ այս զրուածիս յարմար. և ահա ինչու իմ ընարածս՝ Դոն-Ժուանն է լինելու:

VI.

Գրեթէ բոլոր վիպասանները սովորութիւն են արել սկսել իրանց պատմութիւնը in medias res (անցքերի միջից). այդպէս է զիւցազնական երկասիրութիւնների հոսանքը, որ աւանդել է մեզ Հոմերոսը, և միայն յետոյ հերոսը ձեզ համբաւում է այն անցքերը, որոնք սկզբից առաջ են եղել: Եւ ահա, առատ ճաշից յետ, նա բաղմում է յարմար կերպով իւր սիրածի կողքին, անշուշտ, սքանչելի մի տեղում՝ արքունեաց, պարտիզի, դրախտի կամ այրու մէջ, որ հիւրանոց պիտի ներկայացնէ այդ երջանիկ զոյգին:

VII.

Այդպէս է ընդհանուրի շաւիղը, բայց ոչ իմ. ես աւելի կըհաւանեմ սկսել հէնց սկզբից և սորանով վիպասանութեան կանոնաւորութիւնը պահպանել և աննե-

ըելի սխալներից խորշել։ Ուրեմն ես կըսկսեմ խօսքս (վախենում եմ միայն, մի՛ զուցէ ժամեր կորցնեմ չափը չափի հետ յարմարեցնելու), խօսքս, որ Ժուանի ծնողներին է վերաբերուելու, եթէ, ի հարկէ, այդպէս է ձեր ցանկութիւնը։

VIII.

Նա ծնաւ Սեվիլլում—սքանչելի քաղաք, հռչակուած իւր նարինջներով և կանանց գեղեցկութեամբ[1]։ «Թշուառ է այն մարդը, որ չէ տեսած Սեվիլլը», ասում է ժողովրդական առածը[2]. ես էլ ոտից մինչև գլուխ այդ կարծիքի եմ։ Սպանիայում հաղիւ թէ կայ մի ուրիշ քաղաք այդքան գեղեցիկ. Կապիքսը կարելի է... բայց այս հարցը մի ուրիշ անգամ։ Ժուանի ծնողները ապրում էին այն գետի ափերում, այն աղնիւ գետի, որ կոչվում է Գվադալկվիվիր։

IX.

Նորա հայրը կոչւում էր Խօզէ... 'ի հարկէ Դոն, մի իսկական հիդալգո... Նորա երակների արիւնին չէր խառնուել ոչ մի մարտական կամ եբրայական կաթիլ. նա ամենահին տոհմից էր և երբէք աւելի աղնիւ ասպետ չին

---

[1] «Սեվիլլայի կանայքը մեծամասնութեամբ շատ գեղեցիկ են՝ խոշոր սև աչքեր և մի գնացք, որի վայելչութիւնը դժուար է երևակայել մինչև անգամ. սորան աւելացրէք գեղեցիկ և միևնոյն ժամանակ հասարակ զգեստը։ Նոցա արտաքին դէմքը հրապուրիչ է, նոցա մտքի, նոցա կեանքի միակ գրաղմունքը սէրն է։ Դքսուհին կրթուած է այնչափ, որչափ ռամկուհին, և ռամկուհին հաւասար է դքսուհուն իւր վայելուչ ձևերով». Բայրոն։—[2] Quien no ha vista Sevilla
No ha vista maravilla.

չէր հեծած, կամ միանգամ հեծած ձիուց չէր վայր իջած—ահա ի՛նչ նշանաւոր մարդ էր Դոն-Խօղէն, որից կրծնի ծուանը, վերջինից էլ կրծնի... բայց համբերութիւն, այդ յետոյ կ՚իմանաք... և այդպէս, ես շարունակում եմ։

X.

Նորա մայրը մի գիտնական կին էր, հռչակուած իւր քաջ ծանօթութեամբ քրիստոնեայ աղղերի յայտնի գիտութեանց իւրաքանչիւր ճիւղի հետ։ Նորա առաքինութիւնը հաւասար էր խելքին, նորա քանքարները ամենահար էին անում ամենահմուտ մարդկանց. ամենամեղմ բնութեան մարդիկ մինչև անգամ զաղտնի նախանձ էին զգում, տեսնելով նորա գերազանցութիւնը։

XI.

Նորա յիշողութիւնը անսահման էր. նա անգիր գիտէր ամբողջ Կալդերօնը և գրեթէ բոլոր Լոպէ-դը-Վէգան, այնպէս որ եթէ գերասանը սխալուէր իւր դերում, այդ կինը կարող էր յուշարարի գիրքը փոխարինել։ Ֆէլինագլի[1] գիտութիւնը նորա համար մի անպէտք գիտութիւն էր և ինքն Ֆէլինագլը ստիպուած էր իւր խանութը փակել, խոստովանելով, որ նա երբէք հասնելու չէ այն յիշողութեան, որ ընարել էր բնակարան Դոննա Ինեցի գլուխը։

XII.

Մաթեմաթիկան նորա սիրած գիտութիւնն էր[2], մե-

---

[1] Գեզոր ֆօն Ֆէլինագլ—յայտնի ուսուցիչ «Մնեմոնիկայի», յիշատակագիտութեան։—[2] Լէդի Բայրընը գեղեցիկ զաղափարների տէր

ծահոգութիւնը՝ նորա առաջին առաքինութիւն։ Նորա խելքը (որի մասին, պէտք է ասած, մեծ կարծիք ունէր) իսկ ատտիկական էր, խօսքերը միանգամայն մութ և խորհրդաւոր. կարճ ասած, նա ամէն բանի մէջ ներկայացնում էր այն, ինչ որ ես ասում եմ «հրաշք»։ Նորա առաւօտեան հագուստը կանիճասից էր, երեկոյեանը՝ մետաքսից, ամառը՝ մի նրբաթել կտաւից... և այլ կտաւներից, որոնց վերայ կանգնել այժմ չունեմ ցանկութիւն։

XIII.

Նա գիտէր լատիներէն—այսինքն՝ Pater noster, և յունարէն, անշուշտ, այբուբէն. ժամանակ առ ժամանակ նա կարդում էր ֆրանսերէն վէպեր, թէպէտև այդ լեզուում այնքան էլ հմուտ չէր. իսկ սպաներէնը՝ նորա մայրենի լեզուն՝ վերին արհամարհանքի մէջ էր գտնվում, և ահա ինչու նորա խօսակցութիւնը միշտ մի քիչ խրթին էր, նորա մտքերը՝ թէօրեմաներ էին, խօսքերը՝ հանելուկներ, ասես թէ, նորա կարծիքով, խօսքի մթութիւնը մտքին ազնուութիւն էր տալիս։

XIV.

Նա սիրում էր անգլիերէնը և եբրայերէնը և այդ երկու լեզուների մէջ մի տարօրինակ մտերմութիւն էր գտնում, պնդելով իւր կարծիքը սուրբ գրքերից առած քանի մի քաղուածներով։ Ես թողնում եմ նորա տպաւորությունները դիւրահաւատ մարդկանց, աւելացնելու եմ մի-

---

էր, բայց երբէք չէր կարող նոցա պարզ արտայայտել. նորա նամակները դժուարամատչելի էին և յաճախ անհասկանալի. նա շատ անգամ ասում էր, որ նորա գաղափարները մաթեմատիկայի նման ճիշտ և անհերքելի են։

այն, որ յաճախ իմ առաջ նա յայտնած է եղել (թող կարծեն, ինչ որ կամենան), որ երբայեցւոց «ես եմ» խօսքերը տարօրինակ կերպով միշտ առաջ են դրած լինում անդղիացւոց damn խօսքին[1]։

XV.

Ուրիշ կանանց լեղուն է ծառայում, բայց Դոննա Ինեցի հայեացքը մարմնացած զրոյց էր, նորա ամեն մի աչքը՝ հրահանգ, նորա ճակատը՝ կենդանի քարոզ. կեանքի բոլոր դժուար հարցերը նա ինքն էր լուծում առանց դիմելու ուրիշների օգնութեան, ինչպէս հանդուցեալ խեղճ Սամուէլ Ռոմիլլին, օրէնքների թարգմանը և պետական գործիչը[2], որի ինքնասպանութիւնը մի տարօրինակ երեւոյթ էր։ Տխուր օրինակ, նամանաւանդ տխուր, որ «ամենը ունայնութիւն է» մեր թշուառ աշխարհում։ (Դատաստանը վճռեց, որ նա խելագար էր)։

XVI.

Մի խօսքով, նա մաթեմատիկայի կենդանի ձեռնարկ էր. նորա մէջ էին ամփոփուած միաս Էջեվորտի նոր վէպերը, կամ միաս Տրէմմերի դաստիարակիչ դրուագները, կամ սիրականներին խնդրող «Ցելեբսի կինը»[3]։ Բարոյա-

---

[1] «Ես եմ, որ էնն»,—ասում է Աստուած,—անդղերէն՝ ես եմ Աստուած God am, իսկ Goddamn նշանակում է՝ Թող Աստուած ինձ սպանէ, դատապարտէ։ — [2] Սամուէլ Ռոմիլլին հոկտեմբերի 29-ին գրկուեց իւր ամուսնուց, իսկ նոյեմբերի 2-ին ինքնասպանութիւնով վերջացրեց իւր կեանքը։ Բայրընի նամակներից երևում է, որ այդ մարդը չար դեր է խաղացել նորա ընտանեկան գործերում.—բանաստեղծը անուանում է նորան իւր սպանիչ։—[3] Մէրի Էջեվորտ, Տրեմեր և Աննա Մոր իւր ժամանակին յայտնի էին իբրև հեղինակներ, այժմ մոռացուած։

կանութիւնը լիապէս էր պատկերացել նորա մէջ և նախանձը չէր կարող ոչ մի բիծ դնել այս զոհարի պէս փայլող արարածի մէջ. նա ուրիշներին էր թողել քնքոյշ սեռի բոլոր թերութիւնները. նա չունէր ոչ մի պակասութիւն... (և այս, կարծում եմ ես, բոլոր պակասութիւններից ամենավատթարն է)։

XVII.

Ո, նա կատարելութիւն էր և ոչ մէկը արդի սրբուհիներից չէր կարող հաւասարուել նորա հետ. նա այնքան վեր էր դժոխքի գրաւիչ փորձանքներից, որ սպասաւոր հրեշտակը վաղուց էր հեռացել նորանից անտեղի դնելով իւր հսկողութիւնը նոցա ամբիծ հոգու վերայ։ Նորա ամենաչնչին շարժուածքը այնպէս էր կանոնաւորուած, ինչպէս Հարրիսոնի գործարանից դուրս եկած ամենաճիշտ ժամացոյցը. և ոչինչ աշխարհում չէր կարող վեր լինել նորա առաքինութիւնից, բացի քեզանից, ո՛վ անզուգական Մակասսարի ձէթ։

XVIII.

Ուրեմն նա կատարելութիւն էր, բայց, աւա՜ղ, կատարելութիւնը մի անտեղի բան է մեր չար աշխարհում, ուր մեր նախածնողները, երբ սիրոյ ճաշակը առան, տարաբախտ եղան առաջին բնակարանից. այնտեղ ամէն ինչ խաղաղութիւն, անմեղութիւն և երջանկութիւն էր շնչում (հետաքրքիր է իմանալ, ի՞նչպէս էին անցնում օրուայ տասներկու ժամերը)։—Եւ այսպէս, Դոն-Խուանն Եւայի իսկական պատկերը լինելով, քաղում էր ծաղիկներ այստեղ և այնտեղ, 'ի հարկէ առանց իւր կնոջ թոյլ տուութեան։

XIX.

Նա այն անհոգ արարածներից էր, որոնք, զուրկ զիտութեան՝ ճաշակից, միշտ հեռու են քաշւում զիտնականներից. նա հանգիստ սրտով գնում էր, ուր կամենում, շատ չմտածելով, արդեօք ի՞նչ կ'ասի նորա սիրելի տիկինը: Աշխարհը, որ ըստ սովորութեան, մի ինչ որ զուարճութիւն է գտնում տէրութիւնների կամ ընտանիների կործանման մէջ, աշխարհը՝ մէկ բերանից միւս բերան պատմում էր, թէ Դ..Խօզէն սիրական ունի: Ոմանք պնդում էին, որ մէկ չէ, երկուսն ունի, իսկ ես կարծում եմ, որ մէկն էլ շատ բաւական է ընտանեկան կեանքի խաղաղութիւնը վրդովելու:

XX.

Դոննա Ինեսը շատ բարձր էր դասում իւր անձնաւորութիւնը. սրբուհի է այն կինը, որ իւր ամուսնուց բացի արհամարհանքից ոչինչ չէ տեսնում. իրաւ որ սրբուհի էր Դոննա Ինեսը, թէպէտև միւս կողմից սատանան էր հրեի նստած նորա ղլխում, որովհետև շատ անդամ, լոկ կասկածից դրդուած, նա օգտվում էր ամենաչնչին դէպքից իւր տէրին և ամուսնուն օրոգայթի մէջ ձգելու:

XXI.

Վերջինը շատ հեշտ կարող էր պատահել մի մարդու հետ, որ յաճախ յանցաւոր էր լինում և երբէք՝ զղջոյշ: Ամենաղդատ անդամ մարդկանց համար լինում են բոպէներ, ժամեր, օրեր, երբ նոքա այնքան քիչ են պատրաստ անպատեհ դէպքերին, որ նոցա կանանց հովահարի մի հարուածը բաւական է լինում նոցա տեղն ու տեղը

դնելու. և խիստ են երբեմն կանանց հարուածները. ես ինքս ականատես եմ եղել, ինչպէս հովահարները փշրուել են և ի՞նչ զեղեցիկ ձեռքերում... ե՞րբ և ինչո՞ւ, այդ իմանալու չեն:

XXII.

Թշուառ են այն գիտուն օրիորդները, որոնց պատկում են տգէտ մարդկանց հետ կամ այնպիսիների, որոնք, թէև աղնուատոհմ են և բաւականաչափ կրթուած, այնու ամենայնիւ յօրանջում են դիտնական խօսակցութիւններից. այժմ ցանկութիւն չունեմ կանդնել այս առարկայի վերայ. ես ինքս մի հասարակ մարդ եմ և միևնոյն ժամանակ ազատ ամուսնական լուծից, բայց անկեղծ ասացէ՛ք, դո՛ւք, որ գիտուն կանանց ամուսիններ էք, չէ՞ որ նոքա նմանողութիւն են բերում այն հաւերին, որոնք աքաղաղին են դարկում:

XXIII.

Դոն-Խօղէն և նորա ամուսինը անդադար կռուի և խռովութեան մէջ էին. ի՞նչ էր պատճառը — բացատրել ոչ ոք չէ կարող, թէպէտև հազար ու մէկ մարդ յայտնել էր ցանկութիւն այս գործին միջամտել: Այդ հարցը ոչ նոցա բանն է, ոչ էլ իմս. ես ասում եմ այն գարշելի ախտը, որ հետաքրքրութիւն է կոչվում. բայց եթէ կայ մի բան, ուր չկայ ինձ հաւատար, այդ բարեկամներիս տան մէջ խաղաղութիւն մտցնելն է, նամանաւանդ, որ ինքս ազատ եմ ամեն ընտանեկան հոգսերից:

XXIV.

Եւ ահա լի ամենամաքուր ձգտումներով՝ ես ծառայութիւնս առաջարկեցի վերջ դնել նոցա երկպառակու-

թեանը, բայց, աւաղ, ընդունելութիւնը բարեկամական չէր. սատանան էր, երևի, մտել նոցա մէջ, որովհետև երբէք ինձ չէր յաջողում նոցա տանը դտնել. ճշմարիտ է, դռնապանը վերջը ինձ յայտնեց... Է՛հ, ինչո՞ւ յիշել. բայց ամենից վատը այն էր, որ մի օր փոքրիկ Ժուանը, ջղդուշացնելով, դլխիս վերայ թափեց մի ինչ որ կեղտոտ ջուր։

XXV.

Փոքրիկ Ժուանը մի չար տղայ էր դանդուր մազերով, մի աւազակ, մի խորամանկ կապիկ հէնց ծնած օրից. նորա ծնողները եթէ մի բանում հաշտ էին,—այդ փոքրիկին երես տալու դործում. եթէ նոքա աւելի խորամիտ լինէին՝ փոխանակ վիճելու և կռուելու, կ'ուղարկէին փոքրիկին դպրոց, կամ մարակի համը կ'իմացնէին՝ կեանքի հետ աւելի սերտ ծանօթացնելու։

XXVI.

Տխուր էր անցնում ամուսինների կեանքը. ապահարզան էին փափագում նոքա, թէ մէկը միւսի մահին էր սպասում,—յայտնի չէ, թէև արտաքուստ նոքա ձևացնում էին մի հաշտ և սիրալիր ամուսնական զոյդ, ինչպէս պէտք է անել ամեն comme il faut մարդկանց. բայց, դժբախտաբար, կրակը, որ ըստ երևոյթին հանդած էր, բորբոքուեց մի օր և այնպէ՛ս, որ այլ ևս չմնաց ոչ մի կասկած գործի էութեան մասին։

XXVII.

Ինեցը մի գեղեցիկ օր հրաւիրում է իւր մօտ գեղագործներին և բժշկապետներին և սկսում է պնդել, որ նորա

խեղճ մարդը ցնորուել է[1]. բայց որովհետև Խօղէի խոհականութիւնը յաճախ էր պարզ երևում, վերջը նա բաւական համարեց յայտնել միայն, որ նորա ամուսինը մի չար սրտի տէր է. իսկ երբ նորանից ապացոյցներ պահանջեցին, չըկարողացաւ և ոչ մէկը տալ: Այնու ամենայնիւ Ինեցը կրկնում էր, որ այս էր իսկ պահանջում նորա պարտքը Աստուծոյ և մերձաւորների առաջ. վերջին խօսքերը տարօրինակ երևեցան:

XXVIII.

Նա մի յիշատակարան ունէր, ուր գրած էին Դոն-Խօղէի բոլոր մեղքերը. նա ցոյց տուեց մի քանի երեսներ, կարդաց մի քանի նամակներ, որ պարզ ապացուցանում էին ամուսնու յանցաւորութիւնը. «վերջապէս, վկայ է ամբողջ քաղաքը, և վկայ անհերքելի՛, նորա մեծ մայրը» (որի ղլուխը վաղուց էր խառնուել): Նոքա, որոնք բախտ ունեցան լսել անմիջապէս այս ապացոյցները, կրկնեցին քաղաքում, սկզբում պաշտպան նորան լինելով, իսկ յետոյ քննիչ և դատաւոր. ոմանք ղբաղուելու համար, ոմանք իրանց հինաւուրց վրէժը հանելու:

XXIX.

Եւ այս կինը—օրինակ քաղցրութեան և բարեսրտութեան—այնպիսի համբերութեամբ տարաւ իւր ընտանեկան խաչը, ինչպէս Սպարտացի կանայքը, որոնք ամուսինների մահուան լուրը լսելով, ողնիւ երդում էին տալիս այլ ևս չըյիշել նոցա անունները: Ինեցը այնքան անվրդով էր ձևանում, երբ նորա ականջին հասնում էին Դ.

[1] Լէդի Բայրընը մի նամակում խոստովանում է Թոմաս Մուրին, որ նորա ամուսինը ցնորուածի տպաւորութիւն է թողնում:

Խօղէի մասին քաղաքում տարածուած լուրերը, և այնքան քաջ և աղնիւ էր տանում իւր տխուր վիճակ, որ ամենքը զարմացած բացականչում էին. «ի՛նչ մեծահոգութիւն»։

XXX.

Ախ, փիլիսոփայական է, անշուշտ, այն սառնասրտութիւնը, որով մեր նախկին բարեկամները լուռ համբերում են, երբ աշխարհը թափում է մեր վերայ իւր անէծքն ու նզովը։ Քաղցր է մեծահոգի ձևանալ, երբ մանաւանդ մարդս հասել է իւր դաղանի ձգտումներին. և իրաւ, բարեմիտ մարդը մեղաւոր չէ. ոչ պատասխանատու այն բանի համար, որին օրէնսդէտները կ'ասեն malus animus. վրէժխնդրութիւնը, 'ի հարկէ, առաքինութեան գործ չէ. բայց ուրիշ ի՞նչ անել, եթէ ձեզ վիրաւորում են. իմացէ՛ք միայն, այս դէպքում մեղաւորը ես չեմ։

XXXI.

Եւ ապա եթէ մեր ընտանեկան երկպառակութիւնը յարուցանում է դրացի կանանց մէջ հաղար ու մէկ փոշով ծածկած զրոյցներ, զարդարած երկու-երեք նոր ստութիւններով, իրաւունք ունէ՞ք ինձ մեղադրել, կամ մի ուրիշին. այս զրոյցները սովորաբար ստացել են արդէն պատմութեան վիճակ և յեռոյ, տարօրինակ և բարեխրատ երևոյթ, — նոքա շատ անգամ փոխանակ ստուեր ձգելու մեր վերայ, աւելի ևս մեզ վերադասում են հասարակութեան կարծիքում, իսկ վերջինը մեր ամենօրեայ փափաքն է. ես կարծում եմ, որ գիտութիւնն էլ կարող է օգտուել մեր այս վերանորոգմամբ. լոյս տեսնող խայտառակութիւնները ներկայացնում են մի հետաքրքիր նիւթ դատաստանական քննութեան համար։

XXXII.

Ամուսինների բարեկամները փորձեցին նոցա հաշտեցնել, ծնողներն էլ կամեցան իրանց կողմից միջամտել, բայց, աւաղ, նոքա գործին տուին աւելի վատ ընթացք (դժուար է որոշել, ո՞ւմ է պատկանում հաշտարարի դերը այս տեսակ դէպքերում.) ինչ ինձ է վերաբերում, հաղիւ թէ կարող եմ բարեմիտ լինել՝ թէ դէպի մուերիմները, թէ դէպի ծնողները: Իրաւաբանները բոլոր ջանք գործ դրին պատկը լուծելու, բայց, դժբախտաբար, Դոն-Խօղէն մեռաւ, երբ նոքա դեռ նոր էին ստացել մի փոքրիկ գումար դատաստանի առաջիկայ ծախսերի համար:

XXXIII.

Մեռա՞ւ նա, և ափսո՞ս, որ մեռաւ, ասում եմ ես, որովհետև այն լուրերից, որ ես կարողացայ քաղել դատաստանական գործերում հմուտ մարդկանցից (թէպէտև վերոյիշեալ մարդիկ սիրում են գործ ածել մութ և կասկածելի դարձուածներ), երևում էր, որ Խօղէի մահը մեղ զրկեց մի զարմանալի դատաստանական գործից: Պէտք է նոյնպէս խղճալ և հասարակութեան դիւրազգացութիւնը, որ այս դէպքում պիտի վառ փայլէր:

XXXIV.

Բայց, աւաղ, նա մեռաւ, և նորա հետ թաղուեցաւ փաստաբանների արդիւնքը և հասարակութեան զգացմունքի արտայայտութիւնը. տունը ծախուեցաւ, ծառաները արձակուեցան, նորա երկու սիրականներից մինը հրէայի ձանկը ընկաւ, իսկ միւսով զբաղուեց մի հոդևորական,—այդպէս են զոնեայ, ամենքը պատմում: Ես հարցրի

բժշկից, ինչ հիւանդութիւնից մեռաւ Դոն-Խօղէն. «նա մեռաւ երեքօրեայ ջերմից, և թողեց մի այրի խորին ատելութեան մէջ»:

XXXV.

Այնու ամենայնիւ մի պատուելի մարդ էր Դոն-Խօղէն. ես կարող եմ այս պնդել, որովհետև լաւ էի ճանաչում նորան. էլ չեմ յիշելու նորա միւս պակասութիւնները, որոնց թիւը հաղիւ թէ հնար կայ աւելացնել. եթէ կրքերից զրկուած, նա երբեմն չափից անցնում էր և եթէ՝ նորա բնաւորութիւնը այնքան էլ պարզ և խաղաղ չէր, ոլքան Նումայինը (կոչուած նոյնպէս Պոմպիլիոս), կարելի է ասել, նորան արդարացնելու, որ Դոն-Խօղէի կրթութիւնը սկզբից վատ էր ուղղուած և որ նա ի ծնէ մի քիչ մաղձոտ էր:

XXXVI.

Ինչ և չլինէին նորա արժանիքը կամ պակասութիւնները, խե՜ղճ մարդ, նա էլ ունէր ցաւեր, պէտք է խոստովանել, նամանաւանդ, որ սա ոչ լաւ, ոչ վատ հետևանք է ունենալու: Ցաւալի էր այն վայրկեանը, երբ Դոն-Խօղէն տեսաւ, որ ընտանեկան բարեկեցութեան հրսկող աստուածները գեանատապալ եղան, և նա զրկուեց ամուսնական սիրոյ քաղցր յարաբերութիւններից. բաւական չէ այդ, նորան, որ այնքան պատուարժան և զգայուն բնութեան տէր էր, նորան մնում էր երկուսից մէկը ընտրել՝ կամ մահ, կամ կղերականների պատուելի ժողով[1], և նա մեռաւ:

---

[1] Doctor commons—ժողով, որի մի մասը, կազմուած կղերականներից, զբաղուած է լոկ ապահարզանի հարցերով:

XXXVII.

Եւ որովհետև Դոն-Խօզէն անկատակ մեռաւ, Ժուանը մնաց միակ ժառանգը նորա տների և կալուածների, որոնք Ժուանի երկար պատանեկութեան ժամանակ հմուտ կառավարչի ձեռքի տակ կարող էին մեծ արդիւնք բերել։ Ինչը եղաւ նորա խնամատարը,—այդ դերը անշուշտ նոյնն էր պատկանում, մայրական իրաւանց և բնութեան օրէնքների կողմից։ Միակ արու զաւակ, սնած այրի կնոջ ձեռքում, միշտ աւելի բարձր ուղղութիւն պիտի տանայ, քան թէ մի ուրիշը[1]։

XXXVIII.

Ինչը, որ աննման էր կանանց մէջ առ հասարակ, և այրիների մանաւորապէս, վճռեց Ժուանին կրթել որպէս մի կատարեալ ասպետ, արժանի նորա բարձր և ազնիւ ծագման (նորա հայրը Կաստիլիացի էր, մայրը Արագոնցի)։ Նա ձգտում էր տալ որդուն ասպետների բոլոր քանքարները այն մտքով, որ «արքայն մեր տէրը[2]» *կարող է մի օր 'ի ռազմ հրաւիրել նորան. և ահա նորան ծանօթացրին ձիավարութեան, մենամարտութեան և հրաձգութեան արուեստների հետ. նորան նոյնպէս սովորեցրին, թէ ինչպէս պէտք է ձի հեծած ամրոցներ կամ կուսանոցներ նուաճել։*

---

[1] «Երբեմն ես մտածում էի մի տարօրինակ հանգամանքի մասին՝—իմ դուստրս, արենակից քոյրս, մայրս, քրոջ մայրը և ես ինքս—ամենքս էլ եղել ենք միակ զաւակներ. այս միակ զաւակների շարքը տարօրինակ և օրհասական երևոյթ է. յայտնի է, որ ամենակատաղի գազանները շատ քիչ են ձագեր բերում, օրինակ՝ առիւծը, վագրը, փիղը և այլն»։ Բայրոն։— [2] El rey nuestro senor.

XXXIX.

Սակայն կար մի բան, որին Դոննա-Ինեցը խիստ էր հետևում և հսկում ամեն օր, ամեն ժամ, դեռ առաջ քան որդու համար վարձած գիտնականները սկսան յաճախել նորա տունը։ Ինեցի փափագն էր, որ Ժուանի դասախարակութիւնը սկզբից մինչև վերջը բարոյական լինի. և ահա նա ինքը ծանօթանում է բոլոր դասերի հետ, այնպէս որ ուսուցիչները, նախ քան դաս տալ որդուն, դիմում էին մօրը՝ թոյլատուութիւն սատանալու. և ի՞նչ ասես, արուեստներ, ի՞նչ ասես, գիտութիւններ ուսուցանասիրեց Ժուանը, մի խօսքով ամեն բան, բացի բնական պատմութիւնից։

XL.

Եւ ահա նա հմուտ եղաւ բոլոր լեզուներում և մանաւանդ մեռած, հմուտ գիտութիւններում, մանաւանդ վերացական, հմուտ արուեստներում, այսինքն՝ այն, որոնք առօրեայ հասարակական նշանակութիւն չունեն։ Վերջապէս, Ժուանի անմեղութիւնը պահպանելու համար, նորա ձեռքը երբէք չէին յանձնում որ և իցէ ազատամիտ գրքուածք մարդկային՝ սեռի բազմանալու խնդրին վերաբերեալ։

XLI.

Մեծ դժուարութիւն էին պատճառում կլասսիկական հեղինակութիւնները, լի սիրոյ արկածներով այն աստուածների և դիցուհիների, որ աշխարհիս առաջին դարերում այնքան աղմուկ պատճառեցին և որոնք երբէք հագած չէին եղել ոչ վարտիկ, ոչ կորսետ։ Պատուելի դաստիա-

բակները յաճախ ենթարկվում էին նկատողութեան և երբեմն ստիպուած էին լինում պաշտպանողական դիրք բռնել յօդուտ Ենէականի, Եղիականի, Ոդիսսէի... Դոննա Ինեցը երկիւղ էր կրում առասպելաբանութիւնից։

XLII.

Օվիդիոսը մի լկտի հեղինակ է, ապացոյց—նորա բանաստեղծութիւնների մեծ մասը. Անակրէօնի բարոյականութիւնը՝ տեսնել ևս վատթար է. Կատուլլը—խոհեմութեան հետ ստատիկ կռուի մէջ է. չեմ կարծում, որ Սաֆոի օդանները լաւ օրինակ ներկայացնէին, թէպէտև Լոնդինը հաւատացնում է, որ նորա շատ ոգևորիչ են և վսեմ[1]։ Մնում են միայն Վերգիլիոսի անբիծ երգերը, բացի այն սարսափելի կտորից, որ սկսվում է Formosum pastor Corydon խօսքերով։

XLIII.

Լուկրեցիոսի աստուածուրացութիւնը շատ խիստ է, որ երիտասարդ ստամոքսը կարողանայ քաղել նորանից պիտանի հիւթեր. և թէպէտ Իւվենալի նպատակը գովասանքի է արժանի, բայց չեմ կարող չխոստովանել, որ նորա բացարձակ տողերը խստութեան են հասնում։ Եւ ո՞ր պատուելի մարդը կարող է սիրել Մարցիալի զազրելի էպիգրամմները։

---

[1] Այսօրինակ հրատարակութիւններ իրաւ որ եղել են. այժմ էլ կարելի է գտնել օրինակներ, ուր Մարցիալի անվայել էպիգրամմները հաւաքուած են յաւելուածում։

XLIV.

Ժուանը կարդաց նոցա ամենայարմար օրինակներում, հրատարակուած հմուտ գիտնականների ձեռքով, որոնք զգուշութեամբ դուրս էին ձգել բոլոր փոքր ի շատէ անբարոյական հատուածները։ Թէպէտև միւս կողմից, չկամենալով չափից դուրս աղաւաղել համեստ հեղինակների մտքերը, կամ թէ յաւելով նոցա այլանդակուած գրուածների համար, այս պարոնները աշխատանք էին դրել քաղուածները մի տեղում դետեղել և սորա շնորհիւ վիրոյիշեալ տողերը աւելի ևս գիւրամատչելի են դարձել։

XLV.

Եւ ահա բոլոր այս անբարոյական էպիզրամմները հաւաքուած են մի տեղում, գրքի այս և այն էջերի մէջ ցրուած լինելու փոխանակ և շարած են կանոնաւոր կերպով երիտասարդութեան միտքը շփոթեցնելու, այնպէս որ պիտի գտնուի մի ուրիշ հրատարակիչ՝ աւելի մեղմ բնաւորութեամբ, որ կրկին տեղաւորէ նոցա, ուր պէտք է, որովհետև այս կանոնաւոր շարած տողերը աւելի ևս անամօթ են երևում, քան պարտիզում դարսած ատաուածների արձանները։

XLVI.

Միսսելը (ընտանեկան Միսսելը) զարդարած էր, ինչպէս և բոլոր աղօթագրքերը, ամեն տեսակ կոպիտ պատկերներով. զարմանում եմ, ինչպէս մարդս կարող է աղօթքի խօսքերը ըմբռնել, աչքի առաջ ունենալով զրքում նկարած պատկերներ, որոնք ներկայացնում են սրբերին «խաղաղութեան» համբոյրը միմեանց մատուցանելու

ժամանակ. այս ես չգիտեմ, բայց Ժուանի մայրը մի օր պահեց վերոյիշեալ Միսսելը, ընծայելով որդուն մի ուրիշ գիրք։

XLVII.

Ժուանը կարդում էր քարոզներ, սեպհական նորա համար գրած, կարդում էր հրահանգներ և սրբերի կենսագրութիւններ։ Նորա համար սովորութիւն էր դարձել խորհրդածել սուրբ Երեմիայի և Ոսկերերանի վերայ և նա չէր գտնում ոչինչ ծանրութիւն այս տեսակ պարապմունքներում։ Իսկ ես կարծում եմ, եթէ մէկը կամենում է ստոյգ ճանաչել, թէ ի՞նչպէս են հաւատը ձեռք բերում և ապա նորան պահպանում, նա անպատճառ պիտի դիմի ոչ վերոյիշեալ սրբերին, այլ սուրբ Օգոստինոսին, որ իւր գեղեցիկ «Խոստովանութեան» մէջ ստիպում է ընթերցողին իւր սխալանքներին անդամ նախանձել։

XLVIII.

Եւ ահա ինչու այս գիրքը միշտ փակած էր Ժուանի համար։ Պիտի խոստովանեմ, որ նորա մայրը իրաւացի էր, եթէ միայն լաւ է... այս տեսակ կրթութիւնը. շատ սակաւ էր պատահում, որ Ինեցը աչքի տակից թողնէր երեխային. նորա նաժիշտները պառաւ կանայք էին, և եթէ նա վարձում էր մի նորը, վստահ կարող էիք լինել, որ վերջինը սարսափելի կերպարանքի տէր պիտի լինէր։ Այս սովորութիւնը նա ունէր դեռ իւր ամուսնու կենդանութեան ժամանակ, և ես խորհուրդ կըտամ անել այս ամէն մի խելացի տիկնոջ։

XLIX.

Ահա այսպէս էր մեծանում փոքրիկ Ժուանը, օրէ ցօր ամրանալով բարեպաշտութեան և երկիւղածութեան մէջ։ Վեց տարեկան հասակում նա մի չքնաղ երեխայ էր, տասն և մէկում խոստանում էր արդէն կատարեալ գեղեցկութեան տղամարդ դառնալ. նա սովորում էր եռանդով, ցոյց էր տալիս յառաջադիմութիւն, և, ըստ երևոյթին, ընթանում էր այն շաւղով, որ տանում է անմիջապէս դէպի երկինք, որովհետև օրուայ կէսը նա անց էր կացնում եկեղեցում, իսկ միւսը՝ դասատարակների, խոստովանահօր և իւր մօր հետ։

L.

Վեց տարեկան հասակում, ասացի ես, նա մի գրաւիչ երեխայ էր, տասն երկուսում՝ գեղեցիկ տղայ և համեստութեան կատարեալ օրինակ. և որովհետև Ժուանը 'ի ծնէ աշխոյժ երեխայ էր, շրջապատող սրբակրօն մարդիկ շատպեցին սանձել նորա վառ բնաւորութիւնը—և զուր չմնաց նոցա աշխատանքը. ահա ինչու Դոննա-Ինեցը իրաւունք ունէր պարծենալ իւր զաւակով, կրկնելով ամեն տեղ, որ նորա փոքրիկ փիլիսոփան խելօք, համեստ և ժրաջան երեխայ է։

LI.

Սակայն ինձ տանջում է մի բան, որից ազատուել ես բնաւին չեմ կարող. այն, ինչ որ կամենում եմ ասել, ոչ այս է, ոչ այն. ես ճանաչում էի նորա հօրը և երբէք չեմ սխալուում, երբ որևէ կարծիք եմ յայտնում... Թէպէտև լաւ չէ դատել որդուն հօր բարքը աչքի առաջ

ունենալով... Դոն-Խուլէն և նորա կինը այնքան էլ հաւան չէին միմեանց... ես ասում եմ բամբասանք... չէ, ճշմարիտ, որ ես թշնամի եմ երկրիմի խօսքերին, թէև ժպիտով համեմած։

LII.

Ես ոչինչ չեմ ասում, հաւատացէք, ոչինչ... բայց, արևս վկայ, խոստովանեցէք... ես ունեմ իմ պատճառները... այո, եթէ ինձ վիճակուած լինէր կրթել մի որդի (և փառք Աստուծոյ, ես որդի չունեմ), ես չէի նստեցնիլ նորան Ինեցի հետ հաւատապատումը սովորելու... ոչ... ես կ'ուղարկէի նորան դպրոց, ուր ձեռք բերէ բոլոր իմացածս։

LIII.

Միայն դպրոցում կարելի է սովորել... չկարծէք, որ ես պարծենալու եմ դիտութիւններով... նոցա մասին ես չեմ խօսելու, ոչ էլ յունարէնի, որ մոռացած եմ վաղուց. ես ասում եմ միայն, որ դպրոցում, ոչ ուրիշ տեղ... բայց verbumsat... ես կարծում եմ, որ այնտեղ ճանաչեցի, ինչպէս և ամենքդ, մի քանի բաներ... Էհ, թողնենք... Ամուսին չեմ եղած... այնու ամենայնիւ կարծում եմ, նաև համոզուած եմ, որ Ժուանի կրթութիւնը օրինակելի չէ։

LIV.

Ժուանը մաաւ տասն և վեցերորդ տարին. նա հասակով էր, գեղեցիկ, մի քիչ նուրբ, բայց շատ լաւ կազմուած, մի զուարթ երիտասարդ, բայց ոչ այնքան, որքան

զուարթ են արքունական մանկլաւիկները։ Ամենքը, բացի մօրից, տեսնում էին նորա մէջ հասունացած մի մարդ, սակայն եթէ մէկին պատահէր այդ կարծիքը մօր առաջ յայտնել, Դոննա-Ինեսը այնպէս էր կատաղում, որ ազատակը զսպելու համար շրթունքներն էր կծում, որովհետև, նորա կարծիքով, ժամանակից առաջ զարգանալը՝ մի աններելի յանցանք է։

LV.

Նորա բաղմաթիւ ծանօթների մէջ ամենքը ընտիր էին, թէ իրանց պարկեշտութեամբ, թէ եկեղեցաշունութեամբ կար մի անձնաւորութիւն Դոննա-Ջուլիա անունով։ Գեղեցիկ, խօսքս շատ թոյլ է արտայայտում նորա հազար ու մէկ հրապոյրքը, որոնք բնական էին նորա մէջ այնքան, որքան բուրմունքը բնական են ծաղիկներին, աղը՝ Ովկիանոսին, չքնաղութեան գօտին՝ Անահտին, սիրոյ աղեղը՝ Կուպիդոնին (վերջին նմանողութիւնը հնացած է մի քիչ և բթամիտ)։

LVI.

Ջուլիայի նախնիքը ազգութեամբ Մարք էին և նոցանից նա ժառանգել էր սև և փայլուն հարաւային աչերը. ուրեմն՝ նորա արիւնը մաքուր սպանիացւոյ արիւն չէր. այդ երկրում, ամենքդ գիտէք, այս հանգամանքը մի բիծ է կազմում... երբ գոռոզ Գրենադան նուաճեցաւ և արտասուալից Բոաբդիլը[1] ստիպուած էր փախչել, Դոննա Ջուլիայի նախնիների մի մասը հեռացաւ Աֆրիկա, միւսը մնաց Սպանիայում և սոյա թւում էր նորա մեծ մօր տատի տատը։

---

[1] Գրենադայի վերջին թագաւոր։

LVII.

Նա ամուսնացաւ Մկ Հիդալգոյի հետ (սորա տոհմագրութիւնը ես մի քիչ մոռացել եմ). վերջինը կտակեց իւր սերնդին արիւն, որ այնքան մաքուր չէր, որքան անխառն էր նորա երակների արիւնը: Վերոյիշեալ ամուսնութիւնը սաստիկ զայրացրեց նորա ազգականներին, որովհետև այս հարցի մէջ նոքա այնքան խիստ էին, որ յաճախ «իրենց շրջանի մէջ» էին պսակի լուծը կապում, և ոմանք նոցանից ամուսնութեան էին առնում իրենց խորթ քոյրերին, մօրաքոյրերին, թոռներին մինչև անգամ: Մի չափազանց վատ սովորութիւն, որ ստորացնում է տոհմը, եթէ վերջինը շարունակում է բազմանալ:

LVIII.

Այս հեթանոսական ամուսնութեան պատճառով Հիդալգոյի սերունդը վերանորոգուեց և թէպէտ արեան աղտնութիւնը նուազեց մի քիչ միւս կողմից նոյն հանգամանքը ի նպաստ եղաւ մարմնական զեղեցկութեան, այնպէս որ հին Սպանիայի ամենաստորին ճիւղից՝ առաջ եկան որքան զեղեցիկ, նոյնքան էլ թարմ պատուղներ. և նոր սերնդի մէջ այլ ևս չէին պատահում կարճահասակ արու և անտաշ էգ զաւակներ: Սակայն ժամանակ է վերջ դնել հասարակութեան մէջ տարածուած զրոյցներին. ասում են՝ թէ Դոնա-Ջուլիայի նախամայրը ընծայեց իւր ամուսնուն աւելի ապօրինի զաւակներ, քան թէ օրինաւոր:

LIX.

Ինչ որ է, վերոյիշեալ տոհմը շարունակում էր աճել, բազմանալ և կատարելագործուել մինչև այն ժամա-

նակ, երբ մնաց մի արու զաւակ, որին ժառանգեց Նորա միակ զուստրը. այժմ դժուար չէ հասկանալ, ուր եմ խօսքս տանում. վերջինը անշուշտ Դոննա-Ջուլիան պիտի լինի, որի մասին շատ բան ունեմ ասելու: Նա չքնաղ էր, ամուսնական լուծով զարդարած, անարատ և քսաներեք տարեկան:

LX.

Նորա աչերը (ա՜խ, մինչ ի ցնոր սիրում եմ գեղեցիկ աչեր), Նորա սև և խոշոր աչերը մի ինչ որ քնքոյշ և մեղմ լոյս էին արձակում, երբ նա լուռ էր և անդորր, և կրակի նման էին վառվում, ներշնչելով երկիւղ, չէ, անշուշտ, հիացք աւելի, երբ նա սկսում էր խօսել. բայց այդ աչերի մէջ դուք կընկատէիք աւելի սիրոյ բորբոք, քան մի ուրիշ զգայմունք, դուք կընկատէիք մի բան, որ, անշուշտ իրձ չէր, ոչ, բայց կարող էր իրձ դառնալ, եթէ Նորա անարատ հոգին չզսպէր սրտի զգայմունքը:

LXI.

Նորա սև մազերը ինչնում էին գանդուրներով մեղմ և գեղեցիկ ճակատի վերայ, որի նմանը դժուար էր գտնել. Նորա յօնքերը աղեղնաձև էին, իսկ այտերը թարմ և այնքան թափանցիկ, որ երբեմն կրակի նման բորբոքւում էին: Մի խօսքով, լեղուս պակաս է նկարագրելու Նորա գեղեցկութիւնը. նա բարձրահասակ էր. չեմ սիրում մանրահասակ կանանց:

LXII.

Նորա ամուսինը յիսուն տարեկան էր. այս հասակի ամուսինները հազուադիւտ չեն. և ես կարծում եմ, որ

աւելի լաւ է ունենալ երկու ամուսին քանհինգ տարեկան, քան թէ մէկը վերոյիշեալ հասակի, մանաւանդ այն աշխարհներում, որոնք աւելի մօտ են արեգակին։ Այժմ միտքս է ընկնում, mi vien in mente, որ ամենատարատ տիկինները անդամ առաւելութիւն են տալիս այն տղամարդկանց, որոնք դեռ չեն հասել իրենց երեսնամեակին։

LXIII.

Սա մի տխուր երևոյթ է, պէտք է խոստովանել, և մեղքի բոլոր զօրութիւնը ընկնում է արևի վերայ, որ չէ թողնում անդորը մեր գժբախտ մարմինը, այլ այրում է մեղ և տոչորում մինչև այն աստիճան, որ ստիպուած ենք լինում մեղքերը քաւելու՝ երբեմն աղօթքի և պահքի կանդնել. «զի մարմինը տկար է, իսկ հոգին սիրալական»։ Այն, ինչ որ մարդիկ ասում են՝ բարեկրթութիւն, իսկ երկինքը՝ պոռնկութիւն, աւելի յաճախ պատահում է հարաւային կլիմայում։

LXIV.

Բախտաւոր ազգեր հիւսիսային կլիմայի, որ բարոյական է, այնտեղ է ծաղկում առաքինութիւնը և ձմեռուայ սառնամանիք տարապրում են մեղքը, որ ցրտից սառած, մերկ և ամօթապարտ փախչում է մարդուց. (ձիւնը չէր, որ խելքի բերեց սուրբ Անտոնիոսին)։ Երջանիկ են այն ազգերը, որոնց դատաւորները կնոջ անպատուութեան փոխարէն տուգանք են որոշում սիրականին և վերջինը «՝ի ձեռն պատուաւոր դումարի» ազատվում է պատժից, որովհետև այդ երկրներում պոռնկութեան գինը ունի իւր եկեղջը, ինչպէս արժէքդրները բորսայում։

LXV.

Ջուլիայի մարդը կոչվում էր Ալֆոնսո. նորա արտաքին դէմքը՝ տարիքից աւելի աջողակ էր երևում: Եթէ կինը նորան չէր սիրում, կարելի է հաստատ ասել, որ չէր էլ ատում: Նոքա ապրում էին միասին, ինչպէս ապրում է մեծամասնութիւնը, համբերելով միմեանց թերութիւններին և չկաղմելով ոչ մի մարմին, ոչ էլ երկու: Մի և նոյն ժամանակ Ալֆոնսոն վերին աստիճանի խանդոտ էր, թէպէտև արտաքուստ նա այդ չէր ցոյց տալիս. արդարև, սիրոյ խանդը այն զգացմունքներից չէ, որոնց վայել է հրապարակ հանել:

LXVI.

Ինձ համար այնպէս էլ անբացատրելի մնաց Ինեցի և Ջուլիայի սերտ մտերմութիւնը. հաղիւ թէ նոցա բնաւորութիւնները միատեսակ լինէին—Ջուլիան իւր կեանքում գրիչ ձեռք չէր առած: Կան մարդիկ, որոնք ծածուկ խօսում են... սակայն, ոչ, անշուշտ, ասում են նոքա, յայտնի չէ, որ չար լեզուները ամենուրեք տեսնում են անառակութիւն. ասում են թէ՝ Դոն-Ալֆոնսի ամուսնութիւնից առաջ Ինեցը մոռացել էր նորա հետ իւր սովորական զգուշութիւնը:

LXVII.

Միշտ պահպանելով հին մտերմութիւնը, որ ժամանակի շնորհիւ աւելի մաքուր ընթացք էր ստացել,—այդպէս են գոնեայ ամենքը ասում,—Ինեցը նոյնքան էլ ջերմ սիրեց Ջուլիային (կարող էր նա անել մի աւելի լաւ բան), առնելով նորան իւր հովանաւորութեան տակ, և

սակաւ չէր պատահում լսել Ինեցին Դոն-Ալֆոնսի նուրբ ճաշակը գովելուց։ Այս տեսակ վարմունքով նա թեպէտև չկարողացաւ իսպառ վերջ դնել բամբասանքներին, բայց և այնպէս նորան յաջողեց չարախօսութեան նիւթը սահմանափակել։

LXVIII.

Չեմ կարող հաստատ ասել՝ թէ ինչպէս էր Զուլիան դիտում իրողութիւնը. նկատա՞ծ էր մի բան, թէ չէ, նա այնպիսի դիրք բռնեց, որ ոչ ոք էլ այդ չիմացաւ։ Կարելի է, որ իրաւ, նա ոչինչ չդիտէր, կամ թէ դիտէր, բայց պատահածին դին չէր ընծայում թէ՛ ընտելացած լինելով այս մոքի հետ, թէ իւր անտարբեր բնաւորութեան պատճառով։ Այնքան ճարպիկ էր Զուլիան ծածկամտութեան արուեստում, որ իրաւ ես շատ զժուարանում եմ որ և իցէ կարծիք յայտնել այս բանի մասին։

LXIX.

Զուլիան երբեմն պատահում էր Ժուանին և սիրում էր փայփայել այդ չքնաղ երեխային. ի հարկէ, ՚Ի՚ասս չկայ սորանում. կըգտնէիք արդեօ՞ք աւելի անմեղ զոյգ, ինչպէս այն զոյգը, որ պատկերացնում էին քսան տարեկան Զուլիան և տասներեք տարեկան Ժուանը։ Բայց, հոգիս վկայ է, զմայլութեան ժպիտը երեսիցս թռաւ, երբ Ժուանին խփեց տասնվեց տարին, իսկ Զուլիային քսաներեք. բաւական են մի քանի տարիներ, որ մեծ փոփոխութիւններ պատահեն, նամանաւանդ հարաւային աշխարհներում։

LXX.

Բայց և այնպէս, Զուլիայի և Ժուանի յարաբերութիւնների ձևը փոխուեցաւ. տիկինը պահում էր իրան ա-

ելի զգոյշ, երիտասարդը աւելի ևս քաշվում, երկուսն էլ աչքերը խոնարհեցնում էին։ Լռութիւն էր տիրում, երբ պատահում էին միմեանց, թէպէտև նոցա հայեացքը մեծ շփոթ էր արտայայտում։ Կան մարդիկ, որոնք զրեթէ սաղդ դիտեն, որ Զուլիան լաւ էր ծանօթ գործի դրութեան հետ և միայն անփորձ Ժուանը այնքան հեռու էր բանի էութիւնից, որքան այն մարդը, որ Ովկիանոսը չտեսած ձգտէր նորա մասին դաղափար կազմել։

LXXI.

Այնու ամենայնիւ Դոննա-Զուլիայի սառ վարմունքի մէջ ցոլում էր մի ինչ որ բարեհաճութիւն, նորա ձեռքը զողդողալով էր հեռանում երիտասարդի ձեռքից, առաջադոյն սեղմելով, և վերջինը այնքան քնքոյշ էր և քաղցր, որ ամեն անգամ Ժուանը շփոթվում էր սաստիկ։ Ես կարծում եմ, Արմիդայի ձողը այն ազդեցութիւնը չունէր, որ գործում էր Ժուանի վերայ Զուլիայի անմեղ ձեռքը։

LXXII.

Եւ այնուհետև, երբ նոքա պատահում էին, էլ չէր ժպտում չքնաղ Զուլիան. բայց նորա տխրագին հայեացքը աւելի հրապուրիչ էր, քան ժպիտը, կարծես, նորա բորբոքուած սիրտը պահում էր իւր մէջ շատ դաղանի ըղձեր, որոնց երևան հանել նա չէր համարձակվում։— Անմեղութիւնն էլ ունի իւր փոքրիկ խորամանկութիւնները և հազիւ թէ կարող է միշտ բացարձակ հանդիսանալ. սէրը բերում է իւր հետ ծածկամտութիւն։

LXXIII.

Բայց իղուր կրքերը ծածկվում են խաւարի քողով, խաւարը իսկ նպաստում է նոցա արտայայտութեան և որպէս մռայլ երկինքը մատնում է իրան, գուշակելով մեղ սաստիկ փոթորիկ, այնպէս էլ աչքերը մատնում են մարդուն, այն աչքերը, որոնք պիտի հսկեն մեղ վերայ։ Երեսի դիմակը վայր է ընկնում և մնում է միայն մերկ իրողութիւնը.—անտարբերութիւն, զայրոյթ, ատելութիւն կամ արհամարհանք և այլ զգացմունքներ դրեթէ անհնարին է ծածկել աշխարհից։

LXXIV.

Ապա լսուեցան մեղմ հառաչանքներ, որոնց վատ էին քողարկում, թէպէտև երկուսն էլ աշխատում էին իրենց զգացմունքը զսպել. ապա հայեացքներ, որոնք ըստանում էին մի առանձին քաղցրութիւն՝ դաղտագողի լինելով. տեսութեան ժամանակ երկուսն էլ կարմրում էին, թէպէտև ոչ մէկի վերայ ծանր մեղք չկար. երբ մնում էին մենակ, սկսում էին դողդողալ ոտից մինչև գլուխ և տխրութիւն էր պատում, երբ անջատվում էին միմեանցից։ Ահա այս տեսակ է լինում այն փոքրիկ նախերգանքը, որ ապագայում աւեստում է երջանիկ օրեր։ Եւ, աւաղ, այս ամենը ապագոյց չէ երկիւղի և այն դժուարութիւնների, որ բերում է սէրը, երբ մի թարմ և անփորձ հոգի է վարակում։

LXXV.

Մի անսովոր դրութեան մէջ էր խեղճ Դոննա-Ջուլիան. նա գգում էր, որ սիրտը մատնում է նորան և եր-

դում էր տալիս բոլոր ջանքը գործ դնել իւր ամուսնու պատիւը փրկելու։ Նա օգնութեան էր հրաւիրում իւր պատիւը, ինքնասիրութիւնը, կրօնը և առաքինութիւնը. մի խօսքով՝ նորա մտքերի ազնուութիւնը կարող էր մինչև անգամ յանդուգն Ցարկվինիոսի գութը շարժել. և արտասուալից նա դիմում էր Սուրբ Կուսի միջնորդութեան, որ միայն կարող է փարատել կնոջ սրտի ցաւերը։

LXXVI.

Մի երեկոյ նա վճռեց էլ չտեսնուել Ժուանի հետ և միւս օրը գնաց նորա մօրը այցելութեան։ Դուռը բացվում է, Ջուլիան յուզուած սպասում է նորա առաջ,— փառք Սուրբ Կուսին, բացողը Ժուանը չէ. նա օրհնում է Սուրբ Կոյսը, զգալով միևնոյն ժամանակ մի առանձին տրտմութիւն։ Դարձեալ բացվում է դուռը, դա անշուշտ Ժուանը պիտի լինի... ոչ, նա չէ. հաւատացած եմ, որ այն գիշերը Ջուլիան էլ չդիմեց աղօթքով դիմառաստ Սուրբ Կուսին։

LXXVII.

Վերջապէս, նա վճռեց, որ մի առաքինի կին պարտաւոր է յաղթել փորձութեան... փախուստը թուլութիւն կը լինէր. չէ, այժմ ոչ մի տղամարդ կարողանալու չէ նորա սիրտը վրդովել, այսինքն՝ նորան ոչ ոք չէ կարող ստիպել տղամարդկանց մէջ ընարութիւն անել, թէպէտև բոլոր կանայք անում են այդ, դրդուած զգացմունքից, որ կից է եղբայրական սիրուն։

LXXVIII.

Եւ եթէ պատահմամբ... ո՞վ կարող է գուշակել ապագայի անցքերը... խորամանկ սատանան երբեմն բարեկամ

է ձևանում... եթէ պատահմամբ մի օր նկատի իւր մէջ մի ինչ որ փոփոխութիւն և թէ այս կամ այն տղամարդը կարող է նորան տալի դուր գալ (դեռ ազատ լինելով սերտ կապից)... Էհ, առաքինի տիկինը քշում է իրանից այս տեսակ մտքերը և փառքով է դուրս գալիս իւր սրտի հետ ունեցած մենամարտութիւնից... Բայց եթէ այդ մտքը պահանջի... կարելի է մերժել... վերջինը փորձել խորհուրդ կրտամ անել երիտասարդ կանանց։

LXXIX.

«Եւ ապա մի՞թէ չկայ զգայմունք այն ստուածային սիրոյ նման, որ փայլում է մաքուր և անարատ լուսով, ինչպէս հրեշտակների սէրը և այն երկիւղած կանանց, որոնք ազատ չեն գայթակղութիւնից. մի՞թէ չկայ այն պղատոնական և կատարեալ սէրը... այն սէրը, վերջապէս, որով ես եմ բորբոքուած»... Այսպէս էր մտածում Ջուլիան և տարակուսանքը հեռու էր նորանից։ Ինչ ինձ է վերաբերում, ես կըցանկանայի, որ նա հենց այս տեսակ մտածէր, եթէ ես լինէի այն երջանիկ մահկանացուն, որ ներշնչել էր նորան այդ երկնային խորհրդածութիւնները։

LXXX.

Այս տեսակ սէրը ամենևին անմեղ է և կարող է ծագել առանց վտանգի երիտասարդների մէջ։ Կարելի է համբուրել՝ սկզբում ձեռքը, յետոյ այտերը. այս բաները անծանօթ են ինձ, թէպէտև շատերը համոզուած են, որ այդ անմեղ շարժմունքները թոյլ են տրուած վերոյիշեալ սիրոյ տեսակի օրէնքով. բայց բաւական է մի քիչ հեռու գնալ, որ մարդս յանցաւոր դառնայ. զգուշացնում եմ ձեզ և եթէ մոռանաք այդ, ինձ չմեղադրէք։

LXXXI.

Սէրը, այն սէրը, որ պատշաճ սահմաններում է փակուած, սէրը, ասում եմ ես, այն զգացմունքն էր, որ ընծայեց Զուլիան երիտասարդ Ժուանին։ «Այս զգացմունքը, մտածում էր նա, կարող է նաև օգտաւէտ լինել Ժուանին և զեկավար, իբրև մտքուր սեղանի վերայ փայլող լոյս... և ի՞նչ քաղցր դասեր կըստանայ Ժուանը ինձանից»... Ես չգիտեմ այն բոլոր դասերը, որ նա կըստանայ... Զուլիան էլ հազիւ թէ գիտէր այն ժամանակ։

LXXXII.

Զինուորուած այս սուրբ ձգտումներով և զրահաւորուած իւր անարատութեամբ, Զուլիան վստահ էր և համոզուած, որ նորա պատիւը մի անմատչելի ժայռ է կամ ամրոց, և ահա ինչու նա վճռեց մի աւելի ազատ դիրք բռնել։ Մեծ չէ՞ր արդեօք այն հաւատը, որ ընծայում էր Զուլիան իւր առաքինութեան. սորան ապացոյց կըլինի պատմութեանս շարունակութիւնը։

LXXXIII.

Զուլիան կարծում էր, որ նորա մտքերը անարատ են... և դիւրակատար. տասնվեց տարեկան երիտասարդը հազիւ թէ կարող էր չարախօսութեան նիւթ դառնալ և վերջապէս նա համոզուած էր, որ նորա նպատակները գովասանքի են արժանի և ահա ինչու նա այսուհետև հանգիստ պիտի լինի... մտքուր խղճմտանքը անդորրութիւն է տալիս մեզ։ Պատմութիւնից անշուշտ լաւ յայտնի է ձեզ, որ քրիստոնեայք այրում և կոտորում էին քրիստոնեաներին, համոզուած լինելով, որ առաքեալներն էլ նոյնը կ'անէին։

LXXXIV.

Եւ եթէ յանկարծ նորա ամուսինը մեռնի... Ասուած փրկէ Ջուլիային այս տեսակ մտքից երաղում անգամ. նա երբէք տանելու չէ այդ կորուստը. և այս մտքի անցնելուց՝ մի տեսակ մեղմ հառաչանք էր թռչում վրդոված կուրծքից: Բայց ենթադրենք միայն, որ այս բանը պատահեց, ես ասում եմ, ենթադրենք inter nos (*այսինքն՝* entre nous *կամենում եմ ասել, որովհետև Ջուլիան մոռացում էր ֆրանսերէն, իսկ ես միշտ չափիս ստրուկ եմ եղած*):

LXXXV.

Ուրեմն ես ասում եմ՝ թոյլ տուէք մեզ այս ենթադրութիւնը անել. Ժուանը մինչև այն ժամանակ հասունացած աղամարդ կըլինէր, պատշաճ և համապատասխան մի այրի կնոջ—եօթը տարուց յետոյ—այնքան էլ ուշ չէ. այս ժամանակամիջոցում (հետևենք մեր գեղեցկուհու մոռացմունքներին) այնքան էլ վնաս չէր լինի, եթէ Ժուանը Ջուլիայի իսկ բերանից ուսումնասիրէր սիրոյ կանոնները... ես շարունակում եմ խօսել այն սերովբէական սիրոյ մասին, որ կարելի է գտնել երկնքում միայն:

LXXXVI.

Էհ, բաւական է Ջուլիայի մասին խօսածս. այժմ խօսենք մի քիչ Ժուանի մասին: Ողորմելի տղայ, նա բնաւ ծանօթ չէր իւր ներքին աշխարհի հետ և ահա ինչու չէր կարող գտնել իւր յուզմունքի պատճառը: Զգայուն և սրընթաց, ինչպէս Օվիդիոսի միտ Մէդէան, Ժուանը աշխատում էր պարզել իւր զգացմունքը, որ նոր և անծանօթ լինելով նորան, միևնոյն ժամանակ բնական

էր երևում. և դգում էր ժուանը, որ մի փոքր ևս համբերութիւն և այդ զգացմունքը կըդառնայ երջանկութեան աղբիւր։

LXXXVII.

Լոիկ, մտածկոտ, միևնոյն ժամանակ յուզուած, նա սովորութիւն էր արել հեռանալ տնից և թափառել մենացած անտառում. այն անծանօթ հիւանդութիւնը, որ վարակել էր նորան, սիրում է միայնութիւն, ինչպէս և սրտի բոլոր խորին ցաւերը... ես նոյնպէս սիրում եմ առանձնութիւն... բայց մի՛ շտապէք, լաւ է միմեանց հասկանանք՝ ես սիրում եմ սուլթանի առանձնութիւնը, ոչ առանձնականի այրին, այլ այն բնակարանը, որ հարեմ է կոչվում։

LXXXVIII.

«Ո, սիրոյ Աստուած, միայն այս տեսակ առանձնութեան մէջ «հրճուանք և անփութութիւնը» խառնվում են միմեանց հետ. այնտեղ միայն կարելի է գտնել զուարճութիւնների գրախտը, այնտեղ միայն դու Հանդիսանում ես իսկ երկնային աստուած»։ Պոէտը,[1] որից ես քաղում եմ այս տողերը, գեղեցիկ է յօրինում, բացի երկրորդ տողից, ուր հրճուանք և անփութութիւն» խօսքերը միմեանց հետ դժուար են կապվում։

LXXXIX.

Պոէտը—բացատրութիւնս նպատակ ունի հաշտեցնել նորան ընթերցողի և բնական հասկացողութեան հետ

---

1 Կամբելլ։

պոէտը, անկասկած, կամենում էր ասել, որ մարդս չէ սիրում, երբ նորան խանդարում են սիրոյ կամ ճաշի ժամանակ. այս ահաձուութիւնը ամենքը զգում են, զգացել են և զգալու են, երևի... Դէհ, էլ ոչինչ աւելացնելու չեմ վերոյիշեալ խօսքերի վերաբերմամբ. մեզ լաւ են ծանօթ նոքա և թող «անփութութիւնը» մղի պոէտի մտքերը:

XC.

Երիտասարդ Ժուանը թափառում էր յստակ աղբիւրների ափերում, ընկղմուած խորին մտածմունքի մէջ. նա հանդստութիւն էր առնում վայրենի թուփերի մօտ անտառի այն անկիւններում, որոնք ներշնչում են բանաստեղծներին ոգևորիչ նիւթեր. ճիշտ չէ՞, որ այս տեսակ վայրերը մենք սիրում ենք երբեմն ընտրել պոէտներին կարդալու, նոցա մտքերին և գեղեցիկ զարձուածներին զմայլելու, եթէ միայն նոքա այնքան տխմար չեն, որքան Վորդսվորտը:

XCI.

Նա (Վորդսվորտը չէ, Ժուանը) շարունակում էր խորհրդածել այնքան, որ նորա մտքերը անընդհատ անցնելով մէկը միւսի յետևից հոգուն մռայլութիւն էին տալիս, մեղմացնելով սիրոյ կսկիծը, ճշմարիտ է, մասամբ, ոչ ամբողջովին: Ժուանը ձգտում էր իւր մտքերին տիրապետել, մտքերին, որ, աւաղ, անսանձ են լինում: Անկատելի կերպով նա Կոլրիջի նման մետաֆիզիկ դարձաւ:

XCII.

Նա խորհրդածում էր իւր և աշխարհի մասին. խորին զմայլութեամբ նա դիտում էր մարդուն, որ հրաշալի

արարած է ներկայացնում. ապշած երկար նայում էր ասաղերին, հարցնելով իրան, թէ որ սատանան է մեզ նոցա երկնակամարին. նա մտածում էր երկրաշարժութեան մասին, պատերազմների սարսափի, բիւրաւոր մղոնների, որ անցնում է լուսինը, օդապարիկների և այն դժուարութիւնների, որ առաջ են գալիս, երբ մարդս ձգտում է ճանաչել երկնքի տարածութիւնը. վերջապէս, նա մտածում էր Ջուլիայի աչքերի մասին։

XCIII.

Մտքերի այս խառնուածքի մէջ մարդս կարող է գտնել բարձր ձգտումներ, ազնիւ գաղափարներ, որ ի բնէ վիճակուած են քանի մի անձանց և որոնց համար մարդկութեան մեծամասնութիւնը զուր և կուրօրէն տանջվում է։ Ցարօրինակ երևոյթ՝ ասաղեր, երկինք և սոցա նման բաներ կարող են քուն խլել Ժուանի նման երիտասարդից։ Դուք սորան կ՚ասէք՝ փիլիսոփայութիւն, իսկ ես կարծում եմ, որ այս ամենը երիտասարդի հասունութեան նշաններ են, ոչ այլ ինչ։

XCIV.

Ժուանը մտածում էր տերևների և ծաղիկների մասին, քամու ընթացքում նա լսում էր ձայներ, նորա երևակայութեանը ներկայանում էին Ելլադայի չքնաղ յաւերժահարսերը։ Նա կորցնում էր ճանապարհը, մոռանում էր ժամը և միայն ժամացոյցին դիմելով, տեսնում էր, թէ որքան առաջ է վազել մեր հին աստուած-ժամանակը, և թէ ճաշուայ ժամը վաղուց է անցել։

XCV.

Երբեմն զարթնելով մտածմունքից նա սկսում էր կարդալ Բոսկան և Գարկիլասսոն[1]... և ինչպէս զեփիւռը գրքին մեղմ դիպչելով թերթերն է շարժում, այնպէս իսկ շարժվում էր նորա սրտի խորքերում մի քնքոյշ զգացմունք... և նման էր Ժուանը այն թեթևաթռիչ էակներին, որոնք դիւթական ազդեցութեան տակ քամիների խաղալիք են դառնում, ինչպէս պատմել է ինձ մի պառաւ կին։

XCVI.

Ահա այդպէս էին անցնում Ժուանի միայնութեան ժամերը. և զգում էր Ժուանը, որ նորան մի բան է պակաս, բայց թէ ի՞նչ—չէր կարող որոշել։ Ոգևորիչ մտածմունքներ, բանաստեղծների ուտանաւորներ, սոցանից ոչ մէկը նորան չէր ընծայում այն, ինչ որ փափագում էր նա. և ի՞նչ էր նորան պէտք՝ մի կուրծք, որին սեղմէր իւր գլուխը... մի սիրտ, որի բաբախումն լսէր... նորան պէտք էր շատ բան, որ ես այժմ մոռացել եմ, կամ անպատեհ եմ համարում յիշել։

XCVII.

Ժուանի սէրը դէպի միայնութիւն, նորա երկարատև բացակայութիւնները զաղանիք չէին կազմում Ջուլիայի համար. նա նկատել էր արդէն, որ Ժուանի տրամադրութիւնը առաջուանը չէր. բայց ամենազարմանալին այն է, որ Դոննա-Ինեսը ամենևին ուշադրութիւն չէր դարձնում

---

[1] Սպանիացւոց յայտնի բանաստեղծներ։

իւր որդու մէջ եղած փոփոխութեան վերայ։ Նկատե՞լ էր նա մի բան, թէ՝ չէ՞ր կամենում տեսնել. կամ ինչպէ՞ս նա չկարողացաւ բանի էութիւն հասկանալ—նա, որ այնքան խորագէտ կին էր։

XCVIII.

Վերջինը մի քիչ տարօրինակ է ինձ թւում, թէպէտև մի շատ հասարակ բան է. օրինակ՝ այն բարեմիտ պարոնները, որոնց ամուսինները ուխտաղրուժ են հանդիսանում, զանց առնելով... ո՞ր պատուիրանը (թիւը մոռացել եմ, իսկ զուր և սխալ խօսել ես երբէք չեմ սիրել), եթէ այն պարոնները, ասում եմ ես, խանդոտ են լինում, երբեմն զոհ են դառնում մի ծիծաղաշարժ սխալի, որ հանում է մեր ականջին նոյն իսկ տիկինների բերանից։

XCIX.

Իսկական ամուսինը միշտ կասկածոտ պիտի լինի, բայց, աւաղ, յաճախ նորա կասկածը մի անակընկալ ընթացք է ստանում, ընտրելով այն մարդուն, որ ամենից քիչ է մտածում նորա կնոջ վերայ. երբեմն թշուառը այնքան է կուրանում, որ ինքն անմիջապէս պատրաստում է իւր չար վիճակը, սիրալիր ընդունելով իւր ծանօթներից ամենալկտի մարդուն. այսպէս է միշտ պատահում։ Իսկ յետոյ երբ մարդը տիկնոջ և նորա մտերմի մեղանչութեան վերայ է հանում, թեթևամի՞տը—մնում է ապշած աւելի նոցա անզգամութեան առաջ, քան թէ իւր տխմարութեան։

C.

Նոյնպէս և ծնողները երբեմն միամիտ են լինում, և թէպէտ միշտ աչքի առաջ են պահում իրենց զաւակ-

ներին, բայց, ափսոս, նոցա չէ տուած նկատել այն, ինչ որ մի առանձին ուրախութեամբ տեսնում են ղրացիք... թէ՝ «ոչն է երիտասարդ Հումպֆելի կամ միսս Ֆաննի՝ի սիրականը» և այլն... և այս տեւում է մինչև այն օրը, երբ յանկարծ որ և իցէ անիծած անցք մի հարուածով ոտնակոխ է անում ծնողների քսան տարուայ աշխատանքը... և ապա մայրը լալիս է, հայրը նզովում է իւր դառն վիճակը և այն օրը, երբ հայր կոչուեցաւ։

CI.

Բայց Ինեցը այնքան խորամիտ էր և հեռատես, որ երևի մի զաղտնի նպատակ ունէր, թողնելով Ժուանին փորձութեան ենթարկուելու։ Ի՞նչ էր նպատակը—այստեղ չեմ կարող ասել.—կարելի է նա կամենում էր սորանով վերջացնել Ժուանի դաստիարակութիւնը... կամ թէ Ալֆոնսի աչքերը բաց անել, որը, նորա կարծիքով, մեծ հաւատ էր ընծայում իւր կնոջ։

CII.

Մի օր—ամառուայ օր էր. վտանգաւոր եղանակ է ամառը. ասենք՝ գարունն էլ պակաս չէ, մանաւանդ մայիսի վերջերում—մեղքի բոլոր ծանրութիւնը, անկասկած, արևի վերայ է ընկնում։ Իմ կողմից կարող եմ միայն աւելացնել (առանց երկիւղի անբարեխիղճ ձևանալ), որ տարուայ մէջ կան ամիսներ, երբ բնութիւնը աւելի աշխոյժ է և զուարթ։ Մարտ ամսի հերոսը նապաստակն է, իսկ մայիսինը՝ կանայք[1]։

---

[1] March has its hares, and May mast havc its—*ասում է ժողովրդական առածը։*

CIII.

Ուրեմն ամառ էր... յունիսի վեցը... ես շատ եմ սիրում ձիշտ թուհաշուութիւնը և ոչ միայն դարերի կամ տարիների, այլ և ամիսների։ Թուերը նման են կայարաններին, ուր ճակատագրի կառքը, փոխելով ձիաները, փոխում է նոյնպէս պատմութեան ընթացքը և յաճախ ահագին պետութիւնների անցեալից մնում է միայն թուերի հաշիւը, եթէ չհամարել հոգեհանդստեան աղօթքներ։

CIV.

Յունիսի վեցն էր, մօտաւորապէս ժամի վեց ու կէսը, կարելի է և եօթն էր. Ջուլիան նստած էր մի ծառի տակ՝ նման այն չքնաղ ծառերին, որ տալիս են ապաստան հուրիներին Մահմեդի և Անակրէօն-Մուրի դրախտում։ Մուր, քե՛զ են ընծայել մուսաները իրանց քնարը և քե՛զ են պարգևել Պինդ տարի պսակը. դու իսկ արժանի ես պօէտների ամենավերին մրցանակներին և, Աստուած տայ, որ կեանքդ երկարատև լինի։

CV.

Ջուլիան նստած էր, բայց նա մենակ չէր. դժուարանում եմ ասել, թէ ինչպէս եղաւ, որ նոքա մի տեղում պատահեցին (թէև իմանայի, դարձեալ չէի ասիլ—կան դէպքեր, երբ պէտք է խոհեմութիւն պահպանել). ինչ որ է, Ջուլիան և Ժուանը նստած էին դէմ ու դէմ։ Ա՜խ, երբ երկու մարդ նոյա դրութեան մէջ. առանձնացած են լինում, աւելի յարմար է, թէպէտև շատ դժուար է, որ երկուսն էլ աչքերը փակ պահեն։

CVI.

Ո, ի՛նչ չքնաղ էր նա. վարդանման այտերը արտայայտում էին նորա սրտի յուզմունքը, թէև դժուար է ենթադրել, որ Ջուլիան իրեն մեղաւոր համարէր. ո, սէ՛ր, որքան մեծ է և կատարեալ քո ազդեցութիւնը. դու տրկար մարդուն—ոգի ես ներշնչում, հղօրին—ոանակոխ անում: Եւ քանի անգամ այն մահկանացուն, որ միշտ խոհեմ և զգոյշ է եղել, քանի անգամ մոլորուել է նա՝ լարած որոգայթիդ զոհը դառնալով: Ջուլիան կանգնած էր անդնդի առաջ, և այնու ամենայնիւ հնում էր անընկուն իւր ողջախոհութեան մէջ:

CVII.

Եւ ահա նա մտածում էր՝ իւր անխախտ բնաւորութեան, Ժուանի պատանեկութեան, իւր անտեղի, խոհեմութիւնից առաջացած, երկիւղի վերայ, յաղթահար առաքինութեան, ամուսնական հաւատարմութեան և, վերջապէս... Դոն-Ալֆոնսի յիսուն տարիքի վերայ: Ես կը-յանկայի, որ վերջին միտքը նորա գլխիցը չանցնէր, աչքի առաջ ունենալով, որ իրաւ, այս թիւը հաղիւ թէ կարող է համակրութիւն ներշնչել: Ամեն կլիմաներում, ուր փայլում է արևը, կամ ուր ձիւնն է պատում, ամեն կլիմաներում՝ այս թիւը մի քիչ վատ է հնչում սիրոյ հարցի մէջ, թէև ոչ այնքան վատ փողի հարցերում:

CVIII.

Երբ մէկը ձեզ ասում է՝—ես յիսուն անգամ կըրկնել եմ ձեզ այդ—չէ՞ որ տհաճութեան նշան է դա. երբ բանասաղծը ձեզ ասում է՝—նորերում յիսուն տող եմ

գրել,—անշուշտ ձեր լսելիքին մի ոտանաւոր է սպառնում: գողերը իսկ, որքան ապաստ են գլուխ իրենց, երբ նոցա խումբը յիսուն մարդուց է բաղկացած: Ցիսուն տաքեկան հասակում սէրը սիրոյ համար մի շատ հաղուագիւտ բան է, թէպէտև միւս կողմից յիսուն դրամով շատ հեշտ է սէր գնել:

CIX.

Ջուլիան զգում էր դէպի Դոն-Ալֆոնսօն սէր, յարգանք և հաւատարմութիւն, և մտքում երդվում էր երբէք չապականել ամուսնական մահանին, և ոչ մի քայլ չանել, որ հակառակ լինի նորա պատուին կամ առաքինութեանը և տալով այս և ուրիշ երդումներ... նա անմեղ գնում էր իւր ձեռքը Ժուանի ձեռքի մէջ... ընդունելով վերջինը սեփականի տեղ:

CX.

Եւ ապա աննկատելի կերպով Ջուլիան յենուեց Ժուանի միւս ձեռքի վերայ, որ խաղում էր Նորա դանդուրնելի հետ. Ջուլիայի շփոթուած դէմքից երևում էր, որ Նորան տանջում է մի միտք, որ անզօր էր նա խեղդել իւր մէջ: Իրաւ որ Դոննա-Ինեցն էր ամենից շատ մեղաւոր, այնքան անզգաստ լինելով, որ թողել էր այդ զոյգը միայնութեան մէջ. զարմանալի բան, նամանաւանդ որ Ինեցը մինչև այդ օրը շատ խիստ էր հսկում Ժուանին... Համոզուած եմ, որ մայրս այդպէս չէր անիլ:

CXI.

Դոննա-Ջուլիայի ձեռքը, մեղմիկ սեղմելով, իմացրեց Ժուանի ձեռքին իւր մօտակայութիւնը, կարծես, նա ա-

սում էր՝ «պահէք, եթէ կամիք»։ Այնու ամենայնիւ, ես համոզուած եմ, Ջուլիան այդ բանում դրդուած էր լոկ պղատոնական զգացմունքից և սարսափով յետ կը քաշուէր Ժուանից, ինչպէս օձ կամ կարիճ տեսնելուց, երբ մաքիցը անցնէր, թէ սորանից երիտասարդի մէջ կարող է ծագել զգացմունք, որ կը պղտորի ընտանեկան խաղաղութիւնը։

CXII.

Ես, ի հարկէ, չգիտեմ, ի՞նչ էր արդեօք մտածում Ժուանը, բայց այն, ինչ որ նա ասաւ, դուք էլ, անշուշտ, կ՚անէիք. վարդի շրթունքները, չքնաղ ձեռքը համբուրելով, արտայայտեցին նորա սրտի գոհութիւնը... բայց, աւաղ, երջանկութիւնը երկարատև չէր. Ժուանը յանկարծ ցնցուեց երկիւղից, որ ահա նա մերձ է մահացու մեղքին։ Ո, ինչ երկչոտ է սէրը իւր սկզբում. Ջուլիան կարմրեց, բայց չբարկացաւ. նա փորձեց խօսել—և լռեց... այնքան էր թուլացել նորա ձայնը...

CXIII.

Արևը մայր մտաւ. երևեցաւ լուսնեակի գունատ երեսը... սատանան է նստած լուսնի մէջ, որից առաջանում են մեր քամբախտութիւնները։ Նոքա որ ասել են լուսնեակին անարատ, շտապել են անուն ընտրել. հաղիւ թէ կը գտնէք մի օր (նաև յունիսի քսանմէկը, որ ամենաերկարն է), որ վկայ լինէր այնքան մեղքերի, որքան տեսնում է լուսնեակ գիշերի երրորդ ժամը... բայց ո՞րքան անմեղ է ձևանում լուսինը երկնքում շրջելով։

CXIV.

Մի վտանգաւոր լռութիւն է տիրում լուսնի փայլելու ժամանակ. այս խորհրդաւոր ժամերին մարդուս կա-

ռավարող ուժերը սպառվում են և հոգին ազատվում է նեղ կապանքներից. այն դիւթիչ լոյսը, որ գեղեցկութիւն է տալիս անտառի ծառերին և միայնացած աշտարակներին, ծածկելով ամբողջ բնութիւնը իւր հրապուրիչ արծաթեայ քողով, այն լոյսը հասնում է սրտի խորքերին, ուր ծագում է սիրոյ փափագը, որ հեռու է անվրդով խաղաղութիւնից։

CXV.

Զուլեան նստած էր Ժուանի մօտ. և ահա մի ձեռք, որ, կարծես, հաղիւ զսպում էր իրեն,—մի ձեռք նորան գրկեց, զողզողալով, ինչպէս Զուլեայի կուրծքը, որին նա գիպաւ... անշուշտ անմեղ էր այս շարժմունքը, եթէ ոչ նա կ'արգելէր. մի և նոյն ժամանակ որքան քաղցր էր այս գրկախառնութիւնը... և ապա... Աստուած գիտէ, թէ ինչ պատահեց... Ես չեմ կարող շարունակել, զղջում եմ անգամ սկսածիս համար։

CXVI.

Ո, Պղատոն, Պղատոն. քո անիծած ցնորները, քո քարոզը՝ որ մարդս տէր է իւր հոգեկան ուժերի—աւելի են յայնացրել անառակութեան ճանապարհը, քան թէ բանաստեղծների և վիպասանների բաղմաթիւ գնդերը... Դու մի յիմար ես, մի խաբեբայ, մի սնապարծ... վերջապէս, կաւատ ես դու, ոչ այլ ինչ։

CXVII.

Զուլեայի ձայնը այնքան թուլացաւ, որ խարիսմաստ ղրոյցների փոխարէն՝ մեղմ հառաչանքներ լսուեցան և

աքանչելի աչքերից արտասուք կաթեցին. ես կըցանկայի, որ նա չունենար զղջալու առիթ. բայց, աւաղ, ուր է այն մահկանացուն, որ սիրոյ հետ զգուշութիւն է խառնում: Զկարծէք, որ Զուլիան առանց ընդդիմադրութեան փորձանքի իրեն մատնեց... Լսուեցաւ մի ինչ որ հառաչանք, մի տեսակ ողբ թեթևամտութեան վերայ, և հաղիւ լսելի ձայնով՝ «ես երբէք չեմ համաձայնիլ» ասաց նա, և... համաձայնեց:

CXVIII.

Ասում են՝ Փսիլքսէսը խոստացաւ մի փարթամ պարգև այն մարդուն, որ կըգտնէր նորա համար մի նոր զբաւարձութիւն. վկայ է Աստուած, Նորին Մեծութեան պահանջը բաւականին դժուար էր իրագործել և մի և նոյն ժամանակ մեծ փոդ կընստէր. ինչ ինձ է վերաբերում,— ցանկութիւններիս մէջ—ես մի խոհեմ բանաստեղծ եմ՝ մի քիչ սէր եմ փափագում ժամանակ անց կացնելու համար. նոր զուարճութիւնների վերայ գլուխս չեմ կոտրելու. հին զուարճութիւններն էլ ինձ կըբաւականացնեն... միայն թէ երկարատև լինեն նոքա:

CXIX.

Զուարճութի՛ւն, զուարճութի՛ւն. ճիշտ, որ քաղցր ես դու, թէպէտև մի օր քո իսկ պատճառով կրակին ենք ամենքս դատապարտուելու: Ամեն նոր դարուն երդում եմ տալիս կեանքս նորոգելու... և առաջին իսկ ամիսը խոստումս մոռանում: և թէպէտ այս անարատ ուխտը յաճախ եմ զանցառել, տակաւին անվհատ եմ մնայել. իսկ այժմ յուսահատ եմ ամենևին, ես կարմրում եմ ամօթից... և դարձեալ երդվում՝—դալ ձմեռը անպատճառ բարեկարգուելու:

CXX.

Այստեղ իմ խոհեմ Մուսան մի քիչ աղատ է երեւալու. մի՛ զողալ, ընթերցող, որ Մուսայիցս, անշուշտ, աւելի խոհեմ ես.—նա երդվում է, որքան կարելի է, իւր ամօթխածութիւնը պահպանել. խոստովանում եմ, այս բանաստեղծական անմեղ ազատութիւնը պիտի այլանդակի վիպասանութեանս կանոնաւորութիւնը և խորին յարգելով Արիստոտելին և նորա կանոնները, պիտի ներողութիւն խնդրեմ նորանից այն իսկ բոպէին, երբ անուշադիր եմ թողնելու նորա պատուիրանները:

CXXI.

Այդ ի՞նչ ամօթալի բան է, որի մասին խօսելու եմ ես... ահաւասիկ... կը յուսամ, որ բարեմիտ ընթերցողը կը շնչի ենթադրել, որ յունիսի վեցից (նշանաւոր օ՛ր, եթէ նորա թիւը մոռանայի, պօէտիկական ամբողջ արուեստս կարող էր կործանուել), որ յունիսի վեցից, ասում եմ ես, երբ Ժուանը և Ջուլիան միասին էին, անցան քանի մի ամիսներ: Այժմ մենք կը լինենք նոյեմբեր ամսում. չեմ կարող միայն ճիշդ օրը որոշել — այս բանը ինձ համար մնաց մի քիչ մութ, աւելի մութ, քան ուրիշ անցքերը:

CXXII.

Այս բոպէիս ես կը վերադառնամ իմ պատմութեանս...

Քաղցր է կէս գիշերին, երբ լուսնի մեղմ քողն տակ խաղում է Ապրիատիկ ծովը, լսել թիերի կանոնաւոր հարուածները և գոնդոլիերների հեռուից եկած երգերը: Քաղցր է տեսնել երկոյեան աստղի ծագելը, լսել՝ ինչպէս զի-

շերուայ զեփիւռը մեղմիկ շարժում է ծառերի տերևները, քաղցր է հիացած նայել ծիածանին, երբ նա չափում է երկինքը գօտիով, որի մի ծայրը Ովկիանոսումն է ընկղմուած։

CXXII.

Քաղցր է լսողութեան՝—մեր տան հաւատարիմ պահապանի հաչելը, որ մեզ ողջունում է բնակարանը մտնելիս. քաղցր է մտածել՝—որ կան հեռուից մեզ դիտող աչքեր, որ կրփայլեն ուրախութիւնից մեզ նկատելիս։ Քաղցր է քնից զարթնել արտուտի ձայնից և քուն մտնել, երբ մեզ օրօրում է առուակի խոխոջիւնը. քաղցր են՝—մեղուների բզզոցը, օրիորդների ձայները, թռչունների դայլայլիկը, մանկանց թոթովը և նոցա առաջին խօսքերը։

CXXIV.

Քաղցր է տեսնել, ինչպէս խաղողի հասած ողկոյզները թափում են գետնի վերայ իւր ծիրանի հիւթը. Քաղցր է փախչել աղմկալի քաղաքներից՝—դաշտերի ուրախութեան մասնակից լինելու. քաղցր է ժլատին՝—իւր ոսկին համարել, քաղցր է հօր համար՝—իւր անպրանիկ որդու ծննդեան լուրը. քաղցր է—վրէժխնդիր լինել, մանաւանդ կանանց համար. աւարը քաղցր է—զինուորներին և կողոպուտը՝—աւազակներին։

CXXV.

Քաղցր է—ժառանգութիւն ստանալ և ամենավերին երջանկութիւն՝—մի պառաւ աղգականի, կամ եօթանասուն տարեկան ծեր բարեկամի մահուան լուրը լսել, որոնք

տանջել են մեզ — երիտասարդներիս, ստիպելով անվերջ սպասել նոցա կալուածներին, ընդունկներին կամ ամրոցներին։ Ծեր աղգականները միշտ մեռնելու վրայ են, բայց ինչ անես, որ չեն մեռնում. և ո՞վ է մեղաւոր, եթէ ոչ նոքա, որ Իսրայելացիք հալածում են նոցա ժառանգներին պարտամուրհակներով։

CXXVI.

Քաղցր է ձեռք բերել—մէկ է, ինչ միջոցով—արիւնով թէ թանաքով—գեղեցիկ դավնեայ պսակ. քաղցր է վերջ դնել վիճաբանութեան, քաղցր է—երբեմն կռուախնդիր լինել մի տաղտկալի ծանօթի հետ. քաղցր է—շիշերում հին գինի ունենալ և տակառներում դարեջուր. քաղցր է—պաշտպան լինել մի անբախտ մարդուն աշխարհի հալածանքից. քաղցր է մեզ—դպրոցի յիշատակը, ուր անցան անդարձ մեր պատանեկական տարիքը, և որ երբէք մենք մոռանալու չենք, թէպէտև այնտեղ մեզ մոռանում են։

CXXVII.

Սակայն աւելի քաղցր է, հաղար անգամ աւելի, մեր առաջին սէրը։ Սէրը մեր կեանքում ամենանշանաւոր անցքն է, ինչպէս Ադամի համար նորա անկման յիշատակը։ Գիտութեան պտուղը քաղելով, մարդս ամեն բան ճանաչեց. և ապա կեանքն էլ ոչինչ չէ կարող մեզ առաջարկել, որ մեղանչութեան արժանի լինի։ Երևի, նոյն գաղափարը ի նկատի ունի աւանդութիւնը երկնային հրոյ մասին, որ յափշտակեց Պրոմեթէոսը. և այս յանցանքը. երկինքը երբէք չներեց նորան։

CXXVIII.

Մարդս մի տարօրինակ կենդանի է և զարմանալի կերպով բանեցնում է երբեմն իւր բնական ուժերը և ձեռք բերած արուեստները. նա ձգտում է միշտ մի նոր շաւիղ բանալ և ի ցոյց հանել իւր խելքն ու իմաստը: Իրաւ, մեր դարը առատ է գիւտերով և իւրաքանչիւր քանքարը կարող է գործադրել իրեն: Սակայն լաւ չէր լինիլ, եթէ մարդիկ ջանային ամենից առաջ «Ճշմարտութիւնը» գտնել.—թող զուր մնար նոցա աշխատանքը, վնաս չէր լինիլ, նամանաւանդ, որ ստութեան տիրապետութիւնը յաւիտենական է:

CXXIX.

Քանի քանի միմեանց հակառակող գիւտերին մենք ականատես ենք եղել (Ճշմարիտ ցոյց տաղանտի և փողի պակասութեան): Մէկը՝—արուեստական քթեր է կպցնում, միւսը՝ Գիլլիոտին կառուցանում. սա—ձեր ոսկրներն է կոտրում, նա—իւր տեղն է նոցա դնում: Բայց ամենանշանաւոր գիւտը պատուաստն է մնում: Բժիշկ Ջենները փոխառնելով նոր պատուաստը որթերից, գտել է միջոց հինը զուրս հանելու:

CXXX.

Հայը փոխանակեցին նորա մի վատ տեսակով, որ գեանախնձոր է կոչվում և զալվանիսմով մեռեալներին ցնցեցրին. Ճշմարիտ է, վերջինը չարդարացրեց այնքան ընդհանուրիս յոյսը, որքան մարդասիրական ընկերութեան այն մեքենան, որով ձրի ուշքի են բերում շնչասպառ մարդկանց: Ո՞րքան նոր և հրաշալի մեքենաներ, և ի՞նչ

կարճ ժամանակամիջոցում։ Ես ասացի, որ պատուաստը նորերումն է անհետացել, հաւանական է, ուրեմն որ սիֆիլիսն էլ նորան կրհետևի։

CXXXI.

Ասում են վերջին հիւանդութիւնը Ամերիկայից է եկած, ուրեմն հնարաւոր է, որ նա կրվերադառնայ իւր ծննդեան տեղը. ասում են, այնտեղ ժողովուրդը այնքան է բազմացել, որ ժամանակ է նորա թիւը նուազեցնել մի քիչ պատերազմով, ճարակով, սովով, թէ ուրիշ միջոցով, միայն որ Ամերիկացիք ճաշակեն քաղաքակրթութեան պտուղներից։ Բայց ո՞ր մէկը աւելի մահաբեր է—վերոյիշեալ ցաւերը, թէ նոցա սիֆիլիսը։

CXXXII.

Եւ մեր դարու գիւտերը, անշուշտ, յօրինուած են ի նպաստ մարմնի սպանութեան և հոգու փրկութեան—երկուսն էլ ամենալաւ նպատակով են գործադրվում։ Սեր Հումֆրի Դէվիի լապտերը, որի շնորհիւ անվտանգ գետնից քարածուխ են հանում, ճանապարհորդութիւններ դէպի Թիմբուկտու և երկրագնդի ծայրերը և ուրիշ շատ բաներ—ամենը այնքան էլ ճիշդ և անհրաժեշտ բարեգործութիւններ են, որքան Վատերլօոյի ռմբաձգութիւնը։

CXXXIII.

Մարդս մի անընմբռնելի երևոյթ է, մի արարած, որ արժանի է հիացման և երկար հետազօտութեան։ Բայց տխուր է մտածել, որ աշխարհումն զուարճութիւնը մեղք է կաղմում, և երբեմն մեղքը զուարճութիւն է պատճա-

ռում։ Սակաւաթիւ են այն մարդկանցուք, որ լաւ գիտեն իրենց կամեցածը, իսկ մեծամասնութիւնը փառքին, իշխանութեան, սիրոյ կամ հարստութեան հետևելով, մի տատասկոտ շաւիղ է ընտրում. և հաղիւ նպատակին ենք հասնում՝—գալիս է մահը, ինչպէս ամենքդ գիտէք... և յետոյ...

CXXXIV.

Իսկ յետոյ ի՞նչ է պատահում, ես չգիտեմ, հաղիւ թէ դուք էլ ինձանից շատ իմանաք... Դէհ, մնաք բարեաւ։ Վերադառնանք մեր պատմութեանը։ Նոյեմբեր ամիս է, երբ հաղուագիւտ են զեղեցիկ օրեր, երբ մեղ հեռուից ողջունում են սարերի կատարները ծածկած սպիտակ քողով, երբ ծովը որոտաձայն քշում է ալիքը ժայռերի վերայ, ափերը ծածկվում են փրփուրով և արեգակը իւր պարկեշտութիւնը պահպանելու պառկում է երեկոյեան հինգ ժամին։

CXXXV.

Ամպամած գիշեր էր, ինչպէս ասում են գիշերուայ պահապանները. ոչ լուսին, ոչ աստղ. քամին ժամանակ առ ժամանակ սաստիկ փչում է և համարեա բոլոր բնակարաններում կրակը խաղում է վառարանի մէջ, հաւաքելով իւր շուրջը խաղաղ գերդաստանը։ Մի ուրախ լոյս է տարածում վառարանը, նոյնքան ուրախ, որքան ուրախ է ամառ օրուայ կապոյտ երկինքը։—Ա՜խ, որքան սիրում եմ նստել կրակի առաջ... օմարներից սալաթ, մի շիշ շամպանիայ և ուրախ խօսակցութիւն...

CXXXVI.

Կէս գիշեր էր... Ջուլիան պառկած էր անկողնում և, երևի, քնած... երբ յանկարծ դռան մօտ բարձրացաւ սաստիկ դղրդոց, որից կարող էին մեռելները զարթնել, եթէ արդէն արթնացած չլինէին, ինչպէս կարդում ենք առակներում. բայց որ նոքա վերջին դատաստանին յարութիւն կ'առնեն՝—այդ մենք հաստատ գիտենք։ Դուռը փակած էր. մի ձեռք սաստիկ զարկում էր և մի ձայն գոչում... «Տիկի՛ն... տիկի՛ն, ձայն տուէ՛ք վերջապէս»։

CXXXVII.

«Ի սէր Աստուծոյ, տիկի՛ն, տիկի՛ն... ահա ձեր մարդը մօտ է... նորան հետևում է քաղաքի կէսը համարեա... Ո, ի՛նչ պատահար... ո՞վ է տեսած այդպէս բան... բայց, հաւատացէ՛ք, մեղաւորը ես չեմ... ես լաւ էի հսկում... դուռը պինդ փակեցէ՛ք... ահա նոքա սանդուղքի մօտ են, մի քայլ և այստեղ կըլինեն... փա՜ռք Աստուծոյ, որ պատուհանները այնքան էլ բարձր չեն»։

CXXXVIII.

Բայց, աւա՜ղ, Դոն-Ալֆոնսոն հասել էր արդէն իւր բարեկամների և ծառաների հետ՝—ձրագներով և լապտերներով։ Այս պատուաւոր խմբի մեծամասնութիւնը ամուսնական լուծի տակ էր ընկած և առանձին ուրախութեամբ շտապել էր դալ մի «անդդամ» կնոջ քունը խանգարելու, որ յանդգնում էր պողեր տնկել իւր ամուսնու ձակատին. այս տեսակ օրինակները խիստ վարակիչ են և, եթէ յանցանքը անպատիժ մնայ, բոլոր կանայքը նորա համը կ'առնեն։

CXXXIX.

Չեմ կարող ասել թէ ինչո՞ւ և ինչպէս կասկածը մտաւ Ալֆոնսոի գլուխը. բայց ինչ որ է, Ալֆոնսոի այս վարմունքը բնաւին համապատասխան չէր նորա բարձր դրութեան և ապացոյց էր մի շատ վատ կրթութեան. առանց որ և իցէ տեղի հրապարակ հանել իւր կնոջ անկողինը, հաւաքել ամեն կողմից ծառաներ, զինորուած դաւաղաններով և սուսերներով և ինչո՞ւ. ամենքին ապացուցանելու միայն, որ նա այն պարագայի տէրը դարձաւ, որից այնքան սարսափ էր կրում միշտ։

CXL.

Թշուառ Ջուլիա. հաղիւ իւր քնից արթնացած (նը-կատէք խնդրեմ, ես չեմ ասում, որ քնած չէր), նա սկսեց զոչել և արտասուք թափել։ Նաժիշտ Անտոնիան, նորա խորհրդակիցը, շտապեց անկողնու վերմակները այնպէս ծալծլել կարծես, ամենքին ցոյց տալու, որ նոր էր թողել իւր պառկած տեղը. ես չեմ հասկանում, ինչու նա աշխատում էր ցոյց տալ, որ նորա տիկինը մենակ չէր պառկած։

CXLI.

Ո, ի՜նչ միամիտ և երկչոտ էին տիկինը և նորա նաժիշտը. երևակայեցէք, նոքա մի տեղ էին պառկել, վախենալով տեսիլներից, կամ մի յանդուգն տղամարդի զիշերուայ այցելութիւնից.—պարզ չէ՞, որ երկու կանանց ընդդիմադրութիւնը աւելի սոսկալի է, քան մէկինը. հէնց այս էր պատճառը, որ նոքա պառկած էին եղել մէկը միւսի կողքին, սպասելով իրենց պարոնին, որ բացակայութիւնից վերադառնալով ասելու պիտի լինէր՝ «վերջապէս, սիրելիս, կարողացայ հիւրերից տուն մտնել»։

CXLII.

Վերջապէս, Ջուլիան ուշքի գալով բացականչում է. «ի սէր Աստուծոյ, Դոն-Ալֆոնսո, այդ ի՞նչ է նշանակում... ցնորուե՞լ էք դուք... Ո, ինչո՞ւ չմեռայ այս հրէշի ղոհը դառնալու փոխարէն. ինչո՞ւ այս աղմուկ, ինչո՞ւ այս ամբոխ. արբեցողութեան հետևանք է դա, թէ անտեղի կասկածի. ի՞նչ իրաւունք ունէք կասկածի տակ ձգել մի հաւատարիմ կին... Դէհ, գնացէ՛ք, փնտռեցէ՛ք ամեն տեղ։ «Էնց այդ էի մտադիր անել, պատասխանեց Դ.-Ալֆոնսն»։

CXLIII.

Եւ ապա տէրը և նորա արբանեակները սկսում են փնտռել. նոքա մտնում են ամեն մի անկիւն, ամեն մի սենեակ, քրքրում են հանդերձարանը և պահարանները, դիտում են պատուհանները, տնտղում են ամեն բան և գտնում՝ շատ սպիտակեղէններ, զուլպաներ, հողաթափներ, սաներեր՝—մի խօսքով, բոլոր պարագաները մօղային հետևող կնոջ, որ սիրում է զուգուել և արտաքուստ անբիծ երևել. սրերի ծայրերով տնտղում են գորգերը և վարագուրները, փչացնելով կահկարասիքը։

CXLIV.

Նայում են մահճակալի տակ և այնտեղ գտնում... Էհ, ինչո՞ւ յիշել, անշուշտ է միայն, որ ուզածը չէր, ինչ որ նոքա տեսան. բանում են պատուհանները, երկար դիտելով, արդեօք չե՞ն ճանաչել գետնի վերայ փախստական ոտերի հետքերը—չէ, ոչ մի նշան։ Վերջապէս, նոքա կանգնում են ապշած և ամօթով միմեանց են նայում։ Զարմանալին այն է, որ խուզարկուների ոչ մէկի զըլ-

խիցը չանցաւ տնտղել անկողինը, ինչպէս տնտղեցին մահ-ճակալի տակը. սորանից եզրակացնում եմ, որ նոքա ամենքն էլ բաւականին յիմար էին։

CXLV.

Մինչև որ տևում էր այս խուզարկութիւնը, չկարծէք որ Դոննա-Զուլիան լուռ էր մնացել. «Լաւ էք անում, շատ լաւ, բացականչում է նա, փնտռէք, լաւ փընտռէք, աւելացրէք անարդանքը անարդանքի վերայ, անպատվութիւնը անպատվութեան վերայ. ո, Աստուած իմ, մի՞թէ այս ամօթին հասնելու—ամուսնացած եմ ես, մի՞թէ սորա համար եմ համբերել ինձ կից Ալֆոնսոի նման մի հրէշին... ոչ, համբերութիւնս հատաւ, բաւական է, ես էլ չեմ կարող այս տան մէջ մնալ. ես կըփախչեմ այս-տեղից, եթէ դեռ կան Սպանիայում օրէնքներ և իրաւաբաններ»։

CXLVI.

«Այո, Դոն-Ալֆոնսո, այս վայրկեանից սկսած դուք այլ ևս ամուսինս չէք. և ե՞րբ էք դուք եղել արժանի այս կոչման. ձեր վարմունքը համապատասխան է ձեր հասակին. դուք վաթսուն տարեկան էք... յիսուն կամ վաթսուն... այդ մէկ է... խելք և ամօթ մնացել է ձեզ, որ առանց որ և իցէ առթի դուք անարգում էք մի պատուաւոր կնոջ անունը... անխի՛ղճ, նենգամի՛տ, բարբարոս, Դոն-Ալֆոնսո... չէ՛, դուք ասացէ՛ք, ինչպէ՛ս էք համարձակվում մտածել անգամ, որ ձեր կինը կարող է մոռանալ իւր պատիւը։

CXLVII.

«Մի՞թէ սորա համար ես դեռ չեմ օգտուել կանանց սեռի արատներից. մի՞թէ սորա համար ես ընտրել եմ մի ծեր և խուլ խոստովանահայր, որ, անշուշտ, անտանելի կըլինէր մի ուրիշ տիկնոջ համար։ Ո, ինչո՞ւ մինչև այժմ նորան առիթ չեմ տուած՝ ինձ նախատելու. բաւական չէ այդ, նա այնքան զարմանում է անմեղութեանս վերայ, թշուառը, որ չգիտէ ինչ կարծել՝—ամուսնացած եմ ես թէ չէ... Ո, անշուշտ, դուք շատ կըտանջուէք, երբ իմանաք, որ վիժածիս պատճառը դուք էք եղել»։

CXLVIII.

«Մի՞թէ սորա համար Սեվիլլեայի երիտասարդների մէջ ես դեռ չեմ ընտրել ոչ մի Cortejo[1]. *մի՞թէ սորա համար միշտ նստած եմ տանը, աշխարհի լուսից զրկուած, եթէ չհամարել յուլերի կռուի, պատարագի, կոմեդիայի և պարահանդէսների պատահական այցելութիւններս. մի՞թէ սորա համար ես չեմ յուսադրել պաշտօնէներիս և ոչ մէկին, չնայելով նոցա բարձր դրութեանը. աւելի կ'ասեմ՝ ես մինչև անգամ անքաղաքավարի եմ ձևացել նոցա վերաբերմամբ. մի՞թէ սորա համար դեներալ կոմս Օ'Ռիլլին, Այժերի նուաճողը, ամեն տեղ կրկնում է, որ ես նորա հետ շատ սառն եմ վարուել»։*

CXLIX.

«Իտալացի երգիչը—Կայյանին չէ՞ր, որ զուր երգում էր վեց ամիս շարունակ, պատուհաններիս տակ կանգնած.

---

[1] *Սպանուհիք իրենց պաշտող տղամարդկանց կոչում են* «Cortejo»։

նորա ազգակիցը—Կոմս Կորնիանին չէ՞ր, որ ինձ յայտարարել էր Սպանիայի ամենատաքինի կին. որքան ուսներ և անգղիացիք մերժել եմ ես... վերջապէս, ես յուսահատութեան մէջ եմ ձգել Կոմս Սարոնգսարոգանովին և Լորդ Մունթ Կոմֆիֆեչուլին, որ անցեալ տարի սիրով բորբոքուած դէպի ձեր ամուսինը արբեցողութեան մատնեց իրեն և հոգին տանջեց»:

CL.

«Դուքս Իշարը չէ՞ր և Դոն-Ֆերնանդ Նունեցը—երկու եպիսկոպոսներ, որոնք ծնկաչոք սէրս էին պաղատում. և այդ է ձեր վարմունքը մի հաւատարիմ կնոջ հետ. վերջապէս, ատացէք, խնդրեմ, լուսնի որ մասն է ձեր վերայ այդպէս խիստ ազդում: Ո՛, դուք դեռ շատ չափաւոր էք, որ չէք զարկում ձեր կնոջը, թէպէտև ժամը, կարծեմ, պատեհ է... Ո՛, քա՛ջ հերոս, բոլոր ձեր ատրճանակներով և մերկացրած սուսերներով դուք մի զարմանալի կատակերգութիւն էք խաղում»:

CLI.

«Ահա ինչու դուք յանկարծ ճանապարհ ընկաք, պատճառ բերելով անյետաձգելի գործեր, ձեր խորամանկ քարտուղարի հետ, որին այժմ տեսնում եմ անկիւնում կանգնած. անդգամը կծում է շրթունքները, զգալով իւր ծիծաղաշարժ դրութիւնը: Ես ձեզ արհամարհում եմ երկուսի՛դ էլ, բայց նորան՝—տատել ևս. նորա վարմունքը աններելի է, որովհետև հաւատացէք, որ այդ խարդախ գործում նա դրդուած է եղել մի մեծ գումարից աւելի, քան թէ սիրուց դէպի ձեզ կամ ինձ»:

CLII.

«Եթէ այս պարոնը եկած է դատաստանական քննութիւն անելու, թող սկսի իւր գործը... ո, ի՛նչ կարգի էք բերել մեր բնակարանը... ահա թանաք, ահա և գրիչ, դէհ, սկսէք դատաստանահարցը, պարոն, և ամենը ճշտութեամբ թղթի վերայ հանէ՛ք. ես բնաւին ցանկութիւն չունեմ, որ դուք ձրի ձեր վճարը ստանաք... բայց ի նրկատի ունենալով, որ նաժիշտս համարեա մերկ է ամենևին, հեռացրէ՛ք, խնդրեմ, ձեր ամբոխը»։— «Ո, հեծկլտալով դոչից Անտոնիան, ի՛նչ ուրախութեամբ բոլորիդ աչքերը ես կըհանէի»։

CLIII.

«Ահաւասիկ առանձնասենեակը, ահա՛ ննջարանը... փնտռեցէք վեր ի վայր... ահա՛ բազմոցը... և վառարանը... վերջինը, անշուշտ, կարող է տաքացնել գիշերուայ ցրտից սառած մի սիրականին. բայց քունս գալիս է... աղմուկ մի հանէք և շտապեցէք գտնել ծպտեալ սիրականիս... ապա, շնորհ բերէք, ինձ էլ ներկայացնել. անշուշտ, մի հետաքրքրելի մարդ պիտի լինի»։

CLIV.

«Իսկ այժմ, Հիդալգո, երբ ցեխի հետ խառնեցիք ձեր ամուսնու պատիւն և անունը այս պարոնների առաջ, որոնք ամբիծապարտ կանգնած են այստեղ, այժմ ցոյց տուէք ձեր մեծահոգութիւնը, տեղեկութիւն տալով այն մարդու մասին, որին դուք ոլորնում էք։ Ի՞նչ է նորա անունը, նորա դրութիւնը հասարակութեան մէջ... դէհ, ասացէ՛ք, ո՞վ է նա... կը յուսամ, որ երիտասարդ մարդ է,

վայելչակազմ, բարձրահասակ... խօսէ՛ք, վերջապէս, ես հաւատացած եմ, որ առանց ծանր առթի դուք երբէք չէիք համարձակուիլ այդքան անպատուել ձեր կնոջը»:

CLV.

«Ի հարկէ, նա վաթսուն տարեկան չէ՛. այս հասակում նա կը լինէր մի քիչ ծեր, որ արժանի լինէր մահուան կամ ձեզ նման մի երիտասարդի կասկածին. Անտոնիա, մի բաժակ ջուր... ա, ինչո՞ւ արտասուք եմ թափում—անարժան են նոքա հօրս աղջկայ բնութեանը. իսկ թշուառ մայրս, աշխարհ բերելով ինձ, կարո՞ղ էր նախազգալ, որ մի օր ես ընկնելու եմ մի հրէշի ձեռքը»:

CLVI.

«Բայց, ասացէ՛ք անկեղծ, կարելի է նաժիշտս է ձեր կասկածը շարժում. դուք, անշուշտ, տեսաք, որ նա պառկած էր կողքիս, երբ յանկարծ ձեր արբանեակների հետ սենեակս մտաք: Նայէ՛ք ամէն տեղ, պարոն,—մենք ծածկելու բան չունենք: Սակայն միւս անգամ յոյս ունեմ, մեղ կ'իմացնէք կանխապէս, կամ կը սպասէք դուռն առաջ մի երկու բոպէ և ժամանակ կը տաք որ մենք զուգուած պատուաւոր հիւրերին արժանի ընդունելութիւն անենք»:

CLVII.

«Խօսքս վերջացրի, պարոն, և էլ չեմ խօսելու. այն սակաւ խօսքերը, որ ես ասացի, թող ապացոյց լինեն, որ մի թշուառ և անմեղ կին կարող է անարատունջ տանել աւելի մեծ անպատուութիւններ և մի և նոյն ժամանակ անարժան համարել դանդատաւոր լինել... Այժմ դիմե-

ցէք ձեր խղճմտանքին, նա մի օր ձեզանից պատասխան կըպահանջի... և այն ժամանակ թող Աստուած ձեզ փրկի դառն կսկծից... — Անտոնիա, ո՞ւր է Թաշկինակս»։

CLVIII.

Այս խօսքերը ասելով, նա յետ ձգեց գլուխը բարձի վերայ. նորա սև աչքերը, փայլելով մաքուր արտասուքի միջից նման են երկնքին, որ մի և նոյն ժամանակ անձրև և շանթ է արձակում. նորա սև մազերը ալիքներով են թափվում թաց և գունատ այտերի վերայ, թէև բազմաթիւ գանգուրները չեն կարող ծածկել նորա սքանչելի, ձիւնափայլ ուսերի վայելչակազմ գծերը. քաղցր շրթունքները դողում են յուզմունքից, կուրծքը շարժվում է և սիրտը ուժգին բաբախում։

CLIX.

Սենեօր Դոն-Ալֆոնսոն շփոթուած է սաստիկ. Անտոնիան անց ու դարձ է անում սենեակի մի անկիւնից միւսը, ուր ամենը տակն ու վեր է արած։ Գլուխը բարձր պահած, նա ձգում է խոժոռ հայեացքներ իւր պարոնի և նորա Միրմիդոնների վերայ, որոնք շփոթուած էին նոյնպէս, բայի քարտուղարից. նա միայն նման Աքատին, հաւատարիմ մինչև գերեզմանը, անվրդով էր մնացել. «Թող միայն խռովութիւն լինի, մտածում էր նա, իսկ յետոյ, յայտնի է, որ առանց օրէնքների միջամտութեան խաղաղութիւնը դժուար է վերստին տիրում»։

CLX.

Անշարժ կանգնած նա, կարծես, հոտոտում էր իւր տափակ քթով և նեղ աչքերով ուշադրութեամբ հետե-

ւում էր Անտոնիայի շարժուածքներին, մի խօսքով՝—նորա կասկածը դեռ չէր փարատուել։ Նորա մտքից բնաւին չէր անցնում «պատիւ և ընտանեկան խայտառակութիւն» հասկացողութիւնները. թող միայն յանձնեն նորան որ և իցէ դատաստանական գործ. նորա սիրտը չէր շարժում երիտասարդ ասած հասակը կամ դեղեցկութիւնը և նա երբէք հաւատ չէր ընծայում խօսքերին, որոնք չեն պրնդած երկու-երեք ճարպիկ սուտ վկաներով։

CLXI.

Ինչ վերաբերում է Դոն-Ալֆոնսոին, խե՜ղճը, աչքերը խոնարհած, պէտք է ասել, մի յիմար կերպարանք ունէր։ Ի՞նչ օգուտ ստացաւ քրքրելով բոլոր ծակուծուկերը և այդքան խիստ անպատուելով իւր երիտասարդ կնոջը.—ոչի՛նչ, բացի խղճմտանքի չար խայթոցներից, որոնց աւելացան կնոջ յորդառատ խօսքերը, տևելով կէս ժամ և կարկուտի նման թափուելով նորա գլխին։

CLXII.

Նախ և առաջ նա փորձեց մի ինչ որ քրթմնջել,—պատասխանի տեղ վաղեցին արտասուք, լսուեցաւ լաց ու կոծ, և հանդէս եկան ուշաթափութեան բոլոր նշանները՝—մի տեսակ հառաչանք, մի տեսակ սրտագնացութիւն, ծանր շնչառութիւն, մի խօսքով այն սովորական երևոյթները, որ մի կնոջ յուզմունքն են արտայայտում... Ալֆոնսոն նայելով իւր կնոջ վերայ, յիշում էր Հովբին. մի և նոյն ժամանակ նորա աչքի առաջ երևեցան կատաղած աղդականները, վաշտերով նորա շուրջը կանգնած, և նա հաւաքեց իւր բոլոր ուժերը համբերութիւն պահպանելու։

CLXIII.

Նա արդէն պատրաստ էր խօսել, այսինքն մրթմրթալ, բայց խորագէտ Անտոնիան շտապեց խօսքը կտրել... «Պարոն, ասաց նա, դուրս գնացէք սենեակից և էլ ոչ մի խօսք մի աւելացնէք, թէ չէ տիկինը հողին կ'աւանդի»։ «Սատանան նորան տանի», մտածեց Ալֆոնսօն և էլ ոչինչ. ժամը պատեհ չէր երկար ու բարակ խօսելու և ձգելով երկու-երեք խոժոռ հայեացքներ—նա խոնարհեցաւ, պարզ չհասկանալով իւր արարմունքը։

CLXIV.

Ամենքը հեռացան. քարտուղարն էր միայն, որ վերջինը սենեակը թողեց, կամաց-կամաց յետ քաշուելով, դռան առաջ կանգ առնելով, մինչև որ Անտոնիան բռնի դուրս հանեց նորան։ Անբաւական գործի այս ընթացքից նա չհասկացաւ Դոն-Ալֆոնսօի տարօրինակ և թեթևամիտ վարմունքը, որ, պէսք է ասած, ցնորուածի էր նման... Նա դեռ խորասուզուած էր իւր մտքերի մէջ, երբ յանկարծ քթի տակ դուռը փակեցին։

CLXV.

Հազիւ թէ բանալին հանեցին, երբ յանկարծ... ինչ ամօ՛թ, ինչ յանցա՛նք, ո կանանց սե՛ռ... ինչպէ՞ս կարող է քուք այդպիսի յանցանքներ գործել, պահպանելով մի և նոյն ժամանակ ձեր բարի անունը. թէ դուք կարծում էք, որ այս աշխարհը, միւսն էլ նորա հետ, կոյր է ամենևին. մի՞թէ կայ մի բան, որ վեր լինի բարի անունից։ Բայց ես շարունակում եմ, որովհետև դեռ շատ բան ունեմ ասելու և, անշուշտ, մեծ զզուանքով պիտի ձեզ յայտնեմ, որ Ժուանը կիստախեղդ դուրս ցատկեց անկողնուց։

CLXIV.

Նորան թաղցրել էին... չեմ կարող պատմել կամ նկարագրել ինչպէ՞ս. նուրբ և բարակ, նա կարող էր հեշտութեամբ ծալուել և շատ փոքր տեղ էր հարկաւոր նորան տեղաւորելու: Բայց եթէ նա խեղդուէր այդ երկու չքնաղ արարածների ծանրութեան տակ,—արժանի՞ կըլինէր խղճալու. ես չեմ կարող, նաև իրաւունք չունեմ բարեսիրտ լինել դէպի նա: Առաջինը՝ աւելի լաւ է հոգին աւանդել այս տեսակ, քան թէ խեղդուել արբեցող Կլարենսի նման գինու տակառում[1]:

CLXVII.

Երկրորդը՝ կարիք ունէ՞ր Ժուանը մի մեղք գործել, որ երկինքը մեզ արգելում է, իսկ մարդկային օրէնքը պատժում տուգանքով. և յետոյ վաղ չէ՞ր այդ նորա մատաղ հասակի համար: Ճիշտ է, որ տասնվեց տարում խղճմտանքը մեզ չէ տանջում այնքան, որքան վաթսուն տարեկան հասակում, երբ մենք սկսում ենք յիշել բոլոր մեր մեղքերը և հաշիւը վերջացնելով տեսնում, որ կշիռը ստատանայի գիրկն է մեզ քաշում:

CLXVIII.

Ես կարիք չունեմ ձեզ նկարագրելու Ժուանի դրութիւնը. այդ նկարագրած է երբայեցւոց պատմութեան մէջ, ուր դուք կըկարդաք ինչպէս բժիշկները, ձեռք քաշելով

[1] Դուքս Կլարէնս, Էդուարդ IV-ի եղբայրը, դատապարտուած լինելով մահուան, վախճանուեց «Լոնդրայի Աշտարակի» մէջ 1478 թ. ըստ ժողովրդական աւանդութեան, նորան խեղդեցին գինու տակառում. նայէք Շէքսպիրի Ռիքարդ II:

խմիչքներից և այլ գեղերից, ծերացած Դաւիթ թագաւորին, որի արիւնը կորցրել էր իւր արագութիւնը, առաջարկեցին փորձել մի անբիծ աղջիկ, իբրև տեղային գեղ.—հիանալի դեղ, որ, անշուշտ, լեսվին ազդեց: Երևի, մի ինչ որ տարբերութիւն կար այդ դեղի զործ ածելու մէջ, որովհետև Դաւիթ թագաւորի օրերը երկարացնելով, նա քիչ մնաց զրկէր Ժուանին կեանքից:

CLXIX.

Բայց ի՞նչ ձեռնարկել. Ալֆոնսոն իսկոյն վերադառնալու է իւր տխմար արբանեակներին արձակելուց յետոյ. նոքա սկսում են աղաչել Անտոնիային մի խարդախութիւն հնձարել, որ ազատէր սիրականներին այդ դժուար դրութիւնից: Երկար նա կոարում է իւր զլուխը, բայց անզօր է մի բան յօրինել: Ի՞նչ կ'անեն նոքա, եթէ նորից սկսի բանակռիւը... և յետոյ մի քանի ժամ ևս և լոյսը ծագելու է. Անտոնիան չգիտէ, թէ ինչ առաջարկէ... Ջուլիան լուռ է... և մտածում է իւր դունատ շրթունքները Ժուանի այտերին:

CLXX.

Նոցա շրթունքները հանդիպում են միմեանց. Ժուանի ձեռքը հեռացնում է Ջուլիայի ճակատի վերայ թափուած զանգուրները և ոչ մէկը նոցանից չէ կարող զսպել սիրոյ հրձուանքը, մոռանալով ամենևին սպառնող վտանգը: Անտոնիայի համբերութիւնը վերջապէս հատնում է. «Դէհ, բաւական է, նաղելու և փափկելու ժամանակը չէ. մնում է մի ելք՝ փակել առանձնասենեակում այս գեղեցիկ ազային»:

CLXXI.

«Պահէ՛ք, ի սէր Աստուծոյ, ձեր փաղաքշանքները մի ուրիշ աւելի աջող դիւերուայ համար... բայց ո՞ր սատանան կարող էր պարոնին կասկած ներշնչել. վերջը ի՞նչ կը լինի... չէ, ես վախենում եմ հեռանքներից... այս պատանին մի սատանայ է. ի՞նչ կոտրատուելու ժամանակ է այժմ, ի՞նչ է՛ք մտածում. դիտէ՞ք, որ վերջը կարող է արիւն թափուել: Դուք կրկորցնէ՛ք կեանքը, ես՝—իմ տեղս, իսկ տիկինը—իւր դիրքը ու պատիւը... և ո՞ւմ համար—մի մարդու, որ աղջկայ դէմք ունի:

CLXXII.

«Ուրիշ բան է, եթէ այդ ամէն դժբախտութիւնների պատճառը լինէր մի ամրակազմ քսանհինգ կամ երեսուն տարեկան տղամարդ (դէհ, շատապէ՛ք, պարոն)... ոչ թէ մի երեխայ. այդ ի՞նչ է, ծէ՞ր բարի... ես ոչինչ չեմ հասկանում, ես ապշած եմ տիկնոջս ճաշակի առաջ... (դէհ, մտէ՛ք սենեակ)... Բայց տէրը հեռու չէ... Լա՛ւ. այժմ գնեցկագէմ պատանին փակուած է... և եթէ մինչև առաւօտը մի միջոց գտնենք նորան ազատելու... (Ժուան, արթուն կացէ՛ք, ի սէր Աստուծոյ):

CLXXIII.

Մատ. Դոն-Ալֆոնսօն—այս անգամ մենակ—և վերջ դրեց հաւատարիմ նաժշտի խրատական զրոյցներին: Անտանիան կամենում էր մնալ սենեակում, բայց պարոնը հրամայեց հեռանալ. նաժիշտը հնազանդում է դժգոհութեան նշաններով: Աւա՜ղ, այժմ էլ չկայ հնար ժամանակին օգնութեան հասնել, թէպէտև միւս կողմից՝ ի՞նչ

կարող էր անել, եթէ հիար սենեակում. ապա նայելով պարոնի վերայ և յետոյ տիկնոջ, նա ձրագը ուղղեց և գլուխը խոնարհելով հեռացաւ սենեակից։

CLXXIV.

Ալֆոնսօն մի բոպէ լռութիւն պահպանեց. յետոյ նա փորձեց ներողութիւն խնդրել գիշերուայ անցքի առթիւ. նա չկարողացաւ ոչ մի դրական պատճառ առաջ բերել իւր վարմունքը արդարացնելու. նա կարող էր միայն աւելացնել՝ որ եթէ այսօր նա երևեցաւ մի քիչ անքաղաքավարի—նա ունէր մի քանի պատճառներ, թէպէտև նոցանից և ոչ մէկը չասաց։ Մի խօսքով, նորա ճառը մի գեղեցիկ օրինակ էր ներկայացնում և այս տեսակ հռետորական դարձուածներին գիտնականները rigmarole[1] կ'ասեն։

CLXXV.

Ջուլիան ոչինչ չէր խօսում. երբեմն Դոն-Ալֆոնսօի խօսած ժամանակը նորա ուղեղում ծագում էին մի-մի վաղուց արդէն պատրաստած պատասխաններ, որ միշտ կանանց օգնութեան են հասնում, եթէ նոքա լաւ են ճանաչում իրենց ամուսինների թոյլ կողմերը։ Նոցա համար երբեմն բաւական է մի խօսք բաց թողնել բերանից և տղամարդի զայրոյթը իսկոյն անցնում է. պէտք է միայն անընդհատ խօսել—ժամանակը անցնում է, հարցը մի ուրիշ ընթացք է ստանում՝—սովորաբար ծուռ. պէտք է միշտ հաստատ ձայնով գիմադրել, սորա մէջ է գլխաւոր

---

[1] Rigmarole, անգղիերէն նշանակում է՝ կրկնութիւն անմիտ և դատարկ խօսքերի։ Վիպասան Գոլդսմիտը այս խօսքը յատուկ անուն շինեց, որով և անմահացրել է իւր վէպի մի տգէտ շատախօսին։

արուեստը։ Օրինակ՝ եթէ մարդը յանդիմանում է իւր կնոջը սիրականի առթիւ... էհ, ի՞նչ վնաս, թող տիկինը յանդիմանի մարդուն մէկի չէ —երեքի առթիւ։

CLXXVI.

Իսկապէս Ջուլիան լաւ գիտէր, ուր պիտի ուղղէր իւր կծու խայթը. Ալֆոնսոի և Ինեցի յարաբերութիւնները յայտնի էին ամենքին. ամօթխածութիւնից զրկուած, թէ մի ուրիշ բանից, Ջուլիան ամենևին չպիտաւ այս հարցին։ Բայց և այնպէս՝ ամենօրեայ փորձը ձեզ պարզ ցոյց է տալիս, որ իւրաքանչիւր տիկին ըստ հանգամանքի ձեռքի տակ ունի հազար ու մէկ արդարացնող պարագաներ։ Երևի, Ջուլիան չէր կամենում, որ Ժուանի ականջին հասնի նորա պատուարժան մօր անբիծ անունը։

CLXXVII.

Հաւանական է, որ կար և մի ուրիշ պատճառ. Ալֆոնսոն ոչ մի խօսքով չյայտնեց իւր կասկածը Ժուանի վերաբերմամբ. նա միայն խօսում էր սիրոյ նախանձի մասին չանուանելով այն երջանիկ սիրականին, որ նորա կասկածի տակ էր ընկած։ Բոլոր այդ խօսակցութիւնը ապացուցանում էր, որ նա դեռ չէր հրաժարուել այս գաղտնիքի մեկնութիւնից։ Ուրեմն, խօսել Ինեցի մասին— մի էր՝—Ժուանի անունը Ալֆոնսոի գլուխը ձգել։

CLXXVIII.

Նուրբ խնդիրներում բաւական է լինում երբեմն մի խօսք—կասկածը յարուցանելու. լուութիւնը ամենից յարմարն է. և յեռոյ մի առանձին «տակ» «ունի» (թող ներեն

ինձ այս նոր խօսքը. լաւ չէ հնչում նա, բայց յարմար է չափիս) այն կինը, որին մարդը կամ սիրականը ձանձրացնում է կասկածով և նախատինքներով. նա շատ լաւ գիտէ, ինչպէս պէտք է շեղուել գլխաւոր հարցից: Եւ ի՞նչ վայելչութեամբ ստում են այս չքնաղ արարածները. իրաւ, որ սուտ ու պատիր խօսքերը նոցա համար են ստեղծած:

CLXXIX.

Նոքա կարմրում են և մենք սկսում ենք համոզուել (այսինքն՝ ես գրեթէ միշտ այդպէս եմ արել). զուր և ունայն են բոլոր ձեր խօսքերը, որոնց մէկի վերայ հաղար են յետ գառնում. և երբ շունչը սպառվում է, նոքա սկսում են հառաչել, վշտահար աչքերը խոնարհեցնել, արտասուք թափել և մենք ամօթապարտ գլուխներս կորայնում ենք: Իսկ յետոյ... յետոյ նստում ենք սեղանի և ընթրում:

CLXXX.

Ալֆոնսոն վերջացրեց իւր աղերսը և արտասուալից աղաչում էր կնոջը ներողամիտ լինել. տիկինը մի կողմից կարծես թէ ներեց, միւս կողմից կարծես թէ մերժեց, առաջարկելով մի և նոյն ժամանակ այնպիսի պայմաններ, որոնք անզութ երևեցան: Այնպէս որ Ալֆոնսոն չկարողացաւ մի ինչ որ ընչին և աննշան բանի յօժարութիւնը ստանալ և նման էր նա մեղաւոր Ադամին, յուսահատ կանգնած երկրային դրախտի առաջ. շփոթուած և յուզուած մի և նոյն ժամանակ, իզուր նա քաւում էր իւր մեղքերը և իզուր մի ողորմութիւն խնդրում, խոստանալով արժանի լինել կնոջ բարեսրտութեան. այս իսկ ժամանակ նորա հայեացքը յանկարծ ընկաւ մի զոյգ կոշիկների վերայ:

CLXXXI.

Կոշիկների դոյդ այդ ի՞նչ է նշանակում... Վնաս չէր լինելու, եթէ պապականէր մի կնոջ չքնաղ ոտներին. իսկապէս մեծ ցաւով պիտի ձեզ ասեմ, որ այս կոշիկները տղամարդու էին. տեսնել և ձեռք առնել — Դոն-Ալֆոնսոի համար մի ակնթարթի գործ էր... Տէ՛ր բարի, Տէ՛ր Գթառատ, ատամներս կրճատում են, արիւնս սառչում է... Ալֆոնսոն դիտում է նոցա և սաստիկ կատաղում։

CLXXXII.

Նա դուրս է վազում իւր սուրը գտնելու, Ջուլիան թռչում է դէպի առանձնասենեակը. «Փախէ՛ք, Ժուան, փախէ՛ք, ի սէր Աստուծոյ, փախէ՛ք... զո՞ւր են խօսքեր... դուռը բաց է... դուք կըփախչէք այն ճանապարհով, որ լաւ է ձեզ ծանօթ... ահա բանալին... փախէ՛ք... մնա՛ք բարեաւ... դէհ, շտապեցէք, լսում եմ Ալֆոնսոի քայլերը... դեռ լոյսը չէ ծաղել... փողոցներում մարդ չկայ»։

CLXXXIII.

Ո՞վ կարող է ասել, որ տուած խորհուրդը լաւ չէր... բայց, ափսո՜ս, որ նա մի քիչ ուշ հասաւ, ինչպէս սովորաբար պատահում է այդ դէպքերում և դա, անշուշտ, մեր ճակատագրի անդթութեան նշանն է։ Մի քայլ և Ժուանը դուռն մօտ էր, նա կարող էր փրկուել, երբ յանկարծ նորա առաջը կտրում է Դոն-Ալֆոնսոն գիշերուայ հագուստի մէջ, սպառնալով ոչնչացնել նորան... տառանց երկար ու բարակ մտածելու Ժուանը վայր է ձգում խեղճին։

CLXXXIV.

Կռիւը սաստիկ էր. ճրագը հանդաւ. Անտոնիան գոչեց՝ «կողոպտում են», Ջուլիան՝ — «կրակ են տալիս», բայց,

աւաղ, ոչ մի ծառայ տեղիցը չշարժուեց կռուի մէջ խառնուելու։ Ալֆոնսոն ծեծուած, որքան կարող էր ցանկանալ, հայհոյում էր և սպառնում՝ «դեռ լոյսը չծագած իւր վրէժը հանել». Ժուանը զոչում էր աւելի ևս բարձր նորա արիւնը տաքացել էր, և դաղանի նման կատաղած, նա իսպառ ցանկութիւն չունէր մարտիրոսանալու։

CLXXXV.

Ալֆոնսոն իւր սուրը ձեռքից բաց թողեց.—լաւ է, որ Ժուանը չնկատեց այդ. եթէ նա տեսնէր մահաբեր երկաթը, Ալֆոնսոի օրերը, անշուշտ, հաշուած կըլինէին... ... Ո, յանցաւոր տիկիններ, ե՞րբ կըսկսէք մտածել ձեր ամուսինների կամ սիրականների կեանքի համար. ամեն մի բոպէ ձեզ սպառնում է երկպատիկ այրիութիւն։

CLXXXVI.

Հաղիւ թէ Ալֆոնսոն մտադրութիւն ունենար բաց թողնել Ժուանին իւր ձեռքից. վերջինն էլ խեղդում էր նորան կամենալով շուտով ազատուել.—ահա երևեցան սրեան կաթիլներ, ճշմարիտ է, քթից. վերջապէս, ուժերը սպառուեցան, Ժուանը պատրաստեց իւր վերջին հարուածը, երբ յանկարծ ճղուեց նորա հագուստը... և նա փախաւ մերկացած Ցոմսէվի նման... Հաղիւ թէ հնար է աւելի հեռու տանել այս երկու հերոսների նմանողութիւնը։

CLXXXVII.

Վերջապէս հասնում են ձրագները։ Ծառաները և նաժիշտները ներս վազելով ապշած կանգնում են տարօրինակ տեսարանի առաջ. Անտոնիան՝—սասսիկ յուզ-

ուած, Ջուլիան՝—ուշաթափ, Ալֆոնսոն՝—դռան մօտ անշունչ տարածուած, յատակի վերայ այստեղ և այնտեղ շորերի կտորներ, արեան կաթիլներ և ոտքերի հետքեր։

Ժուանը հասաւ պարտիզի դռանը և արագ դուրս վազեց։

CLXXXVIII.

Այստեղ վերջանում է առաջին երգս... կարիք կայ արդեօք երգել կամ ասել, ինչպէս Ժուանը, գրեթէ ամենևին մերկ, փրկուեց գիշերուայ քողի հովանաւորութեան տակ, որ սովորաբար նպաստում է յանցաւորներին, և ինչպէս հասաւ իւր տունը մի տարօրինակ դէպքով։ Խայտառակ ղրոյցները, որ տարածուեցան միւս օրը քաղաքում, հաղար ու մէկ մեկնութիւնները գիշերուայ անցքի վերաբերմամբ, Դոն-Ալֆոնսոյի տպահարդանի պահանջը—այս ամենը՝—մանրամասնօրէն նկարագրած է անդղեայցոց լրագրներում։

CLXXXIX.

Եթէ մեծ է ձեր յանկութիւնը ծանօթանալ աւելի սերտ դատաստանական գործին, վկաների ասածի և նոցա անուններին, փաստաբանների ճառերի և օրէնսգէտների թեր ու դէմ տուած խորհուրդների հետ, կարող եմ ձեզ առաջարկել մի քանի հրատարակութիւններ. այդ անցքի մասին շատ յօդուածներ են գրած—ամենքն էլ միապէս հետաքրքրաշարժ. բայց ամենաբեւելին, անշուշտ, պատկանում է Գուրնէյի գրչին, որ գործի հետ անմիջապէս ծանօթանալու համար Մադրիդ ճանապարհորդեց[1]։

---

[1] Վիլլիամ Բրոդի Գուրնէյ—պարլամենտի յայտնի ստենոգրաֆ։

CLC.

Իսկ Դոննա-Ինեսը կամենալով հեռացնել հասարակութեան աչքերը և չար լեզուները այդ խայտառակ անցքից, որ նմանը չունէր դարերի ընթացքում, գնեց Վանդալների Սպանիայից հեռանալուց յետոյ, Դոննա-Ինեսը ուխտ առաց Սուրբ Կուսի մատուռում հաղար մոմ վառել (պէտք է ասած, որ նա ճշտութեամբ է կատարում բոլոր իւր ուխտերը) և ապա խորհրդակցելով մի քանի պառաւ կանանց հետ, նա վճռեց ճամբել իւր որդուն Կադիքս, իսկ այնտեղից ծովով ուրիշ աշխարհներ։

CXCI.

Նորա ցանկութիւնն էր, որ Ժուանը ճանապարհորդելով Եւրոպայի բոլոր աշխարհներում—ցամաքով և ծովով, առաջադիմութիւն ցոյց տայ առաքինութեան գործում, ամրանայ իւր բարոյական գաղափարներում—ի Հարկէ, գլխաւորապէս, Ֆրանսիայում և Իտալիայում. այդ է գնեց երիտասարդների գլխաւոր պարապմունքը վերայիշեալ երկրներում։

Իսկ Թշուառ Ջուլիային մենաստան փակեցին. ցաւով նա մտաւ այդ սրբավայրը։ Հետևեալ նամակը աւելի սերտ ծանօթացնելու է մեզ նորա հոգեկան դրութեան հետ։

CXCII.

«Ինձ ասում են, որ ձեր ճանապարհորդութիւնը վերջացած է արդէն, գրում էր նա Ժուանին։ Մի գեղեցիկ մտադրութիւն... և մի և նոյն ժամանակ, որքան ցաւալի ինձ համար։ Ես չեմ ձգտում տիրել ձեր նորափթիթ սրտին, իմն դատապարտուած է դառն արտմութեան միակ

զոհ լինել,—այնու ամենայնիւ, այդ զոհաբերութեան նա համաձայն է։ Ես շատ սիրեցի... սորանումն է, անշուշտ, բոլոր իմ մեղքս... շատպով եմ գրում ձեզ այս նամակը, եթէ մի բիծ նկատէք, չկարծէք, որ արտասուք է դա. աչքերս բորբոքվում են, բայց չեն արտասվում»։

CXCIII.

«Ես ձեզ սիրեցի, ես դեռ սիրում եմ ձեզ և այս սիրոյ ես զոհ եմ բերել՝—դրութիւնս, բախտս, երկինքը, հասարակութեան կարծիքը և պատիւս... և դարձեալ զզջալու չեմ այն անգին զգացմունքի համար, որի յիշատակը այնքան քաղցր է ինձ... եթէ ես այստեղ խօսելու եմ յանցանքներիս մասին—ոչ արդարանալու համար, հաւատացէք—ոչ, և ոչ ոք կարող չէ այնքան խիստ դատել ինձ, որքան ես ինքս։ Գրում եմ այս տողերը, որովհետև քունս փախչում է աչքերիցս... ես չեմ նախատելու ձեզ... և ձեզանից այլևս ոչինչ չեմ սպասում»։

CXCIV.

«Սէրը տղամարդու կեանքում մի անցաւոր դէպք է. կնոջ համար՝—նորա ամբողջ գոյութիւնն է լցնում։ Արքունական կամ եկեղեցական աստիճաններ, պատերազմական դափնիք, բախտի պարգևներ, այդ ամենը տղամարդու բաժին է լինում. պարծանքն և փառասիրութիւնը լցնում են նոցա թափուր մնացած հոգին և սակաւաթիւ են նոքա, որոնք տղատ են մնում վերոյիշեալ ձգտումներից։ Այս են տղամարդու առաւելութիւնները. մեր սեռը ունի մի բան՝ սէր, սէր և դարձեալ սէր... և միշտ նորա հետ անբաժան կապուած՝—անկում և կորուստ»։

CXCV.

«Դուք վաղելու էք պատուի և զուարճութիւնների յետևից. դուք դարձեալ կըսիրէք և պատասխան կըստանաք... իսկ ինձ—ի՞նչ է ինձ մնացել այս թշուառ աշխարհում, բայց քանի մի տարիներից. և նոցա ընթացքում սրտի խորքերումս ես պիտի պահեմ դառն կսկիծս և անվերջ ամօթս։ Ես ամենը կըհամբերեմ,—անհնարին է միայն սրտից վանել այն հզօր զգացմունքը, որ երբէք դադարելու չէ ինձ այրել և տոչորել։ Մնա՛ք բարեաւ... ներեցէ՛ք... սիրէ՛ք... ո՛չ, զուր է այժմ յիշել այս խօսքը... բայց մոռացութեան տալ, ո, երբէ՛ք չեմ կարող»։

CXCVI.

«Սիրաս միշտ տկար է եղել... նա այժմ էլ տկար է, բայց բաւական է, պէտք է ուժերը հաւաքել. աւա՜ղ, արիւնս դեռ շարունակում է հոսել այն կողմը, ուր բոլոր մտքերս են ուղղուած, ծովի ալիքների նման, որոնց քըշում է քամին։ Սիրաս՝—կանացի սիրտ է, և ահա ինչու մոռանալ—նա երբէք չէ կարող... ամեն բանի համար նա այժմ կոյր է, բայց մի՛ կերպարանքի և ինչպէս մագնիսի սլաքը ձգտում է անընդհատ մօտենալ միշտ անշարժ բևեռին, այնպէս էլ զգայուն և հաւատարիմ սիրաս միշտ սլանում է դէպի մի դաղափար, որ լցնում է հութիւնս»։

CXCVII.

«Բաւական է. էլ ոչինչ չունեմ ես ձեզ ասելու, մի և նոյն ժամանակ անզօր եմ դրիչս բաց թողնել և չեմ համարձակվում այս թղթի վերայ իմ կնիքը դրոշմել։ Ի՞նչ յոյս, ի՞նչ երկիւղ են մնացել ինձ այժմ. այնքան

մեծ է աղէտս, որ աւելի մեծ լինել այլ ևս չէ կարող և եթէ անձկութիւնը վերջ դնէր մեր օրերին, հնար չէր լինելու շարունակել կեանքս: Բայց մահը փախչում է այն չարաբաստիկ մարդուց, որ պատրաստ է ընդունել նորա հարուածը. և ինձ վիճակուած է վկայ լինել մեր վերջին անջատման և երկարել կեանքիս դառնութիւնը ձեզ սիրելու, ձեզ համար աղօթելու»:

CXCVIII.

Այս նամակը գրած էր ոսկէզօծ թղթի վերայ մի գեղեցիկ և փոքրիկ աղաւնեակի փետուրով: Ջուլիայի ձերմակ, թեթև և փոքրիկ ձեռքը հաղիւ հազ ոյժ գտաւ մօտենալ ճրագին զմուռը հալելու և գողդողում էր մագնիսի սլաքի նման. և այնու ամենայնիւ թղթի վերայ չընկաւ արտասուքի ոչ մի կաթիլ: Նորա կնիքը պատկերացնում էր մի արևածաղիկ, փորագրած քարի վերայ, այս նշանաբանով [1]՝ — «Նա ամենուրէք ձեզ հետևում է». զմուռը ամենանուրբ սեսակից էր և ամենաղեղեցիկ կինաբարիսից:

CXCIX.

Այդպէս անցաւ Ժուանի առաջին սէրը. շարունակե՞մ նորա արկածների պատմութիւնը, թէ ոչ, լիովին կախուած է ընթերցող հասարակութիւնից: Տեսնե՛նք, ինչպէս վերաբերուելու է նա առաջին փորձիս. հասարակութեան բարեմտութիւնը նման է փետուրին, որ հեղինակը կըպցնում է իւր գլխարկին. նորա քմահաճութիւնը փնտասակար լինել երբէք չէ կարող: Ուրեմն, եթէ ես արժանանամ հասարակութեան գովասանքին, հաւանական է, որ մի տարուայ ընթացքում կըհիւրասիրեմ նորան իմ երկրորդ գրքով:

[1] Լորդ Բայրընի կնիքը ունէր այս նշանաբանը:

CC.

Նախ և առաջ պիտի ձեզ յայտնեմ, որ գրուածս լայնածաւալ վիպասանութիւն է լինելու, բաղկացած տասներկու գրքից։ Իւրաքանչիւրում դուք կըգտնէք՝—սիրոյ և պատերազմական արկածներ, ծովային ձանապարհորդութիւններ, փոթորիկներ, նաւեր, զօրապետներ և թագաւորներ անուանայուցյակով հանդերձ. հերոսներս՝—նորատիպար մարդիկ են և պատմութեան մէջ գլխաւոր տեղը բռնելու է երեք նշանաւոր անձք. սանդարամեան պատկերը, ըստ Վերգիլիոսի և Հոմերոսի, արդէն գրչիս տակ է... այս ամենից պիտի եզրակացնէք, որ այնքան էլ ունայն չէ իմ ցանկութիւնը վիպասանի պատուարժան կոչումը ստանալու։

CCI.

Հաւատացնում եմ ձեզ, այս ամենը մեծ ճաշակով և հմտութեամբ պիտի յարմարուած լինի. ճշգրտութեամբ հետևելու եմ Արիստոտելի կանոններին, որոնք, ներկայացնելով վսեմ դատափարների գեղեցիկ ձեռնարկ, ստեղծում են այդքան բանաստեղծներ և երբեմն քանի մի խելագարներ։ Արձակ ոճով գրող բանաստեղծները չեն սիրում չափեր, իսկ ես նոցա համար գրեթէ ցնորուած եմ. «բանիմաց գործաւորը երբէք չէ խռովում իւր գործիքից»։ Ես պիտի բանեցնեմ մի նոր և հրաշալի առասպելանման մեքենայ և կուրացնելու եմ ձեզ սքանչելի թատրոնական տեսարանով։

CCII.

Այնպէս որ կրմնայ մի չնչին տարբերութիւն իմ և նախորդ բանաստեղծների մէջ. և ես համոզուած եմ, որ

այս դէպքում բոլոր առաւելութիւնը պատկանում է ինձ (ոչ թէ՝ ես չունեմ ուրիշ արժանիք, բայց այս վերջինը մի աչքի ընկնող բան պիտի լինի)։ Վերոյիշեալ պարոնները հիւսում են իրենց նիւթերը այնքան ճոխ և գեղեցիկ, որ վերջ ի վերջոյ անհնարին է լինում մի թել գրտնել նոցա առակների լաբիրինթոսից դուրս պրծնելու, մինչդեռ իմ վկայութիւնը ճիշտ է և անսայթաք։

CCIII.

Եթէ մէկը կասկածում է խօսքերիս իսկութիւնը, նորան վկայ կրբերեմ՝—պատմութիւն, աւանդութիւն, փաստեր, պարբերական թերթեր, որոնց ճշմարտախօսութիւնը աներկբայ է և վաղուց դնահատուած, կտակերգութիւններ՝—հինգ արարուածով և օպերաներ՝—երգք։ Կարծում եմ, այս ամենը շատ և շատ բաւական է մի մարդու համոզելու, բայց գլխաւոր ապացոյցս, անշուշտ, լինելու է այն, որ ինքս անձամբ քանի մի Սեվիլլացիների հետ ակնատես եմ եղել, ինչպէս սատանան Ժուանին սանդարամեռը քաշեց։

CCIV.

Եթէ մի օր ես սորանամ մինչև արձակ ոճը, անկասկած, ձեռնարկելու եմ «Բանաստեղծական պատուիրաններ», որոնք, անտարակոյս, պիտի գերազանցեն այն ամենը, ինչ որ առաջ է գրած եղել։ Ես շատ լաւ գիտեմ, ինչպէս պէտք է գրուածը ճոխացնել հսկայ ու մէկ պարագաներով և առաջարկելու եմ ամենավսեմ խրատներ։ Վերնագիրը պիտի լինի՝—«Լոնդին յաղագս մի շշոյ, կամ հրահանգ, ինչպէս իւրաքանչիւր բանաստեղծ կարող է լինել ինքն իւր Արիստոտէլը»։

CCV.

Ահա և պատուիրաններս. «Դու հաւատ կ'ընծայես Միլտոնին, Պոպին, նաև Դրայդենին. դու չես պարծենալ ոչ Վորդսվորթի, ոչ Կոլրիջի, ոչ էլ Սուրթէի գրուածներով, որովհետև առաջինը՝—խրթին է, երկրորդը՝—արբեցողի նման, երրորդի զգացմունքը՝—շինծու. դժուարամատչելի է Կրաբբէն, Կամբելի «Հիպոկրէնը»—մի չոր ու ցամաք բան է. դու ոչինչ չես քաղի Սամուէլ Ռոջերսից և մեղանչելու չես... Մուրի մուսայի դէմ»:

CCVI.

Դու նախանձ չես բերի ոչ Սուրթէյի Ապոզոնին, ոչ նորա Պեգասին, ոչ էլ այն ամենին, ինչ որ նորա զրչին է պատկանում. դու չես գործ ածիլ սուտ վկայութիւն, ինչպէս այդ անում է «Կապոյտների» կուսակցութիւնը (ես գոնեայ գիտեմ նոցանից մէկին, որ սիրում է այդ) կարճ ասած, դու կրդրես այն միայն, ինչ որ կրպատուիրեմ:

Ահա ձեզ օրինակ մի զօրեղ քննադատութեան և ես ձեզ պատուիրում եմ համբուրել «ուշիմ խելքի հարուածող աջը», կամ ծաղրել նորան ad libitum, *թէպէտև վերջին դէպքում, զգոյշ եղէք, պարոններ, զգոյշ եղէք, եթէ ոչ...*

CCVII.

Եթէ մի յանդուգն համարձակուի պնդել թէ՝ ներկայ պատմութիւնս անբարոյական է—յատուկ կրխնդրեմ նորան ադմուկ հանել միայն այն դէպքում, երբ հաստատ համոզուի, որ նա վերաւորուած է. թող նա ինձ կարդայ երկրորդ անգամ և ապա տեսնենք կրկնելո՞ւ է, արդեօք, որ վիպասանութիւնս անբարոյական է, որովհետև նա զը-

ւարձալի է։ Բայց ՞ով է այն յանդուգնը. վերջապէս, իմ երկոտասաներորդ գրքում ես նորան ցոյց կըտամ այն սիրելի վայրերը, ուր ընթանում են բոլոր չար մարդիկ։

CCVIII.

Եւ վերջապէս, եթէ դարձեալ գտնուելու են անձինք այնքան կոյր իրենց օգտի համար, որ կ՚արհամարհեն այս նախերգանքը և մի չար խելքի մոլորեցուցիչ ազդեցութեան տակ հաւատ չեն ընծայիլ ոչ իմ փաստերիս, ոչ էլ իրենց աչքերին, բացականչելով որ նոքա «բարոյականութիւնս շինծու են գտնում», ես նոցա կ՚ասեմ՝—«ստում են», եթէ հոգևորականների դասից են նոքա և—«մոլորվում են», եթէ զինուորականներ կամ կրիտիկոսներ լինեն։

CCXI.

Այժմ ես սպասում եմ ընթերցողի ծափահարութիւններին և խնդրում եմ նորան գիլքս բարոյական համարել. ես գիտեմ, ինչպէս պէտք է բարոյականութիւնը զուարճութեան հետ խառնել (ատամ հանող երեխային տալիս են մի անվնաս խաղալիք) և մի և նոյն ժամանակ ամենքդ մոքներումդ պիտի պինդ պահէք, որ ես ձգտում եմ վիպասանի դափնիքը քաղել։ Վերջապէս, երկիւղ կրելով ձշմարտասէր ընթերցողի կասկածը շարժել փաստերիս իսկութեան մասին, ես կաշառեցի փողով մեծ մօրս սիրած «Հանդէս Բրիտանիայի» ամսագիրը։

CCX.

Հրատարակչին նամակի մէջ ես ուղարկեցի մի ընչին ընծայ և նա շտապեց իւր գոհութիւնը յայտնել փոխա-

դարձ փոստայով, խոստանալով ինձ մի նպաստաւոր յօդուած. բայց եթէ անիրաւ իւր խոստումը պրժի և, բացատրելով, որ նշանակած գուրմարի երեսը չէ տեսել, սկսի ծաղրել իմ պարկեշտ Մուսաս և մեղրի տեղ մաղձ թափել իւր ամնագրի թերթում, ինձ Ճնալու է միայն ամեն տեղ կրկնել, որ նորա ձեռքը գիպել է արծաթիս։

CCXI.

Եւ ընդ հոգանաւորութեամբ այս «Սուրբ Դաշնակցութեան»ես լիայոյս եմ ընթերցողի բարեմտութեան վերայ և իրաւունք ունեմ անուշադիր թողնել գեղարուեստական և գիտական ժողովածուները—ամենօրեայ են նոքա, ամենօրեայ, թէ եռամսեայ—մէկ է. նոյնպէս, ես խպատցանկութիւն չունեմ նոցա աշխատակցելու, նամանաւանդ, որ, ասում են, գ

՝ր է այդ փորձել, որովհետև Edinburgh և Quarterly Հանդէսները նահատակութեան են ենթարկում իրենց հակամիտներին։

CCXII.

Non ego hoc ferrem calida juventa Consule Planco

ասել է Հորացիոսը, ես էլ կրկնում եմ. անցան վեց թէ եօթ երջանիկ տարիներ, դեռ տաջ քան սկսել էի նամակներ գրել Բրենտայի տիերից, երբ Համոձայն էի այս խօսքերի հետ. այո, այն ժամանակ, երբ երիտասարդ էի, երբ հոգիս վառ էր, իսկ Գէորգը—թագաւոր, ես երբէք չէի տանիլ սառնասրտութեամբ «Հանդէսների» ղպարտանքներին։

CCXIII.

Իսկ այժմ երեսուն տարեկան հասակում—մազերս սկսում են արդէն սպիտակել... (հետաքրքիր է իմանալ,

ինչ կըլինի նոցա հետ, երբ քառասունս կրմանեմ. նորեր-ումն մնացումէի կեղծ մտքեր ապսպրել)... Սիրաս էլ արդէն բաւականաչափ ծերացել է, մի խօսքով, ամառուայ բոլոր ուժերս վատնելով—դարուներս դեռ չվերջացած, ես չեմ զգում այլ ևս իմ մէջ զօրութիւն հարուածներին դիմադրելու: Ես վատնել եմ կեանքս, դրամաղլուխս և նորա տոկոսները և դադարել եմ առաջուայ պէս կարծել, որ հոգիս անյաղթ է:

CCXIV.

Երբէք, այլևս երբէք սիրաս չէ վայելելու այն թարմ և բարերար ցողը, որի շնորհիւ ես քաղում էի շրջակայ աշխարհից նորանոր և աքանչելի տպաւորութիւններ, ինչպէս մեղուն իւր մեղրը ծաղիկներից է քաղում: Բայց մի՞թէ ծաղիկները այժմ դադարել են բաշխել իրենց քաղցր հիւթը. ոչ, երևի, ես եմ այնքան մաշուած, որ էլ չեմ զգում նոցա անուշահոտ բուրումը:

CCXV.

Վերջացաւ, ամենը վերջացաւ... ո, իմ սիրտ—ինձ համար դու այլ ևս չես իմ միակ աշխարհը. կար ժամանակ՝—միակ հարստութիւնս էիր և ամենը քո մէջ էր ամփոփուած... իսկ այժմ, դու էլ չես կարող ոչ երջանկութիւն պարգևել, ոչ ցաւերիս աղբիւրը լինել. պատրանք, մոլորութիւնք—անհետացան առ միշտ. դու այժմ անըզգայ ես, թէև նոյնքան բարի ես մնացել և հրապուրիչ ցնորքների փոխարէն ես ձեռք եմ բերել իմաստութեան քանի մի հատիկներ... Աստուած գիտէ, ինչպէս եղաւ, որ իմաստութիւնը ուղեղս իրեն բնակարան ընտրեց...

CCXVI.

Սիրոյ ժամերը անցան, անդարձ հեռացան ինձանից. մնաք բարեաւ—հրապոյրք օրիորդների, մնաք բարեաւ—կախարդանք տիկիններին և, մանաւանդ, այրի կանանց.—էլ չեն կարող նոքա ինձ տանջել, ինչպէս տանջել են մինչև օրս։ Մի խօսքով, այժմ ես ապրելու չեմ այնպէս, ինչպէս ապրած եմ առաջ. փոխարարձ սիրոյ յոյսը կորցրել եմ ամենևին, իսկ Բորդօի գինին խստիւ ինձ արգելուած է։ Դէհ, մնում է միայն զառամեալ մարդկանց թերութիւններից մինը ընտրել. կարծեմ, ամենից յարմարը՝ ագահութիւնը կըլինի։

CCXVII.

Փառասիրութիւնը զլխաւոր կուռքս է եղել. և նա փշրուեց ադէտի և զուարճութիւնների սեղանի վերայ. այս երկու. ասուածութիւնները թողել են իմ մէջ լոկ խորհրդածութիւններ, որոնք պարապ ժամանակս ինձ զբաղեցնում են։ Այսօր ես ասում եմ, ինչպէս Բակոն վարդապետի պղնձեայ գլուխը՝—«Ժամանակը գոյութիւն ունի, ունէր գոյութիւն և այլ ևս լինելու չէ»[1]։ Երիտասարդութիւնս մի գանձ էր, որ ես վաղօրօք վատնեցի... սիրաս յոգնել է սիրելուց, գլուխս—չափեր յօրինելուց։

CCXVIII.

Ի՞նչ է փառասիրութեան վերջը.—լցնել, կարելի է, անյայտ թերթերի մի քանի էջեր. և փառասէրը նման չէ

---

[1] *Մի հին աւանդութիւն Բակոն վարդապետի մասին ասում է թէ պղնձեայ գլուխը, որ նա ծուլեց և որին տուեց խօսելու շնորհք, բացազանչելով վերոյիշեալ խօսքերը ընկաւ պատուանդանից և կտոր կտոր եղաւ։*

այն մարդուն, որ քրանած և շնչասպառ ձգտում է հասնել բլրի կատարին, կարծես, ամպամած և աներևոյթ սարի կատարը նա լինէր։ Ինչո՞ւ են մարդիկ գրում, խօսում և քարոզում... ինչո՞ւ են հերոսները մէկ մէկուն խեղդում, ինչո՞ւ են բանաստեղծները (ինչպէս ասում են նոքա) գիշերուայ ճրագը «վատնում», ինչո՞ւ այդ ամենը, ինչո՞ւ մի անուն ստանալու, մի կոպիտ պատկերանկար և մի արձան աւելի ևս անշնորհ և այդ ամենը այն իսկ ժամանակ, երբ ինքն օրինակը դառնալու է փոշի և ոչ այլ ինչ։

CCXIX.

Ի՞նչ են մարդկային յոյսերը. հին Եգիպտոսի մի իշխան, Քէոպս անունով, առաջինը հրամայեց կառուցանել ամենամեծ բուրգը, կարծելով որ մի ահագին մահարձան բաւական է լինելու, որ նորա յիշատակը միայ անմոռաց, իսկ մարմինը — անփնաս։

Մի օր, մի ուղևոր քրքրելով բուրգի մէջ՝ փայլը ձգեց դագաղի խուփը... ուրիշ ի՞նչ մահարձան կարող է պահպանել մեր ապագայիս վերայ դրած յոյսը, եթէ Քէոպսից փոշին էլ չմնաց։

CCXX.

Իսկ ես, ունենալով մի առանձին սէր և ճաշակ դէպի իմաստասիրութիւն, ես յաճախ կրկնում եմ. ափսո՞ս, որ ամենը ստեղծած է մեռնելու համար և մարդս խոտ է, ոչ այլ ինչ, որին մի օր հնձելու է մահուան մանդաղը։

«Դու բաւականաչափ ուրախ անցուցիր երիտասարդ օրերդ և եթէ հնար լինէր նորից սկսել կեանքդ... հաւատացի՛ր, նոյնը կ'անէիր։ Ուրեմն, գոհ եղիր քո ասաղից, որ կարող էր լինել աւելի ևս չարագուշակ, կարդա՛ Աստուծաշունչը և քաջալերդ հոգա՛»։

CCXXI.

Իսկ այժմ, սիրելի ընթերցող և դու, գիրքս գնող, (որ աւելի ևս սիրելի ես սրտիս), այժմ բանաստեղծը (այսինքն ես) կամենում է, Ձերդ Թոյլտուութեամբ, ձեռներդ սեղմել յարգանաց հաւատքը և հրաժեշտ տալով։ Մենք կըտեսնուենք, անշուշտ, եթէ միայն հաւանենք միմեանց... հակառակ դէպքում՝ ձեզ թողնելու չեմ անհամբերութիւնից տանջուելու. այս օրինակը այնքան էլ մեծ չէ, որ ձեզ ձանձրացնի... երջանիկ կըլինէինք, եթէ բոլոր հեղինակները օրինակիս հետևէին։

CCXXII.

«Գնա՛, փոքրիկ գրքոյկ, հեռացի՛ր իմ առանձնութիւնից, յանձնում եմ քեզ ալիքներին, կատարի՛ր շաւիղդ և եթէ, ինչպէս համոզուած եմ, գայուստդ աջող է, աշխարհը քեզ մոռանալու չէ երկար տարիներ»։—Եթէ Սուրթէյին կարդում են, իսկ Վորդսվորտին — հասկանում, կարող եմ ինձ արդեն փառախնդիր լինելու... Վերոյիշեալ չորս տողերը Սուրթէյից են քաղած. ի սէր Աստուծոյ, սիրելի ընթերցող, չկարծես, որ նոքա ինձ են պատկանում։

Բայրընից Թարգ. Լ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ.

ԽԱՉԱՏՈՒՐ. ԱԲՈՎԵԱՆՑԻ „ՎԷՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ"

և իմ

„ՍՕՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐԸ"

ԶՈՒՇԷՐ

իմ ազնիւ հայրենակից Սմբատ Շահազիզեանին.

Վրաստանի մայրաքաղաքի աշակերտական նստարանից թռիչք արած՝ մեր գիւղումը՝ վարժապետական երեք ոտնանի աթոռի վրայ, երեք տարի ուռած, փքուած բազմելուց յետոյ՝ երբ համոզուեցի, որ, թէ կ'ուզես տասը մատդ մում արա, լոյս տուր, դարձեալ Քրիստոսի ասածին պէս՝ մարդարէն իր գաւառումը պատիւ չի ունենալ, երբ փորձով տեսայ, թէ իմ սրտով սիրած հայրենակիցներս օտար տեղից տուն ընկած, միրքաւոր սուտ ճգնաւորներին ու խաբեբաներին աւելի են հաւատ ընծայում, քան թէ իրանց միս ու արիւնին, իրանց հող ու ջրով սնած, մեծացած եղբօրը, երբ որ այս բաները տեսայ, ասում եմ, մի օր էլ փէշս թափ տուի և ամբողջ տարուան ինձ հասնելիք ուսուցչական ռոճկիցս 12 մանէթ միայն հաւաքելով՝ ճանապարհ ընկայ՝ օտարութեան մէջ բաղդ որոնելու։

«Զուկը ծովումը կըմեծանայ»։

Այս յոյսը փոքրիկ ու անփորձ ձկնիկիս ձգեց ծով—Թիֆլիսը։

Հանաք չեմ անում, Ներսիսեան դպրոցից գիւղն ընկած, աչքերը փակ վարժապետի համար Թիֆլիսից մեծ ծով էիք ուզում։

Ծանծաղ լճակներում լողալ սովորած, նորավարժ ձկնիկի նման թեւաձակներս փռեցի և Թիֆլիսի ընդարձակ այեծուի ծովում կամեցայ լող տալ։

Շատերը կըցանկանային մի և նոյն մեծ երազը տեսնել, բայց ինձ նման բազդաւորին է պահած այս երջանկութիւնը։

Եթէ այդ տարին (1858 թ.) կաթողիկոսական թագը սեւով ծածկուած չըլինէր, եթէ Թիֆլիսի Առաջնորդ Սարգիս եպիսկոպոս Զալալեանցն Էջմիածին եկած չըլինէր՝ կաթողիկոսական ընտրութեանը մասնակցելու, եթէ նոյն Զալալեանցը Մողնու վանքումն ինձ տեսած, ճանաչած ու հրաւիրած չըլինէր, եթէ յոյս չըտար իր մօտ պահել մինչև ինձ գործի դնելը, ես օձի մի՞ս էի կերել, որ տեղիցս ոտ փոխէի. ասենք թէ երկչոտ գինուորի նման պատերազմի դաշտից փախչելու միտք ունէի, բայց ո՞ւր էի գնում, ո՞ւմ մօտ, ո՞ւմ յուսով. պրուխ էի տանում, թէ, հօրս թողած ոսկիները ծախսելու տեղ չէի գտնում, գնում էի Թիֆլիսի մարդիկ քերթող հիւրանոցներում ու զբօսավայրերում շռայլելու։

Զէ՞ որ ողջ զրամաղլուխս 12 մանեթ էր. 12 մանէթով մի ձեռք նոր շորեր պէտք է կարէի, 12 մանէթով պաշար պէտք է պատրաստէի, ձի պէտք է վարձէի և երկու ամսաչափ Թիֆլիսում պէտք է ապրէի։

Դոնէ տանից զուրս գալուս՝ մատաղրութիւնս այսպէս էր։

Էլ չեմ ասում, թէ ձի նստելուս՝ 12 մանէթից չորսը

տուի մօրս՝ իրան համար մի ծանրական, իր պատուին վայել մինթանայ (շըջազգեստ) կարելու. էսքանը միայն իմացէք, որ Թիֆլիս մտած օրս՝ քսակիս մէջ 12 մանէթից չորս ու կէսն էր մնացել: Մի՛ զարմանաք, մինչև Ջալալօղլի եղբօրս հետ միասին ձիու գաւակին նստած՝ մեր ձիովն եմ եկել:

Ճաշը մօտ էր՝ մտայ Թիֆլիս, ձիատիրոջը վճարելիք վերջին մանէթը գոմումը տուի ու կապոցս կռնատակիս՝ օգոստոսի սկզբին, մի տժտժան շոգ օր՝ եկայ, ուղիղ մըտայ Վանքի բակը:

Կրակ է թափում, Վանքի բակում ոչ թէ մարդ, մրջիւն էլ չի ման գալիս:

Ում ի՞նչ հոգսն է, թէ մարդ չըկայ, ինձ Սարգիս սրբազանն է հարկաւոր, որ, իմ կարծեօք, հիմի Առաջնորդարանի սենեակումը հովհարը ձեռքին ճանճ է քշում:

Երիտասարդական թեթևութիւն չէր արածս, հապա ի՞նչ էր, չեմ էլ ուզում միաքս բերել, որ սրբազանն ինձ օգոստոսի մինչև 15-ը նշանակեց իւր Թիֆլիս գալու ժամանակը. ես ընչի՞ եմ ուրեմն շտապել:

Դուռնչս ցցած՝ երես տուած, իրաւունքի տէր որդու նման համարձակ քայլերով մօտենում եմ Առաջնորդարանի դրանն ու արմունկով բրթում:

«Ոչ ժամ, ոչ պատարագ»: Դուռը պինդ կողպած է, մի գործարար դրան վերի անկիւններում իր ոստայնը հիւսել էր ու ինքը մէջ տեղից մի թելի վրայ՝ ճանճը թաթիկներում սեղմած՝ կախ ընկել:

Հէնց էդ տեղ յիշեցի, որ ջուրը չըհասած՝ բոբկացել եմ ու ժամանակից առաջ եմ եկել:

Խեղճ աղա՛յ, ծործորակս քորելով, քիթս քարին առած՝ յետ դառայ ու Վանքի զանգակատան հովումը աչքերս գէս ու գէն ածելով՝ մնայի կուչ եկած:

Շատ անց կացաւ, քիչ անց կացաւ, Առտուած գի-

ոի, մէկ էլ էն տեսայ, որ իմ հին ծանօթ ժամհար Անդրէասն իր կացարանից գլուխը դուրս հանեց, ինձ մօտեցաւ ու համառօտ կենսագրութիւնս իմանալով՝ ցոյց տուեց ինձ Մինաս եպիսկոպոսի կոչուած սենեակը։

—Էդ տեղ հանգստացիր, ասաց, մինչև իրիկուայ ժամին կոնսիստորի անդամ Տէր-Մկրտիչը կըգայ. վանքը նրան է յանձնուած, կարելի է մի ճար կ'անի։

Մինաս եպիսկոպոսի սենեակն իմ համար նորութիւն չէր, քանի անգամ լուսահոգի սրբազանը մեզ—չար մանուկներիս քարհալած է արել իւր պարտիզի թթենու տակից և մի ժամից յետոյ կրկին ներս է տարել իւր սենեակը քաղցրեղէնով հիւրասիրել։

—Կալէ՛ք, չալ անպիտաննե՛ր, կոլէ՛ք, եկէ՛ք, անուսիկ գայնուկնե՛րս, եկէք իմ սենեակս. ձեզ միգ տամ։ օրը տան անդամ խօսքը փոխել է մանկութիւնից երիտասարդացած, երիտասարդութիւնից ծերացած և ծերութիւնից կրկին մանկացած, թոթովախօս Մինաս սրբազանը։

Հիմի, այսօր նրա մահից յետոյ՝ առաջին անգամը՝ ես եմ շէն անում հանգուցեալի սենեակը։

Սենեակ, ի՞նչ սենեակ, սենեակ չէր այն, այլ գևերի խորհրդարան։ Ես ինձ վրայ զարմացել եմ, ի՞նչպէս աներկիւղ ներս մտայ։ Էս օր էլ զարդանդում եմ, երբ մտիցն անց եմ կենում։ Մի բոլորակ քեօշկ (բուրգ) էր այն՝ բլբլուած առասպելով. պատերի մէջը, համարեա՛, բոլորը դատարկ էր՝ դարակներով բաժանած՝ անօթեղէններ պահելու համար, իսկ դրսից ամրացրած էին այդ դարակները գռնակներով։

Սենեակի դուռը մտար թէ չէ, պարտական ես աջ ծռուել, թէ չէ, հէնց որ սխալուեցիր՝ ոտ ձախ կոխեցիր, կեանքիդ բարև մնայ ասա, դէրաձև սանդուխքներով կունդիկ-կունդիկ անելով՝ մինչև անդունդը կրգլորուես ու ջրի մէջ կըլողաս։

Զէ՞ որ Մինաս եպիսկոպոսի սենեակը Կուր գետի ափին է շինած և հիմքը գետի մակերևութիւն մի քանի սաժէն խոր է դրած, որ չըլինի, թէ գիժ Կուրն իր վարարած ժամանակ սրբի ու մինչև Սալիան մին տանի։

Էս ծակ ու ծուկերը, էս փոս ու դարակներն են, որ քամին մտած ժամանակ սաղ ու զուռնայի ձայն են հանում։

Վա՜յ էն խամ ու անծանօթ մարդին, ով այս սենեակումը միամտաբար, միայնակ, գիշեր անց կըկացնի. խեղճը կըդիւահարուի և գրի ու գրբայի բանատեղ կըդառնայ։

Ասացի, որ աշակերտութեանս օրից ես գիտէի Մինաս եպիսկոպոսի բրգի հունքլն ու բունքլը—գիրքն ու շէնքը, թէ չէ վա՜յն իմ գլխին կըգար։

Փառաւորի՜ Վանքի տէր-Մկրտիչը, կոնսիստորի անդամ էր, իրաւունքն իր ձեռքին էր, թոյլ չըտուեց շատ խնդրելու, իմ կամքին թողեց, որքան սիրաս կըբարեհաճի, ճնամ Մինաս եպիսկոպոսի քեօշքումը։

Ցիշուի՜, յիշատակուի՜ Ներսիսեան դպրոցի որդեգիր, վերջումն իմ լաւ ընկեր Գէորգ Ադիբէզեանցը. Թիֆլիս եղած ժամանակս՝ մի օր մի էժանագին դահաւորակ (դիւան) առաւ եարմուկիցը (կիւրակէ օրուայ տօնավաճառ), և որովհետև պահելու տեղ չունէր, բերեց, Մինաս եպիսկոպոսի սենեակումը թողեց։

Էն դահաւորակը մինչև էն օրը ճնացել էր փոշաթաթախ ընկած։ Ծամկոչից մի աւել և մի ջրի աման խընդրեցի՝ կոտրած լուսամուտից ցած իջայ, Կուր գետից ջուր բերի, ջըջհանեցի, մաքրեցի և դահաւորակի երկայնութեամբ ձգուեցի։

Ամառն էր, փափուկ դահաւորակ էր, մահճի կարիք չըկար, բարձի տեղ փոխնորդներիս կապոցը գլխատակս էի դնում, չուխէս վերմակի տեղ վրաս ծածկում։

Ցերեկները կապոցս դարակի մէջ կողպում էի, սե-

Նեակի դուռը կրկնի վրայ բաց թողնում և գնում ընկերներիս հետ ժամանակ անց կացնելու։

Գիշերները, երբ մութը դեռինն առնում էր, ախտոտ փոխնորդներս իմ ձեռքով Կուրի ափին, առանց սապոնի, սառը ջրով լուանում էի, սենեակումս փռում էի և պառկում, Սարգիս սրբազանի շուտ կամ ուշ գալու մասին երազներ տեսնում։

Հաւը գիշերն երազումը կուտ է տեսնում, քաղցածը մի կտոր գարէ հաց, տկլորն երկք գազ կտաւ. իմ տեսնելիքս էլ Սարգիս Ջալալեան սրբազանն էր։ Ձէ՞ որ փողս գլխում էր, ճնացել էր մանէթ ու կէս։

Սրբազանն ինձ խոստացել էր մինչև օգոստոսի 15-ը Թիֆլիսում լինել, էգ հաշուով էլ ես եկել էի, օգոստոսի կիսերքին ենք և դեռ չըկայ։

Եթէ, բան է, մի ամիս ուշանալու լինի, ես հօ՛ քաղցած կըմեռնեմ։

Էս երկիւղն էր, որ խելքս գլուխս ժողովեց, և ես վճռեցի ունեցած մանէթ ու կէսովս, գոնէ, առնուազն, մի ամիս ապրել։

Հինգ կոպէկի հացը չորս բաժին էի անում. մի բաժինն առաւօտեան նախաճաշիկս էր, երկրորդը ճաշս էր, երրորդը երեկոյեան թէյի փոխարէն էր և չորրորդն ընթրիքս էր։

Այս կարգ ու կանոնը գրի իմ կեանքի կենցաղավարութեան մէջ ու աղտոտ թռչունի նման, սիրտս ուրախ ապրում էի։

Ուրախութիւնս կրկնապատկուում էր, գլխաւորապէս, յաջող հանգամանքների ժամանակ։

Ասենք՝ քանի քսակս լղարում էր, ինքս աւելի եսասէր ու զուռզ էի դառնում, մինչև ծանօթներս տան անդամ չէին խնդրում, ոչ մէկի մօտ մի սառը ջուր չէի խմում, բայց եթէ նրանք ստիպում էին, կամակորու-

թիւնս կոտրում էին և ճաշի, կամ իրիկնահացի էին պահում, էպպիսի յաջող դէպքերում, հացիս բաժինը միւս օրուան էր մնում, որով անտեսական դրութիւնս աւելի ապահովուում էր։

Հէնց այդպիսի յաջող հանդամանք սեպտեմբերի սկզբին ինձ հետ պատահածն էր, որով ընդ միշտ իմ կոչումս որոշուեցաւ։

Ահա ինչ էր այն։

Անունը սեպտեմբեր է, բայց յուլիսը ողորմութիւն է, տօթը խեղդում է, քաղաքի մթնոլորտը բարակ բայց անթափանցելի մշուշով երեք օր է պատած է. մշուշ չէր այդ վարագոյրը, քաղաքից բարձրացած փոշին էր, որ կրկին ցած էր եկել և տների կարներին, լուսամուտների գլխներին կաթի սերի նման նստել։ Նոյն այդ ձևով նըստում է և մարդու ու անասունների գլխին, հագուստին, քթածակերին ու կոկորդին։ Մի բարակ հով, մի թեթև քամի չըկայ, որ ցրուի ու տանի։

Ի՞նչ են անում ուրեմն քաղաքում մնալ դատապարտուած անբաղդ բնակիչները։ Խելօքները դուռն ու լուսամուտը պինդ կողպում են, որ եթէ տօթից խեղդուելու լինեն, գոնէ փոշուց ազատ մնան. ինձ պէս անխելքները ցերեկը մի տեսակ անց են կացնում ու իրիկունները զբօսավայրերը չափում։

Ա՜խ, մի քամի, ա՜խ, մի անձրև. . .

Ո՞ւր է, ոչ մի տերև է շարժուում, ոչ մի պուտ թացութիւն է երկնքից ցած ընկնում։

Աւելի լաւ է, ուրեմն, քաշուենք մեր բները, շոր ու հագուստ շպրտենք և ազատ մեկնուենք։

Այս մտքով վերադառնում եմ մի երեկոյ զբօսանքից. չեմ շտապում, ինձ համար ծանր-ծանր գալիս եմ։

Ցարկարծ, կարծես թէ երկինքը պատռուեց. անձրև հօ՛ չէ եկածը, լայնաբերան ուսաբղուզներով (սափոր) ջուր է, որ գլխներիս են թափում։ Ծովեղէնն սկսեց խաղաղ, կայծակը շամփրոտելով, տրաք-տրաքելով թիֆլիսի արևելքի նեղ հորիզոնից՝ մինչև արևմտքի հորիզոնն է փայլատակում. ամեն մի որոտումին՝ մարդիս ոտից գլուխ թափահարում, զողզողահար է բերում։ Լաւ, որ անձրևի հետ քիչ հով բարձրացաւ, թէ չէ փոշեխառն անձրևի հոտից կըխեղդուէինք։

Փողոցները զատարկուեցին, փախչող փախչողի է, մուրթն էլ վրայ է տալիս։

Մին մտածեցի շտապել, քայլերս արագացրի, մին էլ խելքի եկայ ու ոտքերս ծանրացրի։

Շտապելու ի՞նչ հարկ կար, հօ՛ դուռս, հօ կտուրս, վերջին փոխնորդս, բոլոր հաղուստս, չուխայ—վերմակս վրաս են, հաղիս ունեմ, գալու եմ տուն, տղամարդկ տրիլորանալու և նախահօր հաղուստով պառկելու. անձրևաջուրը գլխիս մաղերից մտել է, պարանոցովս տուն դնացել, ոտքերիս պՃեղներից դուրս եկել։

Մէկ էլ՝ գլուխս ծռեցի և իմ հայրենակից, այժմ հանգուցեալ, աղնուաբարոյ Ցովհաննէս Տէր-Ցովսէփեանցի կացարանի դուռը տեսայ։ Իսկոյն, անմոռածել, դրան զանգակը քաշեցի։

Դուռը բացուեց։

—Պարոնը տանն է, թրջուած դրութիւնս տեսնելով՝ զարմացմամբ պատասխանեց ծառան իմ հարցին։

—Վերև արի, ձայնս լսեց և սանդուխքի գլխից կանչեց ինձ Տէր-Ցովսէփեանցը։

—Փողոցը ջուր է բաւական չի՞, ուզում ես քո տունն էլ ջուր շինեմ, պատասխանեցի ներքևից։

Պատուական մարդ, բանի էութիւնը հասկացաւ, ծառային վեր կանչեց և իւր շորերից մի ձեռք ներքև ուղարկեց։

Հէնց շեմքի առաջին՝ ոտից գլուխ փոխուեցի, իմ հագուստս յանձնեցի ծառային մղելու և չորացնելու և ինքս, Եզովբոսի ազռաւի նման՝ սիրամարգի փետուրներով զարդարուած՝ վեր բարձրացայ։

Տէր-Յովսէփեանցը գիմնազիոնում վերակացու և ուսուցիչ էր, իւր մօտ թոշակաւոր դիշերօթիկներ էր պահում. նա ինձ տարաւ իւր առանձնասենեակը, ձեռքով իր գրադարակը ցոյց տուեց ու ինքը գնաց աշակերտներին դասեր պատրաստել տալու։

Հետաքրքրութիւնս շարժեց սեղանի վրայ դրուած նոր գիրքը. վերցրի, վերնագիրը կարդացի ու ինքս վերացայ, սառած մնացի։

Առաջին անգամն էի տեսնում այդ գիրքը։

Խաչատուր Աբովեանցի «Վէրք Հայաստանի»ն էր։

Աբովեանցի անունն ինձ անծանօթ չէր. ով կարդացել է 1889 թուի «Արձագանք» շաբաթաթերթի յունվարի համարները, նա գիտի, որ ես Աբովեանցին անձամբ ճանաչել եմ մանկութեան օրերս, երբ նա Աշտարակ էր եկել՝ մեր դպրոցին այցելութեան։

Արած նկարագրութիւնից երևում է, թէ ինչ բարոյական տպաւորութիւն է թողել մեծ մանկավարժն իմ և ընկերներիս վրայ։

Աբովեանցն՝ այն ժամանակը՝ Երևանի արքունի գաւառական դպրոցի վերատեսուչն էր։ Նա ինքն էր, որ հաստատ լինելով դիւղական ուսուցչի բռնակալական և հակամանկավարժական վարմունքին, հրամայեց մեր վարժապետին ընդ միշտ ազատել մեզ պատժից, արգելից ամառն՝ օրուան շոք ժամանակի պարապմունքը, խաղն ու լողը մտցրեց մեր մէջ, որ մինչև էն օրը մահացու յանցանք էր համարուած։ Կարճ կապենք, Աբովեանցն ընդ ամենն երեք օր մնաց մեր մէջ, բայց այդ կարճ ժամանակում նա մեզ սիրեց, մենք իրան։

Ահա այն մի և նոյն Աբովեանցն երկրորդ անգամ կենդանանում է առաջիս իր «Վէրք Հայաստանի»-ով։

Կարդում եմ և ի՞նչպէս. կատարեալ քաղցած գայլի անկշտութեամբ, որ ճանդել է համեղ որսը և ուզում է բոլորը կուլ տալ, որ չոլինի, թէ ուրիշներին էլ բաժին մնայ։

Ես ինքս, ի հարկէ, չէի կարող իմ հոգեկան զգացմունքի արտաքին արտայայտութիւնների մասին բան ասել, եթէ Տէր-Յովսէփեանցը չըպատմէր։

Ահա ի՞նչ է ասում նա։

Ժամը տասն ու մէկն է, ընթրիքը պատրաստ է. ներս եմ գալիս քեղ հրաւիրելու. դռնից մտնում եմ և մնում եմ շուարած։ Աչքս ընկնում է երեսիդ։ Էն ի՞նչ էր քո հալը. նստել ես սեղանի առաջին, գիրքը զոյդ ձեռքով պինդ բռնել ես, կարծես, վախում ես, թէ մէկը ձեռքիցդ պէտք է խլի, կարդում ես, ողջ մարմնով շարժուում ես, գլուխդ անդադար թափէթափ ես տալիս, աչքերով ուզում ես գիրքն ուտել, հէնց իմանաս՝ մէկի հետ կռիւ ես տալիս։

—Հը՛, շատ ես հաւանել, ձայն եմ տալիս կանգնած տեղիցս, պատմում է Տէր-Յովսէփեանցը, տեսնում ես՝ ի՞նչ լաւ գիրք է։ Խօսքերս քամին տանում է, դու չես լսում։ Ես կարծում եմ, թէ ձևացնում ես, իբր թէ չես լսում։ Սկսում եմ ձայնս բարձրացնել.—Հերիք է, ասում եմ, թող, գնանք, ընթրիք անենք, մնացածը յետոյ կը վերջացնես։ (Պէտք է ասած՝ որ վերջին թերթն էիր կարդում)։ Դու ամենևին ուշադրութիւն չես դարձնում։ Մօտ եմ գալիս և ուսդ շարժում։ Մի և նոյն դրութիւնը։ Ճարահատուած՝ միսդ կսմսում եմ։ Արի տես, որ դարձեալ չես զգում։ Երբ արդէն վերջացրիր, այն ժամանակը միայն ինձ նայեցիր։

Տէր-Յովսէփեանցը սխալուում էր, ես բոլորովին ան-

զգայ չէի. հասկանում էի, որ աչք ուսաղլուխս լուն կրծում է, բայց բանի տեղ չէի դնում. մի-մին էլ՝ ականջիս հեռաւոր արձագանգի նման մի ձայն լսում էր. ես կարծում էի, թէ հարեւանի տանն են խօսում:

Երբ գիրքը բոլորովին վերջացրի, այն ժամանակ միայն կողքիս կանգնած տեսայ Տէր-Յովսէփեանցին և դուչեցի.

—Ի՞նչ է այս, պարոն Յովհաննէ՛ս, ի սէր մարդասիրին՝ ասայէք, ի՞նչ է անում Աբովեանցը. էս ինչ նորանշան և սքանչելի երևոյթ է մեր նոր գրականութեան մէջ. մինչև օրս ո՞ւր էր թաղցրած էս անգին գանձը:

—Այո՛, ուղիղ ես ասում, գլուխը շարժելով պատասխանեց ինձ Տէր-Յովսէփեանցը, միայն դու չես, շատ շատերի վրայ մի և նոյն տպաւորութիւնն է արել «Վէրք Հայաստանին»: Նոյն ազդեցութեան ներքոյ Փոնդոյեանցը իր ծախքով հրատարակեց այս գիրքը:

—Բայց ընչի՞ հետևողներ չունենայ սա, ընչի՞ զուրկ պահել մեր հասարակութեան մեծագոյն մասը ընթերցասիրութիւնից:

—Ամենքը միաբերան քո կարծիքին են, սակայն ո՞ւր են գործը ձեռնարկողներ. հեշտ բան չէ:

—Փորձելը յանցանք հօ չէ:

—Ի՞նչ է դիտաւորութիւնդ, թերահաւատական ժպիտով հարցրեց ինձ Տէր-Յովսէփեանցը, այ, տղայ, ես քո աչքերի մէջ մի տեսակ վճռական հաստատամտութիւն եմ նկատում, չիցէ՞ միտք ունես ուժդ փորձելու, Աշտարակը քեզ համար առատ նիւթ է. ա՜խ, երանի՜ թէ յաջողէիր: Քե՛զ տեսնեմ, մեր Աշտարակը Քանաքեռից պակաս չէ, Աբովեանցն իր ծնած տեղն անմահացրեց. դու էլ մերն անմահացրու: Մի՛ վախիր, սկսիր, որքան թերի լինի, մեղ ընդունելի է, պէտք է հայ լեզուի մէջ մի արմատական յեղափոխութիւն անել, շատ ճշմարիտ է նկատել Աբովեանցը, զրաբարով սերունդ չենք կրթիլ:

—Լիակատար յաջողութիւն չեմ խոստանում, բայց ահա իմ ձեռքս, ես Աբովեանցին աշակերտելու և հետևելու եմ։

—Ցանկանում եմ կատարեալ յաջողութիւն. միայն չըմոռանանք, որ ընթրիքը սառչում է, գնանք, այնտեղ՝ գինու ազդեցութեան տակ՝ մեր խօսակցութիւնը կըշարունակենք։

Ընթրիքը վերջացաւ, բաւական գիշեր անցաւ, իսկ մենք դեռ Աբովեանցի ոսկորներն ենք անհանգիստ անում։

Տէր-Յովսէփեանցն ինձ խաղաղ քուն և բարի գիշեր մաղթեց, հեռացաւ. ես երկրորդ անգամ սկսեցի կարդալ «Վէրք Հայաստանին։ Աքաղաղը հինգ բերան կանչել էր, որ տեղս մտայ։ Քնիս մէջ շարունակ Աշտարակումն էի մտնում գալիս։

Հետևեալ առաւօտը Տէր-Յովսէփեանցը դարձեալ յիշեցրեց ինձ երեկեան խոստումս։

—Լաւ, լաւ, անպատճառ, անպատճառ, ցտեսութիւն. . .

Խանութից թուղթ ու թանաք գնեցի, փռնչու մօտից հինգ կոպէկի հաց առայ և ողջ օրը սենեակիցս դուրս չեկայ։

Ծունկս սեղան էի շինել և գրում էի։

«Սօս և Վարդիթերն» էի գրում։

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑ.

I.

ԳԱՐՈՒՆ.

Գարունն է գալի՛ս, գարունն է գալիս,
Մեզ մանուշակը իմաց է տալիս։
Իրաւ Հանեցին ձիւնէ պաստառը
Դաշտերն ու ձորեր, սարն ու անտառը
Եւ ահա նոքա նորիցը հագան
Կանաչ, ծաղկաղարդ զգեստ պատուական։
Հեռու կողմերից եկան բիւրաւոր
Երգեցիկ հիւրեր արագ թեւաւոր.
Ծաղիկների մէջ միջատներ պէս պէս,
Մեղու ու թիթեռ, ճպուռ ու բզէզ։
Հնչում է հնչում ձայն ուրախութեան
Ամեն մի կողմից զարթած բնութեան։
Մարդ հիանում է, տեսնում է տպուշ.
Ատ թռչունների ճռվղոց քնքուշ,
Անդ սրընգի ձայն, գառների մայոց,
Ուրախ կանչ և ճիչ փոքրիկ տղայոց.
Գետի, աղբիւրի քաղցրաձայն կարկաչ,
Ձիերի խրխունջ, կովերի բառաչ։
Որ կողմն էլ նայես—նոր կեանք և շարժում
Գործել, աշխատել մարդոց են քարշում,
Եւ մարդիկ էլան աշխատել նորից,
Փառք տալով Տիրոջ սրտերի խորքից։

II.

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ

Մայրենի լեզուն օտարին փոխել,
Պարկեշտութիւնը ոտքի տակ կոխել,
Ազգի անցեալը անխիղճ մոռանալ—
Այդ է, ինձ ասէք, այդ է զարգանալ։

Տնտեսութեանը խելք, միտք չի մաշել,
Այլ անգործ թրև գալ, պապիրոս քաշել,
Հանդէսներու մէջ կուրծքերը բանալ—
Այդ է, ինձ ասէք, այդ է զարգանալ։

Զունենալ կեանքում մի սուրբ դաղափար,
Այլ սիրել լոկ զարդ, կերուխում և պար,
Ազգի ցաւերը չուզել իմանալ—
Այդ է, ինձ ասէք, այդ է զարգանալ։

Լոկ զարդ ցոյց տալու ժամը յաճախել,
Անդ ազօթքի տեղ խօսել, ծիծաղել,
Սուրբ խորհուրդներից բան չի հասկանալ—
Այդ է, ինձ ասէք, այդ է զարգանալ։

Հիմունք ազգութեան—լեզուն և հաւատ
Պահի՛ր սրտիդ մէջ, հայ քուրիկ, հաստատ.
Օտարին լաւէն քաղէ միշտ օգուտ,
Բայց «քոնն» մնտազոյն թող լինի յօգուտ։

III.

ՄԱՐԴԱՐԻ

(Լերմոնտովից).

Այն օրից, երբ ինձ Անեղը տուեց
Ընդունակութիւն մարգարէութեան,—
Մարդոց աչքերում ընթեռնում եմ ես
Թերթեր ախտերու, թերթեր չարութեան։

Հաղիւ սկսեցի ջերմեռանդ խօսել
Ես ճշմարտութեան և սիրոյ բառեր,
Մերձաւորներս, սաստիկ կատաղած,
Իսկոյն նետեցին իմ վերայ քարեր։

Ես գլխուս վերայ ցանեցի մոխիր,
Փախայ քաղաքից, իբրև մուրացկան.
Ահա ապրում եմ ես անապատում
Աստուծոյ տուրքով, թռչունի նման։

Ինձ հլու են անդ երկրի արարածք,
Տիրոջ պատուէրը հաստատ պահելով,
Եւ լսում են ինձ պայծառ աստղերը,
Երկնակամարից պայծառ փայլելով։

Իսկ երբ բազմամարդ քաղաքի միջից
Ես հեզ քայլերով անցնել եմ վռազում,—
Անդ ինքնահաւան ծերերը մանկանց
Ինձ ցոյց են տալիս ու ժպտով ասում.

Նայեցէ՛ք, ահա, ձեզի օրինակ.
Իւր հպարտութեամբ մեզանից զատուած
Խենթը մեզ կամէր հաւատացընել,
Որ դրա բերանով խօսում է Աստուած։

Նայեցէ՛ք, մանկունք, լաւ դորա վերայ—
Ինչպէս վտիտ է, դժգոյն և տրտում.
Տեսէ՛ք, ինչպէս նա աղքատ է և մերկ,
Ինչպէս են մարդիկ նորան նախատում։

IV.

* * *

Թէ իմանայիր, որդեակ աննման,
Ինչպէս սիրում եմ քեզ անսահման.
Փակիր աչերդ, քեզ ասեմ նանի,
Որ իմ հոգեակիս շուտ քունը տանի։
Նանի, նանի...

Քնիր, իմ որդեակ, սէր իմ Արմենակ,
Թող վերադ հսկէ պահապան հրեշտակ,
Առողջ և զուարթ աճէ օրէցօր,
Քնի՛ր, աղաւնիս, նանի և օր օր։
Նանի, նանի...

Տուր, Տէր, զաւակիս Քո շնորհ առատ,
Որ սիրէ անկեղծ իւր ազգ և հաւատ,
Որ լինի ազգին պիտանի անդամ.
Ես էլ այդ տեսնեմ, Քեզ հազար փառք տամ։
Նանի, նանի...

Թող լինի որդիս, ով Հայր երկնաւոր,
Ճշմարտութեան արի սպասաւոր.
Ես, Քո աղախին, Քեզ միշտ օրհնաբան,
Եղի՛ր զաւակիս սիրող պահապան։
Նանի, նանի...

V-

ԿԱՐԵԿՑՈՒԹԻՒՆ

Նուէր Ե... Բ...

Ուր ցաւը մեծ է,
Անդ Աստուած մերձ է:

Ես քո պատճառով, ով էակ ազնիւ,
Կրում եմ ցաւերս անհամար, անթիւ.
Քո դժբախտութեան ցաւալի օրէն
Սրտիս վէրքերը բացուեցան նորէն:

Ա՛խ, ի՞նչ անէի, հոգեակ իմ անգին,
Որ քեզ երջանիկ տեսնէի կրկին...
Հարուստ եմ անչափ սիրով ես միայն,
Բայց քեզ օգնելու ի՞նչ շահ ունի այն:

Ես պաղատում եմ Տիրոջ ծնկաչոք,
Որ վերադ նայի գթառատ աչք,
Ու տայ քեզի դժ Նորա սուրբ աջը—
Կրել անարտունջ քո ծանր խաչը:

Ցուսան, որ մի օր անսահման կամք
Կըմեղմացնէ Տէրը քո մորմոք...
Որ կըհեռևի, չըկայ տարակոյս,
Թանձր խաւարին մի օր պայծառ լոյս:

Գ. ԴՈԴՈԽԵԱՆ.

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ.

ՆԱՄԱԿ Ա.

Խոհական ազգասէր եղբայր

Յովհաննէս Մկրտչեան Սայմինեանց,

Գուցէ կըզարմանաք, որ մի ձեզ անծանօթ մարդ համարձակում է իւր նամակովը ձեզ աշխատութիւն հասուցանել, բայց թէպէտ ճշմարիտ է, որ մարմնոյ ծանօթութիւն չլինի մեր մէջ, բայց հոգւոյ ծանօթութիւն կայ այնպէս որ կարող եմ ասել, թէ յառաջ քան զմարմնիդ ծանօթութիւնը ստացել եմ պատուական հոգւոյդ ծանօթութիւնը, և այս մասին պարտական եմ պատուելի բարեպաշտ Կարապետ Թէոդոսեան Սաղբատովին, որ շատ ծանօթութիւն տուել է ինձ ձեր խոհականութեան և լուսաւոր ազգասիրութեան մասին։ Ահա այսպէս համարձակուելով գրել և յուղարկել ձեզ պ. Սաղբատովի բարեկամական շնորհիւը 30 հատ իմ աշխատասիրութիւնից, որ մակագրեալ է՝ Փորձական հոգերանութիւն։ Խնդրեմ ձեր բարեկամական աշխատութիւնը դործ ածել և բաժանել այդ գիրը ձեր երկրացի հայերի մէջ և գինը ամեն մի հատին սահմանում եմ մի մի մանէթ, թէպէտ տեղս ծախած

ենք մանէթ ու կէսով. եթէ կարելի էր աւելի գնով ծախել, այն ձեր շնորհը կըլլինէր, որ գոնեայ այդ պատուական տպի ու թղթի ծախքը դուրս գար՝ աշխատանքս պարգև ազգին։ Մենք ուղարկեցինք այժմ 30 օրինակ. եթէ աւելի հարկաւոր լինի, կարող էք ստանալ։

Հաշտարխան քաղաքում ունինք մեք՝ ճշմարիտ է՝ և այլ և այլ ծանօթներ, հարստականք, բայց ափսոս՝ ինչպէս մինչև այժմ տեսանք՝ ոչինչ կամք չունին ազգասիրական բաների գործակից գտնուիլ, ունայն խօսք շատ, բայց գործ և ոչ մի. և հաւատք առանց գործոց մեռեալ է, և դեռ հաւատան և սարսին, ի՞նչ օգուտ գորանից։ Իմ շարադրութիւնս Հայոց լեզուում այդ առարկայի վերայ առաջինն է, մինչև այժմ այդ առարկայի վերայ խօսուած չէ Հայոց բառով, բայց ափսոս որ հին բառով, և սորա պատճառը կ՚իմացուի յառաջաբանութիւնից՝ որի մէջ արիւն դառած սրտիս ծովեցը մի երկու կաթիլ ածել ենք։ Ինձ հարկ չէ գովել իմ աշխատութիւնս, եթէ կայ դատաւոր, եթէ կայ խոհականութիւն և բանականութիւն ազգի մէջ, թող կարդան, մտածեն և ինձ արժանաւոր դատաստան առնեն, ես ինչպէս հասկանում եմ մեր ազգը և մեր ազգի լուսաւորութեան բնական և պատշաճաւոր ճանապարհը, ասպարէզ եմ անցել և ասում եմ իմ դատողութիւնը. եթէ դատող մարդ կայ, թող դատաստան մտանէ իմ հետ նոյնպէս պատուաւոր զէնքով, ինչպէս ես։

Կամք չունիմ նամակս երկարացնելով ձեզ անհանգիստ առնել, խնդրելով մեզ ձեր պատուական բարեկամութեան շնորհը,

Մնամ ձեզ պատուող

Սթեփանոս Վարդապետ Նազարեանց.

Ի 29 դեկտ. 1851.
Ի Մոսկվա.

ՆԱՄԱԿ Բ.

Փետրվարի 9 Թուակ. 1857, Մոսկվա.

Մեր շատ սիրելի քրիստոնէական և հայրենակից եղբայր —

Յովհաննէս Մկրտչեան Սայամնէանց,

Ճշմարիտ, շատ մեղաւոր եմ ես ձեր առաջև, որ չկարողացայ ես մինչև այժմ հասուցանել ձեզ իմ «Վարդապետարան կրօնի» անունով գրքից մի օրինակ գոնեայ, որովհետև ձեր պէս սիրելի և պատուելի մարդը յատկապէս խնդրած էր։ Բայց կամենում եմ ձեզ համառօտ ծանուցանել այդ բանի հանգամանքը, թէպէտ երբէք զիտաւորութիւն չունիմ արդարացնել իմ անձը։ Սոյն Ղըզլարցի հայը, որ բերած էր ինձ ձեր յարգելի նամակը, խոստացաւ մի քանի շաբաթից յետոյ հանդիպել ինձ և ստանալ ինձանից յիշեալ գիրքը. և ես արդարև պատրաստած էի և՛ գիրքը և՛ նամակ ձեր վերայ, շատ խորհրդաւոր խօսուածքով. բայց եկան ու գնացին շաբաթներ և ամիսներ և այն Ղզլարցի մարդը չերևեցաւ. յետոյ լսեցի, թէ նա իւր առևտրական գործի մէջ Մոսկուայումը անբաղդ դտնուելով և յուսահատ վիր է կացել ու գնացել է։ Շատ ցաւելով այդ պատահման վերայ, երկար ժամանակ պահեցի ձեր համար սահմանած թէ՛ գիրքը և թէ՛ նամակը, մինչև մի այլ բարեկամ թախանձանօք ստիպեց ինձ, որ ընծայեմ նորան այդ աշխատութիւնը, ըստ որում հեռաւոր տեղից եկաւոր ցանկանում էր իմանալ մեր հայկական յառաջդիմութեան ասպիճանը Ռուսաստանի մէջ։ Ես այս բանս պատմում եմ ձեզ անխարդախաբար, ոչ թէ որպէս արդարացուցիչ պատճառ, այլ որ-

պէս մի անցք, որ գուցէ թէ կարող էր նա ձեր քաղցր ներողամտութիւնը ձգել դէպի իմ կողմը։ Երէկ Լազարեանց ուսումնարանումը հանդիպեց ինձ ձեր երկրացի Մելքոն Դասպարեան Պապայեանցը, ձեր անունով խնդրելով ինձանից քանի մի օրինակ իմ «Վարդապետարան կրօնի» և «Առաջին հոգեղէն կերակուր Հայոց երեխաների համար» գրքերից։ Ո՛չ մինից և ոչ միւսից չունենալով իմ մօտ ոչ մի օրինակ, չկարողացայ ես ոչինչ կերպով կատարել նորա խնդիրը. այլ խորհուրդ տուեցի պ. Պապայեանցին, որ դիմէ պ. Անանեանցի մօտ, որ հանգուցեալ Ակիմովի հետ միասին իւրեանց ծախքով տպած էին այդ գրեանքը և առած էին ինձանից, և ծախելու իրաւունք ունին։ Այժմ կարող եմ ձեզ այսքան միայն գրել, եթէ պ. Պապայեանց չբերէ ձեզ գտնեա Վարդապետարան գրքիցը մի օրինակ, ապա խնդրեմ անյապաղ գրել ինձ, որ մի կերպով մի օրինակ ստանամ այստեղ իմ բարեկամներից և հասուցանեմ ձեզ։ Այլ և հարկաւոր եմ համարում ծանօթութիւն տալ այստեղ, որ նորերումս տպուեցաւ այստեղ իմ նոր աշխատութիւնը «Հանդէս նոր հայախօսութեան» անունով, հատոր ա., որ մի բաւական մեծ գիրք է, 500 մեծ ութածալ երեսներից աւելի, թէ ի՞նչ է սորա բովանդակութիւնը, չէ կարելի ասել համառօտ, որովհետև բազմամասնեայ նիւթերի վերայ խօսակցութիւն է լինում այնտեղ, պիտոյ է ձեզ անպատճառ տեսանել այդ գիրքը, որ կարողանայիք իմանալ նորա խորհուրդը։ Լեզուն նոյնպէս աշխարհաբառ է և աւելի մշակուած ու գեղեցկացած քան թէ մինչև այժմ տպած գրքերիս մէջ, և խօսակցութեան նիւթը շատ ճոխ ու հարուստ, զուարճականի մօտ գրած և խրատականը, հեշտի մօտ գրած և մի փոքր ծանրը, ընտիր ընտիր պատմութիւնք, խորհրդաւոր վերջերով, բնագիտական ճառեր, վարքագրութիւնք և պատմական անցքեր, զոր օրինակ՝ Քրիստափոր Կոլումբոս

կամ Ցայտնագործութիւն Ամերիկայի։ Բոլորը գրած է ջերմ հոգով և կենդանի սրտով, որ Հայք այդ գիրքը ձեռք առնելով, այլ ևս վայր չդնէին, եթէ մի փոքր մարդկային բանականութիւն և իմաստասիրութիւն կար նոցա մէջ, եթէ նոքա բացի ուտել խմելուց և պառկելուց գուշակում էին դեռ ևս մի այլ քաղցր և գեղեցիկ և պատուական բան։ Այս աշխատութեան յառաջաբանութիւնը կարդալով, մի փոքր պիտոյ է վերաւորուէին հաշտարխանցի հայերը, չտեսնելով իւրեանց անունը այն հայրենասէր մարդերի կարգումը, որ գործակից են դտնուած դորա տպագրութեանը, բայց մեղաւորը ինքեանք են, և ոչ ոք այլ։ Երկրորդ հատորը տպվում է այժմ նոյնպէս և այս տարու վերջումը պատրաստ կըլինի։ Առաջին հատորը կարելի է տարածել մի ամսուց յետոյ, որովհետև դեռ ևս հրաման չկայ ցենզորից տպած օրինակը առնուլ տպարանից և ծաւալել։ Երբ որ պատրաստ էր հրամանը, իսկոյն կ'ուղարկեմ ձեզ մի օրինակ պարզև։ Եթէ կարծում էք, թէ այսպիսի գիրք հաճոյ կլինէր ձեր երկրացիների մի քանիքին, ապա կ'ուղարկեմ յօժարութեամբ. առաջին հատորի գինն է երկու ման. արծ. կաղմով և ճանապարհի ծախքով 2 ման. 75 կոպ.։

Խնդրեմ ողջունել ինձանից պարոն Մելիքովը և Բալասանեանց ընտանիքը, որ ծանօթ են ինձ, բայց այժմ, որպէս երևում է, տուել են ինձ ամենևին մոռացութեան։ Երբ որ Ղազանումն էի ես, բաւական շատ գրագրութիւն ունեցայ դոցա հետ. և դոցա կամքն էր, որ ես դայի Հաշտարխան ուսուցանելու և դաստիարակելու Հայոց մանկունքը, և ճշմարիտ է, դոքա խոստանում էին 10 աշակերտ տալ, բայց առանց իմանալու դոցա կամքի և գործակցութեան հաստատութիւնը, չկարողացայ իմ հաստատ հայը թողուլ ձեռքից և գնալ անհաստատի քամակից։ Դուք ի հարկէ, իբրև հաշտարխանցի, աւելի լաւ

կարող էք դատել իմ կարծիքի ուղղութեան կամ չուղղութեան վերայ։

Ողջունելով ձեզ և ձեր ընտանիքը ամենայն յարգանքով, մնամ ձեր հարազատ

Սթեփանոս Նազարեանց.

Եթէ կամենաք գրել ինձ, ահա իմ հասցէն՝

Его Высокородію Степану Исаевичу Назарьянцу, Т. Профессору при Лазаревскомъ Институтѣ, на Срѣтенкѣ, въ Сумниковомъ переулкѣ, въ домѣ Малышевой, въ Москвѣ.

ՆԱՄԱԿ Գ.

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ 'Ի ՄԵՌԵԼՈՑ.

Մեր շատ ընտիր խոհական ազգասէր բարեկամ

Յովսէփ Իպշիրեանց,

Ձեր պատուելի նամակը ամսուս 4 թուականից հասաւ ինձ և տեղեակ կացուց ինձ ձեր ազգասիրական ցանկութիւններին։ Իմ կողմից ունիմ ձեզ աւետիք տալ, որ ահա՛ ձեր և մեր փափաքը, յաղթելով բազմադիմի դժուարութիւնների, կատարուեցաւ, և Հիւսիսափայլը հայոց երկնակամարի վերայ շողշողեցնում է իւր լուսափայլ ճառագայթները, մինի սրտին ուրախութիւն, միւսի սրտին անբուժելի ցաւ, ազգասէրներին պարծանք, ազգատեացներին ամօթ և խայտառակութիւն։ Մինչև այս նամակի ձեզ հասանելը, կ'ունենաք ձեր ձեռքումը առաջին ամսատետրակը. սորա քամակից, այս օրերումս պիտոյ է սուրհանդակի հետ վազէ երկրորդ ամսատետրակը, որ նոյն-

պէս պատրաստ է. երրորդ ամսատեսակը շուտով ներս կըմտանէ մամուլի տակ։ Սորանից կարող էք հեշտ իմաստասիրել, թէ որպիսի արագութեամբ և անձնազոհ կերպով գործ է կատարվում, բայց թէ ի՛նչ աշխատանք և տառապանք կայ հրատարակողի վերայ, այդ չկամիմ ձեզ սառն բառերով նկարագրել։ Ցենզուրայի հեռաւորութիւնը, դրաշարների պակասութիւնը, այո՛ և թանգութիւնը հայկական դրաշարութեան, չեմ ասում ձեզ, թէ բոլոր ծանրութիւնը մնացել է մեր ուսերի վերայ միայն, առանց օտարի օգնութեան, բացի պարոն Նալբանդեանցի անձնուէր ձեռնտուութիւնից։ Օրագրի ստացողների թիւը հասնում է այժմուս մօտ 200-ի. կարելի էր միայն տպել, այսինքն տպագրութեան ծախքը և փոստայի արծաթը դուրս բերել, բայց օգուտ չկար մեզ, Աստուած տայ, որ գալոց տարի մի փոքր թեթևանայ գործը, և մեք կարողանանք արծաթի քաջալերութեամբ աշխատակից ընկերք ձարել մեզ։ Գրաշարի մասին շատ դժուարութիւն կայ, և ռուսները հայերէն աւելի թանգ գնով են շարում, քան թէ ռուսերէն, պատճառ բերելով լեզուի օտարութիւնը։ Եթէ կարողանայիք մեզ Ղզլարից մի տղայ հասուցանել մինչ 18—20 տարեք, որ գիտէր փոքր ի շատ հայերէն և կուզէր ուսանել դրաշարութիւն և լինել ժամանակով դրաշար, ապա կարող էիք բաղդաւորել մի հայ և մեզ շատ թեթևացնել։ Մի հայոց դրաշար, որ կարող էր օրինաւոր շարել, կստանայ ամենայն թերթին 5 ման. արծ. և 5 թերթ շարելով՝ ամիսը կարող էր ստանալ 25 ման. բայց եթէ կարողանայ աւելի ևս շարել, իւր օգուտն է։ Իմ կողմից ես պատրաստ եմ յանձնառու լինել մի այսպիսի տղայի ճանապարհի ծախքը, և ի հարկէ ձեզ հեշտ կըլինէր խոհական կերպով անօրինել մի այդպիսի մարդու գալուստը դէպի Մոսկվա։ Ահա՛ մի հոգալի բան աղդասէր մարդու համար։

Այժմ պատմեմ ձեզ իմ Հանդէս նոր Հայախօսութեան զրքի 2 հատորի մասին։ Գրեանքը ամենեին պատրաստ են. այն օրհնած ցենզոր Կայթմազովը դեռ ևս չէ ուղարկել Թիֆլիզից արձակման հրաման, թէպէտ այս տարու Յունվարի 18 թուականից ուղարկած ենք նորան և տպած օրինակը և ձեռագիրը համեմատութեան համար։ Այսպէս գիրքը մնացել է մինչև այժմ կապած սառած իմ տանը։ Յոյս ունիմ, որ այսու հետև չերկարանայ այս անյարմարութիւնը, որովհետև բաւական ժամանակ էր անցած։ Երկրորդ ամսատետրակի հետ կարելի էր ձեր համար դնել ծրարի մէջ և մի օրինակ Հանդէս նոր Հայախօսութեան զրքի երկրորդ հատորից։

Մաղթելով Աստուածուստ լինել ձեզ ողջ և առողջ հոգով և մարմնով ձեր ազգի բաղդաւորութեան համար,

Մնամ ձեզ յարգող

Ս. Նալբանդեանց.

Մարտի 28-ին 1858.

Մոսկվա.

ՆԱՄԱԿ Դ.

17-ին Ապրիլի 1861 Թուակ. Մոսկվա.

Ազնիւ և խոհական ազգասէր պարոն,

Յովհաննէս Սայաթնէանց,

Ուրախ եմ, որ ազգաշինութեան բարի դիտաւորութիւնների պատճառով ստանում եմ պատեհ մի քանի բառ խօսելու ազգի բարեմիտ և հայրենասէր անդամների հետ։ Որքան ժամանակը մեր ձեռքումն է, պարտական

ենք աշխատել, որ մեր կեանքը ձրի, այսինքն զուր և անօգուտ եղած չլինէր աշխարհիս վերայ, որ մեք մեր աչքը յաւիտեան փակելու բոպէին, կարողանայինք ձգել մեր հայեացքը կանաչ և դալար վաստակաւոր օրերի վերայ, որ ապրած էինք մեր համար որպէս բարոյական մարդիկ, որպէս քրիստոնեայք, որպէս ընկերներ, մարդասէր և հայրենասէր հոգաբարձուք ազգի և մարդկութեան: Գիտեմ, ում հետ եմ խօսում, գիտեմ, իմ սերմանածքը ապառաժ քարի վերայ չէ: Ուրեմն, ազնիւ պարոն, թոյլ տուէք ինձ մատուցանել ձեզ առանձնապէս մի քանի յայտարարութիւնք իմ գիտական և գործական դպրոցի մասին, որ բացուելու է Մոսկվայի մէջ, և խնդրել ձեր հայրենասիրական գործակցութիւնը այս ձեռնարկութեանս, որ կարող է միայն պահպանել մեր հասարակութեան բարեմիտ անդամների հոգաբարձութեամբ: Երկար ու ձիգ տարիների կենսամաշ փորձով վերահասու եղայ ես, որ մատենագրութիւնը մի ազգի մէջ կարող չէ յառաջադէմ լինել, ուր չկայ գրագիտութիւն, չկայ դպրոցական պատիարակութիւն, չկայ ուսումնական կրթութիւն. մի խօսքով ուր ներկայ սերունդը պատրաստած չէ մատենագրութեան համար: Այժմ պարտական եմ ես ինքս ասել ինձ և ձեզ, ազնիւ Հայեր, որ մեր ազգի լուսաւորութեան ճանապարհը բանալու, պիտոյ է մեզ դաստիարակել և կրթել մեր մանուկ սերունդը, մեր մանկունքը, ծառը, ազգի ծառը իւր բուն սերմից ու արմատից դէպի վեր աճեցնելով, այդ է բնական ճանապարհը և այդպէս կարող ենք մեք բժշկել այն դառն ցաւերը, որոնց վերայ այսօր գանգատվում ենք և մորմոքվում ենք. մատենագրութիւնը մի ազգի մէջ կարդացող և մտածող հասարակութեան համար է, բայց որ այդ հասարակութիւնը կամ ամենևին չկայ, կամ թէ միայն բաղկանում էր երկու և երեք մարդից, ի՞նչ խորհուրդ ունի այդ մատենագրու-

թիւնը և մի՞թէ հեղինակը իւր հոգու վաստակը վաստակելով, յետոյ պարտ է դորանց իւր ատն ծակամուտքի մէջ մինների և ապականութեան կերակուր առնել: Այսպէս եղել է մինչև այժմ, և այսպէս յառաջ կերթայ, եթէ չփոխուի իմ գործականութեան ասպարէզը ազգային օգտի համար: Հիւսիսափայլը այս տարի կըկատարէ իւր ընթացքը, ինչպէս կարող էր, թէպէտ շատ ողբալի պայմանների մէջ է. մինչև այժմ հազիւ թէ հասել է ինձ ապագրութեան արծաթը միայն: Զեզ յայտնի կըլինի, թէ ինչպէս ընթացաւ իմ հետ պարոն Հանգուցեալ Կաղաչկովը. բայց ես չեմ վրդովվում. անհամար միւս, այլ անուանով Կաղաչկովներ եղան և կան ազգի մէջ, գոյա բան ուսուցանել աւելորդ էր, բայց թէ միւս աւելի բարեմիտ մարդիկ ի՛նչպէս վարուեցան մինչև այժմ, այն ևս ձեզ յայտնի կըլինի մօտուց, ձեր Հաշտարխանի մէջ: Ես շատ բան կարող էի ասել մեր հայերի ոմանց վատթարութեան մասին, այն կեղտոտ դաւաճանութիւնների մասին, որ այս կամ այն անձը Մոսկվայից սերմանում է Հաշտարխանի մէջ, իւր համար արժանի հող գտանելով, և այդ հողի մշակներից մինը ևս քահանայ է և, ինչպէս լսում եմ, Սրբազանին ևս սիրելի. դիտեմ շատ բան, բայց զզուելի է ինձ խօսել դոյա վերայ: Բայց բոլոր չարութեան արմատը մնում է ազգային տգիտութիւնը և անկրթութիւնը և անդատողութիւնը, ուր, որպէս նեխած աղբիւսի մէջ, կարող էին գոյանալ ամենայն տեսակ զարշելի ճճիներ և օրդներ: Ուրեմն, ազգասէր պարոն, այդ բոլոր ցաւերի դեղն է դպրոց, դաստիարակութիւն, կրթութիւն մանուկ սերունդի, այլ փրկութիւն չկայ մեզ: Այդ դպրոցը, որ պիտի օգնէր մեզ, ահա թոյլտուութեամբ տէրութեան կը բացուի Մոսկվայի մէջ, ազգի ծնողքը հասկանալով իւրեանց զաւակների օգուտը, պարտական են օգուտ քաղել այն դպրոցից, որ յանձնառու է դաստիարակել և կրթել

Հայկական մանուկը մեր լուսաւոր ժամանակի բաղմամասնեայ պիտոյքի համեմատ, որ մեր հայ մանուկը դառնար մի կիրթ, մտածող մարդ, թէ՛ ուսումնական և թէ՛ գործական տպաւորիչումը, որպէս հայ և որպէս հպատակ այն տերութեան, որի մէջ գտանվում էր:

Ցուսով եմ, որ դուք ևս, աղնիւ և խոհական պարոն, մեր միւս բարեվիճ մարդերի հետ կրփութեաք ձեր բարի յորդորանքով և քաջալերութեամբ պատրաստել ձեր՝ մէջ աշակերտ, ժողովուրդ մեր բացելի դպրոցի համար: Հարկաւոր է թանկագին ժամանակը, ինչքան կարելի է, աւելի լաւ տոկոսիքով շահեցուցանել: Դպրոցի ներքին և արտաքին կարգը և ընդունելութեան պայմանքը կրգտանէք նոյն իսկ յայտարարութեան մէջ: Եթէ կամիք այլ տեղեկութիւնք, կամ ով և. իցէ ձեր ծնողներից, պատրաստ ենք տալ ամենայն շուտափութութեամբ:

Աղնիւ խոհական պարոն Ձեզ յարգող

Ս. Նազարեանց.

Ահա ձեզ հրաշք. այս բոպէիս, մինչ աւարտում եմ նամակս դէպի ձեզ, նամակաբերը սաստիկ հնչեցնում է դռան զանգակը և իմ ծառան մի բոպէից յետոյ հաստուցանում է ինձ ձեր յարգելի նամակը: Հոգիքը ևս ունին իւրեանց տելեդրաֆիկական աննիւթ լարերը, որ միմեանց հետ խօսում են մի զարմանալի արագութեամբ:

Ս. Նազարեանց.

Ձեր ուղարկած ոտանաւորը անպատճառ կրտպուի, միամիտ կացէ՛ք, թէպէտ պայմանքը մի փոքր նեղացուցել է՛ք: Վերամշակուելով պիտի սա դեղեցկանար և ոչ թէ տգեղանար. մեղ ի՛նչ փոյթ շների հաչելը. մի՞թէ մեղ

պիտոյ էր յարգել նոցա ոռնացքը և կաղկանձիւնը և նոցա կամեցածի պէս վարուել. մանաւանդ որ այդ ոռնաւորի մէջ ոչինչ անձնական բան չկայ ինձ, այլ ընդհանուր առողջ մտքեր, որ և Բենեդիկտովը իւր բանաստեղծական գեղեցիկ գրչի տակ զգեստաւորել է ռուսերէն։ Խնդրեմ այս իմ գրութիւնը ընդունել միանգամայն և իբրև պատասխանի ձեր գրուածի 5-ից Ապրիլի՝ աւել լաւ կարող չէի ձեզ պատասխանել ձեր գրութեան ընդդէմ, քան թէ արդէն գրուել է նամակիս մէջ։ Ձեր բոլոր գրածքը ուղիղ են, բայց թէ հայոց ազգի թմրութեան քունը որ չափով եմ խախտել ես, որ չափով նոցա աչքը բացուած են, և թէ դոքա յառաջացուցել են այնքան ներգործութիւն, որ գործ յառաջ տարուի իմ կողմից և այսուհետև, այդ մասին դուք լռում էք, բայց ես կրակի մէջ նստած ահա 10 տարի այրուելոյ, ոչընչացայ։ Ձէ՛, հիւսիսափայլի հրատարակողը, ինչպէս գրեցի, պիտոյ է փոխէ իւր ասպարէզը։ Անպատճառ։ Հայոց ազգը մոռացում է, թէ ամեն բան կարելի է ամեն պայմանների մէջ։ Դուք, որ փուշ ու տատասկ կըսերմանէք, վարդ ու մանուշակ բուսանել կարող չէ։ Ամեն գործ ունի իւր բարոյական խելացի կարգը, այդ կարգից դուրս կարելի չէ գործ յառաջ տանել. դուք և ես, հաղարաւոր այլք թող յուսան ու երազեն, դոքա բոլորը դատարկ բաներ են, ազնիւ պարոն։

Ս. Ն.

ՆԱՄԱԿ Ե.

(Պ. Սերգեյեվը կատարեալ իւր հատուցումը, որպէս արժան է)։

20-ին Հոկտ. 1861 Թուակ. Մոսկվա.

Ազնիւ բարեկամ

Յովհաննէս Սայամնովեանց,

Վերջապէս, ամիսներ եկած, ամիսներ անցած, լսում եմ Ձեզանից մի քանի բարեկամական խօսք ու զրոյց իբրև պատասխանի իմ նամակիս Ապրիլի 17-ից, որ գրած էր Ձեզ ընդդէմ Ձեր նամակին նոյն Ապրիլի 5-ից։ Ձեմ կարող—որովհետև ուսած եմ միանգամ մոռածոզապէս ապրել աշխարհիս վերայ և ոչ վայր ի վերոյ ու վայրենի—չասել Ձեզ ցաւելով, որ զարմացած եմ Ձեր, որպէս և շատ հայերի, ընթացքի վերայ և ամենևին անյոյս եմ այսուհետև որ և իցէ բարի բան Ձեր համար առնել, որովհետև դուք ամենքեանքդ ոչինչ չգիտէք, բացի ձեռք ու ոտք կապելուց և՝ Ջախջախելուց մի մարդ, որ ձեր ազգի մէջ յանցաւոր էր զարձել նորանով, որ մի անօրինակ հայրենասիրութեամբ այսքան տարի զոհել էր իւր կեանքը Ձեր համար։ Գործը այնտեղ է հասել, որ ես իմ բարեկամներից նոյնքան եմ, զուցէ աւելի եմ, պարտ եմ զանազատուոր լինել, քան թէ իմ յայտնի թշնամիներից։ Խնդրեմ ներէք համարձակութեանս, զոքա հնարովի բաներ չեն, ահա՛ կապացուցանեմ Ձեզ փաստերով և պատճառներով, որ իմանաք զուք, թէ հայոց ժողովուրդը ո՞ր տեղ է, և նաղարեանցը ո՞ր տեղ է։ Նախ և առաջ խօսենք հայոց մարդերի առ հասարակ խարդախ ու սուտ բարքի վերայ, որ իսկոյն երևեցաւ Հիւսիսափայլի տպագրութեան սկզբումը այս տարու (և անցեալ տարիքը շատ աւելի

պատուաւոր եղած չեն) որպէս Հաշտարխանում, նոյնպէս և այլ տեղերում: Հայք բոլորքեանք մի սանրով են սանրած. բայց մենք այս բոպէս մնանք Հաշտարխանի վերայ: Պարոն Ս. Ալէքսանդրեանցը ստանալով ինձանից 30 տոմսակ Հիւսիսափայլի համար, ուղարկում է պ. Այվազեանին. սա յետոյ, այսինքն մի քանի շաբաթից յետոյ, ուղարկում է Ալէքսանդրեանցին 30 անուանների ցուցակ առանց արծաթի և խնդրում է նորանից, որ նա բ ա ր ա թ ա ռ ն է Մոսկվայի մէջ և հատուցանէ ինձ օրագրի վճարը. նամակի մէջ այս առեց ինձ Ս. Ալէքսանդրեանցը առաջարկելով ինձ [illegible] ցուցակը [illegible] ընդունեցի առանց արծաթի, ի հարկէ և ոչինչ չխոսելով: Նա ըստիպեց ինձ ընդունել անարծաթ ցուցակը և ուղարկել Ձեզ Հաշտարխան Հիւսիսափայլ, բայց ես հրաժարուեցայ այսպիսի յանձնաւորութիւնից, ասելով նորան, որ մի անկանոն գործ է, առանց հատուցումն ստանալու օրագիրը արձակել չոր ու ցամաք անուանների վերայ: Վերջապէս ասայ նա ինձ թէ նա կարող չէ արծաթ հատուցանել ինձ, որովհետև արծաթ չունէր. բայց թէ նա ինչու, ինչպէս ասած էր Այվազեանի նամակի մէջ, բարաթ չտրեց, ի հարկէ ոչ իմ հարցանելիքս էր և ոչ իմ առաջարկելի բանը: Նամակի մէջ ասած չկար, որ նա արծաթը Քուրդովից կամ Սարիբէկովից ստանար: Այժմ լսում եմ պ. Ֆանդէեվի և Ձեր նամակից, որ Ս. Ալէքսանդրեանցը գրել է Ձեզ մի ամենևին խառնափնդոր, անորոշ բան, ինչպէս երևում է, ծածկելու իւր ընթացքը իմ հետ. փոխանակ ուղղակի և պարզապէս գրելու Ձեզ, թէ Նազարեանցը չկամի առանց արծաթի ուղարկել Ձեզ օրագիր, գրում է Ձեզ մի անպատշաճ բացատրութիւն, որպէս թէ ես Հաշտարխանցիքը անարժան էի համարել իմ օրագրին, կամ թէ այդպէս բան դլուխ չի գայ: Այո, անկարգութեամբ չկամի Նազարեանցը գործ կատարել, բայց կարգով ու խելացի ձա-

նպարհով պատրաստ է Նազարեանցը ամեն մարդու հետ գործ ունենալ, մանաւանդ իւր ժողովրդի հետ։ Սորանից ահա՛ բացայայտ ու լուսափայլ է, որ Ս. Ալէքսանդրեանցը կամելով Զեզանից թագուն պահել իւր չյանձնառութիւնը արծաթ վճարել կամ հասուցանել ինձ, այլ և կամելով իւր անձը արդարացնել Ձեր առաջև, մեղքը ձգել է իմ վերայ, այնպէս խառնափնդորելով գործը, որ մէջ տեղում երևում չէ մի որոշակի բան։ Բայց զարմանում եմ, որ դուք կամ Այվազեանը չշտապեցիք իսկոյն կարդի դնել այս բանը, ուղղակի զրելով ինձ Ձեր պահանջմունքը, և այժմ, տարին վերջացած, աշխատում է՛ք պատ ի պատ խօսքերով ամեն միտիդ Ձեզ արդարացնել. բայց աւելորդ էր այդ. ես գիտեմ Հայոց ազգի բարք ու վարքը, գիտեմ, որ այդ ազգի մէջ միշտ հիւանդացել է և մեռել է առողջ գործը. հիւանդի ու մեռածի վերայ ի՞նչ խօսենք։ Եթէ Այվազեանը ուղարկած լինէր ցուցակը իմ վերայ հանդերձ պատուիրելով արծաթը ստանալ այս ինչ կամ այն ինչ մարդուց Մոսկվայում, կամ թէ գոնեայ Ս. Ալէքսանդրեանցը Այվազեանի նամակի վերայ կամենար երաշխաւոր լինել ինձ, այնուհետև յառաջ կերթար գործը. բայց ոչ միտը չեղաւ, և ես, ի հարկէ, իմ կանոնիս վերայ հաստատ մնացի, ոչ ոքի չսափսկել, ոչ ոքի հիւսիսափայլ ջուղարկել առանց երաշխաւորութեան կամ հատուցման, որովհետև իմ գործը վաճառականութիւն չէ, այլ յիսուակ առնելիք և տալիք իսկոյն։ Այլ և հարկաւոր եմ համարում ասել Ձեզ, որ ինչպէս շատ միւսները, նոյնպէս և պ. Այվազեանը անկանոնաբար են վարուել իմ տոմսակների հետ, որ արծաթի ստացման վրկայագիրք էին իմ ստորագրութեամբը. ուրեմն առանց հատուցման երբէք կարելի չէր նորանց օտարի ձեռք տալ. բայց եթէ հատուցած էր արծաթը, ուրեմն ես պիտի ստանայի նորան և գործ կատարէի։ Բայց կարծեմ, մեր հայե-

ը մեր կվիտանցիան ստացած անգամ չեն հաւատացել մեզ, այլ կամեցած են նախ և յառաջ մեր օրագիրը ըստանալ, ապա վճարել։ Խոստովանեցէք առաջի Աստուծոյ և Ձեր հայ եղբօրը, որ շատերն ևս այսպէս կամեցած են —ինչպէս ասում էր Ս. Ալէքսանդրեանցը, և ի՞նչ պիտի լինէր մի այդպիսի անկարգութեան հետևանքը, այդ ևս դիտենք և մինչև այս օրս մեր ազնուամտութեամբ զրեթէ 400 մանէթի պարտքի տակ ենք։ Թէպէտ ձեզանից ոչ ոք չզիտէ և չկամի կարգ ասած բանը հասկանալ։ Որ հայ ենք, ուրեմն պիտի բարբարոս լինինք. այսպէս կամին մեր Հայք. թող գոքա այսպէս կամենան, բայց մենք չկամինք մեր հայութիւնը բարբարոսութիւն շինել։ Դեռ շատ բան ունիմ ասելու Ձեզ։

Ձեր նամակը, որի հետ ուղարկած էիք Ձեր դեղեցիկ ոտանաւորը, ես ամենայն յօժարութեամբ տպած կըլինէի, բայց այդ մասին դուք յայտնած չէիք Ձեր կամքը. և Ձեր նամակի մէջ գովասանութիւն լինելով Հիւսիսափայլի վերայ, մի փոքր յետ քաշուեցայ, ոչ թէ այն պատճառով որ սուտ էր գրածը, ո՛չ, այլ մի ուրիշ պատճառով. այո՛ մեր նախանձոտ բարեկամներից ոմանք այնպէս են կարծում, որ ես փառասէր մարդ եմ և գովասանութիւնք եմ տպում իմ վերայ օտարների բերանից իմ օրագրի մէջ։ Գիտէ՞ք, ազնիւ եղբայր Սայաթնովեանց, թէ ինչ անարժան դրութեան մէջ է մեր ազգը՝ մեր թշնամիքը ամենայն տեսակ ապականութիւն թափում են Նաղարեանցի վերայ, բայց մեր բարեկամները մտածում են, թէ նոցա պիտոյ էր լուռ մնալ. և եթէ Ձեզպէս աշխարհական մարդիկ ջատագով ու պաշտպան դուրս գային մեզ, այդ ևս հարկաւոր չէր ընդունել. ասել է՝ Նաղարեանցին պիտոյ է հայհոյէ ամենայն մարդ, թշնամին իւր խօսելով և բարեկամը իւր լուռ մնալով, համաձայնել նորան։ Ասացի Ձեզ վերևում, որ այսպիսի ազգի մէջ այսուհետև ան-

հնարին է ինձ գործ կատարել՝ ոչ թէ մեր թշնամին միայն թշնամի է մեզ, այլ և մեր բարեկամը թշնամի է մեզ, գուցէ աւելի վատթարագոյն։ Իմ կարծիքը ձեր աշխարհականների վերայ այսպէս է, ինչպէս և գրած եմ իմ հրապարակական նամակի մէջ առ ազգը, որ այսուհետև դուք աշխարհականքդ լաւ ու վատ հանդէս գաք, ձայն տաք, որոտաք և յայտնէք Ձեր կարծիքը։ Այսուհետև Ձեզ տեղիք չկայ մոռածելու, թէ ուսումնականք, դիտնականք կան Ձեր ազգի մէջ, ոչինչ չկայ, սխալվում է դուք. մի քանի վախկոտ, կիսատ միսատ անբարոյական իմաստակներ, նախանձոտ բարեկամներ, ահա Ձեզ ձեր ուսումնականքը։ Ձէ՛, այժմ պիտի դուք բանաք, արձակէք և հնչեցնէք Ձեր փակած բերանը, եթէ կամիք որ Ձեր սերունդքը չլինքն Ձեր գերեզմանի վերայ, ինչպէս վատթար նախնիքի գերեզմանի վերայ։ Այսուհետև դուք է՛ք իմ դատաւորքը և ոչ թէ Ձեր վատթար, անբարոյական ուսումնականքը, որ միայն նախանձոտ և նախանձաբեկ իմաստակներ են, անարժան մարդկային անուան։ Աւելի բան ունիմ Ձեզ ասելու։

Դուք պահանջում է՛ք ինձանից, որ ես իմ գիտնական և գործական դպրոցի մասին, որ բացուելու է Մոսկվայի մէջ Տէրութեան առաջ թոյլտուութեամբ, այնպէս գործ կատարեմ, ինչպէս Հայոց ազգը միշտ պահանջել է Նազարեանցից, որ նա հիւսիսափայլ տպէ, այսինքն առանց արծաթի նպաստաւորութեան։ Դպրոցը բաց է, Տէրութեան թոյլտուութեան թուղթը ծոցումն է, բայց աշակերտ չկայ. որովհետև ամէն մարդ Հայերից Ձեզ պէս մտածում է և խօսում է. այսինքն թող յառաջ Նազարեանցը մի 10, 20 աշակերտք ունենայ, ապա և ես իմ որդին կը յանձնեմ նորա դպրոցի հոգաբարձութեանը։ Այդ ի՞նչ տեսակ մարդիկ է՛ք դուք, պարոններ, Նազարեանցը ի՞նչպէս առնէ, որ 10, 20 աշակերտ հաւաքէ իւր մօտ,

բանայ իւր ուսումնարանը, կարգաւորէ նորան, եթէ դուք, եթէ ոչ մինը Ձեզանից չկամի նորան իւր զաւակը յանձնել։ Խնդրեմ ասել այդ ի՞նչ հրաշք է դուք պահանջում Նազարեանցից. մի՞թէ այդքան անմտութեամբ պատժել է Ձեզ Աստուած, որ չէք կարող հասկանալ, թէ մի 10, 20 աշակերտք այն ժամանակ կը հաւաքուին Նազարեանցի մօտ, այն ժամանակ ուսումնարանը կը բացուի, կը սկզբնաւորուի, կը կարգաւորի, երբ արդէն աշակերտք կային, երբ Հայոց ծնողքը իւրեանց զաւակները յանձնած էին նորան։ Դպրոցը դատարկ պատերով և սեղաններով չէ լինելու, այլ աշակերտների ներկայութեամբ։ Կամ մի՞թէ կարծում էք դուք, որ Նազարեանցը պիտի իւր դպրոցը իւր վեվեսկայով բերէ Հիւսիսափայլի տետրակների պէս դնէ Ձեր ձեռքի մէջ, որ դուք հաւատաք նորան և յանձնէք նորան ձեր որդիքը։ Զգիտեմ, ինչ տեսակ մարդիկ էք դուք, պարոն Հայեր, ի՛նչ էք ասել ինձ, ի՛նչ էք պահանջում։ Զարմանում եմ, որ դուք տակաւին կարօտ էք միւս այլ տեղեկութիւնների իմ դպրոցի մասին, քան թէ ահա երկու անգամ հրատարակուեցան Հիւսիսափայլի մէջ։ Ո՞չ ապաքէն ասած է այնտեղ, թէ ծնողք զանազան քաղաքներից պարտ էին ինձ տեղեկութիւն տալ, թէ քանի զաւակ այս կամ այն տեղից կամէին ուղարկել ինձ, յայտնելով ինձ իւրեանց ցանկութիւնը իւրեանց որդիների ուսումնառութեան մասին, դպրոցի դիտական կամ գործական մասումը և այլն և այլն. ո՞չ ապաքէն գրած են այնտեղ ամենայն ծանօթութիւնք զանազան ուսանելի նիւթերի և դպրոցի բոլոր թէ՛ անտեսական և թէ՛ ուսումնական մասին. այլ ի՞նչ միւս ծանօթութիւնք կարող եմ տալ Հայերին։ Բաւական չէ՞ր որ նոքա իմանալով ինձանից այդ տեղեկութիւնք, ծանօթութիւն տային ինձ ուղարկելի մանուկների մասին, և ես իմ կողմից միա դնելով աշակերտների բազմութեանը, զորօրինակ

10, 20-ի զրկի ծնողներին, որ ուղարկեն աղայքը և ես պատրաստութիւն տեսանէի ընդունելու նորանց։ Բայց ոչ, հայերը մտածում են, Նազարեանցը նախ և յառաջ պիտոյ է մի քանի 1000 մանէթ ցած դնէ, տուն բռնէ, սարք կարգ հոդայ, վարժապետներ հրաւիրէ, առանց մի ծնողից էս մի աշակերտ ստանալու։ Սոյս էք պահանջում ինձանից, աղնիւ պարոն. ես չգիտեմ և հարկադրուած եմ ասել ձեզ, որ դուք ամենայն կարդից դուրս բան էք պահանջում ինձանից, և Աստուած կարող չէ ձեր պահանջողութիւնը կատարել, ուր մնաց Նազարեանցը, որովհետև ձեր պահանջողութիւնը անխել պահանջողութիւն է։ Ամենայն մասնաւոր դպրոց ամենայն տեղ բացուած է և բացվում է աշակերտք գտանելով, այսինքն եթէ այս կամ այն ծնողքը հաւատալով մի արժանաւոր մարդու հրատարակութեանը յանձնում են նորան իւրեանց մանուկները և այդպէս օրէ օր բազմանում են աշակերտքը հինգից դառնալով 10, տասնից դառնալով 20, քսանից 30 և այլն և այլն. և ոչ մի ծնող չէ մտածում այնպէս, որպէս թերահաւատ հայերը, որ թող նոքա նախ և յառաջ տեսանեն, որ մի դպրոցապահ 10, 20 աշակերտք ունենայ, ապա թէ կտային իւրեանց մանուկները նորան։ Բայց ոչ մինը հայերի մէջ այնքան խելք չունի, որ ինքն ասէ իւրեան, թէ ի՞նչպէս կարող են 10 և 20 աշակերտք մի տեղ հաւաքուիլ, եթէ ոչ մի ծնող չկամի յառաջուց տալ։ Գուցէ Յովսէփ Զերքէզեանցը լաւ ներգործել է ընդդէմ ինձ, թող հովանայ սիրտը. գոնեայ հայերի անմտութիւնը և Զերքէզեանցի չարախօսութիւնքը լաւ հանդիպում են միմեանց։ Եւ աւելի բան։

Դուք ինձ յոյս էք տալիս, որ գալոց 1862 թուականին յանձնառու էք դուք 20 ընկերապրութեան հիւսիսափայլի. շնորհակալ եմ։ Դուք ստանում էք տհա՛ծանուցումն գալոց տարու հիւսիսափայլի մասին, որի մէջ

փոքր 'ի շատէ բացայայտել եմ մեր Հայերի առաջև Հիւսիսափայլի օրպիսութիւնը, գործի բոլոր հանգամանքը պարզ ի պարզոյ դնելով նոցա առաջև, և Հիւսիսափայլի գործը յանձնելով նոցա իմաստուն հոգաբարձութեանը: Այսքան տարի գործ կատարեցինք Հայերի համար. այսուհետև կարող չենք այնպէս, ինչպէս յառաջ. ուրեմն թող Հայերը զգաստանան, ճանաչեն իւրեանց օգուտը և վնասը և օգնեն մեզ. ապա թէ ոչ, ինչպէս հաճոյ է նոցա:

Ձեր բարեացակամ

Ս. Նազարեանց.

ՆԱՄԱԿ Զ.

27. փետրվարի 1862 Թուականի. Մոսկվա.

Ազնիւ բարեկամ

Յովհաննէս Սայադեանցի,

Ձեր պատուելի, ապահոված նամակը, հանդերձ Հիւսիսափայլի ընկերապիրների ցուցակովը, ստացայ անկորուստ, և պարոն Կարապետ Սաղբատովից նոյնպէս Ձեր պատուիրելով ընդունեցի նոյն ընկերապիրների արծաթը, այսինքն 218 ման. 50 կոպ. որ է 23 օրինակի հատուցումն և Ձերը նորա մէջ: Ձեր նամակի մէջ գտայ նոյնպէս մի ծրար «Արձագանք Հաշտարարանից» բաւական խելացի և պատշաճաւոր կերպով գրած, որ շատ ուրախ կլինէի իսկոյն տպել, ոչ թէ վրէժխնդիր լինելու իմ ճշմարտութեանը, որ այնքան անամօթ և խելագար կերպով հայհոյել է մինչև այսօր պարոն Ձերքէզեանցը — ես այդ բանը

թողում եմ գալոց ազգի արդարադատութեան դատաստանին և մարդկութեան ատենին առ հասարակ, այլ որ գոնեայ փոքր 'ի շատէ հատուցումն ստանայ Հայոց ազգի պատիւը և իրաւունքը, որ այդպէս հրապարակով անարդել է մի Ձերքէղեանցի պէս անձն։ Բայց, բայց, կրկնում եմ, աղնիւ բարեկամ, պարտական եմ Ձեզ խոստովանել, որ այնպիսի վատթար դրութեան մէջ է հիւսիսափայլի ընկերադրութիւնը, որ չգիտեմ թէ ինչպէս պիտոյ էր գործ սկսանել։ Մինչև այս ներկայ թուականս հասել է իմ ձեռքը 961 մանէթ առ ձեռն պատրաստ, որպէս պարգև մեր Թիֆլիզեցի պարոն Շադիրեանից 200 ման. առանձին, ուրեմն 1161 ման. խոստացել է մի այլ անձն, պ. Սանասարեանց անուն Պետերբուրգից 250 մանէթ, նոյնպէս ընծայ, երբ որ դուրս կրգար հիւսիսափայլը. ապա ուրեմն բոլորը, թէ՛ ստացած և ստանալի արծաթի դումարն է 1411 ման.։ Բայց ինձ անպատճառ հարկաւոր է, որպէս նիւթական ծախք տպագրութեան համար, 2000 ման. բացի սորանից, ինձ և իմ աշխատակից գրողների համար, թերթին շատ փոքր հաշուելով, 2000 ման. և դուք իբրև բանական մարդ, ի հարկէ, կարող չէք մտածել, թէ հեղինակ մարդիկը օդից միայն ապրում էին, այլ ամենայն ադամորդու պէս ունէին իւրեանց մարմնաւոր կարիքը. և նոցա արժան էր ուտել, խմել, հագնել, մի խօսքով մարդկօրէն ապրել, ինչպէս դուք ամենքեանքդ։ Այս փիլիսոփայութիւնը շատ պարզ է և ինքն ըստ ինքեան բացայայտ. բայց դու տես, որ Հայերին մինչև այսօրս ես ոչինչ չկարողացայ հասկացնել. և այդպէս այս չորս տարին իմ կեանքս եղաւ մի կատարեալ նահատակութիւն, անհնարաւորը հնարաւոր կայուցանելով, ինչ որ հինգ մարդու գործ էր, գրե՛թէ միայն լուցանելով, թող տպագրութեան և սրբագրութեան և այլ միւս տեսակ տառապանք և խաչեր շատ։ Ձեմ խօսում այստեղ այն

հայհոյանքի և հազար տեսակ պղծութիւնների, կեղտի և ցեխի վերայ, որ անամօթ շրթունք թափեցին և թափում են մինչև այսօրս մեր վերայ. զորանց պիտոյ էր ինձ յանձն առնուլ, և, ինչպէս մեր Հայերը ասում են, աչքի տակ դնել, եթէ յանձն առայ միանգամ դէպի հրապարակ դուրս գալ և անողոքելի արդարութեան ու ճշմարտութեան սուրը դէպի աջ ու ձախ շողեցուցանել, կարմրացրած երկաթով այրել փտած ու նեխած վէրքեր և սուր դանակով կտրել ու բաց ձգել: Ոչ եկի խաղաղութիւն արկանել, այլ հուր. ուրեմն ինձ հանդիպել է, ինչ որ պիտի հանդիպէր հարկաւորապէս. ոչինչ աւելի և ոչինչ պակաս: Ես անմխիթար չեմ այդ մասին, այլ ինչ որ արեցի, և կեանքս ցած դնելով արեցի, դորա վերայ շատ ուրախ եմ. փառք Ամենակալին, փառք Քրիստոսին, որի ճշմարտութեան սերմերը—ամենևին ոտնակոխ եղած մեր ազգի մէջ—նոր ի նորոյ քրքրեցի և թափեցի հայկական հողի մէջ. թէպէտև փարիսեցոց քահանայապետը մատնեց ինձ աշխարհական իշխանութեան ձեռք. բայց—Իսրայէլացոց, Հրէից ժամանակը անցած է—խայտառակուեցաւ դարձեալ ինքը, յաղթութեան արմաւենով դուրս գնաց պատերազմից փոքրիկ Նազարեանցը: Այս բոպէիս չկամիմ ես Ձեր հետ, ազնիւ բարեկամ, շատախօսել այս նիւթի վերայ. մեր ներկայ ցաւը այն է, որ Հայոց ազգը կարողութիւն տայ ինձ գործ յառաջ տանելու. ինչպէս ասացի վերեւում, Հիւսիսափայլը կապած ու կաշկանդուած մնացել է, և շաբաթամէջ կամ ամսամէջ մի, երկու ստորագրութիւնք կարող չեն արձակել իմ ձեռքը: Թիֆլիզից ստացել եմ մինչև օրս 32 ընկերագրութիւն և Շագիրեանցի 200 մանէթը. այլ անձինք Ղզլարից զօրորինակ պարոնայք Յովհաննէս Փիթանեանց և Յովսէփ Իզմիրեանց մինչև 20 ընկերագրութիւնք հասուցել են ինձ. սորայ վերայ յաւելացրու Սանասարեանցի ընծայելի 250 ման. արծա-

թը, որ ինձ հասանելու է ոչ թէ հիւսիսափայլը տպելու համար, այլ հիւսիսափայլը տպելուց յետոյ։ Զարմանալի մտածութիւն մեր հայերի կողմից։ Ես գործը թողել եմ այսուհետև ազգի հոգաբարձութեանը. ինչպէս կամի նա, այնպէս և հաճոյ է ինձ։ Ես իմ առնելիքը արեցի, տեսանենք այսուհետև դոցա շնորհը։ Իմ սատարգրութիւնքը մինչև այժմ են Թիֆլիզից, Հաշտարխանից, Ղզլարից, 7 հատ Սատուրապօլից, մի քանիքը Ղրիմի կողմերից, այլ կողմերից ոչինչ չկայ. Նախիջևանը (նորը) մեռել է. մի ձայն ևս լսում չենք այն տեղից. Շամախի, Երևան, Մոսկվա, Պետերբուրգ կամ թէ միւս քաղաքներից ոչինչ, ոչինչ միանգամայն. բայց փետրվարի 27-ն է արդէն. էգուց չէ, միւս օր Մարտի 1 է։ Զգիտեմ, աղնիւ բարեկամ, թէ ինչպէս պիտի վերջանայ այս գործը. ես լաբիրինթոսից ելքի ճանապարհ չեմ տեսանում. վասն որոյ կարող եմ Ձեզ միայն համարձակութեամբ այսքան հասկացնել, որ, եթէ այսպէս գնայ գործը, ինչպէս գնում է, այնուհետև ես հարկադրուած կըլինեմ մի քանի ամսից յետոյ դարձուցանել արծաթը որպէս Ձեզ, նոյնպէս և միւս պատուելի ընկերաքիլներին, որովհետև գործ կատարել այդպէս, ինչպէս մտածում են մեր սիրելի հայրենակիցքը, ես անկարող եմ. և անկարող էր ամենայն միւս խելացի մարդ իմ տեղումս։

Աղնիւ բարեկամ,

Ձեր պատրաստական

Ս. Նազարեանց.

ՆԱՄԱԿ Է.

9-ին Ապրիլի 1862 թուականի. Մոսկվա.

Աղնիւ բարեկամ

Յովհաննէս Սայատնովէանց.

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՀԻ 'Ի ՄԵՌԵԼՈՑ.

Շտապում եմ Ձեզ տեղեկութիւն տալ, որ Հիւսիսափայլի տպագրութիւնը, թէև շատ տրտում պայմանների մէջ, այսինքն մի յուսահատեցուցիչ փոքրիկ արծաթի կարողութեան մէջ, սկսաւ արդէն։ Հանդամանքի դառնութեանը միա դնելով, այսպէս որոշեցի, որ փոխանակ անցեալ տարիների հնգաթերթեայ տետրակների, համառօտուին սոքա երեքթերթեայ ամսական տետրակներով, տիպը տնօրինելով միջակ տառերով։ Ինձ պիտոյ էր կամ այսպէս վարուիլ, կամ թէ ամենևին հրաժարուիլ Հիւսիսափայլի տպագրութիւնից և ազգի բարեմիտքը նոցա թշնամիների սրտով առնել։ Արդարև նոյն ծանրութիւնը և անտանելի ծանրութիւնը հնում է դեռ ևս իմ վերայ միայն, այսինքն գրաւոր աշխատութիւնքը, որովհետև արծաթի անհնարին աղքատութիւնը այնքան է, որ ինձ գործակից աշխատաւորք պահելու կարողութիւն չկայ. մի վհատեցուցիչ մտածութիւն իմ համար, բայց անհասկանալի մեր հայ մարդերին։

Այս տեղեկութիւնքը տալով աղնիւ բարեկամիդ, որպէս կիսով չափ մխիթարական և ուրախացուցիչ լուր, միւս մասով կամէի յանձնել Հիւսիսափայլի յառաջապիմութիւնը Ձեր խոհական հոգաբարձութեանը և հայրենասիրական ջանքին դէնի և այն օգնութեանը, որ ինձ

22 ընկերակցութեամբ Հաշտարխանից հասուցած էիք։ Դուք կարող էիք անօրէնութիւն գործել, որ ես կարողանայի աւելի օրինակներ ուղարկել Ձեզ Հաշտարխան, եթէ յոյս կար յեսոյ ևս տարածել դորա օրինակները Հաշտարխանում. այստեղ հարկաւոր էր միայն ճանապարհի ծախք գազետի էքսպեդիցիային վճարելի $1^1/_2$ ման. ամեն մի օրինակի համար։

Շատ ցաւում եմ, ստիպուած լինելով ասել Ձեզ, ազնիւ բարեկամ, որ զկնի այսքան կենսամաշ մատենագրական աշխատութիւնների, զկնի այսքան պանծալի յաղթութիւնների, որ Հիւսիսափայլը և նորա հրատարակողը ստացան ընդդէմ իւր մատնողներին և թշնամիներին, փոխանակ բազմանալու ընկերագիրների և նորա բարեկամների թիւը, ևս առաւել նուազել է գա. փոխանակ ջերմեռանդութեան և քաջալերութեան, յառաջացել է սառնութիւն և երկմտութիւն. բարեկամները դարձել են խարդախ թշնամիներ, ամենևին երկմիտ և փոփոխամիտ մարդեր։ Նոր-Նախիջևանը, որ մինչև այժմ գլխաւոր պաշտպանն էր Հիւսիսափայլի և ամեն տարի մինչև 100 օրինակի յանձնառու էր, այս տարի ոչ մի օրինակ մինչև այսօրս գրուել չէ և ոչ իսկ մի լուր կամ տեղեկութիւն ունիմ մինչև այս րոպէս այդ քաղաքից։ Պիտոյ է մատնել, որ այդ քաղաքի մարդիկը ինչ բան մինչև այժմ համարել են և ընդունել են իբրև ճշմարտութիւն, նոյն բանը այժմ երևում է նոցա սառութիւն, ուրեմն և մերժելի. ով անհասկանալի փոփոխամտութիւն տսիական հոգիների, չեմ ասում թէ մի անհերելի ապերախտութիւն, որովհետև Հիւսիսափայլը ոչ մի քաղաքի իրաւունք այնքան քաջութեամբ և վատամարդիկ լինելով պաշտպանել չէ, ոչ մի քաղաքի օգտի համար այնպէս ջերմաբար պատերազմել չէ, որպէս Նախիջևանի համար, և այսօրս դա մնացել է մեռած և քարի պէս լուռ, երբ միւս քա-

զաքներից շատ ու փոքր հաւաքուած են արծաթ։ Պարոն Հայրապետեանցի մի եղբայրը, փեսան ձեր Սերգեյեվի, հաշտարխանուցմդ է. զուցէ թէ կարողանայիք այս կամ այն մարդու ձեռքով իմանալ, թէ ի՞նչ էր պատճառը Հայրապետեանցի ամենեւին ամարդի լռութեանը և հրաժարմանը Հիւսիսափայլից։ Ես լսած եմ միայն, որ Այվազովսկու աշխատութեամբ և խորամանկ հնարներով, Կարապետ Հայրապետեանցը հաշտուել է Նախիջեւանցում Խալիպեանի հետ, միայն թէ կարծում էի միշտ, առանց իւր հոգին գերի և ստրուկ տալու Խալիպեանի հոգուն և նորա համախոհներին։ Այժմ երեւում է բանը այլապէս, և ես իմ կողմից, ի հարկէ, ամօթ կը համարէի նամակով անգամ մօտենալու այդպիսի խարդախներին։

Ահա այս պատճառներով ցանկալի կը լինէր ինձ տեսանել, որ Հայք ճանաչելով իւրեանց պարծանքը կամէին ցոյց տալ Նոր-Նախիջեւանցոց և նոյն իսկ պարոն Հայրապետեանցին, թէ Հիւսիսափայլը կարող է ոտքի վրայ պահուել և յառաջ գնալ, առանց Նախիջեւանի մասնակցութեանը եւ։ Շատ և շատ ցանկալի կը լինէր ինձ, որ Հայերը մի փոքր աւելի զգացող մարդիկ լինէին, քան թէ ես տեսանում եմ գորանց, և ինչ որ իւրեանց պարտականութիւնն էր, այն չդնէին իմ վերայ, խեղդելով ինձ, որպէս թէ միայն իմ պարծանքն էր Հիւսիսափայլի յաջողութիւնը. ես ամենից առաւել բեռնաւորուած եմ, գործ եմ կատարում տասն մարդու փոխանակ. այլ միւս ի՞նչ առնեմ. մի կտոր հայը, որ ունիմ ձեռքումս ոչ Հայոց տուածով, այլ իմ վարժապետութեամբ, կարող չեմ զաւակիս ձեռքից առնուլ և տալ Հայոց հարուստներին. այս ընդդէմ է և մարդկային և աստուածային օրէնքի։

«Արձագանքը Հաշտարխանից» կը տպուի առաջին տետրակի մէջ, նոյնպէս դատանաւորները պ. Նազարեանցի.

ցաւում եմ միայն որ Դ. Ն. Սերգեյեվի և Ֆրանգուլովի անունները չկան այն հաշտարխանու արձաղանքի տակ. ինչպէս երևում է, մեծատունքը անարժան են լինելու ճշմարտութեան պաշտպանք. բայց ոչինչ այն 17 արժանաւորները բաւական են նոյնպէս: Դոքա որ համարձակուել են հանդէս գալ, դա մեծ խորհրդաւոր բան է իմ աչքում, և ապա գալոց ազգը կասնէ գոյա ազնուամտութեանը արժանի հատուցումն: Ես կաշխատեմ երկու երկու տեսակ արձակել մի ամսում, որ շուտով հաւատարուենք ժամանակի հետ, որ Հայք Իւրեանց ասիական ծանրաշարժութեամբ և դանդաղկոտութեամբ ի զուր անցուցին на бѣду мнѣ. բայց հերիք է:

Ազնիւ բարեկամ,

Ձեր պատրաստական

Ս. Նազարեանց.

ՆԱՄԱԿ Բ.

Նոյեմբերի 3-ին 1862. Մոսկուա.

Ազնիւ պարոն,

Ձեր յարգելի նամակը անցեալ ամսու 19 թուականից հասաւ ինձ, ծանուցանելով Ձեր դիտաւորութիւնը հրապարակաւ պատասխանատու լինելու պ. Ձերբէզեանց «անդրադարձին» Ձեր, հաշտարխանիից հնչեցուցած արձաղանքին, որ դուք կարդացել էք Մասեաց ազգաւի 14 համարի մէջ, բայց ես, ուղիղն ասեմ, ոչ կարդացել եմ և ոչ դիտեմ. կարծեմ մի այդպիսի բան ձգեցին ականջս Թիֆլիզեցի բարեկամներս, բայց ես աւելի պատուական նիւթերով և գործերով պարապած լինելով, անարժան

համարեցի ուշադրութիւն նուիրել մի խելագարի գրուածի, որպիսի պարոն Զերքէզեանցն է, մանաւանդ որ նա, վաղուց արդէն խորտակուած, ջախջախուած և խայտառակուած է ազգի փոքր ի շատէ խելացիների և հասկացողների դատաստանի առաջև, և ոչ մի օրինաւոր մարդ կամէր նորան բերան առնուլ անդամ:

Ես ընդդէմ չեմ Ձեր գիտաւորութեանը կրկին հանդէս գալու և օրինաւոր շաղախով ծեփելու նորա լիրը և անսանձ բերանը—եթէ հաճոյ է Ձեզ, միայն թէ խնդրում եմ. Ձեզանից շուտով և փութով ուղարկել ինձ Ձեր «խորհրդածութիւնքը ազգի ճշմարիտ ազգասէրների առաջև», որովհետև Հիւսիսափայլի վերջին տետրակը, այսինքն 12 հ. շուտով կըմտանէ տպարան, և ամենուս վերջումը կամ թէ դեկտեմբերի առաջին օրերում ամենևին կաւարտուի Հիւսիսափայլի տպագրութիւնը: Հիւսիսափայլի 10 համարից, որ արդէն արձակուած է դէպի Ձեզ, վերահասու կըլինիք նոյնպէս, որ Հիւսիսափայլը գալոց 1863 թուականին կարող չէ այլ ևս յառաջ տարուիլ 'ի պատճառս հայկական հասարակութեան անօրինակ և դերօրինակ ջերմեռանդ ձեռնտուութեան և օգնութեան հրատարակողին: Ի՞նչ ասեմ, ազնիւ բարեկամ, մեր սիրելի հայերի մեռած ստոնութիւնը դէպի ամենայն ազնիւ և պատուական գործ յանդիմանելով և դատապարտելով վաստակեցայ արդէն, այժմ պիտի գովեմ, որ ի հարկէ մի աւելի մխիթարական խորհուրդ չունի, քան թէ մի ծանր յանդիմանութիւն, թէպէտ հասկացողն համար այդպիսի գովասանութիւնը հազար յանդիմանութիւնից առաւել ցաւեցուցիչ է: Իմ դրութիւնս հայերի մէջ կըհասկանաք Դուք, ուշի ուշով կարդալով «Ծանուցումը» յիշեալ համարի մէջ: Վերջին տետրակի մէջ կըտպուի նոյնպէս այս տարու Հիւսիսափայլի ընկերագիրների ցուցակը, որ բայայայա կ'ուսուցա-

նէ Ձեզ արդեօք կարող էր մի օրագիր հրատարակող հեղինակ այդպիսի դառն հանդամանքի մէջ գործ կատարել։ Ես աւելի բան չունիմ գրելու Ձեզ և ոչ իսկ ասելու։ Ինչ որ ես մինչև այսօրս կարող էի, ամենայն տեսակ անձնազոհութեամբ և ամենայն տեսակ զրկանք և տառապանք յանձն առնելով, տրեցի. այսուհետև ժամանակ է և ինձ հանգստանալու. զլխով պատ փշրել կարելի չէ։ Ամենևին պիտի փոխուէին մեր ազգի հանդամանքը, որ ես այսուհետև ճանապարհ ստանայի կրկին անգամ ձեռնարկելու մի ազգասիրական գործի. ապա թէ ոչ կմնայ գործը այնպէս, ինչպէս հրատարակուեցաւ «Ծանուցմամբը»։

Կրկին խնդրում եմ, որ փութացնէք Ձեր տպելիքը Հիւսիսափայլի մէջ, որովհետև դա շուտով ամենևին կը վերջանայ։

Ձեզ յարգող

Ս. Նազարեանց.

Ի՛նչ ասեմ Ձեզ «այն միւս հերոսի մասին», երբ որ մեր հերոսները իւրեանց ազգի ցաւը մոռացած, օտար գործերի մէջ ներս են մտնում մի յիմար անձնապաստանութեամբ և անձնասէր ամբարտաւանութեամբ. ի՛նչ պիտի լինի դորա վերջը. ի հարկէ ոչինչ բարի։ Այդպիսի հերոսները ինքեանք կարող չեն օգնել իւրեանց, ուր մնայ իւրեանց ազգին։ Դոքա իւրեանց յանդգնութեամբ և անմտութեամբ ծիծաղելի են կացուցանում իւրեանց անձը իւրեանց թշնամիների աչքում — որովհետև իւրեանց յատուկ ձեռքով փոս ու փիրսպ են փորում իւրեանց համար — և արամութեամբ ու ցաւով մեռցնում են իւրեանց սիրելիների սիրտը։ Միտ դնելով նոր լուրերին, որ հասել են ինձ Պետերբուրգից, այդ թշուառ հերոսը գտանվում է դեռ ևս կապանքի մէջ. միայն

թոյլ տուած է նորան հաղորդակցութիւն ունենալ իւր եղբօր հետ, որ Պետերբուրգումն է, ոմանք ասում են դրաւոր միայն, իսկ ոմանք դրաւոր և անձնական միանգամայն։ Ասում են ևս, թէ նա ժամանակով դատեալու էր ազատութիւն։ Հայերը փոխանակ յառաջ գնալու, յետ են գնում, կամ թէ ասիաբար, կամ անմտաբար, մի քայլափոխ յառաջ շարժուած, իսկոյն կամէին դէպի երկինք թռչել և աստղներ յափշտակել բայց գահավէժ դէպի գետին են կործանվում — ուրեմն դէպի յետ են խաղում։ Զեմ կարող զովել այդպիսի տարապայման ընթացք. համարձակախօս և համարձակագործ լինել և մարտիրոս դառնալ իւր ազգի համար, զեղեցիկ գործ է. բայց 70 միլիոնի առաջքը կտրել—էշի նահատակ դառնալ—օչ, այդ անհաճոյ է ինձ։ Ոչ մեր ազգը և ոչ 70 միլիոնը շնորհակալ չէ հերոսին, նորա անմիտ և յանդուգն հերոսութիւն համար։ Դուք գործիցս պիտի իմաստասիրէք, որ գործը ոչինչ հայեացք չունի դէպի մեր ազգը և նորա օգուտը, այլ մի օդից առած ցնորք է, խռովութիւն և ապստամբութիւն ձգելու տխմար ամբոխի մէջ։

ՆԱՄԱԿ Թ.

20-ին դեկտեմբերի 1862. Մոսկուա.

Իմ ազնիւ, խոհական հայրենասէր բարեկամ,

Յովհաննէս Սայանովեանց.

Ցաւով և տրտմութեամբ պիտի յայտնեմ Ձեզ, որ Ձեր ինձ ուղարկած ծրարը, նամակը և մի քանի խորհրդածութիւնքը Ձերքէլեանցի «Անդրադարձի» վերայ, պիտի անտիպ մնայ, գոնեայ Ռուսաստանում։ Ձեր աշխատու-

թիւնը ստանալուց յետոյ, ես իսկոյն հոգացի նորանից մի այլ օրինակ իմ համար, որ դորա վերայ սկսանուի գրաշարութիւնը տպարանի մէջ և Ձեր բնագիրը կարդի դրած իսկոյն ուղարկեցի ցենզուրային, յաւելացնելով առաձին իմ ծանօթութիւնքս մինչև բաւական մեծ քանակութեամբք։ Օրէ օր սպասելով, որ ցենզուրայից հասանէր հրաման տպագրութեան, և ահա ստանում եմ Պետերբուրգից մի տոմսակ, որի մէջ ծանուցանում է ինձ Ցենսուրեան կոմիտէտը, թէ այդ գրուածը տպելու կարող չէ տալ հրաման, այլ և ձեռագիրն իսկ յետ է պահում։ Բոլոր պատրաստութիւնքը, որ արուած էին տպարանում, բոլոր աշխատութիւնը և ժամանակը և արծաթը (մի թերթի շարուածքի համար) ջուր դարձան։ Ժամանակը տարաժամելով և ես իսկ անյոյս լինելով առանձին ջանադրութեամբ դործ յառաջ տանել Մինիստերստվայի մէջ (ով է Հայոց ցաւերին ուշադրութիւն ցուցանողը, եթէ ինքեանք Հայերը անհոգ են այդ մասին, իսկ նոցա գլուխը և թշնամի ամենայն լուսաւորութեան և արժանաւոր ընկեր մի տգէտ և չարեացակամ Զելքէղեանցի), հրամայեցի տպարանում ոչնչացնել շարուածքը և վերջաւորել ամսական տեսարակը։ Ահա մեր դրութիւնը, ազնիւ խոհական բարեկամ։ Արդարև Ձեր աշխատութիւնը կորած չէ, որովհետև նորա դուրս գրած օրինակը մնում է մնաս, որ և ժամանակով կուղարկեմ Ձեզ իմ ծանօթաբանութեամբք, խնդրելով Ձեզանից անյապաղ ուղարկել նորան Կոստանդնուպոլիս, Մեղուի հրատարակող Սուաձեանին, կամ եթէ կամիք յանձնարարութիւն տալ ինձ այդ մասին, ես ինքս կուղարկեմ Մոսկվայից Ձեր ծախքով։ Ինչպէս յայտնի երեւում է, կաթողիկոսը պիտոյ է առանձին կերպով խընդրագործ եղած լինի Ցենսուրեան կոմիտետում, թայլ չտալ որ և իցէ կրօնական հայեացքով բան տպել Հիւսիսա-

փայլի մէջ, խառնելով դորան, ինչպէս սովոր են մեր Հայերը, գաւառաբանութեան հետ, որովհետև այդպէս միայն կարող են իւրեանց խաւար չարհացակամութիւնը լցուցանել։ Զէ՛, իմ կարծիքն այն է, որ Ձեր գրուածը անպատճառ տպուի Մեղուի մէջ Կոստանդնուպօլսում, իմ ծանօթաբանութեամբք հանդերձ, եթէ հաճոյ էր հրատարակողին սեփականել նորանց և քերել իմ անունը, ինչպէս պիտոյ էր խնդրել նորանից։ Հայաստանի Կռունկը (տխմար Աղաբէգեանի) և Մեղուն (թոյլ Սիմոնեանի հոգաբարձութեան տակ դրած) երբէք համարձակութիւն չեն ունենալու այդպիսի բան տպել. նոքա շատ շատ ընդունելու չէին մի նախատական գրուած իմ վերայ, բայց մի այնպիսի գրուած, որպիսի Ձերն է, ի պաշտպանութիւն աւետարանի սուրբ ճշմարտութեան, ի պաշտպանութիւն Նազարեանցի, անարատ, աւետարանակրօն կողմանէ և աղգի ճշմարիտ օգտի համար գրուածներին, այլ և ի խոստովանութիւն նորա անօրինակ անձնազոհ աշխատութիւններին, այդ յոյսը մի՛ ունեցէք մեր թոյլ, անբարոյական ասիայի Հայերից, մանաւանդ որ Տէր Բաբան, պաշտպանը Ձերքէղեանցի կանգնած է նոցա դէմ։ Ի՛նչ ճշմարտութիւն, ի՛նչ աւետարան, ի՛նչ Նազարեանց. Տէր Բաբան այսպէս կամի. ուրեմն և այսպէս ևս պիտի լինի։ Դուք կարող էք հասկանալ, թէ ի՛նչ գրութեան մէջ է իմ սիրտը, նայելով մեր Հայերի այս որպիսութեանը, ես անյոյս եմ այսուհետև և անմխիթար, քանի որ պիտի տեսանէի և լսէի այս խայտառակութիւնքը, այս բարբարոսութիւնը մեր աղգի այս բարոյական մեռելութիւնը մեր մէջ։ Ի հարկէ այսուհետև գործ ևս կատարել կարող չեմ, ինչպէս ծանուցումն արեցի Հիւսիսափայլի մէջ, այն պայմանների տակ, որպիսի մեր աղգի պայմանքն են։ Մինչև այժմ ոչինչ կողմից քաջալերական ձայն չկայ, և ինչպէս տեսանում եմ, մեր Հայերը, շատ լաւերը ևս զոցա-

նից կարող չեն հասկանալ իմ դրութիւնը, այլ մտածում են, ի՞նչ է, թո՞ղ աշխատի Նազարեանցը, թէ օգուտ ունէր և թէ վնաս, ի՞նչ պահանջողութիւնք է դործում. մի խօսքով մեր ազգի մէջ մտաւորական աշխատութիւնը ոչինչ գին չունի և մտաւորապէս աշխատող մարդը, գիտնականը ոչինչ է։ Բայց դու տե՛ս, որ և գիտնականը մարդ է, ունի ամենևին նոյն կարիքը, ինչպէս ամեն մինը ձեզանից, ունի ընտանիք, զաւակ, և ինքն ևս չէ միայն հոգեղէն, այլ և մարմնեղէն, և այլն և այլն։ Ի՛նչ ասեմ, ազնիւ բարեկամ, այն բանը, որ Հայերը ինքեանք պիտի հասկանան իւրեանց ամենօրեայ փորձով, իմ բացատրութեամբս անհասկանալի է նոցա. այդ՝ կամի ասել, որ Հայերին, բացի մի անասնական կեանքից, ոչինչ աւելի բան հարկաւոր չէ, և այդտեղ, ի հարկէ, ես և իմ նման մարդիկը աւելորդ էին։

Շնորհաւորելով Ձեր նոր տարին, ամեն բարեմաղթութեամբ Ձեզ և Ձեր ընտանիքին,

Մնամ Ձեզ միշտ յարգող

Ս. Նազարեանց.

ՆԱՄԱԿ Փ.

29-ին Յունվարի 1863 ամի. Մոսկվա.

Ազնիւ և խոհական հայ

Յովհաննէս Սայաթնովէանց,

Ձեր յարգելի նամակը ամսուս 12 թուականից անկոծուստ հասաւ ինձ, վկայելով Ձեր սրտի ցաւակցութիւնը մեր ազգային անբաղդութեան, որոյ բարոյական և

մասաւորական անկարողութեան պատճառով անկարելի է մեր մէջ որ և իցէ ազգօգուտ ձեռնարկութեան յաջողութիւն։ Եա, իբրև հայ, լցուցի իմ պարտականութիւնքս այնպէս, ինչպէս ոչ ոք Հայոց զիտնականների մէջ լցուցած չէ, և ի հարկէ իմ վաստակքս հասկանալի են նոցա, որ իւրեանց մէջ զիտակից են որ և իցէ պարտականութիւնների բարոյական մասին, և ոչ թէ այժմեան Հայոց աստուածուրաց, որովհետև ճշմարտուրաց, ապականեալ և վատթար սերունդին։ Զէ՞ կարելի մեզ ապրել ազգի համար, ինչպէս առ ի սրտէ յանկացել ենք և բազում ու բազում օրինակներով ապացուցել ենք մեր կարողութիւնը, ի հարկէ, աչք ու խելք ունեցողի համար, այսուհետև կապրենք մեր համար, մեր անձնականի, մեր զաւակների, մեր զերդասանի համար։ Շատ ուրախ կըլինինք տեսանելով, որ անկարելին մեզ, կարելի էր միւսներին, գուցէ քան զմեզ զօրաւորներին և կարողներին. թող մեք ազգային մատենագրութեան փուշերը և տատասկները հնձած լինէինք, իսկ միւսները հնձեն վարդերը և ծաղիկները դորա. թող ազգի սաելութիւնը, թշնամութիւնը, հալածանքը, սառնասրտութիւնը դէպի մեզ և մեր աշխատութիւնքը փոխուին դէպի սէր, բարեացակամութիւն, քաջալերութիւն և ջերմասրտութիւն վերաբերութեամբ դէպի միւս օրաղիր հեղինակողքը։ Շատ ուրախ կըլինինք դորա վերայ. թող վերանայ միջից Նաղարեանցը, որ մինչև այսօրս քար զայթակղութեան է եղել Հայերի մէջ, թող այլք քարոզեն այսուհետև ազգին մի ճշմարտութիւն, մի ազգային օգուտ և շահ, որ Հիւսիսափայլը մինչև օրս քարոզել չէ. գուցէ այդպէս հաշտուին Հայերի միտքը և սրտերը մեր հետ, վրէժխնդիր լինելով մեր նոցա հասուցած անիրաւութեանը և վնասին։ Կամ թէ մի և նոյն ճշմարտութիւնը քարոզելով այլ մարդերի բերանով, գուցէ գտանելու էր աւելի լսող և ընդունական

սրտեր, քան թէ Նազարեանցի ատելի և գայրացուցիչ գլուխ։ Այսպէս եմ մտածում ես, առանց խռովուելու։ Իմ օրավաստակս Հայոց բաղմութեան կամքի տակ, աւարտուած է. և եթէ մի օր դարձեալ պիտի սկսանէր դա, դորա համար հարկաւոր էին հանգամանք, որ այս բոպէիս կարող չեմ նկատել Հայոց կեանքի ամենեւին մթնած և խաւար հորիզոնի վերայ։

Գանք այժմ Ձեր «խորհրդածութիւնք» յօդուածի վերայ, որ այնքան անախորժութիւնք պատրաստեց թէ Ձեզ և թէ ինձ, որ այդ գործի մէջ, շատ լաւ յայտնի է Ձեզ, վարուել եմ ես ոչ թէ անձնասիրաբար, որպէս թէ իմ յատուկ ճշմարտութիւնը պաշտպանելու հայկական բարբարոսների երեսից—ըստ որում դոցա համար չկայ ճշմարտութիւն, որ միայն պատկանում է Աստուծուն և մարդկութեանը, այլ միմիայն տեղիք տալով Ձեր ցանկութեանը, Ձեր արդար և օրինաւոր ցանկութեանը խոստովանել Ձեր ազգի առաջև Ձեր սրտի վկայութիւնը վասն ճշմարտութեան։ Բոլոր պայմանքը գործի կշռելով միմեանց հետ, կարող եմ Ձեզ ասել, որ աւելի լաւ կըլինէր այդ յօդուածը ուղարկել պարոն Սիմոնեանցին, Թիֆլիզ, որ տպէ Մեղուի մէջ, այդ աւելի յարմար է, աւելի կըլցուցանէ Ձեր յօդուածի խորհուրդը, քան թէ Կ. Պոլսի Մեղուն Սուաճեանի. պատճառ, ի՞նչ օգուտ Ձեզ և մեր ազգին Ռուսաստանի մէջ, եթէ դա տպուելով սորա մէջ, ամենեւին անյայտ մնար մեր մտաւոր ժողովրդին, ըստ որում Սուաճեանի Մեղուի թերթերը շատ դժուար հասանում են մեզ Ռուսաստան, և եթէ մի քանի օրինակք ես ընկնում էին այս և այն մասնաւորների ձեռք, այդ լինում էր իբրև կոնտրաբանդ։ Փառք և պարծանք Այվազեան վարդապետի ջանադրութեանը։ Ես կարծում եմ այժմ այսպէս՝ որովհետև համբարձում Էնֆիաճեանը խնդրել է Ձեզանից Ձեր գործակատարութիւնը Մեղուի

համար հաշտարարանի մէջ, ուրեմն Դուք յանձնառու լինելով այդ աշխատութիւնը, ունիք և պատուական պատեհութիւն հարկ դնելու նորա վերայ, որ նա ևս իւր կողմից շնորհացոյց լինի դէպի Ձեզ, երկուստեք լցուցանելով բարեկամութեան իրաւունքը։ Եթէ Դուք պիտի հաճոյանաք նորան յանուն ազգի, ապա ունիք նոյնպէս իրաւունք պահանջելու նորանից, որ նա ևս հաճոյանայ Ձեզ յանուն ազգի, չթագուցանելով սորանից ճշմարտութիւնը, ոչ թէ ի պաշտպանութիւն հիւսիսափայլի, այլ ի փառս ազգի, որ չկամէր անարգել և ոտնակոխ առնել ճշմարտութիւնը խողաբարոյութեամբ, ինչպէս արել է Զեքքէլեանցը։ Իմ խնդիրս Սիմոնեանցից, որ շատ լաւ ծանօթ է ինձ, այո և իմ նամակագիր բարեկամ, վաղուց, անտեղի և անպատշաճ եմ համարում ես, որովհետև կը ցանկանայի ես ամենայն անձնական բարեխօսութիւն հեռի պահել մի յօդուածի տպագրութիւնից, որ ինչ և իցէ վերաբերութիւն ունէր դէպի ինձ. դորանով ես պիտի թեթևացնէի Ձեր յօդուածի սկզբնաբուղխ արժանաւորութիւնը, կամ թէ Սիմոնեանցին առիթ տայի մտածելու, թէ հաճելի էր ինձ տեսանելու իմ անձը փառաւորուած նորա շնորհով. բայց ես մտածում եմ այլապէս, այսինքն եթէ բոլոր ազգերը ևս մի տեղ ժողոված ուրանային ճշմարտութիւնը, և սա բոլոր աշխարհիս վերայ չունենար իւր համար մի աշակերտ, այնու ամենայնիւ ճշմարտութիւնը կայ և կըմնայ անխախտ։ Եւ հայոց ազգը անարգել է միայն իւր անձը և ոչ թէ ինձ, եթէ նա մինչև օրս ուրացել է և ուրանում է իմ բերանով քարոզած ճշմարտութիւնը։ Իմ միակ շնորհս Ձեզ կարող է լինել այսքան, որ Դուք այժմ յետ էք ստանում Ձեր յօդուածը աւելի կատարեալ կերպարանքով և բովանդակութեամբ ըստ էութեանը և ոչ ըստ ձևոյն, որ ես թողել եմ այնպէս, ինչպէս կար։ Տեղ տեղ

յաւելացել են մի քանի գաղափարներ, որ իբրև անհրաժեշտ հեռաւորութիւնք բղխում էին Ձեր մտքերի ուղղութիւնից, բայց չէին դուրս բերած։ Իմ ծանօթութիւնքը կարող էք դործ դնել, ինչպէս կամիք, և կըցանկանայի որ օդուտ քաղէք դոյանից, որքան կարելի էր, այսինքն դոյա նիւթը մշակելով և խառնելով Ձեր յօդուածի հետ, որ դառնար մի ամբողջ բան, անհետացնելով ամենայն օտարութիւն։ Դուք համեմատելով իմ ձեռագիրը Ձերի հետ, կըգտանէք մի քանի բան դուրս ձդած, այլ բաներ այլապէս կարդած, և բոլորը Ձեր յօդուածի կատարելութեան դիտաւորութեամբ (այսինքն Ձեր կոդքերը պնդելու համար, որ թշնամին բայ տեղ չդտանէ, զարկելու համար), որովհետև ես իմ Հիւսիսափայլի մէջ միշտ պաշտպանել եմ մի այդպիսի կանոն դէպի իմ բարեկամքը։ Իմ ծանօթութիւնքը դրած են ամենևին ազատ հոդով, հայեացքով, գուցէ սարսափելի բաներ մեր Հայերի համար, բայց այդպէս է դիտութեան պահանջողութիւնը առանց միտ դնելու Հայերի ազիտութեանը և տկարամտութեանը։ Արդեօք Սիմոնեանցի Մեղուն ունէր այն կարողութիւնը Ձեր յօդուածին տեղ տալ իւր թերթերի մէջ, այդ ես վճռել չեմ վստահանում, քաջ ծանաչելով ասիացոց վատթար սարկական հոգին և վախկոտութիւնը, մանաւանդ որ Թիֆլիզի մէջ դործ կատարողը շատ մօտ է Ցէր Բաբայի ազդեցութեանը. բայց Հիւսիսափայլը դործ է կատարել մինչև օրս, կարելի է ասել, անօրինակ յաջող և ազատ պայմանների մէջ, որ կարծեմ վերստին յետ դալու չեն երբէք Հայկական մատենագրութեան մէջ։ Բայց որպէս և իցէ, աշխատեցէ՛ք Դուք իբրև դործակատար Մեղուի Հաշտարխանի մէջ, Ձեր իրաւունքը յարդի կացուցանել Էնֆիաձեանցի վերայ։ Ես կարծեմ, եթէ ցենզուրան թոյլ տար, կըտպէր և հրատարակողը։

Ահա Ձեր նամակը առ իս և Ձեր յօդուածի պատ-

ձէնը, որ կարող եմ Ձեզ միայն ուղարկել իմ յատուկ ձեռքով օրինակած, թէպէտ դոցա տպագրական թերթերը ևս տպած մնում են մնաս, իբրև ոչնչացուցած տպագրութիւն։

Ձեզ յարգող

Ս. Նազարեանց.

I.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՐՕՏԸ.

Օտա՞ր երկինք, օտա՞ր արև,
Որ շողում է՛ք գըլխիս վերև,
Ինչքա՞ն շողաք... դուք ինձ համար
Մի՛ շա կըմնաք դիշեր խաւար...

Սըրտատրոչոր ձեղ նայելով,
Անուէր, պանդուխտ կեանքս լալով,
Օր չի անցնում — Հայրենիքիս
Վառ կարօտը չ՚այրի հոգիս։

Մատա՞ղ լինեմ նորա պայծառ
Էն երկնքին, ուր սիրավառ
Ոսկի՛ արևն ինձ վերևից
Փայփայել է մանուկ օրից։

Հայրենիքիս խաղաղ ծոցում,
Ինչպէս փափուկ օրօրոցում,
Ես մեծացել, կեանք եմ առել.
Նորա շնորհով մարդ եմ դառել։

Ո՞նց մոռանամ ես էն օրհնած
Սարն ու դաշտը՝ ծաղկով լցուած.
Էն կենսատու ջուրն ու հողը,
Գարնան էն սառն հովն ու յողը։

Ո՞նց մոռանամ ես էն վարթամ
Դաշտն ու արտը, ուր շատ անգամ
Թիթեռի պէս թըռթըռացել,
Ալրալ-աշխարհն եմ մոռացել...

Ուր լսել եմ սըրախս ազիզ
Գեղջուկ, մշակ եղբայներիս.
Դառըն լացը, կուշտ ծիծաղը...
Ուրախ-տխուր երգ ու տաղը...

Օտար երկինք, օտար արև,
Որ շողում էք դըլխիս վերև,
Էնչքան շողաք... դուք ինձ համար
Մի՞շտ կըմնաք գիշեր խաւար...

11 *օգոստոսի*, 1893 *Թ.*

Մոսկուա.

II.

ԳԻՐ.

«Ղալամ սիրէ, դաւթար սիրէ, գիր սիրէ».

ՍԱՑԱԹ-Ն ՕՎԱ.

Կարդա՛, ա՜յ իմ խելօք մանուկ,
Կարդա՛, դրբի՛ր տարին բոլո՛ր.
Գիրը կարդողն խելքը կըտրուկ,
Միտքն է—պայծառ ու լուսաւոր։

Գիր կարդալով — դու զրքերում
Շա՜տ նորանոր բան կիմանաս.
Շա՜տ շատերից՝ շա՜տ բաներում
Մըտքով հեռո՜ւ կըսլանաս։

Գիր կարդալով — դու աշխարհիս
Կըճանաչես չարն ու բարին,
Ո՞վ է խնդում, ո՞վ է լալիս...
Ո՞վ է զրկում խեղճ թշուառին...

Գիր սիրելով — դու քո սրտում
Առաջ, անբաւ զանձ կը դիզես.
Այնպիսի՞ զանձ, որ աշխարհում
Ամէն հարուստ գլուխ կտայ քեզ։

Կեանքում ծածուկ էլ քեզ համար
Բան չե՛ մընալ, որ չիմանաս.
Քո մէջ կապրի արար-աշխարհ,
Հոգով այնքա՜ն կը զօրանաս։

Դու կիմանաս, թէ ինչո՞ւ մենք,
Գիշեր-ցերեկ կեանքի ծովում
Լողորդի պէս հա՜ լողում ենք...
Ո՞ւրտեղ է ափն... ո՞ւր ենք լողում...

Դու կիմանաս—ինչո՞ւ մարդիկ
Պէտք է ապրեն իրար համար.
Ի՞նչ է մարդկանց ցաւն ու կարիք...
Ի՞նչ է լոյսը, ի՞նչ է խաւար...

Կարդա՛, որդիս, որ մօրը դիպ
Դու էլ անհուս, խե՜ղճ չընաս,
Որ ամենքին վիզ չընծդես...
Եւ միշտ ազա՜տ առաջ գընաս...

Քո խեղճ հէրն էլ գիր չը գիտէր,
Հոգազարծ էր—կարօտ ուսման.
Գիւղի անգութ վաշխառուներ
Քաղցած, ծարաւ թողին նորան...

Հազա՜ր ու մի թուղթ գրելով,
Քո հօր տեղակ ստորագրեցին.

Յետոյ մէկ էլ օր-ցերեկով
Մեր տունն ու տեղն աւերեցին...

Շատ ման եկաւ հերդ դէս-դէն,
Դատարանի շէմքը մաշեց...
Բայց անգրագէտ, անուս, անզէն—
Վերջին շունչը հողում քաշեց...

Կարդա՛, ա՛յ իմ խելօք մանուկ,
Կարդա՛, գրքի՛ր տարին բոլոր.
Գիր կարդողի խելքը կըարուկ,
Միտքն է—պայծառ ու լուսաւոր։

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ.

21 սեպտեմբ. 1893 թ.
Մոսկուա.

ԼՈՒԿԻ-ԼԱՐԱՍ.

(Դիմիտրիյ Բիկելասից).

I.

1821 թ. սկզբում ես բնակվում էի Զմիւռնիայում։ Այն ժամանակ մօտաւորապէս քսան տարեկան էի։ Ես ծնուել և սկզբնական ուսումն ստացել եմ Քիոսում՝ մեր քահանայ հայր Ֆլուտիսի մօտ (Աստուած հոգին սղորմի)։ Այդ տարին ուսմանս աւարտման եօթներորդ տարեշրջանը լրացաւ։ Վարժապետս տեսաւ, որ ես այնքան պատրաստականութիւն ունիմ, որ կարող եմ առևտրով պարապել, հայրս էլ համաձայնեց նորա հետ. առանց ուշացնելու հետը տարաւ ինձ Զմիւռնիա, որ զորձադրեմ ձեռք բերած գիտութիւններս, և սկզբում իւր առևտրական տան մէջ ինձ զորձակատար նշանակեց և ապա՝ ընկերը շինեց։

Երկինքը օրհնել էր մեր առևտուրը։ Տարէ յտարի աճում էր մեր վաստակը, օրէ յօր աւելի և աւելի էին մեզ հաւատ ընծայում Զմիւռնիայի առևտրական հրապարակում, ուր հայրս առաջին իսկ քայլերից ձեռք էր բերել ընդհանուրի խորին յարգանքը։ Դորա պատճառը նորա անկաշառ ազնուութիւնն և զորձերի ամենախիստ

կարգապահութիւնն էր։ Առանց հպարտանալու, միայն որդիական երախտագէտ զգացմունքից կ'ասեմ, որ ես միայն նորան և այն հաստատուն, ազնիւ կանոններին, որոնց նա ինձ ընտելացնում էր երեխայութիւնից, պարտական եմ վաճառականութեան մէջ ունեցած իմ բոլոր յաջողութիւնս։

Արդիւնքի հետ միասին լայնանում էր և մեր առևտրական յարաբերութիւնների շրջանը։ Նախկին շրջանը արդէն նեղ էր, բայց մեր համաքաղաքացիներից երկուսը թէ երեքը, յոյն վաճառականութեան այդ նոր կոլումբոսները, արդէն հաստատուել էին Լոնդոնում։ Նոցա յաջողութիւնը մեզ բոլորովին քնել չէր տալիս և հարց էր բարձրացել, որ նոյն թուականի աշնանը ինձ Անգլիա ուղարկեն։ Ես պիտի դնայի քեռիներիս մէկի հետ և այդ հանգամանքը աչքի առաջ ունենալով՝ ես սկսեցի անգլիական լեզուի դասեր առնել Ծերունի պաստորից, որ մի քիչ յիշեցնում էր հայր Ֆլուտիսին։ Չէ կարելի ասել, որ ես մեծ յառաջադիմութիւն էի արել, բայց, կարծեմ, և վարժապետը և աշակերտը հաւասարապէս մեղաւոր էին։

Հայրս, ես, մեր բոլոր ազգականներն ու ծանօթները բացառապէս առևտրով էին պարապում։ Հեռերիաների, յունական ապստամբութիւնների մասին, որ պատրաստ էին այն ժամանակ բորբոքուելու, մենք բոլորովին բան չգիտէինք։ Զիմանալով հանդերձ՝ այնու ամենայնիւ մենք ազատութեան կարօտ էինք։ Այդպէս էր այն ժամանակ Յունաստանի վիճակը։ Զմիւռնիայում այն ժամանակ մենք պատահում էինք եւրոպացիների, և նոքա իրենց տեսքով մեզ յիշել էին տալիս ազատութիւն, մենք էլ էինք կամենում նոցա պէս մեր գլուխը բարձր բռնել։ Ազատ քրիստոնեայ ազգերի երջանկութեան մասին մենք առանց նախանձի և սրտի դառնութեան չէինք մտածում։ Կրցկրտուր տեղեկութիւն մենք ունէինք ֆրանսիական յեղա-

փոխութեան մասին և յոյս ունէինք, որ մենք էլ երբ և իցէ ազգութիւն կըկազմենք, բառիս բուն նշանակութեամբ, վստահ լինելով որ հիւսիսից օգնութիւն կըստանանք։ Տօն օրերին համախմբուելով մենք ամենքս երգում էինք Ռիդասի օրհներգը (հիմնը), սակայն մեղանից ոչ ոք էլ չէր մտածում, որ մօտ ապագայում ապստամբութիւն տեղի պիտի ունենայ։

Հօրս հետ խաղաղ ապրում էինք քարվանսարայում։ Ցերեկը անց էինք կացնում ապրանքների և պարապմունքների մէջ, իսկ գիշերը քնում էինք մի փոքրիկ սենեակում՝ գրասենեակի վերև. ամեն կիրակի մենք կանոնաւոր կերպով գնում էինք ս. Ֆօտինիայի եկեղեցին և ժամանակ առ ժամանակ այցելում էինք Զմիւռնիայում ապրող Քիոսցի ընտանիքներին։

Շատ սակաւ, տարին մի կամ երկու անգամ, սովորաբար Զատկից առաջ, մենք քաղաքից դուրս էինք դալիս և գնում հարևան գիւղերը։ Այնտեղ օդը մաքուր էր, արտերը ու ծառերը մեզ յիշեցնում էին Քիոսը, մեր ամառանոցը, մեր պարտէզը, և մենք լուռ տխրութեամբ մտաբերում էինք մեր հեռու գտնուող ընտանիքը։

Այսպէս անցնում էին օրերը։ Ես միայն մտածում էի Անգլիա դնալուս մասին, միայն նորա մասին էի երազում և այդ երազներս պարզ ու պայծառ էին։ Սակայն յանկարծ այդ բոլոր երազներս, ծրագիրներս, մինչև անգամ մեր գործն ու հանգստութիւնը—բոլորը մի անգամից ջարդ ու փշուր եղաւ. . .

Մի անգամ գիշերը ես զարթեցայ յանկարծակի և սաստիկ վախեցած։ Քնած ժամանակը ես լսեցի, ինչպէս իրարու ետևից մի քանի անգամ հրացան արձակեցին։ Նըստայ անկողնումս, ականջ դնելով և աչքերս յառելով մթութեան մէջ։ Հայրս խոր քնած էր։ Ես կարծեցի ըսկըզբում, թէ դա միայն երազ է, բայց նոր հարուածները

և մի ինչ որ վայրենի աղաղակներ հակառակը ապացուցեցին։ Զարթեցրի հօրս, և սկսեցինք ականջ դնել։

Ամբողջ գիշերը տեղի ունեցան պարբերաբար աղմուկ և իրարանցում։ Մենք չէինք կարողանում հասկանալ թէ ինչ է լինում։—Ի՞նչպէս իմանանք։ Մենք շատ էինք կամենում դուրս գալ, բայց երկիւղը խեղդում էր մեր հետաքրքրութիւնը, և մենք մնացինք։

Լուսաբացին մենք դուրս եկանք բակը։ Այնտեղ հաւաքուել էին արդէն քարվանսարայի բնակիչներից շատերը։ Անհանդիստ կերպով նոքա միմեանց հարց ու փորձ էին անում, թէ ինչ է եղել. բայց ամենքն էլ մեզ պէս ոչինչ չէին իմանում։

Քարվանսարաները սովորաբար ամրոցի պէս են շինվում։ Նոքա շրջապատուած են լինում բարձր և ամուր պարսպով, ներսը քառակուսի կամ քառանկիւնի բակ է լինում, ուր և նայում են սենեակների և կրպակների պատուհանները։ Այդ բակը միայն մի մուտք ունի—պինդ երկաթէ դռներով, որ և գիշերը փակվում է։

Առաւօտեան, երբ պահապանները բաց արին այդ դուռը, մենք իմացանք, որ նախընթաց երեկոյեան թրքերը հրաման են ստացել վինուելու,—այդ էր նոցա հրացան արձակելու և վայրենի աղաղակներ բարձրացնելու իսկական պատճառը։

Բայց ի՞նչ նշանակութիւն ունի այդ հրամանը։ Ի՞նչ վտանգ էր սպառնում, որ այդպիսի կարգադրութիւն էին արել։ Դորա մասին մենք ամենքին և իւրաքանչիւրին հարցրինք, բայց ոչ ոք մեզ մի գրական և վճռական պատասխան չտուեց։ Ոմանք ասում էին, թէ եանիչարները ապստամբել են, միւսները—թէ պատերազմ է Ռուսաստանի հետ, իսկ այլք մի ինչ որ բան էին մրթմրթում քրիստոնեաների ապստամբութեան մասին։

Այդպէս անցաւ մի օր։ Այդ եղաւ շաբաթ օրը։ Քար-

վանսարայից մենք գուրս չէինք դալիս, բայց դռնից տեսնում էինք թրքերին, ինչպէս նոքա ղինուած ոտից մինչև ղլուխ մտն էին դալիս փողոցներում՝ դաժան և մռայլ ղէմքով։

Հետևեալ օրը ըստ սովորութեան մենք ժամ գնացինք։ Այդ օրը քարոզ չպիտի լինէր, և ամենքը զարմացած նայեցին, երբ քահանան ամբիոն էր բարձրանում։ Բայց մենք քարոզ չլսեցինք։ Քահանան կարդաց պատրիարքի թուղթը, որով նղովում էր և անէծքների և նըզովքների մէջ լսուեցաւ Սուլտանի և Իպսիլանտիի անունները, որպէս չարագործների ու դաւաճանների անուններ։ Մենք ապշած մնացինք, բայց և ամենքս էլ հասկացանք, որ բանը ապստամբների շարժման և դաղտնի դաւադրութիւնների մասին է Վալաքիայում։

Մենք նայում էինք միմեանց և անհանդիստ կերպով կամացուկ հարցեր էինք առաջարկում։—Այդ ի՞նչ ապստամբութիւն է, որ այդքան անիծում են, ի՞նչ ծագում ունի։ Այդ մենք չդիտէինք։ Մենք միայն դիտէինք, որ Իպսիլանտին Ռուսաստանում մեծ դիրք ունի, և կարծում էինք, թէ խօսքը այստեղ մի որ և է ապստամբութեան մասին է, որ յարուցել է այդ տէրութիւնը և թէ այս բոլորը դուշակում է ռուս-տաճկական պատերազմ։ Սակայն այս բոլորը մութ և խառն ենթադրութիւններ էին, այնքան խառնաշփոթ էին, որ այժմ անհնարին է նորան արտայայտել։

Զմիւռնիայի թրքերը, ինչպէս և մենք, նոյնպէս չդիտէին ամենևին, թէ ինչ է կատարվում։ Նոքա դեռ լաւ չէին ըմբռնել, որ ռայեան ինքն իրեն ոտքի է կանգնել և կարծում էին, թէ վտանգը Ռուսաստանի կողմից է դալիս։ Այսպէս թէ այնպէս նոցա ֆանատիկոսութիւնը առաջին վայրկեանից իսկ բորբոքուեցաւ։ Պատերազմ է—պատերազմ անհաւատների հետ,—հետևաբար ամեն մի

քրիստոնեայ—թշնամի է, իսկ բոլոր ռայեանները—զոհ և յարմար զոհ, որովհետև ձեռքի տակ են գտնվում։

Այսպէս առաջին օրից իսկ մեր հորիզոնում ամպեր հաւաքուեցան, և իւրաքանչիւրի սրտին տիրեց և անհանգստութիւն և երկիւղ։

Անհանգստութի՛ւն և երկի՛ւղ։ Որպիսի խայտառակ խօսքեր են և որքան յաձախ են ընկնում նոքա իմ դրչի տակ։ Բայց ի՞նչ արած։ Ինչու քաջ երևիլ, քանի որ քաջութիւն չկար և չէր էլ կարող լինել։

Մի՛ ժպտէք, ընթերցող, նենգօրէն մտածելով, թէ ես Քիոսցի եմ և իմ համեստութիւնը վերագրում եմ աղգութեանս։ Ես կ՝ուզենայի ձեզ տեսնել իմ տեղ այն ժամանակ, որքան էլ դուք ձեզ քաջ համարէք։ Անդէն, անպաշտպան, սարկութեամբ ճնշուած, իւրաքանչիւր Թուրքից կախումն ունենալով, զրկուած ոչ միայն ճշմարտութիւնը գտնելու կարողութիւնից, այլ և վրէժխնդիր լինելուց,—մենք, Զմիւռնիայի քարվանսարայի համեստ վաճառականներս, ինչպէ՞ս կարող էինք քաջ լինել։ Եւ ի՞նչ օգուտ կը լինէր մեր քաջութիւնից։ Մենք համբերութիւն ունէինք և հէնց դորանից էլ մեզ շատ էր պէտք, որպէս զի կարողանայինք տանել այն դանդաղ տանջանքը,՝ այն ճգնաժամը, որ մեր յետագայ կեանքն էր կազմում... Բայց և համբերութիւնն ունի սահման։ Երբեմն նա հասնում է, և դորա հետևանքը լինում է կամ կատարեալ վհատութիւն, կամ յուսահատութիւն, որից շատ հեռու չէ և մինչև հերոսութիւնը։ Ինչ ինձ է վերաբերում, Աստուած չթողեց, որ վհատիմ, իսկ բնութիւնն էլ ինձ չէ ստեղծել հերոսական յուսահատութեան համար։ Սակայն ես երբէք չէի կորցնում համբերութիւնս, ոչ էլ յոյսս և յաձախակի դորա համար զոհութիւն էի յայտնում Աստծուն։

Նկարագրածս կիւրակէից մի քանի օր յետոյ ես զբ-

նացի հրէաների թաղը, որ այնտեղ փող հաւաքեմ։ Ես արդէն մի դուռմար հաւաքել էի և քսակի մէջ դրել գըրպանս, երբ յանկարծ լսեցի աղմուկ, աղաղակ, քայլերի ձայն և տեսայ մի խումբ քրիստոնեաներ և հրէաներ, որոնք խելապատառ վազում էին։ Մինչև որ իմ հրէաս կարողացաւ կողպել դուռը, նորա մուրթ խանութը լցուեցաւ իւր հաւատակիցներով։

Հատուկտոր նախապասութիւններից, որ նոքա ասում էին միմեանց իրենց կէս-խսպանական բարբառով, ես ոչինչ չհասկացայ և բնաւ չհանդստացայ։ Նոքա իրենք էլ չէին իմանում, թէ ինչ է եղել և ինչից են ապատուել։

Երբ աղմուկը փոքր ինչ հանդարտեցաւ և խաղաղութիւնը վերականգնեցաւ, մենք զգուշութեամբ դուռը բաց արինք։ Ուրիշ խանութներն էլ կամաց-կամաց սկսում էին բացուել. այնտեղ թաղ կացողները դուրս էին գալիս և փոքր առ փոքր սիրտ առնում, մինչև որ վերջապէս իմացուեցաւ, թէ ինչ է այդ սարսափի իսկական պատճառը։

Բամբակով բեռնուած ուղտը սայթաքեց և վայր ընկաւ շուկայի նեղ փողոցներից մէկում։ Գլորուած կենդանու շուրջ խմբուած ամբոխը, ուղտապանի և հրէաների աղաղակը—այս բոլորը ընդունեցին որպէս սկիզբ մի ինչ որ անկարգութեան և ընդհանուր իրարանցում պատճառեց։

Երբ մարդու խելքում նստում է մի հոգեբանական արամադրութիւն, բաւական է մի փոքրիկ և աննշան բան, որ երկիւղ տարածուի։ Տարաբաղդաբար այդպիսի արամադրութեան զոյութեան համար կային իրական և կարևոր պատճառներ։ Թուրքերը օրէ օր զրգռվում էին. նոքա հաւաքվում էին իրենց թաղերում և սպառնում էին մերձաւորներին, որ յարձակումն կըգործեն։ Բայց ես դեռ ոչինչ չգիտէի դորա մասին և այդ օրը այլ ևս ոչինչ յուզումն չէի սպասում, սակայն իմ ենթադրութիւններս սխալ դուրս եկան. . .

Մնաս բարով ասելով հրէաներիս, ես լաւ կոձկեցի շորերս, որ փողերս լաւ պահեմ, և պատրաստվում էի տուն վերադառնալու. բայց հաղիւ դուրս եկայ շուկայի գլխաւոր կենտրոնական փողոցը, վեստին լսեցի ազմուկ և աղաղակներ:

Մինչև որ կարողացայ մի տեղ թաղ կենալ, ես ընկայ թուրքերի մի մեծ խմբի մէջ, որոնք վազում էին մերկ գէնքերը ձեռներին: Ես մինչև օրս չեմ հասկանում, թէ ինչպէս նոքա չարորեցին և մինչև անգամ չսպանեցին ինձ:

Ամբոխը յրելով ինձ տարաւ իւր հետ, երբեմն երբեմն կերակրելով իւր բռունցքներով, բայց ես վազում էի նոցա հետ, ինքս էլ չիմանալով, թէ ուր, և մինչև անգամ չէի մտածում դորա մասին: Կարծես, թէ դա երազ էր, բայց որպիսի՛ սարսափելի երազ: Ես լաւ էի ճանաչում Զմիւռնիայի փողոցները, բայց ես նոցա չէի տեսնում և այժմ իսկ չեմ կարողանում երևակայել, թէ ինչ տեղ էի վազում: Անորոշ կերպով միայն յիշում եմ, որ մի փողոց ծռելիս ես նկատեցի մեր քարվանսարայի դարպասը և ճանաչեցի: Նա կիսով չափ բաց էր: Թէ ինչպէս ես քարվանսարայ մտայ, ինչպէս ընկայ սենեակս և հօրս կողքին,—այդ բոլորը հաղիւ հազ եմ մտաբերում: Երբ զարթեցայ մահճակալիս վերայ բոլորովին յոգնած և ջարդուած էի: Հաղիւ հազ շունչ էի քաշում: Հայրս դէպի ինձ կռացած սառը ջրով թրջում էր գլուխս: Ես յիշում եմ, մի բան ճնշում էր կուրծքս և միայն այն ժամանակ մտաբերեցի, որ մօտս փող կայ և ծոցիս հանեցի քսակը:

Կարծես այժմ եմ տեսնում հօրս ժպիտը, երբ նա առաւ ինձանից փողը: Այն ժամանակ ես այդ ժպիտը բաւականութեան նշան համարեցի, որ փողերը տպահով են մնացել, և միայն յետոյ, երբ ինքս էլ երեխայք ունեցայ, հասկացայ նորա նշանակութիւնը:

—Ինչի՞ս է պէտք փողը,—ասում էր այդ ժպիտը։—Իմ բոլոր հոգուս այժմ դու ես, զաւակս... Հայրս ինձ սիրում էր և սիրում էր խանդակաթ սիրով, թէպէտ երբէք ինձ չէր ասում այդ և առ հասարակ հետս քընքշութեամբ չէր վարվում։ Միայն երբ նա մեռաւ, երբ այլ ևս նա ինձ հետ չէ և երբ ես ամենամանրամասն կերպով մտաբերում եմ մեր ընդհանուր կեցութիւնը, միայն այն ժամանակ ես յիշում եմ և գնահատում նորա ամբողջ դէպի ինձ ունեցած սէրը... Ի՞նչ է պատճառը։ Միթէ անհրաժե՞շտ է կորցնել, որպէս զի մարդ գդայ կորցրածի գինը։ Գուցէ կեանքը բացատրելու կամ մեկնելու համար անհրաժե՞շտ են տանջանքներ և փորձանքներ։

Ցեռոյ ես իմացայ, որ Թուրքերը մոլեգնաբար յարձակուելով դիմել են դէպի եւրոպացիների թաղը, չարամիտ դիտաւորութիւններ ունենալով նորա բնակիչների դէմ։ Բարեբաղդաբար փաշան նոյանից շուտ էր գտնուել այնտեղ և կարողացել էր հանգստացնել։ Այդ օրը աւել ոչինչ չպատահեց,—իսկական տերրորը դեռ չէր հասել։ Սակայն այդ յուզումը, զինուած Թուրքերի այդ առաջին մանիֆեստացիան, որ ուղղած էր քրիստոնեաների դէմ, վերջապէս առաջին իսկական վտանգը, որ սպառնում էր ինձ, ամենից կենդանի կերպով ապաւորուեցան յիշողութեանս մէջ այն բոլորից, ինչ որ ես տեսել և փորձել եմ այն ժամանակուանից։

Այդ դէպքից յետոյ Թուրքերը աւելի վճռողական դարձան։ Արիւն դեռ չէր Թափուած, բայց հայհոյանքներ, սպառնալիքներ, դաժան հայեացքներ, յամախակի զէնքեր մերկացնելը նախադուշակում էին մեզ, որ ահռելի փոթիկ պիտի գայ մեր գլխին։

Դրութիւնը աւելի և աւելի վտանգաւոր էր դառնում։ Ապստամբութիւնը ծաւալ էր ստանում։ Ցոյների կողմից հանած իւրաքանչիւր ազատութեան ձայնին պա-

տասխան էր լինում մահմեդականների կողմից ֆանատիկոսութեան նոր պայթումն, մինչև որ վերջապէս թուրքերը՝ ոչնչից արդէն չքաշուելով, անմիտ կերպով անձնատուր էին լինում յափշտակութեան և սպանութեան։ Կրակը լափում էր... Մեղ հասնող լուրերը այնքան էլ ճշգրիտ և հաստատ չէին, բայց և այնպէս ժողովրդական ապստամբութեան առաջին բորբոքման արձագանքը մեր քարվանսարային էլ հասնում էր։ Այսպէս մենք տեղեկացանք Վալաքիայում տեղի ունեցած անցքերի մասին, Մօրէիայում եղած ապստամբութեան մասին, իմացանք նոյնպէս, որ Պատրոսի եպիսկոպոսը և շատ տեղ հոգևորականութիւնը ապստամբած ժողովրդի գլուխն են անցել։ Վերջապէս ազմկալից կերպով տարածուեց Հիդրա և Սպեցիա կղզիներում եղած ապստամբութեան լուրը։

Երբ ես մտքով պատկերում եմ դէպի այն ժամանակները, նորից տեսնում եմ այդ փառաւոր անցեալի մանրամասնութիւնները և վերլուծութեան եմ ենթարկում այն ժամանակուայ տպաւորութիւններս,—ես նայում եմ նոցա վերայ, որպէս ժողովրդի զգացմանց արտացոլութեան վերայ։ Ես այն եղրակացութեանն եմ հասնում, որ մեր կղզիների ցիր ու ցան լինելը այն ժամանակ խիստ և ակներև ազդեցութիւն ունեցաւ ապստամբութեան սասանանալու վերայ։ Սորանով ես ոչինչ չեմ կամենում ասել այն ահագին նիւթական օգնութեան մասին, որ ցոյց տուին յոյն ծովակալները ազգին. չեմ կամենում խօսել և այն փայլուն պատերազմական սխրագործութիւնների մասին, որոնք վերստին անթառամ պսակով ծածկեցին հելլենական անունը։ Ո՛չ, այդ օգուտը մենք հասկացանք, այդ սխրագործութիւնները մենք գնահատեցինք միայն յետոյ։ Բայց գլխաւորն այն է, որ մենք հեռու ապրելով յեղափոխական շարժման կենտրոնից և միայն լսելով, որ այս ինչ, այն ինչ, երրորդ, չորրորդ կղզին բարձ-

բայրել են ապատութեան դրօշակը, աւելի և աւելի պարզ ըմբռնեցինք գործի էութիւնը։

Այս բոլոր կղզիների ապստամբողների առաջնորդները ակներև և շօշափելի կերպով մեզ ներկայացրին ապստամբութեան ընդհանուր՝ համահելլենական բնաւորութիւնը։ Նոցանից շատերը մեր մտերիմներն, հին ծանօթներն էին։ Նոցա անուններն, նոցա դէմքերը յայտնի էին ամեն նաւահանգստում, բոլոր շուկաներում, ուր միայն յոյներ կային։ Այսպէս, երբ յայտնվում էր, որ հէնց այդ մտերիմ և յարգելի անձնաւորութիւններն են կռվում հաւատի և հայրենիքի համար, երբ յայտնվում էր, որ նոքա երդուել են մեռնել կամ դէն շպրտել ատելի լուծը, մենք ամենքս աւելի էինք բորբոքվում, քան թէ լսելով Իպսիլանտի շարժման և մինչև անգամ Մօրէիայի ապստամբութեան մասին։

Ես խօսում եմ պատերազմի սկզբնաւորութեան, մեր առաջին տպաւորութիւնների մասին։ Աւելի ուշ ուրիշ պատճառներ մեզ զգալ տուին, թէ որպիսի անխզելի կապով ենք կապուած ապստամբների հետ։ Իրենք թուրքերը, իրենց խստութիւններով բոլոր յոյների վերաբերմամբ ընդհանրապէս, յիշեցնում էին մեզ, որ մենք և ապստամբները մի և նոյնն ենք, մինչև անգամ և այն ժամանակ, երբ մենք պատրաստ էինք մոռանալու այդ ազգային կապը։

Ներեցէք ինձ, ընթերցող, որ այսքան շատախօս եմ։ Զեռս, ենթարկուելով սրտիս թելադրութեան, ակամայ կանգ է առնում, որ բերկրութեամբ խօսի յիշողութեանցս տպաւորութիւնների և երիտասարդութեան փորձանքների մասին։ Ես մտադիր եմ բաւականանալ միայն իմ կեանքի դէպքերը պատմելով։ Բայց իւրաքանչիւրիս կեանքը—անձնաւորութիւն է, որ շաղկապուած է իրեն շրջապատող անցքերի համագումարի հետ։ Ինչպէս մարդ բաժանել իւր հոգեւոր անձնաւորութեան տպաւորութիւն-

ներն ու յուզմունքները այդ դէպքերը նկարագրելիս։ Դորա համար, մէկ էլ այն պատճառով, որ ծեր եմ, ես չեմ կարող միշտ էլ խոյս տալ շատախօսութիւնից։ Մանաւանդ որ դուք էլ պարտաւոր չէք մինչև վերջը կարդալ։ Երբ դուք փոքր էիք, երբ ձեր դայեակը հէքիաթներ էր պատմում ձեզ, նա բացառապէս ձեզ բաւականութիւն տալու համար չէր անում այդ։ Զէ, նա ինքը անհրաժեշտութիւն էր զգում հէքիաթներ պատմելու ձեզ։ Դուք կարող էիք քնել—նա կըշարունակէր պատմել։ Դուք կը զարթնէիք և կըլսէիք վերջը։ Դորա համար է, որ դուք յիշում էք դայեակի պատմած հէքիաթների միայն ըսկիզբն ու վերջը։ Ես—նոյն դայեակն եմ։ Քնեցէք։ Դուք ինձ չէք վիրաւորիլ և չէք ստիպիլ, որ ես լռեմ...

Ապատամբութեան առաջին նշանները երևեցան մեզանում մեծ պասին։ Ի՛նչ պաս էր։ Ի՛նչ Զատիկ էր։

Մենք շարունակում էինք ճշտութեամբ եկեղեցի յաճախել, մանաւանդ որ այնտեղ ստացվում էին լուրեր, յաճախ շատ կարևոր, համարեա միշտ չափազանցրած, բայց և այնպէս միակ լուրերն էին։ Հետաքրքրուելով այդ լուրերով, մի և նոյն ժամանակ մենք չէինք շեղվում կրօնական ծիսակատարութիւններից։ Ընդհակառակը, ազգի տանջանքը, կարծես, համապատասխանում էր Քրիստոսի չարչարանքին։ Զարչարանաց շաբաթի եկեղեցական ծիսակատարութիւնները արտացոլում էին այն ժամանակուայ քրիստոնէից հոգեկան զրութիւնը։ Այդ շաբաթուայ կիսում տարածուեցաւ չարագուշակ բօթ։ Կ. Պոլսում տեղի են ունեցել ձեռակալութիւններ և սպանութիւններ։ Շատ ականաւոր յոյներ զլխատուել են։

Ս. Յարութեան հրաշափառ տօնին մենք լսեցինք մեծ թարգման Մուրուլիի զլխատման մասին։ Այդ բոլորը սև քող սփռեց Փրկչի յարութեան պայծառ բերկրութիւնների վերայ։ Կարճ միջոցից տարածուեցաւ սարսա-

փելի լուր. իրեն պատրիարքին կախել էին, և նորա դիակը տուել էին հրեաներին խաղք ու խայտառակութեան։

Ամենից ճնշում էր կրկնակի զգայմունք։ Սարսափահար տեսնելով, ինչպէս պատրիարքի՝ ժողովրդի պետի, սրբազան անձնաւորութիւնը ենթարկվում է անարգանքի, մենք մտածում էինք, որ իւրաքանչիւրիս կեանքը բոլորովին զերծ չէ վտանգից։ Եթէ սուլթանի կառավարութիւնը մայրաքաղաքում չքաշուեց ազգի ընտրածին անարգանքի մատնելուց, ի՞նչ կարող էինք սպասել մենք, հասարակ ռայեաներս, Զմիւռնիայի և մանաւանդ Փոքր Ասիայի Թուրքերի կատաղութիւնից։

Զմիւռնիայի շուրջը արդէն հաւաքուել էին զինուած մարդկանց ահագին խմբեր, որոնք եկել էին Փոքր Ասիայից կողոպուտի և արեան ծարաւութիւնից։ Փաշան ըստ երևութին ջեռ հոգս էր քաշում բնակիչների ապահովութեան մասին, և այդ վայրենի գազանները թափառում էին քաղաքից դուրս, բայց նոցա ներկայութիւնը զրդռում էր և պահպանում էր քաղաքի Թրքերին, որոնք աւելի և աւելի յանդուգն ու սպառնացող էին դառնում։ Սպառնալիքը իրականանում էր։ Ձեռքերը յաճախ և յաճախ էին մեկնվում դէպի Թրերը, որոնք էլ աւելի և աւելի հեշտ էին դուրս գալիս պատեանից։ Շատ անմեղ քաղաքացիք վիրաւորուեցան և մինչև անգամ մի քանի մարդ էլ սպանուեցաւ Զմիւռնիայի փողոցներում։

Սակայն այս բոլորը նախերգանք էր այն աղէտների, որ մեզ սպասում էր։ Շուտով տեղի ունեցան արիւնհեղութիւններ ոչ միայն փողոցներում ու շուկաներում, ոչ միայն քրիստոնեաների տներում, այլ և եւրոպական դեսպանատների և նաւերի դրօշակների տակ։ Հարիւրաւոր փախստականների ուժով այն տեղից դուրս էին կորզում և սպանում։

Այս ամենը միայն յետոյ իմացայ ես, իսկ անձամբ չեմ տեսել։ Կընկարագրեմ միայն տեսածս և քաշածս։

Շատ ժողովուրդ սկսեց թաղուն հեռանալ քաղաքից։ Ամեն օր մեր ծանօթներից մէկը անհետանում էր։ Ի՞նչ էր պատահել նորան։ Սպանե՞լ էին։ Թաղնուե՞լ էր։ Վերջապէս իմանում էինք, որ փախել է։

Փախչողների օրինակը և օրէ յօր աճող վտանգը ինձ և հօրս սկսեցին չափազանց անհանգստացնել։ Մենք էլ կամեցանք անպատճառ փախչել։ Մենք միայն փախչելու միջոց էինք փնտռում. բայց օրէ յօր այդ դժուարանում էր։ Տաճկական իշխանութիւնը արգելեց ռայեաներին դուրս գնալ։ Մինչև անգամ ասում էին, բայց մենք չէինք կամենում հաւատալ, որ հիւպատոսները հրաման են ստացել մերժել այն մարդկանց, որոնք ապաստանարան էին որոնում օտար նաւերի վերայ։

Մենք չէինք հաւատում, բայց դուրս եկաւ, որ ճիշդ է։ Բարեբաղդաբար հիւպատոսների և նաւաստիների մէջ գտնուեցան բարի մարդիկ, որոնք չէին կամենում թրքերին զոհեր մատակարարել։

Այս անցքերի ամենաթունդ ժամանակ Զմիւռնիա եկաւ իմ հօրս նախկին բարեկամ կապիտան Վիսրիլիսը, որ հրամանատար էր մի նաւի՝ ռուսաց դրօշակի տակ։ Երբ նա քարվանսարայ մտաւ, հայրս բերկրութեան շարժումներ արաւ։ Կապիտանը առաջարկեց մեզ իւր նաւը։ Երեք օրից, երբ պիտի վերջանար բեռնաբարձութիւնը, նա խոստացաւ մեզ Քիոս տանել։

—Քիոս,—բացականչեցի ես, երբ հայրս յայտնեց ինձ իւր վճիռը։—Բայց մի՞թէ մենք այն տեղ աւելի անվտանգ կըլինենք, քան թէ այստեղ։

—Այնտեղ գոնէ մօրդ և քոյրերիդ հետ կըլինենք, կամ ամենքս միասին կ'ազատուենք, կամ միասին կըկորչենք։

Գաղտնի կերպով պատրաստվում էինք ճանապարհ

ընկնելու։ Բայց ժամանակ քիչ էր, իսկ մենք չէինք կամենում մեր գաղտնիքը յայտնել անժամանակ պատրաստութիւններ տեսնելով։ Դորա համար վճռեցինք Տիրոջ կամքին թողնել մեր ապրանքը, իսկ պարտքերը — պարտապանների ազնիւութեան, եթէ նոքա էլ կարողանան ազատուել։ Հաւաքեցինք բոլոր փողը, ինչ որ կարելի էր, և երրորդը օրը անհանգստութեամբ սպասում էինք արևի մայր մտնելուն, ինչպէս պայմանաւորուել էինք նաւապետի հետ։

II.

Սկսում էր մթնել, երբ մենք դուրս եկանք քարվանսարայից, կողպելով մեր կրպակի դռները։ Դարպասը դեռ բաց էր։ Հետերս ոչ կապոց ունէինք, ոչ տոպրակ, ոչ մի բան, որ կարող լինէր կասկած յարուցանել մեր դիտաւորութեան մասին։ Ինչ որ մենք տանում էինք մեզ հետ, խնամքով պահած էր մեր շորերի ծալքերում։ Քարվանսարայի բնակիչներից ոչ ոք չգիտէր մեր գաղտնիքը, բայց այդ բոպէին ինձ այնպէս թուեցաւ, թէ ամենքն էլ գիտեն։ Ինձ թվում էր, թէ բոլոր պատուհաններն ու դռները տեսնում են և լսում, և տեսնում են ոչ միայն այն, ինչ որ մենք տանում էինք շորերի տակ, այլ և այն, ինչ որ մեր սրտումն էր։

Դարպասի մօտ կանգնած էր ծեր պահապանը, ձեռները յետևին ծալած։

— Ո՞ւր էք գնում այսպէս ուշ, — հարցրեց նա մեզ։

— Ժամ, — պատասխանեց հայրս։

Տօն չէր և ժամասացութիւնը ամեն տեղ աւարտել էր։ Ես ոչ մի խօսք չարտասանեցի. բայց հաւատացած էի, որ ծեր թուրքը հասկացաւ բանի էութիւնը և իսկոյն կը յայտնէ մեր մասին, սակայն ամեն ինչ յաջողութեամբ

վերջացաւ։ Փողոցում էլ ես կրկին վախենում էի։ Իւրաքանչիւր ստուեր ինձ ետնիչար էր թվում մերկացրած սուրը ձեռին, ամեն մի քայլում ես սպասում էի մի որ և է սարսափելի պատահմունքի։ Սակայն, զոհութիւն Աստուծոյ, ոչ ոք չխանգարեց մեր ճանապարհը, և շուտով հասանք քաղաքի հեռաւոր թաղը, ուր նաւապետը նշանակել էր մեզ տեսակցութեան տեղ։ Նա արդէն սպասում էր մեզ՝ ափին կանգնած։ Մակոյկը փոքր ինչ հեռու էր կանգնած։ Մեր շուրջը տիրում էր խորին լռութիւն և բացակայութիւն մարդկանց. բոլորովին մութ գիշեր էր։ Մենք թռանք մակոյկը և թիավարեցինք դէպի նաւը։

Միայն նաւի տախտակամածի վերայ բարձրանալուց յետոյ ես համեմատաբար հանգստութիւն զգացի և սկսեցի աւելի ազատ շունչ քաշել։ Դեռ դէպք չէր եղել որ թուրքերը մի օտարազգի նաւ կանգնեցնէին, դորա համար էլ այդ նաւի վերայ ռուսական դրօշակի տակ ինձ ազատուած էի համարում անմիջական վտանգից։ Ես երևակայում էի, թէ Զմիւռնիայից հեռանալով՝ այնտեղ էլ թողի և վտանգը և երկիւղը, բոլորովին մոռանալով իմ սկզբնական կարծիքս, որ Քիոսում էլ մենք չենք ազատուիլ թուրքերի ձեռքից։

Որքան շատ էի մտածում ես այդ մասին, այնքան էլ շատ էի հաւատիանում, որ այնտեղ գոնէ հանգիստ կըլլինինք և թաղնուած։ Կղզիում բնակուած թրքերը աւելի զութ ունէին, քան թէ միւսները, և բացի այդ՝ նոցա թիւն էլ մեծ չէր։ Քիոսի խաղաղասէր և աշխատասեր բնակիչները ունևոր էին և բարեկեցիկ և, իրենց կառավարութիւնն ունենալով, այն ժամանակուայ ամենաերջանիկ յոյներն էին։ Անհաւատալի էր թվում, որ Քիոսում էլ ապստամբութիւն կըսկսուի, որ թուրքերի ֆանատիկոսութեան կատաղութիւնը նորա բնակիչների գլխին էլ կըթափուի։

Լուռ նայում էի, թէ ինչպէս էին պատրաստվում ճանապարհ ընկնելու։ Խարիսխը արդէն համարեա բարձրացրել էին, և երբ մենք դուրս եկանք տամալին, մակոյկը կապած էր նաւից, և մենք գնում էինք։

Այդ գիշեր ես խոր կերպով քնեցի։ Այն ժամանակից, մարտ ամսի այն գիշերից, երբ հրացանաձգութիւնը ինձ զարթեցրեց, ես շատ անհանգիստ էի քնում և յաճախակի զարթնում էի։ Որքան սաստկանում էր վտանգը, այնքան էլ փախչելու միտքը դլխումս մեխի պէս ցցուած քուռնս էր խանդարում և շատ անդամ անքուն գիշերներ էի անց կացնում։ Սակայն նաւի վերայ ես վտանգից ազատուած էի համարում ինձ։ Ես սկսեցի մոռանալ նորա մասին, որ Անդլիա գնալ այժմ անհնարին է, մտաբերեցի այն սարսափը, որ ես զգացի Զմիւռնիայի շուկայում, երևակայում էի կախուած պատրիարքին. սակայն զդալով որ այժմ վտանգից ազատ եմ, յոյս ունենալով որ կարճ միջոցից մօտ ու քոյրերիս սիրտ տեսնեմ և մտաբերելով մանկութեան խաղաղ յիշողութիւնները՝ շուտով փարատեցի այդ մռայլ պատկերները։

Պատանեկութիւնը իրեն յատուկ անհոգ և յոյսերով լի բնաւորութեամբ չի սիրում երկար կանգ առնել կեանքի մռայլ պատկերների ու երևոյթների առաջ։ Ախորժելի կերպով նիրհելով՝ մոռացայ Զմիւռնիայի յիշողութիւններս և հանդիստ քնեցի, կարծես, դորան նպաստեցին հոգմի միատեսակ սուլոցը և նաւի թեթև օրօրումները։

Արևը ծագելիս ես դուրս եկայ տամալու վերայ։ Քիոսը արդէն սփռուած էր մեր առջև, թեթև կերպով քողարկուած առաւօտեան թափանցիկ մշուշով։ Ձախ կողմում, հեռվում, որպէս սպիտակ ամպերների մի երամ, երևում էին երկար թելի պէս առագաստները, — հայրս լուռ ցոյց տուեց նոցա վերայ։

Մեր նաւապետը—այս բոպէին, կարծես, տեսնում եմ նորան՝ առաջիս,—կանգնած նաւի խելքի վերայ և ձեռքը աչքերի վերայ բռնած նայում էր այն կողմը մեծ ուշադրութեամբ, կարծես, կամենում էր համարել նաւերը։

—Ի՞նչ է, այդ նաւերը գալի՞ս են թէ գնում են,—հարցրեց հայրս նաւապետից։

—Նոքա գնում են դէպի Սամոս,—պատասխանեց Վիսբիլիսը։—Թող Աստուած օգնական և պահպան լինի նոցա։

—Ամէն,—ասաց հայրս։

Եւ երկու ծերունիք անփոյթ կերպով խաչակնքեցին երեսները։

Այդ վայրկեանին ես առաջին անգամ հետաքրքրուեցայ ապատամբութեամբ և առաջին անգամ զարթեց ազգի վերածնութեան հպարտ զգացմունքը։ Այդ նաւերը—հելլենական տորմղի նաւեր են. նոցա կայմերի վերայ ծածանվում է խաչի դրօշակը. ազատ և համարձակ նոքա անցնում են յունական ծովերը. նոքա տանում են ներկիւղ քաջեր, որոնք, որպէս ազատութեան համբաւաբերներ, մի կողմից դէպի միւսն են հասցնում իրենց դրօշակը, քաջալերելով քրիստոնեաներին, արհամարհելով թուրքերին և ամենուրեք տարածելով այդ դրօշակի նշանաբանը. «ազատութիւն կամ մահ»։

Երբ ես նայեցայ այդ երկու ծերերի վերայ, ինքս էլ խոր յուզուեցայ, այնպէս որ արտայայտել անդամ դժուար է։ Ինձ թւում էր, թէ մեծացել եմ, կուրծքս լցուել է մի տեսակ անոյշ զգացմունքներով. սակայն իմ վրդովմունքս շուտով անցաւ։ Թերևս այժմ էլ ես այն չեմ նկարագրում, ինչ որ այն ժամանակ զգում էի իսկապէս, այլ այն, ինչ որ պիտի զգայի այն բոպէին։ Մի քանի ժամից մենք իջանք Քիոս կղզին։

Ես կարծում էի, ես սպասում էի, որ նաւահան-

գիսաը ըստ սովորականին մարդկանցով լի կըլինի, յոյս ունէի տեսնել մտերիմներիս, ծանօթներիս, լսել ուրախ ողջոյններ, կատակներ, որոնք սովորաբար տեղի էին ունենում նաւահանգստում զիմաւորողների և ելողների մէջ։ Սակայն սրճատունը դատարկ էր, դետեղը ամայի, շուկայում նոյնպէս ոչ ոք չկար։ Միայն մի քանի խանութների շեմքին լուռ և մռայլ կանգնած էին տէրերը և զարմացած մեզ էին նայում, ողջունելով, երբ մենք անցնում էին։ Այդ ընդհանուր տխրութիւնը շփոթեց ինձ։ Ես կամենում էի հարցնել այդ բոլոր մարդկանց, «ի սէր Աստուծոյ, ինչ է եղել Քիոսում»—բայց լուռ գնացի հօրս հետևից, չհամարձակուելով նորա ներկայութեամբ ազատութիւն տալ հետաքրքրութեանս։

Բայց նա էլ չկարողացաւ երկար իրեն զսպել։ Մտնելով իւր վաղեմի ծանօթներից մէկի խանութը, նա դիմեց նորան առանց նախաբանի նոյն հարցով, որ լեզուիս ծայրին էր պտտվում։

—Լաւ ժամանակ էք դտել վերադառնալու,—պատասխանեց նա հօրս.—կարծեմ, աշխարհիս վերջը պիտի լինի շուտով։

Այս էին վաճառականի առաջին խօսքերը, բայց և այնպէս նոքա արգելք չեղան, որ նա իւր բերկրութիւնը յայտնէ հօրս տեսնելուն պատճառով։ Նա խնդրեց, որ նրատենք և, ուրախութեամբ ընդունելով մեզ, պատմեց բոլորը, ինչ որ եղել էր։

Այն ժամանակ մենք իմացանք, որ առաւօտեան մեր տեսած դէպի Սամոս ուղևորուող նաւատորմիղը տասը օր ապմիրալ Ծամբօղիսի հրամանատարութեան ներքոյ կանգնել էր Քիոսի առջև, դիտաւորութիւն ունենալով ապստամբութիւն յարուցանել կղզիում, սակայն թուրքերը հէնց որ տեսել են նորան, ձերբակալել են արքեպիսկոպոսին, անուանի քաղաքացիներին և այժմ որպէս պա-

տանդ պահում են բերդում։ Գիւղացիք տեղից չշարժուեցան, և նաւատորմիղը ստիպուեցաւ բան չարած հեռանալ։

Վաճառականը մանրամասն պատմեց մեզ վերջին տասն օրուայ պատահածը։ Նա յայտնեց մեզ պատանդների անունները, այն մարդկանց անունները, որոնց ամենքը սիրում էին և յարգում. վրդովուելով նա նկարագրեց մեզ այն սարսափը, որ տիրել էր կղզու բնակիչներին, երբ լսել էին նոցա ձերբակալութեան մասին, որովհետև Կ. Պոլսում տեղի ունեցած սպանութիւնները արդէն յայտնի էին և պատանդներ առնելը նոքա իրաւացի կերպով համարում էին սկիզբ աւելի վատթար թշուառութիւնների։

Մենք այն ժամանակ հասկացանք, թէ ինչու քաղաքը այդքան տխուր կերպարանք ունէր։ Մենք հասկացանք, որ միայն Զմիւռնիան չէր վտանգաւոր ապրելու համար։ Ամեն տեղ, ուր միայն կային զրահաւորուած թուրքեր և հպատակ յոյներ, մի կողմից լինում էր վայրենի գաղանութիւն, իսկ միւս կողմից—անսահման երկիւղ։ Խորին լռութեամբ մեր քայլերը ուղղեցինք դէպի մեր տունը։

Երբ հայրս բացում էր դուռը, ես նկատեցի, որ նորա այտերի վերայից արտասուք էր գլորվում, բայց իմ սիրտս լի էր քաղցր հին յիշողութիւններով։ Վերջապէս դուռը բաց արին։ Շեմքում կանգնած էր Ագրիանան, իմ հանդուցեալ ամուսնս աղջիկը, իմ մանկական խաղերիս ուրախ խաղակիցը և մօրս անձնատուր աղախինը։ Դեռ նա բերանը բաց չէր արել, որ յայտնէ մեր գալու լուրը, ես թռայ նորա կողմը, մի ձեռով բերանը փակեցի, իսկ միւսով քաշեցի նորա սպիտակ ծածկոցի մի ծայրից, որ նա կրում էր քիոսցի կանանց սովորութեան համեմատ։ Ծալքերը քակուեցան և քաթանը մնաց ձեռիս։ Այդ վայրկեանին ես ամեն բան մոռացայ. յարգանք դէպի հայրս, հօրը տարուայ բացակայութիւնս, մինչև անգամ այն

տխուր հանգամանքները, որոնցով շրջապատուած ես վերադառնում էի Հայրենի տան կուրի տակ։

Մեզ տեսնելուց մայրս ուրախութիւնից ամեն բան մոռացաւ։ Նա ծերացել էր։ Քոյրերս, որոնց ես երեխայ էի թողել, այժմ երիտասարդ օրիորդներ էին... Չկայ մի այնպիսի զգայմունք, որ հաւասար լինէր այն բերկրութեան, որ մարդ զգում է երկար բացակայութիւնից յետոյ վերադառնալով այն տունը, ուր ծնուել է, նոցա մօտ, որոնց սիրել է մանկութիւնից։ Որքան քաղցր են տեսակցութեան այդ առաջին րոպէները, սիրած մօր այդ փաղաքշանքները, որ տանում է իւր զաւակին նախկին սենեակը, այն անկողնի մօտ, ուր այնքան ժամանակ նա չէր քնել։ Որքա՜ն սքանչելի են բերկրութեան այդ արտասուքը, անվերջ համբոյրները։ Միայն նա կըհասկանայ այս, ով որ անձամբ փորձել է, կամ ում որ բոլորովին չէ վիճակուած այդ փորձելու։ Խե՜ղճ մայրս։ Ինչքան բան էր տեսել և քաշել, մինչև որ յաւիտեան փակեց աչքերը։

Հայրս կամենում էր անյապաղ մեզ զիւղ տանել, բայց քաղաքային իշխանութիւնը թոյլ չտուեց։ Ոչ մի հարուստ ընտանիք չէին թողնում քաղաքից հեռանալու։ Թուրքերը, բացի բերդում փակած պատանդներից, կամենում էին մեզ ամենիս ունենալ իրենց սրերով զինուած ձեռների տակ։ Ակամայ և ճարահատեալ մի կերպ մնայինք քաղաքում, յոյսներս չկորցնելով, որ ժամանակով մի կերպ ամեն բան կ'ուղղուի։ Ոչ ոք չէր կասկածում և չէր էլ կարող կասկածել, որ պատերազմը երկարատև կըլինի։ Ինչ որ մեզ է վերաբերում և մանաւանդ Քիոսի բնակիչներին, ես պիտի խոստովանեմ, որ մենք մեծ յոյս չէինք դնում ապստամբութեան վերջնական հեռանքի վերայ։ Մօտից մենք տեսնում էինք Թրքական կարողութեան ամբողջ ոյժը, որ աւելի ևս սաստկացել էր

մեզ համար առաջուայ ապաւորութիւնների և սարսափի ներքոյ, որ մեր գլխի վերայ կախուած էր։

Միւս կողմից էլ ապստամբութիւնը ցոյց չտուեց իւր ամբողջ զօրութիւնը մեր զինուորների յաղթութիւններով և նաւաստիների փայլուն սխրագործութիւններով։ Մինչև անգամ յետոյ յունական զէնքի յաջողութեան լուրերը չկարողացան ցրել մեր յուսահատութիւնը, որի մէջ ընկել էինք չորս կողմը կատարուող աղէտների շնորհիւ։ Ապստամբների ամեն մի յաջողութիւնը, ամեն մի յաղթութիւնը հակահարուած էր ստանում այն տեղ, ուր թուրքերը աւելի զօրեղ էին։

Երբ հրդեհի զոհ գնաց թրքական մի նաւ, դորա հետևանքը եղաւ Սիդոնիայի աւերումը և սարսափելի կոտորած Զմիւռնիայում։ Թրքերի Սամոսի մօտ ունեցած անյաջողութեան հետևեց Կիպրոսի արիւնալի խրախճանը։ Տրիպոլիսը նուաճելուց յետոյ Կասանդրան կողոպուտի ենթարկուեց։ Այդ ժամանակ արքեպիսկոպոսը և անուանի քաղաքացիները դեռ բերդումն էին, որի զօրքը օրէ օր ստուարանում էր նորերով։

Օրէ օր ճնշումները ծանր և անտանելի էին դառնում։ Թուրքերը դաժան կերպով էին նայում մեզ վերայ, սրելով թրերը, իսկ մեր դէմ բոլոր ասիական եղերքի մօտ հաւաքուել էին վայրենի զգաններ խմբեր, որոնք պատրաստ էին յարձակուելու մեր կղզու վերայ։ Զէ՛, մեզ շրջապատող մթնոլորտը բոլորովին չէր նպաստում քաջալերուելու։ Մենք խոնարհվում էինք և մաշվում տանջանքների և հալածանքների ծանրութեան ներքոյ։ Հօրս միակ յոյսը, որ երազում էր ոչ թէ կատարեալ ազատութեան, այլ գոնէ մի որոշ համաձայնութեան մասին,—քրիստոնեայ պետութիւնների օգնութեան վերայ էր։ Սակայն նորա բարեկամ Զենակիսը, որի հետ հայրս յաճախ վիճում էր իրերի դրութեան մասին, անհաւա-

նական էր համարում այդպիսի օգնութիւն։ Սիրտս ճմլում էր, երբ լսում էի, ինչպէս Զենակիսը չէր կարողանում արգարացնել շարժումը և կանխապէս ողբում էր նորա հեռանքը։ Ինչ հօրս էր վերաբերում, նա իրեն յաղթուած չէր համարում և յամառութեամբ շարունակում էր յայտնել իւր յոյսերը։ Բայց Զենակիսը փոխհիւպատոս էր, լաւ չեմ յիշում, կարծեմ—հոլլանդական։ Նորա բոլոր խօսքերը, ինչպէս ինձ թւում էր, պաշտօնական և անհերքելի նշանակութիւն ունէին։

Հօրս հին բարեկամը և հարևանը,—նա այն սակաւաթիւներից էր, որոնք այն ժամանակ այցելում էին մեր տունը։ Իւր պաշտօնի շնորհիւ նա ամեն օր ահնվում և յարաբերութիւն էր ունենում ուրիշ հիւպատոսների հետ, և հակահելլենական քաղաքականութիւնը, որ ուղղութիւն էր տալիս այն ժամանակ Փիոսի հիւպատոսարանին, սրտափայլում էր նորա ճառերում։ Նա չէր դողում ներկան և ապագայի համար էլ ոչինչ լաւ բան չէր նախատեսնում։ Այդպէս էր նորա կարծիքը ապստամբութեան մասին։

—Եւրոպան երբէք չի խառնուիլ հաւատացած եղէք,—ասում էր նա հօրս։—Եւրոպայիք օգնութեան ձեռք չեն կարկառիլ տաճկական սարսուին։

—Ուրեմն ի՞նչ պիտի լինի ձեր կարծիքով,—նեղանում էր հայրս,—նոքա հանգիստ կերպով կը թողնեն, որ սուլթանը խեղդէ բոլոր յոյներին։

—Թող յոյները հնազանդուին և խնդրեն սուլթանի ողորմածութիւնը,—պատասխանում էր Զենակիսը,

Եւ ինձ թւում էր, թէ ես լսում եմ, ինչպէս նա կրկնում է իւր սովորական նախազասութիւնը, երբ խօսքը ապստամբութիւնների մասին էր լինում. «Նոքա անպատուեցին ազգը»։ Այդպէս անցաւ ամառը, յետոյ աշունը և ձմեռը։ Ինչպէ՞ս անց կացրինք մենք այդ տասը

ամիսը, միշտ կռանի և սալի մէջ զանուելով, մոռանալով երեկուայ հոգսերը և անհանգստանալով վաղուայ համար։

Երբ և իցէ, ընթերցող, բարձրացե՞լ էք բարձր սարի վերայ։ Ճանապարհ են ընկնում սովորաբար քաջութեամբ. բարձրանալը դժուար է, բայց տեսնելով որ շուտ պիտի հասնի նպատակին, մարդ շատ էլ չի զղում յոգնութիւն—գագաթը այս տեղ՝ մեր գլխի վերայ է։ Այնպէս է թւում, թէ բաւական է մի քանի քայլ անել նպատակին հասնելու համար, բայց ոչ, ձեզ խաբել են սարի թեքուած ծալքերը։ Փոքր ինչ վերև, մի փոքր առաջ, և ահա սարի իսկական գագաթը։ Առաջ։ Եւ դարձեալ սկսում էք բարձրանալ, բայց աւելի պակաս եռանդով, սրտի սաստիկ բաբախումով։ Դուք հասնում էք ձեր նպատակին և տեսնում էք, որ էլի սխալուել էք, սակայն ձեր ոյժերը սպառուած են, իսկ նպատակը աւելի և աւելի հեռանում է։ Վերջապէս հալից ընկած, հաղիւ շունչ քաշելով, դուք երկինքն էք տեսնում ձեր անցած բարձրութեան վերջին կէտից, և ընկնելով գետնի վերայ, որ հաւաքէք վերսին ձեր ոյժերը, դուք տեսնում էք ձեր առջև հովիտ և զարմանում էք, որ կարողացել էք այդքան բարձրանալ։

Այդ ամիսներն էլ այդպէս անցան։ Մենք անընդհատ բարձրանում էինք, բայց մեր նպատակը, լերան գագաթը, սկզբից արդէն ամպերով էր շրջապատուած, և մենք նորան չէինք տեսնում։ Երբ վերջապէս մենք նորան հասանք, ոտներիս տակ անդունդ տեսանք. . .

Որովհետև թրքերը մեզ չէին սպանում և չէին ըստրկացնում, ուստի մենք մեզ արտօնութիւն ունեցող էինք համարում, միայն մտածում էինք, թէ ինչ էր կատարվում ուրիշ տեղերում։ Կանայք տանից դուրս չէին գալիս. մենք ամեն կերպ աշխատում էինք չհանդիպել մեզ նեղողներին, աշխատում էինք, որ մեզ մոռանան, և համ-

բերութեամբ, բայց երկիւղիւ սպասում էինք, թէ վերջապէս երբ պիտի զիջանի Աստուծոյ բարկութիւնը։

Սակայն պատանդներին շարունակ բերդում պահելը, պահակների թիւը անընդհատ ստուարացնելը, կղզու ամբողջ բնակիչներին լիովին զինաթափ անելը—այս բոլորը վատ բան էր ցոյց տալիս։ Մենք զգում էինք, որ աղէտի վայրկեանը մօտենում է մեր ափերին ապստամբութեան փոթորկի հետ։ Մի կողմում մեզանից Պասրա կղզին էր, իսկ միւս կողմից—Սամոսը, որոնք մի քանի ամիս էր որ ազատ էին։ Ապստամբութեան փորձեր եղել էին արդէն Միտիլէնում, և յունական նաւերը յաղթական գնացքով յաճախ և յաճախ էին սկսում երևիլ Քիոսի ափերի մօտ։

Մի օր երեկոյեան Զենակիսը յայտնեց մեզ մի գաղտնի նորութիւն. ամէն մի բոպէ փաշան երկիւղ էր կրում, որ յարձակումն կրգործեն կղզու վերայ։

Հետևեալ օրը կրկին չորս անուանի քաղաքացի տարան բերդը և թողին այնտեղ։ Այդպիսով պատանդների թիւը կրկնապատկուեցաւ։ Բարեբաղդաբար իմ հայրս չէր ընկել ցուցակի մէջ, որովհետև ամենահարուստ քաղաքացիներից չէր։

Մի քանի օրից էլ լուր տարածուեցաւ, թէ Սամոսի նաւերը բերել են էմիսարներին և բաց թողել մեր կղզում, և թէ նոքա թաքնվում են հեռաւոր գիւղերում։

Թուրքերը ակներև կերպով սկսեցին անհանգստանալ։ Գիւղերում շրջում էին պահակներ, մի քանի պատանդ էլ Կ. Պոլիս ուղարկուեցաւ։ Հորիզոնը մթնում էր։ Պարզ էր, որ ողբերգական դէպքերը անխուսափելի էին։

Մեր երկիւղը ի զուր չէր և նա շուտով իրականացաւ։ Մարտի 9-ին, փէսաօրից յետոյ, մինչև քառասուն նաւ երևեց ծովում։ Մեր տան կարից ես տեսնում էի, ինչպէս էին նոքա մօտենում, և լսում էի, ինչպէս թրքերը բերդում տագնապի թմբուկ էին խփում։ Նոքա այնտեղ էին

փակուել, որովհետև սպասում էին, որ պիտի յարձակուեն իրենց վերայ։

Այդ իսկ օրը՝ արևը մայր մտնելուն պէս, մենք շտապեցինք դուրս դալ քաղաքից և դիւղ գնալ։ Միայն մենք չէինք փախչելով ազատվում,—դէմ առ դէմ դտնուելով անիսուսափելի վտանգին՝ ամենքն էլ մոռացան, որ արդելուած է քաղաքից հեռանալ։

Այսպէս մենք ձդեցինք մեր ծնողական տունը։

Երեսուն տարուց յետոյ ես վերադարձայ Հայրենիք, որպէս օտարերկրացի։ Քիոսը աւերուած էր,—մեր տունն էլ աւերակների մէջ։ Հայրս մեռաւ տարագրութեան մէջ, մինչև անգամ մխիթարութիւն չունենալով տեսնելու որդկերանց, որոնք բաղդ և կարողութիւն էին գտել պանդըխտութեան մէջ։ Բայց այդ լոպէին մենք չէինք մտածում, որ առ միշտ ենք թողնում մեր օջաղը, չնախատեսանք այն բոլորը, ինչ որ պիտի փորձէինք։

Որքան մենք հեռանում էինք քաղաքից, այնքան էլ յաճախ էինք հանդիպում դիւղացոց խմբերի, որոնք վազում էին դէպի նաւերը, յոյս ունենալով որ այնտեղ դէնք կըգտնեն։ Նոքա մեզանից շատ բան դիտէին, դիտէին, որ Լոզոֆէտը և Բուռնիասը՝ երեք հազար սամոսցիների գլուխն անցած, հաւաքուած են ափին Քիոսը ազատելու նպատակով։ Տարաբաղդաբար սամոսցիները ոչ թէ ազատութիւն, այլ թշուառութիւն և աւերումն էին բերել։ Սակայն հետևեալ օրը նոքա դուրս եկան և առանց դըժուարութեան նուաճեցին քաղաքը։ Նոքա յոյս ունէին, որ ամրոցում թաք կացած թրքերը շուտով կըտեսնեն, որ ստիպուած են անձնատուր լինելու։

Երբ քաղաքում կատարվում էին այդ անցքերը, մենք դիւղումն էինք հանդիստ։ Միայն երբեմն-երբեմն թնդանօթների հարուածները խանգարում էին մեզ շըջապատող խաղաղութիւնը, և յիշեցնում էին որ հրաբուղխի մէջ էինք գտնվում։

Սակայն հարուածներն էլ յաճախ չէին կրկնվում, և ինչ ինձ է վերաբերում, ինքս էլ չգիտեմ, թէ ինչու այնտեղ ես մոռանում էի երկիւղը և հոգսերը: Սովորել էի մշտական անհանգստութեան, քաջալերու�էլ էի ես, մտածելով, որ մեր երկրի վերայ ծածանվում է ազատութեան դրօշակը, կամ գուցէ գարունն և զարթնող բնութեան խորհրդաւոր քնքշութիւնն էին հանգստացնում ինձ: Գուցէ ես ապրում էի այնպէս, ինչպէս ծաղիկներն են ապրում, մտածում էի այնպէս, ինչպէս թռչուններն են մտածում: Չգիտեմ... Բայց ամեն անգամ, յիշելով այդ, տարաբաղդաբար, կարճ ժամանակամիջոցը, որ անց կացրինք գիւղում, մտաբերում եմ ծաղկած նարինջենիները, հոտաւէտ օդը, թռչունների դայլայլիկը, յիշում եմ մեր ծեր այգեպանին, որ ծառերն էր պատուաստում, այլ և հովտի պատկերը և ծով մեր պատշգամբից: Բայց ես դեռ երիտասարդ էի. միայն քսան և մէկ տարեկան էի: Այժմ, երբ ես գրում եմ յիշողութիւններս, ես զարմանում և վրդովվում եմ, ինքս ինձ մտածելով, որ փոխանակ գիւղում նստելու, ես այն ժամանակ պիտի կանգնէի ապստամբութեան դրօշակի տակ և զինուէի: Թող ինձ սպանէին — դա ոչինչ չէ նշանակում... Բայց այժմ ես այնպէս չեմ մտածում, ինչպէս այն ժամանակ: Այն ժամանակ...

Կարծեմ, անհրաժեշտ է, ընթերցող, պատմել իմ կեանքը, փոքր ինչ լիակատար կերպով ծանօթացնել ձեզ իմ համեստ անձնաւորութեան հետ: Պէտք է բացատրել ամենաանկեղծ կերպով և հեզութեամբ, թէ ինչպէս և ինչու ոչ բարոյապէս, ոչ էլ ֆիզիկապէս չունէի յատկութիւն, այնպիսի յատկութիւն, որ ցանկալի էր անելու այն, ինչ ես այժմ կ'անէի այդպիսի հանգամանքներում:

Ես ասացի — ոչ բարոյապէս, ոչ էլ ֆիզիկապէս...

Ֆիզիկապէս, — ցաւալի ճշմարտութիւն, — ես հասա-

կով շատ կարճ էի։ Ես չէի կարող մոռանալ, թէ որքան փոքր էի թէ՛ տղամարդկանց և թէ՛ կանանց առաջ, և միշտ ինձ թուում էր, թէ ամենքն են նկատում այդ։ Ես այժմ էլ, չնայելով որ համաքաղաքացիներս շատ բանով ցոյց են տալիս իրենց յարգանքը, չնայելով որ ես յաճախ նախագահի տեղն եմ բռնում նոցա ժողովներում — մերթ տարիքներիս շնորհիւ, մերթ ժողովի անդամների համակրութիւնից, — ես չեմ կարողանում յաղթել ինձ, շփոթվում եմ, երբ այդ բանը միտս է ընկնում։

Այժմ գոնէ ես զգում եմ, որ առողջ եմ, բայց մինչև տղամարդ դառնալս իմ առողջութեանս վիճակը ինձ աւելի խղճալի տեսք էր տալիս։

Վերջապէս այն ժամանակուայ երեխայոց դաստիարակութիւնը զանազանվում էր այժմեանից։ Ո՛չ ուսումնարանում, ոչ էլ ուսումնարանից դուրս ես չէի կարողանում մարմնամարզութեամբ պարապել։ Հայր Ֆլուտիսի կոլլեգիայում ընկերներիս ձեռքում ես խաղալիք էի։ Զմիւռնիայում անունս դրել էին «փոքրիկ Լուկի», իսկ այս ընդհանուր արհամարհանքը, զորան աւելացնելով և իմ սեպհական ոչ մեծ կարծիքս իմ մասին, չէր կարող զարգացնել հերոսական յատկութիւններ։

Եթէ այն ժամանակ ես իմանայի այն, ինչ որ այժմ եմ իմանում, հոգուս խորքում թաղնուած զգացմունքները կ՝որոնէին և կըգտնէին մի ելք։ Բայց ես խելքով զարգացած չէի։ Ես տգէտ էի բառիս բուն նշանակութեամբ, ինչպէս և նախագրուշացրի ձեզ։ Հայր Ֆլուտիսը չկարողացաւ մինչև անգամ հիմնովին ծանօթացնել ինձ ուղղագրութեան հետ, թէև նա հպարտանում էր, որ ինձ ծանօթացրել է Եղոպոսի և եկեղեցու հայրերի հետ։ Ֆրանսիական և իտալական լեզուների բոլոր գիտութիւնս ես քաղել էի Ցելեմաքից, բայց այդ գրուածքն էլ մինչև վերջ չկարդացի։ Էոնիդասի, Մարաթոնի և Ֆրանսիական

յեղափոխութեան մասին ես կոկտուր տեղեկութիւն ունէի, բայց ես երբէք չեմ մտածել, ինչպէս հարկն է, բարձրագոյն մարդկային գաղափարների մասին — ազատութեան և ազգային անկախութեան մասին։

Կոլչեզիան թողնելուց յետոյ ես ոչ մի գիրք ձեռս չեմ առել, բայի հաշուէզրքերը։ Քարվանսարան էր իմ աշխարհը, իսկ մեր առևտուրը — իմ հայրենասիրութիւնը։

Պէտք էր, որ մի դժբաղդութիւն գար մեր գլխին, որ ես տեսնէի ծնողներիս սնանկութիւնն ու չարչարանքը, ներկայ լինէի վերածնող ցունամատանի տանջանքներին. ես մօտից պիտի տեսնէի և զնահատէի աղնիւ ոգևորութիւնն ու զոհերը, որ բերել էին այդ զինուած երեխաները հայրենիքին, որ հոգիս բացուէր և բորբոքուէր, որ ես ծարաւէի գիտութեան, որ ես էլ լոյսը ճանաչէի և մարդ դառնայի, — բայց, աւաղ, փոքրիկ մարդ։

XIX.

Մեր ամարանոցը իւր շրջակայ բոլոր պարտէզներով մօտ օժիտն էր։ Դեռ հին ժամանակներից մօտ տոհմը այս տեղերում խոշոր կալուածքներ ունէր։ Ամուսնութիւններն ու ժառանգութիւնները, շատացնելով սեպհականութիւն ունեցողների թիւը, անպայման փոքրացնում էին տարածութիւնը, բայց այնու ամենայնիւ այդ բոլոր տեղը այն ժամանակ եթէ մէկի ձեռքում չէ եղել, յամենայն դէպս մի քանիսների, որոնք ազգական են եղել։ Այդպիսով մեր բոլոր դրացիները մօտ ազգականներն էին։

Ոչ մի ամարանոց այդ ժամանակ պարապ չէր մնացել, որովհետև ոմանց տէրերը ամբողջ տարին էին ապրում այնտեղ, ոմանք էլ, ինչպէս և մենք, առաջին իսկ օրը թողին իրենց քաղաքի բնակարանները, երբ սամոսցիները եկան։ Ամարանոցում ախորժելի էր մեզ ապրել աղ-

գականների շրջանում, որովհետև քանի որ մենք քաղաքում էինք բնակվում, մենք միմեանց հետ չէինք տեսնվում, — վախենում էինք փողոց դուրս գալ։ Մեր տան դռները միշտ փակ էին. մինչև անգամ պատուհանները կիսով չափ էին բացվում, և միայն ժամանակ առ ժամանակ Զենակիսն էր մեզ այցելում։

Սովորաբար մենք տեսնվում էինք իրար հետ եկեղեցում։ Խօսակցում էինք ժամասացութիւնից յետոյ նոյն իսկ եկեղեցու մօտ։ Պասը դեռ չէր վերջացել, և յաճախ ծառների տուերի տակ ես մոտերում էի այն յուզմունքը, որով հօրս հետ գնում էինք ս. Ֆոտինիայի եկեղեցին Զմիւռնիայի նեղ փողոցներով, վախկոտութեամբ քաշուելով իւրաքանչիւր անծանօթ պատահողից։

Եկեղեցին կամ, աւելի ճիշդ, մատուռը շինել էր մօրս պապը, որ ծերութեան հասակում կուսակրօնութիւն էր ընդունել։ Շինուածքը մինչև օրս էլ զոյութիւն ունի, բայց սպառնում է, որ կարող է աւերուել։ Պատկերները, զարդարանքները, սրբազան զգեստները և անօթները մասամբ կողոպտուած են, մասամբ աւերուած են թրքերի ձեռքով, բայց իւր ժամանակին մատուռը վայելուչ կերպով սպիտակին է եղել տալիս ծառերի մէջ, իսկ ներսը — ամէն ինչ մաքուր և գեղեցիկ։ Գաւթում՝ դռան երկու կողմից եղել են երկու մարմարիոնէ նստարան։ Քանի անգամ մանդալով այդ նստարանների վերայ, ես գտնել եմ տապանաքարերի արձանագրութիւնները, որոնցով համարեա ամբողջապէս ծածկուած է գաւթի յատակը։ Այստեղ են թաղուած մեծաւ մասամբ մօրս մօտ ազգականները, այդ եկեղեցումն է նա պսակուել մօրս հետ, այստեղ էին նոքա կամենում յաւիտենական հանգիստ գտնել բայց, աւաղ, վիճակուած չէր, որ այդ իրագործուէր, և՛ իմ ոսկորներս էլ ծննդավայրումն չեն լինիլ։ Այժմ մենք բնակվում ենք և կըմեռնենք էլ ցիր ու ցան եղած զա

նաղան կողմերում։ Կենդանութեան ժամանակ մերթ այս կողմը, մերթ այն կողմը թափառելով, ստիպուած ենք լինում աքսորում մեռնել։ Մեզ տանող մրրիկը տատանեց և կտրեց այն նուիրական կապը, որ կապում էր որդոց սրտերը ծնողների գերեզմանի հետ։ Որքան ես մեծանում եմ և ազդու կերպով զգում եմ, որ յաւիտենական հանգըստութիւնը մօտենում է, այնքան էլ շուտ-շուտ եմ սարսափում, երբ մոածում եմ, որ իմ որդիքս էլ կըծերանան ինձ պէս, չճանաչելով ոչ այն տունը, որ մի քանի սերունդ է տեսել, ոչ էլ այն անկիւնը, ուր իրենց նախնիքների նշխարները ամուր սեղմուած են միմեանց մօտ։ Երբ ես ջահիլ էի, չէի մոածում դորա մասին, իսկ այժմ աւելի մեծ հաճութեամբ անձնատուր եմ լինում անցեալի յիշողութեանց։

Բայց ժամանակ է դառնալ իմ վէպիս։

Աւագ Հինգշաբթի մենք գնացինք եկեղեցի և հաղորդուեցանք։ Սքանչելի դարնանային առաւօտներից էր։ Եկեղեցուց վերադառնալով՝ փոխանակ սենեակում նստելու, ես պատշգամբ դուրս եկայ և հետս առայ իմ համեստ նախաճաշիկս։ Հէնց որ հայեացքս ձգեցի ծովի վերայ, աչքիս երևեց մի տեսարան, որ սարսափեցրեց ինձ։ Թողի նախաճաշս և վազեցի հօրս մօտ։ Նա էլ դուրս եկաւ պատշգամբ։

Մեր նաւահանգստի դիմաց երկար շարքով տատանվում էին ալիքների մէջ ահագին նաւեր, բայց օդը թափանցիկ էր, և մենք հեշտութեամբ որոշում էինք նոցա քամուց ուռած առագաստները և կողմերի մութ ստուերները։ Կարծես, թէ մօտենում էին, իսկ մի ուրիշ՝ փոքրիկ նաւերի խումբ՝ եղերքի կողքով գնում էր դէպի Սամոսի կողմը՝ դէպի մի կողքը մղուելով քամուց։ Սակայն մեծ նաւերը, կարծես մի քիչ տատանուելուց յետոյ՝ յանկարծ թողին իրենց ճանապարհը նաւահանգստում և

փոխեցին ընթացքը։ Սկզբում ես կարծում էի, թէ նոքա հեռանում են, բայց նոքա այնպէս շրջադայում էին Քիոսի դիմաց, մինչդեռ երկրորդ նաւախումբը՝ ընթանալով դէպի աջ, կամաց-կամաց ծածկուեցաւ կղզու հրուանդանի հետևում։

Դժուար չէր հասկանալ, թէ ինչ էր լինում. թրքական նաւատորմիղն եկել էր լաւ ոյժերով, իսկ Սամոսինը ապատվում էր փախուստ տալով։

Բայց ի՞նչ էր սպասում Քիոսի բնակիչներին։

Չեմ իմանում, թէ որքան ժամանակ մենք անշարժ և լուռ ու մունջ կանգնած մնացինք պատշգամբի վերայ, դէպի ծովը յառած հայեացքներով։ Վերջապէս ինձ սթափեցրեց հօրս բացականչութիւնը.

—Փախչե՛նք, փախչե՛նք։

Նա շուռ եկաւ, ես էլ—նորա հետևից։

Մեր ետևում կանգնած էին անշարժ զունատ մայրս, քոյրերս և Ադրիանան։ Նոքա էլ սարսափով նայում էին այն տեսարանի վերայ, որ մեզ ապշեցրեց։

Հայրս իսկոյն դուրս եկաւ տանից և հրամայեց, որ ես հետևեմ իրեն։ Նա կամենում էր համաձայնութիւն կայացնել ազգականների մէջ։

Նոր տանից դուրս եկանք և ահա պատահում ենք Կալանիին, մօտս մի ազգականին։ Նա տանում էր իւր տան և մէկ տարեկան աղջկան՝ ձեռքից բռնած։ Մի քանի ամիս առաջ Կալանին՝ զրկուելով կնոջից, իւր բոլոր սէրը, իւր հոգեկան ոյժերը կենտրոնացրել էր աղջկայ վերայ։ Եւ արդարև, այդ վայելչակազմ տան և մէկ տարեկան աղջիկը իւր խորիմաստ և տխրահայեաց աչքերով գրաւել էր և իմ համակրանքս գիւղը գալուց նոյն իսկ առաջին օրից։

Կալանին էլ գալիս էր հօրս մօտ նոյն դիտաւորութեամբ, ինչ որ մեզ սոխպեց տանից դուրս գալ։ Մենք

միասին գնացինք դէպի եկեղեցին։ Հայրս և Կալանին ղբնում էին առաջից խօսակցելով, իսկ ես յետևից՝ տանելով Դեսպինային ձեռքիցը բռնած։ Ես նայում էի այդ անմեղ շիկահեր գլխի վերայ և ակամայ յիշում էի մեղ այնքան շշմեցնող նաւերը, ակամայ մտածում էի Թրքերի կատարած ոճիրների մասին Զմիւռնիայում և Սիգոնիայում։ Ես գնում էի լուռ-մունջ, աղջիկը՝ նոյնպէս, բայց ես զգում էի, ինչպէս նորա փոքրիկ ձեռը դողում էր բռիս մէջ և հասկացայ, որ վախենում է։ Բայց ես չէի իմանում, ինչպէս հանդստացնեմ նորան, և միայն կռացայ ու համբուրեցի նորա ձեռը։ Նա իւր կապոյտ աչքերը վերաս յառեց և դողդողջուն ձայնով հարցրեց.

—Լուկի, հօ Թրքերը մեղ կըսպանեն։

—Չէ, Դեսպինա, մի՛ վախենալ։ Մենք շուտով կը գնանք և մեզ ոչ ոք չի նեղայնիլ։

—Չէ, հայրիկիս կըսպանեն, ես հաստատ գիտեմ, նորան կըսպանեն, կըսպանեն։

Եւ աղջիկը սկսեց լայ լինել։ Արտասուքները հանդարտ գլորվում էին նորա այտերից, և նա անդադար կրկնում էր.

—Նորան կըսպանեն, կըսպանեն։

—Մի՛ լալ, Դեսպինա, մի՛ վախենալ։

Ես ուզում էի մխիթարել նորան, բայց ձայնս ինձ չէր հնազանդվում, ինձ էլ արտասուքս խեղդում էր։

Եկեղեցու դաւթում արդէն հաւաքուել էր մեր գրացիների մեծ մասը. մենք նստած էինք մարմարիոնէ նստարանի վերայ, Կալանին աղջկան նստեցրեց ծնկների վերայ և ներկայ գտնուողներից ծերագոյնները սկսեցին խորհրդակցել։

Վճիռը շուտով ընդունուեցաւ ամենքից։

Պարզ էր, որ միջոց չունէինք ընդդիմադրելու, որ Թրքերը շուտով պիտի նուաճեն Քիոսը։ Իսկ մենք լաւ

գիտենք, թէ թրքերը ինչպէս են վարվում նու աճած երկրի հետ։ Վճռուած էր, որ ամենքս կըգնանք կղզու արևելեան կողմը. իւրաքանչիւրն զէպի այն կողմը, ուր վըստահանում է ապաստարան գտնել։ Այդ կերպիւ հեռանալով թրքերից՝ մենք մտենում էինք Հարևան Պսարա կղզու ափերին, ուսկից կարելի էր փրկութիւն յուսալ։ Ճնշուած սրտով մենք միմեանց վերջին հրաժեշտ տուինք, եկեղեցի մտանք, համբուրեցինք պատկերները և իւրաքանչիւրն իւր տունը գնաց։

Այդ օրուանից ես այլ ևս չեմ տեսել մեր մատուռը։

Ճանապարհին հայրս յայտնեց ինձ, որ յոյս ունի մի քանի օրով հիւրընկալութիւն գտնել իւր ազգականների մօտ, որոնք միայնակ ապրում են իրենց կալուածքում սարի այն կողմում։

Տուն վերադառնալուց նա հրամայեց մեր պարտիզպանին մի երկու ջորի բեռնել պաշարեղէններով և վերմակներով, գնալ ծերերի մօտ, յայտնել նոցա, որ մենք գալու ենք և այնտեղ էլ սպասել մեզ։

Երբ պարտիզպանը գնաց, հայրս կանչեց ինձ իւր սենեակը, ուր նա փակուած էր մօրս հետ։ Նոքա երկուսն էլ ղբաղուած էին փողերը և թանկագին իրեղէնները պարուսինէ տոպրակի մէջ դարսելով. մի տոպրակ էլ լըքցրած ու կապած մահճակալի վերայ էր դրած։ Երբ երկրորդ տոպրակն էլ պատրաստ էր, հայրս ուսիս դրեց և ասաց, որ միւսն էլ առնեմ։ Մայրս դուռը բաց արաւ և մենք դուրս եկանք։ Մենք եկանք պարտիզի ամենախուլ տեղը։ Բեռս գետնի վերայ դրի և գնացի թիակներ բերելու։

Հայրս ինձ տեղ ցոյց տուեց հին խնձորենու սաուերի տակ և հրամայեց, որ մոքուումս լաւ պահեմ։ Սկսեցինք խոր փոս փորել։ Այնտեղ դնելով տոպրակները մէկը միւսի վերայ, փոսը լցրինք, հաւասարեցրինք գետնի հետ և, հաւատացած լինելով, որ մեզ ոչ ոք չի տեսել, գնացինք տուն։

—Տե՛ս հա՜, չմոռանաս այդ տեղը,—ասաց ինձ հայրս։ —Երբ ես մեռնեմ, դու կըլինես քոյրերիդ և մորդ միակ նեցուկը։

Դուան մեծ մենք տեսանք չորս պատրաստ էշ։ Ադրիանան շտապեցնում էր պատրաստությունները, որ շուտով գնանք։ Վերջապես մայրս և քոյրերս նստան էշերի վերայ, և մենք ճանապարհ ընկանք։ Ես և Ադրիանան ոտով էինք գնում էշերի յետևից։

Այդ միջոցին հեռուից լսուեցաւ թնդանոթների պայթիւն։ Մենք լուռ ու մունջ միմեանց նայեցինք։ Պայթիւնները կարճատև դադարումից յետոյ կրկրվում էին։

—Վա՜յ Քրիստին,—բացականչեց հայրս։

Նստունակում էինք մեր ճանապարհը։

Մեր գնացած դիւղը ձորում էր գտնվում։ Հորիզոնը այնտեղ մեծ չէր, և ծովը չէր երևում։

Այնտեղ անդորր առանձնութեան մէջ ապրում էին հօրս երկու հօրեղբայրը։ Նոցանից մէկը շատ խելօք և փորձառու մարդ էր, երկար տարիներ իւր առևտրական գործերի պատճառով անց էր կացրել Ամստերդամում։ Այնտեղ նա ծանօթացել էր Կօրէասի հետ, որ այդ ժամանակ նոյնպէս վաճառականութեամբ էր պարապում։ Նա պահպանել էր իւր յարաբերութիւնը և նամակագրութիւնը այդ ականաւոր գիտնականի հետ և ինքն էլ պարապում էր գրականութեամբ։ Այս բոլորը նշանակութիւն էր տալիս նորան համաքաղաքացիների աչքում։ Լուսաւորուած մարդիկ այն ժամանակ քիչ կային, դորա համար էլ աւելի մեծ յարգանք էին վայելում, քան թէ այժմ, և արդարև նոքա արժանի էին այդ յարգանքին։ Ինչ որ նոքա գիտէին, գիտէին հաստատ և մեծ անձնազոհութեամբ էին աշխատում յոյն ազգի լուսաւորութեան համար։

Մանկութիւնից ես չէի տեսել նորան, բայց այն ժա-

մանակից ես խորին յարգանք էի տածում դէպի նորա անձնաւորութիւնը։ Վերջին անգամ՝ կարճ ժամանակ նոցա տանը մնալով, ես աւելի ևս գնահատեցի այդ ծերունու խելքն ու արժանիքը, որովհետև նա զուշակեց այն բոլոր աղէտները, որ պիտի հասնէր Ֆիոսին, — սպանութիւններ, աւերումներ, գերութիւն, հալածանք, աքսոր և ցիր ու ցան անել։

Նա նախատում էր ապստամբութիւնը, անժամանակ էր համարում նորան և հետևանքից երկիւղ էր կրում։ Բայց նա ծեր էր։ Առանձնութեան մէջ նա անվում և զեկավարվում էր իւր բոլոր գործերում բացառապէս գրքերից քաղած իմաստութիւններով և իւր նախկին կենսական փորձերի դասերով։ Երբ և լինէր ապստամբութիւնը, նա չէր կարող բորբոքուել առանց իւր երկու ֆակտորների. երիտասարդութեան յանդգնութեան և եռանդի։ Իրենց բնութեամբ ծերունիները միշտ հակուած են դէպի անգործութիւն և չափաւորութիւն։ Նոքա միշտ քարոզում են համբերութիւն և զգուշութիւն։ Այժմ, երբ ես էլ ծեր եմ, ես այդ զգում եմ և հասկանում։ Միւս եղբայրը խուլ էր և սակաւ էր խօսում։ Նա այնքան մրռայլ և մելամաղձոտ էր, որ կարծես աշխարհից տեղեկութիւն չունէր։ Նորա միակ պարապմունքը և զբաղմունքն էր քանդակագործութիւն անել փայտի վերայ։ Ես մինչև այսօր էլ ունիմ պահած նորա ինձ ընծայած Աւետման պատկերը։

Ծնողներս ի զուր էին աշխատում համոզել երկու եղբայրներին փախչել մեզ հետ։ Խուլը բացառապէս զբաղուած էր շարժում, իսկ մեծն ասում էր.

— Մենք առանց այն էլ քիչ պիտի ապրինք, — ի՞նչ կարիք կայ յուզուել և վրդովուել մի քանի օրուայ համար։ Դուք պարտականութիւն ունիք ձեր որդոց վերաբերմամբ, ուրեմն և փախէք։

Երկու ծերունիք այդպէս տանը մնացին։

Ի՞նչ պատահեց նոցա։ Ի՞նչ վիճակ ունեցան նոցա այդեպանը, նորա որդիքը, նոցա պատաւ նաժիշտը... Նոցա այլ ևս ոչ ոք չտեսաւ, և ոչ ոք էլ նոցա մասին բան չիմացաւ։

Այդեպանը իւր որդկերանցով, երևի, որպէս սարուկ վաճառուեցան և այժմ որ և է Թուրքի հողն են վարում, իսկ ծերունիները, մանաւանդ խուլը, ոչինչ գին չէին կարող ունենալ. ո՞վ կարող էր գնել նոցա, ո՞ւմ էին նոքա հարկաւոր։ Այդպիսի գերիներին չեն ծախում, այլ սպանում են։ Ցայ Աստուած, որ նոցա տանջանքը երկարատև չլինի։ Գոնէ նոքա ամուսնացած չէին, ոչ այրիներ, ոչ էլ երեխաներ թողին։

Ինչ մեզ է վերաբերում, միշտ յիշում էինք նոցա, և մինչև այժմ իսկ ես չեմ կարողանում հանդիստ խօսել նոցա մասին։

Նոցա մօտ միայն չորս օր մնացինք մենք և այդ միջոցում կարողացանք իմանալ, թէ ինչ է կատարվում կղզու վերայ։

Նախ քան նաւերը նաւահանդիստ են կարողացել մտնել, թրքերը դուրս են եկել բերդից, տարածուել են քաղաքի զանազան մասերում և սկսել են իրենց խստութիւնները։ Երբ փախչելիս մենք թնդանօթի պայթիւններ լսեցինք, դա նշանակում էր, որ նաւով եկածները դուրս էին եկել ափը, հետևաբար և տեղացել էր դահիճների թիւը։

Միւս օրը ծովը ծածկուեցաւ մակոյկներով. նոքա ասիական ափերից բերում էին անսանձ բարբարոսներին, որոնք այդքան երկար սպասում էին կողոպուտների և կատաղութիւնների։ Հէնց այդ ժամանակ դժբաղդութիւնը հասնում է իւր գագաթնակէտին։ Քաղաքը քիչ է լինում կողոպուտի համար, և նոքա իրենց վայրենի կատաղու-

թեան յաղուրդ տալու համար յարձակվում են գիւղերէից վերայ։

Ս. Յարութեան տօնին տեղի ունեցան կատաղի գազանութիւններ և Մինեսեան վանքի կատարեալ աւերածութիւնը։ Ո՛չ մի ընդդիմադրութիւն չկար։ Ապստամբող բնակիչներից որոնք չէին փախել—դէս ու դէն ցրուեցան և թաղնուեցան։ Միայն կողոպուտի հարստութիւնը զսպում էր մի քանի թրքերին, որ ամեն ինչ չաւերեն, բայց որքան նուաղում և սպառվում էր այդ աւարը, այնքան էլ ծաւալվում էր նոցա գործունէութեանց ասպարէզը։ Մենք լսեցինք, որ թրքերը, քանի գնում է, աւելի էին մօտենում այն տեղին, ուր մենք էինք թաղնուած։

Ասացի, թէ մենք լսեցինք, որ մօտենում էին, բայց այդ խօսքերով դեռ չէ կարելի արտայայտել այն սարսափը, որ մենք զգում էինք։ Երևակայութեամբ պէտք է լրացնել իմ պատմութեան թերի կողմերը, կենդանութիւն տալով տեսարաններին և ապաւորութիւններին, որոնց ես այժմ եմ մտաբերում։ Ուրիշ բան է կարդալ՝ հանգիստ նստած գրասենեակում, կողոպուտների մասին, որոնք կատարուել են շատ առաջ, հեռաւոր երկրում, այլ բան է լսել, թէ ձեր ծանօթները, ազգականները, համաքաղաքացիները սպանուած են և կամ վաճառուած որպէս ստրուկ. թէ այն տները, որ դուք այցելում էիք, կամ աւերուած են, կամ կողոպտուած. լսել, թէ այս ինչ ոքը սպանուած է, թէ այն ինչ ոքի կիները գազանացած թրքին ղոհ է գնացել, թէ լսել են նորա դառնագին աղաղակները։ Դուք ճանաչում էք նորա ձայնը։ Յաճախ նա մեղմ և ախորժելի կերպով փայփայել է ձեր լսելիքը, իսկ այժմ դուք տեսնում էք նորան յետ ընկած գլխով, խաճուած մազերով, տեսնում էք, ինչպէս նորան գերի են տանում, այսինքն՝ անարգելու են տանում։ Դուք մտածում էք նորա ամուսնու վերայ, որդկերանց մասին և գիտէք, որ

դուք էլ հեռու չէք այդ բոլորից ձեր ծերացած ծնողների հետ միասին, ձեր կոյս քոյրերով հանդերձ։ Եւ ամեն մի վայրկեան դուք սպասում էք ձեր առաջ լպրիշ հալածչին... Աստուած փրկէ ձեզ ընթերցող այդպիսի փորձանքներից։

Այդ լուրերը մեկը մյուսի յետևից հասնում էին մեզ և այն տեղը հասցրին, որ մենք այլ ևս անկարող եղանք հասկանալ, թէ որքան խոշոր է դժբաղդութիւնը։ Սարսափի ճնշման ներքոյ մենք շշմել էինք, և հօրեղբայրս համարեա ղօրով ստիպեց հօրս նորից փախչել մեզ հետ միասին։

Նորից մենք բեռնեցինք ջորիներ և ուղարկեցինք առաջ այդեպանին, հրամայելով նորան, որ մեզ սպասի ս. Գէորգի մօտ, այն գիւղում, որ գտնվում է կղզու արևելեան մասում, ուր, ինչպէս յիշեց հայրս, ապրում էր մի գիւղացի, որի որդուն հայրս էր կնքել։

Հրաժեշտ տալով ծերունիներին, որոնց այլ ևս մեզ վիճակուած չէր տեսնել, մենք ճանապարհ ընկանք և կէսօրից յետոյ հասանք մեր ճանապարհորդութեան նպատակավայրը, տօթից հալ ու մաշ եղած և յոգնած։

Գիւղը մտնելուն պէս մենք նկատեցինք, որ այնտեղ մի արտասովոր բան էր կատարվում։ Ամեն ինչ շարժողութեան մէջ էր, փողոցները լի էին մարդկանցով, որոնց մէջ տեղում երևում էին զինուածներ, ըստ երևութին, ոչ տեղացիներից։ Տան դռների մօտ կանգնած էին կանայք և երեխայք, որոնք նայում էին այդ խառնաշփոթութեան վերայ և տաք տաք խօսում։ Կարծես, թէ այդտեղ տօն էր, և արդարև Զատկական շաբաթն էր, սակայն բոլորի դէմքի արտայայտութիւնը բոլորովին տօնի չէր։

Հայրս մտեցաւ մի ծեր գիւղացու, որ կանգնած էր իւր տան դռան մօտ և հարցրեց իւր կնքահօր մասին։

Սակայն նորա կնքահայրը մի տարի էր արդէն որ գիւղից դուրս էր եկել։

Այն ժամանակ հայրս հարցրեց այդպեսանի և ջորիների մասին, բայց ոչ այդպեսան, ոչ էլ ջորիներ էին տեսել։

Յետոյ նա հարցրեց, թէ ինչ է ընդհանուր շարժան և շփոթութեան պատճառը և ովքեր են այդ զինուած մարդիկը։

Զինուածները սամոսցիք էին, որոնք ազատուել էին Թրքերից, իսկ նոցա մէջ տեղում Լօգոֆէտն էր։

Լօգոֆէտը, որ հալածվում էր Թրքերից, այն գիւղումն էր գտնվում, ուր մենք կամենում էինք ազատուել։ Մեր ղրուԹիւնը անտանելի էր։ Այստեղ մենք ոչ ոքի չգտանք, ում որ կամենում էինք, և մնացինք փողոցում՝ յոգնած, վաստակած, սոված և ուղեցոյցից զրկուած։

Մեղքանալով մեզ՝ գիւղացին առաջարկեց, որ ներս մտնենք իւր խրճիթը. մենք ներս մտանք և սպասում էինք այդպեսանին։ Առաւօտեանից մենք բան չէինք կերել։ Հիւրասէր գիւղացին առաջարկեց մեզ, որ վայելենք իւր աղքատիկ ընԹրիքից, բայց հայրս հրաժարուեց, չկամենալով նորան հայից զրկել։ Օրը անցնում էր, իսկ մեր այդպեսանը չէր երևում։ Քոյրերս քաղցած էին։ Հայրս ինձ ուղարկեց մի բան գնելու։ Ես դուրս եկայ խրճիթից և պատահեցայ իրարանցումի։ Արևամտին կանայք դուրս էին վազում, տանելով երեխաներին։ Նոցա հետևում էին տղամարդիկ, կցկտուր նախապասուԹիւններով իրար հետ խօսելով։ Նոքա փախչում էին գիւղից, իսկ զինուածներն աշխատում էին անցքը բռնել։ Այդ ամբողջ տեսարանը ինձ յիշեցրեց տերևների շարժումը գետնի վերայ, քանի մրրիկը դեռ չէ բարձրացել և անձրևը չէ կպցրել նոցա գետնին։

—Թուրքե՛ր, Թուրքե՛ր։ Փախէք, Թաք կացէք,— աղաղակեց մեր գիւղացին, վազելով դէպի մեր կողմը։

Ամենքս իսկոյն դուրս եկան խրճիթից, բայց դեռ բոլորովին պատրաստ չէինք փախչելու։ Ձեռաց կապած էշե-

րի թոկը բաց արի և մենք, սարսափահար փախանք, վազելով միմեանցի ետևից։

Գնացինք ամբողջ գիշերը, բայց չգիտէինք, թէ ուր ենք գնում։ Ճանապարհը երկար էր և դժուար, գիշերը սպառնալից, երկինքը մութ։ Երբեմն-երբեմն լուսինը երևում էր ամպերի միջից, իսկ մենք, քնաթաթախ, յոգնած, սոված առաջ ու առաջ էինք գնում։

Ցաճախ մենք աւելի ևս սարսափում էինք, երբ մէկը երևակայում էր, որ հրայանաձգութիւն կամ ձիու սրոփիւն է լսվում. յաճախ էլ ստիպուած էինք լինում կանգ առնելու, որ մի քիչ հանգստանանք։ Մեղանից շատերը ոտով էին գնում, խմբվում էին, խանգարում էինք միմեանց, բայց երամական երկիւղը դարձեալ ստիպում էր մեզ միմեանցից հեռու չլինել։

Լուսաբացին մենք դուրս եկանք ծովի ափը, անապատ հրուանդանը, Պսարա կղզու հանդէպ։ Այստեղ մենք յոյս ունէինք ազատուելու, բայց քամին հզօր էր, և ոչ ափին, ոչ էլ հեռու ծովում չէր երևում ոչ նաւ, ոչ էլ մակոյկ։

Ափը արդէն լի էր ուրիշ փախստականներով, որոնց նոյն յոյսն էր ձգել այդտեղ։ Հեռուից նոցա մենք ոչ տեսանք, ոչ էլ լսեցինք, այլ միայն համարեա ափ հասնելով, նկատեցինք մի խումբ մարդկանց, պառկած ձիթենիների տակ, որոնցով ծածկուած էր ափը։ Այս թշուառները գիշերն այդտեղ էին անց կացրել, երբ մենք քամու և մրրկի տակ վազում էինք այդտեղ, որպէս փրկութեան նաւահանգստ։

Մեր գալը և արեգակի առաջին շառաւիղները այդ ամբողջ ամբոխը շարժման մէջ ձգեց, և երբ մենք դեռ այնքան մօտ չէինք, որ խառնուէինք նոցա հետ, զանազանում էինք կանաց, երեխայոց և ծերերին, որոնք նայում էին մեզ, և նոցանից մի քանիսը արդէն սկսում էին ճանաչել մեզ...

Այն ժամանակ մենք կանգնեցինք։ Կանայք հշերից ցած իջան, և մենք ամենքս նստանք ծառի տակ։

Շատ ժամանակ է անցել դորանից յետոյ։ Ես շատ բան քաշեցի, շատ բան կրեցի, բայց և այնպէս չեմ մոռանալ այն ժամանակուայ յոգնածութիւնս։ Քսան և չորս ժամ ես գնացի դատարկ փորով։ Բոլորովին ուժասպառ ընկայ գետնի վերայ՝ մօրս մօտ։ Գլխումս ոչ մի միտք չկար։ Ես զգացի, որ մայրս ձեռը դրաւ ճակատիս։ Աչքս բաց արի և գլխիս վերայ տեսայ նորա սիրուն գլուխը։ Մենք միմեանց բան չասացինք, բայց նա կռացաւ, համբուրեց ինձ, և ես նորից աչքերս փակեցի։

Հայրս գնաց զիմաւորելու գէպի մեր կողմը եկողներին։ Շուտով նա վերադարձաւ մի ծերունու հետ, որին ես չէի ճանաչում։ Մայրս իսկոյն ճանաչեց, առաջը վազեց և կրծքին սեղմեց։ Դա նորա հօրեղբայրն էր։

Մինչև այդ ժամանակ մեզանից ոչ ոք մի կաթիլ արցունք չէր թափել։ Վտանգի մերձակայութիւնն և անխուսափելի լինելը, անընդհատ շարժումը, սաստիկ տպաւորութիւնների շատութիւնը, — այս բոլորը չափազանց գրգռել էին մեր ներդային սիստեմը։ Բայց այժմ խեղճ մայրս՝ գլուխը ծածկած ծերունու լանջի վերայ, ամբողջապէս անձնատուր էր եղել իւր վշտի արտայայտութեան։ Նորա կականը սիրտս էր ճմլում։ Քոյրերս՝ նոյնպէս արտասուելով, շրջապատել էին նորան. հայրս ձեռքերով ծածկել էր երեսը, Ադրիանան մատներն էր կծոտում, իսկ ես զգում էի, որ շունչս կտրվում է և աչքերս մթնում են։

Ծերունին մօրս գետնին նստեցրեց և գնաց մեզ համար ուտելու բան գտնել։ Նա վերադարձաւ, հետը բերելով մի քանի կտոր թարմ պանիր, — ահա այն բոլորը, ինչ որ կարողացել էր գտնել։ Թշուառների այդ խմբում մի կտոր հաց էլ չէր կարելի գտնել։

Բայց նաև դեռ չէր երևում։ Քամին չէր դադարում,

ծովը ալէկոծվում էր։ Մնացինք ափում առանց օգնութեան։ Եթէ թրքերը վրայ հասնէին, մեր միակ ելքը կը լինէր՝ մեզ ծովը նետել, իսկ ամէն մի լոպէ սպասում էինք, որ նոքա կարող են գալ։

Խորհուրդ տեսանք մօրս հօրեղբօր հետ և վճռեցինք գնալ ապաստարան որոնել Մեստայում։ Դա հարևան գիւղն էր, և մենք կամենում էինք սպասել այնտեղ դէպքի հայրենիքից փախչելու համար։

Կրկին մենք ճանապարհ ընկանք և կարճ միջոց զբնալուց յետոյ հասանք Մեստա գիւղը ամենացաւալի գրութեան մէջ։

IX.

Քիոսի գիւղերը, մանաւանդ նոքա, որոնք գտնվում են հարաւային ափին, այնպէս լաւ պատսպարուած են, որ մի-մի փոքրիկ բերդ են ներկայանում։ Եւ այդ ոչ թէ պատերի և պարիսպների շնորհիւ է, այլ շինութիւնների առանձին դասաւորութեամբ։ Տները չորս կողմից շինվում են միմեանց պինդ կպած և այդպիսով յետին պատերը ամուր պարիսպ են կազմում, իսկ դռները այդ տներում միշտ շինվում են գիւղի ներսի կողմից։ Ներսի շինութիւնները միմեանց մօտ սեղմուած ու կպած են լինում։ Կենտրոնական փողոցը նոյնպէս մի ելք ունի, երկաթէ վանդակով։ Փողոցի միւս ծայրը կպած է լինում պատին, ինչպէս ասացինք, կազմուած է լինում տներից։

Գիւղի մէջ տեղում բարձր կանգնած է բուրջը։ Այդտեղ մտնելու համար կարելի է միայն թոկերի և սանդուղների միջոցով, որովհետև մուտքը շատ բարձր է շինած։ Այդպիսով այդ բուրջը յաջող ապաստարան է և համարվում է գիւղի ակրոպոլիսը։ Ընդհանրապէս այդ գիւղերը յիշեցրին ինձ Զմիւռնիայի քարվանսարայը, այն

զանազանութեամբ միայն, որ նոցա շուրջը խեղդուկ քաղաքի տեղ կանաչազարդ դաշտեր էին փռուած, և բնակիչները զունատ, վատոյժ առևտրականներից չէին, այլ ուժեղ, առողջ գիւղացիներ։

Այդ տեսակ էր և Մեստան։ Նորա բնակիչները մեզ սրտաբաց ընդունեցին և տուին մեզ մի չքոնուած տուն։ Այդ բնակարանը մենք բաժանեցինք մօրս հօրեղբօր և էլի երկու ուրիշ ընտանիքների հետ, որոնք մեզ պէս ընդհանուր թշուառութեան էին ենթարկուած։ Բազմատեսակ և շատ զգալի զրկանքներ էինք կրում, բայց և այն ժամանակ դժուար էր մոռանալ կատարեալ բաւականութեան մասին։ Միայն մոռանում էինք, թէ ինչպէս անենք, որ կեանքներս վտանգից ազատ պահենք, իսկ թէ որպիսի կեանք — դա երկրորդական հարց էր։ Կեանքի ամեն մի պիտոյքը, մինչև անգամ հացը, մեծ դժուարութեամբ էր ձարվում, և մեր գլխաւոր կերակուրներն էին պտուղներ և ընդեղէններ։

Երկիւղի և յուսոյ մէջ ենք ապրում։ Պսարա փախչելու մասին մոռանալն անգամ աւելորդ էր, այնտեղից եկած լուրերը ամենաանմխիթարականն էին։ Պսարան արդէն փախստականներով լի էր, նորա բնակիչներին արդէն դժուար էր կերակրել այդպիսի ստուար բազմութիւն, և նոքա չէին կարող, չէին էլ կամենում ընդունել նորերին։ Ջրի պակասութիւն էր արդէն, իսկ միւս կողմից այդքան ահագին ամբոխի մի փոքրիկ տարածութեան վերայ համախմբուելը հիւանդութիւններ էր յառաջացրել, որ սպառնում էր տարափոխիկ դառնալու։

Մեստայ գալուց իններորդ օրը մենք մոռանացինք, որ վերջացել են մեր թշուառութիւնները։ Գիւղ եկան երկու հիւպատոս ձիթենու ոստերով։ Նոքա մեզ ներկայացրին ստորագրութեան համար երդումն, խոստանալով, որ փաշան կատարեալ ներումն կը շնորհէ, եթէ մենք հնազանդուենք։

Մենք երկու ձեռով պատրաստ էինք ստորագրելու, օրհնելով հիւպատոսների բարութիւնը։ Մենք աղատ շունչ քաշեցինք, կարծելով թէ վերջապէս հալածանքն էլ չի շարունակուիլ և մենք կարող ենք անվախ վերադառնալ դէպի մեր օջաղը։

Հետևեալ օրը առաւօտեան մենք ճանապարհ ընկանք։

Ցոյսը յաղթեց երկիւղին, և մենք գնում էին ուրախ ուրախ խօսելով և ամենափայլուն ենթադրութիւններ անելով։

Մեր ուրախութիւնը, որպէս և մեր ճանապարհորդութիւնը, երկարատև չեղաւ։

Հեռուում մենք արդէն տեսնում էինք էլատա գիւղը, ուր մոտիր էինք հանդստանալ և կազդուրուել։ Արեգակը սաստիկ այրում էր և մենք, ի նկատի ունենալով որ շուտով հանդստութիւն պիտի վայելենք, արագացրինք մեր քայլերը. բայց համարեա գիւղը մտնելիս լսեցինք կանանց լայ ու կոծ և աղաղակներ։

Կանգնեցինք։

Հօ թրքեր չե՞ն այստեղ, —եղաւ մեր առաջին մտածմունքը։

Սկսեցինք ականջ դնել։ Այո՛, կանանց սուգ ու կոծ էր։ Գնացինք գիւղի անմարդ փողոցներով դէպի այն կողմը, ուսկից դալիս էին աղաղակի ձայները, և շուտով եկեղեցի հասանք։ Բոլոր բնակիչներն այնտեղ էին։

Սանդուղքներով մէկը միւսի եաւիից ներս էին տանում երկու դագաղ, շրջապատուած լալկան կանանցով։

Երբ յուղարկաւորութիւնը ներս մտաւ եկեղեցի, ես դիմեցի տեղացիներից մէկին և հարցրի, թէ ում են թաղում։ Արտասուալից աչքերով նա պատմեց ինձ, թէ մի խումբ թուրք՝ առաւօտեան գիւղից դուրս պատահելով երեք երիտասարդի, հրացաններ է արձակել նոցա վերայ և շարունակել իւր ճանապարհը։ Երիտասարդներից մէկը

աղատուել է և եղելութեան մասին իմաց տուել, իսկ միւս երկուսը տեղն ու տեղը սպանուել են, և այժմ նոցա թաղում են։

Ահա թրքերի տուած խոստումը և մեր յոյսերը։

Մենք Մեստա վերադարձանք բոլորովին հակառակ տրամադրութեամբ, քան դուրս գալիս էր։

Ամենքը զարմացած մնացին, որ մենք այդպէս շուտ վերադարձանք։ Պատմելով Էլատում մեր տեսած պատկերը, ամենքը սաստիկ յուզուեցան։ Նախկին սարսափը վերսին կտրեց մեր նորածին յոյսը։

—Փախչե՛նք, փախչե՛նք,—գոչում էին կանայք։

Երեխաները լաց էին լինում։ Ես չէ կարողանում մոռանալ սանդուղների վերայ տեսած այդ երկու դագաղը, և ականջումս էին անընդհատ նոցա ուղեկցող կանանց սուգն ու կոծը։

Նոյն օրը մօրս հօրեղբայրը, փողի և առատ խոստումների շնորհիւ, համոզեց մի երիտասարդ գիւղացու, որ մի կերպ նամակ հասցնէ Պսարայում ապրող իւր բարեկամներից մէկին։

Այդ նամակով նա խնդրում էր միջոց տալ մեզ կղզուց դուրս գալու։

Ըստ սովորութեան հետևեալ օրը ամենքս հաւաքուեցանք մի տեղ։

Շեմքերին և սանդուղներին նստոտած, մենք խոհրդակցում էինք, ինչպէս և միշտ, թէ ինչ անենք, յայտնում էինք մեր սպասելիքը և հաշվում էինք, թէ Պսարայից երբ պատասխան կըստանանք։

Միայն Ապրիանան մեզ հետ չէր։ Նա գնացել էր մոտակայքը արօտ հաւաքելու, ինչպէս և մի քանի անգամ արել էր, որ բաղմատեսակութիւն տայ մեր աղքատիկ կերակրին։ Բայց այսօր ինչ որ ուշացել է, և մայրս շուտ շուտ դուռը բաց էր անում և անհանգստութեամբ փո-

ղոց էր նայում։ Մեր ընտանիքի համար Աղրիանան Նախախնամութեան պէս մի բան էր։ Կատարեալ անձնուրացութեամբ նա հոգս էր քաշում մօրս և քոյրերիս մասին, առ հասարակ և ամենքիս մասին։ Նա ամեն բանի վերայ մտածում էր և ամեն բան էլ կարողանում էր անել։ Ամեն օր նա ուտելու բան էր գտնում, աղբիւրից ջուր էր բերում, ամենքիս համար անկողին էր պատրաստում յարդից և հին գորգերից։ Նա էր արտաքին լուրեր բերողը, որովհետև անդադար զիւղացիների հետ յարաբերութիւն ունէր։ Նորա եռանդը անզսպելի էր, հոգու պարզութիւնը — անփոփոխ, և յաճախակի նա կարողանում էր մեր ժպիտը յարուցանել, չնայելով որ մեծ յուսահատութեան մէջ էինք։

Ժամանակն անցնում էր, և մօրս անհանգստութիւնը աւելի ևս սաստկանում էր։ Ես չէի կամենում աւելի անհանգստացնել մօրս, թէ երկիւղ եմ կրում, որ մի բան պատահած լինի, թէև Ֆնացածներն էլ նոյն կարծիքի էին։ Ի՛նչ պատահած պիտի լինի Աղրիանային, չլինի՞ թէ...

Ցանկարծ նա երևում է դուռնում, դողդողալով, խրճրճուած մազերով, պատռտած շորերով, բայց արիւնագանգ լանջով։ Այդ բոլորը ցոյց էր տալիս, որ նա նոր միայն դուրս է պրծել սարսափելի կռուից։ Նորա վերայ սարսափ և ամօթխածութիւն էր երևում։ Մայրս վազեց, և երբ տեսաւ նորա անմիտ դէմքը, իսկոյն հասկացաւ, թէ ինչ է եղել...

—Թրքե՛ր, թրքե՛ր,—բացագանչեց նա և ընկնելով աղջկերանց վերայ, ղրկեց նոցա այնպէս, կարծես թէ կամենում էր պաշտպանել նոցա մինչև վերջին շունչը։

Աղրիանան հևալով կանգնած էր դռան շեմքում, մի ձեռով շրջանակն էր բռնել, իսկ միւսով ցոյց էր տալիս ելքը։ Այնպէս էր երևում, թէ նա չէ կարող և մի խօսք ասել բայց արհաւիրքը ասաց մեզ նորա խօսքերը։

—Փախէք, թաք կացէք,—ասում էր նորա ամբողջ էութիւնը։

Միանգամից դուրս թռանք փողոց։ Ի՞նչ անենք։ Ո՛ւր փախչենք։ Բնազդմամբ մենք վազեցինք դէպի ելքի հակառակ կողմը, մոռանալով, որ մի ելք է և նորանից հեռանալով՝ կապում ենք մեր փախչելու ճանապարհը։ Սակայն այդպիսի բոպէներին մարդ չէ դատում։

Երբ մենք սարսափահար փախչում էինք, չիմանալով թէ ուր և ինչի համար, մեզ խղճաց մի պառաւ կին, որ կանգնած էր մի համեստ տան շեմքին։ Նա պարզեց մեզ իւր ձեռը և բացականչեց.

—Այստե՛ղ, քրիստոնեաներ, թաղնուեցէ՛ք այստեղ։

Ամենքս դիմեցինք դէպի այդ բարի կնկայ կողմը և գնացինք նորա ետևից։ Ինքը Նախախնամութիւնն էր նորան կանգնեցրել մեր ճանապարհին։ Մեր կեանքը, մեր փրկութիւնը նորան ենք պարտական։ Դորանից յետոյ ես էլ չտեսայ նորան, բայց նորա բարի դէմքը միշտ մնաց յիշողութեանս մէջ, և ես միշտ օրհնում էի նորա յիշատակը։ Թո՛ղ Աստուած պահպանէ նորան հանդերձեալ կեանքում։

Տան յետևում, բայց աղբարի խորքում, կար մի գոմ։ Հէնց այդտեղ մեզ թաղցրեց բարի կինը։ Նորա կովերը ոչ այդ օր երեկոյեան, ոչ էլ հետևեալ օրերը եկան խլելու մեզանից իրենց բնակարանը։ Թրքերը ո՛չ միայն կանանց և երեխաներին էին կողոպտում և, խլելով խեղճ պառաւի կովերը, մեծ ծառայութիւն արին մեզ։

Գոմի մուտքը նեղ էր և մութ։ Պատուհան կամ լուսամուտ չունէր, այդ պատճառով էլ, երբ դռները փակ էին լինում, այնտեղ խոլ խաւար էր տիրում և գարշելի հոտ։

Այդ ծակում մենք չորս օր անց կացրինք, իսկ մենք տան և ութ հոգի էինք։ Առաջին իսկ օրը երեկոյեան

բարի պառաւը բերաւ մեզ մի տոպրակ արմաւ, իսկ խաւարին ընտելանալուց յետոյ, մենք տեսանք, որ անկիւնում մի դոյլ կայ ջրով լի՝ կովերի համար: Այդ արմաւների և ջրի շնորհիւ մենք քաղցից ու ծարաւից չմեռանք:

Պատերից մէկին ամրացրած տախտակներից մէկի վերայ մենք տեսանք յարդ, փռեցինք նորան գետնի վերայ, որպէս զի կանայքն ու երեխայքը կարողանային յարդի վերայ պառկել և ոչ թէ գարշահոտ աղբի:

Մեր ապաստարանից, մերթ հեռուից, մերթ մօտից մենք լսում էինք Թրքերի կատաղի ձայները և քրիստոնեաների աղաղակները:

Մանաւանդ վերջին գիշերը Թրքերը մեզանից շատ մօտ էին: Նոքա գիշերը անց կացրին նոյն իսկ պառաւի տանը, և մենք կարողանում էինք լսել նոցա խօսակցութիւններն ու պատմութիւններն իրենց արած աւազակային սխրագործութիւնների մասին:

Նոյա գլխաւոր նպատակն էր բռնել Թաք կացող փախստականներին: Տղամարդկանց նոքա սպանում էին, իսկ կանանց և երեխաներին գերի էին տանում: Գիւղացիներին նոքա մեղքանում էին, ոչնչացնում էին միայն անասուններին ու կենսական պաշարները և հարուածներով ու հայհոյանքներով էին հիւրասիրում:

Սովորաբար Թրքերը գիւղերում երկար չէին մնում, բայց ամեն օր երևում էին խմբեր, որոնք բաւականին կողոպտելուց և խայտառակութիւններ անելուց յետոյ՝ գնում էին, որ ուրիշներին ասպարէզ տան: Մենք սպասում էինք, որ վերջապէս նոքա կըկշտանան աւարառութիւնից և զոհերի պակասութիւնից կըդադարի այդ երկարատև հալածանքը, և աղաչում էինք Աստուծուց, որ մինչ այդ ժամանակը մեզ չնկատեն: Ինչպէս նկարագրեմ այդ անվերջ օրերի արհաւիրքը: Ոչ ոք մեզանից բերանը բաց չէր անում: Միայն Աղրիանան էր շարունակ լաց լինում

և պատահում էր, որ նորա կրծքից դուրս էին թռչում զսպած հառաչանքներ։ Այդ միջոցին հայրս հրամայում էր լռել, ասելով.

—Ի՞նչ է, կամենում ես ամենքիս կոտորել տալ։

Այն ժամանակ Աղրիանան դլուխը խոնարհեցնում էր ձեռների մէջ և դադարում հեկեկալուց։ Մայրս մօտենում էր նորան մխիթարելու, իսկ նա դառնութեամբ մերժում էր այդ մխիթարանքը։

—Ինձ ձեռ մի՛ տաք,—ասում էր նա,—ձեռ մի՛ տաք. դուք կարող էք պղծուել։

Խե՜ղճ աղջիկ։ Նորա մռայլ յուսահատութիւնը ակներև կերպով ցոյց էր տալիս, թէ ինչ վիճակ է սպասում և միւսներին, եթէ թրքերը բռնէին մեզ։ Ողջ վերջին գիշերը մենք անց կացրինք մռայլ սարսափի մէջ, որովհետև տաճիկներից մեզ միայն մի դուռ էր բաժանում։ Առաւօտեան դէմ ամեն ինչ հանդարտեցաւ, բայց զիւղում էլի աղմուկ էին հանում։ Ժամանակն անտանելի դանդաղ էր անցնում։ Կըվերադառնա՞ն արդեօք թրքերը և մի գիշե՞ր էլ անց կըկացնեն այդ տանը։ Այդ հարցը մանաւանդ մեզ հետաքրքրում էր, որովհետև ուժասպառ էինք լինում։

Կէսօրից յետոյ մենք լսեցինք, որ նորա պատրաստվում են գնալու։ Մենք ծպտուն չէինք հանում, սպասելով մինչև որ կըգնան, երբ յանկարծ մեր դռան մօտ բարձր արտասանած այս խօսքերը լսեցինք.

—Բայց տեսնենք, հօ բան չկա՞յ այստեղ։

Երեսս խաչակնքեցի։ Ճակատիս սառը քրտինք երևեցաւ։ Դուռը ճռռաց, և երևեց թրքի սարսափելի կերպարանքը։ Մի ձեռին բռնել էր մերկացրած սուր, միւսով՝ մահակ, որի ծայրից կախած էր լապտեր, որ լուսաւորում էր թէ նորա, թէ միւս տաճիկների դէմքերը, որոնք սովալլուկ նայում էին դէպի մթութիւնը։ Ես նստած էի դռան հանդէպ, բայց և այնպէս խաւար ստուերի տակ։

Եթէ հազար տարի էլ ապրէի, այդ վայրկեանը չէի մոռանալ։ Տան և ինն մարդու շնչառութիւնը չէր լսվում, որոնք միմեանց էին սեղմուել։

Թուրքը մի քայլ առաջ եկաւ։

Նորա ոտների տակ ծփաց ջրալի աղբը։

Նա սարսափելի հայհոյեց և ոտը յետ քաշեց։

— Դէ՛, այստեղ բայի աղբից բան չկայ,—ասաց նա յետոյ։— Գնա՛նք։

Դուռը աղմկով յետ փակուեցաւ։

Մենք ազատուած էինք։

Մի թեթև աղմուկ, շնչառութիւն կարող էր մեզ մատնել, բայց Տէր Աստուած հաճեցաւ պահպանել մեր կեանքը։ Մեր փրկութիւնը այդ բոպէին լաւ նշան էր երևում մեզ, և մենք աւելի ևս մեծ հաւատով սպասում էինք մեր փորձանքների վախճանին։

Մեր յոյսը խաբուսիկ չէր։ Նոյն օրը երեկոյեան, գիշերը դեռ չհասած, դուռը նորից բացուեցաւ, բայց այս անգամ բարեկամի ձեռքով։ Դռան մէջ երևեցաւ այն գիւղացին, որին մօրս հօրեղբայրը ուղարկել էր նամակով։ Զգիտեմ, թէ ինչպէս նա կարողացաւ կատարել այդ յանձնարարութիւնը և ինչպէս էր կարողացել գտնել մեզ։ Նա մեզ լուր բերեց, թէ Պասրայի նաւը սպասում է մեզ անապատային ծոցում, գիւղից ոչ շատ հեռու, և ասաց, թէ պատրաստ է մեր ուղեցոյցը լինել։

Գիշեր ժամանակ, Թրքերից վախենալով, ապաստի անյայտութիւնը, փախուստի վտանգը և մեր նոր փախուստի յիշողութիւնը,—այս բոլորը մեզ մոռացել տուեց, բայց և հնալով այստեղ մենք անպայման վաղ թէ ուշ պիտի կորչէինք, իսկ եթէ գնայինք, դեռ կարող էինք ազատուել։

Կամացուկ, միմեանց ձեռքից բռնած, մենք գնացինք դէպի ելքին հակառակ գիւղի միւս ծայրը։ Դարպասից

մենք խոյս տուինք, վախենալով, չլինի թէ թրքերը սպասում լինեն այնտեղ։ Մեր ուղեցոյցը միջոցներ գործ դրեց. նա մեզ մի տուն տարաւ, և մենք այնտեղ պատուհանից դուրս եկանք։ Տղամարդիկ առաջ թռկով ցած իջան, իսկ յետոյ ձեռով բռնեցին կանանց և երեխայոց։ Ուղեցոյցը ամենից վերջը ցած իջաւ և առաջ ընկաւ։

Տարածութիւնը աննշան էր, բայց ամեն մի ձանապարհորդութիւն դժուար է, երբ չես իմանում, թէ ուր ես գնում, երբ իւրաքանչիւր քայլափոխում սպասում ես, որ հալածողիդ կըհանդիպես, և բայի այդ, երբ այդտեղ էլ ծերեր և երեխաներ կան։

V.

Դեռ նոր էր լուսանում, երբ մենք հասանք բլուրների մէջ թաղնուած ծոյը, ուր մենք յոյս ունէինք գտանել փրկութիւն։ Անորոշ սպիտակագոյն գիծը հորիզոնում նախագուշակում էր, որ շուտով արեգակը պիտի ծագէր։

Զառ ի վայր բլրի սառրատում, որի գագաթին մենք կանգ առանք, ափն էր սկսում, իսկ ապա ծովն էր սիրուվում։ Խաղաղութիւն էր, մինչև անգամ ալիքների ձայնը չէր լսվում։ Հեռուում երևում էր մի նաւ։ Ինքը նաւը չէր երևում, բայց նայելով այն ուղղութեամբ, որ ցոյց տուեց մեր առաջնորդը, կարելի էր նկատել երկու կայմ։ Առագաստները արձակած էին և կարծես, թէ նաւը մտնում էր։ Մենք սկսեցինք առաջ քայլել և մի քանի բոպէից ծովեղրում էինք։

Նաւը Պատրայից բացառապէս մեզ համար չէր եկել։ Նորա գլխաւորը դեռ երեկոյեան աշխատել էր լուր տարածել, որ եկել է, և փախստականների խմբեր էին շրջակայ

գիւղերից հաւաքվում ծովեզերը։ Երբ մենք եկանք, այնտեղ բաւականին ժողովուրդ կար արդէն, որ և աւելանում էր նորանոր փախստականներով։

Բարեբաղդաբար առաջին եկողները նշան էին տուել նաւին, այնպէս որ իրօք մնաենում էր նաւահանգստին, ինչպէս ես նկատեցի բլրի գագաթից։

Բոլորի հայեացքը դէպի ծովն էր ուղղած։ Ափին տիրում էր կատարեալ խաղաղութիւն։ Ամենքը լարուած ականջ էին դնում և միմեանց վերայ նայում։ Այնքան հանդիստ էր, որ կարելի էր լսել նաւի կողովի ճռռոցը, լսվում էր և թիակների շրփոցը, երբ նոքա ջուրն էին կտրում. բայց ահա նաւից ցած իջեցրին մի մակոյկ, նա մնացաւ և ափի խաղաղութիւնը տեղի տուեց աղմուկի։ Ամենքը շտապում էին մակոյկը նստել։ Ամենքը ուզում էին միաժամանակ նստել, բայց դա անկարելի էր, որովհետև մակոյկը բոլորովին մեծերից չէր։

Լսուեցաւ ղեկավարի զել ձայնը.

—Մի՛ խռնուէք և մի՛ շտապէք, ամենքիդ կ՚առնենք, ոչ ոքի չենք թողնիլ։

Այդ միջոցին նաւաստիները զսպում էին խելքը կորցրած ամբոխին։

Մակոյկը հեռացաւ առաջին խմբով։ Ափում մնացին ղեկավարը և երեք նաւաստի։

Մակոյկը անդադար նաւից գալիս էր ափը և յետ գնում։ Ափում արդէն քիչ ժողովուրդ էր մնացել, կէսից աւելի նաւն էին տարել, բայց մնացողների համբերութիւնը հատնում էր։ Արդէն բոլորովին լոյս էր, թէև արեգակը դեռ դուրս չէր եկել։ Մեր հերթը մնաենում էր, և մենք յառել էինք մեր աչքերը վերադարձող մակոյկին, երբ յանկարծ հրացանի հարուածը և մեր գլխի վերայից թռչող գնդակը ստիպեցին մեզ յետ նայել։ Բլրի գագաթին երևում էր մարդկային չորս սաւեր։

Ամենքի բերանից ակամայ և միաժամանակ արհամարհքի աղաղակ դուրս պրծաւ։

Առանց այլ և այլութեան դրանք Թրքեր էին։

Կարծես սարսափին սահման չկար։ Խուլ կերպով լսուեցաւ էլի երկու-երեք հարուածներ։ Ամբոխը ցիր ու ցան եղաւ ափում, թաքնուելով ժայռերի և քարերի տակում։

Միայն ափում մնացած նաւաստիները չշփոթուեցան և պատասխանեցին Թրքերի հարուածներին։ Պատասխան չեկաւ։ Թերևս նաւաստիների գնդակները կպան նշանին, բայց աւելի հաւանական էր, որ դոքա աւելի ստուար խմբի առաջամարտիկներն էին և սպասում էին, որ միւսներն էլ գան և ապա վրայ տան իրենց ամբողջ զօրութեամբ։ Ի՞նչ պէտք էր անել այս դէպքում։ Ինչպէ՞ս պաշտպանուել։ Դժուար էր վճռել այս խնդիրները։

Սակայն մակոյկը նորից մօտենում էր ափին։ Մենք նորից դիմեցինք դէպի ծովը, քաջալերուած Թրքերի լռութիւնից։ Մենք շտապում էինք, որովհետև Թրքերը կարող էին նորից երևել աւելի շուտ, քան ամենքը կը կարողանան ազատուել։

Հայրս մօտեցաւ դեկավարին։ Ես նկատեցի, որ նա տաք-տաք է խօսում հեռը, ցոյց տալով քոյրերիս և ինձ վերայ։ Այդ միջոցին նա նորա բուռը կոխեց մի քանի դրամ, բայց դեկավարը չէր ընդունում։ Այդ բոպէին մայրս իւր ձեռը ուսիս էր դրել յետևից։

—Լուկի,—ասաց նա,—առ քոյրերիդ և գնա, իսկ մեզ առ այժմ թող այստեղ ապաւինելով Աստծուն։

Մի և նոյն ժամանակ նա դրպանս կոխեց մի կապոց թանկագին իրեղէնների, որ նա կարողացել էր ազատել։

Ես փաթաթուեցայ նորա վզով և ասացի.

—Չէ՛, չէ՛, լաւ է ամենքս միասին կ՚ազատուենք։

Հայրս բռնեց ձեռիցս։

—Գնա քոյրերիդ հետ, մենք յետոյ կը գանք։

Նաւը արդէն լի էր։ Քոյրերս էլ այնտեղ էին։ Հայրս ինձ նետեց այնտեղ ղեկավարի օգնութեամբ. մինչև որ ես կարողացայ մի երկու խօսք ասել, թիակները սկսեցին շարժուել։ Ցեռ նայեցայ դէպի ափը, որ մի անգամ էլ նայեմ մօրս վերայ, և այդ իսկ լոպէին բլրի գագաթին նորից ծուխ երևեցաւ, որտեղ էլ մի հարուած հեռևեց։

Փախստականները խմբվում էին ափում, աշխատելով շատ մօտ լինել ափին։ Ցեռինները առաջ էին մղում առջևում կանգնածներին։ Մի քանիսը ջուրը ընկան... Ընկնողների մէջ ես նկատեցի մօրս։ Ես կարողացայ բռնել նորա ձեռքիցը, մի ուրիշ կին էլ նորա շորերից բռնուեցաւ։ Մակոյկը առաջ էր սահում, քաշելով հետևից այդ երկու կանանց, որոնց փոքր ինչ յետոյ վեր բարձրացրինք։

Ես չեմ յիշում, թէ ինչպէս նաւը մտանք, — այնքան շատ էի յուզուած։

Հրացանաձգութիւնները շարունակվում էին միմեանց հաւասարապէս, փոքր ընդհատումներից յետոյ։ Մակոյկը կրկին ու կրկին նոր խմբեր էր բերում և ամեն անգամ ես ագահութեամբ նայում էի եկողներին, աշխատելով նկատել հօրս և Ապրիանային։ Բայց նոքա վերջին խմբի մէջ էին միայն։

Վերջապէս ամենքը նաւումն էին։ Փախստականներս հարիւր ութսուն հոգի էինք, թիլքերը ոչ ոքի չկարողացան սպանել։

Նաւը բաց թողեց իւր առագաստները։ Հողմը համապատասխան կողմից էր, և մենք շուտով դուրս եկանք նաւահանգստից, բայց հազիւ մենք դուրս եկանք, բոլոր դագաթը թրքերով լցուեցաւ։ Այն ենթադրութիւնը, թէ առաջուց տեսածներս առաջամարտիկ էին, բոլորովին ճիշդ դուրս եկաւ։ Բարեբաղդաբար նոցա գլխաւոր ուժերը շատ ուշ վրայ հասան։

Ամենքս էլ ողջ և առողջ էինք, և այդ տարածութեան վերայ թրքերի հարուածներից վտանգ չկար:

Երբ նաւը հեռացաւ ափից, ես ողջ, առողջ և անվտանգ տեսայ մեր թշուառակից ընկերներին, և սիրտս ուրախութեամբ լցուեցաւ:

Շուտով խարիսխը ձգեցին Պսարայի մօտ:

Այդ ժամանակ միայն ես առաջին անգամ տեսայ այդ հերոսական կղզին, որին վիճակուած էր ասպատակուել, ինչպէս և Քիոսին, սակայն Պսարան Տաճկաստանին տարբափելի վէրքեր տուեց, մինչդեռ Քիոսից միայն կական ու գանգատ էր լսվում: Այո, Պսարան ասպատակուեցաւ, բայց միայն այն ժամանակ, երբ Կանարիի կերոնը այնպիսի հրդեհ ձգեց ծովի վերայ, որի յիշողութիւնը դեռ շուտ չի մարիլ Տաճկաստանում և ամբողջ աշխարհում:

Ցամաքը դուրս գալ մեզ բոլորովին չէին թողնում: Կղզու բնակիչները այնքան փախստականներ էին ընդունել, ինչպէս ասացի, որ աւելի էլ չէին կարող ընդունել: Մինչև անգամ նոցա ուղարկած ջուրը, որ մենք չմեռնենք ծարաւութիւնից, նոցա կողմից մեծահոգութեան ողհաբերութիւն էր:

Քամին դեռ յաջողակ էր, և նաւապետը առաջարկեց մեզ Միկոնոս կղզին տանել, որովհետև Տինոսը լի էր Զմիւռնիայից, Քիոսից և ուրիշ տեղերից եկած փախստականներով: Բացի դորանից, այնտեղ տիֆ էր տարածուել: Միկոնոսում աւելի շատ տեղ կար, և նա աւելի բարեյաջող պայմանների մէջ էր առողջութեան տեսակէտից:

Ի հարկէ մենք համաձայնեցինք: Մեզ համար բոլորովին մէկ էր, թէ ուր կըգնանք, միայն որ մի ապաստարան գտնենք, ուր կարելի լինէր մի փոքր հանգստանալ: Մի բան միայն, որ մենք ուզում էինք,—այդ այն էր, որ թրքերից հեռու լինէինք:

Արևը մայր մտնելիս խարիսխը բարձրացրին, և մենք ճանապարհ ընկանք։

Ամբողջ ժամանակը Աղրիանան նոյն կէս-ինքնամոռացութեան մէջ էր։

Խեղճ օրիորդի առաջուայ ուրախութիւնն ու աշխուժութիւնը ինչ եղաւ, այն ուրախութիւնը, որ մեզ ամենքիս պահպանում էր մեր փախուստի առաջին բոպէներին։ Այն ժամանակից, երբ նա գզգզուած և խճճուած Մեստա վերադարձաւ, ես էլ չեմ տեսել նորան ուրախ և նորա ձայնը չեմ լսել։ Մութ գոմում միայն լսվում էր նորա կոծը, իսկ այժմ ես տեսնում եմ միայն նորա անշարժ հայեացքը և սեղմած շրթունքը։ Բարբարոսները յաւիտեան կործանեցին նորա կեանքի բախտաւորութիւնը, նա կարողացաւ թաքնուել միայն նորա համար, որ մեզ ազատէ։ Պիղծ մերձաւորութիւնը խորտակեց նորա մատաղ էութեան բոլոր թովչութիւնը։ Նորա գեղեցկութիւնը մի և նոյնն էր, բայց նա արդէն կորցրել էր իւր ցոլքը։ Նա դեռ հիանալի, բայց կտրած ծաղիկ էր։

Նաւը առաջ էր գնում։ Մթնեց և մեր աչքից կորան Քիոսի և Պսարայի ափերը։ Հաղիւ հաղ, որպէս հեռաւոր ամպեր, հորիզոնում երևում էին Էգէյեան ծովի այն կղզիները, որոնց մօտ մենք գնում էինք։ Վերջապէս գիշերը վրայ հասաւ. մութ, անլուսին գիշեր էր։ Քամին սաստկացաւ, բայց դարձեալ յաջողակ էր։ Ծովը խուլ կերպով աղմկում էր։ Մութ էր, մարդիկ յոգնած, վտանգից ազատ—այդ ամենը նպաստեց քնելու, և շուտով նաւում ընդհատուեցան խօսակցութիւնները։ Ամեն մէկը՝ յարմար կերպով և տաք ծածկուած, անձնատուր էլ եղել բարեբար քնին։ Լսելի էր միայն կողովի ճրճռոցը և կաղմածքի ճայթիւնը, երբ քամին սաստկացած կռացնում էր կայմերը։ Նաւի տախտակամածի վերայ՝ այստեղ այնտեղ նստած խմբեր էին երևում։ Որը յատակի վերայ էր քը-

նած, որը շորերից անկողին և բարձ էր շինել։ Երեխայք հանդիստ քնած էին իրենց մօր գրկում։ Ամբողջ նաւի վերայ քնած չէր պահապանը և ես։

Ժամանակը դանդաղ էր անցնում։ Ցոզնածութիւնը և գիշերուայ խաղաղութիւնը վերջապէս ինձ վերայ էլ սկսեցին ազդել։ Ոչ թէ ես քնած էի, այլ իմ մտքերը երազի պէս բան էին դարձել։

—Նա ջուրը ընկաւ, նա ջուրը ընկաւ։

Մի անգամից ես թռայ դէպի նաւի ելքը։ Ադրիանան չկար։ Գնացողները՝ կռացած նաւի կողքի վերայ, դէպի ջուրն էին նայում։

—Աղատեցէ՛ք, աղատեցէ՛ք,—աղաղակում էին կանայք։

Նաւապետը հրամայեց կանգնեցնել նաւը։ Նա սկսեց կամայ գնալ, ցած իջեցրին մակոյկը, սակայն քամին այնքան սաստիկ էր, որ մենք բաւականին հեռացանք այն տեղից, ուր լսուեցաւ չարագուշակ շրպոցը, ուր Ադրիանան ինքն իրեն ծովը նետեց։

Երբէք ես այնպէս չէի ատել տաճիկներին, ինչպէս այդ վայրկեանին։

Ես թռայ մակոյկը, թէպէտ նաւապետը կամենում էր ինձ բռնել. նաւաստիները սկսեցին հանդով թիավարել. մենք յետ էինք դառնում։

Մերթ մենք լռում էինք, որ լսենք նորա ձայնը, մերթ բղաւում էինք, որքան ոյժ ունէինք, որ նա լսէ։ Ո՛չ մի ծպտուն։ Նայում էինք մութ տեղերը, արդեօք մի բան չենք նկատիլ։ Ոչի՛նչ։ Ոչի՛նչ։

Ցանկարծ մի ինչ որ սպիտակ բան գրաւեց ուշադրութիւնս։ Ես ցոյց տուի նաւաստիներին։ Մենք սկսեցինք թիավարել դէպի այդ առարկայի կողմը և մօտենալուց տեսանք, որ դա Ադրիանայի գլխի սպիտակ շորերն էին։ Երկար մնացինք մենք այդտեղ, բայց ոչինչ չկարողացանք լսել և տեսնել։

Նաւապետը ազազակում էր, որ մենք վերադառնանք։ Գնացինք։ Զեմիս բռնեցի սպիտակը Ծածկոցը, որ ես այն ժամանակ, Զմիւռնիայից վերադառնալուց յետոյ, հանեցի քով քաշեցի Ադրիանոպլի շքեղ մզկիթի վերայից, երբ նա մեզ դուռը բացեց։

Միակ բանը, որ մնաց նորանից, այդ էր։ Մինչև օրս էլ ես պահում եմ այդ Ծածկոցը որպէս մի նշխարք, որպէս մի ամենաթանկագին յիշատակ։

VI.

Երբ Լոնդոնի փայլուն տներից մէկում, ոչինչ բանի պակասութիւն չունենալով, այլ երբ ամեն ինչ առատ է և բարեյաջող, որոնցից ես օգտվում եմ, շրջապատուած ընտանիքով, ազգականներով, բաղդաւոր հայրենակիցներով, ես մտաբերում եմ անցեալը. երբ ես համեմատում եմ կեանքիս վախճանի մօտ ինձ ուղեկցող անդորրութիւնը այն ժամանակուայ տանջանքների, վտանգների և զրկանքների հետ, ես զարմանում եմ, թէ ինչպէս ես և ուրիշները կարողացանք տանել այդքան թշուառութիւններին։ Ես հարցնում եմ, ինչպէ՞ս կարողացանք դուրս գալ այդ փորձանքներից, ողջ և անվնաս պահելով մեր թէ հոգեկան և թէ մարմնաւոր ոյժերը։ Երիտասարդութեան յիշողութիւնները երբեմն ինձ երազ են թւում, դժբաղդութիւններն և սարսափները, որոնց մէջ ես հաստակ առայ,—երևակայութեան խաղ։

Դժբաղդութիւնները, հանգամանքների հետ մաքառելը այն ժամանակ ընդհանուրի սեպհականութիւնն էին։

Ես երկար տարիներ ապրեցի, ջրս կողմս միայն վիշտ և տանջանք տեսնելով։

Միկոնոս ժամանելուց երկու թէ երեք շաբաթ յետոյ՝ մենք հօրս հետ սկսեցինք լրջութեամբ մտածել, թէ ինչ

անենք։ Մենք բոլորովին բան չունէինք, և Հայրս միայն բայ էր անում և կրկին ծալում գրպանում եղած թղթերը։

Սակայն այդ թղթերի մէջ մի նամակ կար Վենետկից, որ մենք ստացանք Զմիւռնիայից դուրս դալու նախընթաց օրը, ուր յայտնում էին մեզ, թէ ուղարկուած է երկու արկղ դլխարկներով, որ և պիտի դար անդլիական նաւով։ Այդ նաւը նախ քան Քիոս դալը պիտի շտապ նաւահանդիստ յաձախէր։ Հայրս Զմիւռնիայից հաւատարմութիւնդ ուղարկեց ստանալու այդ արկղները իւր բարեկամներից մէկին, որ Յոնական կղզիներից էր ծագմամբ, և հետևաբար անդլահպատակ էր, բայց մենք պատասխան չստացանք և չէինք էլ մտածում այդ ապրանքի մասին։ Վենետկի նամակը միտս ձդեց այդ, և այդ երկու խախուտ հիման վերայ ես սկսեցի մեծ-մեծ և ընդարձակ ծրագիրներ կազմել և յոյսեր ունենալ։

— Բաւական է, — ասում էր Հայրս, — եթէ դու այդ դլխակներին ես սպասում, որ դնես դլխիդ, մենք մինչև նոցա դալը դեռ առանց դլխարկի բաւականին ժամանակ անց կրկացնենք։

— Փորձենք, — պատասխանեցի ես։ — Փորձը փորձանք չէ։

Ես նամակ դրեցի Զմիւռնիայի բարեկամին, իսկ Հայրս ստորագրեց։ Խնդրեցի նորան, որ արկղները ուղարկէ Միկոնոսի անդլիական դեր-հիւպատոսին։ Գերազանց կղզիաբնակը, որ իւր զարդարուն դլխարկով Անդլիան էր ներկայացնում, խոստացաւ մեր նամակը ուղարկել Զմիւռնիա և, ինչ որ հնարաւոր է, անել մեդ համար։

Հայրս թերահաւատութեամբ ժպտում էր։ Եւ արդարև, բաւական անհաւատալի էր, որ մեր փորձը յաջողութիւն ունենար, որովհետև այն ժամանակ ամենուրեք անկարգութիւն էր տիրում և ամեն մի հպարդակցու-

թիւն համարեա լիովին ընդհատուած էր, որ սովորական ժամանակ էլ ոչքի չէր ընկնում իւր կանոնաւորութեամբ և յարմարութեամբ։

Այսպէս թէ այնպէս՝ այլ ևս անկարող լինելով սպասել, թէ ինչ հետևանք կ'ունենայ մեր փորձը, հօրս հետ վճռեցինք, որ միակ և վերջին միջոցն էր,—առաջարկել տէրութեան մեր ծառայութիւնը, ի հարկէ, ոչ որպէս զինուոր, այլ որպէս աստիճանաւոր։ Այդ նպատակով մենք Նաւպլիա պիտի գնայինք կամ Արգոս, որ այդ միջոցին կառավարութեան կենտրոնն էր։

—Բայց եթէ չյաջողուի՞, եթէ մեզ չընդունե՞ն, ի՞նչ պիտի անենք,—մտածում էինք մենք։

Մօրս յուղարկաւորանքը և կարիքը ինձ ստիպեցին նաև նստել, որ և բերաւ ինձ Տինոս։

Հետևեալ օրը ես գնացի Միկոնոս, իսկ մի քանի օրից հայրս իմացաւ, որ Նաւպլիա նաև է գնում, և մենք ամենքս միասին գնացինք, հրաժեշտ տալով հիւրընկալ կղզուն։

VII.

Ով որ երեխայութիւնից սովոր է ճանապարհորդել շողոմ օդնութեամբ, նա չի կարող որոշ կերպով երևակայել, թէ ինչպէս էր ճանապարհորդութիւնը նկարագրածս ժամանակը։

Այժմ միայն մեր Էգէյեան ծովում, ով որ չի կամենում երկու շաբաթ սպասել նաւի, ուրիշ կերպ է ճանապարհորդում, ամեն մի տեսակ արկածների է հանդիպում, ինչպէս Ոդիսևս։ Բայց և այնտեղ, ամենահեռաւոր կղզում, փոքր ինչ համբերութիւն ունենալով, կարելի է հաւատացած լինել, որ վերջապէս մի շոգենաւ կըգայ։ Սակայն պատանեկութեանս հասակում շոգենաւերը դեռ

յայտնի չէին, երկինքը վճիտ էր, մաստուած չէր քարածուխի մխից, իսկ ալիքներին դեռ չէին կպել անիւներ և պտուտակներ։

Միկենոսից դուրս գալով, երեք օրից յետոյ եկանք Սպեցիայի նաւահանգիստը, որովհետև քամին հակառակ կողմից էր փչում և արգելում էր Նաւպլիայի ծոցը մտնել։

Նաւապետը ցամաքն իջաւ, մենք էլ յոգնած լինելով ամբողջ ժամանակը մակոյկում նստելուց, հետևեցինք նորա օրինակին։ Մենք նստանք ժայռերի վերայ՝ քաղաքի վերջին տան մօտ։ Լուռ նայում էինք հօրս վերայ։ Նա մռայլ էր։ Երբէք ես նորան չէիտեսել այդպէս սպանուած։ Երևում էր, որ նա տանջվում էր, բայց չէր դանդաղում, և միայն գլուխն էր յուսահատ իջեցնում ձեռների մէջ։

Ես մտածում էի, թէ ինչ կըլինի մեր վիճակը, եթէ հայրներս մեռնի։ Իմ տխուր մտածութիւններս ընդհատեց մի երիտասարդ, որ մեղ մօտենալով, սիրալիր կերպով բարևեց և հարցրեց հօրս.

—Քիոսի՞ց էք։

—Քիոսից ենք,—պատասխանեց հայրս, դժուարութեամբ գլուխը վեր բարձրացնելով։

—Ինչո՞ւ քաղաք չէք մտնում։

—Արդոս ենք գնում։

—Արդո՞ս։ Չէ, այնտեղ երեխայոց և կանանց տեղ չէ։ Անհրաժեշտ է, որ դուք այստեղ մնաք։

—Սակայն մենք յոյս ունէինք այնտեղ ապրուստի միջոց գտնել։ Իսկ այստեղ ի՞նչ պիտի անենք։

—Այնտեղ դուք բոլորովին դործ չէք գտնիլ։ Արդոսը այժմ զինուորական բանակ է, Նաւպլիան էլ պաշարուած է։ Մի՞թէ կարելի է՞, որ կանայք և երեխաներն ապրեն այդպիսի պատերազմական տեսարանների մէջ։ Չէ՛, չէ՛, անհրաժեշտ է, որ ձեր գնալը առ այժմ յետաձգէք։

Այս խօսակցութեան միջոցին մօտեցաւ նաւապետը և, հաստատելով երիտասարդի ասածը, իւր կողմից առաջարկեց մեզ Սպեցիայում մնալ։

Համոզել մեզ դժուար չէր, բայց մնալն էլ մեզ անհնարին էր երևում։ Մեր հալածանքի այս նոր կայարանում ինչ տեղ մենք կարող էինք խոնարհեցնել մեր գլուխը։ Երիտասարդը ըստ երևութին հասկացաւ, թէ ինչու ենք մենք տանջվում։

— Մնացէք ինձ մօտ, — ասաց նա, — հայրս սպանուած է պատերազմում, մայրս մեռել է, իսկ ես մենակ եմ ապրում դատարկ տան մէջ և ինձ մօտ գալով, ինձ էլ ծառայութիւն արած կըլինիք։ Ինձ մօտ մնալ կարող էք, որքան կամենաք, մինչև անգամ որքան շատ, այնքան էլ լաւ։

Այսպէս մենք տեղաւորուեցանք մեր նոր ծանօթի տան մաքուր և ընդարձակ սենեակներում։

Հայրս զգում էր, որ ուժերը թուլանում են։ Նա երբէք չէր յայտնում իւր երկիւղը. բայց այդ իսկ օրը երեկոյեան նա հրամայեց, որ անյապաղ մենակ գնամ Արգոս, որ ստանամ աստիճանաւորի պաշտօն Նէգրիից, շնորհիւ այն յանձնարարական նամակի, որ մենք ունէինք յայտնի առաջնորդ Մաւրոգենիից։

Երկու օրից ես Նաւպլիա իջայ և ոտով գնացի Արգոս։

Երբ ես Մաւրոգենիի նամակը ձեռքս ներս մտայ նախարարի գրասենեակը, տեսայ առաջևումս մի կարճահասակ, ոգեղ մարդ, որ կանգնած էր գրասեղանի մօտ և ապշած մնացի։ Ես դժուարութեամբ կարող էի հաւատալ, որ դա էր գլխաւոր ստատս-սեկրէտարը, մեծ, նշանաւոր Թէոդոր Նեգրին։

Նա մի բան էր գրում։ Նամակը ձեռքս սպասում էի և ազատ լինելով՝ դիտում էի, թէ ինչ կայ շուրջս։

Սենեակը մեծ չէր, բայց լի էր դրքերով։ Ամեն տեղ գիրք էր. սեղանի վերայ, յատակի վերայ, աթոռների վե-

բայ, գրքոյի վերայ։ Մէջ տեղը դրած էր գրասեղանը, յետևում Նեգրին էր։

Սխալուած չեմ լինիլ, եթէ ասեմ, որ նա ինձանից էլ կարճ էր հասակով։ Ես նայեցի վերան և ակամայ մտածեցի.

«Ա՜յ մարդ։ Դորան, այդ անգէն, փոքրիկ, ապէր մարդուն հնազանդվում են այդ կոպիտ զինուորները,—և նոցա կառավարում է... Ի՞նչ է պատճառը։ Նա մտքի կորովութեամբ և գիտութեամբ նոցանից գերազանց է,—ահաւասիկ պատճառը։ Իրաւ, խելքը ձեռք բերել չի կարելի, իսկ լուսաւորութիւնը կարելի է։ Խոհականութիւնը Աստուծոյ պարգևն է, գիտութիւնը—մարդկային գործ»։

Վերջապէս Նեգրին գրիչը ցած դրեց և հարցրեց, թէ ինչ եմ կամենում։ Ոչ մի խօսք չասացի, միայն նամակը նորան տուի։

Կարդալով նամակը, նա առաջարկեց ինձ նստել միակ գրքերից ապատ յարդէ աթոռի վերայ և հարցրեց, թէ ինչ գիտեմ և թէ իսկապէս ի՞նչ եմ կամենում։ Ես ըզգացի, որ կարմրում եմ. երբ սկսեցի համարել իմ խեղճ գիտութիւնս և ցանկութիւն յայտնեցի, որ կամենում եմ որ և է պաշտօն ստանալ իւր մօտ ծառայելու։

—Լաւ,—ասաց նա։—Ինձ պէտք են ձեր հասակի երիտասարդներ, և ես մի կերպ կըտեղաւորեմ։ Սակայն դեռ պէտք է մի փոքր սպասել, մինչև որ տամնայն ինչ կը խաղաղուի։ Սպասեցէք, երբ Նաւպլիան կընուաճեն և ապա՝ վերստին եկէք։

Սպասե՞լ մինչև որ Նաւպլիան կընուաճեն։ Ես զուրս եկայ բոլորովին ձեռնունայն։

Գալուց յետոյ երկրորդ գիշերը, անքուն մի կողքից միւս կողքի վերայ ընկնելով անկողնու տեղ ծռայող չոր տախտակի վերայ, ես կայացրի իմ վճիռը։ Ես զգում էի, որ բանակի կեանք վարել չեմ կարող, տեսնում էի,

որ առևտուրը—իմ միակ կոչումն է։ Հետևեալ օրը, տեսնելով որ իմ բախտիցը մի նաւ է գնում Սպեցիա, ես էլ ճանապարհ ընկայ։

Սպեցիայում ես մօրս և քոյրերիս անկողնում գտայ, բոլորովին հիւանդ։

Բարեբաղդաբար մօրս և քոյրերիս հիւանդութիւնը շուտ անցաւ, որովհետև դա նոցա բարոյական և ֆիզիքական յոգնածութեան հետևանքն էր։ Մի քանի օրից յետոյ նոքա կարողացան մէկը միւսի ետևից վեր կենալ անկողնից։ Սակայն հօրս վիճակուած չէր այլ ևս առողջանալ։

Վերադառնալուց մի քանի օր յետոյ նա մեռաւ։ 1822 թ. յուլիսի 15 էր։ Այդպիսի օրերը չեն մոռացվում։

XIII.

Այժմ ես ամբողջ ընտանիքի գլուխն էի և միակ նեցուկը։ Այդ օրուանից ինձ էր վիճակուած քոյրերիս տեղաւորել և ապահովել, որ մօրս ծերութիւնը անդորր ու խաղաղ լինի, իսկ կեանքի բոլոր միջոցները կենտրոնացած էին կառավարութեան պաշտօնիս մէջ, որին ես որոշ կերպով ապասում էի, եթէ նուաճէին Նաւպլիան։

Սակայն մի բան ինձ ասում էր, թէ իմ ապագաս դորա մէջ չէ։ Տոհմական աւանդութիւնները, ամբողջ կրթութիւնս ինձ նեգոցիանտ էին շինել. ես զգում էի, որ իմ կոչումն առևտուրն է, և միայն այդ ճանապարհով մի բանի կըհասնեմ և օգուտ կըբերեմ թէ ընտանիքիս և թէ հայրենիքիս։

Վաճառեցի Տինոս վերադառնալ։ Այնտեղ դոնէ բնակիչները աւելի հանդիստ էին, կեանքը աւելի թեթև և Մաւրոգենիի և ուրիշ տինոսցի փախստականների շնորհիւ ես այնտեղ այնպէս օտար չէի, ինչպէս Սպեցիայում։

Տինոսում ես վարձեցի մի համեստ տուն և գնեցի վերմակներ և դոշակներ,—միակ կահ-կարասիքը, որ մեր միջոցները թոյլ էին տալիս ձեռք բերելու։ Միւս բաների վերաբերմամբ յոյսս դրի Նախախնամութեան վերայ։

Զրկանք և աղքատութիւն—շատ ծանր բաներ են, մանաւանդ երբ նոցա մէջ ես ընկնում բաւարար կեանքից յետոյ։ Ոչինչ աւելի ծանր բան չկայ բացի այն, երբ մարդ հաւատացած չէ, որ վաղը մի կտոր հաց կ'ունենայ, երբ պէտք է կերակրել ծերացած մօր և երիտասարդ քոյրերին։ Սակայն մարդ ընտելանում է ամէն բանի։

Երբ ես տան տիրոջ հետ սակարկութիւն էի անում վարձի մասին, նկատեցի նորա գլխին բոլորովին նոր գլխարկ։ Ես ուշադրութիւն չէի դարձնիլ այդ բանի վերայ, բայց հետևեալ օրը ես շատերին պատահեցի նոյն տեսակ նոր գլխարկով, մի և նոյն ժամանակ բոլորովին միաձև և միագոյն։ Այդ համազգեցութիւնը ինձ հետաքրքրեց, և ես մտաբերեցի Վենետկից գլխարկներով ուղարկած արկղները։ Առանց ժամանակ կորցնելու ես գնացի տան տիրոջս մօտ։

—Ասացէք, խնդրեմ, ումնի՞ց էք առել այդ գլխարկը։

—Ես գնեցի անգլիական հիւպատոսից, բայց այժմ այլ ևս դուք չէք կարող գնել, որովհետև նա բոլորը վաճառեց։

Լսելով, որ անգլիացոյ հիւպատոսը գլխարկներ է ծախում, ես լիովին համոզուեցայ, որ ենթադրութիւնս ճիշդ է։

Նոյն օրը ես գնացի Միկոնոս։ Բարեկամս, ղեր-հիւպատոսը յայտնեց ինձ, թէ երկու արկղն էլ ուղարկուած են Զմիւռնիայից Տինոս, և թէ նա յանձնել է իւր պաշտօնակցին վաճառել, ինչ որ լինի մէջը։ Նա ինձ նամակ տուեց, որով ապացուցանում էր, թէ արկղները ինձ էին պատկանում։ Ես շտապում էի վերադառնալ, բայց նա ստիպեց ինձ դիշերել իւր մօտ։

Հետևեալ օրը, անկեղծ շնորհակալութիւնս յայտնելով, ես վերադարձայ Տինոս։

Բաղդիցս քամին նպաստում էր այս ճանապարհորդութիւններիս։ Տեղ հասնելով ես անմիջապէս գնացի անգլիացոց հիւպատոսի մօտ։ Այժմ ես չեմ յիշում նորա անունը, բայց դորա փոխարէն շատ լաւ եմ յիշում նորա դէմքը, ոսկէ ակնոցը, կարծես, թէ այժմ էլ առջևս է կանգնած։ Նա ցոյց տուաց ինձ հաշիւը, թէ որքան է գոյացել վաճառուածից և իսկոյն յանձնեց ինձ այդ գումարը,—մինչև հինգ հազար պիաստր։ Այդ գումարը՝ այն ժամանակ աչքիս մի ահագին կարողութիւն երևաց։ Ես ոչ վերաստուգեցի հաշիւը, ոչ էլ փողը համարեցի. աւելի թանկ չէր կարելի վաճառել այդ ապրանքը։ Այդ հինգ հազար պիաստրը ինձ համար անսպասելի նեցուկ էր, վաճառականութիւն սկսելու ասպարէզը բաց եղաւ ինձ համար։

Ես վազեցի այս ուրախութիւնը մօրս յայտնելու, ցոյց տուի նորան գանձս, խնդրեցի նորա օրհնութիւնը, և երկու օրից յետոյ դուրս լի ծրարներով, սիրաս լի յոյսերով՝ ես ճանապարհ ընկայ դէպի Սիրա։

Տինոսը նաւերի համար մուտք չունի, այդ պատճառով էլ մեծ նաւերն անմիջապէս չեն մտնում նորան, այլ կանգնում են Սիրայում։ Այս տեղը մինչև անդամ թրքերը կենտրոնական էին համարում։ Նորա բնակիչները կաթոլիկներ էին. յեղափոխութեան մասնակից չէին և մինչև անգամ դիտենալ չէին ուզում։ Քաղաքի վերայ ծածանվում էր Ֆրանսիայի սպիտակ դրօշակը, որովհետև նա նորա հովանաւորութիւնն էր ընդունել։

Սիրայի բոլոր բնակիչները բռնել էին բացառապէս կղզու բարձր տեղերը, այնպէս որ քաղաքը կոնի ձև ունէր։ Ամբողջ հնացած տարածութիւնը, ուր այժմ հարուստ և ճոխ հերմօպոլիսն է, անմարդաբնակ էր, ժայռերով

էր ծածկուած։ Հէնց այն տեղ, ուր այժմ երաժշտութիւնն է նուագում, և կանայք իրենց ապրէշումէ շորերի քըղանցքն են քարշ տալիս մարմարիոնէ քարայատակի վերայ, այն ժամանակ մի քանի փոքրիկ պարտէզներ վկայում էին կղզեաբնակների զործունէութեան մասին։ Փոքրիկ կաթոլիկական եկեղեցին, մի երեք չորս գինեատներ եզերքի մօտ միակ շինութիւններն էին։

Դոցանից փոքր ինչ հեռու, նոյնպէս ափին, կար էլի մի փոքր և անպիտան սրճատուն, որ մի ժամանակ և բորսայ է եղել, և կապելիոն, և գրասենեակ։

Նոյն իսկ տեղում, ուր այժմ նաւերի տրհեստանոցն է և ուր լսվում են մուրճերի կանոնաւոր հարուածները փայտին, այն ժամանակ ընկած էր նաւի մերկ կողմը, որ խորտակման էր ենթարկուել։

Ահա, ինչ էր Սիրան, երբ առաջին անգամ երկու երեք երիտասարդ, ես էլ նոցա հետ, այդ կղզու առևտրականութեան առաջին զարկ տուողները սրճարանում սպասում էինք, թէ երբ կըգայ մի ապրանքակիր նաւ։

Բարեբաղդաբար մենք երկար չսպասեցինք, և շուտով տեսանք մի նաւ, որ Ռուսաստանից էր գալիս։

Դա առաջին առևտրական գործն էր, որ ես սկսեցի և ինքս էլ պիտի շարունակէի, որովհետև հայրս այլ ևս չկար։ Ես վախենում էի, որ զումարս չդնեմ այնպիսի գործի մէջ, որից ոչինչ շահ չլինի, և այդ պատճառով էլ երեք չորս անգամ գնացի ապրանքը նայելու, վճիռս քանդում էի, տատանվում էի, սակարկութիւն էի անում և վերջնականապէս վճռելով գնեցի ազատ ձուկ հաղար պիաստարի, լցրի մակոյկը, որ Տրինոս էր գնում, ինքս էլ նստայ, երեսս խաչակնքեցի և ճանապարհ ընկայ։

Այն ժամանակ Տրինոսում սովորութիւն էր, որ ուտելու մթերքը անպատճառ երեք օր շուկայում վաճառուի, որպէս զի ամբոխը կարողանայ օգտուել. իսկ ապա

վաճառականները կարող էին միմեանց հետ առևտուր անել։ Ես էլ ի հարկէ պիտի ենթարկուէի այդ սովորութեան։ Սակայն սկզբում ես չէի կամենում անձամբ առևտուր անել, որովհետև՝ չնայած բոլոր դժբաղդութիւններին, ըստ սովորութեան պահպանել էի իմ նախկին, համեմատաբար բարձր դրութեան զգայմունքը։

Սկզբում ես փորձեցի փոխանորդ գտնել, բայց անյաջողութիւնները, մանաւանդ ուրիշների օրինակները ստիպեցին ինձ մի կողմը դնել ինքնասիրութեանս այդ մասը։

Եւ ահա ես շուկայում չոր ձուկ ծախող դարձայ։ Ես տեղ վարձեցի ափի մօտ, բաց տարածութեան վերայ և սկսեցի կանչել գնողներին։ Դեռ շատ վաղ էր, բայց գնողներ բաւականին էլ կային, և իմ առևտուրս հիանալի էր գնում։ Որքան իմ առևտուրս լաւ էր գնում, այնքան էլ ես սկսում էի ընտելանալ այդ նոր արհեստին։

Ցաջողութիւնը ինձ աւելի և աւելի էր քաջալերում։ Ես մրցում էի ինձ շրջապատող վաճառականների հետ, գովում էի ապրանքս, ձայնս բարձրացնում էի, որ գրաւեմ գնողներին, և կամաց-կամաց կորցրի այն ամօթխածութիւնը, որ սկզբում զսպում էր իմ շարժուածքներս։

Առ և արի ամենատաք միջոցին առջևս մի ինչ որ աղմուկ լսեցի և, գլուխս վեր բարձրացնելով, դէմուդէմ տան պատուհանում մի սիրուն շիկահեր աղջիկ տեսայ։ Այդ սիրուն գլխի տէր աղջիկը բաց էր արել պատուհանը և կապում էր քամուց պատին կպչող փակեղները։ Դորանից յետոյ նա կռացաւ պատուհանի վերայ և իմ կողմը նայեց։ Նորա հայեացքը ինձ շփոթեց, ես ինձ զբսպեցի։ Եւ իրօք մարդ ինչպէ՞ս կանչէր գնողներին, երբ այդ գեղեցիկ օրիորդը նայում էր և կարծես դիտում էր ինձ։ Փորձեցի շարունակել առևտուրս, սակայն խելքս ուրիշ բանով էր զբաղուած։ Հէնց էն է որ պատուհանին էի նայում։ Ես աշխատում էի հասկանալ այդ ժպիտի պատ-

ծառը. ողջոյն էր դա, թէ ծաղը։ Սիրտս բաբախեց, աբիւնը այտերիս զարկեց։ Ես բոլորովին շփոթուեցայ և յուզմունքից մէկին կրկնապատիկ ձուկ կշռեցի և տուի։ Նկատելով սխալս, ես յետ դարձայ, որ կանչեմ, յանկարծ նկատեցի յետևումս՝ մի կիսաբաց դռան շեմքին երիտասարդ կղզեաբնակներից մէկին։ Նա կանգնել էր ձեռքը կողքին դրած և բեխերը ոլորելով՝ սիրահարական հայեացքներ էր նետում դէպի պատուհանը։ Իսկոյն և եթ գլխի ընկայ, որ օրիորդի հայեացքներն էլ, ժպիտն էլ ինձ չէին պատկանում, այլ միայն իմ գլխի վերայից անցնում էին։ Օգտակար դաս էր ինձ համար։ Նոր եռանդով ես սկսեցի շարունակել իմ գործը։

Երկու օրում վաճառեցի բոլոր ձուկը և քսան տոկոս օգուտ ստացայ։ Նորից ճանապարհորդեցի դէպի Սիրա։ Վերադարձայ այն տեղից հետս ձէթ բերելով, որ և վաճառեցի ութը տոկոս արդիւնքով. ձէթից յետոյ ես գնեցի և վաճառեցի նոյնպիսի շահով խաւեար և նոյն ուղղութեամբ շարունակում էի գործել։ Օգուտը հետևաբար փոքրանում էր մրցութեան պատճառով, բայց և այնպէս աշխատանքս միշտ վարձատրվում էր, և մի քանի ամսուայ ընթացքում դրամագլուխս աճեց մինչ ութ հազար պիաստր, չնայելով որ ընտանիքի համար ամէն ծախս անում էի։

Այդ ժամանակուանից ես և կորցնում էի և ձեռք էի բերում մեծ գումարներ, սակայն առաջին շահի քաղցրութիւնը, որքան էլ նա աննշան լինէր, աւելի բաւարար և գոհացուցիչ էր, քան թէ յետոյ ստացածներս։ Մինչև անգամ աւելի յաջող ձեռնարկութիւններիս ժամանակ ես այն բաւականութիւնը չէի ստանում, ինչ որ չոր ձուկ ծախելուց յետոյ էր։ Ոչնչից մի բան շինել, յաջողութիւն ունենալ առաջին ինքնուրոյն ձեռնարկութիւնների ժամանակ, տեսնել, որ ընդունակ ես ընտանիք ա-

պահովելու,—այդ բոլորը այնպէս ախորժելի է, որ հաղիւ թէ մի ուրիշ բան այդպէս ախորժելի լինի։ Ես չեմ ասիլ, որ յետոյ էլ պարապում էի առաւորով առանց յափշտակուելու, փիլիսոփայական սառնութեամբ էի վերաբերում յաջողութեանս,—ոչ, յաջողութիւնը միշտ հաճելի է, բայց ոգևորութիւնս կամաց-կամաց մարեց։ Մի անգամ նիւթական անկախութիւն ձեռք բերելուց յետոյ, ես այլ ևս սրտի բաբախմամբ չէի հաշվում, թէ որքան շահ ունիմ, որովհետև հարստութիւնը դեռ երջանկութեան ապբիւրը չէ։ Անկախութիւն — ահա այն նպատակը, որի համար դործում է մարդ։

Քիոսցի երիտասարդներից միայն ես չէի այդպէս դործում և աշխատում։ Տինոսում բնակվում էին և շատ ուրիշներ, որոնք նոյնպէս քրտինքով աշխատում էին և որոնց հետ ես յարաբերութիւն ունեցայ որպէս շուկայում և Սիրայում յաճախ պատահելու, նոյնպէս և ընդհանուր դժբաղդութեան պատճառով։ Նոյա մէջ էր և իմ մեծ քրոջ փեսան, որ երկար և թշուառ թափառումներից յետոյ թաքնուել էր Տինոսում։ Իսկ փոքր քրոջս փեսին սարուկ էին տարել, և նորա մասին ոչինչ չէր լսվում։

Ես էլ մանկութիւնից փեսայ էի, բայց իմ հարսս արդէն մի քանի տարի էր, որ մեռել էր, իսկ ապստամբութիւնը իւր թշուառութիւններով հանդերձ աւելի շուտ սկսեց, քան հայրս կարողացաւ ինձ համար նոր հարս դտնել։

Այդպէս էին սովորութիւնները Քիոսում։ Ամեն մի տոհմ աշխատում էր կապ դտնել իրեն հաւասարի մէջ, բայց որովհետև ընտրութեան շրջանը սահմանափակ էր, ուստի և ստիպուած էին դորա մասին առաջուց մտածել։ Որովհետև ազնուականները իրենց առանձնացած էին պահում, այդ պատճառով էլ ամուսնութիւնը մեր ազգականների հետ անխուսափելի էր։

Այսպէս թէ այնպէս մեր բարքերը մնացին առաջուանը։ Մենք մնացինք մեր կրթութեան և աւանդութեանց ազդեցութեան ներքոյ, այնպէս որ ես փեսայի վերայ նայում էի որպէս եղբօրս վերայ և աշխատում էի փոքր քրոջս համար էլ փեսայ գտնել։ Շուտով այդ յաջողուեց, և մենք երեքս վճռեցինք առևտրական ընկերութիւն հիմնել։

Մեր պայմանները այսպէս էին. հիմնական դրամագլուխ կազմելու համար մեզանից իւրաքանչիւրը պիտի տար հազար պիաստր. մեկը միշտ Տինոսում պիտի մնար ապրանքը վաճառելու, երկրորդը պիտի գնէր, իսկ երրորդը պիտի հսկէր տեղը հասցնելու։

Ես ընտրուեցայ ապրանք գնելու և պատրաստվում էի դորա համար Սիրա գնալ, բայց այդ միջոցին մի քանի նաւում ժանտախտ էր երևեցել, ուստի և Սիրայի հետ հաղորդակցութիւնը անորոշ ժամանակով ընդհատուած էր։ Վճռեցի օգտուել այդ ժամանակից, գնալ Քիոս, և եթէ հնար լինի, որոնել մօրս թանկագին իրեղէնները, որ մենք փորեցինք մեր նախկին կալուածի պարտիզում։ Մայրս խորհուրդ չէր տալիս, բայց ես չլսեցի։ Երկու տակառ խաւիար առայ հետս ծախելու համար, հագայ Քիոսցի գիւղացու շորեր և նստայ այն նաւը, որ Քիոս կղզին էր գնում։ Նաւապետը խստացաւ աւելի ապահով տեղում ինձ տփը հանել։

IX.

Հարաւային քամի էր փչում, և մեր նաւը արագ սահում էր դէպի Քիոս կղզին։ Բայց որքան մթնում էր, այնքան էլ զովանում էր քամին, և մեր նաւի արագ ընթացքը վտանգ էր սպառնում։

Բարեբաղդաբար նաւը ամուր էր շինուած, նաւապետն էլ գիտէր իւր գործը, և առաւօտեան մենք մոտենք

մի խաղաղ փոքրիկ նաւահանգիստ, Քիոսի հարաւային ափում։

Ծոցի շրջակայքում կային հերկած դաշտեր, բայց բնակութիւն չկար, և միայն հեռու, կանաչ բլուրների մէջ, պայծառ կերպով սպիտակին էին տալիս մի քանի գիւղական տներ։ Ափի մօտ խարիսխը ձգած մի աննշան նաւ կար, նորա մօտ էլ ուղիղ եղերքին մի քանի գիւղացի կար, իրենց էշերը բռնած։ Երբ տեսայ այդ կանաչազարդ բնութիւնը, գիւղերը, մարդկանց, սիրտս լցուեցաւ ծննդավայրիս սիրոյ քաղցր զգացմունքով։ Նորից տեսայ Քիոսը։ Այդ գիւղայիները հայրենակիցներս էին. . .

Բայց շուտով իմ լաւ տպաւորութիւնս խանգարուեցաւ. մեր նաւաստիների և խարիսխը ձգած նաւի նաւաստիների մէջ անբաւականութիւններ ծագեցին։ Այդ նաւն էլ Պսարայից հաց էր բերել, իսկ կղզու բնակիչները բոլորովին տրամադիր չէին խախաղ կերպով մրցել։ Նոքա կամենում էին ստիպել նաւապետին, որ հեռանայ, իսկ նա չէր համաձայնում և եռանդով պաշտպանում էր ազատ փոխանակութեան սկզբունքները։

Այնպէս էր երևում, որ շուտով խօսքից կըզիմեն գործին։ Վիճողները միմեանց բռունցք էին ցոյց տալիս և արդէն դանակներն էին հանում։ Չկամենալով մասնակցել այդ վէճին, ես հանգիստ ծովեզերը դուրս եկայ, չսպասելով, թէ ինչով կըվերջանայ։ Առայ հետս և ապրանքս։ Ես պայման կապեցի գիւղայիներից մէկի հետ, որ ապրանքս բեռնէ իւր էշի վերայ, և մենք ուղևորուեցանք դէպի գիւղը։ Ուղեկցիս համակրելի դէմքը, որ քսան տարեկան պատանի կըլինէր, զրաւեց իմ հաւատարմութիւնս, մանաւանդ որ ինքն էլ հաւատարմութիւն էր տածում դէպի ինձ։ Ճանապարհին ես իմացայ նորա համեստ կենցաղավարութեան մանրամասնութիւնները, ես էլ իմ կողմից յայտնեցի նորան անունս և ծագումս, ի հարկէ ծածկե-

լով նորանից գալուս գլխաւոր պատճառը։ Թնդրեցի նորան, որ ոչ ոքի չասէ, թէ Քիոսցի եմ։ Նա խոստացաւ և իրօք կատարեց իւր խօսքը։ Քանի ես կղզումն էի, նա իմ մշտական բարեկամն էր, և նորա անունը, Պանդելի, պէտք է մոցնել այն բարի հոգիների ցուցակը, որոնք թեթևացրին իմ տանջանքները կեանքիս այդ տխրալի շրջանում։

Մօտենալով գիւղին, Պանդելին իմ տակառները դրեց ծայրում գտնուող խոզողի այգու հնձանում և հրամայեց, որ սպասեմ, մինչև որ կբտանէ էշին և կ'իմանայ, թէ արդեօք գիւղում թրքեր չկա՞ն։ Կարճ միջոցից նա վերադարձաւ մի ուրիշ գիւղացու հետ, բայց առանց էշի։

—Թրքեր չկան, գնանք, Լուկի։

Առանց երկար ու բարակ խօսելու նոցանից իւրաքանչիւրն առաւ մի տակառ և մենք երեքս գիւղը մտանք։

Պանդելին նոր էր պսակուած և կնկայ հետ ապրում էր մի փոքրիկ խրճիթում, ուր և ինձ տաւաջարկեց մնալ։ Հպարտ ժպիտով նա ինձ հասկացրեց, թէ սպասում է զաւակի, որ սակայն չարդելեց նորա կնոջ, Պարասկևային, ընթրիք պատրաստել մեզ համար, ուր իմ խաւիարս էլ վերջին դերը չէր կատարում։ Ընթրեցինք չորս միասին, որովհետև Պանդելին իւր բարեկամին էլ հրաւիրեց ընթրելու։

Հետևեալ օրը մենք գնացինք աղայի մօտ վաճառելու իրաւունք խնդրելու։ Երբ ես կանգնած խստահայեաց աղայի առաջ պատասխանում էի նորա հարցերին, նորան մօտեցաւ մի զինուած խափշիկ։

—Աղա,—ասաց նա,—այս երիտասարդը կօշիկներ է հագել։ Երևի, սա լրտես է։

Եւ իւր սև ձեռքով նա ցոյց տուեց ոտներիս վերայ։

Արդարև, մաշիկներս չէին համապատասխանում գիւղական շորերիս, իսկ ես դժբաղդաբար ուշադրութիւն չէի

դարձրել այդ հանդամանքի վերայ, որովհետև մոքովս անդամ չէր անցել, որ լրտեսի տեղ կարող են ընդունել ինձ։

—Բանդ,—կարձ կարեց աղան։

Չկարողացայ մի երկու խօսք ասել, խափշիկը ձեռիցս բռնեց, քարշեց և կոպտութեամբ ներս հրեց մի սենեակ, որ աղօտ կերպով լուսաւորուած էր մի կլոր պատուհանով։ Այս բոլորը այնպէս շուտ կատարուեց, որ երազ թուեց ինձ։ Բայց, աւաղ, այդ երազ չէր։

Երբ աչքերս ընտելացան խաւարին, ես տեսայ, որ մենակ չեմ. ինձ հետ նստած էին երկու կալանաւոր, հայր և որդի, որոնք այդտեղ էին ընկել արդելուած մաստիկայ ծախելու համար։

Ծերունին հարցրեց ինձ, թէ ով եմ և ինչու են բանդ ձգել, իսկ ոչինչ չէր խօսում և միայն լալիս էր։ Երբեմն ծերունին ընդհատում էր իւր հարցմունքները և պատմութիւնը, որ որդուն մխիթարէ, բայց այդ չէր յաջողվում նորան։

Ամեն տեսակ զգացմունք ինձ վրդովում էր. թրքերից վախենում էի, մօրս և քոյրերիս կարօտել էի. գղջում էի, որ այդ ճանապարհորդութիւնը սկսեցի, և ահա խափշիկը եկաւ ինձ հարց ու փորձի տանելու։

Աղան նստած էր պաշտօնակիցներով շրջապատուած և նարգիլէ էր քաշում։ Նորա առաջ՝ ձեռները խաչաձև ծալած կանգնած էր թարգմանիչը։

—Գլուխ տուր աղային,—ասաց նա ինձ։—Նա քեզ արձակում է այն պայմանով, որ դու իսկոյն և եթ հեռանաս քաղաքից և չվերադառնաս այն գիւղը, ինչ տեղից եկել ես։

Ես գլուխ տուի և համբուրեցի աղայի շորի քղանցքը։ Մի քանի քայլ յետ դալուց յետոյ, ես կանգ առայ ամենայիմար դէմքով։ Ես կամենում էի բոլորովին փարատել աղայի կասկածը, ինձ յիմար ձևացնելով։

—Ի՞նչ է դա այդտեղ բերանը բաց կանգնել,—հարցրեց աղան։

—Աղա, ես զիւղում մոռացել եմ շապիկս, կարելի՞ է գնալ և վեր առնել։

—Դէ՛հ, լաւ, քեզ կըբերեն շապիկդ,—ծիծաղելով պատասխանեց աղան, երբ լսեց ասածիս թարգմանութիւնը,—բայց էլի դու շուտով հեռացիր այս տեղից։

Մի անգամ էլ դլուխ տուի և դուրս եկայ։

Դուռն մօտ ինձ սպասում էր խափշիկը և ձեռքը մեկնեց, խնդրելով սովորական տուրքը, որ կալանաւորներն Արևելքում սովորաբար վճարում են բանդապետին։ Քսակս հանեցի, բայց այնքան երկար քակում էի նորա խճճուած հանդոյցը, որ խափշիկը վերջապէս համբերութիւնը կորցրեց, վրակոթիս մի լաւ տուեց և ճանապարհ դրեց։

Ես ուղղեցի քայլերս դէպի զիւղի ելքը։ Սակայն նա փակ էր և մօտակայքում ոչ ոք չկար, որովհետև օրը կիրակի էր և ամենքը եկեղեցի էին գնացել։ Այն ժամանակ ես բարձրացայ ելքի մօտ գտնուող ծառի վերայ, նորա վրայից էլ անցայ պարսպի վերայ և ցած իջնելով շուտ-շուտ գնացի դէպի այն խրճիթը, ուր թողի Պանդելիին։ Խրճիթը փակ էր։ Ես սկսեցի ձայն տալ Պանդելիին, բայց ոչ ոք չպատասխանեց։ Տան ետևում ախոռ էր։ Ես փականքը բարձրացրի, դուռը բաց արի և տեսայ, որ Պանդելիի էշը այնտեղ է։ Տեսնելով այդ կենդանուն, որի ներկայութիւնը ապացուցանում էր, որ տէրը այդտեղ է, մօտ է, ես անչափ ուրախացայ, որովհետև, Պանդելին, ինչպէս ես ենթադրում էի, հաւանական էր, որ ժամ գնացած լինէր։ Եւ ես այնքան ուրախացայ, ընթերցող, մի՛ ծիծաղէք, որ գրկեցի էշի վիզը և համբուրեցի ռեխը։ Պանդելին, արդարև, շուտով վերադարձաւ և մեր տեսութեան ուրախութիւնը ամեն մի նկարագրութիւնից վեր է։

Ը.

Մենք ժամանակ չկորցրինք, որոշեցինք, թէ ինչ ճանապարհով պիտի գնանք և նորից գնացինք դէպի հիւսիս, մի գիւղից միւսը անցնելով։ Առևտուրս շատ լաւ էր գնում, և անընդհատ լցվում էր քսակս։

Երբ ես հեռուից տեսայ մայրենի քաղաքս, երբ սկսեցի աչքերովս որոնել այն տեղը, ուր մեր ամարանոցն էր, ես զգացի, որ սիրտս թրթռաց կրծքիս տակ, և ոտներս թուլացան յուզմունքից։ Ես նստայ բլրի գառ ի վայրին և սկսեցի նայել, կարծես թէ կամենում էի յիշողութեանս մէջ յաւիտեան տպաւորել քաղաքի շրջակայքի պատկերը։ Պանդելին կողքիս նստած ախորժակով ոչնչացնում էր իւր համեստ նախաճաշիկը։ Նորա էշն էլ աշխատում էր իրեն համար մի որ և է նախաճաշիկ գտնել, և երկու ընկերներիս ախորժակը իմ ախորժակս էլ բացեց։

Բլրից մենք ցած իջանք դէպի հովիտ և կանգ առանք Նէօկորիում։ Ես կամենում էի առ ժամանակ մնալ այստեղ, որ աղատորէն լաւ մտածեմ իմ ծրագիրը։ Ես ասում եմ աղատորէն, որովհետև այդ գիւղում ոչ աղայ կար, ոչ տաճկական վաշտ, առ հասարակ ոչ մի բան, որ երկիւղ պատճառէր, տեսլութեան հետ խառն երկիւղ։ Սակայն մենք երկար չկարողացանք մնալ։ Լուր տարածուեցաւ, թէ Զեսմա տաճկական զօրք է եկել և սպասում է Կ. Պոլսից միւսին, որպէս զի միանալով հետևեն յունական նաւատորմղին։ Պէտք էր շտապել շուտով հեռանալ, որպէս զի ծովում թրքերի ձեռը չընկնենք, որոնք առանց մտածելու իրենց վրէժը մեզանից կ'առնէին Կանարիի և Միտուլի յաջողութեանց փոխարէն։ Այդպէս ես վճռեցի Տինոս վերադառնալ, քանի դեռ թշնամիների նաւատորմիղը չէր երևել Արքիպելագում։ Կանչեցի Պանդելին

սրձարանից, ուր մենք տեղաւորուել էինք։ Էշը կապած էր մուտքի մօտ տակառը մէջքին։

—Մնա՛ այստեղ, Պանդելի, խաւիարն էլ պահիր,—ասացի ես,—գնում եմ, սպասիր ինձ։

—Ո՞ւր։

—Ես կամենում եմ այցելել մեր ամարանոցը։

Պանդելին կամենում էր այդ մտքից հեռացնել, կամենում էր ինձ հետ գնալ, վերջապէս յիշեցրեց ինձ Տօլօ-Պոտամիի արկածը, բայց ես չլսեցի նորան։ Խօսք տուինք միւս օրը հաւաքուել մի և նոյն գիւղում։ Ես մի թի գնեցի, որպէս զի երկրագործ մշակ համարուեմ, և մենք բաժանուեցանք։ Ըստ երևութին Պանդելին անհանգստանում էր, իսկ ես գնում էի հանդիստ սրտով, վստահ լինելով, որ յաջողութիւն պիտի ունենամ ծրագիրս իրագործելու։

Ես քայլերս ուղղեցի դէպի գիւղ դուռը, թիակը ուսիս դրած. յանկարծ մի տան շեմքին մի մարդ տեսայ, որի հագուստը կիսով չափ եւրոպական էր։ Նա կրթնած դռան շրջանակին ծխում էր։ Հեռուից արդէն ես ճանաչեցի այդ մարդուն։ Դա Զենակիսն էր, հօրս հին բարեկամը։ Այդ երկու տարուայ ընթացքում նա ծերացել էր, ալիքներով զարդարուել, բայց դէմքը մնայլ էր։

Սկզբում ես փոքր ինչ զարմացայ, որ նա Նէօկօրիումն է, բայց յետոյ մտաբերեցի, որ այդ կողմերում նա կալուածք ունէր։ Անցայ մօտովը առանց կանգնելու. նա ինձ չճանաչեց։ Եւ ինչպէ՞ս նա կարող էր ճանաչել իւր վաղեմի բարեկամի որդուն գիւղական հագուստով։ Մօտից անցնելիս, ես տատանվում էի, մօտենամ թէ ոչ, և վճռեցի չմօտենալ։ Սակայն մի քանի քայլ անելուց յետոյ ես հակառակը վճռեցի, մտաբերելով, որ Քիոսում նա ամեն օր այցելում էր մեզ։ Ինչպէ՞ս կարելի է չսեղմել Զենակիսի ձեռը, չյայտնել նորան հօրս մահը։

Ցեռ դարձայ և մոտեցայ նորան։

Ծխաքարշը հանեց բերանից և հարցական հայեացք ձգեց վերաս։

—Երկու խօսք ունիմ ձեզ ասելու, պարոն,—դիմեցի ես նորան։

Եւ նա ներս մտաւ։ Ես գնացի նորա հետևից և դուռը փակեցի։

—Ինձ չէ՞ք ճանաչում։

—Չէ։ Ո՞վ ես։

Անունս տուի։

Նա ձեռքերը դէպի երկինք բարձրացրեց և երևում էր, որ մի քանի րոպէ տպշած էր։ Ցետոյ նայեց վերաս, առաւ ձեռս, համբուրեց և իւր սենեակը տարաւ։

Ես չէի սպասում, որ արտաքուստ այնքան սառն ծերունու մէջ այդքան քնքշութիւն կըլինէր, որքան նա ցոյց տուեց։ Նա մանրամասնօրէն հարց ու փորձ արեց ամեն բանի մասին, թէ ինչ եղաւ և ինչպէս ազատուեցանք։ Ես էլ պատմեցի մեր փախուստի մանրամասնութիւնները, մեր թափառական կեանքը, հօրս մահը և աւելացրի, որ մայրս ու քոյրերս բնակվում են Տինոսում։ Այն ժամանակ նա հարցրեց, թէ ինչու եմ եկել Քիոս, և ես հաւատացի ու յայտնեցի նորան իմ մտադրութիւնս։ Նա զարմացաւ, որ ես համարձակուել եմ արհամարհել բոլոր վտանգները, և աշխատում էր համոզել ինձ, որ թողնեմ այդ ծրագիրը և վերադառնամ այն տեղ, ինչ տեղից եկել եմ։ Սակայն ես անդրդուելի էի։ Նա օրհնեց ինձ, համբուրուեցաւ և ճանապարհ ձգեց մինչև դուռը։ Դուռը չբացած նա նորից սկսեց ինձ համոզել, որ մոռանամ թողած թանկագին իրեղէնները և վերադառնամ տուն. բայց նպատակիս հասնելու համար այդքան բան անելուց յետոյ ես չէի կամենում վերադառնալ ոչինչ չարած։

—Դու, երևի, հօրդ պէս շատ պինդ ես խօսքիդ։ Նա էլ երբէք ոչինչ չէր ուզում լսել,—վերջապէս բացականչեց Զենակիսը անհամբերութեամբ։—Դէ՛հ, լաւ։ Գնա։ Եթէ որ և է գործ ունես Թրքերի հետ,—աւելացրեց նա արդէն մեղմ ձայնով,—ես որպէս հիւպատոս որ և իցէ գործով կարող եմ քեզ օգտաւէտ լինել։

Նա գուռը բացեց։

Արևն արդէն իջնում էր դէպի արևմուտք, իսկ ես երկու ժամ ճանապարհ պիտի գնայի մեր ամարանոցը հասնելու համար։ Քայլերս արագացրի, կամենալով մինչև դիշեր տեղ հասնել։ Աչքիս առաջ ունէի վաղուցուայ ծանօթ բլուրը, ուր ծառերի եռևում թաքնուած էր մեր եկեղեցին։

Ճանապարհին ես բացառապէս մտածում էի ապագայի մասին։ Հաւատացած լինելով որ տոպրակները պիտի գտնեմ, ես մտածում էի, թէ ուր և ինչպէս յարմար կը լինի վաճառել նոցա մէջ գտնուող թանկագին իրեղէնները, ինչպէս մօտ և քոյրերիս Իտալիա կամ Անգլիա տանեմ և ինչ առևտուր սկսեմ նոր տեղում։

Երևակայութիւնս բերկրալի ցնորքներ էր ստեղծում, բայց որքան ես մօտենում էի, այնքան էլ շատ էի անհանգստանում և ես զղջացայ, որ Պանդելիին հետս չառայ։

Ես մտադիր էի տոպրակները պահել եկեղեցապատկան պուրակում, իսկ յետոյ Պանդելիի հետ գալ տանելու, որովհետև մտածում էի, որ ես մենակ աւելի քիչ տեղի կըտամ կասկածանքի։ Այժմ ես փոշմանեցի, բայց ուշ էր։

Արդէն մեր տան պարսպի մօտ էի կանգնած։ Ահաւասիկ ծնողներիս սենեակի երկու պատուհանը։ Սակայն անասելի կերպով ապշեցայ, տեսնելով որ միւս պատուհանները վանդակով են պատած։ Դուրս եկաւ, որ մեր տանը թուրքեր են բնակվում, իսկ ես որպէս զող, որպէս օտար թափառական, շրջում եմ նորա պատուհանների տակ։

Որ լաւ կշտանամ այս տխուր պատկերից, ցանկապատի վերայից գնացի խաղողի այգին, որ պարտիզից միայն ճանապարհով էր բաժանվում: Այստեղ ամենաբարձր տեղն էր, և ես կարող էի տեսնել մեր բոլոր կալուածքը:

Տանը և ամեն տեղ չորս կողմում, կարծես, ոչ մի մարդ չէր երևում, բայց պարտիզում ծեր պարտիզպանը փորում էր հողը: Ես ճանաչեցի նորան. դա մեր պարտիզպանն էր, ծեր Եաննին: Որչափ ուրախացայ, երբ ես ճանաչեցի նորան: Դիցուք այդ ուրախութիւնս այնքան էլ անշահասէր չէր, ես յոյս ունէի, որ նա կ'օգնէ ինձ ձեռնարկութիւնս իրագործելու, իսկ օգնութեան փոխարէն ես նորա համար բերկրալի լուր էի բերել, որ նորա աղջիկը ողջ և առողջ է:

Բայց ի՞նչպէս յարաբերութիւն սկսեմ նորա հետ: Համարձակութիւն չունէի ոչ կանչելու, ոչ էլ պարտէզը մտնելու. ես վճռեցի սպասել, մինչև որ բոլորովին կըմթնի, որպէս զի այն ժամանակ գաղտագողի մտնեմ նորա խրճիթը, ասեմ, ով եմ և խնդրեմ, որ օգնէ: Բայց մինչև մթնելն ի՞նչ անէի:

Թէև արեգակը արդէն թաքնուել էր սարի ետևում, բայց դեռ բոլորովին լոյս էր: Հրաշալի ամառնային երեկոներից էր: Ամեն բան հանդիստ էր, այս դեղարուեստական հովտում ամեն ինչ երջանիկ էր երևում: Թնութիւնը մեզ հետ միասին չի տանջվում և յաճախակի իւր խաղաղ բաւականութեամբ աւելի է զրգռում ցաւած վէրքերը:

Այգուց ես դուրս եկայ ճանապարհի վերայ, և կամաց-կամաց գնացի դէպի եկեղեցին: Դլխակոր ես գնում էի, կարծես թէ աշխատում էի գտնել այն մարդկանց հետքը, որոնց հետ ես յաճախակի մտն էի գալիս այս ճանապարհին:

Ես դեռ հեռու էի այն անտառից, ուր եկեղեցին էր, յանկարծ տեսնեմ, մի խումբ կանայք և աղջկերք դուրս

են գալիս անտառից։ Նոքա ուղղակի իմ դէմ էին գալիս, և ես ժամանակ չունէի ուրիշ ճանապարհով գնալու, բայց տեսայ, որ թուրք կանայք են։ Նոցա ուղեկցում էր մի սև նեղքինի, և նորա երկայն շորերն էլ հեռուից նորան էլ կնկայ էին նմանեցնում։

Շուտով անց կացայ միւս կողմ, և հարեմը անցաւ մօտիցս։ Երեխաները խաղալով յետևից էին գնում։

Ամենքից յետոյ գնում էր մի տասներկու տարեկան աղջիկ, որ չէր մասնակցում խաղին։ Անցնելով մօտիցս, նա կանգնեց և նայեցաւ վերաս։ Ես շարունակում էի ճանապարհս։ Ցանկարծ ետևիցս լսում եմ մի կամացուկ ձայն, որ անունս տուեց։

—Լուկի։

Ես յետ դարձայ—և բոլորովին չմոռացեցի, որ իմ այդ շարժուածքը կարող է ինձ մատնել և վտանգի ենթարկել—տեսայ, որ այդ աղջիկը մի քանի քայլ հեռու է ինձանից։ Նկատելով որ ես յետ եմ նայում, նա չոքեց։ Այդ միջոցին ես ճանաչեցի նորան և ուզում էի ասել. Դեսպի՛նա, բայց նա մատը շրթունքներին դրած, կամաց, հաղիւ լսելի ձայնով շշնջեց.

—Աղաո՛ւ ինձ, Լուկի։

Յետոյ նա նորից դեռնին կռացաւ, կարծես թէ ծաղիկներ էր քաղում, որովհետև լսուեցաւ ներքինու խուլ ձայնը, որ յետ էր գալիս։ Նա վազեց և միացաւ միւս երեխաներին։

Ծառերի ետևում թաղնուելով, ես հետևում էի այդ խմբին, մինչև որ տուն մտաւ։ Դեսպինան ամենից ուշ ներս մտաւ և շեմքից յետ նայեցաւ. նա զգում էր, որ ես էլ նայում եմ։

Հասաւ գիշերը, լուսինը դուրս եկաւ և ամեն ինչ լուսաւորեց։ Մինչև որ նա թաք կացաւ, ես շարունակ մտածում էի, թէ ինչպէս ազատեմ Դեսպինային, բայց

դեռ ոչինչ չկարողացայ վճռել։ Վերջապէս բոլորովին մութ էր։ Ես մնացի ցանկապատի ամենացածր տեղին և ապաւինելով Աստծուն, թռայ պարտէզը։ Մութը ինձ չէր արգելում։ Աչքերս էլ կապած լինէին, ես ճանապարհը կըգտնէի։ Ես մնացայ պարտիզպանի խրճթի դռան և բայց անելով ներս մտայ։ Ծերուկը քնած էր։ Գիշերային խաղաղութեան ժամանակ որոշակի լսվում էր նորա ծանր շնչառութիւնը։ Այժմ ես մի բանից էի վախենում, ինչպէս նա չզարթնի, մինչև որ իմանայ, թէ ես ով եմ, և վախից աղմուկ չբարձրացնէ։ Ես կացայ և կամայ նորա անունը ասի.

—Եանոի, Եանոի, ես եմ, Լուկին։ Մի՛ վախենալ, Լուկին եմ։

Ծերունին արթնացաւ։ Շնչառութիւնը բռնելով և ոչ մի խօսք չասելով, նա անշարժ պարկած էր։ Ես շշաափեցի նորա ձեռը և նորից կրկնեցի անունս։ Նա նստաւ անկողնու մէջ. բայց անցաւ մի բոպէ ևս, մինչև որ նա բոլորովին սթափուեցաւ։

Նա ուզում էր ճրագը վառել, բայց ես արգելեցի։ Խօսում էինք մութ խրճթում։ Ցեաոյ ես բացատրեցի, թէ ինչու եմ եկել և խնդրեցի, որ օգնէ։ Նա շտապով հագաւ շորերը, դուռը բացեց, բայց նախ քան դուրս գալը ես նորան հարցրի.

—Ո՞վ է բնակվում մեր տանը։

—Նեղին-աղայի հարեմն է։

—Ո՞վ է այդ Նեղին-աղան։

—Այն անատոլցիների առաջնորդներից մէկը, որոնք մեզ աւերեցին և կործանեցին։

—Իսկ նա ինքը այստեղ է բնակվում։

—Նորան վաղն են սպասում։

—Կա՞ն քրիստոնեաներ հարեմում։

—Միայն Կալանիի աղջիկն է։

—Իսկ ինքը Կալանին ի՞նչ եղաւ։

—Թուրքերը սպանեցին։

«Փոքրիկ Դեսպինայի սև նախագգացումներն իրագործուեցան»,—մտածեցի ես։

Մենք դուրս եկանք խրճթից, և ես հաստատ և համոզուած դնացի այն կողմը, ուր մեր գանձն էր թաղուած։ Ահաւասիկ և այն տեղ ենք։ Պարտիզպանի թին խուլ կպաւ գետնին։

—Կամաց, Եաննի։

—Մեզ չեն լսիլ, իսկ եթէ լսեն էլ, ինչ զարմանալի բան կայ, որ ես փորում եմ հողը։

Սկսեցինք բան անել, և շուտով մետաղի ձայն լսուեցաւ։ Եաննիի թին դիպաւ տոպրակներից մէկին՝ և պատռեց։ Զգուշութեամբ դուրս հանեցի երկու տոպրակն էլ և ծառի տակ դրի։

—Իսկ այժմ,—հարցրեց Ծերունին։

—Այժմ տոպրակները ուսներիս դնենք և դնանք դէպի Նէօկօրի։

—Բայց չէ՞ որ հեռու է և բոլորովին մութ։

—Աւելի լաւ. մեզ ոչ ոք չի տեսնիլ։

—Բայց ինչպէ՞ս կըմտնենք Նէօկօրի այս տոպրակներով. բացի այդ՝ մէկը պատռուած է և ամեն բան դուրս է թափվում։ Սպասեցէք։

Եաննին գնաց և շուտով վերադարձաւ, բերելով հեռը երկու կողով։ Լցնելով նոցա թանկագին իրեղէններով և ծածկելով վերևից տերևներով, մենք ճանապարհ ընկանք

Արշալոյսը դեռ հաղիւ նշմարվում էր, երբ մենք Նէօկօրի հասանք։ Մենք նստանք ճանապարհին ցանկի մօտ, սպասելով որ լուսանայ։

Երբ լուսացաւ, մենք գիւղը մտանք և ուղղակի գընացինք Զենակիսի տունը։ Ըստ երևութին նա ուրախացաւ։

—Հը՞, ի՞նչ է, յաջողուեցաւ,—հարցրեց նա ինձ։

—Այո՛, յաջողուեցաւ, բայց ես մի խնդիր ունիմ։ Դուք ինձ առաջարկեցիք ձեր օգնութիւնը և ես այժմ խնդրում եմ այդ օգնութիւնը։

—Ձեզ նկատե՞լ են թուրքերը և հետևո՞ւմ են,—վախեցած հարցրեց Զենակիսը։

—Ո՛չ, բայց թուրքեր են բնակվում մեր տանը, և նոքա մի սարուկ քրիստոնեայ ունին, հօրս բարեկամի աղջիկն է։ Ինչպէս ուզում է, թող լինի, միայն նորան պէտք է ազատել։

—Ի՞նչ ես կամենում անել, յափշտակե՞լ ինչ է։

—Փողով ազատել։

—Իսկ փո՞ղ։

—Փող չկայ, բայց այս իրեղէնները կան։

—Բայց դոքա միայն քեզ չեն պատկանում, այլ հաւասարապէս և մօրդ, և քոյրերիդ. հանդուցեալ հայրդ քեզ լիազօր իրաւունք չէ տուել հայեցողութեանդ համեմատ վարուել։

—Այո՛, իրաւ է, բայց ո՛չ մայրս, ո՛չ էլ քոյրերս հակառակ չեն լինիլ, հայրս էլ ընդդէմ չէր լինիլ, եթէ ես այս իրեղէններին այսպիսի գործադրութիւն տայի։ Իսկ քոյրերիս օժտի վերաբերմամբ ես հաւատացած եմ, որ կարող կըլինեմ աւելի տալ, քան թէ այս բոլոր բաները արժեն։

—Եւ դու վճռել ես բոլորը տալ։

—Եթէ պէտք է, բոլորը։

Զենակիսի դէմքից երևում էր, որ նա չէ նախատում իմ վճիռը։ Զննելով կողոպտիչների մէջ գտնուած իրեղէնները, որպէս զի համոզուի, բաւական կըլինին թըրքերի ազահութեան բաւականութիւն տալու, նա հրամայեց, որ մի ջորի պատրաստեն և գնաց մեր ամարանոց, կանխապէս ամենաճիշդ տեղեկութիւնները հաւաքելով ինձանից Դեսպինայի մասին։

Երբ նա գնաց, ես էլ իսկոյն և եթ գնացի Պանդելլին որոնելու։ Նա սաստիկ անհանգստանում էր, որ ինքը երկար ժամանակ տանից բացակայ է և մանաւանդ վախենում էր, որ կինը կարող է անհանգիստ լինել մեր մասին։ Բայց ես նորան հանգստացրի, յայտնելով որ վաղը տանը կըլինի։ Ես խնդրեցի նորան, որ ասէ կնոջը, թէ բոլոր մնացած խաւիարը նորան եմ ընծայում, որպէս բաժին ապագայ ժառանգի։

Զենակիսի բացակայութեամբ ժամանակը շատ դանդաղ էր անցնում։ Ես երկիւղ էի կրում, որ բանակցութիւնը անյաջող կըլինի։ Եթէ Թուրքը չկամենայ տալ Դեսպինային, կամ թէ ահագին գին նշանակէ։ Ես ականջ էի դնում դրսի խուրաքանչիւր աղմկին։ Վերջապէս Զենակիսը վերադարձաւ, այն էլ մենակ չէր։ Ես լսում էի, ինչպէս նա խօսում էր մէկի հետ տաճկերէն։ Հիւրը ինքը ազան էր։ Նոքա մտան այն սենեակը, ուր շարուած էին իրեղէնները։ Կրկին տաճկերէն խօսեցան, բայց ես ոչինչ չեմ լսում, ոչինչ չեմ հասկանում։ Ահա Թուրքը մօտենում է պատուհանին, դիտելով և ձեռքում կշռելով ափսէն։

Նա նայում է, նշանակում է, որ չէ հրաժարվում,— այդպէս ես յոյս ունի։

—Սուրճ պատրաստեցէք,—լսում եմ Զենակիսի հրամանը։

Փոքր ժամանակ անցնելուց յետոյ հիւրը և տան տէրը դուրս են գալիս պատշգամբ և մնաս բարեաւ են ասում միմեանց։ Վախից ես չեմ վստահանում մինչև անգամ տուն մտնել, որ իմանամ, թէ ինչով վերջացաւ բանակցութիւնը, և դարձեալ թաղնվում եմ պարտիզի ծառերի ետևում, ուր փակուել էի սկզբից. . .

Զենակիսը ինքը եկաւ ինձ մօտ։

— Բանը շինեցի։ Երեկոյեան Դեսպինան ինձ մօտ կըգայ։

հեծկլտալով փսթաթուեցայ նորա վզով։

Ինչո՞ւ էի լալիս... Միթէ սիրաը գիտէ՞, թէ ինչու է բարախում։ Միթէ կարելի է վերլուծել հոգու զգայմունքները։ Ես Քիոս չեկայ Դեսպինայի համար, բայց այժմ, երբ ես սպասում էի, որ նորա տէրը կրբերէ ինձ Դեսպինային, ինձ թվում էր, թէ ողջ կեանքս նորա մէջ է կենտրոնացած։ Ես չէի մտածում ոչ գանձի մասին, ոչ այն ծրագիրների մասին, որ կապուած էին իրեղէնները գտնելու հետ։ Ես միայն մտածում էի, թէ որպիսի ուրախութեամբ պիտի յանձնեմ որբին մօրս ղիրկը։

Երեկոյեան ազան եկաւ Դեսպինայի հետ և գնաց մենակ, բռնելով իւր էշը Եաննիի կողքերով։ Երբ նա գնաց, Զենակիսը կանչեց ինձ իւր սենեակը։

Հէնց որ ես ներս մտայ, Դեսպինան ինձ մօտ վազեց։ Նա կամենում էր խօսել, բայց միայն կրկնում էր անունս. Լուկի, Լուկի։ Այսերից արցունք էր թափվում։ Զեռներս նորան պարպեցի, նա բռնեց և կամենում էր համբուրել։ Կրծքիս սեղմեցի նորան, բայց չհամբուրեցի... Ես չհամարձակուեցայ։

Այդ իսկ գիշերը մենք ծեր Եաննիի հետ թողինք Նէօկօրին։ Պանդելիի էշի վերայ նստել էր Դեսպինան և ապահով լինելու համար գեղջուկ տղայի շորեր էր հագել։

Ես չեմ խօսիլ, թէ որպիսի ուրախութիւն տիրեց ինձ և մօրս, երբ Տինոսում նոքա տեսնուեցան։ Խօսք էլ չեղաւ իրեղէնների մասին։ Ես հետս բերի մի ուրիշ, ամենաթանկագին գանձ, մօրս երկրորդ աղջկան։ Ես շարունակում էի զորձերս, որ զարմանալի կերպով յաջող էին գնում։ Քոյրերս մարդու գնացին՝ հեռները բաւականին լաւ օժիտ տանելով, իմ ընկերներիս, ես էլ չորս տարուց յետոյ պսակուեցայ Դեսպինայի հետ։

Մի քանի ժամանակից յետոյ կնոջս հետ Անգլիա գնացինք։

Այդ ժամանակից մեր կեանքը երջանիկ էր, բայց և այնպէս ոչ ես, ոչ էլ կինս չմոռացանք այն բոլորը, ինչ որ մենք պատանեկութեան հասակում քաշեցինք։ Ցաճախակի, նայելով աղջիկներիս ու թոռներիս, որոնք եւրոպական շոր են հագած, և Դեսպինայի վերայ, որ եւրոպական խոպոպիքով է, ես մտաբերում եմ այն շորերը, որով գնում էր Դեսպինան Պանդելիի էշի վերայ։ Այդ ժամանակ մենք երկուսս էլ ծիծաղում ենք և գոհութիւն ենք յայտնում Աստծուն Իւր ողորմութեան և հովանաւորութեան համար։

Մ. Բ.

Թարգմ. ռուսերէնից.

Ժ. Ժ. ՌՈՒՍՈՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ.

Քնեց ուչ երբէք, Ժան-Ժակ Ռուսսօ,
Պիտի մռանայ աշխարհ.
Անմահ ես դու, ոգի արգոյ,
Թէև հազար սահի դար։

Քո երկնաշունչ մեծ գործերը
Յաւիտեան պիտի ծաղկեն.
Անթառամ է քո պսակը,
Թող ապգեր գան, թող կորչեն։

Գիտեմ, վրադ շատ հաչեցին
Տգիտութեան շուները.
Քեզ շատ անգամ քարկոծեցին
Կեղծաւորաց խումբերը։

—

Բայց դու մենակ, մարդ քաջարի,
Միշտ անդողրդ, անսասան,
Կանգնած նման ապառաժի՝
Ձեռք պարզեցիր մարդկութեան։

Եւ ինդեցիր հազարամեայ
Շղթաները ծանրացած.
Հզոր ձեռքիդ՝ այն երկաթեայ
Կապանքն ընկան փշրված...

Թէև այսօր պիղծ բերաններ
Ումանք, դարձեալ քո ընդդէմ
Ոռնան ինչպէս քաղցած գայլեր.
Քի՞զ ինչ. չե՞ն «արք սեւագէմ»։

«Աստ հանդչում է բնութեան մարդը,
Մարդը և ճշմարտութեան».
Ժիրարդէնի գրեց ձեռքը
Տապանաքարիդ վրան։

Ծո՞ւնր եմ դնում ես այդ քարին,
Ուրթսուն եօթը տարուց յետ՝
Քեզ պատվում է Հայի որդին.
Եւ նա, մարդ է, վարդապետ։

ՀԵՆՐԻԿՈՍ ԹՈՎՄԱՍ ԲՈՒԼԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ.

Եղան մարդիկ, որ մեկնեցին
Մեզ բնութեան շատ գաղտնիք.
Եղան խելքեր, որ չափեցին
Արև, աստղեր ու երկինք.
Եղան, որ խոր ինչան երկրի
Արգանդի մէջ մուրճերով
Եւ քննեցին մոլորակի
Կեղեւը իւր տարերքով։

Շատերն ինչան, Ովկիանի
Խոր յատակը չափեցին,
Մանրացուցով տեսանելի
Մեզ նոր աշխարհներ բացին.
Զտեսնվող, չբռնվող
Զօրութիւններ զսպեցին,
Լուսից տել տրաղ վաղող
Ուժեր սարկացուցին։

Նոյն իսկ լատին հարկապրեցին
Մեզ պատկերներ նկարել
Եւ շողեվար նաւ ու կառքին
Նեսի, ռումբի պէս վազել.
Ընջվեցաւ տարածութիւն.
Միթէ ճանց ժամանակ,
Մի վայրկենում երբ խօսեցին
Լոնդոն, Նոր-Եորք, Պուլ-Պինանգ։

Բայց պատմութեան օրէնքնե՞ր.
Բարոյական մարդկութեան
Ո՞վ շօշափեց բազկերակը,
Գրեց Ֆիզիօլոգիան.
Լո՜ռ... ահա մեծ Անգլիացին,
Բարոյական Հերքուլէս,
Ո՞ղջ մարդկութեան խառած հոգին
Իջնում է մեծ ասպարէզ...

Բնութիւնից, անցած կեանքից
Հանում է ճիշդ օրէնքներ
Եւ փրկում է դիպուածներից
Մարդկութեան կեանքի գործեր։

«Զկայ մի գործ պատահական,
Մարդու հոգին ունի կապ.
Նոյն Ալեքսանդր Մակեդոնեան
Որպէս ծնվում է մի կաթ.
Ընդհանուրի չափից է կախ
Ողջ աշխարհի գործերը.
Մի մարդ ավնիւ և կամ խարդախ
Կշռի չէ շեղում թաթը»։

Նա կապում է պատմութիւնը
Բնութեան հետ պինդ կապով,
Ցանցառ միստիկի բաժնածը՝
Մարմին, ոգի, մի օղով։
«Ոգին մարմնին է համեմատ,
Արդիւնք բնութեան է մարմին».
Բնութեան դարձաւ ոգին հնաղանդ,
Հոգս միստիկի դլխին։

Եւ այդ օրից պատմութիւնը
Դառնում է ճիշտ դիտութիւն.
Ո՞վ է դորա հեղինակը—
ԲՀՔԼ, անմահ Անդլիացին։

Հանդէ՛ր, հսկայ, Դամասկոսի
Հողում, պայծառ երկնի տակ,
Անմահ շերմիդ անապատի
Որդին կանգնած է պահնակ։
Նորա վերարկուն սպիտակ,
Գուցէ երբէք չքանայ,
Բայց հրաշալի ճակատիդ պատկ՝
Միշտ վարդավառ պիտ մնայ։

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՎԲԻ ՏՕՆԻՆ.

Մովսէս թէև օրէնք տուեց,
Բայց գիրը կար շատ առաջ.
Մեսրովը ազգերին գիր տուեց,
Զարժէ՞ Սա մի խաչնարած։

Այո՛, և սա արածում է,
Բայց հայ ազգի զառները,
Սորա հօտը Լուսակիչն է.
Ի՞նչ էր քուրմ Ցոմթորիկը։

Գօտեպնդած Մե՞ծ Պարթևի—
Սահակի հետ միասին,
Աշխարհ ծնան, լոյս աշխարհի.
Մահ, մի՛ մօտեցիր սուրբին։

Հուր լուսաճեմ նշանը վառ,
Էջմիածնից Օշական
Դաղաղին վրայ բռնած պար՝
Զէ՞ր բուն լոյսը Մեսրոպեան։

Նա Մեսրոպբէի սատղերից վեր
Գրեց անուն բոցավառ,
Թող դան, երթան բիւր բիւր դարեր,
Նորան չի տիրիլ խաւար։

Եռ՜ւհա՜, ծթռած իմաստակներ,
Վասակի զարմ ուրացող,
Ո՞ւր էք նամագուլ բէհսաբներ
Անում, որպէս հերձուածող։

Իբր. «Մեսրոպը պարտական է
Սրվաղցի Մխիթարին.
Հացեկացին սկսել է,
Բայց կատարել Սրվաղցին»։

Ըռխի՜ն եաշիր, դու, այդ էքի,
Տե՛ս, ինչ մեծ մեծ է բրդում,
Հոգս դլխիդ, ձեր որ դործի
Համար այդպէս էք խօսում։

Թէ՞ կարծում էք, որ աշխարհում
Վիեննացուց զատ մարդ չկայ.
Ը՛հ, Մեսրոպբի սատկա՜ծ կատուն
Ձեզ մի այնպիսի զարբ տայ,

Որ մուկի պէս Վատիկանի
Մանէք ծակերն ահարեկ
Այսօր ասնն է մեր Մեսրոպբի,
Ուրացողք, ծո՛ւնկ չոքեցէք։

ԿՆՈՊՈՒԿ ՊՈՉԱՏԻ ԵՒ ՆՈՐԱ ՍԵՆԶՈՅԻ ՄԿԲՏՈՒԹԻՆԸ.

—

«Ինդուկ պոչատն է գալիս,
Ճանփայ տուր, է՜, մեր՝ ողայ,
Տե՛ս, հետն էլ ո՞ւմ քաշ տալիս».
—Աստո՞ւած, ձի՛շտ Սանչօ Պանսայ։
«Աստ, հաճի Կարապետ,
Ո՞ւր են կիտուել այդ յիմարք,
Ուզում են կռուե՞լ մեր հետ.
Ա՛հ, խելագար ապստամբք։
Ուզո՞ւմ են, որ մի խօսքով
Դորանց գժոխք ուղարկեմ,
Կամ նղովքի շանթերով
Շան սատակնե՞րը հանեմ։
—Տէ՛ր իմ, խնայէ՛, հոգևոր,
Մի՛ տալ պատիժ խիստ սատիկ.
Մի՞թէ չկայ մարմնաւոր
Մի ուրիշ հնար փոքրիկ.
Մի թուղթ, մի պստիկ նամակ...
Մի քանի սո՞ւտ... ի՞նչ վնաս...

Միւսներին էլ օրինակ...—
Խօսքը բերանը մնաց։
«Տօ՛, այդ կնդուկ պոչատին
Քաշեցէք կպրէ կարաս,
Մի բաբաթի մկրավին
Սանչու հետ, փառաց ի փառաս»։
Լօթին զոռաց այն կողմից,
Սանչու լերկից ջուր գնաց.
Մոզին էլ չտուն՞ց մի կից,—
Գրունձ ի կպրէ կարաս։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ.



ՊԱՏԱՍԽԱՆ

ՎԱՂԵՄԻ ԸՆԿԵՐԻՍ ՆԱՄԱԿՆԵՐԻՆ.

I.

Մոսկուա, 20 յուլիսի 1894 թ.

Սիրելի՛ Գարեգին,

Մի քանի տարի յամառութեամբ լռութիւն պահպանելուց յետոյ՝ յանկարծ մի նամակով ընդհատեցիր այդ լռութիւնը և պահանջում ես, որ ես էլ վերանորոգեմ խոստումս, և դարձեալ շարունակենք մեր նամակագրութիւնը։ Թո՛ղ քո ասածը լինի. բայց ես այդպիսի խոստումներին հաւատ չեմ ընծայում։ դա մեզանից համարեա իւրաքանչիւրը կ'ասէ, հիմնուելով անձնական փորձի վերայ։ Ես իսկապէս այդ մասնաւոր, անհատական խոստմնազանցութիւնների համար ոչ ոքի չեմ մեղադրում։ Չէ՞ որ աւելի շօշափելի գործերում մենք և՛ խոստմնազանց, և՛ պարտազանց ենք լինում։ Հազիւ տասը տարի է, որ մենք բաժանուել ենք, և մեր բազմանդամ ընկերութիւնը դէս ու դէն ցրուեցաւ. Նայի՛ր չորս կողմդ, մտաբերիր գէթ մասամբ մեր անցեալ խոստումները խանդակաթ սիրով փայփայած իդէալների վերաբերմամբ և դու կըհամոզուես, որ մենք կամ այն ժամանակ՝ 25 տարեկան հասակում, տղայամիտ էինք, և կամ այժմ այդ բոլորը մեզ համար terra incognita *է։ Չեմ կարծում, որ այնքան էլ տղայամիտ լինէինք. արդար խղճով եթէ խօսելու լինինք, պիտի խոստովանինք մեր անպարտաճանաչութիւնը։ Ես վստահանում եմ նամակներումս անկեղծ լինել քեզ հետ և լիայոյս եմ, որ*

նոյն անկեղծութիւնը կըտեսնեմ և քո կողմից. ապաքէն անխորհուրդ պիտի լինի մեր նամակագրութիւնը և միանգամայն անպտուղ։ Հաղարաւոր վերստերով բաժանուած ենք միմեանցից, միջոց չունինք դէմ առ դէմ նստած սերտ խօսելու, ուրեմն նամակագրութեամբ անենք այդ։

Նախատինքներ շատ ես թափում գլխիս, ասելով թէ լիովին անձնատուր եմ եղած անձնական շահերիս, մոռացել եմ լրագրութիւնը, գրականութեամբ չեմ պարապում և հեգնութեամբ աւելացնում ես, որ «իդէալիստ» էի միայն ուսանողութեան ժամանակ և գուցէ փառասիրութիւնից դրդուած աշխատակցում էի պարբերական հրատարակութիւններին։ Մեղադրում ես, որ այնքան ծուլացել և ուրացել եմ նախկին գաղափարներս, որ երկար տարիներ գրիչս ձեռս չեմ առնում և գոնէ երբեմն-երբեմն յօդուածներ չեմ գրում։ Իրաւ է, բաւականին ժամանակ կըլինի, որ ես լրագրական ասպարէզ դուրս չեմ եկել և հաղիւ թէ այսուհետև կարողանամ ասպարէզ դուրս գալ։ Դորա պատճառները բազմատեսակ են. գոցանով այս անգամ զբաղուել նշանակում է ամբողջ թերթեր գրել. ես միայն անցողակի կերպով կըխօսեմ մի երկու էական պատճառների մասին։

Գիտես, սիրելիս, որ կեանքը անպայման իւր կնիքը դնում է իւրաքանչիւրիս վերայ. մէկը սաստիկ է ենթարկվում նորա ազդեցութեանը, իսկ միւսը—ո՛չ. երանի նորան, ով որ կարողանում է տանել կեանքի բոլոր ծանրութիւններին ու դառնութիւններին և կատարել իւր հասարակական պարտականութիւնը։ Բայց, կարծեմ, այդպիսի հաստատակամութեամբ ամենքը չեն օժտուած, ուստի և չէ կարելի անպայման իւրաքանչիւր այդպիսի անհատին դատապարտել. մենք աւելի լաւ կ'անենք, եթէ աշխատենք, որ այդպիսիների թիւը պակասի և ոչ թէ աւելանայ։ Յետոյ ես կարծում եմ, որ հասարակութեան ծառայել կարելի է և ուրիշ կերպ. անհրաժեշտ պայման չէ անպատճառ յօդուածներ գրել, թղթակցութիւններ անել, գրքեր թարգմանել, բանաստեղծութիւններ գրել և այլն։ Բարեխղճութեամբ ծառայել այս կամ այն թէկուզ տեղական մի հիմնարկութեան, պարտաճանաչութեամբ վերաբերուել ըստանձնած այս կամ այն հասարակական պաշտօնին, — ես կարծում եմ, որ նոյնպէս նշանակում է օգտակար լինել հասարակութեան։ Ի հարկէ, դորան դու պիտի ասես, թէ ինչո՞ւ այդքան սահմանափակում ես գործունէութեանդ շրջանը, ինչո՞ւ աւելի

չանել, երբ հանգամանքները ներում են։ Կարող ես, անշուշտ, կարող ես և աւելի ասել, բայց ես ներկայումս այն համոզմունքն ունիմ, որ ո՛չ մի գործի ձեռնամուխ պիտի չլինի մարդ, եթէ չունի անհրաժեշտ պատրաստականութիւն։ Սաստիկ մեղանչում է այն մարդը, ով որ յանդգնում է առաջնորդել մի ամբողջ հասարակութիւն, հասարակական կարծիքի թարգման հանդիսանալ, չունենալով պարտ ու պատշաճ պատրաստականութիւն։ Իմ խորին համոզմունքն է, որ ես այդ պատրաստականութիւնը չունիմ, հետևարար և լրագրական յօդուածներովս ես աւելի շուտով վնաս կարող եմ բերել, քան թէ մի որ և իցէ օգուտ։ Այս կէտի վերաբերմամբ էլ գիտեմ, թէ ինչ պիտի լինի քո պատասխանը։ Դու ինձ ասելու ես. եթէ դու, որ համալսարանական ուսում ունիս և քեզ նմանները, ինչպէս քո ընկեր Յովհաննէսն է, փիլիսոփայութիւններ անելով խոյս տաք ամեն մի հասարակական գործից, այն ժամանակ ի հարկէ ասպարէզը կըմնայ այն մարդկանց, որոնց անունը դու զզուանքով էիր լսում։ Ճիշտ է, ես առաջ էլ զզուանքով էի լսում այդ լրագրական և գրականական ցեցերի անունները, այժմ էլ նոյն զզուանքն եմ տածում։ բայց մի՞թէ ես պարտականութիւնս կատարած կըլինիմ, եթէ խղճիս հակառակ գնամ։ Ես հաւատում եմ իմ ներքին ձայնին և չեմ կամենում դաւաճանել նորան։ Յաւում եմ միայն, որ համեմատարար ուշ լսուեցաւ իմ մէջ այդ ձայնը։ Քի՞չ մարդ է եղել, ինչպէս ասում է ռուս նշանաւոր հեղինակներից մէկը, կարծեմ, Լերմոնտովը, որոնք՝ սկսելով իրենց կեանքը, կամեցել են վերջացնել նորան որպէս Ալէքսանդր Մակեդոնացին, բայց... երևի, մի-մի հերոստրատներ են մնացել։ Քի՞չ կան մեզանում գրականութեամբ պարապողներ, որոնք կամենում են մի-մի Շէքսպիր, Բայրըն, Գեօթէ և Շիլլեր դառնալ. բայց աւա՜ղ... նոքա նոյնպէս անհետ կորչում են, ինչպէս և միլլիոնաւոր մարդիկ են կորել։ Աւելի կատաղի թշնամութիւն դէպի նոր գրականութիւնն ես չեմ իմանում, բացի այդ մարդկանց արածը. կամենալով անուն վաստակել և գրականութեան մէջ, այդ համբակները երբեմն ձեռնամուխ են լինում կլասսիքական հեղինակների թարգմանութեան, ինչպէս Շէքսպիր, և կարծես միայն նորա համար, որ նոցա իրենց փառքի բարձրութիւնից վայր գլորեն։ Եւ որքան բանաստեղծներ ունինք, որոնք անմահ լինելու մասին են մտածում և այդ նպատակին հասնելու համար աշխատում են հերոստ-

բատ դառնալ. վերջինս տաճարը այրելով իրեն անմահացրեց, սոքա—գրականութիւնն ապականելով։ Եւ դու կամենում ես, որ ես էլ ընկնեմ դոցա շարքը. քա՛ լեցի։

Բայց ինձ զարմացնում է քո Նամակի մի կէտը, ուր դու գրում ես ինձ. «մեր առաջադիմական կուսակցութիւնը փառաւոր կերպով յաղթութիւն տարաւ, իսկ խաւարամիտները անսպասելի կերպով պարտութեան ենթարկուեցան, և այս ընտրութիւնները պարզ ապացուցեցին, որ խաւարամիտների դարը անցել է, ժողովուրդը սթափուել է։ Ներսիսեան դպրանոցը կ'աղատուի խաւարամիտ հոգաբարձուներից, որոնք այդ դպրանոցը իրենց նպատակներին էին ծառայեցնում; իսկ մեր առաջադիմական կուսակցութիւնը պիտի աշխատի իրագործել հանգուցեալ Հոգելոյս Հիմնադրի լուսաւոր գաղափարները»։ Ցիշում եմ, ուսանող ժամանակդ աւելի թարմ ու լուրջ դատողութիւն էիր տալիս, քան այդ Նամակումդ։ Ինչպէս երևում է, այդ տեղ մթնոլորտը այնպէս է, որ ոչ ոք աղատ չէ կարող մնալ կուսակցական նեղ ոգուց և անպատճառ պիտի վարակուի։ Անկասկած օդը վարակուած է և տարափոխիկ հիւանդութեան պէս է դարձել մեզանում կուսակցական նեղ ոգին։ Արդեօք չկան մասնագէտներ, որ հետազօտէին և որոշէին, թէ ինչ բացիլներ կամ միկրոբներ են վարակել օդը. թերևս անհրաժեշտ լինի Կօխի կամ Ռուի օգնութեան դիմել, ուստի լաւ է օր առաջ այդ հանդամանքի մասին մտածել լուրջ կերպով, թէ չէ յետոյ դժուար կը լինի առաջն առնել։

Խնդրեմ, ասես ինձ. եթէ մէկը մի հասարակութեան մէջ կամ նոյն իսկ ընկերական շրջանում խոսակցութեան ժամանակ ասէ, թէ ես առաջադէմ եմ, լուսամիտ եմ, զարգացած եմ, աղատամիտ եմ ևայլն, իսկ այս ինչ ոքը յետադէմ է, խաւարամիտ է, տգէտ է ևայլն,—ի՞նչ տպաւորութիւն կը թողնէ և ի՞նչ անուն կը տաս այդպէս խոսողին։ Բնաւ չեմ կասկածում, որ կ'ասես, թէ նորա մի տախտակը պակաս է, ինչպէս ասում է ժողովուրդը, կամ կ'ասես, թէ անտանելի յիմար է, որովհետև յիմարութեան հետ և մեծամիտ է։ Բայց տես, որ այդպէս միայն դու չես խոսում մասնաւոր Նամակում, այլ մինչև անգամ տպագրական խոսքով, շարաթը երեք անգամ, ի լուր ամենեցուն։ Եւ դա մի այնպիսի սովորական բան է դարձել, որ այդ երևոյթը ո՛չ միայն պախարակելի չէ համարվում, այլ մինչև անգամ

գտնվում են ջատագովներ և խրախուսողներ։ Դու էլ ես կարդում օտար լրագիրներ, ես էլ. ո՞ր լրագրի մէջ ես կարդացել, որ նա ինքն իրեն ազատամիտ, յառաջադէմ, լուսամիտ և այլն այդ տեսակ անհեղեղ խօսքերով փառաբանի։ Անկասկած փոքր ի շատէ խելքը գլխին մարդը այդ չի ասիլ և ոչ մի օտար լրագրում այդպիսի երևոյթ չես նկատիլ։ Օտար մի որ և իցէ լրագիր կարդալիս դու էլ, ես էլ, երրորդն էլ, չորրորդն էլ ընդհանուր ուղղութիւնը կ՚որոշենք յօդուածներից, այս կամ այն խնդրի վերաբերմամբ։ Յայտնած մտքերից ու հայեացքներից։ Սակայն մեզանում միտք ու հայեացք ասած բաները երկրորդական տեղ են բռնում։ Ինչո՞ւ նեղութիւն քաշել, քանի որ ամենագիւրին կերպով ես կարող եմ ինձ յատկացնել ազատամիտ, առաջադէմ տիտղոսներն, իսկ հակառակորդիս մկրտել յետադէմ, խաւարամիտ անուններով։ Փառք Աստուծոյ, որ նպաստող պայմաններ էլ կան. ժողովուրդը տգէտ է, նորանում աւելի զարգացած է երամական շարժման ինստինկտը, արժէ միայն իմանալ նորա թոյլ երակը, որ կարողանաս գրաւել քո կողմը։ Կրկնում եմ, ուսանողութեանդ ժամանակ աւելի սառն դատողութեամբ էիր վերաբերվում դէպի մեր պարբերական հրատարակութիւնները, աւելի իրաւացի կերպով էիր յայտնում քո զայրոյթը. իսկ այժմ, երբ պէտք էր սպասել քեզանից կշռադատ և ծանրախոհ քննադատութիւն, դու այնքան խմորուած ես կուսակցական նեղ ոգւով, որ եթէ ինձ պատմէին՝ ես չէի հաւատալ. բայց աւաղ... քո ձեռով գրած նամակդ է առջևս։

Ես դեռ առիթ կ՚ունենամ, սիրելի ընկեր, աւելի մանրամասն խօսելու քո նամակի մի քանի էական կէտերի առթիւ, եթէ միայն դու էլ հաստատ մնաս խոստմանդ և շարունակես նամակագրութիւնդ։ Միայն այսքանս կ՚ասեմ քեզ առաջուց, որ աղմուկ հանելն ազատամտութիւն չէ և ոչ էլ գործունէութիւն է։ Ես կրգերադասեմ այն անգործութիւնը, որին ես անձնատուր եմ՝ ինչպէս դու ես գրում՝ այնպիսի գործունէութիւնից, որ անպայման վնասակար է և պախարակելի։ Մի՛ զարմանար, որ ես փաստեր չբերած, ապացոյցներով չհաստատած այդպիսի դատավճիռ եմ դնում։ կ՚աշխատեմ հետևեալ նամակներումս աւելի ընդարձակօրէն խօսել այն կտորների առթիւ, որոնց մասին այս անգամ ժամանակի սղութեան պատճառով անկարող եմ անելու։

II.

Մոսկուա, 30 յուլիսի 1894 թ.

Սիրելի՛ Գաբրիելեան,

Անցեալ նամակումս ես չկարողացայ ընդարձակ կերպով խօսել ինքնակոչ ազատամիտ կուսակցութեան և «Մշակ» լրագրի մասին։ Թո՛ղ չվիրաւորուի քո ընկերական զգացմունքը, որ ես այդպէս եմ անուանում այդ կուսակցութիւնը, որին դու էլ ես պատկանում։ Եթէ դա լինէր մի անհատական՝ քեզ վերաբերեալ յատկութիւն, գուցէ իրաւունք ունենայիր նեղանալու. սակայն քանի որ դա մի խոշոր երևոյթ է, որ վարակել է հասարակութեան մի որոշ մասը, ես իրաւունք ունիմ երևոյթին իւր իսկական անունը տալու։

Իսկապէս ես չեմ հասկանում և խնդրում եմ, որ դու ինձ բարեհաճես բացատրել, թէ ինչո՞ւ ձեր կուսակցութիւնն առաջադէմ, ազատամիտ է։ Ինչո՞ւ «Մշակ» լրագիրն առաջադէմ և լուսամիտ է, իսկ «Նոր-Դարը», «Արձագանքը» յետադէմ և խաւարամիտ են։ Թողնենք մինչև անգամ այդ լրագրները. նոքա գոնէ այնքան խելք ու համեստութիւն ունին, որ իրենց չեն գովաբանում. խօսենք բացառապէս ձեր «առաջադէմ և ազատամիտ» կուսակցութեան և ձեր օրգան «Մշակ» լրագրի մասին։

Ամեն մի ուղղութիւն ունի իւր որոշ գոյնն, իւր որոշ ծրագիրն, իւր որոշ պահանջներն ու նպատակները, որոնց նա ձգտում է, բայց մինչև օրս ես դեռ չեմ կարողացել ըմբռնել ձեր առաջադիմութեան և ազատամտութեան հիմունքը։ Ես դեռ չեմ կարողանում պարզ կերպով ինձ հաշիւ տալ, թէ դուք ինչ էք ուզում, ինչ գաղափարներ էք կամենում տարածել և ինչ նպատակների էք կամենում հասնել։ Իմ անհատական կարծիքս է, որ խաւարամիտ և յետադէմ կուսակցութեան յատկութիւն է այդ, և այդպէս էլ է թէ՛ ձեր կուսակցութիւնը և թէ՛ ձեր օրգան «Մշակը»։ Ցիշում ես, կարծեմ, Տուրգենևը մի տեղ ասում է, որ եթէ չես կամենում, որ քո պակասութիւնը երևսիդ ասեն, աշխատիր ուրիշի վերայ ձգել կամ ուրիշի մէջ գտնել այդ պակասութիւնը։ Այդ խօսքերի ճշմարտութիւնը այս դէպքում

ակներև է։ Դուք աշխատում էք ձեր մերկութիւնը ծածկել՝ բըղաւելով թէ տեսէք, այս ինչ ոքը բորիկ է. և օգտուելով այն հանգամանքից, որ ամբոխը իւր ուշադրութիւնը դարձնում է այդ բորիկ մարդու վերայ, աշխատում էք թոցնել մի կտոր շոր ձեր մերկութիւնը քողարկելու։

Ազատամտութեան կամ յառաջադիմութեան, անտարակոյս, իւրաքանչիւր ոք լիովին իրաւունք ունի ձգտելու. բայց իւրաքանչիւր ոք իրաւունք չունի իրեն ազատամիտ կամ առաջադէմ անուանելու, ինչպէս այդ անում է ձեր կուսակցութիւնը։ Իւրաքանչիւր թերուս, որ ոչինչ գաղափար չունի մտաւոր յառաջխաղացութեան մասին, այսօր անամօթաբար իրաւունք ունի իրեն ազատամիտ անուանելու և աւելի անամօթաբար անուանարկելու ամեն մէկին, որ փոքր ի շատէ պատուաւոր հասարակական դիրք ունի և անհատական արժանիք։ Աչքի առաջ ունենալով մեր հասարակական վիճակը՝ ազատամիտ կամ առաջադէմ համարել կարող եմ իւրաքանչիւր անհատին, ով որ խելքը գլխին դատողութիւն կարող է տալ այս կամ այն խնդրի մասին։ Դատողութիւն ի հարկէ իւրաքանչիւր մարդ կարող է ունենալ, բայց իմ խօսքս այնպիսի դատողութեան մասին է, որ վայել է եւրոպական լուսաւորութեամբ զարգացած մարդուն։ Բայց տարաբախտաբար մեզանում եւրոպական լուսաւորութեան անունով խօսում են թերուսները, որոնք արտաքսուած են մի որ և է դպրոցից։ Իսկ բարձր ուսում ստացածներն կամ ընաւ հեռու են այդպիսի հողմարածութիւնից, կամ ենթարկվում են հոսանքին և միակողմանի դատողութիւն են տալիս։ Մեզանում այժմ բնական ընթացքով շատ քիչ բան է կատարվում. այն, ինչ որ խելացի է և լուրջ, համարվում է խաւարամտութիւն. այն, ինչ որ իսկապէս մտքերի շփոթութիւն է, համարվում է ազատամտութիւն։ Անսանձ, անպատկառ լեզու—այժմ համարվում է ազատամտութիւն. անտեղի յարձակմունքներ և անուանարկութիւններ—ներկայումս համարվում են առաջադիմութիւն. կուսակցական նեղ ոգի մտցնել իւրաքանչիւր հասարակական հիմնարկութեան և գործի մէջ — մեծ խելքի բան է. հայհոյել աջ ու ձախ—եւրոպական լուսամտութիւն է. թեթևսոլիկ կերպով վերաբերուել մէկի պատուին, աշխատել նորան ցեխի հետ հաւասարեցնել—դա այժմեան առաջադէմ կուսակցութեան նշանաբանն է։ Բայց չէ՞ որ այդ բոլորը միասին առած ո՛չ թէ ազատամտութիւն է, այլ աւելի վատթար

է, քան թեթևամտութիւնը։ Ձեր հրապարակախօսների գրելու ձևը, նոցա անհաշիւ կերպով սորա կամ նորա պատիւ շօշափելը միանգամայն արժանի են նախատինքի և կշտամբանքի։ Ազատամտութիւնը թոյլատրում է հրապարակախօսին գրել այլոց իրաւանց խախտման և հասարակութեան համար վնասակար գործողութիւնների մասին, էքաշուելով այս կամ այն անձնաւորութեան և հիմնարկութեան հեղինակութիւնից, ի հարկէ, կանխապէս ձեռք բերելով ճիշդ, գոնէ էութեան վերաբերեալ փաստեր։ Սակայն ազատամտութիւն չէ աջ ու ձախ հայհոյանքներ շպրտելը, աջ ու ձախ վիրաւորանք հասցնելը, էքենելով թէ արժանի է այդ բոլորին այս կամ այն անձնաւորութիւնը, այս կամ այն հիմնարկութիւնը. ձեզ համար հաստ ու բարակ մի գին է։ Հրապարակախօսութիւնը այդ դպքում կորցնում է իւր վեհ նշանակութիւնը. այլ ևս նա չէ դառնում այն ֆորումը, ուր իւրաքանչիւրը կարող է հանդէս գալ ճշմարտապէս խօսելու, այլ դուրս է գալիս Թիֆլիսի մէյդանի խօսակցութիւնը, և երևի ձեր ազատամիտ կուսակցութիւնը հասարակախօսութիւնը այդպէս է հասկանում։ Հաւատացած եղէր, որ դա մի ուրիշ տեսակ մարդկանց յատկութիւնն է, որոնց անունը քեզ էլ լաւ յայտնի է, ուստի և աւելորդ է այստեղ յիշատակելը։ Ազատ գրել կարելի է որոշ չափով, բայց չի կարելի խուվարար և խառնակիչ լինել ամեն մի գործում յանուն ազատամտութեան։ Տարաբախտաբար մեր հրապարակախօսութեան մէջ որոշ կուսակցութիւնը շփոթում է այս բաները։

Թողնենք առ այժմ առանց փաստերի խօսելն. վերցնենք «Մշակի» մի քանի համարները, կարդանք և տեսնենք, թէ որպիսի ազատամիտ և առաջադէմ մտքեր է նա յայտնում։

Բաց, խնդրեմ, սիրելի Գարեգին, «Մշակի» այս տարուայ 73 № և ուշադրութեամբ կարդա «Իշխանաւոր և Կուսակցութիւն» վերնագրով առաջնորդողը։ Դու կըտեսնես, որ դորա գրողը ինքն էլ չէ իմացել, թէ ինչ է ասում, որովհետև ինքն էլ չէ պարզել որոշ կերպով, թէ արծարծած խնդրի մասին ինչ պէտք է ասել. տրամաբանութիւնից զուրկ մի յոդուած, որ աւելի նման է հնձած խոտի, ուր պիտանիների հետ լինում են և անպէտքները։ Բայց որքա՛ն ինքնավստահութիւն և մեծամտութիւն է երևում գրողի կողմից։

«Ամեն մարդ,—այդպէս է սկսում յիշեալ առաջնորդողը,

—լինի նա մասնաւոր անհատ, թէ իշխանաւոր, բարձրագիր պաշտօնեայ, թէ հասարակ գործող,—իր համոզմունքներով և գաղափարներով կարող է պատկանել այս կամ այն կուսակցութեան»։

Մասնաւոր անհատի մասին խօսելն այստեղ կարևոր չէ, քանի որ Նոյն իսկ վերնագրից մենք իմանում ենք, որ հեղինակը կամենում է խօսել «իշխանաւոր», «բարձրագիր պաշտօնեաների» ու «կուսակցութիւնների» մասին։ Որ իւրաքանչիւր մասնաւոր անհատ, հասարակ գործող ազատ է այս կամ այն կուսակցութեան պատկանել, — դորա մասին, կարծեմ, ոչ ոք հակառակը չէ ասել. իսկ որ իշխանաւորը կամ բարձրագիր պաշտօնեան կարող է «պատկանել» այս կամ այն կուսակցութեան,— Նոյնպէս ճշմարտութիւն է. ինչու չէ՞, նա կարող է, բայց թէ դա որքան ցանկալի է, այդ է խնդիրը։ Սակայն ազատամիտ և լուսամիտ հեղինակը միանգամայն համաձայն չէ այն «կեղծաւոր մտքի հետ, թէ իշխանաւորը, պաշտօնեան, լինի նա մի դպրոցի տեսուչ, առաջնորդ, կամ Նոյն իսկ կաթողիկոս (լաւ լսիր), չըպէտք է համակրի այս կամ այն կուսակցութեան, այլ նա պէտք է դուրս լինի ամեն տեսակ կուսակցութիւններից»։ Կաթողիկոսի, իշխանաւորի, բարձրագիր պաշտօնեայի այս կամ այն կուսակցութեան «պատկանելն» ուրիշ բան է, «համակրելը»—ուրիշ։ Իւր դատողութեան կամ խորհրդածութեան այդ գլխաւոր դրութիւնը հեղինակը առաջին հինգ տողում յայտնելով՝ հետևեալ հինգ տողում արդէն յեղաշրջում է։ Նոյն իսկ կաթողիկոսը, իշխանաւորը, բարձրագիր պաշտօնեան կարող է համակրել այս ինչ կամ այն ինչ կուսակցութեան մի որ և է լուրջ մտքին, խելացի դատողութեան, լաւ առանձնայատկութեան. բայց հաղիւ թէ Նոյն կաթողիկոսը, Նոյն իշխանաւորը, Նոյն բարձրագիր պաշտօնեան յարմար համարի իւր գործունէութեան անաչառութեան համար պատկանել այս կամ այն կուսակցութեան։ Թող այդ առաջնորդող գրողը ցոյց տայ, թէ որ հրապարակախօսն է պաշտպանել այն կեղծաւոր միտքը, որ կաթողիկոսը, իշխանաւորը, բարձրագիր պաշտօնեան չպէտք է համակրի այս կամ այն կուսակցութեան։ Գրողը ինքն իրեն համար չեղած բաներ է ստեղծում և սկսում է մաքառել նոցա հետ, և այդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ պատերազմել հողմաղացների հետ։ Բայց գրողը նշանակութիւն չէ տալիս իւր գործ

ածած բառերի իմաստին. Նորան պէտք է առաջնորդող յօդուած գրել և գլխին եկածը թղթի վերայ է անց կացնում առանց հաշիւ տալու, մտածելու, թէ ինչ է գրածը։ Այդ ի՞նչ առաջնորդող յօդուած է, որի առաջին տասը տողում մտքերի հակասութիւն է երևում։ Ոչինչ, եթէ ամբողջ յօդուածում միայն այդ անճշդութիւնը լինէր, բայց տարաբախտաբար յօդուածը ամբողջապէս ներկայացնում է մտքերի շփոթութեան կուտակումն։

Մի տարօրինակ համակրանքով հեղինակը արձանագրում է մեր հասարակական կեանքի այդ այլանդակ երևոյթը և ասելով որ նա քսան տարուայ պատմութիւն ունի, եզրակացնում է, որ «նոյն իսկ ամենաբարձր պաշտօնեաներն էլ, կամաց-կամաց, իրենց ուղղութեամբ, իրենց հայեացքներով և ձգտումներով պէտք է համակրեն, կամ նոյն իսկ պատկանեն այս կամ այն կուսակցութեան»։ Բառերը մեղանում ոչինչ նշանակութիւն չունեն. «պէտք է համակրեն» կամ «պատկանեն», կարծես, համանման նշանակութիւն ունին և կարելի է անխտիր մէկը միւսի տեղ գործ ածել։ Թողնենք բառերը. դա ընդհանուրիս պակասութիւնն է։ Ուշադրութեան արժանի են հեղինակի մտքերը, որոնք, կըրկնում եմ, միմեանց հակասում են։ Փոխանակ այդ երամական շարժման առաջն առնելու և միջոց տալու, որ ընթերցողը ինքն էլ կարողանայ իւր գլխով մի բան վճռել, մի քիչ ուղեղը ենթարկել գործունէութեան, մեր հրապարակախօսները ճգնում են աւելի զարկ տալ այդ երևոյթին, աւելի այլանդակութիւն տալ Նորան։ Եթէ մէջ տեղը գաղափարի կռիւներ լինէին, ես ուրիշ կերպ կըխօսէի. բայց ցաւն էլ հէնց Նորանումն է, որ ձեր աղատամիտ կուսակցութիւնը նոյնքան է սիրում գաղափարի հետ գործ ունենալ, որքան մուկը կատուի հետ։ Ասա՛, խնդրեմ, ենթադրենք մինչև անգամ, որ ամբողջ հայ հասարակութիւնը իւր բոլոր հիմնարկութիւններով տոգորուած է կուսակցական ոգւով, ի՛նչ համակրելի կամ ուրախալի երևոյթ է այդ։ Չէ՞ որ դորանից մեր ոչ մի գործը առաջ չի գնալու և չէ էլ գնում, ինչպէս ես այդ քեզ կ'ապացուցանեմ փաստերով, երբ կըգրեմ քեզ ձեր փառաւոր ընտրութիւնների մասին։ Մ'իայն այսքանը կ'ասեմ այժմ, որ աղատամիտ կուսակցութիւնը անընդունակ լինելով որ և է գործ ստեղծելու, աշխատում է խռովութիւններ սերմանելով և խարդաւանքներ լարելով հեռացնել գործից այն մարդկանց, որոնք

մի որ և է գործ շինել են, կատարել են։ Այո՛, սա փաստ է և անհերքելի իրողութիւն։

Մի խոշոր պակասութիւն, որ յատուկ է առաջադէմ կուսակցութեան, այդ այն է, որ նոքա կարծում են, թէ ամեն բան իրանցով պիտի սկսուի, իրանցով էլ պիտի վերջանայ։ Եթէ այդպէս չլիներ, նոքա մի փոքր նեղութիւն պիտի քաշէին ծանօթանալու մօտ անցեալի հետ և չմոռանալ իրենց ժամանակակից դէպքերը։ Բայց դա ինչի՛ է հարկաւոր. նոքա առաջադէմ են, նոքա ոչինչ չեն ուզում իմանալ, միայն առաջ են գնում։ Եւ գնում են կուրօրէն. միայն երբ նոքա իրենց հաստ գլուխը զարկեն ժայռին, այն ժամանակ կըսթափուեն և աչքերը բաց կ'անեն։ Այդ ողորմելիները կարծում են, որ հայերի համար ամեն բան սկսուել է 70 թուականների սկզբից, այսինքն՝ «Մշակի» հրատարակութիւնից։ Նոքա ուշադրութիւն անգամ չեն կամենում դարձնել 60 թուականների վերայ, երբ արդարև գաղափարի կռիւ կար, երբ կուսակցութիւններ կային, որոնց անդամները գիտէին, թէ ինչ էին անում։ երբ իւրաքանչիւր մոնթ ինքն իրեն չէր կարող այս կամ այն կուսակցութեան անդամ համարել և աղատամիտ կամ յառաջադէմ տիտղոսն էլ իւր ճակատին կըպցնել։ Բայց չէ՞ որ այն ժամանակուայ մարդիկ խելք ունէին, զարգացումն ունէին, ուսում ունէին, պատրաստականութիւն ունէին և ոչ թէ այժմեան թեթեւամիտների պէս էին, որոնք այսօր մի բան գրում, որ վաղը նորան հերքեն։ «Սորանից քսան, քսանհինգ տարի առաջ, երբ հայոց կեանքի մէջ չկային որոշ(?), միմեանցից միանգամայն տարբեր (!) ուղղութեան պատկանող կուսակցութիւններ, այն ժամանակ հարց էլ չէր կարող լինել այն մասին (իսկ այժմ կարո՞ղ է լինել), թէ ինչ կուսակցութեան է համակրում, կամ պատկանում կաթողիկոսը, առաջնորդը, կամ դիցուք մի թեմական տեսուչ»։ Անշուշտ այս տողերից դու լաւ կ'ըմբռնես, թէ ինչ է հեղինակի փորի ցաւը, ինչ է ուզում ասել և ինչպէս նա չի վստահանում ասելիքը շուտով ասել, այլ դէս ու դէն ընկնելով է մօտենում իւր նպատակին։ Փոյթ չէ. այնքան համբերութիւն կ'ունենամ, որ ես էլ ակամայ դէս ու դէն ընկնելով վերջը կ'ասեմ ասելիքս։

Բայց «վերջին տասն, տասնհինգ տարվայ մէջ գործերի դրութիւնը բոլորովին փոխվեց». աշխարհ եկաւ մի առաջադիմական աղատամիտ և լուսամիտ կուսակցութիւն, որ կազմակերպեց

թերուսներից մի բանակ և կրթեց մի սանձարձակ ու յանդուգն սերունդ՝ կէտ նպատակի դնելով հայհոյանքներով և անուանակութիւններով գործունէութեան ասպարէզից հեռացնել ամեն մէկին, որոնց իրենք չեն հաւանում և ամեն մի հասարակական գործ իրենց ձեռքն առնել միայն խորտակելու կամ տապալելու համար։ Այդ առաջադիմական կուսակցութիւնը՝ մշակականների կուսակցութիւնը առաջ է բերում հանգուցեալ Ներսէս Վարժապետեանի թեկնածութիւնը, իսկ մեղուականների, այսինքն խաւարամիտների կուսակցութիւնը պաշտպանում է «Մակարի թեկնածութիւնը»։ Չեմ իմանում, թէ ո՞ր Մակարի մասին է խօսքը. եթէ հանգուցեալ Մակար կաթողիկոսի մասին է, պէտք է աղատամիտ և առաջադէմ կուսակցութեան քաղաքավարութեան մի փոքրիկ դաս տալ. թո՛ղ նա սովորի, թէ ինչ լեզուով պէտք է խօսել մի մեռած կաթողիկոսի մասին։ Սակայն աղատամիտներն այդ ինչին բաների մասին չեն մտածում։ Ես կարծում եմ, որ ազգը այսօր նոյն աղատամիտ մշակական կուսակցութեան է պարտական, որ Ներսէս V կաթողիկոս է ունեցել. անկասկած նրանք ընտրած կը լինին, թէ չէ այն ժամանակ աղատամիտ և առաջադէմ մարդիկ ինչպէս կարող էին լինել առանց մշակականների։ Խոստովանելով, որ 1885 թ. խաւարամիտ մեղուականների բանակը կամ կուսակցութիւնը յաղթեց, հեղինակը ասում է, որ դորա փոխարէն «վերջին կաթողիկոսական ընտրութեանը, 1892 թուին, առաջադիմական (երևի ամաչում է աւելացնել և «մշակական» բառը) կուսակցութիւնը հրապարակ եկաւ Խրիմեանի թեկնածութեամբ և կարողացաւ փառաւոր կերպով աջողեցնել նրա ընտրութիւնը»։ Պէտք է եզրակացնել, որ եթէ մշակական կուսակցութիւնը չլինէր, հաղիւ թէ հայոց հայրիկը կաթողիկոս ընտրուէր։ Բայց դա տեղն ու տեղը շինծու է և կեղծ։ Որ «Մշակը» առ երեսս միայն կամենում էր Խրիմեան հայրիկի կաթողիկոսանալը—դա ակներև էր. «Մշակը» նախ և առաջ կամենում էր Սեդրակեան եպիսկոպոսին և միայն անկարող լինելով հակառակ գնալ Խրիմեան հայրիկի մեծ ժողովրդականութեան դէմ, Սեդրակեան եպիսկոպոսին երկրորդ տեղն էր տալիս։ Աւելի ևս քաջ կերպով ապացուցուեցաւ այդ «Մշակի» բռնած դիրքից Խրիմեան հայրիկի կաթողիկոսանալուց յետոյ։ Բաւական է միայն յիշել Արիստակէս եպիսկոպոսի անվայել յօդուածը, որ լոյս տեսաւ այն «Մշակում», որի ընտրածն է Աղգիս Վեհափառ հայ-

բապետը՝ ինչպէս տեսանք։ Աւաղ, այդ դէպքում «Մշակի» դիմակը վայր ընկաւ և նորից ցոյց տուեց իւր իսկական կերպարանքը։ Ցաւալին այն է, որ մեզանում հասարակութիւնը այնքան զարգացած չէ և առ հասարակ ազգային պատիւը այնքան ճանաչող չէ, որ այդպիսի դէպքերին արժանի կերպով վարձատրէր այդ մոլորուածներին։ Դատապարտելի է այն հասարակութեան անտարբերութիւնը, որ արժանավայել կերպով չէ պաշտպանում իւր պատիւը, չթոյլատրելով, որ մի թեթև ստուեր անգամ ձգեն այն Մարդու վերայ, որ ազգի կողմից արժանացել է մեծագունից մեծագոյն «Հայրիկ» անուան, ուր մնաց, որ ակներև կերպով բանակռիւ սկսեն Նորա դէմ։

Խորիմաստ փիլիսոփայութիւններ շատ կան յիշեալ առաջնորդողում։ Նորա ասածով, ընտրութիւնները կատարվում են կուսակցական պայքարով, հետևաբար ո՛չ միայն ցածր պաշտոնեաները, այլ և կաթողիկոսը պէտք է համակրեն այս կամ այն կուսակցութեան, համակրելի կամ հակակրելի պէտք է լինեն այս կամ այն կուսակցութեան։ Որ կաթողիկոսին այս կամ այն կուսակցութիւնը կարող է չհամակրել, այդ պարզ ցոյց տուեց «Մշակը»։ բայց թո՛ղ այդ առաջադէմ և ազատամիտ կուսակցութիւնը լաւ իմանայ, որ երբէք կաթողիկոսը, բարձր պաշտօնեան չպիտի պատկանի մի որոշ կուսակցութեան, եթէ կամենում է անաչառութեամբ տանել իւր գործը, չգործել յօգուտ մի կուսակցութեան և ի վնաս միւսի։ Պատկանելով մի որոշ կուսակցութեան, մարդ կամայ ակամայ ենթարկվում է նորա ազդեցութեան և հետևաբար գործում է որոշ ուղղութեամբ, որ անտարակոյս կարող է յօգուտ մէկ կուսակցութեան և ի վնաս միւսի լինել։ Հասկանալի է, որ կուսակցութիւններից դուրս, բարձր մարդը միայն կարող է արդարամտութեամբ կատարել իւր ստանձնած պաշտօնը և ցանկալի է, որ բարձրաստիճան և նոյն իսկ հասարակ պաշտօնեաները ազատ լինեն այդ կուսակցական, մեր նեխուած կուսակցական ոգուց։ Չեմ հասկանում, թէ ինչու է «Մշակը» աւելացնում հետևեալ խօսքերը, թէ կաթողիկոսը, նոյն իսկ բարձրաստիճան պաշտօնեան կարող է պատկանել այս կամ այն կուսակցութեան։ Անկասկած հետևեալ տողերից, դու, սիրելի Գարեգին, կըտեսնես, որ այդ ազատամտութեան հիմնաքարը արտուրդ է։ «Էնց դրանումն է կայանում,—ասած է յիշեալ առաջնորդողում,—անհատի

և իշխանաւորի տարբերութիւնը. մանաւանդ անհատը իր ամբողջ էութեամբ, իր մտքերի ամբողջ ոյժով կարող է պատկանել որ և է կուսակցութեան և ծառայել նրա շահերին, նրա նպատակներին, մինչդեռ իւրաքանչիւր պաշտօնեայ, իւրաքանչիւր իշխանաւոր, ով և լինի նա,—պէտք է միշտ յիշի, թէ որտեղ են վերջանում իր անձնական, անհատական իրաւունքները և որտեղ են սկսվում իր այն պարտաւորութիւնները, որ դնում է նրա վրա իր պաշտօնը, իր ստանձնած պաշտօնը»։ Եթէ մի բարձրաստիճան պաշտօնեայ իւր գործավարութեան ժամանակ պիտի յիշի, թէ որտեղ են վերջանում իւր անձնական և անհատական իրաւունքները և որտեղ են սկսվում իւր այն պարտաւորութիւնները, որ դնում է նորա վերայ իւր ստանձնած պաշտօնը, պարզ է որ նորա այս կամ այն կուսակցութեան պատկանելը բոլորովին անտեղի է և ոչ ցանկալի։ Բայց ազատամիտ մամուլին պէտք է մի բան յօդուածի սկզբում ասել վերջում հերքելու համար։ Նա մինչև անգամ օրինակներ է բերում, որ աւելի որոշ կերպով ցոյց տայ իւր ասածի իսկամտութիւնը։ Ուրեմն ինչպէս հասկանան այդ առաջնորդողի իմաստը. կաթողիկոսը պէտք է պատկանի որոշ կուսակցութեան, թէ կուսակցութիւններից միշտ բարձր պիտի լինի։ Սկզբում յայտնած է այն միտքը, որ պէտք է պատկանի, իսկ յետոյ շարունակ հերքում է այդ միտքը։ Անկասկած նա կարող է համակրել, բայց անպայման կուսակցութիւններից վեր պիտի լինի, որպէս զի չխառնէ իւր իշխանական և անհատական իրաւունքներն ու հայեացքները, որովհետև, կրկնում եմ, կուսակցութեան պատկանողը անպայման որոշ չափով կ'ենթարկուի կուսակցական նեղ ազդեցութեան։

Իսկապէս ի՞նչ է նշանակում «մշակական» կամ «նորդարական»։ Ի՞նչ տեղ ես տեսել, որ ուղղութիւնը պարզուի լրագրով։ Պատահե՞լ ես արդեօք որ մի օտարազգի մարդ իւր ուղղութիւնը որոշի այս կամ այն լրագրի անունով։ Ո՞վ կ'ասէ, թէ ես «Թէյմզ»-ական եմ, «Ֆիգարոյ»-ական եմ, «Նովոստի»-ական եմ կամ «Վիստոկ»-ական եմ։ Այդ իսկ հանգամանքը պարզ ցոյց է տալիս, սիրելի Գարեգին, որ այդպէս ասողները իրենք էլ չեն հասկանում, թէ կուսակցութիւնը ի՛նչ բան է և ի՛նչ զանազանութիւն կայ այս կամ այն կուսակցութեան մէջ։ Ով որ ասում է, թէ ես «մշակական» եմ և դորանով կամենում է որոշել իւր ուղղութիւնը, նա անշուշտ չէ հասկանում այդ կուսակ-

ցութեան ուղղութիւնը, եթէ միայն նա կայ։ Զէ՞ որ հասկացողը կըտայ ուղղութեան իսկական անունը և չի ասիլ, թէ ես «Բաշկիլը»-ական եմ։ Բայց դու տես, որ լրագիրը՝ առաջնորդող յօդուածում գործ է ածում «մշակական» բառը, որպէս որոշ ուղղութեան տերմին և կարծում է, թէ այդպէս էլ պէտք է, ուրիշ կերպ չէ կարելի։ Քաղաքական կեանքով ապրող ժողովուրդը ունի իւր կուսակցութիւնները և այն տեղ «ազատամիտ» և «պահպանողական» տերմինները ունին իրենց նշանակութիւնը։ Այնտեղ այդ կուսակցութիւնների ոգին կարող է և գրականութեան մէջ արտացոլել, որովհետև կեանքը այնպէս է կազմուած։ Իսկ նոյն մտքով այդ տերմինները մեր կեանքին յարմարեցնել և նոյն մտքով հասկանալ—բոլորովին չէ կարելի։ Ցեղաշրջած մտքով հասկանալ—այդ էլ ճաշակի խնդիր է. կարող եմ ասել միայն, որ մեզանում «ազատամիտ» կուսակցութիւնը այլանդակում է հասարակական կեանքը, անբարոյականացնում է հասարակութիւնը և անպայման վնասում է մեր բոլոր հաստատութիւններին։

Ես շատ կ'ուզենայի, որ դու երբեմն-երբեմն մեր լրագիրների առաջնորդող յօդուածներ թարգմանէիր ռուսերէն կամ մի ուրիշ եւրոպական լեզուով։ Այն ժամանակ աւելի լաւ կընկատէիր, թէ որպիսի անհեթեթութիւններ են գրվում։ Փորձիր մի անգամ այդ առաջնորդողներից մէկը ներկայացնել մի որ և է օտար թերթի խմբագրութեան և դու կըտեսնես, թէ ինչ վիճակի նա կ'արժանանայ։ Զեմ կասկածում, որ կատարեալ հիասթափութիւն կըլինի։

Նամակս արդէն վերջացրել էի, սիրելի Գարեգին, երբ ըստացայ քոնը։ Ներիր, խնդրեմ, որ այս անգամ անկարող եմ պատասխանել քեզ, իսկ մի քանի օրից կ'աշխատեմ շարունակել խօսքս և քո գրածների առթիւ յայտնել և իմ կարծիքը։

III.

Մոսկուա, 24 օգոստոսի 1894 թ.

Սիրելի՛ Գարեգին,

Վերջին նամակումդ մեղադրում ես ինձ, որ ես ևս նեղ կուսակցական ոգուց ազատ չեմ և անտեղի կերպով յարձակվում եմ յառաջադիմական կուսակցութեան վերայ և պնդում ես, թէ ոչինչ պախարակելի չկայ, եթէ մէկը՝ կուսակցութեան ոգին լաւ ըմբռնած լինելով, որի ուղղութիւնն առաջադիմական է, հայեացքներն ու գաղափարները լուսամիտ են, ինքն իրեն առաջադէմ, լուսամիտ և ազատամիտ է անուանում։ Դա հայեացքի խնդիր է. վիճաբանութիւնը այս դէպքում կարող է ապարդիւն լինել, բայց ես դարձեալ կըկրկնեմ, որ խելքը գլխին մարդը այդ չի անիլ։ Քո կարծիքով այդ մշակական ասած ուղղութիւնը անպայման օգտակար է մեր հասարակութեան համար, որովհետև նա նորան սթափեցնում է քնից, բաց է անում աչքերը և ցոյց է տալիս ուղիղ ճանապարհը։ Մինչև անգամ դու պաշտպանում ես նորան այնքան, որ աւելացնում ես, թէ անպայման նա հակառակ պիտի լինի «Արձագանքի» և «Նոր-Դարի» ուղղութեան, որովհետև դրանք երկուսն էլ փթած, խաւարամիտ, յետադէմ և վնասակար են։

Ես միայն զարմանում եմ, ինչպէս ձեր կուսակցութեան պատկանող իւրաքանչիւր անհատը իւր սեպուհ պարտականութիւնն է համարում հակառակ կողմի մասին խօսելիս թուղթակի նման կրկնել «փթած, խաւարամիտ և յետադէմ» խօսքերը։ Կուսակցութիւնների գոյութեանը ես հակառակ եմ այնպէս, ինչպէս նոքա այժմ են. ես կամենում եմ, որ կուսակցութիւններ լինին գաղափարի համար կռուող և ոչ թէ այնպիսի կուսակցութիւններ, որոնք անբարոյականացնում են ընթերցող հասարակութիւնը։ Դուք այնքան կոյր է.ք, որ բացի ձեր առաջադիմութիւնից և ազատամտութիւնից ոչինչ չէ.ք կամենում հասկանալ։ Ձեզ համար միտքը, գաղափարը ոչինչ նշանակութիւն չունի. դուք չէ.ք աշխատում քննադատել հակառակ կողմի ասածը, այլ բաւականանում է.ք նորան հայհոյելով, իսկ մէջ տեղը վնասվում է

հասարակութիւնը։ Ձեզ համար գին և նշանակութիւն չունի, թէ ինչ միտք է յայտնել հակառակ բանակը. որքան էլ համակրելի, օգտակար լինի, դուք կամ կըհերքէք նորան, կամ լռութեամբ կ'անցնէք, որպէս զի միայն չխոստովանէք այդ մտքի ճշմարտութիւնը։ Մի բան եթէ ձեզ յաջողուի անել, դուք աղմուկ հանելով՝ աշխարհ կըխլացնէք. իսկ եթէ մի ուրիշը մի գեղեցիկ բան անէ, դուք նախանձից կըտրաքուէք և անպատճառ կ'աշխատէք կամ սպանել այդ գործը, կամ մի կերպ վնասել։ Բերեմ քեզ մի օրինակ, որ պերճօրէն կըհաստատէ քեզ իմ ասածը։

«Նոր-Դարը» առաջարկեց յաւերժացնել երջանկայիշատակ Խաչատուր Աբովեանի յիշատակը մի մեհարձան կանգնեցնելով և հրատարակել հանգուցեալ հայրենասէրի աշխատութիւնը։ Այսպիսի մի առաջարկութեան դէմ ոչինչ չէ կարելի ունենալ, բայց իւրաքանչիւր ոք համակրութիւն ցոյց տալով հանդերձ՝ պիտի աշխատէր նպաստել այդ առաջարկութեան շուտափոյթ և վայելուչ իրագործման։ Աբովեանը այն մեծ հեղինակներից էր, որի առաջ իւրաքանչիւրը մեղանից խոնարհվում է և պատկառանքով է յիշում նորա անունը։ Աբովեանը ո՛չ Նոր-դարական էր և ոչ մշակական. նա այն մեծ հայրենասէրն էր, որ ցաւելով ազգի ցաւերով, մտածում էր դարման գտնել այդ վէրքերը բուժելու համար. նա առաջինն վստահացաւ հայրենասէրի ողբը՝ հայաստանի վէրքը ժողովրդին հասկանալի լեզուով պատմել։ Մենք, որ սովորաբար լաւ թաղում ենք և շատ շուտով մոռանում մեր թաղած մարդուն, կարող ենք մի փոքր սրդարանալ, որ ամեն մէկին չենք մոռանում և այդ սակաւաթիւներից մէկն էլ Խաչատուր Աբովեանն է։ Ըստ երևութին յարգելով հանգուցեալի յիշատակը՝ մամուլը ուրախութեամբ և համակրութեամբ պիտի վերաբերուէր այդ առաջարկութեան և հրաւէր պիտի կարդար հասարակութեան, որ լիաձեռն նուիրաբերութեամբ աջակցէին այդ գործին։ Բայց ինչպէ՞ս կարելի է, քանի որ առաջարկութիւն անողը «Նոր-Դարն» է։ Սակայն ի՞նչ օգուտ ստացաւ գործը—ոչինչ։ Ի՞նչ յանցանք ունի այս դէպքում հանգուցեալ Աբովեանը—որովհետև «Նոր-Դարն» է առաջարկել։ Ուրեմն ձեր աղատամիտ ուղղութեամբ ուրիշն իրաւունք չունի մի խելացի բան առաջարկելու։ Թո՛ղ այդ իրաւունքը ոչ ոք չունենայ, ես ընդդէմ չեմ. գոնէ դուք արէք։ Հէնց ցաւալին այն է, որ դուք ձեր բազմա-

թիւ ոչխարներով ուրիշներին բաւական չէ որ չէք հաւանում, այլ և գործին վնասում էք։ Հրապարակախօսից պահանջվում է ազնուութիւն. եթէ նա այդ չունի, այն ժամանակ նա կարող է անբարոյականացնել հասարակութիւնը և այդ կողմից դուք ձեր համախոհներով հանդերձ առաջադէմ էք։ Գիտեմ, որ դու ասելու ես, թէ այդ միայն «Մշակը» չի անում, այլ և միւս թերթերն են անում։ երբէք, պիտի ասես, նոցանից և ոչ մէկը համակրութեամբ չի վերաբերուել «Մշակի» այս կամ այն առաջարկութեան կամ մտքին, որ անպայման օգտակար է հասարակութեան համար։ Նոցա ես չեմ արդարացնում և չեմ պաշտպանում։ Ես կարող եմ այդ պահանջն անել, իսկ դու —ո՛չ. ձեր՝ խելքներիդ կարծիքով միւս թերթերը խաւարամիտ, յետադէմ և վնասակար են. իսկ ձեր թերթը, ձեր կուսակցութիւնը—առաջադէմ, ազատամիտ և լուսամիտ։ Առողջ կերպով մտածողը, ազատամիտը չի կարող այդքան նեղ հայեացքով նայել գործերի վերայ և այդքան անհամբերող լինել դէպի ուրիշի կարծիքը, միտքը։ Դուք մի տեսակ բռնաւորներ էք, որ չէք կարող համբերել, եթէ մէկը մի խելացի միտք է յայտնում։

Դու գրում ես ինձ, թէ խիստ ու կտրուկ լեզու բանեցնելը վատ չէ. դա աւելի շուտով է ազդում ընթերցողի վերայ։ Ազդու լեզուն ուրիշ բան է, հայհոյանքները—ուրիշ բան։ «Մշակի» գործ ածած լեզուն անտանելի է և միանգամայն անհասկանալի, թէ ինչպէս մամուլի մէջ կարող է գործ ածուել այդպիսի լեզու, մամուլի մէջ, որի նպատակն է կրթել հասարակութիւնը, բարերար ազդեցութիւն ունենալ նորա վերայ։ Առնենք մի օրինակ։ «Մշակի» 78 №-ում կայ մի յօդուած «Տգեղ փաստ» վերնագրով։ Վերստին կարդա այդ իմաստալից յօդուածը և տես, թէ ինչ օրինակելի լեզուով է գրած։ Գուցէ դու էլ յիշում ես, որ «Նոր-Դարում» Ներսէս ք. Ղամազեանը մի յօդուած էր գրել «անարատ» Արիստակէս եպ. Սեդրակեանի արատութեան մասին։ Մեր հնդու հաւ «Մշակ» լրագիրը զայրացել է այդ առթիւ և իւր սլաքները անխնամ թափում է յիշեալ քահանայի գլխին, որ նա յանդգնել է «անպատկառ, սանձարձակ կերպով վիրաւորել մի եպիսկոպոսի, որը յայտնի է իր անարատ անունով»։ Բայց գրողը ստիպուած է եղել մեծ «զզուանքով» գրել այդ «գարշելի» նամակի մասին, որի բովանդակութիւնը «խայտառակ» պատմութիւն է Արիստակէս եպիսկոպոսի և քահանայի «կեղտոտ» վարմունքի մասին։ Եւ այդ

«Յանդուգն քահանան, մոռանալով իր դիրքը և պարտքը, հրապարակով յայտնում է, որ Արիստակէս եպիսկոպոսը իրանից կաշառքներ էր ընդունում»... Աղատամիտ լրագրի աղատամիտ թղթակցի կամ յօդուածագրի «խորին համոզմունքով (որ բնաւ չկայ) ոչ թէ մի քահանայ, այլ նոյն իսկ եկեղեցու վերջին սարկաւագը իրաւունք ունի, դիցուք, քննել մի եպիսկոպոսի, մի առաջնորդի մի որ և է գրական վաստակը, մի գրաւոր աշխատութիւնը, որը հասարակաց քննութեան նիւթ կարող է լինել միշտ»։ —Այսինքն՝ եթէ թարգմանելու լինինք այս տողերի իմաստը, պիտի ասենք, որ Արիստակէս եպիսկոպոսը իրաւունք ունէր քննադատութեան ենթարկել բանակռուական ձևով Արշէն Էրէցի (Հայոց Հայրիկի) յօդուածը. այդ տեղ ոչինչ պախարակելի բան չկայ։ «Բայց երբ մի քահանայ, մոռանալով դիսցիպլինայի բոլոր պահանջները, մոռանալով մի եպիսկոպոսի դիրքը, թոյլ է տալիս հրապարակով վիրաւորել բարձրագիր հոգևորականի անունը, մասնաւոր կեանքը, նրա անձը, նրա կեանքի այնպիսի կողմերը, որոնք որ և է հասարակական բնաւորութիւն չունեն (կաշառք ուտելը բոլորովին հասարակական բնաւորութիւն չունի), — մենք այդ ներել չենք կարող, և ոչ ոք էլ չըպէտք է ների, որովհետև դա արդէն զըպարտութիւն է, պամֆլէտ է, հայհոյանք է (բոլորովին ձեր փեշակը չէ), ամենայանդուգն վիրաւորանք է»։ Թարգմանենք և այս տողերի իմաստը. բայց երբ մի եպիսկոպոս, մոռանալով դիսցիպլինայի բոլոր պահանջները, մոռանալով կաթողիկոսի, իւր Պետի բարձր դիրքը, թոյլ է տալիս հրապարակով բանակռիւ սկսել Նորա հետ. մի Կաթողիկոսի հետ, որ ազգի միակ սիրելի և պաշտելի անձն է, որի մեծ հեղինակութեան առաջ ամենքը խոնարհվում են, որ արժանացել է «Հայրիկ» անուան,—իսկ մի ազգի, մի ժողովրդի Հայր լինելու պատուին հեշտութեամբ չի կարելի արժանանալ—և մենք այդ ներել չենք կարող, և ոչ ոք էլ պիտի չներէ, որովհետև դա ըմբոստութիւն է, դա վիրաւորանք է ամբողջ ազգին։ Ո՞ւր ես, Հայ ժողովուրդ, ո՞ւր են քո բարոյական զգացմունքները, որ օր ցերեկով թոյլ ես տալիս, քեզ խայտառակ կերպով վիրաւորեն և ծաղրի առարկայ շինեն։ Մի՞թէ հաւատանք, որ այնքան կուրացած և յափշտակուած ես այդ յանդուգն մարդկանց շուկայախօսութեամբ, որ մոռանում ես այն վիրաւորանքը, որ քեզ հասցնում են իւրաքանչիւր քայլափոխում յանձին քո սիրած Հայրիկիդ։ Ո՛չ, ես

հաւատում եմ և համոզուած եմ խոր կերպով, որ քեզանում դեռ մեռած չեն բարոյական զգացմունքները. ես հաւաստի եմ, որ դու վաղ թէ ուշ կ'անես քո դատաստանը, իսկ այժմեան լռութիւնդ ես հասկանում եմ ոչ որպէս նշան համաձայնութեան, այլ ներողամտութեան և համբերողութեան։ Բայց ներողամտութիւնը, համբերութիւնն էլ ունի իւր չափն ու սահմանը...

Տէր իմ Աստուած, այս ինչ անարգանք է, այս ինչ ծաղր է, որին ենթարկում են մեզ։ Մի քահանայ յանդգնում է խօսել մի որ և եպիսկոպոսի դէմ, մեր սագերը ահագին աղմուկ են բարձրացնում. իսկ իրենց արած նողկալի և լերը վարմունքի մասին հաշիւ չեն տալիս։ Եւ դա համարվում է առաջադիմութիւն, լուսամտութիւն։ Դեռ այդ բաւական չէ, յօդուածագիրը չի խօսում այն բանի մասին, ինչ որ իսկապէս արժանի է ուշադրութեան, թէ յիշեալ քահանան որքան ցոյց տուեց և իւր բարոյական պատկերը այդ նամակով, այլ առաջարկում է, որ Թիֆլիսի առաջնորդը սանձահարէ այդ քահանային։ Թո՛ղ յօդուածագիրը լաւ իմանայ, որ նոյն թեմական առաջնորդը իրենից յիմար չէ, որին պէտք է սովորեցնել, թէ ինչ պէտք է անէ. նա իւր անելիքը շատ լաւ կարող է իմանալ. աւելի լաւ կ'անէր նա, եթէ մտածէր, թէ ինչպէս պէտք է յօդուած գրել, ինչ բան պաշտպանել և ինչ բանի վերայ յարձակուել։

Ձեր գործունէութեան ասպարէզը տպագրական խօսքն է, հրապարակախօսութիւնն է, բայց առանց պարտ ու պատշաճ պատրաստականութեան։ Դուք կամենում էք դեկավարել մի ամբողջ հասարակութիւն, բայց մոլորեցնում, փչացնում էք նորան։ Դուք տասնեակ տարիներով մղել էք նորան դէպի ծուռ ճանապարհը, որով և դժուարացրել էք այն հրապարակախօսի գործը, որի նպատակը կը լինի դարձնել նորան դէպի ուղիղը։ Դուք ստեղծել և յառաջացրել էք այնպիսի մի անսանձ սերունդ, որին բան հասկացնելը բոլորովին անհնարին է. և ի՞նչ կարիք ունի հասկանալու, քանի որ մշակական դառնալով՝ նա դառնում է և խելօք, և գիտուն, և առաջադէմ, և ազատամիտ։ Վա՜յ, եթէ Աստուած պարգևել է նորան և երկար լեզու. ամենի բերանը կը կապէ, ամենքին այնպէս կը հայհոյէ, որ փոքր ի շատէ իւր պատիւը ճանաչողը խոյս կը տայ անգամ նորա հետ խօսելուց։ Բայց լսիր իմ խօսքս և միտդ պահիր. այժմ յաղթութիւններ էք տանում, անուշ լինի ձեզ. կը գայ մի օր և այդ հա-

ւանական է, որ մնալուստ ապագայում լինի, ամեն մի հասարակական գործից, ամեն մի հիմնարկութիւնից, փոքր ի շատէ կարգաւորեալ շրջանից վանդելով պիտի վանդեն այդ ցեցերին, այդ մկներին։ Եւ իրաւ, ով որ փոքր ի շատէ մնածելու ընդունակութիւն ունի, ինչու պիտի հասարակական գործերի ղեկավարութիւնը յանձնէ այն մարդկանց, որոնք բոլորովին անընդունակ են եղել որ և է գործ ստեղծելու, այլ ամեն աղնիւ և անաղնիւ միջոցների դիմելով՝ ճիգն են թափել ասպարէզից հեռացնել այն մարդկանց, որոնք մի որ և գործ ստեղծել են, արել են։ Դուք, անկասկած, այդ ուրանալ չէք կարող և ինչպէ՞ս պիտի ուրանաք, որ նորա մի բան արել են, քանի որ փաստեր կան, քանի որ նոցա շինածները դեռ գոյութիւն ունին և հաւանական է, որ ձեր շնորհիւ քայքայման և անկման դատապարտուին։ Դուք ասում էք, պարոններ, թէպէտ այս ինչ, այն ինչ հիմնարկութիւնը ձեր ստեղծածն է, բայց անպէտք էք գործի համար, որովհետև մենք ձեզ չենք հաւանում։ իսկ չենք հաւանում նորա համար, որ դուք մեզանից աւելի խելք էք, մենք ձեզ կըվոնդենք և ձեր տեղը կըբռնենք, թէ չէ մեզ մարդու տեղ չեն դընում։ Եւ այդ նպատակին հասնելը դժուար բան չէ. տգէտ ամբոխին գրգռել, նորա առաջ այս ինչ կամ այն ինչ մարդուն անուանարկել շատ հեշտ բան է և ձեր փեշակը։ Այդ տեղ մի առանձին յաղթութիւն չկայ, որ դու պարծանքով յիշում ես։

Ես չկարողացայ անցեալ նամակումն գրել, թէ որպիսի բուռն ախորժանքով է յօդուածագիրը արձանագրում № 73-ում՝ այն հանգամանքը, որ այս կամ այն դպրոցի տեսուչը կամ թեմական տեսուչը պէտք է համակրէ կամ պատկանի այս կամ այն կուսակցութեան։ Մարդ արտասվում է, երբ տեսնում է, թէ ինչ վիճակի մէջ է մեր ուսումնարանական գործը այդ անմիտ կուսակցական վէճերի ու պայքարի շնորհիւ։ Իւրաքանչիւր դպրոցի և ճեմարանի ուսուցչական խումբը ներկայումս մի-մի դերասանական խումբ է յիշեցնում։ իսկ տեսուչը — անտրբպրենեօրի։ Նշանակուեցաւ կամ ընտրուեցաւ մի տեսուչ այս ինչ դպրոցի համար, բոլոր ուսուցիչները փոխվում են։ Տարին լրացաւ, խեղճ ուսուցիչը վախկոտ նապաստակի պէս ահ ու դողի մէջ է, որովհետև չէ իմանում, մնալու է առաջիկայ տարին իւր տեղում թէ ոչ։ Որոշ կուսակցութիւնը խաղալիք է շինել իւր ձեռին դպրոցական սուրբ գործը։ Նա չէ նայում, թէ այս

ինչ ոքը յարմար ու համապատասխան է իւր կոչման, թէ ոչ։ Նորա համար գլխաւոր հարցը այն է, մշակական է թէ նոր-դարական։ Զէ հետաքրքրվում նորանով, թէ այս կամ այն անձնանաւորութիւնը ո՞րքան օգտաւէտ կը լինի գործին, այլ անպատճառ ճգնում է իւր կամեցածին, իւր կուսակից մարդուն տեղ տալ։ Հապա ինչո՞վ բացատրենք, որ քսան տարի դպրոցական գործին ծառայած մարդը, այսօր թողնում է իւր այդ ասպարէզը և կամենում է կողմնակի պարապմունքով հայթհայթել իւր ապուստը։ Եւ այդ անում է ո՛չ թէ մի սոսկ ուսուցիչ, այլ մանկավարժ, որի բազմամեայ փորձառութիւնը, անպայման օգտաւէտութիւնը խոստովանում են հարիւրաւոր կենդանի վկաներ։ Եւ կան փաստեր, որ ուրանալ չէ կարելի։ Ո՞վ մոցրեց կանոնագրութիւն Ներսիսեան Դպրանոցը, ո՞վ նորա դասարանների թիւը աւելացրեց, ո՞վ մեզանում գաղափար տուեց մանկավարժութեան մասին և ո՞վ մոցրեց նորան մեր ուսումնարանները։

Ի հարկէ, այդ բոլորը կատարուած է տարիների ընթացքում և դառն աշխատանքով։ Այդ աշխատութեան հետևանքը հաւաքել միասին և շօշափելի կերպով ցոյց տալ մեր կոյրերին չէ կարելի. նա ցրուած է ամենուրեք։ Բայց ի՞նչ մարդկանցով են դոցա փոխարինում։ Այնպիսի մարդկանցով, որոնց ո՛չ թէ տեսչի կամ օգնականի պաշտօն անգամ չէ կարելի տալ, այլ և դպրանոց ներս թողնելը յանցանք է։ Թշուառ և ապաբախտ վիճակի մէջ է մեր դպրոցական գործը, և այդ բացառապէս նեղ կուսակցական ոգու շնորհիւ։ Զարմանում եմ, որ յօդուածագիրը չէ պահանջում, որ վարժապետներն ու աշակերտներն էլ կուսակցութեան պատկանեն։ Սակայն այդ ևս զարմանալի չպիտի լինի, որովհետև նա իրօք այդպէս է։ Հոգաբարձուները կուսակցական մարդիկ են, տեսուչ են ընտրում կուսակցական մարդ, նա էլ իւր կուսակից մարդկանցից է ուսուցիչներ ընտրում։ Իսկ որ աշակերտներն էլ կուսակցութեան յետոյ սկսում են պատկանել,—այդ էլ ամենքը գիտեն։ Ինչո՞ւ աշակերտը փոխանակ իւր դասերով ու պարապմունքներով զբաղուելու, հասարակական գործերով է հետաքրքրվում։ Ինչո՞ւ նա՝ իւր անմիջական պարտականութիւններից պիտի շեղուի։ Այդ անմիտ կուսակցութեան շնորհիւ է, որ այսօր շատերը չարաչար տուժվում են այդ անմեղ մանուկներից։ Բայց դեռ ինչ է սպասում, այդ չգիտենք։ Միայն անհերքելի է, որ այս դէպքում անհրաժեշտ է հեռատեսութիւն և խոհեմութիւն,

պէտք է ափսոսել այդ հիմարութիւնները և ամենայն զգուշութեամբ գործին վերաբերուել։ Ինչպէ՞ս չզայրանաս, սիրելիս, երբ տեսնում ես ամեն անգամ ամեն մի գործում այդպիսի վայրենի հայեացք, և մարդիկ կարծում են, թէ իրօք բան են շինում[1]։

Եթէ ձեր բոլոր ընտրութիւնները, գործերը, թղթակցութիւնները լինում են այնպէս, ինչպէս ես եմ այստեղ կենդանի օրինակներով տեսնում, այն ժամանակ միայն կարելի է զարմանալ և ցաւել անկեղծ սրտով։ Յիշում եմ, երբ այստեղ ներկայացուցիչ էին ընտրում Ն. Նախիջևան գնալու, որ այնտեղ ամբողջ թեմի պատգամաւոր ընտրեն, մի երկու շաբաթից յետոյ ձեր ազատամիտ լրագրի դարվիշ թղթակցի լուրը կարդացինք, թէ Մոսկուայում շատերը կամենում են ընտրուած տեսնել Արիստակէս սրբազանին։ Բայց բարեբաղդաբար գերապատիւ եպիսկոպոսի անունը, կարծեմ, տուող չկար։ Սակայն ձեր աշխատակիցը կամ դաւանակիցը գիտէր, թէ ինչ է անում։ Նա համոզուած էր, որ Մոսկուայի ձայնը նշանակութիւն ունի և կարող է որոշ ազդեցութիւն ունենալ։ Օրը ցերեկով նա այդպէս ստեց, և փառք Աստուծոյ, որ ոչինչ հետևանք չունեցաւ այդ լուրը։

Աւելի շօշափելի կերպով ապացուցանելու համար, թէ որքան բարեխղճութիւն կայ ձեր դաւանակիցների մէջ, ես կբերեմ մի ուրիշ օրինակ։ Սակայն դորա մասին ընդարձակօրէն պէտք է խօսել. թողնենք գալ անգամի։

Ցանկանում եմ քեզ սառն վերաբերուել դէպի ամեն մի երևոյթ և հանդարտութեամբ ու լրջութեամբ քննադատել նորան. տաքանալով բան չի դուրս գալ։ Ինձ կամ միւսին խաւարամիտ անուանելով ևս ոչինչ օգուտ չի լինիլ։ Լաւ է, աշխատենք միմեանց մի բան հասկացնել։

---

[1] Նամակագրի ցանկութեամբ աւելի ուշ պատահած այդ դէպքի մասին գրածը մտցրինք այս նամակի մէջ։ Շատ զարմանալի է, որ մամուլը բաւականացաւ միայն այն լուրը հաղորդելով, թէ պ. Ս. Մանդինեանը թողնում է մանկավարժական ասպարէզը և պիտի պարապի կողմնակի գործերով։ Մթթէ մի այդպիսի դէպք արժանի չէր աւելի ուշադրութեան և խորհրդածութեան։

Ծանօթ. Հրատ.

IV.

Մոսկուա, 17 սեպտեմբերի, 1894 թ.

Սիրելի՛ Գաբրիելեան.

Վերջին նամակումս ես խոստացայ գրել մի օրինակի մասին, որ պիտի ապացուցանէր քեզ, թէ որքան բարեխիղճ անդամներից է կազմուած ձեր խումբը։ Գիտեմ, դարձեալ պիտի չարանաս, դարձեալ ես խաւարամիտ ու յետադէմ պիտի լինիմ, բայց և այնպէս փաստերը աւելի պերճախօս կը լինին, քան թէ ես ու դու։ Պիտի ասես անշուշտ, թէ մի երկու մարդ չի կարող ամբողջ կուսակցութեան ոգին ու ուղղութիւնը ներկայացնել. կարող են մի քանի անբարեխիղճ մարդիկ գտնուել, կարող են նոքա սուտ կամ սխալ գրած լինել և թէ նոցա անբարեխղճութեան, ստի և սխալի համար պատասխանատու չէ ամբողջ կուսակցութիւնը։ Բայց ներիր ինձ, եթէ ասեմ, որքան ես գիտել եմ, այդ-պիսիները ձեր կուսակցութեան մեծամասնութիւնն են կազմում։ Ես տեսածներիցս եմ օրինակ բերում և գիտեմ, որ այս դէպքում գրողին երեսուն հոգի էլ ծափահարում էր։ Սա փաստ է. մնացածը քեզ եմ թողնում դատելու։

Խօսքս մի ոմն Ե. Թաղիանոսեանցի մասին է, որ այս տարի «Մշակի» 53 №-ում մի բանասիրական էր զետեղել «Ընտրողական գործերը Մոսկվայում» վերնագրով։ Լաւ ծանօթ եմ ես այդ գործերին. գիտեմ, թէ ինչ է լինում և ինչպէս է լինում։ Կարծում եմ, որ այս դէպքում դու կարող ես հաւատ ընծայել այն փաստերին, որ ես առաջ կբերեմ, և դու կըհամոզուես, թէ որքան անտանելի և զզուելի է լինում մարդ, երբ դատարկ գլխի հետ և երկար լեզու է ունենում։

Կանխապէս քեզ պիտի յայտնեմ, որ այս տարի ապրիլի 3-ին ծխականների ընդհանուր ժողով ունէինք և այդ ժողովում ընտրուած էին ի միջի այլոց պ.պ. Մ. Մուրադեան, Եր. Թաղիանոսեանց և Թադէոսեանց։ Սակայն ընտրութիւնները բեկանուեցան, անվաւեր ճանաչուեցան թեմիս կառավարչից և նշանակուեցաւ նոր ընտրութիւն սեպտեմբեր ամսին։ Ահա՛, ինչպէս տեսնում ես, այդ ընտրուածներից և ոչ հաստատուածներից մէկը

գրել է այդ ափեղցվեղ յօդուածը և կարծում է, թէ ճշմարտութիւն է ասել։ Մի մարդ, որ այդպիսի լեզու է գործ ածում, այդպիսի անպատկառ կերպով յեղաշրջում է փաստերը, որ շատ անգամ կատարեալ անտեղեակ է գործերի իսկական դրութեան, ինչպէս է կամենում ընտրուել նոյն իսկ հասարակութիւնից և նորա հասարակական գործերը կառավարել։

Իւր յօդուածի սկզբի տողերում թղթակիցը ասում է. «Երկու մայրաքաղաքների հայոց եկեղեցիներն ու նրանց կալուածները կառավարվում են մի առանձին կանոնադրութեամբ, որ հաստատված է կառավարութեան կողմից»։ Այդ իսկ խօսքերը նա մի քանի տողից դարձեալ կրկնում է։ Պարոնը պիտի իմանար գոնէ այսքանս. Բարձրագոյն հաստատուած կանոնադրութեան հիման վերայ կառավարվում են ոչ թէ մայրաքաղաքների եկեղեցիներն ու նոցա կալուածները, այլ միայն կալուածները։ Կարծում ենք, որ դա մի և նոյն բանը չէ և շատ քիչ լոգիկայ է հարկաւոր այդ հասկանալու. բայց ի՞նչ արած, որ երբեմն այդքանն էլ արհամարհում են կամ դժուարանում։ Եկեղեցիներ կառավարել և եկեղեցապատկան կալուածներ կառավարել—այդ մի և նոյնը չէ և պէտք է զգոյշ գրել. առաջ պէտք է մտածել, յետոյ գրել և ոչ ընդհակառակը։

«Մոսկվայի հայոց եկեղեցիների շարժական և անշարժ կայքի արժողութիւնը հասնում է մօտ 400 հազար ռուբլու, որից տարէնը 14 հազար ռուբլուց աւելի եկամուտ է ստացվում։ Ի հարկէ, շարժական կայքից մեծ արդիւնք չէ կարող ստացուել, եթէ չհաշուենք մոմի վաճառումից գոյացածը, ուրեմն գլխաւոր արդիւնքը ստացվում է տներից և արդարև 14 հազար ռուբլի, երբեմն աւելի և երբեմն պակաս։ Բայց տեսնենք, թէ ինչ է ասում խորհրդարանի ապագայ այդ անդամը.

«Այդ եկամուտից խորհուրդը ռոճիկ է տալիս քահանաներին և եկեղեցական սպասաւորներին, որ կանոնադրութեամբ մի անգամ ընդ միշտ որոշված է և խորհուրդը իրաւունք չունի աւելացնել կամ պակասեցնել, ծախսում է եկեղեցու անհրաժեշտ կարիքների ու կալուածների կառավարութեան համար»։

Եթէ յարգելի պարոնը նեղութիւն քաշած լինէր և մի անգամ աչքի անց կացրած լինէր այն կանոնադրութիւնը և հրահանգը, որոնց հիման վերայ գործում են խորհրդարանները. ծանօթացած լինէր հէնց միայն նորա համար, որ հրապարակով

խօսում է մի հիմնարկութեան անդամների գործունէութեան մասին, — այն ժամանակ այդպիսի անհեթեթութիւն անշուշտ չէր գրիլ։ Բանակը հրահանգը, որ կազմել է մայրաքաղաքների եկեղեցեաց հոգաբարձու հանգուցեալ իշ. Սիմէոն Սրամելեք-Լազարեանը թեմիս նախկին առաջնորդ ի Տէր հանգուցեալ Գրիգոր արքեպիսկոպոսի համաձայնութեամբ և հաստատուել է կիրառութեան համար. կարդանք առաջին յօդուածի իններորդ կէտի մի մասը, ուր ասուած է.

„Жалованье наличному составу духовенства должно производиться и впредь въ томъ размѣрѣ, какъ было опредѣлено до обнародованія Высочайше утвержденныхъ правилъ 18 ноября 1883 года. Прибавленіе-же или убавленіе жалованья духовенству, или же прекращеніе ему даровыхъ квартиръ и отопленія оныхъ можетъ быть только по предварительному соглашенію Попечителя церквей съ Епархіальнымъ Начальникомъ и съ его разрѣшенія“. *Հայերէն թարգմանութիւնը կըլինի այսպէս. «Ներկայ հոգևորական դասին առաջիկայում էլ ռոճիկը պիտի տրուի այն քանակութեամբ, ինչքան նա որոշուած էր նախ քան Բարձրագոյն հրամանով հաստատուած 1883 թ. նոյեմբերի 18-ին կանոնադրութեան հրատարակութիւնը։ Հոգևորականների ռոճիկն աւելացնել կամ պակասեցնել, կամ թէ նոցա ձրի բնակարաններ և վառելիքներ տալ դադարեցնելը կարող է լինել եկեղեցեաց հոգաբարձուի և թեմական առաջնորդի կանխապէս համաձայնութիւնից և սորա թոյլատրութիւնից յետոյ»։*

Կարծում ենք, որ մեծապատիւ թղթակիցը ընդունակ կըլինի այս տողերից եզրակացնելու, որ քահանաներին և եկեղեցական սպասաւորներին ռոճիկ տալը մի անգամ ընդ միշտ որոշուած չէ և խորհուրդը, եթէ ինքը իրաւունք չունի անմիջապէս աւելացնել կամ պակսեցնել ռոճիկը, տալ կամ չտալ վառելիք ու բնակարաններ, կարող է դիմել ուր հարկն է և անել այդ փոփոխութիւնները ըստ պահանջման հարկին, ինչպէս և մի անգամ արաւ մի քանի տարի առաջ, — պակսեցրեց ռոճիկները։ Պարզ է, որ այս տեղ էլ պարոնը ցոյց տուեց, որ ոչ հրահանգի հետ է ծանօթ, ոչ էլ փաստերի։ Լաւ չէ չգիտցած բաների մասին շատ խօսելը, այնպէս չէ, սիրելի Գարեգին։ Բայց դու տես, որ նա դորանով չէ բաւականանում, սարսափելի շանթեր է արձա-

կում դէս ու դէն, որ վերջ ի վերջոյ բոլորը իւր գլխին թափուի։ Լաւ լսիր, թէ ինչեր է ասում և ինչ լեզու է բանեցնում իւր վերը բերած տողերից յետոյ։

«Այնուհետև խորհուրդն իրաւունք ունի այդ եկամուտից նպաստ տալ զանազան ուսումնարանական և բարեգործական հիմնարկութիւններին, օգնել չքաւոր ծխականներին, ուսանողներին և այլն։ Կանոնադրութեան այդ վերջին կէտը (այսինքն կանոնադրութեան 1 յօդուածի եօթներորդ կէտը), չըգիտենք ինչպէս է եղել առաջ (ի զուր, պէտք էր իմանալ, ուսումնասիրել և ապա հրապարակով խօսել), սակայն վերջին տարիներս (քանի՞ տարի) ոչ թէ միայն չէ իրագործվում, այլ և խորհրդի անդամ են ընտրվում սովորաբար այնպիսի մարդիկ (ոչ Թադիանոսեաններ. Մոսկուայի հայե՛ր, խելքներդ գլուխներդ ժողովեցէք և այդ հազուագիւտ մարդկանց բաց մի՛ թողնէք, թէ չէ յետոյ կըփոշմանէք, բայց ուշ կըլինի), որոնք եկեղեցու փողերը աւելի շուտով ջուրը կ'ածեն, քան թէ այդպիսի նպատակների վրա կըծախսեն (ճշմարիտն ասած չեմ իմանում, այս տողերը գրողին հիւանդ անուանեմ, թէ մի ուրիշ անուն տամ)։ Կանոնադրութեան այդ ամենահամակրելի կէտը անցեալ տարվայ հաշուի մէջ այսպէս է իրագործված։—«Բեսսարաբիայի թեմական դպրանոցին նպաստ 250 ր., բանտարկեալներին և կոյրերին՝ 11 ր.»։ Եկեղեցական կալուածներից ստացված 14,553 րուբլուց միայն 261 ր. է ծախսված բարեգործական նպատակով։ Երևում է, որ խորհուրդը կազմող վեց անդամների բոլոր բարեգործական ընդունակութիւնները հաղիւ են հասնում՝ 261 ր. արժողութեան»։

Այս տողերը մի շարք անհեղեղութիւններ են ներկայացնում, որոնցից կարելի է, սիրելիս, մի լաւ պսակ շինել ձեր կուսակցութեան գլուխը զարդարելու համար։ Այս վարմունքի անունը կեղտոտ զըպարտութիւն կամ ինսինուացիա է, և ահա ինչու։ Պարոնը, որի բարեգործական ընդունակութիւնը, ի հարկէ միայն խօսքով, միլլիոնների է հասնում, մի փոքր էլ պիտի մտածէր, թէ մուտքը՝ 14,553 ր., ներկայացնելով ընթերցողին, պէտք է ասել, թէ ուր է գնացել այդ գումարը, ինչ ծախսեր են արել։ Ով որ կարդայ այդ պարոնի թղթակցութիւնը, անշուշտ պիտի ասէ, թէ զարմանալի բան է, որ 14,553 ր. միայն 261 րուբլի են մնսել բարեգործական նպատակներով. իսկ եթէ պարոնը բարեխղճութեամբ ցոյց տար, թէ եկեղեցին որքան պարտք ունի՝ մնում ա-

բապէս 4000, այն ժամանակ ընթերցողը անշուշտ կ'ասէր, թէ աւելի պահանջելն անհնարին է։ Այլ է, եթէ պարոն Թղթակիցը ասէր, թէ ինչու խորհրդարանը չի աշխատում խպառ դադարեցնել քահանաներին ռոճիկ տալը, քանի որ նոքա բոլորովին ապահով են, և դորանով անշուշտ կ'աւելանար արդիւնքը, որով և կարելի կը լինէր ընդարձակել բարեգործական նպատակների շրջանը և քանակութիւնը։ Սակայն, ինչպէս տեսանք, պարոնը այդ մի անգամ ընդ միշտ որոշուած է համարում և նորա կարծիքով չէ կարելի ո՛չ աւելացնել և ոչ էլ պակսեցնել։ Տեսնում ես, սիրելիս, որ գործին բոլորովին անտեղեակ մարդը որպէս կարող է բարբաջել, կարծելով, թէ մի խելօք բան է ասում։ Է՜հ, եղբայր, յիշենք Հորացիոսի խօսքերը այդ առթիւ. O te, Bolane, celebri felicem (Sat. I, 9).

Բայց մի բանը շատ ճիշտ է, որ պարոնը գրել է և դրանով ապատել է Մոսկուայի հայ հասարակութիւնը այնպիսի մարդկանցից, որոնք վեկեղեցու փողերը աւելի շուտով ջուրը կ'ածեն, քան թէ այդպիսի նպատակների վրա կրծախսեն»։ Գիտենք, թէ Մոսկուայի հայ հասարակութիւնը ինչպէս պիտի յայտնէ իւր երախտագիտութիւնը այդ մեծ թղթակցին, սակայն ես իմ կողմից կ'առաջարկէի, որ բացի մեծապէս այդ պարոնին անդամ ընտրելուց, նորա մեծ պատկերը դնէին Խորհրդարանում, որ դարէ ցդար յիշեն նորան։ Վերջին տարիներս Խորհրդարանի անդամ են եղել. պ.պ. Զարմայր Մսերեանց, Ստ. Մամիկոնեան, Ստ. Յովհաննէսեանց, Մ. Բարխուդարեան, Ամ. Ժամհարեանց և հանգուցեալ Ն. Ներսէսեանց ու Ս. Շապովալեան։ Էս բոլոր մարդիկը, ինչպէս դու էլ ճանաչում ես, ընդունակ են եկեղեցու փողերը ջուրը ձգել, քան թէ բարեգործական նպատակով ծախսել և այդպէս էլ արել են. իսկ պարոնը ընդունակ է միլլիոնների բարեգործութիւն անելու, բայց ի՛նչ արած, որ եկեղեցին միջոցներ չունի։ Եւ գիտէք այդ բոլորի պատճառը ինչ է. այն է, որ «ծխականները իրանց անտարբերութեամբ նպաստել են այդպիսիների ընտրութեանը»։ Եւ ահա երևան է գալիս մի նոր և յառաջադէմ կուսակցութիւն, լրագրական դարվիշներից և միջազգային բոշաներից բաղկացած, որ ամեն բան կամենում է յեղաշրջել, մեռեալ հիմնարկութիւններին կենդանութիւն տալ, անշարժութիւնը երանդուն գործունէութեան փոխել, փողեր ջուրը ձգող անդամներին հեռացնել և նոցա տեղ ընտրել Թաղեանոսեաններ և

համանմաններին, որոնք հրապարակաւ խօսելիս դէթ սակաւ ճըշմարտասէր չեն հանդիսանում։ Այո՛, այդ համանմանները այնքան պատուաղուրկ են, որ չեն ամաչում նոյն իսկ ժողովարանում դիմել իրենցից աւելի քիչ կրթուածին և ասել. «Հապա չէ՞ք ասում ձերոնց, որ ինձ ընտրեն»։ Այս նախադասութիւնը, սիրելի Գարեգին, քեզ շատ բան կ'ասէ. մի փոքր մտածիր և տես, թէ այդ ի՛նչ յառաջադիմութիւն է։

«Կանոնադրութեան համաձայն,—ասում է պարոնը,—տարէնը մի անգամ լինում է ծխականների ժողով, ուր ընտրվում են խորհրդի անդամները և երէցփոխը»։ Ընթերցողը այս տողերից կարող է եզրակացնել, որ ամէն տարի երէցփոխան է ընտրվում; սակայն դա բոլորովին էլ ճիշդ չէ, որովհետև երէցփոխը ընտրվում է երեք տարին մի անգամ։ Երէցփոխի ընտրութեան նա մի առանձին նշանակութիւն է տալիս, որովհետև «Գասպարեան անկելանոցի» կանոնադրութեան համաձայն, «երէցփոխը համարվում է նաև անդամ «Գասպարեան անկելանոցի» խորհրդի»։ Ի սէրն Աստուծոյ, թող պ. Թաղիանոսեանը ասէ, երբ և իցէ կարդացե՞լ է այդ անկելանոցի կանոնադրութիւնը, որ խօսում է. թող ցոյց տայ, ի սէր Աստուծոյ, ո՞ր կանոնադրութեան մէջ է ասուած, թէ երէցփոխանը համարվում է նաև անկելանոցի խորհրդի անդամ։ Ախր էդքան էլ վայր ի վերոյ խօսել չի լինիլ։ Այնպէս էլ համարձակ խօսում է, կարծես, թէ հաստատ գիտէ, որ այդպէս է։ Գոնէ մի նեղութիւն քաշէր և կարդար այդ փոքրիկ կանոնադրութիւնը։ Բայց... բայց դոցա բան հասկացնել կը լինի որ...

Անգին գոհարներով ընդելուզուած այդ թղթակցութիւնից մի քանի կտոր էլի առաջ կբերեմ, սիրելի Գարեգին, վստահ լինելով, որ համերութիւն կ'ունենաս կարդալու, թէև, ճշմարիտն ասած, ես զզվում եմ այդ թղթակցութեան մասին երկար գրել, որովհետև ծայրէ ի ծայր սուտ է, կեղտոտ է և անպատկառ։ Ինչո՞ւ չէ, կարելի է գրել և գրել հրապարակով, որ ամենքը կարդան. բայց այդ լաւ է այն ժամանակ, երբ տեսնում ես, որ հակառակորդդ քիչ թէ շատ ծանօթ է աղնութեան։ Իսկ երբ գործ պիտի ունենաս հոտենտոտների և կամ սանկիւլոտների հետ, այն ժամանակ աւելի բարւոք կըհամարես լռութիւն պահպանել, քան թէ ի զուր տեղը անարգանքի՝ և անպատուութեան ենթարկուել։ Դէ, ուրեմն լսիր էլի։

«Ինչպէս յայտնի է, մեր մէջ կան մի դասի մարդիկ, որոնք ընտրութեան դէմ ոչինչ չեն ունենում միայն այն դէպքում, երբ ընտրվողները անպատճառ իրանք են լինում (և հաստատ կարելի է ասել, որ պարոնը Մոսկուայի ընտրութիւնների դէմ ոչինչ չէր ունենալ և այդ յօդուածը անգամ չէր գրիլ, եթէ իւր ընտրութիւնը չբեկանուէր. այն ժամանակ ամեն բան լաւ կը լինէր, այնպէս չէ՞), կամ իրանցից են լինում։ Այդ մարդկանց տիպը առ հասարակ ամեն տեղ շատ լաւ յայտնի է։ Դրանք սովորաբար կոկլիկ, չաղլիկ մարդիկ են (երևի, շատ պիտի ծիծաղես, ճանաչելով վերը յիշած պարոններին), շատ խիստ զգացող իրենց արժանապատուութիւնը, բայց, սակաւ բացառութեամբ, բոլորովին զուրկ որ և է արժանաւորութիւնից, (ի հարկէ պարոնը այդ դասակարգին չէ պատկանում։ երևի, անհարթ, լղար, խիստ չզգացող իւր արժանապատուութիւնը և մեծ արժանաւորութիւններով օժտուած է)։ Այդ մարդիկ մի տեսակ ներքին բնազդմամբ դէմ են ամեն բանի, ինչ որ ապրում, շարժվում, առաջադիմում է, և բորենու պէս միայն լէշով են կերակրվում։ Այդ յատկութիւնը հետևանք չէ տգիտութեան և ոչ նոյն իսկ անգրագիտութեան, որ ինչպէս յայտնի է, մեզանում դեռ արգելող հանգամանք չէ հասարակաց պաշտօններ վարելու համար»։

Այս տողերի առթիւ ես բան չունիմ ասելու. նոցա ես բերի միայն այն նպատակով, որ դու համոզուես, թէ որքան ինքնահաւանութիւն կայ այդ տողերում և որպիսի մեծամտութիւն։ Մի մարդ, որ ձգտում է հասարակական գործեր վարելու, որ խօսում է մի ամբողջ հասարակութեան հետ և հրապարակով գործ է ածում «բորենու պէս միայն լէշով են կերակրվում» խօսքերը, այդպիսի հրապարակախօսին բան չի կարելի ասել, որովհետև նորա համար ոչինչ բան է և վաղը վեր կենալ աւելի վատ հայհոյել։ Եւ ի հարկէ ի՞նչ կարելի է պահանջել առ հասարակ ոչ պաշտօնապէս և ոչ էլ անպաշտօնապէս չկրթուածից։ Մէկ է, եթէ հարբած մարդու խօսքերին մարդ սկսի պատասխանել։ . . Մասամբ էլ նպաստում է դորան կարմրելու ընդունակութիւնն կորցրած լինելը, ապաքէն այդպիսի տողեր գրողը կամ ամբողջ հասարակութիւնն է յիմարի տեղ դնում, կամ իմ ասածս է ապացուցանում։

Եթէ նա մի քիչ ծանօթ լինէր մեր ընտրութիւններին, երբէք չպիտի ասէր, որ «յայտնի մարդիկ» հաւաքվում էին մի 30

հոգի, «տանէ ցոանի ընտրութիւններ կատարում», «իրանք ընտրվում ու իրանցից ընտրում»։ Եթէ պարոնը տեղակ լինէր գործին, տեսած լինէր մի քանի ընտրութիւն, այն ժամանակ կ'ասէր, որ հաղիւ է պատահում, որ 30 հոգի լինին, այլ սովորաբար լինում է 60 աւել և երբեմն 100 է հասել։ Այդ ամբարտաւան և մեծամիտ թղթակիցը ո՛չ մի գործից գրական տեղեկութիւն չունենալով, սանձարձակ լեզուով գրում է, ինչ որ գատարկ գլխից դուրս է գալիս։ Առանց կարմրելու նա պատմում է այնպիսի բաներ, որ ոչ տեսել է և ոչ էլ կարող է փաստերով ապացուցանել։ Իմ խօսքս այդ գրչակի հետևեալ տողերի առթիւ է.

«Այնուհետև ընտրված աղաները երկու պարտականութիւն էին ունենում կատարելու.—նախ՝ եկեղեցու եկամտից իրանց ձեռքով ռոճիկներ բաժանել (ե՞րբ է տեսել պարոնը), բայց այն ձևով, որ կարծես փողը իրանց սեփական գրպանից են հանում տալիս, և երկրորդ՝ եկեղեցու եկամուտից մնացածը ոքան կարելի է ապարդիւն կերպով ծախսել (փաստե՞ր), միայն թէ ոչ մի ուսանող, ոչ մի ուսումնարանական հիմնարկութիւն ոչ մի կոպէկ չըստանայ և կանոնադրութեան այդ ատելի կէտը իրագործված չըլինի»։ Ես հաւատացած եմ, սիրելի Գարեգին, որ դու էլ կ'ասես, թէ սա հիւանդ մարդու զառանցանք է, իսկ եթէ հիւանդ չէ գրողը, այն ժամանակ գրածը ինսինուացիա է։ Բայց ինչ արած, ինքդ էլ գիտես, որ նոր-նոր հաւեր են դուրս եկել, որոնք մեծ-մեծ երկաթէ ձուեր են ածում։ Այդ նոր հաւերի անունն «նոր մարդիկ» է, որոնց պատկանում է և պարոն Թղթակիցը, ասելով թէ «այս տարի այդ աւանդութիւնը մի քիչ խախտվեց, անկասկած ի մեծ ցաւ աւանդապահների, նոյն մարդկանց մէջ խառնելով և երկու նոր մարդ (?) ընտրելով»։ Այո՛, ցոյց տուեց պարոնի բերանով, թէ այդ «նոր մարդիկը» ինչ բարոյական պատկեր ունին և ինչ ընդունակութիւն ունին հասարակական գործերի մասին գատողութիւն տալու։ Երևի, դոցա նշանաբանը ճշմարտութիւն հալածելն, աղնուութիւնից խոյս տալն և անուանարկելն է. բարով վայելէք, պարոնայք «նոր մարդիկ»։ Այո՛, ոքան ես տեսել եմ և դիտել, Մոսկուայում ընտրութիւնների ժամանակ ո՛չ մի հին մարդ սորան-նորան չէր մօտենալ և չէր խնդրիլ, որ իրեն ընտրեն, իրեն ձայն տան, թէև անաչառ և ազնիւ «նոր մարդը» ասում է, թէ այդ հին մարդիկ ընտրուել են միշտ «խնդրում ենք»-ով։ Թո՛ղ ներէ ինձ այդ հին խելքով նոր մարդը

եթէ հարկ լինի, մենք փաստով կարող են ապացուցանել, թէ ո՛ր համալսարականը և ո՛ր ժողովին դիմել է և ասել իրենից աւելի պակաս լուսաւորուածին և ասել. «Հապա չէ՞ք ասում, որ ինձ ընտրեն». կ'ապացուցանենք նոյնպէս, թէ որ համալսարականը և որ ժողովին առել է մի հասարակ և անկիրթ ծխականի թերթիկը և իւր անունն է գրել առանց նորա խնդրելուն։ Դէն ձգեցէ՛ք ձեր դիմակները, բաւական է որքան յանուն յառաջադիմութեան գործեր խառնակեցիք և գործեր աւերեցիք։

Պարոնը շարունակում է, սիրելի Գարեգին, թէ ընդհանուր ժողովում «եթէ բողոքներ կային, այդ միայն խորհրդի գործունէութեան և կազմած հաշուի դէմ էին»։ Սակայն բանսարկութեան համար էլ, ինչպէս և ախտաբեր միկրոբների համար այս անգամ հարկաւորուել է ո՛չ թէ մութ, այլ լոյս և կեղտոտ խորշեր, այսինքն «Մշակի» էջերը։ Հաստատ կարող եմ ասել քեզ, որ խորհրդարանի գործունէութեան դէմ ոչ մի բողոք չէ եղել. ինքդ էլ լաւ գիտես, որ այդ նոր մարդիկ մի բանի են սպասում, որ զանգակներ խփեն և ականջ խլացնեն։ Ճիշտ է, եղել է նկատողութիւն հաշուէպահութեան ձևի մասին, սակայն դորանից հաշուի ճշգրտութիւնը չէ խախտվում. խօսքը միայն ձևի մասին էր։ Իսկ «յառաջադէմ» միկրոբները կեղտոտ խորշերում ամեն մի բան կարող են իրենց ուզեցածին պէս գրել։

«Մեծ լոգիկայից» խօսող թղթակից պարոնը հաստատում է իւր գրութեամբ, որ փոքր լոգիկայի անգամ կարօտութիւն ունի։ Խորհրդարանի անդամները կարող են ներկայ գտնուել և նկատել անկանոնութիւններ, և մինչև անգամ ստորագրել արձանագրութիւնը։ Սակայն դա չէ նշանակում, որ խորհրդարանի անդամները ամեն մի իրաւացի բողոք անուշադիր պիտի թողնեն և չպիտի խոստովանեն, որ այո՛, այս կամ այն անկանոնութիւնը տեղի է ունեցել։ Շատ անգամ անհնարին է լինում բոլոր մանրամասնութիւնները ճշդիւ կատարել և կամ չեն նկատում. բայց դա իրաւունք չէ տալիս անդամներին անբարեխիղճ լինել և չքննել ծխականների արդարացի զայրոյթը։ Այս դէպքում, սիրելի Գարեգին, ձեր յառաջադիմականները մի խումբ կազմած կամենում էին այստեղ էլ բուն դնել. բայց բանը ուրիշ կերպ դուրս եկաւ։ Հասարակութեան մեծամասնութիւնը և բուն ծխականները, որոնք 10—20 տարով և աւելի Մոսկուայում են ապրում, իրենց կշտամբանքը սկսեցին յայտնել այդ ընտրութիւնների առթիւ։

Խորհրդարանը խուլ մնալ հասարակութեան ձայնին չէր կարող և իւր բարոյական պարտականութիւնը համարեց խոստովանել կատարուած անկանոնութիւնները և միջնորդել, որ բեկանուին այդ տարօրինակ ընտրութիւնները։

Ինքդ էլ եղել և ապրել ես Մոսկուայում, գիտես, որ օգոստոսի վերջերքին և սեպտեմբերի սկզբներին բոլոր ծխականները հաւաքուած են լինում, բայց ձեր կուսակիցը հակառակն է հնթադրում, ասելով, թէ Խորհրդարանը նոր ընտրութիւնները այդ ժամանակ կընշանակէ, որ իւր ցանկացած մարդիկ ընտրուին։ Այդ էլ ինքդ կ'ասես, թէ որքան ճշմարտութիւն կայ դորա մէջ։ Եւ նա զարմանում է, որ պ. Արշակ Հէջուբեանը հրաժարվում է այդ նոր մարդկանց ընտրութիւնից։ Անուն պէտք է փնտրել այն մարդկանց տալու, որոնք կըհամաձայնեն ընդունել մի այդպիսի ընտրութիւն։

Եթէ հարկաւոր լինի, ես դարձեալ օրինակներ կըբերեմ քեզ ցոյց տալու, թէ ժամանակակից լրագրական դարվիշները, որքան ամեն բան աղաւաղել, տակն ու վրայ են արել, իսկ ոչինչ չեն յառաջացրել, ոչինչ չեն ստեղծել։ Առ այժմ խնդրում եմ նեղողամիտ լինիս և բաւականանաս այսքանով, բայց հետևեալ նամակներումն ես, անշուշտ, առիթ կ'ունենամ խօսելու մի քանի հիմնարկութիւնների մասին և այն ժամանակ դարձեալ կ'ապացուցանեմ ասածներս։

Քո ընկեր

ԱՆԴՐԷԱՍ.

* * *

Թոռմում է քնքոյշ Իրանի վարդը,
Երբ Հարաւի սէր խնամող չունի.
Լուռ է սլանում Արաքս, Եփրատը,
Երբ դրախտից հեռու ազատ կեանք չունի:
Ողբում է սոխակ մինչև արշալոյս,
Երբ վարդի բուրմունք ծաղկոցում չունի.
Վայրենի վտակ լռում է անյոյս,
Երբ խոր ծործորներ դաշտումը չունի:
Այդպէս մարում է կեանքը դեռաբոյս
Նաղելի կուսի, երբ սիրող չունի. . .

Գ. Մ.

1889 Թ. մայիսի 7.
Ղզլար.

ՄԵԾԿԵԼԻ ԵՐԳԸ.

Իմ զուլթանիս խոփը դէմ առաւ քարին.
Թուրը կոտրաւ, արտս մնաց առանց վար.
Համարեա՛ ձախ անցաւ այս աշխոյ տարին.
Հաւատարիմ մօտիսմ չեղաւ ինձ համար։

Վախկոտ հօտաղներս փախան—գնացին,
Առոյգ լծկաններս պարապ մնացին,
Դրացիներս ինձ վերայ խնդացին,
Համարեցին իբր խենթ ու խելագար։

Դիպուածը սկսեց ինձ ոտնահարել,
Ապառաժ քարերով գործս խանգարել,
Նոր էի սկսել մի ակօս վարել,
Գլուխը չըհասած՝ մնաց անկատար։

Շտապեցան բանուորներս վաղվաղկոտ,
Ակամայ այդ տեղում ինքս դրի ոտ,
Չէի կարծում արտը այդքան քարքարոտ.
Ցիմարացայ, սխալուեցայ չարաչար։

Քաջ մշակիս մէկը քարից վայր ընկաւ,
Դեռ մի արտ չըվարած՝ դուր տեղը մեռաւ,
Որ տեղին ձեռք դրի, քարոտ դուրս եկաւ.
Հերկ անելն այս անգամ եղաւ անհնար։

Ամառը չ'աջողուեց, գործս ձախ գնաց,
Եղ ու գոմէշներս պարապ թողի բաց,
Հօրաղ մշակներուս շուտ արի իմաց,
Աշնան սկիզբներիս ձեղ կանեմ խապար։

Ես էլ սկսեցի ման գալ աստ և անդ,
Բժշկել եղներս թուլացած, հիւանդ,
Ծիր ու ճարպիկ նախրապանս մանաւանդ,
Գործի աջողուելու մասին կեանք կուտար։

Աշունք մտանք, արդէն սարքի էր բանս.
Շարժման մէջ էր բոլոր իմ դերդաստանս,
Նորոգեցի, սայլին դրի դութանս.
Եղ ու գոմէշ լծած՝ ընկայ ճանապարհ։

Տեսայ, դաշտում լինելու չէ իմ վարը,
Քանի որ համ չի տալ ապառաժ քարը,
Վերջապէս դութանս հանեցի սարը,
Մի արտի տեղ դտայ, կակուղ առանց քար։

Գործը դրինք, սկսեցինք գնալ-գալ,
Ցեանիից էլ, աշխուժով հօռօվէլ կարդալ,
Մէկ էլ յանկարծ մի մարդ ասաւ՝ չեմ թող տալ.
Այս ՞ում արան է, որ կըվարես անարդար։

Քեզ ՞ով է իրաւունք տուել, անզգամ,
Գութան լծած՝ արտ կըվարես ինքնակամ,

Քեզ այլ տեղ կրտեսնես, չի քաշիլ չորս ժամ,
Կրխրատուիս, այնտեղ Ճնալով երկար։

Այդ մարդը մեծ մարդ էր, չէր հասարակ անձ,
Մաղը գերան շինող, կրքոտ չափազանց,
Հրամայեց մեզ պաշարել իւր մարդկանց.
Նա ունէր ծառաներ մի քանի հազար։

Ես նորան ասացի, խնդրեմ ինձ թոյլ տաս,
Որ իմ արտը վարեմ, աւարտեմ մաս-մաս,
Այս գործը մաղն չափ չէ՝ քեզի վնաս,
Ի զուր տեղը դու եղել ես անդադար։

Այս արտը տէր ունի, քեզի ոմ կուտայ,
Ասաւ, չե՞ս մոտծուում, որպէս երեխայ.
Զըգիտես, որ քու մեծդ կընեղանայ,
Դու քու գլխին գործ կրբռնես անյարմար։

Ես ասի, արան իմն է, ոչ մի մարդու չէ,
Միայն ես չեմ ասում, ողջ գիւղը գիտէ,
Ի՞նչ արած որ, հիմա ուրիշի ձեռք է,
Բռնի խլել են մեզանից կոպտաբար։

Վեց եղբայր ենք, միթէ մեզի չէ՞ արժան,
Առանձին մեզ համար լծենք մի գութան,
Մանաւանդ, այս հողը մեզի է պատկան,
Սորանից մենք պիտի հայթայթենք պաշար։

Ձեր շնորհիւ մենք մեծացանք, մարդ եղանք,
Ձեզ պէտք դալու համար չենք խնայել ջանք,
Թողէք մենք էլ մի քիչ անենք վար ու ցանք,
Որ եղել է.ք խեղճերին միշտ բարերար։

Այնուհետև, էլ չըգիտեմ, ինչ անցաւ,
Զգացի որ ինձի տիրեց հոգս ու ցաւ,
Եղաւ տեղս խոնաւ, մի նեղ քարանձաւ,
Առանց արև, շուրջս անդոյս մութ խաւար։

Զրկուեցայ իմ աջողակ գութանից,
Աշխատասէր, առոյգ ու թարմ լծկանից,
Մշակներս չըհեռացան ինձանից,
Աշխատեցան ինձ հետ հոգով հաւասար։

Աչքս բացի, ինձ ծուղակի մէջ տեսայ,
Ի՞նչ կըմտածէի, այժմ ուր ընկայ.
Աստուծուն է յայտնի, վերջս ուր կերթայ,
Ես իմ մասին լուր չեմ լսում օգտակար։

Ջիւանս տեսնելով այս անցքը թշուառ,
Սրտիս մէջ մարեցան իմ յոյսերս վառ,
Հողագործութիւնից հեռացայ իսպառ,
Գութանի մնձի տեղ՝ ձեռք առայ քնար։

ՋԻԻԱՆ.

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԻ

ԵՐԿՐՈՐԴ ԴՊՐՈՑԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

(Մեծապատիւ տիկին Կ. Եւանգուլեանին
խորին յարգանքով նուիրում է հեղինակը)

ՑԱՌԱՋԱԲԱՆ

1891 թ. ամառը տեղի ունեցաւ Ներսիսեան Հոգեւոր դպրոցի աշակերտների առաջին դպրոցական ճանապարհորդութիւնը, որ իւր կազմակերպութեամբ՝ իբրեւ մանկավարժական մի նոր ձեռնարկութիւն, յաջող ելք ունենալով՝ դրաւեց մեր մամուլի և հասարակութեան ուշադրութիւնը։

Դպրոցի հոգաբարձութիւնն ևս գոհ մնալով առաջին ճանապարհորդութեան յաջող հետևանքից, յաջորդ տարին միաձայն որոշեց որդեգիր աշակերտներին կրկին ուղարկել ճանապարհորդելու։ Այս անգամ ևս հոգաբարձութիւնն որոշեց ինձ յանձնել դպրոցական ճանապարհոր-

դութեան կազմակերպութիւնն ու ղեկավարութիւնը պատճառաբանելով թէ. «Նա ներկայ գտեալ է նոյնպիսի ճանապարհորդութեանց ի Գերմանիայ և ուսումնասիրեալ է. յանցելումն ամի ևս առ մեզ վարեալ է զնոյն պարտաւորութիւն և արժանացեալ է շնորհակալութեան...»։

Երկրորդ դպրոցական ճանապարհորդութիւնն առաջինից աւելի յաջող հետևանքներ ունեցաւ, աւելի երկար տևեց և աւելի մեծ տարածութիւն ընդգրկեց՝ հնայելով խօլերայի տարածած ահ ու սարսափին։

Այս անգամ ճանապարհորդութեան կենդրոնավայրն էլ բանուկ ճանապարհի վրայ և ամարանոց տեղ—Դիլիջան—լինելով՝ մեր ինտելիգենտ հասարակութիւնից շատերն առիթ ունեցան անձամբ տեսնելու ճանապարհորդութեան կազմակերպութիւնը և մասնակցող աշակերտների եռանդն ու գործունէութիւնը։ Պետերբուրգի համալսարանի արևելեան լեզուագիտութեան պրոֆէսոր հայագէտ պ. Մառը մօտ երկու ժամ դիտելով մեր սաների ժողովածուները, նկարներն ու գրաւոր աշխատութիւնները, շատերի ներկայութեամբ արտայայտելով իւր համակրութիւնը՝ շեշտեց այն հանգամանքը, որ ամբողջ Ռուսաստանում այդպիսի ծրագրով դպրոցական ճանապարհորդութիւն չի եղել։

Անցեալ տարի հրատարակելով առաջին ճանապարհորդութեան համառօտ նկարագիրը[1], այս անգամ էլ հասարակութեանը տալիս ենք երկրորդ ճանապարհորդութեան համառօտ տեղեկագիրը։ Դպրոցիս հոգաբարձութիւնը ցայժմ անկատար թողեց—գրամի պակասութիւն պատճառաբանելով — ճանապարհորդութեան մանրամասն

---

[1] Տես. Իսահակ Ցարութիւնեանց. Ներսիսեան Հոգևոր դպրոցի սաների առաջին դպրոցական ճանապարհորդութիւնը. յաւելուածով։ Տփխիս 1894 թ. գինը 40 կոպէկ։

և պատկերազարդ տեղեկագրի տպագրութեան վերաբերմամբ իւր կայացրած որոշումը։

Ստորև առաջ ենք բերում մեր դպրոցական ճանապարհորդութեան մասնակցող աշակերտների գործունէութեան ականատես վկայ եղող երկու յարգելի պարոնների յօդուածները, որ լոյս տեսան 1892 թ. «Արձագանքի» 112 և 113 №№։ Առաջինը պատկանում է «Թատրոն» հանդիսի խմբագիր-հրատարակիչ պ. Աղ. Թարխանեանի, իսկ երկրորդը մեր յայտնի գեղարուեստագէտ—կրիտիկոս պ. Յովհ. Լալայեանի գրչին[1]։

1894 թ. նոյեմբերին,
Տփխիս։

---

[1] Տեղի պակասութեան պատճառով անկարող եղանք զետեղել «Հանդիսում» այդ յաւելուածները։

Ծանօթ. Հրատ.

I.

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ԿԵԱՆՔԻՑ.

Ա.

ՀԱՍԱՐՈՍ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԻ

ԵՐԿՐՈՐԴ ԴՊՐՈՑԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ

1892 թ. մայիսի 20-ին դպրոցիս հոգաբարձութիւնը վճռելով որդեգիր աշակերտներին ճանապարհորդութեան ուղարկելու՝ ինձ յանձնարարեց կազմել ճանապարհորդութեան ծրագիրը. յաջորդ Նիստին ներկայացրի հետևեալ համառօտ տողերը.

ՀԱՄԱՌՕՏ ԾՐԱԳԻՐ ԵՐԿՐՈՐԴ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ.

I. *Ճանապարհորդութեան Նպատակը.*

Այս տարի ևս ճանապարհորդութեան նպատակը նոյնը կըլինի, ինչ որ անցեալ տարի էր.

II. Ճանապարհորդութեան վայրը.

Կենդրոնական բնակավայր ընտրելով Դիլիջան կամ Քարվանսարայ գիւղը՝ պէտք է դիտուի շրջակայքում գտնուող եկեղեցական-պատմական հնութիւնները, որոնցից ամենանշանաւորներն են Սևանայ վանքը, Հաղարծնի վանքը, Գօշավանքը, Մակարայ վանքը և այլն։

III. Ճանապարհորդութեան ռելիեֆները.

1) Ցանկալի է, որ այս տարի դպրոց. ճանապ. մասնակցեն նաև երթևեկ աշակերտներ. սոցա մէջ կան այնպիսիները, որ ընդունակ, ջանասէր և վարքով գովելի են, սակայն որդեգիր լինելու բաղդից զրկուած լինելով և նիւթապէս էլ անապահով՝ չպիտի կարողանան մասնակցել դպրոցական ճանապարհ.՝ թէև սրտով ցանկանում են և կարող էին աւելի օգտուել, քան որդեգիրներից ոմանք։ Եթէ յարգելի հոգաբարձութիւնդ անյարմար գտնէ թոյլ տալ երթևեկ աշակերտներին ձրիապէս մասնակցելու ճանապարհորդութեան, արդեօք չէ՞ր կարելի դպրոցիդ երգեցիկ խմբի գումարից վճարել չորս կամ հինգ երթևեկ աշակերտների թոշակադրամը։ Երգեցիկ խմբի անդամները մեծ մասամբ երթևեկ աշակերտներ լինելով՝ ցանկալի է, որ այդ խմբի վաստակած գումարներն առ հասարակ և ընդ միշտ յատկացուին դպրոց. ճանապ. մասնակցող երթևեկ աշակերտների թոշակադրամը լրացնելուն։ Երթևեկ աշակերտները պէտք է ընտրուեն IV, V և VI դասարաններից։

2) Դպրոց. ճանապ. ղեկավարին կարևոր են երկու օգնական. մէկը պէտք է լինի դպրոցի վերակացուներից, իսկ միւսը այնպիսի մի անձն, որ քաջ տեղեակ լինի տեղական հանգամանքներին և իմանայ ճանապարհները։ Ճանապարհորդութեան ժամանակ առանց խիստ կարգապահութեան հետևելու՝ անկարելի է արդիւնաւոր եղք սպասել. իսկ կարգապահութեան համար անհրաժեշտ է, որ հրահանգ տուողը մի անձն լինի, ուստի կարևոր է յայտնել ճանապարհորդութեան ղեկավարի օգնականներին, որ նոքա յամենայն դէպս պէտք է գործեն նորա հրահանգների համեմատ և առանց նորա գիտութեան ո՛չ մի կարգադրութիւն չանեն։

3) Ճանապարհորդութեան մասին պէտք է յայտնել Գանձակի և Տիֆլիսի նահանգապետներին, որպէս զի տեղական ստորին վարչութիւնների կողմից ճանապ. արգելքի չհանդիպի և կարևոր դէպքում պաշտպանուի։

4) Տիֆլիսի Վիճակային Կոնսիստորիայից պէտք է հրահանգ ունենալ ուղղուած գործակալ քահանաներին ու վանահայրերին, որպէս զի աջակցեն ճանապարհորդութեան։

5) Ղեկավարը պէտք է դպրոցի Վարչութիւնից պաշտօնական վկայագիր ունենայ։

6) Կենդրոնական բնակարանի յարմարութիւնները տեսնելու և տանելիք սենդի պաշարն որոշելու համար՝ Վարչութեանդ կողմից պէտք է նախապէս մեկն ուղարկուի Դիլիջան։

7) Երկաթուղու վարչութիւնից պէտք է վկայականներ առնել՝ մինչև Աղստաֆայ գնալու համար որոշուած գնիջումից օգտուելու։

8) Դպրոցի բժշկին պէտք է յանձնել մի ճանապարհորդական դեղատուն կազմելու՝ պատահական դէպքերի համար։

9) Մատենադարանից պէտք է վերցնել կարևոր և ընթերցանութեան գրքեր։

10) Պէտք է գնել կարևոր պիտոյքները—մի քանի երաժշտական պարզ գործիքներ՝ երկու թմբուկ, երկու փող և երկու սրինգ. ամեն մի աշակերտի համար երկու զոյգ տրեխ. գլխարկներ ու պարկեր անցեալ տարուանից կան, պէտք է պակասը լրացնել. գնել յիշատակարաններ, տետրեր, թուղթ, մատիտ, թանաք, գրիչ, գրչահատ և այլն և այլն։

Հոգաբարձութիւնը ընդունելով սոյն ծրագիրը ամբողջութեամբ՝ որոշում է.

1) Տասն երթևեկ աշակերտների իրաւունք տալ մասնակցելու ճանապարհորդութեանը և դոցա ընտրութիւնը յանձնում է ուսուցչական ժողովին. 2) Դպրոցի տնտեսական կառավարչին ուղարկում է Դիլիջան՝ յարմար բնակարան գտնելու. 3) Նշանակում է մի վերակացու և ուղեցոյցի ընտրութիւնը թողնում է ինձ. 4) Վարչութեան կողմից թերթեր են գրում նահանգապետներին, Կոնսիստորիային և այլն։ Կազմվում է դեղերի արկղը, ընտրում են կարևոր գրքերը — մեծ մասամբ Նախնի մատենա-

գրութիւնից—գնվում են անհրաժեշտ իրեղէնները, երաժշտական գործիները, կարգի են բերվում ճանապարհորդական, յատուկ ձևով որոշուած և միատեսակ զգեստները ևայլն։

Այս միջոցին՝ իրենց ծնողներին տեսնելու համար ժամանակաւորապէս արձակուած որդեգիր աշակերտները վերադառնում են դպրոց, հաւաքվում են նոյնպէս երթևեկ աշակերտները և վերջապէս ամեն բան պատրաստ, յունիսի 9-ին, երեկոյեան մեր փոքրիկ արշաւախումբն երաժշտութեամբ և զինուորական քայլով դիմում է դէպի երկաթուղու կայարանը, պատանեկական սրտի ուրախութիւնն արտայայտող երգեր հնչեցնելով։

Մեր ճանապարհորդական արշաւախումբը բաղկացած էր հետևեալ քսան և ութ անձնաւորութիւններից.

1) Առաջնորդ խմբի՝ Իս. Յարութիւնեան,
2) Վերակացու պ. Ար. Սպարապետեան,
3) Ուղեցոյց պ. Յար. Ծուղուրեան.

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ.

4)	Դէրզիբաշեան Նիկ.				Նորաւարտ Թիֆլիզեցի,
5)	Ապրեսեան Աւետ.	VI	դաս.	աշակ.	Թաւրիզեցի,
6)	Աղաջանեան Գրիգ.	VI	»	»	Շամախեցի,
7)	Բունիաթեան Լևոն	VI	»	»	Ախալքալաքցի,
8)	Շուբաշեան Սեդ.	VI	»	»	Թիֆլիզեցի,
9)	Պապաջանեան Արմ.	VI	»	»	Լօռեցի,
10)	Կաճկաճեան Նիկ.	V	»	»	Զխարեցի,
11)	Նալբանդեան Վահ.	V	»	»	Վանեցի,
12)	Սէթեան Գրիգ.	V	»	»	Ցղնայեցի,
13)	Իփակեան Սարգ.	V	»	»	Թիֆլիզեցի,
14)	Եախշիբէգեան Սարգ.	V	»	»	Թիֆլիզեցի,
15)	Մամաջանեան Աղէք.	V	»	»	Թիֆլիզեցի,
16)	Գասպարեան Շմաւ.	IV	»	»	Ցղնայեցի,
17)	Մեհրաբեան Գէորգ	IV	»	»	Թիֆլիզեցի,
18)	Պապովեան Աղէք.	IV	»	»	Թիֆլիզեցի,
19)	Զքրոյեան Գէորգ	IV	»	»	Թիֆլիզեցի,
20)	Խախանեան Գաբ.	III	»	»	Ցխինվալեցի,
21)	Մովսիսեան Սարգ.	I	»	»	Գորեցի,
22)	Գոլուլեան Յովհ.	I	»	»	Թիֆլիզեցի,

23) Մոմ՝ճեան Տիգ. պատրաստ. աշակ. Էրզրումցի,
24) Նաղարրէգեան Արս. » » Թաւրիզեցի,
25) Քացախեան Մարտ. » » Ախալցխացի,
26) Խոհարար, 27) և 28) ծառաներ։

Նոյն գիշերն երկաթուղու գնացքով հասնելով Աղստաֆայ կայարանը և մեր իրեղէնները տեղաւորելով երկու փուրգոնների մէջ, առաւօտեան ուղևորուեցանք դէպի Ուզունթալայ. այստեղ մեր խումբը բաժանեցինք երկու մասի. փոքր աշակերտներին—թուով վեց հոգի—վերակացուի հսկողութեամբ փուրգոնով ճանապարհ դրինք դէպի Դիլիջան, իսկ մեծերին անձամբ առաջնորդելով՝ սկսեցինք մեր իսկական արշաւանքը ոտքով։

Երեկոյեան հասանք Ուզունթալայ գիւղը, ուր դիմաւորեց մեզ տեղական դպրոցի ուսուցիչ պ. Դաւթեանը. մի պարտիզում փոքր ինչ հանգստանալուց յետոյ բարձրացանք անտառի միջով դէպի Սրուեղ։ Սրուեղայ վանքը մանրամասն դիտելուց, նկարելուց և նկարագրելուց յետոյ կրկին վերադարձանք գիւղը և գիշերեցինք դպրոցի սենեակներում։

Միւս առաւօտը կանուխ արթնանալով՝ ճանապարհ ընկանք դէպի Աչաջուր գիւղը, Ռևազլուի վրայով. ճաշին հասանք Աչաջուր, իջևանեցինք գործակալ քահանայ Տէր-Յակոբի տանը և ճաշելուց ու հանգստանալուց յետոյ բարձրացանք բաւականին դժուարագնաց ճանապարհով դէպի Մակարայ վանքը։ Երկու ժամի չափ զբաղուելով վանքի մանրամասն դիտողութեամբ՝ կրկին վերադարձանք գիւղը և գիշերեցինք։

Առաւօտեան վաղ ուղևորուեցանք՝ Սև Քար, Սբուի և Մէլիք գիւղերի վերայով դէպի Կունան գիւղը. այդտեղ իջևանեցինք Ներսիսեան դպրանոցի նախկին սան և այժմ ուսուցչութեամբ պարապող պ. Փիրումեանցի տանը. մի փոքր հանգըստանալուց յետոյ ուղևորուեցինք Կունէն գետի հոսանքով Առաքելոց վանքը դիտելու. վանքի նկարագրութիւնը վերջացնելուց յետոյ կրկին դարձանք գիւղը և գիշերեցինք այդտեղ։

Յաջորդ օրը խիտ անտառների միջով գնացինք Կիրանց և Դեղձնուտ վանքերը դիտելու. այս վանքերի դիտողութիւնը բաւականին ծանր աշխատանք պահանջեց մեզնից, որովհետև գտնվում են անմարդաբնակ վայրերում և միմեանցից հեռու են տարածութեամբ. դժուար անցանելի ճանապարհներով հաղիւ

գիշերուայ ժամի 12-ին կարողացանք հասնել Սև Քար գիւղը, ուր պատրաստուած էր մեր ճաշը, որովհետև այդ ամբողջ օրը մի կտոր հաց ու պանիրը և ականակիտ սառն աղբիւրների ջուրն էր մեր կերակուրը։ Սև Քարում իջևանեցինք մեր դպրանոցի նախկին սան Տէր-Գէորգեանց Մուշէղի հօր՝ Տէր-Յովակիմ քահանայի տանը և միւս առաւօտեան վաղ՝ շարունակեցինք մեր ճանապարհը՝ Աչաջուր, Ներքին Աղդան գիւղերի վրայով դէպի Խաչթառակ գիւղը, ուր իջևանեցինք մեր դպրանոցի նախկին սան պ. Ճուղուրեանի հօր տանը։ Այդտեղ մի փոքր հանգըստանալուց յետոյ գնացինք Մորոյ-Զորոյ կամ Ծովիկ փոքրիկ վանքը դիտելու և կրկին վերադառնալով գիւղը՝ գիշերեցինք։

Միւս առաւօտեան ուղևորուեցինք դէպի Քարվանսարայ գիւղը, ուր մի գիշեր հանգստանալով—գիշերելու համար այստեղ մեր սաներին երեք խմբի բաժանեցինք. մէկ խումբը գիշերեց Սիմէօնեան արժ. քահանայի տանը, երկրորդ խումբը մեր նախկին աշակերտ Թումանեանի, երրորդ խումբը նոյնպէս մեր նախկին աշակերտ Ասլիբէգեանի տանը—յաջորդ օրն առաւօտեան գնացինք Ներքին Աղդան գիւղը, դիտեցինք Խաչբաղար կոչուած մատուռները, ճաշեցինք Քարվանսարայից մեզ հետ եկող խմբի հետ միասին և գիշերեցինք Վերին Աղդանում։ Այստեղ ևս ստիպուեցանք մեր խումբը մի քանի մասերի բաժանել և զանազան յարկերի տակ օթևանել, որովհետև արժ. Խալաթեանի տանը, ուր իջևանել էինք, չէինք տեղաւորվում։

Յաջորդ առաւօտը մեր առաջին արշաւանքի վերջին օրն էր. ճանապարհ ընկանք անտառախիտ շաւիղներով և մի քանի ժամից յետոյ արդէն արքունի խճուղու վերայ էինք՝ Քարվանսարայից ութ վերստ հեռաւորութեամբ. այնուհետև՝ այդ ճանապարհով շարունակեցինք մեր ուղին դէպի Թարսաչայ և այնտեղից Դիլիջան, ուր հասանք երեկոյեան ժամի 5-ին. այդ օրն անցանք 33 վերստ տարածութիւն։

Այսպիսով ամբողջ եօթն օր ճանապարհորդելով՝ ութերորդ օրը, յունիսի 17-ին, ուրախ տրամադրութեամբ հանդիպեցինք մեզնից բաժանուած փոքրիկ սաներին, որոնք երգելով երկու վերստ ճանապարհ մեր առաջն էին դուրս եկել։

Մեր կենդրոնավայրը, Դիլիջան, հասնելով՝ մեր առաջին գործն եղաւ մի կերպ տեղաւորուել տղայոց ուսումնարանի երկու

անձուկ սենեակներում, որ բնակարանի տեղ պէտք է ծառայէր մեզ. ուսումնարանի միւս երկու սենեակները ժամանակաւոր եկեղեցի լինելով՝ մնում էր ազատ միայն լայն միջանցքը, որ եղաւ մեր սեղանատունը։ Այսպիսով մեր բնակարանը վերին աստիճանի անյարմարութիւններ ունէր, սակայն արդէն ուշ էր. հազիւ կարողացանք պ. Եարալեանի շնորհիւ մի թուրքի թաղիքէ վրան ճարել և առանձնացած ու ընդարձակ բակում տեղաւորուելով՝ գոնէ մի վեց աշակերտի համար գիշերուայ օթևան պատրաստել։

Դիլիջանում երկու օր հանգստանալուց յետոյ ձեռնարկեցինք մեր ընկերական կեանքի եղանակը և պարապմունքը որոշելու. սաներից իւրաքանչիւրը ստանձնեց իւր դերը. երեք հոգի պէտք է զբաղուէին վանքերի նկարչութեամբ, մէկը պէտք է կարգի բերէր բոյսերի ժողովածուն, երկրորդը հանքերի ժողովածուն, երրորդը պէտք է դիտէր ջերմաչափի աստիճաններն օրը երեք անգամ և նշանակէր, չորրորդը պէտք է ժողովրդական բառեր և ոճեր հաւաքէր, հինգերորդը երգեր ժողովէր, վեցերորդը մեր այցելուների և մեր գործով հետաքրքրուողների ցանկը կազմէր, եօթներորդը սպիտակեղէնը կարգի դնէր և կանոնաւոր բաշխէր իւր ժամանակին և այլն։ Բոլորը պէտք է հերթով օրապահութիւն անէին և կերակուրներ պատուիրէին խոհարարին. իսկ ժամանակի մեծ մասը պէտք է նուիրէին ճանապարհին արած համառօտ դիտողութիւններն ընդարձակելուն և շարադրութիւններ գրելով պէտք է զբաղուէին։ Շաբաթ, կիւրակէ և տօն օրերն ամբողջ խումբը մասնակցում էր եկեղեցական երգեցողութեան և պատարագի արարողութեան։

Ահա՛ այդ ծրագրով աշխատելով՝ զբաղուած էինք ամբողջ երեք շաբաթ. այս միջոցին տարածուեցին սարսափելի հիւանդութեան, խոլերայի, վարակիչ ազդեցութեան լուրերը, որ սկզբում մեր սաների վերայ շատ վհատեցուցիչ ներգործութիւն ունեցան. նոքա այնչափ իրենց մասին չէին մտածում, որչափ իրենց ծնողների և մերձաւորների։ Այս ընդհանուր անմխիթար տպաւորութիւնը մեղմացնելու միակ միջոցն էր զբաղեցնել նոցա, և մենք ամենքս աշխատում էինք օր ու գիշեր. մեր աշխատանքն ընդհատվում էր միայն Դիլիջանի շրջակայքում կատարուած զբօսանքներով։ Մինչ մենք աշխատում էինք խոլերայի մասին չմտածել, նա կամաց-կամաց մօտեցաւ մեզ և նոյն իսկ Դիլիջանում մէկ կին վարակուելով՝ զոհ գնաց։ Թէպէտ բոլոր կարևոր դեղերն ու ախտա-

հանուրեան միջոցներն ունէինք, սակայն վերոյիշեալ անախորժ լուրերի տպաւորութիւնը մեղմացնելու համար որոշեցինք շտապեցնել մեր երկրորդ արշաւանքը դէպի Սևանայ լիճը։ Առանց դանդաղելու պատրաստուեցինք և յուլիսի 8-ին ճանապարհ ընկանք. փոքրերին վերակացուի հետ ուղարկեցինք փոստի կառքով, իսկ մենք ոտքով նոյն երեկոյեան հասանք Սիմէոնովկայ գիւղը և գիշերելով այդտեղ՝ առաւօտեան արևի առաջին ճառագայթների հետ ի միասին տանից դուրս գալով՝ բարձրացանք Մարալ դաղը՝ ձիւնագագաթն Մասիսներն ու Արագածը տեսնելու և Սևանայ լճի փրփրալից ալիքները դիտելու։

Կանգնած ենք մօտ 10,000 ոտնաչափ —մեր խոտաչափը, բարոմէտրը ցոյց է տալիս 2700 մետր—բարձրութիւն ունեցող ծաղկաւէտ ու փոքրիկ լեռնադաշտի վերայ. տեսարանը սքանչելի է. ալևոր Մասիսները, ձիւնապատ Արագածը, Նոր-Բայազիդի լեռնաշղթան, Սևանայ կապուտակ լիճն իւր հնադարեան վանքով՝ միանգամից երևալով այնպիսի զգացումներ ներշնչեցին մեր մատաղ սաներին, որ համարեա՛ թէ բոլորիս աչքերը լցուեցին արցունքով։ Մէկ քառորդ ժամ անմռունչ դիտում և հրճվում էինք այս հիանալի և հայի ամբողջ անցեալը վերարտադրող տեսարանով. արդէն խօսքն աւելորդ էր այստեղ. զգացողը սիրտն էր և պատանեկական զգայուն սիրտը. մեր համոզմամբ այս վաղանցուկ քառորդ ժամն աւելի նշանակութիւն ունեցաւ սարերի ըզգացմանց կրթութեան համար՝ քան մէկ ամբողջ դպրոցական տարուայ ուսումը։

Որչափ էլ տեսարանը գրաւիչ էր և կաշկանդում էր մեզ, այնու ամենայնիւ մէկ ժամից յետոյ՝ վերջացնելով մեր աշխարհագրական դիտողութիւնները և նկարագրութիւնը, ցած իջանք լեռնալանջի վերայով և դիմեցինք դէպի Զիբուխլու գիւղը. գիւղից անցնելով մօտեցանք լճի ափին և դիտեցինք Զիբուխլու գետակի գետաբերանը. ապա լճի եզրով շարունակելով մեր ուղին, հասանք վանքի դիմացն և այնտեղից ուղարկուած նաւակներով մտանք կղզին։

Հինգ օր մնացինք Սևանում. մանրամասն նկարագրեցինք վանքերը, պտտեցինք կղզու շուրջը, ծանօթացանք միաբանների ժամերգութեան, նիստ ու կացի հետ, դիտեցինք գրադարանի ձեռագիրները, հանդերձատան հնութիւնները և վանքի այժմեան տնտեսական կառավարութիւնը։ Սուրբ Աստուածածնայ տօնին

հանդիսաւոր պատարագ եղաւ մեր սաների մասնակցութեամբ և մեր նախապէս դրած ուխտի համաձայն՝ ամենքս միասին արժանացանք սուրբ հաղորդութեան այդ պատմական սրբավայրում։ Այդ օրը Սևանայ վանքի ուխտի օրը լինելով՝ հազարաւոր ուխտաւորներ էին հաւաքուել շրջակայ գիւղերից ու Նոր-Բայազիդից. այդպիսով մեր սաներն առիթ ունեցան գոնէ մասամբ ծանօթանալու բուն հայ ժողովրդի վարք ու բարքի և սովորութեանց հետ։ Վանքի միաբանութիւնն ևս սիրով ընդունեց մեզ. թէև մենք մեր պաշարը տարել էինք, այնու ամենայնիւ այդ հինգ օրուայ ընթացքում նոքա մատակարարեցին մեզ այն ամենը, ինչ որ կարող էին։

Հինգերորդ օրը վերջին անգամ՝ համբուրելով մեր նախնեաց ձեռակերտ սրբավայրերի քարերը և ստանալով միաբաններից ամենաւագի, ալեզարդ ծերունու, օրհնութիւնը՝ մեծեցանք նաւամատոյցին. այդտեղ ևս միաբանների աւագ Լուսարար արժ. Գրիգոր վարդապետը (այժմ վանահայր) փիլոնը վրան «պահպանիչ» և «Ծէր ուղղեա՛ն» ասելով օրհնեց մեր ճանապարհը։ Մեր սաները զգացուած և ուրախ սրտով տեղաւորուեցան նաւակի մէջ և «Զայն տուր, ո՞վ ծովակ», «Երբ ալեկոծ ծովի վերայ» երգերը հնչեցնելով՝ շուտով հասանք Ցամաքաբերդ։ Այստեղ Նորից բաժանեցինք մեր խումբը. փոքրերին վերակացուի հսկողութեամբ ֆուրգոնով ուղարկեցինք դէպի Դիլիջան, իսկ մեր արշաւախումբը նաւեց մինչև Ելէնովկայ։ Ելէնովկայում ցամաք իջնելով՝ դիտեցինք հրազդանի սկիզբն առնելը լճից և անմիջապէս շարունակեցինք մեր ուղին ոտքով դէպի Դարաչիչագ—Ծաղկաձոր—Կեչառուս նշանաւոր վանքը տեսնելու նպատակով։ Անցանք Զրուցը, Շահրիզ, Ծաղկունք հայաբնակ գիւղերով և երեկոյեան մտանք Դըդմաշէն գիւղը. այստեղ դիմաւորեցին մեզ տեղական քահանաները և հրաւիրեցին իրենց մօտ իջևանելու. մի փոքր հանգստանալու և կազդուրուելու նպատակով ընդունեցինք այդ հրաւէրը, որպէս զի նոյն գիշերը հասնենք Ռընդամալ գիւղը. սակայն հիւրասէր քահանան ո՛չ մի կերպ չկամեցաւ թողնել մեզ և մենք մնացինք այդտեղ. դիտեցինք ս. Թադէոս հնաշէն և հոյակապ, կիսաւեր եկեղեցին ամբողջ գիւղի բնակիչները՝ թէ մեծ, թէ փոքր, տղամարդ թէ կին, շրջապատել էին մեզ։ Սոքա տեսնելով որ մենք դէպի տաճարն ենք գիմում, իրենք էլ հետևեցին մեզ և շուտով ահագին

տարածութիւն ունեցող եկեղեցին լցուեց բազմութեամբ. նոքա խորին ակնածութեամբ լսեցին մեր սաների երեկոյեան ժամերգութիւնը և եկեղեցուց դուրս գալուց յետոյ շրջապատեցին մեզ, ամեն կողմից հարցեր էին տալիս. մեր սաներն էլ պատասխանելով նոցա հարցերին՝ իրենք ևս տեղեկութիւններ էին ժողովում ծերունիներից՝ գիւղի և եկեղեցու անցեալի մասին։ Վերջապէս երկու կողմից ևս բաւականութիւն ստանալով՝ զինուորական կարգով և քայլերգով կրկին դիմում ենք դէպի մեր օթևանը, ուր մեզ համար փառաւոր ընթրիք էր պատրաստուած։ Ընթրելու ժամանակ քահանան յայտնեց, որ մեզ պատուողը միայն ինքը չէ, այլ ամբողջ գիւղի հասարակութիւնն է մեզ հիւրասիրողը. մեր շնորհակալութեան պարտքը վճարում՝ էինք մեր սաների ոգևորուած երգերով։

Այդ գիշերն այդտեղ անցնելով՝ միւս առաւօտը վաղ ճանապարհ ընկանք դէպի Ռընդամալ. կէս օրին հասանք և իջևանեցինք տեղական քահանայի տանը. շնայելով մեր շնորհակալութիւններին, արժ. քահանան և իւր եղբայրը ստիպեցին մեզ իրենց այգում՝ պատրաստած ճաշը վայելել։ Այս ճաշն ևս ուրախ անց կացնելուց յետոյ նոյն կարգով՝ երեկոյեան ուղևորուեցինք դէպի Դարաչիչագ և կանգ առանք Կեչառու հոչակաւոր վանքի գաւթում։ գիւղից դուրս պահապան կողակները թոյլ չտուին մեզ գիւղ մտնել՝ ասելով թէ պէտք է ախտահանութեան—դէզինֆէկցիայի—ենթարկուենք, սակայն մեր վկայականները ներկայացնելով ոստիկանապետին, իրաւունք տրուեց մեզ ազատ մուտք գործել գիւղը։ Արդէն երեկոյ էր. վանքը բաղկացած լինելով մի քանի տաճարներից և բազմաթիւ արձանագրութիւններ կրելով, անկարելի էր այսօր վերջացնել մեր դիտողութիւնը. սակայն որտեղ պէտք է գիշերենք. ամարանոցի բոլոր տները վարձած են, վանահայր վարդապետն էլ մի խուց ունի, ուր կարող են միայն 5—6 հոգի տեղաւորուել։ սակայն մեր աշխատասէր և վաստակած սաները բացօդեայ չեն մնայ «զի Աստուած ընդ մեզ է». հէնց այդ միջոցին մի խումբ երիտասարդներ մեր պաշտօնակից պ. Յ. Քոչարեանի և ծառայող պ. Ամիրխանեանի առաջնորդութեամբ՝ մտնում են վանքի գաւիթը խնդրում, որ այս գիշեր իրենց հետը լինենք. մեր ցանկացածն էլ այդ էր. հրաւէրն ընդունում ենք և զբաղվում վանքերով. մեր սաներն աշխուժութեամբ սկսեցին իրենց գործը. ոմանք խումբ-խումբ արձանագրու-

թիւններն են կարդում և գրում, ոմանք նկարում են, ոմանք չափում են վանքերը, ոմանք համարում խաչքարերն ու տապանաքարերն. ուր որ նայում ես՝ գործ է կատարվում: Հետաքրքրասիրողների մի ամբողջ խումբ, որոնց թւում կան ուսանողներ ու աշակերտներ, հետևում են մեր սաներին։

Արդէն սկսում է մթնել. մեր զբաղմունքը կիսով չափ վերջացնելուց յետոյ ընդհատում ենք և հետևելով մեզ հիւրասիրողների հրաւէրին՝ ուղևորվում ենք դէպի անտառը, ուր ընթրիք է պատրաստուած։ Ճանապարհին պատահում է մեզ Երևանի Նահանգապետ գեներալ Ֆրէյդէն և հետաքրքրուելով հարցնում՝ թէ ովքեր ենք, ո՞ւր ենք գնում, ի՞նչ նպատակի ենք ծառայում և այլն. այս հարցերին գոհացուցիչ պատասխաններ լսելով՝ պ. Նահանգապետը բարի ճանապարհ է մաղթում մեզ և հեռանում։ Ընթրելուց յետոյ մենք մի քանի խմբերի ենք բաժանվում և հանգստանում։

Միւս առաւօտը մինչև ճաշ կրկին զբաղվում ենք վանքերով. ճաշին նորից հրաւիրվում ենք երիտասարդութիւնից և երևկոյեան շրջապատուած մեզ հիւրասիրողներով՝ թողնում ենք Մաղկաձորը և ուղևորվում դէպի մօտակայ Մաքրէվան գիւղը։ Այդտեղ ևս բազմութեամբ շրջապատուած դիտում ենք վանքը, նկարագրում, շնորհակալութիւն յայտնում տեղական քահանային, որ խնդրում է մեզ այդտեղ գիշերել, «մնաք բարև» ենք ասում Դարաչիչագից մեզ հետ եկողներին և ուղևորվում դէպի Քաղցի գիւղը. դեռ ևս Ներքին Ախտայ չհասած մթնում է, սակայն ճանապարհորդի ցանկալի ընկերակից լուսինը պայծառ լուսաւորում է մեր ուղին, որ տարածվում է Հրազդան կամ Զանգու գետի օձապտոյտ ափերին։ Հասանք Քաղցի, գիշերեցինք մի գիւղացու ընդարձակ սենեակում և առաւօտեան վաղ ուղևորուեցինք դէպի Մայրոյ վանքը կամ պատմական «Մայրագոմը». այստեղ նորից երևացին Մեծ ու Փոքր Մասիսները. մեր նկարիչները նկարեցին այդ տեսարանը. մենք վերջացրինք մեր դիտողութիւնը և մի վերին աստիճանի դժուարագնաց և քարքարոտ ճանապարհով լերան գագաթից իջանք կրկին ձորը և պէտք է մտնէինք Սոլակ կամ Ցօլակ գիւղը։ Այստեղ ներկայ եղանք մի տեսարանի, որ անմոռաց կըմնայ մեր սաների սրտում: սարից ցած իջնելու ժամանակ նկատեցինք, որ դիմացի սարից ևս, ուր գտնվում է Ցօլակ գիւղը, ցած են իջնում մի քանի մարդիկ,

որոնցից մէկը քահանայ է։ Մենք Սաան աղբիւրի ջրից կուշտ խմելով՝ հէնց նոր էինք ոտք դրել այն կամուրջի վերայ, որի անունով և պատմութեան մէջ այդ ձորը կոչուեց Կամրջաձոր, տեսնենք՝ կամուրջի մէջ տեղը մեր առաջն է կտրում մի ալեզարդ, սակայն աշխոյժ քահանայ կամիլաւկայով, ոսկեզոծ խաչը կրծքին և արծաթապատ մեծ գաւազանը ձեռքին։ Նա բարևում է մեզ և սրտաշարժ ու զգացուած խօսքերով ողջունում է մեր գալուստը և հրաւիրում մեզ հիւր լինել իրենց գիւղում։ Քահանայի հետ եղած երկու ծերունիներն ևս արտասուալի աչքերով «մեր աչքի վրայ», «մեր գլխի վրայ» խօսքերն են արտասանում։ Մէկ բոպէ մենք լուռ ենք մնում։ արդեօք սա տեսի՞լ է. արդեօք ս. Ղևոնդ երէ՞ցն է քաջալերում հայրենեաց զաւակներին... սակայն շուտով սթափվում ենք և ամենքս ջերմաջերմ համբուրում Տէր-Ներսէս հօր աջը։ Ապա խօսելով յառաջ ենք գնում, որովհետև դեռ կէս ժամի չափ ճանապարհ ունինք մինչև գիւղը. հարցնում ենք այն երկու ծերունիներին՝ թէ ինչո՞ւ էին արտասվում։ նոքա պատասխանում են. «ինչպէ՞ս չարտասուենք ուրախութիւնից, որ քաղաքում մեծացած, ուսում առած երեխաներ, ոտքով, տրեխ հագած, այդպիսի վատ ճանապարհներով գալիս էք մեր վանքերը տեսնելու, մեր սրբերը համբուրելու. մենք այդպիսի բան տեսած չենք»։

Մեր սաները գիւղացոց համակրութիւնը գրաւում էին աւելի ևս այն ակնածութեամբ և յարգանքով, որով վերաբերվում էին թէ եկեղեցական սրբութիւններին ու աւերակներին և թէ իրենց՝ գիւղացիներին. իսկ մեր սաների անընդհատ հայերէն երգերն արթնացնում էին հայ ծերունիների աւիւնն ու հայրենասիրական ոգին...

Այսպէս զբուցատրելով մոռանք գիւղը. գիւղացիների բազմութեամբ շրջապատուած ճաշեցինք և երեկոյեան դէմ նոյն Տէր-Ներսէսի առաջնորդութեամբ դիմեցինք դէպի պատմական Բջնի քաղաքը։ Այստեղ ևս սիրալիր ընդունելութիւն գտանք. մի գիշեր մնացինք, հասարակութեան հետ եղանք և վանքի նկարագրութիւնը վերջացնելուց յետոյ միւս օրը դիտեցինք ամրոցի մնացորդները և երեկոյեան ուղևորուեցինք դէպի Ներքին-Ախտայ։

Գիւղի կէս ճանապարհին դիմաւորեցին մեզ տեղական քահանաները և ահագին բազմութիւն ժողովրդեան. արդէն մութն ընկել էր և շաբաթ օր էր. քանի մնտենում էինք մեր իջևանին,

այնչափ ևս շատանում էր մեզ շրջապատողների թիւը. հազիւ կարողանում էինք առաջ գնալ աբքունի լայն խճուղիով։ Մեր սաներն էլ ոգևորուելով այս փառաւոր ընդունելութիւնից՝ կրկնապատկում էին իրենց երգելու աշխոյժը և այսպէս յաղթող զօրախմբի նման հասանք մեր իջևանատեղին։ Մի ընդարձակ սենեակի մէջ՝ երկարութեամբ ձգուած և սպիտակ մաքուր սփռոցներով ծածկուած ու բազմաթիւ աշտանակներով լուսաւորուած սեղանը պատրաստ մեզ էր սպասում. սեղանի երկու կողմից դարսուած էին մահճակալներ՝ մաքուր անկողիններով. սենեակի պատերը ծածկուած էին գորգերով ու պատկերներով։

Այս անակնկալ տեսարանն այնքան անսպասելի էր մեզ համար, որ մի րոպէ կարծեցի թէ Զուիցերեան Ալպերի վերայ գըտնուող փառաւոր հիւրանոցներից մէկի մէջ ենք և ոչ թէ գիւղական քահանայի իրճիթում։ Տէր-Գէորգ հօր տանն էինք։ Մեր սաներին պատուելու և հիւրընկալելու համար էր տեղական հայ հասարակութիւնը պատրաստել այդ ամենը։ Թէյից և ճոխ ընթրիքից յետոյ հանգստացանք, որպէս զի միւս առաւօտեան, ըստ սովորականին, կանուխ ճանապարհ ընկնենք. սակայն յաջորդ օրը կիրակէ լինելով և բաւականին հասարակութիւն հաւաքուելով մեր բնակարանի առաջ՝ թոյլ չտուին մեզ հեռանալ, մինչև որ պատրաստ կըլինէր նախաճաշը, կամ՝ աւելի ճիշտ ասած՝ ճաշը։

Ժամի 9-ին շնորհակալութիւն անելով մեր հիւրասիրողներին՝ թմբկահարելով և զինուորական քայլով ուղևորուեցինք դէպի Նոր-Բայազէթ. հասարակութիւնը մի վերստաչափ հետևելով մեզ՝ ուրախ բացագանչութիւններով բարի ճանապարհ մաղթեց մեզ և վերադարձաւ՝ անմոռանալի տպաւորութիւն թողնելով մեր ամբողջ խմբի վերայ։

Գնում ենք բաւականին արագ, որովհետև մեծ տարածութիւն ունինք կտրելու. ժամի 12-ին հասանք Շադի-Բուլաղ կոչուած սարը, հայ գիւղացոց ամարանոցը. այդտեղ երկու ժամ հանգստանալուց և ընտիր սեր ու մածնով հիւրասիրուելուց յետոյ, կրկին ճանապարհ ընկանք Աղ-Մանդան լեռնադաշտի վրայով, որ մօտ 2,700 մետր կամ՝ 10,000 ոտնաչափ բարձրութիւն ունենալով՝ զուրկ է աղբիւրներից. ջրի պակասութիւնը բաւականին նեղեց մեր սաներին, սակայն այնու ամենայնիւ առանց վհատուելու շարունակ գնալով՝ հազիւ գիշերուայ ժամը 11-ին կարողացանք հասնել Նոր-Բայազէթ, որովհետև ճանա-

պարհն անմարդաբնակ տեղերով էր անցնում, իսկ բացօդեայ ի-ջևանելն անկարելի էր մեզ համար։

Սակայն «մշակն արժանի է վարձատրութեան». հազիւ ոտքերնիս փոխելով երբ հասանք քաղաքի հայոց դպրոցի շէմքը՝ տեսնենք, որ այստեղ ևս հաւաքուած է քաղաքի ընտիր դասակարգը. Վիճակի գործակալ արժ. Կիւրեղ վարդապետը, քաղաքի դեպուտատը, ուսուցչական խումբն և երիտասարդներն ողջունում են մեր գալուստը և ափսոսում, որ այսչափ ուշացել ենք, որովհետև քաղաքացիների մի ստուար խումբ ճաշից ի վեր սպասելիս է եղել մեզ՝ քաղաքի սահմանում և ճաշուայ կերակուրներն էլ պատրաստ։

Այստեղ արդէն մեր օթևանը պատրաստուած է քաղաքին վայել յարմարութիւններով. երեք ընդարձակ սենեակներ էին յատկացրած մեզ, և դեպուտատ պ. Բուռնազեանը յայտնեց, որ մենք կարող ենք մնալ քանի օր որ ցանկանանք և քաղաքի հիւրը կըլինենք. մեզ մնում էր միայն խորին շնորհակալութիւն յայտնել այս սիրալիր ընդունելութեան համար, ընդունելով պատրաստած թէյն ու ընթրիքը և բոլորիս խոնջացած ոտքերն օդիով մեռսել տալուց յետոյ հանգիստ քնել պատրաստի անկողիններում։ Յաջորդ օրը հանգստացանք, և պտտեցինք քաղաքը. երրորդ օրն, երբ քաղաքի իշխաններին այցելելով՝ մեր սաների ջերմագին շնորհակալութիւնը յայտնեցի նոցա՝ քաղաքի հասարակութեան կողմից ցոյց տրուած հիւրասիրութեան համար և դարձայ տուն՝ տեղացիներից մի պատգամաւորութիւն գալով յայտնում է թէ քաղաքի երիտասարդութիւնը հանդիսաւոր ճաշկերոյթով կամենում է պատուել մեր խումբը և խնդրում է ընդունել այդ հրաւէրը։ Հաճութեամբ ընդունելով հրաւէրը, մեր ամբողջ խմբով մասնակցեցինք ճաշկերոյթին, որ պարտաստուած էր քաղաքից դուրս, մի փոքրիկ ծառաստանում։ Ներկայ էին արժ. գործակալ վարդապետը, դպրոցի հոգաբարձութեան և ուսուցչական խմբի անդամներից ոմանք, հասարակութեան պատուաւոր և գործունեայ երիտասարդութիւնից շատերը և այլն։ Թէ այս և թէ այլ տեղեր այսպիսի հանգամանքներից հարկաւ օգուտ էինք քաղում և ներկայ եղողներին բացատրում մեր ճանապարհորդութեան նպատակը և սպասելիք օգուտները։

Երեկոյեան վերադառնալով մեր օթևանը, պատրաստուեցինք յաջորդ օրը շարունակելու մեր ուղին. և որովհետև մեր

գիտելու և նկարագրելու գործը վերջացրել էինք ու բոլորիս տրեխներն երկու շաբաթուայ ճանապարհորդութեան միջոցին բոլորովին մաշուել, քրքրուել էին, որոշեցինք ընդհատել ոտքով գնալը և Դիլիջան վերադառնալ փուրգոնով։

Առաւօտեան ժամի 7-ին կազմ՝ և պատրաստ շնորհակալութիւն յայտնեցինք դպրոցի բակում հաւաքուած հասարակութեան և զինուորական քայլով ճանապարհ ընկանք, որպէս զի քաղաքից դուրս փուրգոն նստենք. մեզ հետևում էր ահագին բազմութիւն՝ Վ.ի ճակի գործակալ վարդապետի և քաղաքի դեպուտատի առաջնորդութեամբ. երկու ոստիկաններ ճանապարհ էին բաց անում մեզ համար։ Վերջապէս քաղաքի ծայրին կանգ առնելով՝ նորից մեր խորին շնորհակալութիւնը յայտնեցինք հասարակութեանը՝ նկատելով որ մենք արժանի չենք այդչափ պատիւների. հայր գործակալը ներողութիւն էր խնդրում, որ աւելի լաւ չկարողացան հիւրասիրել, իսկ պարոն դեպուտատն ինձ մի կողմը քաշելով՝ ի զարմանս իմ՝ յայտնում է, որ յետ ստանամ «փուրգոնչուց» իմ տուած «ռեհը», որովհետև ինքն ամեն բան վերջացրել է նորա հետ և վճարել նորա պահանջած 16 ռուբլին։ Շնորհակալութիւն յայտնելով աշխատում էինք համոզել նորան, որ կարիք չկայ այդպէս անելու, քանի որ մենք չէինք դժուարանում այդ գումարը վճարել, սակայն պ. դեպուտատը պնդում էր, ասելով թէ դորանով ուզում են պատուել թէ մեր դպրանոցը և թէ մեր ձեռնարկութիւնը։ Ուրիշ ելք չկար. կրկին և կրկին մեր շնորհակալութիւնները յայտնելով՝ ամենքս զգացուած հրաժարական ողջոյն տուինք և հայր սուրբի օրհնութիւնն առնելով փուրգոն նստեցինք՝ տանելով մեզ հետ այդ զուտ հայկական քաղաքի զուտ հայկական հիւրասիրութեան անջինջ յիշատակը։

Ճանապարհին գիտեցինք Նորագուղի աւերակ եկեղեցիները, հետաքրքրական և ահագին տապանաքարերով ծածկուած հին գերեզմանատունն ու մատուռները, ապա Այրեվան կոչուած հնաշէն վանքը և անցնելով Փաշաքանդ, Քեսամամիդ, Օրդաքլու ծովեզրեայ գիւղերը՝ հասանք Ելենովկայ և գիշերեցինք փուրգոնների կայանների մէկում։ ոմանք փուրգոնի մէջ քնեցին, ոմանք տակը և ոմանք էլ տեղաւորեցան խոտի փափուկ դեզերի մէջ։ Միւս օրը կանուխ ճանապարհ ընկնելով՝ անցանք Ցամաքարերդ, Զիրուխլու,—տեղական քահանայի տանը թէյ

ընդունեցինք—Սեմէոնովկայ և վերջապէս յուլիսի 23-ին հասանք մեր կենդրոնատեղին, Դիլիջան, տասնուվեց օրուայ բացակայութիւնից յետոյ։

Այժմ արդէն մեր սաներն աղատ ասպարէզ և ժամանակ ունէին իրենց ստացած տպաւորութիւններն ամփոփելու և հայ գիւղացու բարոյական արժանաւորութեանց մասին մտածելու։ Տեղն է արդէն, որ մենք էլ պարզենք մեզ ցոյց տրուած այս հիւրասիրութեան հանգամանքը. հայ գիւղացին միշտ հիւրասէր է, այո՛, սակայն հե՞շտ է ասել քսան հոգի միանգամից հիւրասիրել յանպատրաստից։ Այս 16 օրեայ ճանապարհորդութեան ժամանակ մենք ման էինք գալիս Թիֆլիզի վիճակից դուրս, Երևանեան նահանգում և այդպիսով ո՛չ մի պաշտօնական թուղթ չունէինք այդ տեղերի վերաբերութեամբ։ Հանգամանքը հետևեալն է. Սեւան եղած միջոցին պատիւ ունեցանք ծանօթանալու Նոր-Բայազէթի գործակալ արժանապատիւ հայր Կիւրեղ վարդապետի հետ. այդ երիտասարդ և կրթուած հոգևորականն ի մօտոյ ծանօթանալով ճանապարհորդութեան նպատակի և հանգամանքների հետ, առաջարկեց մեզ ճանապարհորդել իւր վիճակում. սկզբում դժուարանում էինք ընդունել այդ առաջարկութիւնը, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ պաշտօնական թղթեր չունենալով կարող էինք դժուարութիւնների հանդիպել և առանց օթևանի մնալ. սակայն հայր սուրբն անկեղծօրէն խոստացաւ ամեն միջոց գործ դնել՝ մեզ դիւրութիւններ տալու համար և կատարեց աւելին քան խոստացել էր։ Պաշտօնական գործերով իւր վիճակը շրջելու դուրս եկած լինելով՝ նա մեզնից առաջ այցելում էր այն բոլոր տեղերն, ուր մենք պէտք է գնայինք. և այդպիսով այդ ուսումնասէր վարդապետին էինք պարտական, ուր որ գնում էինք, արդէն ամեն բան պատրաստ մեզ էին սպասում։ Հայր սուրբի կարգադրութեամբ մեզ միշտ ուղեկցում՝ և առաջնորդում էին քահանաները. մեկ քահանան առաջնորդութիւնը միւսին յանձնելուց յետոյ միայն հեռանում էր մեզանից. մեզ համար շատ նպաստաւոր էր այդ հանգամանքը, որովհետև գիւղերում քահանաներն են ամենաինտելիգենտ մարդիկը և գիւղացիներից աւելի տեղեկութիւններ ունին իրենց մօտ գտնուած հնութեանց մասին։ Նոր-Բայազէթ քաղաքի հիւրընկալութեան նախաձեռնողը նոյնպէս հայր Կիւրեղն էր. այսպիսով մի երիտասարդ և բանիբուն հոգևորականի կամաւոր և գիտակցական ա-

ջակցութիւնը մեր գործին աւելի նպաստեց, քան պաշտօնական թղթերը։

Մէկ ամսաշափ[1] Դիլիջանում զբաղուելով մեր 16 օրեայ ճանապարհորդութեան տպաւորութիւնները գրի անցնելով և ժողովածուները կարգի բերելով՝ օգոստոսի վերջերին ուղևորուեցինք դէպի Գոշ-Մխիթար վարդապետի վանքը. այս ուղևորութիւնը տևեց երեք օր. մեզ առաջնորդում էր Գոշի քահանան. վանքը և փոքրիկ գիւղն այժմ գլխաւոր ճանապարհներից դուրս գտնուելով՝ ժողովուրդը վերին աստիճանի անկիրթ է մնացել, այնպէս որ մեր զինուորական քայլով և երաժշտութեամբ գիւղ մտնելը շատերին սարսափի մէջ ձգեց. կանայք թաքնվում էին. սակայն երբ քահանայի յորդորմամբ այդ երեկոյեան և յաջորդ օրն եկեղեցի եկան և տեսան մեր սաների ժամասացութիւնը և պատարագի ժամանակ դպրութիւնը՝ այլ ևս վերջ չկար կանանց բերած «խոնչաներին». այնչափ պանիր, մածուն, թարմ իւղ, ձու բերին, որ կիսով չափ մնաց։

Մեր օթևանն էր վանքի ընդարձակ գաւիթը, որի յատակը խոտի թանձր շերտերով ծածկել տալով՝ երկու գիշեր պառկեցինք վերան։ Գոշավանքի մանրամասն դիտողութիւնն ևս վերջացնելով վերադարձանք Դիլիջան և մի շաբաթից յետոյ դարձեալ մի փոքրիկ ուղևորութիւն արինք դէպի Ջուխտակ կոչուած վանքերն և Պողոս Բիլիսայ գիւղը, որ երկու օր տևեց. գիշերեցինք Պողոս Բիլիսայում պ.պ. Անանեանների տանը, վայելեցինք գոցա պատրաստած ընթրիքը, միւս օրը ճաշին հիւրասիրուեցանք տեղական քահանայից և թեթև անձրևից մի փոքր թրջուելով՝ դարձանք Դիլիջան։

Այդ ճանապարհորդութիւնից վերադառնալով՝ շուտով պատրաստուեցինք Թիֆլիս գալու և սեպտեմբերի 8-ին մեր հրաժեշտի ողջոյնը տալով Դիլիջանին՝ 9-ին մտանք մեր alma mater-ի բակն ուրախ երգեր հնչեցնելով և փառք տալով Աստծուն, որ այսպիսի մի վտանգաւոր տարի բոլորս ողջ և առողջ վերադարձանք։ Մեր սաները վերջին պատուէրս ընդունելով իրենց պարապման առթիւ՝ ցրուեցին ուրախ տրամադրութեամբ, «կեցցէ Ներսիսեան

[1] Այս ժամանակամիջոցում մի օրեայ ուղևորութիւն արինք դէպի Փոքր Դիլի և Դիլիջանի ծխատէր քահանայի հիւրասիրութիւնը վայելեցինք։

դպրոցը», «կեցցէ մեր հոգարարձութիւնը», «կեցցէ հայ ժողովուրդը» գոչելով։

Ահա՛ այս է Ներսիսեան դպրանոցի սաների երկրորդ դպրոցական ճանապարհորդութեան համառօտ ծրագիրը կամ՝ աւելի լաւ է ասել կմախքը. ընդարձակ և մանրամասն նկարագիրն արել է մեր սաներից իւրաքանչիւրը։ Վանքերի նկարագիրը յոյս ունինք ժամանակով նոյնպէս հրատարակելու։

Այս ճանապարհորդութեան միջոցին այցելել ենք մօտ քառասուն գիւղ, դիտել ու մանրամասն նկարագրել ենք մօտ երեսուն և հինգ կանգուն և աւերակ տաճար. սակայն այս չէ մեր բոլոր գործը. մենք ունինք մօտ երկու հարիւր տեսակ բոյսերի ժողովածու՝ տեղական անուններով, երեք հարիւր կտոր հանքային և հասարակ քարի տեսակներ, փոքրիկ ժողովածու կենդանիների, վաթսուն հատ վանքերի և մատուռների նկարներ. մեր ճանապարհորդութեան քարտէզներ, ժողովրդական բառերի, ոճերի, դարձուածների ու երգերի հաւաքածու. ջերմաչափի և բարձրութիւններ որոշող խտաչափի դիտողութիւններ, աշակերտական բանախօսութիւններ և ընդարձակ գրաւոր շարադրութիւններ։

Ճանապարհորդութեանը մասնակցողներից ոչ ոք անգործ չէր. ամենքս աշխատել ենք եռանդով և սիրով. ո՛չ մի հրաման, ո՛չ մի ստիպմունք չէր կարող այդչափ գործ արդիւնաւորել. միայն դէպի գործն ունեցած սէրն ու ոգևորութիւնն է, որ անըզդալն է դարձնում յարատև աշխատութիւնը. եթէ մեր սաներն ոգևորուած չլինէին դպրոցական ճանապարհորդութեան գաղափարով և գործով՝ այսպիսի մի վտանգաւոր տարի՝ հեռու իրենց ծնողներից ու ազգականներից, շրջապատուած երկիւղով՝ չէին կարող այդ արդիւնքը տալ երեք ամսուայ չափ կարճ ժամանակամիջոցում, որի երրորդ մասն էլ ճանապարհին ենք անցկացրել։ Այն աշակերտը, որ ամբողջ տարին հազիւ երկու տետրակ շարադրութիւն էր գրել, այդ կարճ ժամանակամիջոցում՝ 20—30 տետրակ է գրել. այն աշակերտը, որ տարուայ ընթացքում՝ հազիւ 2—3 նկար էր վերջացրել, այժմ՝ երկու ամսուայ ընթացքում՝ 20-ից աւելի նկար է պատրաստել։ Ճանապարհորդութեանը մասնակցող աշակերտներից ոչ մէկն ուսման ընթացքում բանախօսութիւն չէր արել, իսկ մենք ունեցանք տասից աւելի բանախօսութիւններ. այն աշակերտները, որ ուսման ըն-

թացքում հազիւ մի քանի բոյսերի արուեստական ձևերն էին տեսել, այժմ ծանօթացան երկու հարիւր բոյսերի հետ և սովորեցին դոցա անունները։ Աշակերտներից շատերը, որ իրենց ծնընդավայրից չէին դուրս եկել՝ տեսան իրենց հայրենի երկրի լեռներն և ջրերը, անտառներն ու դաշտերը. հիացան իրենց Նախահայրերի թողած ձեռակերտներով, տեսան ու շօշափեցին այն պատմական վայրերն ու շէնքերը, որոնք պատմութեան ու աշխարհագրութեան դասերի ժամանակ իբրև ստուերներ էին անցել նոցա գիտակցութեան միջով։

Այն աշակերտները, որ մի կամ երկու տարուց յետոյ պէտք է աւարտեն իրենց ուսման ընթացքը, պարզ գաղափար չունէին իրենց ապագայ գործունէութեան տեղի ու շրջանի մասին, այժմ անձամբ շրջելով այդ վայրերում, անձամբ ծանօթանալով գիւղական դասակարգի պէտքերի, կարիքների ու պահանջների հետ, կարող են առաջուց փոքր առ փոքր կազմել իրենց գործունէութեան ծրագիրը՝ թէ իբրև քահանայ և թէ իբրև ուսուցիչ։

Ահա՛ այս բոլորն ինքնաբերաբար սէր զարթեցրին մեր սաների մէջ դէպի դպրոցական ճանապարհորդութեան գաղափարը, ոգևորեցին նոցա անկեղծ սրտերը և նոքա դարձան անխոնջ ու աշխատասէր։

Այդ անխոնջ աշխատասիրութեան երկրորդ պատճառն էլ հետևեալն էր. հէնց ճանապարհորդութեան սկզբում աշխատեցի աւելի մօտ ծանօթանալ սաներիս անհատականութեան հետ—դոցանից մի մասը միայն երկրորդ անգամն էր ճանապարհորդում մեզ հետ—և տեսնել թէ ո՞վ ինչպիսի ձգտումներ և ընդունակութիւններ ունի և ամեն կերպ աշխատում էի իւրաքանչիւրին յանձնել այնպիսի աշխատութիւն, որ համապատասխանէ նորա ընդունակութեանը. օրինակ աշակերտներից մի երկուսը սիրում էին նկարել և ընդունակութիւն ունէին այդ արուեստով զբաղուելու, հարկաւ ամեն կերպ նպաստում և մինչև իսկ պահանջում էի, որ դոքա նկարչութեամբ զբաղուեն և կատարելագործեն իրենց արուեստը. այլ ոմանք աւելի հմուտ էին հայոց լեզուին և պատմութեան, դոցա տալիս էի այնպիսի նիւթեր մշակելու—հետներս գրադարան ունէինք—որոնք կապ ունէին մեր ճանապարհորդութեան հետ. մի երրորդի մէջ նկատելով առանձին սէր դէպի բնութիւնն ու բոյսերը, պատուիրում էի զբաղուել ծաղիկներ հաւաքելով և այլն։ Այսպիսով իւրաքանչիւրին առիթ

տալով և նպաստելով իւր սիրածով զբաղուելու, գործն ևս սիրելի էր դառնում դոցա համար և անձանձրոյթ։ Հարկաւ դոցա մէջ կային և այնպիսիները, որ թէև ընդունակ, սակայն աշխատութեան անսովոր էին. սկզբում դոքա ծուլանում էին, բայց անընդհատ հսկողութիւնը դոցա ևս վարժեցրեց աշխատասիրութեան. դոքա նկատելով որ իրենց ծուլութեամբ աչքի են ընկնում ամբողջութեան մէջ, աշխատեցին իրենց ջանքերը կրկնապատկել և ընկերներից յետ չմնալ։

Մեր դպրոցներն ընդհանուր կրթութիւն տալով բոլոր սաներին, պէտք է ձգտեն նաև նոցա անհատական ընդունակութիւնները զարգացնելու։

Մենք աշխատում և ամեն առիթից օգուտ էինք քաղում աշակերտներին կարգապահութեան վարժեցնել, որին շատերն անսովոր էին. ընկերական կեանք վարելու համար կարևոր է դիսցիպլինան, իսկ ճանապարհորդութեան ժամանակ մինչև անգամ խիստ դիսցիպլինան անհրաժեշտ է. ով փորձել է շարաթներով ճանապարհորդել նոյն իսկ մի քանի ընկերների հետ, նա գիտէ, որ եթէ որոշ կարգ ու կանոնով չշարժուին և իւրաքանչիւրի ցանկութիւնը տարբեր լինի, այդ ճանապարհորդութիւնը չի կարող իւր նպատակին հասնել. ահա՛ այդ և ուրիշ տեսակէտներից մեր խմբի մէջ պահպանվում էր խիստ դիսցիպլինայ։ Աշակերտների հետ վարվում էինք մտերմաբար, նոցա հետ ի միասին իրրև ընկեր տանում էինք երկար ճանապարհորդութեան նեղութիւնները, սակայն միևնոյն ժամանակ պահանջում էինք կարգապահութիւն և վստահ կարող ենք ասել, որ եթէ այդ կարգապահութիւնը չլինէր, մենք այն յարգանքի ու հիւրասիրութեան կէսն անգամ չէինք վայելի, ինչ որ ցոյց տուեց մեզ հայ ժողովուրդը։ Հայ գիւղացին, մանաւանդ, եթէ նկատեց որ լաւ չեն վերաբերվում իրեն, արհամարհում են, յարգանքով չեն վերաբերվում դէպի եկեղեցին և նորա սպասաւորներին, բարև անգամ չեն տալ, ուր մնաց թէ պատիւ. այդ կարգապահութեան շնորհիւ ո՛չ ճանապարհորդութեան ժամանակ և ոչ Դիլիջանում՝ անզգուշութիւնից առաջացած ո՛չ մի վնաս չեղաւ։ Հարկաւ 22 աշակերտների մէջ կը լինէին և այնպիսիները, որոնք բոլորովին սովոր չլինելով կարգապահութեան՝ դժուարանում էին ընտելանալ այդ խիստ դիսցիպլինային, սակայն հետզհետէ դոքա ևս հասկանալով, որ ամբողջ ընկերութեան օգուտը պահանջում է այդպէս

լինել, ընտելացան—բացի մէկից, որ չկարողացաւ պատժից ազատուել և վերջին երկու շաբաթն ուղարկուեցաւ Հայրենիք։— Կրկնում եմ, որ եթէ ընդհանուր կարգապահութիւն չլինէր, մեր ճանապարհորդութիւնը յաջողութիւն չէր կարող ունենալ։

Մեր ամենամեծ ուշադրութիւնը դարձրել էինք սաների բարոյական դաստիարակութեան վերայ. բարոյական պակասութիւնները նկատողութեան էին ենթարկվում թէ առանձին և թէ ընդհանուրի ներկայութեամբ. աշխատասիրութիւն, երախտագիտութիւն, ընկերասիրութիւն, յարգանք դէպի հասակաւորը, սիրել ծնողներին. մայրենի աշխարհն ու լեզուն, լինել երկիւղած Աստուծոյ և մարդկանց առաջ. ահա՛ այն բարոյական սկզբունքները, որի համեմատ պէտք է նոքա պահէին իրենց. նոքա պէտք է իրենց օրինակելի պահէին գիւղական անկիրթ հասարակութեան առաջ, որպէս զի ուսումը գիւղացու աչքում աւելի նշանակութիւն ունենար. այդ էր և շատ պատճառներից մէկը, որ ուր գնում էինք, անպատճառ մտնում էինք տեղական եկեղեցին, համբուրում՝ և ժամերգութեանը մասնակցում՝ գիւղացուն ցոյց տալու համար որ սխալ է այն կարծիքը՝ թէ ուսում առնողն արհամարհում է եկեղեցին։ Նոյն իսկ Դիլիջանում մեր խումբն ընդ առաջ էր գնում, երբ Հաղարծնից և Սևանից ս. մասունքներն էին բերում. մեր խումբն էր նոյնպէս թափորով այդ ս. մասունքները կրկին ճանապարհ ձգում։ Կիւրակէ և տօն օրերին Դիլիջանի եկեղեցին լի էր լինում բազմութեամբ և այդ իրողութեան քիչ չէին նպաստում մեր երգեցիկ խմբի մասնակցութիւնը պատարագին։

Աշխատում էինք նոյնպէս աշակերտների մէջ վառ պահել կրօնական զգացմունքը. եկեղեցական տօներին հանդիսաւոր պատարագ և գրական առաւօտ կամ երեկոյ էր լինում։ օրինակ ս. Էջմիածնայ տօնի օրը հանդիսաւոր պատարագից յետոյ՝ աշակերտներից մէկը բանախօսութիւն արաւ ս. Էջմիածնայ պատմութեան և նշանակութեան մասին. ս. Սահակ-Մեսրոպի տօնին նոյնպէս ս. պատարագից յետոյ մի այլ աշակերտ նկարագրեց այդ սուրբ անձանց գործունէութիւնն ու նշանակութիւնը մեր եկեղեցւոյ և գրականութեան վերաբերմամբ։ Նոյնպէս հոգեհանգիստներ կատարուեցան Վիճակիս թեմական առաջնորդ ի Տէր հանգուցեալ Մամբրէ սրբազանի և Ատրպատականի առաջնորդ Ստեփաննոս եպիսկոպոսի համար։ Բանաստեղծ Գամառ-Քահի-

պայի հոգեհանդիսան եւս կատարուեց. աշակերտներից մէկը կարդաց գրաւոր ճառ՝ հանգուցեալի կեանքի և գրական գործունէութեան մասին, երկուսն էլ կարդացին իրենց շարադրած ոտանաւորները։

Այս բոլորն անհետեւանք չէր կարող անցնել մեր սաների զգացմանց կրթութեան համար. նոցանից ամեն մէկը զգում էր, որ այդպէս պէտք է լինի. երախտագիտութեան զգացմունքը պահանջում է մի վերջին յարգանք աշխատաւոր հանգուցեալների աճիւնին։

Դասախօսութիւնների ժամանակ բոլորին թոյլ էր տրվում իրենց նկատողութիւններն անել և այդպիսով աշակերտները վարժվում էին ուշադրութեամբ լսել, մտածել և իրենց գիտեցածն էլ բացարձակ յայտնել։ Դասախօսութեանց համար նիւթ էր ընտրվում նոյնպէս մեր ճանապարհորդութեան շրջանից. այդպիսով նոքա վարժվում էին լուրջ գրաւոր աշխատութեան, ուսումնասիրում էին նիւթին վերաբերեալ գրքերը, թերթում էին հին մատենագրութիւնը և օգտվում ըստ կարելոյն. ահա՛ այդ եղանակով դասախօսութիւններ տեղի ունեցան Սեւանայ լճի, Գոշ Մխիթար վարդապետի և Գետիկ վանքի մասին, խաչարձանների նշանակութեան մասին, Ներսէս Շնորհալու մասին եւայլն։ Իսկ վերջին գրականական երեկոյթի նիւթն էր մեր դպրոցական ճանապարհորդութեան նշանակութիւնն ու օգուտը, որ սաներից իւրաքանչիւրը բացատրեց իւր տեսակէտից՝ հիմնուելով երկու տարուայ փորձի վերայ. այդ երեկոն մի տեսակ քննութիւն էր մեր խմբի երեք ամսուայ գործունէութեան և հետեւանքից գոհ մնացինք։ Մեր սաների անպաճոյճ խօսքերով արտայայտուած զգացմունքներն ամենամեծ բարոյական վարձատրութիւնն էր մեզ համար։

Այդ դասախօսութիւնները վարժեցրին աշակերտներին լրջօրէն դիտել այն ամենը, ինչ որ տեսնում և նկարագրում էինք ճանապարհորդութեան ժամանակ. նոքա հետզհետէ սկսեցին առանց մեր օգնութեան համեմատել կարդացած արձանագրութիւնները Սարգիս եպիսկոպոս Զալալեանի կարդացածի հետ և նորա սխալները նշանակել. նոքա նոյնպէս գտան այն սխալ նկարները, որ գրուած են Հայր Սլիշանի «Այրարատի» մէջ։

Մենք բերկրութեամբ յիշում ենք այն րոպէն, երբ Կեչառուս վանքում մեր սաներից մի խումբ ամեն կերպ աշխատում

և չարչարվում էր կարդալ Խաչիկ վարդապետի սիրուն գամբարանի երկար արձանագրութիւնը, որի մասին հայր Ալիշանն ասում է «Այրարատի» մէջ՝ թէ անկարելի է կարդալ եղծուած լինելու պատճառով. սակայն աշխատանքը յաղթում է ամեն արգելքի. երկու ժամ բաւականին անյարմար դրութեամբ աշխատելուց, քարով, փայտով ու փալասներով մաքրելուց յետոյ սաների այդ խումբն ուրախութեան աղաղակներով և յաղթանակը տարած զինուորների նման բերին ինձ այդ արձանագրութեան ամբողջ պարունակութիւնը.

Ամեն կերպ աշխատում էինք, որ մեր պարապմունքը միակողմանի և տաղտկալի չլինի, որ աշակերտները գործ անեն, բայց միևնոյն ժամանակ հոգեկան զուարճութիւն ունենան և զգան. Մեր մեթոդը շատ պարզ էր. որքան կարելի է քիչ խօսք և անձնական օրինակ գործով. Օրինակի համար՝ պէտք է երկու շարաթ ոտքով մեն գալ. աշակերտներից ոմանք անսովոր լինելով այդ բանին՝ սկզբում դժգոհութիւն են յայտնում, սակայն երբ տեսնում են որ ինքս անձամբ շարունակ ոտքով եմ գնում իրենց առաջին, այլ ևս չեն տրտնջում և շուտով ընտելանում են ոտքով գնալուն—այդպիսով նոքա սովորում են համբերութեան և փոքր ինչ նեղութեան դիմանալ. պատահել են դէպքեր, որ ստիպուած լինելով ամբողջ օրը ճանապարհորդել՝ վերին աստիճանի յոգնել ենք, սակայն աշակերտներից ոչ մէկը մի ակնարկ անգամ չէ արել՝ նստելու մեր ետևից եկող բեռան ձիու վերայ.—մեր խոհարար Զուրաբն էր միայն, որ օգուտ էր քաղում այդ հանգամանքից և այդ պատճառով շատ անգամ գիւղացիները նորան էին համարում մեր խմբի գլխաւորը, տեսուչը.—Պէտք էր լինում երկար ճանապարհ գնալուց յետոյ կանգնել մի աւերակ վանքի պարսպի տակ և արևի այրող ճառագայթների ներքոյ կարդալ արձանագրութիւնները—հարկաւ սաները կարող էին դժգոհութիւն յայտնել, եթէ ամենից առաջ մենք չլինէինք կանգնած. ճանապարհորդութեան ժամանակ գլխի մազերը խնամելու և մաքուր պահելու ոչ ժամանակ կայ և ոչ էլ միջոց, ուստի կարգադրում ենք, որ սափրիչն ածիլէ բոլորի գլուխները. բայց ահա՛ աշակերտներից մի քանիսը քնքոյշ մեծացած լինելով՝ չեն կամենում «տգեղանալ». առանց մի խօսք ասելու նստում ենք սափրիչի առաջ և նորա ածելիի ոյժն ամենից առաջ մեր գլխի վերայ փորձում և ահա՛ ծիծաղելով ամենքն առանց

մի խօսք անգամ ասելու ածիլվում են։ Նոր արշաւանքներից առաջ պէտք է մեր նախորդ արշաւանքին վերաբերեալ բոլոր գործը վերջացած լինէր. հարկաւոր է անընդհատ աշխատել. այս բանը կարծես սկզբում ծանր է թւում նոցա, բայց երբ մենք կարմիր մատիտը ձեռներիս ամբողջ օրը սրբագրում ենք նոցա գրածները, նոքա ևս սիրով են անում այդ աշխատանքը ևայլն ևայլն։

Եւ ահա՛ այդպէս բոլոր նոցա ուրախութիւններին ու նեղութիւններին, աշխատանքին ու հանգստութեան մասնակից լինելով՝ կարողացանք դպրոցական ճանապարհորդութեան գաղափարը սիրելի դարձնել մեր սաներին. այո՛, եթէ այդ գործը սիրելի չլինէր նոցա, ո՛չ մի հրաման չէր ստիպիլ նոցա անել այն, ինչ որ արին ինքնաբերաբար։

Սակայն մեր դպրոցական ճանապարհորդութեան գաղափարը ո՛չ միայն սիրելի դարձաւ մեր խմբին, այլ հայ ժողովրդի ամեն դասակարգերի համակրութեան արժանացաւ. թէ ճանապարհորդութեան և թէ Դիլիջան եղած ժամանակ շատերն են հետաքրքրուել մեր գործով, եկել տեսել են մեր սաների ժողովածուներն ու նկարները և գոհ սրտով հեռացել՝ գովելով Ներսիսեան դպրանոցի նախաձեռնութիւնը։

Վերադարձին այս բոլորի մասին անձամբ զեկուցում կարդալով հոգաբարձական ժողովում՝ հետևեալ առաջարկութիւններն արի հոգաբարձութեան.

1) Պէտք է հիմք դնել մի դպրոցական թանգարանի, բայց որովհետև դպրոցիս այժմեան շէնքի մէջ այդ բանին յատկացնելու ազատ սենեակ չկայ՝ պէտք է գնել մի երկրորդ յարմարաւոր պահարան՝ մեր ժողովածուներն ու իրեղէնները տեղաւորելու համար։

2) Որպէս զի նկարները չփչանան, պէտք է կպցնել տալ հաստ թղթի վերայ և կազմել տալ։

3) Տպագրել տալ առաջին և երկրորդ դպրոցական ճանապարհորդութեան նկարագիրը պատկերներով միասին։

4) Եօթ աշակերտի մրցանակ տալ. Ապրեսեանին — որ մեծ խնամքով ժողովել ու կարգի է դրել բոյսերն ու հանքերը — մի ճնշիչ մեքենայ—պրէս—բոյսերի համար. Նալբանդեանին ու Սե-

թեանին—որ մեծ ջանասիրութեամբ ընդարձակ նկարագրել են մեր ճանապարհորդութիւնը—մի-մի հատ հայր Ալիշանի «Շիրակ» փառակազմ: Պապովեանին—որ մեծ սիրով և ջերմեռանդութեամբ սպասաւորում էր մեր այցելած սրբազան վայրերում—մի ժամաշապիկ. Օքրոյեանին, Մանաջանեանին և Շուբաշեանին—որ հլմնութեամբ և համբերութեամբ նկարել են մեր տեսած վանքերն ու տաճարները—նկարչական պարագաներ՝ ուսուցիչ (նկարչութեան) պ. Շամշինեանի ընտրութեամբ։

5) Հոգաբարձութեան կողմից պաշտօնապէս շնորհակալութիւն յայտնել՝ Նոր-Բայազէթի վիճակի գործակալ արժ. Կիւրեղ վարդապետին և Ղալախու գործակալ Տէր-Յակոբ քահանային՝ այն աջակցութեան համար, որ նոքա ցոյց տուին մեզ ճանապարհորդելու ժամանակ և դոցա միջոցով նոյնը յայտնել դոցա ստորադրեալ հոգևորականներին, ուսուցիչներին և գիւղական համայնքներին։ Այդ առաջարկութեանց ընդունելու մասին տեղեկութիւն ստացայ հետևեալ պաշտօնական գրութիւնից.

Հոգաբարձութիւն Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի.
№ 1161.

Ո—սո—ցչի դպրոցի պ. Իսահակայ Յարո—Ղէ—ոնց

Ի հոգաբարձութեանս լուան զզեկուցումն, Դուք առաջի արարիք Սմին զտեղեկագիր, գրեալ ի վերայ 20 քառածալ թերթից, վասն երկրորդ դպրոցական ճանապարհորդութեան յամառնային ամիսս, սկսեալ ի 10 յունիսի ց10 սեպտ. տարւոյս ի վանօրայս Ղալախու վիճակի, շուրջ զլճաւ Սևանայ, զնոր Բայազէթ, ևս և ի վանօրէս Մաղկոցաձորոյ մինչև ցԲՇնի, կենդրոնատեղի ունելով զաւանն Դիլիջան, այլև զկազմեալ ի ժամ ուղևորութեանն, զՀաւաքածուս հանքային քարանց, բուսոց, միջատաց և սողնոց և զկատարեալ ի ձեռն աշակերտաց, նկարուց հնութեանց և զգրաւոր աշխատութիւնս պարապմանց նոցա և բերանացի բացատրեցիք մի առ մի զնշանակութիւնս նոցին և ըստ առաջարկութեան Սորին ընթերցայք զտեղեկագիրն ծայրէ ի ծայր, յորմէ երևեցաւ պարապմունք աշակերտացն մանրամասն հանգամանօք։ Այնուհետև առաջարկեցիք տալ մրցանակս յառաջադէմ աշակերտացն և առնել զշնորհակալութիւն Արժանապատիւ Կիւ-

բեղ վարդապետին և բարեկրօն Ցակովբ քահանային վասն աջակցութեան և հիւրընկալութեան նոցա։

Կարգաւորեցին։

Հաճ և հաւան գտանելով տեղեկագրոյն, բացատրութեանն և զբաղմանց Ձերոց ընդ աշակերտսն, առնել Ձեզ զգրաւոր շնորհակալութիւն։ Կատարել զառաջարկութիւնս Ձեր, տալ մրցանակս յառաջադէմ աշակերտացն, արժողութեամբ իւրաքանչիւրն ո՛չ աւելի քան ութն ռուբլոյ. Ապրիսեանցին՝ զմի ճնշիչ մեքենայ (պրէս). Նալբանդեանցին և Սեթեանցին՝ զմի մի օրինակ Շիրակ Հայր Ալիշանի, փառակազմ. Օքրոյեանցին, Մամաջանեանցին և Շուբաշեանցին՝ ընկարշական պարագայս, ըստ ընտրութեան ուսուցչի Դպրոցիս պ. Շամշինեանցի. Պապովեանցին՝ զմի ժամաշապիկ։ Գնել զմի պահարան վասն ժողովածուին և իրեղինացն ըստ ընտրութեան Անդամոյ Սորին պ. Թամամշեանցի և Ձեր։ Վասն նկարուց շինել զկազմն ի ստուար թղթոյ (կարդօն)։ Առնել զպաշտօնական գրաւոր շնորհակալութիւն ի դիմաց հոգաբարձութեանս պ. Շամշինեանցին վասն յառաջադիմութեան աշակերտաց նորա յարհեստի նկարչութեան։ Արժանապատիւ Կիւրեղ վարդապետին և բարեկրօն Ցակովբ քահանային վասն աջակցութեան և հիւրընկալութեան նոցա, խնդրելով ի նոցանէ յայտնելոյ զգոհութիւն հոգաբարձութեանս տանուտեարց, քահանայից և հասարակութեան, որք հիւրասիրութեամբ իւրեանց նպաստեալ են յաջողութեան ճանապարհորդութեանն։ Տալ զառանձին զեկուցումն վասն տպագրելոյ զնկարագիրս ճանապարհորդութեան հանդերձ պատկերօքն։

(Ստորագրութիւնք հերթական հոգաբարձուի և գործավարի)։



Բ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ

91 օրուայ ընթացքում ծախք եղել է ընդամենը 1320 մանէթ 93 կոպ., որից գնուել են գլխարկներ՝ 11 մանէթ 90 կ., տրեխներ՝ 27 մանէթ, իրեղէններ և ուսումնական պարագայք՝ 174 մանէթ 50 կոպ., զանազան պիտոյքներ և մանր ծախքեր (լուացարարի, կարկատանի, սապոն etc)՝ 138 մանէթ 10 կոպ., սնունդ՝ 642 մանէթ 45 կոպ., ուղեցոյցին 50 մանէթ, խոհարարին՝ 45 մանէթ, ծառաներին՝ 60 մանէթ։ Զուտ սնունդի վերայ ծախսուել է 642 մանէթ 45 կոպ., որ բաժանելով 91 օրուայ վերայ կըստանանք միջին թուով օրական ծախս 7 մանէթ 6 կոպ. որև բաժանելով 28 անհատի վերայ, միջին թուով ամեն մէկին օրական կ'ընկնի 25 կոպ.։ Իսկ ամբողջ գումարը բաժանելով բոլորի վերայ՝ իւրաքանչիւրին ընկնում է օրական ծախք՝ 52 կոպէկ։

ԻՍԱՀԱԿ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ.

ՊՕՂՈՍ ԱՒԱԳԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Եօթն կամ ութը տարի սորանից առաջ Բեսսարաբիոյ Հնչեշտ գիւղաքաղաքում վախճանեցաւ մի շատ զառամեալ ծերունի՝ 90 տարիքը բոլորած տիրացու Պօղոս Աւագեանը։ Նա պատկանում էր այն հաղուագիւտ հայ դերդաստաններից մէկին, որոնք XVIII դարու սկզբում գաղթելով Հայաստանից Բալկանեան թերակղզին և այնտեղից անցնելով Բեսսարաբիա, պահպանել էին ընտանիքում մայրենի լեզուի գործածութիւնը, կրթում ու դաստիարակում էին իրենց զաւակներին հայկական ոգւով և համաձայն հին նահապետական սովորութիւններին։ Շատ չար ու բարին անցել է ծերունու գլխից, շատ բաներին նա ականատես է եղած, շատն էլ լսել է իւր հօր բերանից։ Եւ ահա մի օր 1879 թուականին, արդէն 75-ամեայ հասակում, նորա մէջ միտք է յղանում գրի անցնել իւր գիտեցած ու լսածը և գրում է մի յիշատակարան, ուր անպաճոյճ լեզուաւ ասանդում է իւր պապի Աւագի գաղթելու շարժառիթը Պայազիտ քաղաքից դէպի Հարաւային-արևմտեան Ռուսիա։

Մեզանում ընդհանուր կարծիք է տարածուած, որ իբր թէ Բեսսարաբիոյ և Քերսոնի նահանգի Հայերը Անի քաղաքից են եկել. Բագրատունեաց մայրաքաղաքի երկրորդ առումից յետոյ 1239 թ. Զարմա-խանը բազմաթիւ գերիներ էր դուրս բերել այնտեղից և քշել դէպի Սարայ Վոլգա գետի ափերը. հետևեալ դարում Թաթարներից կրած հալածանաց շնորհիւ Հայերը զինու զօրութեամբ ճանապարհ են բացում իրենց համար հարաւային Ռուսիայի նահանգների վրայով և ճենովայեաց հաճութեամբ գալիս հաստատվում են Ղրիմում: Բայց XV դարում՝ Հայերի հարթած ճանապարհը առաջնորդում է նոցա հալածիչ Թաթարներին դէպի Տաւրիկեան թերակղզին, որին շուտով տիրում են Օսմանեան Տաճիկների օգնութեամբ: Այսպէս Ղրիմից էլ արտաքսած Հայերի մեծ բազմութիւնը դիմում է դէպի Հիւսիս, անցնում է հարաւային Ռուսիան, տարածվում է Մոլդաւիայում, Վալաքիայում, Պոդոլիայում, գնում է Գալիցիա, Տրանսիլվանիա, Լեհաստան: Այնուհետև, երբ XVII դարում Գալիցիայում դաւաճան Նիկոլ Թորոսովիչը սկսում է իւր հալածանքը կրօնի դաւանութեան դէմ, զգուած Հայերից շատերը կրկին խոյս են տալիս հարաւ Բեսսարաբիա և Բալկանեան թերակղզի, ուր տակաւին IX և X դարերից ապրում էին մեր ազգայինք: Վերջիններս, ինչպէս յայտնի է պատմութիւնից, դաղթած էին այստեղ Բիւզանդական կայսրների հրամանաւ տերութեան սահմանները պաշտպանելու համար Բուլղարայ դէմ: Այն ինչ Շահ-Աբասների և Նադիր-Շահերի վայրենի հրոսակների կատարած անզթութիւնների շնորհիւ խեղճ Հայաստանը անդադար նորանոր գաղթականներ է վիժում դէպի այս կողմերը: Ահա պ. Սուազեանի յիշատակարանը պատմում է մեզ այդ գաղթականների մի երկու ընտանիքի պատմութիւնը նոցա թափառական կեանքի միջոցին: Ծանօթանալով յիշատակա-

բանի բովանդակութեանը, ընթերցողը կարող է հասկանալ, թէ միւս դաղթականները առ հասարակ ի՞նչպիսի զրկանք ու տառապանք են քաշել յառաջ քան հասնելն այս կողմերը։ Դարձեալ նոյն յիշատակարանից, որ շուտով նմանում է մի ընտանեկան քրոնիկոնի, երևում է, որ Բեսսարաբիոյ և Քերսոնի նահանգի Հայերը բոլորն էլ ա-նեցի չեն. նոցա մէջ կան դաղթականներ, որոնք եկած են Հայաստանի զանազան կողմերից, ինչպէս վկայում են Գրի-գորիպոլ քաղաքի Հայոց երկու եկեղեցիների բակերում գտեղուած գերեզմանաքարերի արձանագրութիւնները։ Պարտք ենք համարում նկատել, որ պ. Աւագեանի յիշա-տակարանի լեզուն ու ոճերը անփոփոխ պահպանելով, մենք ուղղեցինք միայն տառասխալները և տեղ-տեղ աւել-լացրինք քանի մի պատմական և աշխարհագրական ծա-նօթութիւններ, որոնք անհրաժեշտ էին բնագիրը լուսաբա-նելու համար։ Յիշատակարանիս մէջ ընթերցողը կըգտնէ քանի մի նշանաւոր անձինք և զորձիչներ, որոնք յայտնի են մեր պատմութեան մէջ իրենց մեծագործութեամբ։ Ծերունի պ. Աւագեանի դրուածքը մենք լրացրինք նորա որդի Մկրտիչ Աւագեանի յիշատակարանից։ Վերջինս թէ իւր և թէ իւր ծնողի յիշատակարանները ուղարկեց մեզ Գրիգորիպոլի աւագ քահ. Հ. Դաւիթ Շահինեանցի միջ-նորդութեամբ, տալով մեզ կատարեալ իրաւունք օգտուել դոցանից, ինչպէս և կամենայինք։

Մենք արժան համարեցինք առ այժմ լոյս ընծայել Ծերունի Պօղոսի ամբողջ յիշատակարանը, յաւելով դո-բան Մկրտչի յիշատակարանի երկրորդ կէսը։ Առաջին մասն կարող է նիւթ լինել մի առանձին յօդուածի, որ սա-կայն կարօտ է լուրջ մշակութեան։

ՊՕՂՈՍ ԱԻԱԳԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ[1]

Յամի 1720 թուականէն մինչև 1746 թ. Պարսից ձեռքը մնացած Հայաստանի վիճակը շատ դառն էր. ամենայն մէկ տէրութիւն կաշխատէր խլել զխեղճ Հայաստանը նոցա ձեռքէն ոտնակոխ անելով բոլոր բնակիչներին, սպառելով նոցա տունը, տեղը և ամենայն ստացուածքը։ Այն ժամանակը Պարսկաստանումն ալ մեծ խռովութիւններ կային թագաւորութեան աթոռին համար. ով կանուխ կելլէր, ան կրխլէր. մինչև Նադրշահն ամենէն զօրաւոր գտնուելով, նա մնաց միակ թագաւոր առ ժամանակ։ Այնուհետև զոր ինչ մագձ ունէր մէջը՝ բոլորը դուրս տուաւ Հայաստան գտնուող քրիստոնեաներուն վրայ, այնպէս որ խեղճերը չէին գիտեր որ կողմը երթան, օր սպանմանէ խալսին, պատճառ օր ամեն օր հարիւրներով կամ աւելի հոգիք կսպանէին իզուր առանց ոչ մէկ յանցանքի։ Այս խեղճութիւնը հասաւ մինչև Պայազըտ քաղաքը. բազմութիւնը նայեց ուրիշ ճար չկայ փախչելէն զատ, սկսեցին թողելու ինչ օր ունէին այդի, տուն, խանութ, ապրանք և գիշերները ոտքով առանց սպլի ինչոր կկարողանային վերցնելու կոնակները գոհ էին միայն սպանութենէ խալսին։

---

[1] Գրուած է Հնչեկտ գիւղաքաղաքում Բեսսարաբիոյ։

Խ. Ց.

Պապս Աւագը բուն Հայաստանցի էր, ծնած մեծցած Պայազետ քաղաքը. Հոն տուն տեղ եղած, զաւակաց տէր եղած, երբ տեսաւ օր բազմութիւնը կգաղթի, ինքն ալ մտածեց իրենցմէ չի մնայ։ Պապուս կնոջ անունը, այսինքն մամուիս, Հռիփսիմէ էր. մեծ որդւոյն Մարկոս, երկրորդը Յովհաննէս, օր իմ հայրս էր, երրորդը Մկրտիչ և չորրորդը Համբարձում երեք չորս ամեան փոքրիկ մանուկ և մէկ դուստր Մարգարիտ, որ նշանած չէր։ Այսպէս այս վեց հոգին ինչ որ կարողացան վերցնելու կռնակները, առին և գիշեր ժամանակ փախան. ապա կերթային և չգիտէին թէ ո՞ւր կերթան։ Որքան ժամանակ նոքա գնացած կը լան՝ ինձ յայտնի չէ։ Համբարձում տղան կմեռնի ճանապարհին. ինչ անին, մէկ փոս կգտնուն և ձեռքերովը վրան ֆող (հող) կքաշին, կծածկին և ճամբաները առաջ կտանին, կվախնային, օր չիլայ թէ ետևնուն առնուին և ետ դարձնուն կամ թէ սպանին զիրանք։ Շատ ժամանակ չանցնի Մարգարիտ դուստրն ալ, խեղճը, կմեռնի. զնա ալ ինչպէս կկարնան կթաղին և ճամբաները առաջ կտանին։ Երթալով շատ կամ քիչ ճանապարհ, Աստուծոյ Նախախնամութեամբ կհասնին Քավշան[1] քաղաքը, ուր այն ժամանակ այս կողմերի Թաթարները կբնակէին և նոցա գեռնախշիների տեղն մինչև ցայսօր Բեսարաբիա նահանգը կճանաչուի։ Քավշանում երբեմն (XVII և XVIII դարերում) հայոց ազգէն ալ կբնակէին և եկեղեցի[2] ունէին. երբ ես ալ 1834-ին գնացի Քավշան, այնտեղ երկու հայեր կային. նոքա ինձ ցոյց տուին սեղանի տեղը, որ նոքա ֆողով քարով մէկ կոյտ արել էին։

Աւագ պապս մնացած գերդաստանով հասնելով Քավշան կնստէ այնտեղ քանիմը ժամանակ, չի գտնու իրեն գործ, որ կտոր հաց ճարէ զաւակներուն, կելլէ անկից Իսմայիլ[3] կերթայ. այնտեղ ալ իրեն համար բան չի գտնու. կմտածէ որ կողմը ելլէ. ընտանիքը կթողու Իսմայիլ, ինքն կերթայ դէպի Պոլկրատ գիւղը[4],

---

[1] Բեսսարաբիայի նահանգումն է. Գրիգորիպոլի Հայերի մի մասն Քավշանից է գաղթած XVIII դարու սկզբում։—[2] Սուրբ Աստուածածնի եկեղեցի էր, ինչպէս ստուգեցի Գրիգորիպոլ բերած գերեզմանաքարերի արձանագրութիւններից։ Մ. Շ.։—[3] Իսմայիլը Բեսսարաբիայի ամենահարաւային քաղաքն է։—[4] Ռուսիոյ բարտէզի վերայ Болгадъ, որ Քիլի և Իսմայել քաղաքներից դէպի արևմտեան-հիւսիս է գտնուում։

ան որ հեռու չէ Դապաք գեղմէ. ան տեղէն ալ մօտ է Թաթարի գիւղ մը, որ Մուսայիպ—քշլասը կասին, ուր Թաթարները կը-բնակէին. մինչև ցայսօր կան ան գեղերը[1], Երբ որ Աւագ պապս կհասնի այն տեղ, Թաթարները կժողուին բոլորը, իսկոյն կբերին իրեն հաց, պանիր, մածուն կրկշացնուն խեղճ պապս, որ, Աստուած գիտէ, քանի օր էր, որ չէր կերած. այնուհետև Թաթարները կսկսին ասելու, օր Նստէ Մուսայիպ իրենց խանութ բանայ, բռնէ բախի, թիւթիւն, աղ այսինքն պաքալի մէկ խանութ և պապուս մնէն այս խօսքը լսելով, կվազին ձեռքէ ձեռք հարիւր ղուրուշ կժողովին, կուտան պապուս, օր երթայ Իսմայելէն ապպանք գնէ և ընտանիքն ալ բերէ, տեղաւորէ Մուսայիպ։ Նա ալ շատ չի ուշանար, ըստ խոստման կուգայ Իսմայելէն ընտանեօք հարդերձ, իսկոյն խանութ կբանայ, կսկսի առուտուրը առաջ տանել. Թաթարները շատ սիրով կսկսին գնելու նորամէն իրենց հարկաւոր եղած ապրանքը։ Հայրս Յովհաննէսը կտեսնուի, օր Պայազըտէն ունէր ձեռքը կօշկակարութեան արհեստը, շատ չի ուշանար, կսկսի պատրաստել նոր ոտքի ամաններ, կարկատելու հին մաշիկներ և այլն։ Թաթարները մեծ ուրախութեամբ կխնդային. որ ունին իրենց գիւղը այսպէս բանի եարար[2] մարդիկ, որ իրենց պակասութիւնը կարողին հոգալ, վրաները մեծ սէր տային։ Ինչպէս առաւօտ կլար ամեն մէկը, նայես, որը ալիւր, ուրիշը կաթ, այլք մածուն կու բերէին. մէկ խօսքով ձեռքերը պարապ չէին գալ խանութ, կնոջմային գինքը, թէ այսպէս մեծ ընտանիքով մնացել էր պապս յետին աղքատութեան մէջ։ Այսպիսի կարգադրութեամբ կրկենայ պապս հանդերձ ընտանեօք Մուսայիպ գիւղը եօթը տարի և այդ ժամանակի միջոցին կճարէ իրեն եօթը հարիւր ղուրուշ։ Այժմ մարդը փող ունի, կսկսի մտածել թէ ինչ գործի բռնուի և որ կողմ երթայ, որ իրեն մտքին յարմար առուտուր գտնու և կլսէ, թէ կայ մէկ քաղաք մը հեռու Մուսայիպէն գոր հինգ օրուան ճանապարհ և անունը Եաշ (Ясы)։ Եաշ կգտնուի Մոլդաւեա, առաջ անուանի քաղաք էր և մեջը բէյութիւն ալ կար. մինչև շատ ժամանակ չէ, այսինքն երբ-որ Գուշան բէյութիւնը առաւ Բուկուրեշտի բէյութեան հետ միացուց Ուլախիայի կտորին վրայ։ Եաշը Մոլ-

[1] Այսինքն է՝ մինչև 1879 թ. սոյն յիշատակարանիս գրելու տարին:—[2] Յարմար:

դաուիայի կտորին վրայ այսքանով ամիրադ մնաց. սակայն իրեն բազմութիւնը այժմ ալ բաւական շատ է, ինչպէս կլսեմ: միայն կառավարութեան հրամանները և գործակալները Բուկուրեշտէն կախուած է, օր հաստատուին։

Պապս Աւագը կառնու հետը զմեծ որդին Մարկոսը, ճամբայ կելլէ, կու հասնի Եաշ. մարդ չի ճանչնար, մոլորվի լեզուն չիտէ, մեծ դժուարութիւն կքաշէ, չիտէ թէ ո՞ր երթայ օթևանք։ Եաշ քաղաքը կար այն ժամանակ երկու Հայոց եկեղեցի, մէկը Աստուածածնայ անուամբ, որ կգտնուէր Պոդուվէք բաղարը, միսը՝ Գրիգոր Լուսաւորիչ —Ղզմբրիա բաղարը։ Երբ 1821 թ. Հորոմները տաճկի հետ պատերազմ ունեցան, Թուրքերը կրակ տուին Եաշին և Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին ալ միատեղ ճարակ եղև կրակին։ Աստուածածնայ եկեղեցւոյն աղպարը կար սեղանատուն, ուր երբ կուգային Հայոց աղքատները, հոն կընակէին. պապս ալ Մարկոս որդւոյն հետ այնտեղ օթևանեցան։ Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ աղպարի պարիսպին քով եկեղեցին մէկ խան[1] ունէր և շատ անուանի էր. հեռու տեղերէն վաճառականներ կուգային ամեն տեսակ ապրանքներով ու կծախէին. իրենց համար հարկաւոր ապրանք Եաշէն կգնէին. կային այնպիսի վաճառականներ ալ, որ կնստէին տարիներով ու զիրենց առուտուրը կանէին։ Ես երբ առաջ վարժատուն գնացի՝ ան տուներէն մէկին մէջ դպրատուն էր դեռ. նոր դպրատունը պատրաստ չէր, անոր համար հոն կուսուցանէր զմեզ վարժապետը։

Պապս Աւագը քանի մը օր քայլելէն կնայէր իրեն համար յարմար առուտուր. չի գտնելով միտք կդընէ օր ան եկեղեցւոյ խանը վարձով առնու. կենդրէ ամոռակալէն կամ՝ եկեղեցապանէն կառնու քանի մը տարու համար. յետոյ կդառնայ Մուսայիպ գիւղը կառնու ընտանիքը, կրերէ Եաշ. միայն զՅովհաննէս որդին[2] կթողու հոն դեռ ևս մի տարի։ Երբ որ տեղաւորվեց, սկսեց զիրեն առուտուրը նայելու. որդին ալ Մարկոսը սկսեց առաւօտ, երեկոյ ժամ գնալ և տիրացութիւն անել. կանոնի օր ինքը Պայազտէն տեղեակ էր եկեղեցականութեան, որ եաքը քահանայ դարձաւ Եաշը և Եփրեմ կաթողիկոսէն աւագ քահանայութեան խաչ ստացաւ։ Պապս քանի մը տարի խանը բռնելով ճարել էր իրեն բաւականին գումար փոր։ Բերել տուաւ զՅովհաննէս որ-

[1] Карван-сарай.—[2] Հեղինակիս հօրը։

դին ալ Մուսայիպէն և իրեն կօշկակարութեան խանութ բացաւ. ինքն մնաց միայն Մկրտիչ որդով. Սկսեց պապս Աւագը մտածել որդւոց համար. այն ժամանակները պարապ տեղեր շատ կային. Աստուածածնայ եկեղեցւոյն քով մէկ մոլդովլինի եկեղեցի կար Սոֆէի սավա. կերթայ պապս կառնու երեք տան համար տեղ, օր վճարէ տարին մէկ ոսկի (որ ես աչքս բացայ 14 ղուրուշ էր ոսկին) և այնուհետև սկսեց երեք որդւոյն մէմէկ տուն շինել, որ ետքը վիճակով բաժնեց ամեն մէկին.

1798 թուականին կամ թէ առաջ[1] Ռուսաց տէրութիւնը գնաց Տաճկի վրայ պատերազմով. այն ժամանակ Ռուշչուկը աւերեցին և բնակիչները վախէն ցիրուցան եղան բոլոր աշխարհին մէջ Մոլդովիա, Ուլախիա, որ կողմը ապահովութիւն գտան, այնտեղ մնացին և ինչ որ ունէին տուն, խանութ, այգի երեսի վրայ ձգելով փախան. Անոնց մէջը կգտնուէր և մօրս հայրը այսինքն պապուս՝ անունը Յարութիւն Քելէշ կասէին կնոջ անունը այսինքն մամուս Եղիսաբէթ. երկու դուստր ունէին, մեծին անունը Նարեկ էր, փոքրիկին Սարրա, որ ետքը իմ մայրս եղաւ և մէկ որդի ունէին Սարգիս անուամբ. Պապս Յարութիւնը տեսնելով, օր բնակիչները կփախչին ինքն ալ կձգէ Ռուշչուկը, ինչ որ ունէր տանը մէջ կայք, խանութին ապրանք, բոլորը կքաշէ և աղէկ քարէ բաղ ունէր, կտեղաւորցունու, կգոցէ դուռը և Աստուծոյ ողորմութեանը ապաւինելով՝ մէկ սայլ ունէր և երկու ձի, կդնէ արրին մէջը որքան կարելի էր պատուական օժիտ և իւր ընտանիքովը կանցնի Ուլախիա, կուգայ Բուկուրեշտ, այն տեղէն կերթայ առաջ. Աստուծոյ կամքը կինը Եղիսաբէթը ճամբան կմեռնի, ինչպէս և է կթաղէ զնա և կմնայ երկու աղջիկներով և մի տղով. երեքն ալ փոքր էին. մէջերը միայն Նարեկը ալ մեծ էր և Սարգիսը. Սարրան, մայրս, երկու կամ երեք տարու էր. Այս կերպով չի գիտենալով ուր երթալը, կհասնի Բօման քաղաքը. Բոմանին քով մէկ վաղուկ ջուր կայ անունը Մոլգօվա. հոն կսկսի մտածել թէ ինչպէս անցնէ, պատճառ որ վրան կամուրջ չունի. Աստուծոյ ապաւինելով պապս կանցնի, ջրին կէսը կհասնի. Սարրան կընկնի սայլէն ջուրը. մէկալ երկուսը կսկսին պոռալու. խ-

[1] Այստեղ հեղինակը ակնարկում է երկրորդ Տաճկաց պատերազմի մասին, որ տևեց 1787—1791 թ. և վերջացաւ Եասսի դաշնադրութեամբ:

կոյն պապս վրայ կուհանի, կհանէ աղջիկը ջրէն։ Աստուած կուտայ, որ առանց այլ փորձանքի կապատին, կմտնու Բոման քաղաքը, կքաշէ սայլը ժամին ապպարը և այնտեղ կուտան իրեն մէկ խուց, այնտեղ մէկ քանի օր կկենայ։ Ռոմանին մէջ կային Ռուշշուկցիք, որ խաղաղութեան ժամանակէն եկել էին ընտանեօք կընակէին և առուտուր կանէին։ Ասոնց մէջ կգտնու և իրեն ազգականներէն, որոնք կառնուն զինքը տղոցմովը իրենց տունը. մարդու անունը (յիշեալ ազգականներից մէկն) Բաղդասար էր և պապուս հետ երկու եղբօր որդիք։ Մեծ սիրով կընդունեն զինքը և կնստէ Բոման մինչև որ պատերազմը Ռուսը տաճկին հետ կվերջացուցանէ. կմտածէ պապս Յարութիւնը, օր երթայ Ռուշշուկ թողած բաները բաղին մէջ առնու ու բերէ Բոման։ Երբ կհանէ, կտեսնու օր անձրևի ջրերը վազելին բաղին մէջ, լոլոր ինչ որ կային փտելին, փճացելին այնպէս օր ձեռք առնելու հնար չկայ. խեղճ պապուս այս յոյսերն ալ պարապ կմնան. կդառնայ տխուր, տրտում; արտասուքը աչքը կուգայ Բոման, կնստէ քանի մի ժամանակ։ Այնու հետև միտքը կդնէ, օր երթայ Եաշը, կարելի է այնտեղ իրեն մէկ գործ գտնու. հոն հասածին պէս կգտնու իրեն մէկ ազգականը, որ կասվէր Երենաց (Մանիցալը օղուլլարը)։ Ինչպէս կտեսնուի ունևոր մարդիկ էին, կընդունեն զինքը երեք զաւակներով իրենց տունը, իրեն ալ կգտնուն մէկ գործ. բայց ինչ գործ եղածը ինձ յայտնի չէ։ Ինձ մինչև այստեղ պատմեցին։

Միւս պապս Աւագը (հօր կողմանէ) երեք տունը պատրաստելէն ետքը մտածեց, օր զմեծ որդին Մարկոսը կարգէ. գտաւ մէկ աղջիկ Պոդուշանէն[1] և կարգեց. այս աղջկան անունը Մարիամ էր։ Մարկոսը ունեցաւ չորս զաւակ, մէկ աղջիկ Մարգարիտ, երեք տղայ Ստեփան, Աւագ և Գրիգոր. զգուստրը Մարգարիտը տուաւ Հայաստանէն եկած մէկ կտրիճի անունը Անտոն։ Այս Անտոնը Ռուսաց հիւպատոսին քով շատ ծառայութիւն արաւ և շատ ալ ամենուն սիրելի եղաւ և ուր որ հարկաւոր էր ղրկելու մէկ թղաւորական գործի համար, զինքը կղրկէր հիւպատոսը. և չի գիտեմ թէ ի՞նչ չին ունէր, իրեն կկանչէին օֆիցեր Անտոն, որ մոլդովանի պրիսուսվիյան (ատեան) երթար դիմացը մոլդովանները բարև կկենային (отдавали честь)։ Ինքը մեռնելէն ետքը պենսիա կապեցին իրեն կնոջ Մարգարտին, որ յետոյ եկաւ

[1] Ботушани բաղաքը Սերետ գետի ափին է գտնվում;

կինը մեր մօտ Հնչեշտը[1] նստաւ քանի մը տարի. կերթար Քիշնև ժամանակին պենսիան կառնուր. յետքը բոլորովին գնաց Քիշնև բնակեցաւ, հոն ալ վախճանեցաւ և թաղեցաւ. Հայոց հին գերեզմանատունը. տղաք չունեցան։

Շատ չի քշեց Մարկոսը քահանայացաւ, աղէկ չիտիմ, այլ կկարծիմ, օր սրբազան Յովսէփ[2] եպիսկոպոսէն ձեռնադրուած ըլլայ. ետքը, ինչպէս պատմեցի, Եփրեմ կաթողիկոսէն աւագ քահանայական խաչ ընկալաւ և շատ հոգևոր գործեր իրեն ձեռքովը կըտեսնուէին։

Յարութիւն Քիլէշը, որ ետքը ինծի մօտ կողմանէ պապու եղաւ, ինչպէս առաջ յիշեցի, Բօմանէն եկաւ Եաշ տեղաւորվեց Մանիցալընեռուն տունը. Նոքա ուղեցին, օր կարգուի։ Ան ժամանակին Ղրիմի պատերազմներէն[3] կամ թէ այլ ինչ պատահմամբ մէկ որբուհիի կին կուգայ Եաշ անունը Լուսպիկէ, որ ես ալ հասայ տեսնելու. պապուս մեռնելէն ետքը մեր տունը մնաց մինչև 'ի մահ։ Կկարգուի կրկին պապս այս կնկանը հետ և այնուհետև կբաժնուի Մանիցալընեռէն, կելլէ իրեն ճոկ տունը. Մանիցալընները չուզեն փոքր աղջկը զՍարրան տալու, օր մնայ իրենց երկու աղջիկներու հետ մէկ տեղ մեծնան. այնպէս ալ պապս Յարութիւնը կառնու զՆարեկը և Սարգիսը կելլէ իրեն տունը։

Շատ չանցնի Յարութիւն պապս կուտայ զՆարեկ դուստրը մէկ Մինաս անուամբ տեղացի մէկ կտրիճին. զաւակ չունենալուն պատճառաւ կառնուն իրենց մէկ որբ կտրիճ տղայ անունը Յակոբ։ Այս տղան կմեծնայ պարկեշտութեամբ և հօրը մօրը հնազանդ. քիչ շատ կուսանի հայերէն կարդալ և գրել. ան ժամանակները կուգայ Եաշ Նուիրականութեամբ Յովսէփ արքեպիսկոպոսը[4], որ տեսնելով Յակոբ տղին պարկեշտութիւնը՝ կառնու զինքը քովը. կարծեմ, թէ հայրը Մինասը մեռել էր, նորեկ մայրն ալ յօժար կամքը կուտայ զտղան Յովսէփ սրբազանին. նա կառնու, կտանէ հետը։ Մէկ քանի տարէն ետքը կղզկէ եղբօրս՝ Տէր

---

[1] Հնչեշտ գիւղաքաղաքը իշխան Մանուկ-բէյի կալուածն է, Քիշնևի մօտերքում։—[2] Յովսէփ Երկայնաքաղուկ Արղութեան, որ 1800 թ. կաթողիկոս ընտրուելով, մեռաւ ծանապարհին (Թիֆլիզ) դէպի ս. Էջմիածին։—[3] Յիշեալ պատերազմների հետևանքն էր Ղրիմի գրաւումն 1783 թ.։—[4] Սիմէօն կաթողիկոսը 1773 թ. արքեպ. Յովսէփին նշանակել էր Ռուսաստանի Հայոց վիճակաւոր։

Յուսիկին թարգմանեալ Տելեմաքի պատմութիւնը, որ առաջին անգամ թարգմանեալ էր[1] և իրեն (Յակոբի) անունը փոխեցին՝ Եակոբ Մինայիշ կկանչէին. մայրն ալ Նարեկը մենակ մնալով կուգայ հօրս տունը և կնստէ մինչև 'ի մահ։ Եակոբ Մինայիշ որդու մնտէն մէկ քանի մխիթարութեան նամակ եկաւ. այնուհետև ոչ նամակ և ոչ անունը լսուեցաւ, մեռաւ, թէ ողջ է, Աստուած միայն գիտէ։

Աւագ պապս սկսեց մտածել երկրորդ որդւոյ համար, օր կարգէ. ուստի ինչպէս կլայ, կբարեկամնայ Քելէշ Յարութիւնի հետ, և տեսնելով զՍարրա աղջիկը ու հաւանելով ուզեց Քելէշ Յարութենէն հօրս Յովհաննէսին առնու. խօսքը կկտրեն իրենց մէջ. մէկը կասէ կուտամ, մէկալը կասէ կառնում և բանը վերջացաւ, խեղճ փեսին և հարսին վրայ կհարցունու. կամ ունի՞ն բերան առաջի հօր մօր դիմաց բանալու։ Մինչև այն օր սովորութիւն կար պսակին ապրուշումէ թագ կդնէին՝ և երեք օր կկենար ան թագը. չորեքշաբթի իրիկուն քահանան, կնքահայրը կուգար թագերը կառնուր և այն ժամանակ փեսան կտեսնէր հարսը և հարսն ալ կտեսնէր զփեսան. քեօր թօփալ[2] պէտք էր գոհ ըլլային. նշանը կանին։

Մեր հայոց ազգին մէջ սովորութիւն կար, օր առաջաւորաց, որ Սուրբ Սարգսի պաս ալ կասուի, կքաշուէին մէկ տան մէջ ազգական և բարեկամ աղջիկներ և կիրակի իրիկուն բարեկենդան կթողուին. այնուհետև երեք օր մինչև չորեքշաբթի ժամ կերթային, քահանան իրենց նշխարք կուտար և կուգային ժամէն տուն, կերակուր կուտէին զոր ինչ պատրաստել էին մայրերը։ Ան շաբթի ուրբաթ օրը դարձեալ ծոմ կպահէին, իրիկունը նկանակներ կանէին, մէջը շատ աղ կդնէին և պառկելու ժամանակ կուտէին այն բռնակ[3] աղջիկները և այնպէս կպառկէին այն յուսով օր որը պիտի ըլլայ իրեն փեսան, պիտի ջուր տայ իրեն խմելու։ Այնպէս ալ Սարրա մայրս կտեսնու օր մէկ բարձր պոյով մէկ կտրիճ բերբերի հագուստով իրեն մէկ թասով ջուր կուտայ մօրս Սարրային։ Առաւօտուն կելլէ չի համարձակի մարդու մը ասելու. աս բերբերի ասած հագուստը այսպէս էր, կարճ ան-

---

[1] Մեզ գոնէ յայտնի չէ այդ թարգմանութիւնը. բայց մենք ծանաչում ենք հ. Եղ. Հիւրմիզեանի թարգ. 1850 թ. Վեն.։—[2] Կոյր թէ կաղ։—[3] Պաս պահող։

թերի մինչև մէջքը. կուրծքը վիզէն մինչև մէջքը կոճակներով և թևերուն մօտ մինչ 10 կամ 15-ական կոճակ ունէր. եթէ ունևոր էր ուսից արծաթէ կանէր կոճակները և փոթուր կասվէր. դարձեալ կոճակներով, որ ծունկէն վար մինչև ոտքը կոճկած էր։ Կլայ օր ան օրերուն մէկ մարդ կմեռնէ և հանգուցելոյն դագաղը պիտի Մանիծալներուն տունին դիմացէն անցունուն. ամենքը տանը մէջ եղողները կելլեն առաստաղը այսինքն թավան. մայրս ալ կելլէ, կտեսնու այն մարդը, որ երակը իրեն ջուր տուել է խմելու այն հագուստով։ Եւ կսկսին քովը եղողները ասելու թէ ըշտէ չքդը Սարանընգա Նշանլըսը (ահա դուրս եկաւ Սարրայի փեսացուն էլ). այն ժամանակ կհասկանայ մայրս թէ՝ ան է նշանածը. այսպէս կպատմէր մայրս։ Շատ չանցնի պապս Աւագը կանէ հարսանիքը Յովհաննէս որդւոյն, կուտայ իրեն ալ մէկ տուն։ Մկրտիչ որդւոյն համար կասէին, թէ ինա ալ կարգիլ է և շատ չանցնի կմեռնի կինը, ինքն ալ կթողու Եաշը և կգնայ Քիշնև, հոն դարձեալ կկարգուի մէկ Յապիկ անուամբ կնկան հետ։ Այնուհետև շատ չապրի Մկրտիչն ալ կմեռնի, ես ինա չիտիմ, չիմ տեսիլ. միայն թէ մինչև 1827 թ. ղՅապիկ կինը կըտեսնէի. այնուհետև ան ալ մեռաւ։ Զպապս Աւագը և Յարութիւնը չիմ տեսիլ, կերևի թէ նոքա մեռած էին, երբ ես աչքս բացայ. մեր ազգականներէն ղՏէր Մարկոսը իրեն գերդաստանովը կյիշեմ միայն։

Մօրս ազգականներէն տեսայ Սարգիս եղբարը և Նորա կինը, երկու դուստրը և մէկ որդին Յարութիւնը, որ 1821 թ. Հոռոմներուն պատերազմին եկաւ Հնչեշտ մէկ տարու չափ Նստաւ հոն, լաւ տիրացութիւն կանէր. այնուհետև ուր գնաց խապար չունիմ։

Գանք օր Հայրս Յովհաննէսը կարգուեցաւ և առաւ ղՍարրա մայրս և տեղաւորվեցաւ իրեն տան մէջ. ունէր կօշկակարութեան խանութ Զիմբրիա փողոցը. այնուհետև սիրտը ուզեց, որ այգի գնէ. գտաւ մէկ այգի, որ Եաշէն տասն վերստի չափ հեռաւորութեամբ Ֆունտու Պուչումուլու ասուած տեղը և այնպէս զարդարեց զայն այգին, որ ամեն տեսակ մրգի ծառեր բերել տուաւ և Մարտ ամսին կերթար հայրս այգին և կպատուաստէր և ամեն տարի առատ առատ պտուղ կուտային։ Հայրս սովորութիւն ունէր, որ բոլոր ձմեռը աղը կրել կուտար և ծառերուն մէջ կդնէր և երբ կսկսէին ծառերը ծաղկելու կրակ կուտար ան աղբերուն կոյտերուն և երբ ես կհարցունէի՝ հօրս՝ թէ ինչո՞ւ համար աղբը

կայրի, մուխ կուտաս, նա կասէր. կլայ օր այս ժամանակ սար (սոսինձ մոլդովերէն—բրուտա) կիջնի. այս մուխը թոյլ չիտայ, որ ծաղիկներուն վրայ իջնի. մուխը կհալեցնէ սարը կանէ ցօղի պէս. և իրաւ օր այլ պարտէզները կփճանային և միրգ չէր ըլլայ. ապա մեր այգին ամեն տարի անպակաս էր և մեր այգիին գինին շատ անուանի էր, հեռու տեղերէն կուգային վաճառականներ և աւելի գնով կգնէին մեր այգիին գինին։ Մօրս քոյրը Նարեկը սովորութիւն ունէր օր գարնան սկզբին կերթար այգին և այնտեղ կկենար մինչև այգիները կ.քաղուէին։

Հայրս Յովհաննէսը ունեցաւ տասն և մէկ զաւակ. ինձ միայն յայտնի է այսքան, մեծ եղբարս Յուսիկ, որ քահանայացաւ Հրնշեշտ մեռաւ 1860 թ. երեք դուստր. առաջինը Եղիսաբէթ, որ յետոյ Ֆոքշանցի[1] մարդու մը գնաց Սարգիս Յակոբեան անուամբ և ունեցան երեք դուստր, մեծը Մարիամը հանգուցեալ Տէր-Յարութիւնին տուաւ, երկրորդը Հռիփսիմէ գնաց Յովհաննէս Պողոսեանի Ռմշքան կասէին և երկրորդը Կատարինէ փախաւ մէկ Ուլախ կտրիճի հետ Լեովա (Իլով?) ասուած կողմերը։ Երկրորդ քոյրս Մարիամը Ֆոքշան քաղաքը մարդու տուաւ Էգիրնեցի տիրացու Դէորգ Յարութիւնեանին, որ յետոյ քահանայացաւ Ֆոքշան քաղաքը. ունեցաւ երեք տղայ Յարութիւն, Կարապետ, Սարգիս. այս ետքի երկուսը 1831 թ. եղբայրս Յուսիկը գնաց Մոլդավիա Ֆոքշանը, հետը բերաւ Հնշեշտ զԿարապետ և զՍարգիս, որ քանի մը տարի ուսան նոքա հանգուցեալ տիրացու Մսեր Մսերեանցի[2] քով. իսկ Յարութիւն մեծ որդին Տէր-Ստեփանի... Այս երեք որդիքը լուսահոգի Տէր-Ստեփանին այժմ ալ (1879 թ. այս յիշատակարանիս գրելու տարին) կապրին. երկուքը Մոլդավիայի Տեկուշ[3] քաղաքումը և են անուանի վաճառականութեան կողմանէ և հարուստ են. իսկ փոքր եղբայրը Սարգիսը Ֆոքշան քաղաքը կգտնուի՝ հօրը տան մէջ և ան ալ վաճառական է։ Տէր-Ստեփանը և երիցակինը Մարիամը մահ տարաժամ մեռան Ֆոքշան քաղաքը։

Երրորդ քոյրս և Կարապետ եղբայրս նոյնպէս մեռան։ Ես ծնեալ եմ ըստ պատմելոյ մօրս իբր թէ մեծ շարժէն երեք տարի

---

[1] Фокшаны Սերետ գետի աջ կողմումն է Ռումընիայում:— [2] Անուանի Մսեր մագիստրոս Մսերեանց:— [3] Տեկուշ (Текуч) Ֆոքշան քաղաքից դէպի Հիւսիս է՝ Սերետ գետի վերայ:

ետքը. ես գտայ մէկ մոլդովանի տումարին մէջ գրած իբր թէ 1802 թուին եղած լինի այն մեծ երկրաշարժը. ուրեմն ծնած եմ 1805 թ. և կասէր մայրս Ապրիլ ամսին էր. ես ալ տարիքս հաշուելով այժմ 1879 թուականին կգտնուիմ 75 տարու մէջ։

Կարծեմ թէ Ռուսաց տէրութիւնը 1790 թ. կամ առաջ քանի տարի ետքը դարձեալ ունեցաւ պատերազմ Ծաճկի հետ, երբ Ռուշչուկը ոտնակոխ եղաւ այնքան, որ խեղճ բնակիչները փախան ցիրուցան եղան։ Երբ պատերազմէն ետքը Ռուսերը դարձան՝ Եաշ քաղաքը և Նստան մինչև 1812 թ. այն ժամանակը հայրս նոր տուն կշինէր և մենք Պոդուվէք փողոցը Աղաջան անուամբ մէկ հայի մնտէն վարձով տուն առել էինք և հոն կը-բնակէինք։ Միտքս է երբ-որ զինուորները կգառնային Եաշ կուգային, մեզի ալ պաստոյ սոլդատ կուտային. այն ժամանակ սոլդատներու մէջէն մէկ բարի սրտով մարդ կար շատ ժամանակ մեր տունը Նստաւ. այնպէս լաւ սրտով մարդ էր, օր բոլոր օրը պարապ չէր կենար, փայտ կկտրէր, ջուր կբերէր, ազպարը կաւելէր, հօրս խանութը բանուորներուն կերակուր կտանէր և գիս ալ գիրկը կբռնէր, երբ ուրիշ գործ չունէր. այս սոլդատին անունը Իգնաթ էր։

Այն ժամանակ եկաւ Եաշ քաղաքը առաջնորդ արքեպիսկոպոս Գրիգոր Զաքարեանը. կարծեմ Աքքերման ծնեալ էր. տեղաւորվելէն ետքը սկսեց կարգադրութիւն անելու. նախ և առաջ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ սեղանը բոլորը ոսկեզօծ զարդարեց և առաջնորդական աթոռը նոյնպէս զարդարել տուաւ յետ վերադառնալոց. . . . .»

Այստեղ ընդհատուում է ծերունի Պօղոս Աւագեանի յիշատակարանը, որի վերջը կորած է։ Սակայն հանգուցեալ Աւագեանի որդին Մկրտիչը մասամբ շարունակում է և լրացնում հօր յիշատակարանը, յայտնի բան է, յենլով հօր պատմածի վերայ։ Ահա զօրօրինակ ինչ է գրում Մկրտիչը արքեպիսկոպոս Գրիգոր Զաքարեանի մասին.

«Ի 1850 թուին Բեսսարաբիոյ առաջնորդն էր Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարեան Աքքերմանցի. նա իւր առաջնորդական աթոռը ունէր Քիշինև, ուր այն ժամանակ ընակւում էին շատ լուսաւորչական հայեր. ունէին մէկ անշուք քարէ եկեղեցի և երեք քահանայք — Սասունեան Տէր-Անտոն, Մալբաշեան Տէր-Աբրահամ, Սամուէլեան Տէր-Յարութիւն, աւագ սարկաւագ Մկրը-

տչեան Գէորգ, որ յետոյ վարդապետ դարձաւ։ Գրիգոր սրբազանը[1] տեսնելով եկեղեցւոյ անմխիթար դրութիւնը, հասարակութեան նպաստով փոքր 'ի շատէ նորոգեց և զարդարեց այն։ Քիշինևի հայերից այն ժամանակը տէրութեան պաշտօնէից մէջ, 'ի միջի այլոց, նշանաւոր դեր էին խաղում սրբազանի եղբօր որդիքը՝ Մարգար, Դաւիթ, Յարութիւն, Աբգար և Անդրէաս Զաքարեանք, որոնք Գրիգոր Սրբազանի շնորհիւ բաւականին մեծ հարստութեան տէր դարձան ընդարձակ կալուածներ գնելով. իսկ միւս հարուստներից յայտնի էին վեհանձն Մանուկ բէյ (ներկայ Յովհաննէս բէյի հայրը) Դիլանեանք երկու եղբարք՝ Յարութիւն և Խաչիկ աղայք, Մուրատեան Յարութիւն աղայ, Բարխուդարեանք երկու եղբարք Յարութիւն և Սարգիս, Լեբեդեանք երկու եղբարք Ներսէս և Տոդերաշ ու այլ բազում վաճառականք և աստիճանաւորք։ Գրիգոր սրբազանը յիշեալ իշխաններու միջոցաւ կարող կլինէր Քիշինևի պէս տեղ մը բաւականին յաջող գործեր տեսնել յօգուտ մեր ազգայնոց, եթէ միայն հետամուտ լինէր։ Սակայն նորա առաջնորդութիւնը անարդիւն անցաւ հայոց ազգի համար։ Նա վայելում էր Բեսսարաբիոյ նահանգապետ կոմս Վորոնցովի, Ռուսաց և Սերբիացւոց մետրոպոլիտներու սէրը ու յարգանքը. նոցա աջակցութեամբ նա կարող էր, մանաւանդ ըստ այն ժամանակի արտօնութեանց, որ ամեն ազգ վայելում էր Բեսսարաբիայում, լաւ ուսումնարան բանալ հաստատուն հիման վրայ և այս կերպով հայ մանկտւոյ կրթութիւն և դաստիարակութիւն մատակարարել։ Բայց նա աշխատում էր լոկ իւր անձնական և եղբօր որդւոց օգտի համար և շատ շռայլ կեանք էր վարում։ Պատմում են թէ երբ կոմս Վորոնցովը Բեսսարաբիոյ նահանգապետ նշանակվեցաւ, Գրիգոր սրբազանը նորան մեծ հանդէս արաւ՝ գեղեցիկ պարտիզի մը մէջ ճաշ տալով իրեն. այդ ճաշին հրաւիրուեցան մեծամեծ իշխաններ Մոլդովանի, ռուս գեներալներ, նմանապէս երեք մետրապոլիտ ռուսի, մոլդովանի և սերբի. վարձեց զինուորական երաժիշտներ և Ռուսաց մայր եկեղեցւոյ երգեցիկ խումբը։ Հանդէսը կատարեալ անելու համար և աւելի փառաւոր, նա իւր հաշուով Բենդէր բերդաքաղաքից, որ Քիշինևից 58 վերստ հեռաւորութիւն ունի, բերել տուաւ ռմբաձիգ

---

[1] Գրիգոր Զաքարեան սրբազանի իւղանկար պատկերը գտնուում է Մոսկվայի Հայոց գերեզմանատան հիւրանոցի դահլիճում։

զօրաց խումբ մը իւրեանց թնդանօթներով և Ռուսաց կայսեր Աղէքսանդր Ա-ի կենաց շամփանեայ գինի խմելու միջոցին թընդանօթներից ռումբեր կարձակէին և այսպէս ճաշը տևեց ամբողջ օր։ Հանդիսից յետոյ Գրիգոր սրբազանը շնորհակալ եղաւ զօրաց գնդապետին և բաշխեց նորան հազար ռուբլի ասիկնացի։ Առ հասարակ Գրիգոր սրբազանի առատաձեռնութեան և հանդէսներու համար օտարականները շատ սիրում էին նորան. պատմում են մինչև անգամ, որ երբ հարկաւոր եղաւ Դուբօսար[1] քաղաքում մի նորակառոյց Ռուսաց եկեղեցի օծելու՝ Ռուսաց էկզարքը խընդրեց Գրիգոր սրբազանին օծումը կատարելու։ Հայոց արքեպիսկոպոսը յօժարութեամբ յանձն առաւ այդ գործը. բայց երբ ժամանեց Դուբօսար մոլդովացի և ռուս ժողովուրդը չընդունեցին նորան և սկսան աղաղակել թէ մենք ունինք մեր եպիսկոպոսները, թող նոքա գան մեր ուղղափառ եկեղեցւոյ օծումը կատարեն։ Գրիգոր սրբազանը տեսնելով ժողովրդեան խռովութիւնը ունայնաձեռն վերադարձաւ Քիշինև և պատմեց իրողութիւնը էկզարքին. վերջինս սաստիկ բարկացաւ և ասաց նորան, «գիտենաս Գրիգոր, որ դարձեալ դու պիտի օծես եկեղեցին, բայց եթէ տան քեզ 1000 ոսկի, միմիայն այն ատեան»։ Այնպէս էլ կատարուեց՝ վասն զի երբ Դուբօսարի ժողովուրդը եկաւ ու խնդրեց էկզարքից, որ ուղարկէ մէկ եպիսկոպոս իրենց եկեղեցին օծելու համար, էկզարքը սաստիկ կերպով յանդիմանեց նոցա ասելով. «Ես ձեզ ուղարկեցի այն մարդուն, որուն ես արժանի գտայ այդ գործի համար. դուք նորան չընդունեցիք, գնայէք նորան և խընդրեցէք, եթէ նա կամենայ երթալու, թող երթայ։ Այն ատեն խուռն բազմութեամբ ժողովուրդը դիմեց Գրիգոր սրբազանի տունը և ծունկի վրայ աղաչում էին նորան, որ գայ իրենց եկեղեցին օծէ։ Սակաւ ինչ նոցա տանջելուց ու յանդիմանելուց յետոյ սրբազանը գնաց և օծեց եկեղեցին, որոյ համար էկզարքից սահմանած 1000 ոսկին ևս ընդունեց։ Գրիգոր սրբազանի պէս ցանցառ եպիսկոպոսներ պակաս չէին մեր ազգի մէջ. բայց սա գոնեա իր առաջնորդութեան ժամանակ հասկացած էր իր ժողովուրդի տգիտութիւնը և կոշտ բնաւորութիւնը և ամեն ջանք գործ էր դնում, ըստ կարելւոյն, հանելու այդ խաւար դրութիւ-

---

[1] Дубосары Դնեստր գետի ափերին է, Գրիգորիպոլ քաղաքից դէպի Հիւսիս։

նից։ Նա աշխատում էր նրանց օտար դրացի ազգերի հետ բարեկամական կապերով կապել, նոցա հետ յարաբերութիւն ունենալ, որ հրաժարուին իրենց ասիական փակուած կեանքից. վասն զի Հայ կանայք և օրիորդները ընտանեկան շրջանից դուրս չէին գալիս և անընկճելի յամառութեամբ հասարակական կեանքից խոյս էին տալիս։ Ի զուր անցան սրբազանի խրատները ու քարոզները, որ նա խօսում էր եկեղեցւոյ բեմից և եթէ այն ժամանակի քահանաները փոքր ինչ հետևէին նորա բռնած ընթացքին, գուցէ յաջողուէր առաջնորդի ջանքը։ Սակայն նոքա իրենց մտաւոր ստոր զարգացմամբ ոգէտ ժողովրդականներից շատ հեռու չէին. այդ քահանաները հայերէն խօսել անգամ լաւ չգիտէին և իրենց կարդացածը չէին հասկանում։ բայց դորա հակառակ՝ նոքա մոլեռանդութեամբ պաշտպանում էին կրօնը, եկեղեցական արարողութիւնները և հին նախնեաց աւանդութիւնները։ Նոքա (քահանաները) շատ էին վախենում առաջնորդից, որ նոցա հետ խիստ էր վարում և երբեմն նաև ապտակներով խրատում էր(?) Գրիգոր սրբազանը սիրում էր իւր ժողովուրդը և քանի մը առաջաւոր անձանց համար բերել կուտար շքանշաններ, մեդալներ կուրծքի վրայ կախ տալու համար, կներկայացնէր օտար մեծամեծ աստիճանաւորներին և կաշխատէր, որ հայերը ծանօթ լինեն նոցա հետ, ուսանին Ռուսաց լեզուն։

Այն ժամանակները առաջնորդը չունէր կանոնաւոր Կոնսիստորիա կամ հոգևոր կառավարութիւն. ամենայն բան ինքն կը-տնօրինէր, կհաստատէր իւր բացարձակ իշխանութեամբ. անկախ էր նա Սուրբ Էջմիածնայ կաթողիկոսից և Կ. Պոլսոյ պատրիարքից և կճանաչէր միայն Ռուսաց Աղէքսանդր I-ին։ Բայց այնու ամենայնիւ սիրով կընդունէր ու կպատուէր Սուրբ Էջմիածնայ, Երուսաղեմի և Սուրբ Կարապետէն եկող նուիրակ վարդապետներին, թոյլ կուտար նոցա Բեսսարաբիոյ նահանգում և Մոլդովիայում հայերից նուէրներ ժողովելու և ինքն ևս իւր նուէրներով նոցա կնպաստէր։ Գրիգոր արքեպիսկոպոսի առաջնորդութեան օրերում օտար քրիստոնեաներից ոչ ոք չէր համարձակւում հայերի կրօնը հայհոյելու և եթէ ոք յանդգնէր, սրբազանը կպատժէր նոցա իւր վիթխարի Գրիգոր սարկաւագի ձեռքով. վերջինս պատիժներին յաճախակի ենթարկւում էին գլխաւորապէս մոլդովացիք և հրեայք, որոնք հայերի հետ միշտ թշնամաբար էին վարւում, համարելով սոցա պիղծ, նղովեալ և ոչքրիս-

տոնեայ. մանաւանդ Ցոյները և Բուլղարները իրենց կրօնամոլութեամբ և անհամբերող բնաւորութեամբ միշտ գժտութեան պատճառ էին դառնում։ Անարգելով հայոց եկեղեցին, նոքա ասում էին թէ հայերը իբր թէ Սուրբ Սարգսի շանն են պաշտում, Քրիստոսի յարութեանը չեն հաւատում, պասը լուծում են Քրիստոսի յարութեան նախընթաց շաբաթ իրիկուն։ Երբ այսպիսի խօսքեր կհանէին սրբազանի ականջը, ըսկոյն կուղարկէր իւր սարկաւագին անդամներին խելքի բերելու։ Հաստ գաւազանը ձեռքին հսկայ Գրիգորը դուրս կուգար պայքարի տեղն ու կսկսէր աջ ու ձախ կատարել իւր դատաստանը «զորս դու պատուիրեցեր»։ Եթէ հայոց վարժատան տղայքը կռուի կբռնուէին հրեաների հետ հաւատի համար, Գրիգորի փրկարար փայտը շատ շուտ վերջ կդնէր խռովութեան և վայ նորան, ով որ իւր ժամանակին չփախաւ պատերազմի դաշտից. այդպիսի թշուառականին միայն ոստիկանութեան ծառայողները կարող էին ազատել Գրիգորի ձեռքից. սակայն իրան սարկաւագին բռնել չէին յանդգնում, պատկառելով սրբազանից, որոյ բարեկամների թիւը մեծ էր քաղաքի մեծամեծների և մոլդովացի բօեարների մէջ։ Քիշինևում սրբազանը ունէր հոյակապ տներ, գեղեցիկ պարտէզներով շրջապատած։ Նորա ճաշին շատ անգամ ներկայ էին լինում ռուսաց և մոլդովանի մետրոպոլիտները, եպիսկոպոսները և նոյնպէս բօեարները. նա չէր սիրում միայն Բուլղարներին, որոնց ատելով ատում էր նոցա սաստիկ նախանձոտ բարուց համար։ Բուլղարները, արդարև, շատ նախանձում էին հայոց եկեղեցւոյ հարստութեան և չէին կարողանում տեսնել ու համբերել սրբազանի փառաւոր երթը եկեղեցի չորս կամ վեց ձի լծած կառքի մէջ, որոյ ետևը կանգնած էին լինում երկու բարձրահասակ տիրացուներ մաքուր հագնուած։ Ինքն Գրիգոր արքեպիսկոպոսը պարթև հասակով մարդ էր երկայն սպիտակ փառաւոր մօրուքով. հագնում էր թանգագին ծիրանագոյն վերարկու, կուրծքը զարդարուած էր շքանշաններով, իսկ վեղարի վրայ՝ ճակատին կրում էր անդամանդեայ խաչ, որ շնորհել էր նորան թագաւոր կայսրը։ Այս նշանները տեղացի ազգերի և ոչ մի եպիսկոպոսը չունէր այն ժամանակ Բեսսարաբիայում։

Նոյն ժամանակներում Քիշինևում Կաթոլիկ և բողոքական հասարակութիւնները չունէին իրենց քահանաները և եկեղեցին, այս պատճառաւ Գրիգոր Սրբազանի հրամանով նոցա հոգևոր

պիտոյքները կատարում էին մեր քահանաները։ Երբ Բեսսարաբիան անցաւ Ռուսաց տէրութեան իշխանութեան տակ, Ռուսների թիւը շատ սակաւ էր և մեծամասնութիւնը բնակիչների կազմում էին մոլդովացիք և այս պատճառաւ դատաստանատանը և կառավարչական ատեաններում գործ էր ածվում մոլդովանի լեզուն, որին տեղեակ չլինելով մեր ազգայինք դժուարութեան մէջ էին. չգիտէին նոքա Ռուսաց լեզուն ևս։ Բայց վերջին ժամանակները Ռուսաց տէրութիւնը տեսնելով յիշեալ անյարմարութիւնները սկսաւ հայերից էլ պաշտօնի հրաւիրել քանի մի անձանց. Բարխուդարեան Յարութիւն աղային, Ծածուկեան Ստեփաննոսին, տիրացու Մարտիրոսին և այլոց։ 1820 թուականներից սակաւ առ սակաւ մոլդովանի լեզուն արտաքսուեցաւ ատեաններից, մոլդովան աստիճանաւորների տեղը բռնեցին Ռուսները և մասամբ հայերը։ Այդ միջոցին և Գրիգոր սրբազանը բերել տուաւ Մոսկուայից մի հայ աստիճանաւոր Մարգար Գաս. Մուրազով և նորան օգնական կարգեց իբր գրագիր մի ռուս մարդ Իվան Լոբով։ Սոցա երկուսին առաջնորդը պահում էր իւր մօտ և երբ հարկաւոր էր լինում դիմելու դատաստանատուն և կամ կառավարութեան ատեաններին սրբազանը նոցա էր յանձնում գործերը։

Քիշինևի հայոց եկեղեցւոյ արտաքին տեսքը թէև ոչինչ գեղեցկութիւն չունէր, սակայն ներսը Գրիգոր սրբազանի ջանիւք լաւ զարդարուած էր. ունէր ոսկեայ մեծ խաչկալ, սեղանը պատուական կերպով ամպհովանիով շինուած. ձախակողմեան դասում կանգնած էր փառաւոր առաջնորդական աթոռ, հարուստ էր ոսկեայ և արծաթեայ սպասներով, անօթներով և թանգագին զգեստներով, որ այն ժամանակի օտար դաւանութեան եկեղեցիներում չկային ընաւ։ Միայն առաջնորդի եկեղեցական զգեստները մի քանի հազար կարժէին, թոզ սրբոց գեղեցիկ իւղանկար պատկերները և այլ կահ կարասիքը, որով լի էր մեր եկեղեցին։ Մի քանի անգամ ռուս, մոլդովան և սերբ մետրապոլիտները գալիս էին հայոց եկեղեցի՝ ներկայ գտնուելու Գրիգոր սրբազանի հանդիսաւոր պատարագին, մանաւանդ Վարդավառի տօնին։ Նոցա համար տեղեր էին պատրաստուած աջ դասում։

Այստեղ վերջանում է Մկրտիչ Աւագեանի գրուածքը Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարեանի մասին. բայց որովհետև վերջինս նշանաւոր դեր է խաղացել հարաւ-արևմտեան Ռուսաց հայերի

կեանքում, ուստի մեր կողմից ևս աւելորդ չենք համարում նոյն անձնաւորութեան նուիրել քանի մի խօսք։

Մ. Աւագեանի յօդուածից երևում է, որ Գրիգոր սրբազանը չէր կամենում ճանաչել Ս. Էջմիածնի Մայրագոյն պատրիարքի և կաթողիկոսի գերիշխանութիւնը, իրեն անկախ էր պահում Նորանից, թէև Ս. Էջմիածնից եկած նուիրակներին ընդունում էր։ Սրբազան Զաքարեանի ընբոստութիւնը թէև շատ ցաւալի է, սակայն ունի իւր պատճառները։ Նախ և առաջ պէտք է յիշել, որ Գրիգոր վարդապետը Յովսէփ Արղութեանի ձեռնասուն աշակերտներից մէկն էր, գրում է հանգ. աւագ քահանայ Տէր-Յակոբ Սուրէնեանցը, և միշտ նորա գործունեայ պաշտօնեայն գաղթականների գործերի մէջ. ուստի՝ երբ որ սրբազանը ընտրուեցաւ կաթողիկոս և պատրաստ էր վերադառնալ հայրենիք, նշանակեց սորան առաջնորդ Ռուսաս. (հայոց)։ Պոլսոյ կայսրը հաստատեց սորան այս պաշտօնի մէջ և վեցամսեայ արձակուրդ տուեց, որ Յովսէփ կաթողիկոսի հետ գնայ Էջմիածին եպիսկոպոսական աստիճան ստանալու համար։ Բայց Յովսէփը յանկարծ վախճանեցաւ Տփխիսում։ (թունաւորուած թէյ խմելու ժամանակ. «Յովսէփ կաթողիկոսն հրաւիրեաց յարբումն շայի. Տարէձան տէ Տօփալն, այսինքն՝ թագուհին, կինն Հերակլ թագաւորի, և ետ դեղ մահու յարբման շայի». տե՛ս. Պատմ. Կաթող. Էջմիածնի Մ. Մսերեանց. էջ 33. Մոսկուա. 1876 թ.)։ Այն ժամանակ Գրիգորը գնաց Էջմիածին և ձեռնադրուելով եպիսկոպոս Դաւիթ Նորընտիր կաթողիկոսից, վերադարձաւ Ռուսաստան։ Շատ հետաքրքրական էր Գրիգոր արքեպիսկոպոսի «ինքնաձեռագիր» կենսագրութիւնը, շարունակում է հ. Սուրէնեանցը, որ գրել է նա իբրև «ստոյգ և անպատրուակ խոստովանութիւն առաջի ամենայն մարդկան» և որից մենք անում են այս քաղուածը։ Այս թղթից երևում է որ նա՝ ձեռնադրուած լինելով Դաւթից, սորա գահընկէցութիւնից յետոյ գրգռում էր իւր դէմ հակա-Դաւթեանների և կամ Դանիէլեանների (Էջմիածնի նուիրակ Եփրեմի, Ներսիսի և Մանուէլ աբեղաների) թշնամութիւնը։ Եփրեմը բռնութեամբ սեպհականում է Ռուսաստանի առաջնորդութիւնը և Աղէքսանդր Ս. կայսրը՝ կամենալով հաշտեցնել այս երկու հայ հոգևորականներին, բաժանում է Ռուսաստանի վիճակը երկուսի մէջ, բայց երբ որ այս ևս լինում է անհնարին, հրամայում է՝ առաջնորդի համար արքունուստ սահմանուած ռոճիկը բաժանել

երկուսին հաւասար։ Սակայն և այս միջոցը չէ օգնում գործին։ Գրիգոր արքեպիսկոպոսը նոյն իսկ կայսերական հրամանով վերջապէս արտաքսվում է (1806 թ.) ոչ միայն մայրաքաղաքներից, այլ և Ռուսաստանից. բայց լինելով ճարտար և ռուսագէտ անձն, նա չէ վհատում և գնալով Օդեսսա, գտնում է Ռիշիլեօ դուքսի պաշտպանութիւնը։ Դուքսը ուրախութեամբ ընդունում է սորան և կարճ միջոցից յետոյ հաստատում է նորան Մոլդովիայի, Վալաքիայի և Բեսսարաբիայի առաջնորդ՝ անկախ էջմիածնի և Կոստանդնուպօլսի պատրիարքից։ Գրիգոր արքեպիսկոպոսը իւր բաղմամեայ ծառայութիւնների համար վարձատվեցաւ զանազան շքանշաններով և պարգևներով (ականակապ Աննա Ա., վեղարի ադամանդ խաչով, Վլադիմիրի Բ) և հրաւիրուեցաւ Աղէքսանդր Ա և Նիկողայոս կայսրների թագադրութիւններին։

Թէպէտև սա իւր կեանքում կրեց բաւականին դժուարութիւններ և հալածանքներ, կնքում է իւր խօսքը Հ. Ց. Սուրէնեանցը, այնու ամենայնիւ ազգը ունի իրաւունք պահանջելու նորանից աւելի ևս տոկունութիւն և դատապարտելու այն ուխտապանցութիւնը, որով նա հետամուտ էր լինում փառքի և առաջնորդական աստիճանի, մերժելով միանգամայն Հայաստանեայց Արարատեան Մայր Աթոռի Ծայրագոյն իշխանական իրաւունքը (տե՛ս Հարիւրամեակ Կենարար Սուրբ Խաչի Վերացման Մոսկվայի Հայոց եկեղեցւոյն։ Աշխատասիրութիւն Ա. ք. Յակոբայ Սուրէնեանց, էջ 18. Ռոստով, 1879)։

Այսպէս, ուրեմն, Հ. Ց. Սուրէնեանցն էլ Բեսսարաբիայի մեր ազգայնոց հետ կրկնում է այն մեղադրանքը, թէ Գրիգոր սրբազանը չէր ճանաչում էջմիածնի կաթողիկոսի գերիշխանութիւնը։ Այդ մեղադրանքը ծանր է և արդարացի. սակայն Գրիգորի վարմունքն էլ հասկանալի կըլինի, եթէ յիշենք թէ Գրիգորը՝ յաջողեցնելով Դաւթի կաթողիկոսութիւնը, նորանից եպիսկոպոսական աստիճանը ստանալու նպատակաւ, զինեց իւր դէմ Դանիէլի կուսակիցներին և ապա Եփրեմ կաթողիկոսին. բայց երբ համոզուեցաւ վերջապէս, թէ նոքա անզօր են իրեն վնասելու, արհամարհեց նոցա, խեղդեց իւր ամբողջ խղճմտանքի ձայնը մոռանալով միանգամայն՝ թէ նորա վաղեմի թշնամի Եփրեմը Հայոց կաթողիկոսն էր, որի առջև պէտք էր պատկառիլ, ապա թէ ոչ ըմբոստի անունը կարելի էր ժառանգել։ Անձնական կրքերը և փառասիրութիւնը կուրացրին Գրիգոր արքեպիսկոպոսին. ահա այդ

է պատճառը, որ Բեսսարաբիայում, որպէս և ամենայն տեղ, կարծիքները նորա մասին նպաստաւոր չեն, թէև իբր վարչական անձն, նա շատ ընդունակ մարդ էր երևում և գիտէր գրաւելու օտարների յարգանքը և նոցա օգնութեամբ յառաջ տանել թէ առաջնորդական և թէ իւր անձնական գործերը, ինչպէս վկայում է Մ. Աւագեանը, յենլով Բեսսարաբիայում տարածուած աւանդութիւնների վերայ։

Գրիգոր սրբազանի ընաւորութիւնը և փառասիրական ձգտումները նկարագրուած են Մսերեանցի հետևեալ երկասիրութեան մէջ «Պատմութիւն Կաթողիկոսաց Էջմիածնի 'ի Սիմէոնէ մինչ ցՅովհաննէս ամք Տեառն 1763—1831. Մոսկուա. տպագրութիւն Զարմայրայ Մսերեանց 1876»։ Ներկայումս տակաւին կենդանի են սրբազանի ազգականները Բեսսարաբիայում։ Նոքա կազմում են չորս, հինգ ընտանիք և բաւականին հարուստ են. իսկ իւր բարեգործութեամբ նոցանից յայտնի է միայն մի պատկառելի պառաւ տիկին, որ միշտ օգնում է չքաւոր հայերին և դորա համար վայելում է նոցա խորին յարգանքը և սէրը։

Խ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ.

Դեկտեմբ. 8-ին 1894 թ.

Մոսկուա.

ԾԽԱԿԱՆԱՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ

Անցեալ 1894 թ. ապրիլի 3-ին կայացած Ծխականաց ընդհանուր ժողովի ընտրութիւններն անվաւեր ճանաչուեցան թեմիս գերապատիւ կառավարչից և նշանակուեցաւ նոր ժողով, որ կայացաւ սեպտեմբերի 25-ին մի երէցփոխ, երկու անդամ և երկու փոխ-անդամ ընտրելու երեք տարի ժամանակով և երկու անդամ էլ կէս տարով։

Ձայների մեծամասնութեամբ ընդհանուր ժողովի նախագահ ընտրուեցաւ պ. Գ. Քանանեանցը, որ՝ նախ քան նախագահական աթոռի վերայ բազմելը, իւր պարտականութիւնը համարեց մի ընդարձակ ատենաբանութեամբ դիմել Ծխականներին։ Այդ ատենաբանութիւնը, որ տևեց համարեա $1^1/_2$ ժամ, արժանի է ուշադրութեան, ուստի և աւելորդ չենք համարում խօսել պարոնի յայտնած մի քանի մտքերի մասին։ Ամենից առաջ մենք հարկ ենք համարում նկատել, որ չէ կարելի այդպիսի դէպքերում օգտուել տրուած իրաւունքից, անվերջ խօսել և խօսել, հաւատացած լինելով, որ պատասխան ստանալ այդ ժամանակ դժուար է։ Եւ իրաւ, ուր կը հասնի դործը, եթէ

նախագահը $1^1/_2$ ժամ խօսի, երկու այդքան էլ պատասխանողները. անտարակոյս, ոչ մի կանոնաւոր ընտրութիւն այդ տեսակ պայմաններում չէ կարող կայանալ և այդպէս էլ եղաւ, թէպէտև պարոնին ոչ ոք չպատասխանեց այդ ընդարձակ ճառում յայտնած մի քանի տարօրինակ մտքերի առթիւ։

Պարոն հռետորը անհրաժեշտ համարեց մի յանձնարարական տալ իւր ուղղութեան մասին հասարակութեանը և ասաց, թէ նա կապուած է եկեղեցու և ճեմարանի հետ, որպէս երկու ազգային հաստատութիւնների հետ, որոնք գոյութիւն ունին Մոսկուայում, մոռանալով, որ Գասպարեան Անկելանոցն էլ գոյութիւն ունի, որի դահլիճում և տեղի ունէր այդ ընդհանուր ժողովը։ Սակայն ճառը վերջացնելուց յետոյ պարոնը և դործով ապացուցեց, որ արդարև կապուած է եկեղեցու, հետևաբար և նորա Պետի հետ։ Ընդհանուր ժողովից մի քանի օր առաջ Մոսկուայի Հայոց Եկեղեցեաց Խորհրդարանի անդամները բաղդ էին ունեցել ստանալ Ազգիս Վեհափառ Հայրապետից սրբատառ կոնդակ, որով Նա պատուիրում էր արժանավայել կերպով վարձատրել ազգի արժանաւոր քահանային, որ երկու-երեք տարուայ ընթացքում ենթարկուել էր բազմադիմի զրկանքի և հալածանքի։ «Ցուսամք,— ասած է Հայրապետական կոնդակում, — զի և Դուք բարեսէր անդամքդ եկեղեցական Խորհրդոյ Հայոց, ուշ եղեալ ամենայն հանգամանաց անցեալոց ընդ Ղազար քահանայն և գնահատելով զծառայութիւն նորա ի միջի Ձեր և զկրկին ճանապարհորդութիւն նորա, ոչ զլանայցէք ըստ արժանւոյն վարձատրել զնա Ձերովսանն ի փոխարինութիւն բազմադիմի զրկանաց, որոց ենթարկեցաւ արժանաւոր հովիւն ժողովրդեան Հայոց»։ Խորհրդարանը պարտք է համարում Նորին Վեհափառութեան կոնդակը կարդալ առաջիկայ ծխականաց ընդհանուր ժողովում և այդ մտքով

արձանագրութիւն է կազմում, որպէս զի ժողովուրդը լսելով Նորին Օծութեան հրաւէրը, կատարէ Նորա սուրբ կամքը: Ցաւ է մեզ արձանագրել այստեղ այն տխուր իրողութիւնը, որ տեղի ունեցաւ սեպտեմբերի 25-ին այդ ժողովում. եկեղեցու հետ կապուած պ. Նախագահը չը-թոյլատրեց կոնդակը կարդալ, թէև Խորհրդարանի փոխ-նախագահը երկու-երեք անգամ այդ առթիւ դիմեց պ. Նախագահին և յայտնեց, թէ Խորհրդարանը արձանա-գրութիւն ունի այդ մասին: Երևի, պ. Նախագահը լաւ ուսումնասիրել էր «Հրահանգը» և իւր խելքով կարծում էր, թէ համաձայն 42 յօդուածին չէ կարելի թոյլատրել կարդալ: Պարոնը լաւ պիտի հասկանար, որ Ազգիս Սատուածաբեալ Կաթողիկոսի կոնդակը չէ կարող ենթարկուել մի «Հրահանգի», որ հաստատուած է թեմական առաջնորդից. Նա նոյնպէս պիտի հասկանար, որ կոնդակը չէ կարող քննադատութեան առարկայ լինել, հետևաբար և ոչ մի արգելք կարող չէր լինել Նորին Սրբազնութեան կոնդակը կարդալու:

Պ. Քանանեանցը, որ մի և նոյն ժամանակ կապուած է, ի հարկէ միայն պաշտօնով, Լազարեան ճեմարանի հետ, ի լուր ամենեցուն յայտնեց, թէ կուսակցութեան չէ պատկանում, բայց նոցա հետ է, որոնք կապուած են եկեղեցու և այդ լուսատու հիմնարկութեան՝ այն է Լազարեան ճեմարանի հետ: Նա ընդունեց, որ Մոսկուայում միայն այդ երկու ազգային հիմնարկութիւններն են, որոնց հետ և պէտք է կապուել: Այստեղ մենք չենք տեսնում անկեղծութիւն պ. Քանանեանցի կողմից: Հասարակութիւնը ինքն իրեն չէ կարող կապել այդ հիմնարկութեան հետ, իսկ միաւորիչ օղակի դերը ամենայն հեշտութեամբ կարող էր կատարել յիշեալ պարոնը, և այդ նպատակին հասնելու կայ յարմարագոյն միջոց: Ցայտնի է, որ Լազարեան ճեմարանի կանոնադրութեան հիման վերայ նորա

տնտեսական խորհրդի համար անդամներ կարող են ընտրուիլ Մոսկուայի հայ հասարակութիւնից պատուաւորները։ Սակայն միշտ համարեա անիրագործուած է մնում այդ։ Ի՞նչ է դորա պատճառը. մի՞թէ Մոսկուայի հայ հասարակութեան մէջ չկան պատուաւոր անձինք, որոնք կարողանային պիտանի լինել այդ պատկառելի հիմնարկութեան։ Բացասական պատասխան դորան լինել կարող չէ, որովհետև երբեմն գտնուել են մարդիկ, որոնք արժանացել են այդ պատուին, սակայն մեզ անյայտ պատճառներից ստիպուած են եղել շուտով հեռանալ, հրաժարուել այդ պատուից։ Բայց ո՞վ գիտէ. թերևս այնտեղ գոյութիւն ունի հեռևեալ արձանագրութիւնը. «Մուտքը այստեղ արգելուած է այն ամենքին, որոնք կըկամենան բարեփոխութեան նպատակով ներս մտնել»։ Եւ մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ արդարև, ինքը պ. Քանանեանցը կապուած է այդ հիմնարկութեան հետ, իսկ հասարակութիւնը ներկայումս ոչ մի կապով չէ կապուած, և դա շատ հասկանալի է։

Մոսկուայի Հայոց Եկեղեցեաց Խորհրդարանը աւելի քան տասը տարի է որ գոյութիւն ունի։ Պ. Քանանեանը, միայն վերջին երկու-երեք տարին է, որ իւր ներկայութեամբ յարգում է Ծխականաց ընդհանուր ժողովները։ Այս անդամ նախագահ ընտրուելով՝ նա հարկ համարեց կարդալ ի գիտութիւն Ծխականների Բարձրագոյն հաստատուած կանոնադրութիւնը, սկսելով վերնագրից մինչև վերջ, եւ ենթադրելով, թէ հասարակութիւնը չի հասկանում ինչու է հաւաքուել՝ թէև մի քանի տարի է, որ այդ կանոնադրութիւնը տպագրուած է և բաժանվում է միշտ Ծխականներին։ Հասնելով երկրորդ յօդուածի ծանօթութեան, նա իւր կողմից բացատրութիւն տուեց, խօսելով մօտաւորապէս հետևեալ կերպով. կառավարութեան ձևը իսկապէս չէ փոխուել, իշխան Աբամելէք-Լազարեանն է

կենտրոնական մարմինը, իսկ հասարակութիւնը միայն օգնութեան է գալիս իշխանին, եկեղեցեաց պատուաւոր հոգաբարձուին։ Ի հարկէ, դա ինքն ըստ ինքեան անհեղեղութիւն է, որովհետև կառավարչական ամբողջ գործը կենտրոնացած է ծխականներից ընտրուած անդամների ձեռքում, հետևաբար ոչ մի կերպ իշխան Աբամելէք-Լազարեանը կենտրոնական մարմին լինել չէ կարող։ Բարձրագոյն հաստատուած կանոնադրութիւնից պարզ երևում է, որ իշ. Աբամելէք-Լազարեանը, լինելով մայրաքաղաքների եկեղեցեաց պատուաւոր հոգաբարձու և Խորհրդարանների նախագահ՝ առանձին արտօնութիւններ չէ վայելում. ձայների հաւասարութեան ժամանակ նորա կողմը դերակշռում է։ Այլ էր մի տասը տարի առաջ՝ երբ Խորհրդարանները գոյութիւն չունէին. կառավարչութեան ամբողջ դեկը այդ տոհմի ներկայացուցչի ձեռքին էր։ Այո՛, «առաջ, երբ կային հայ հասարակութեան մէջ պատուաւոր մարդիկ», գուցէ այդ չէր ասուիլ, իսկ այժմ, երբ Մոսկուայում՝ հայ «հասարակութիւն չկայ», այդ բոլորը կարող է անցնել։

Պ. Քանանեանցը յայտնեց իւր լայնածաւալ ճառում և այն նշանաւոր միտքը, որ խորհրդարանի այն անդամը, որի գործունէութիւնը հասարակութեան համակրելի չէ, իւր բարոյական պարտականութիւնը պիտի համարի հեռանալ և տպարէզ տալ աւելի ընդունակին։ Անտարակոյս այդ այդպէս է. բայց պէտք է իմանալ, արդեօք պ. Քանանեանը ծանօ՞թ է հասարակական կարծիքին, թէ իւր անձնական կարծիքը նա հասարակութեան կարծիք է համարում։ Մենք աւելի տրամադիր ենք կարծելու, որ պարոնը իւր անձնական կարծիքը հասարակութեան կարծիք է համարում, որովհետև, եթէ նա անձամբ տեղեակ լինէր հասարակական կարծիքին, անկասկած ուրիշ բան կ՚ասէր։ Կան, ի հարկէ, Մոսկուայում և «լայն

գաղափարներով» երիտասարդ վաճառականներ, որոնք ոչ մի դէպքում ցոյց չեն տուած իրենց լայնը գաղափարը, այլ միայն լսել ենք խօսքով նոցա մասին իրենց թմբկահար և փողահար առաջնորդի թղթակցութիւնից։ Այդ «լայն գաղափարով» մարդիկ ամեն բան կամենում են լայնացնել և երբեմն այնքան՝ որ մի բան հաստատ ու կանգուն մնալու տեղ քանդվում է և խորտակվում։ Գուցէ այդ «լայն գաղափարներով նոր մարդկանց» կողմից էր թարգման հանդիսացել պ. Քանանեանցը—այդ մենք չգիտենք։ Այնու ամենայնիւ համերաշխ և համամիտ լինելով պարոնին, մենք թոյլ կրտանք մեզ աւելացնել և մի փոքրիկ պայման. այն մարդը, որ տասնեակ տարիներ, կամ նոյն իսկ մի քանի տարի, արհամարհել է հասարակութիւնը և արհամարհուած է եղել հասարակութեան կողմից իւր տխրահռչակ գործունէութեան համար, չպիտի ընտրուի ոչ մի դէպքում և, եթէ նա գէթ սակաւիկ աղնուութիւն ունի, պիտի չմասնակցէ հասարակական որ և է գործի։ Եւ արդարև, ինչպէ՞ս կարելի է թոյլատրել, որ մէկը կամ միւսը անընդհատ արհամարհէ գոյութիւն ունեցող տեղական լաւ կամ վատ հասարակութիւնը, իսկ վաղը կամենայ, որ նոյն այդ լաւ կամ վատ հասարակութիւնը պատիւ տայ նորան, ներկայացուցիչ ընտրէ։ Երկուսից մէկը—կամ հասարակութիւնը գոյութիւն չպիտի ունենայ այդ տեսակ մարդկանց համար, կամ այդ տեսակ մարդիկ հասարակութեան համար։ Իսկ այն լայն գաղափարներով նոր մարդկանց, որոնք իրենց նպատակին հասնելու համար ամեն միջոց սուրբ են համարում և ամեն մի կեղտոտ դաշնակցութիւն կարող են կապել, մենք չենք կարող մեր ցաւակցութիւնը չյայտնել։

Նկատելի կերպով հակասեց ինքն իրեն պ. Քանանեանցը գործավարութեան ժամանակ։ Նա պարզ յայտնեց, որ Խորհրդարանը համարեա ոչինչ նշանակութիւն չունի,

որ կառավարութեան ձևը իսկապէս չէ փոխուել, հինն է մնացել, որ ամեն բան դարձեալ իշ. Աբամելէք-Լազարեանն է։ Նա պարզ ցոյց տուեց դորանով, թէ ինչ գունի մարդ է և ինչ հայեացքների ու համոզմունքների տէր է։ Բայց երբ վերջապէս նա իւր ատենաբանութեան վերջ տուեց, ծխականներից մէկը՝ «Հրահանգը» ձեռին բռնած, անընդհատ հարց էր առաջարկում, թէ ինչու են անցեալ ընտրութիւնները բեկուած։ Պատշաճաւոր տեղեկութիւն հաւաքելուց յետոյ՝ իմացանք, որ անցեալ անգամ ընտրուածների մէջ եղել է և յիշեալ պարոնը։ Պ. Քանանեանցը միանգամայն համաձայն էր յիշեալ պարոնի հետ և ասում էր, թէ «Հրահանգի» 42 յօդուածը պէտք է լայն հասկանալ, հետևաբար պէտք է Խորհրդարանի անդամներից բացատրութիւն պահանջել և պահանջել մինչև անգամ, որ Խորհրդարանի բողոքների առթիւ կայացրած արձանագրութիւնը կարդացուի։ Հարց առաջարկողը շատ էր կամենում իմանալ պատճառը, ասելով թէ այդ անհրաժեշտ է, որպէս զի մի և նոյն սխալները չկրկնուին, թէև դորա համար շատ դիւրին միջոց կար. վեց ամսում կարելի էր ուսումնասիրել «Հրահանգի» մի երկու տասնեակ յօդուածները։ Պ. Քանանեանը, որ շատ սահմանափակեց Խորհրդարանի նշանակութիւնը և հրապարակով ճանաչեց միայն իշ. Աբամելէք Լազարեանի գերիշխանութիւնը, զարմանալի է, որ այդ դէպքում թոյլատրեց անտեղի վիճաբանութիւններ և չասաց, թէ այդ իշխանի գործն է և ոչ թէ Խրհրդարանի։ Ի հարկէ, խօսքն ուրիշ բան է, գործը—ուրիշ։

Կարող ենք ասել թէ՛ բացատրութիւն պահանջողներին և թէ պ. Քանանեանցին, որ Խորհրդարանի անդամները միշտ պիտի բացատրութիւն տան հասարակութեանը ամեն մի գործի վերաբերմամբ։ Խորհրդարանի պ. փոխնախագահը՝ բանալով ընդհանուր ժողովը, կարդաց եկե-

ղեղեաց պ. Հոդաբարձուի գրութիւնը, ուր ոչ մի բացատրութիւն չէր տուած, թէ թեմիս Գերապատիւ Կառավարիչը ինչու է քանդել նախկին ընտրութիւնները։ Պ. Քանանեանը պիտի բաւականանար այդ թղթով և չթոյլատրէր ոչ մի վիճաբանութիւն այդ առթիւ։ Մեծ եղաւ մեր զարմանքը, որ նա լայն կերպով հասկացաւ Հրահանգի այդ 42 յօդուածը, սակայն timeo Danaos et dona ferentes. Բայց երևի այդպէս պէտք էր օրոշ նպատակների համար։

Իսկապէս Խորհրդարանին, գոնէ մինչև օրս, անյայտ են մնում այն պատճառները, որոնց հիման վերայ թեմական առաջնորդը կամ կառավարիչը բեկանում է ընտրութիւնները։ Խորհրդարանը ընդունելով ծխականաց կամ մինչև անգամ մի ծխականի տուած բողոքը, կայացնում է իւր եզրակացութիւնը և երկուսը միասին՝ բողոքն ու Խորհրդարանի կայացրած եզրակացութիւնը, ուղարկում է թեմական առաջնորդին կամ կառավարչին։ Անկասկած, թեմական առաջնորդը կարող է համակարծիք լինել Խորհրդարանի անդամներին և ոչ. Խորհրդարանը մի զեղծման կարող է կարևորութիւն չտալ, իսկ թեմական առաջնորդը կարող է աւելի ուշադրութիւն դարձնել այդ զեղծման վերայ և ընտրութիւններն անվաւեր ճանաչել։ Խորհրդարանը միայն ստանում է եկ. Հոդաբարձու իշ. Աբամելէք-Լազարեանից տեղեկութիւն, թէ թեմական առաջնորդը չէ հաստատել ընտրութիւնները և առաջարկում է նոր ժողով նշանակել. իսկ թէ ի՞նչ անկանոնութեան է թեմական առաջնորդը կարևորութիւն տուել, այդ Խորհրդարանին անյայտ է մնում։ Անկասկած, այդ պիտի յայտնուէր և Խորհրդարանին ղեկավարուելու համար։

Չենք կարող չյայտնել այս տեղ և այն անախորժ տպաւորութիւնը, որ մենք ստացանք անցեալ սեպտեմբերի

25-ին կայացած ընդհանուր ժողովում։ Այդ օր ամբողջ եօթանասուն հոգի ոտքի կանգնելով յարգեցին Խորհրդարանի անդամ հանգուցեալ Սերովբէ Շապովալեանի յիշատակը, իսկ գանուեցաւ մի անբարեկիրթ պարոն, որ անարժան համարեց, երեւի համոզմունքից, ոտքի կանգնել, և այդ պարոնին հասարակութեան մի որոշ մասը Խորհրդարանի փոխ-անդամ, իրեն ներկայացուցիչ է ընտրում։

Ժողովի վերջում պարոն Քանանեանցը կրկնեց իւր շարականում յայտնած մի ուրիշ նշանաւոր միտքը, թէ այսուհետև կըտիրէ սէր, միաբանութիւն և խաղաղութիւն Մոսկուայի հայ հասարակութեան։ Այդ առթիւ պ. Ս. Մամիկոնեանը պատասխանեց, թէ «Հայ հասարակութիւնը Մոսկուայում դոյութիւն է ունեցել մէկ ու կէս դար առաջ և դոյութիւն էլ կ'ունենայ. սէր և խաղաղութիւն եղել է Մոսկուայի հայերի մէջ և առաջ, թերևս աւելի լաւ կըլինի ապագայում, բայց չենք կարծում, որ այսօրուան օրը էրա կազմում լինի, նոր դարաշրջան լինի Մոսկուայի հայ հասարակութեան համար և կարիք չկայ այդ կապելու այս օրուան հետ»։

Յետոյ Ծխականներից մէկը առաջարկեց շնորհակալութիւն յայտնել պ. Գ. Քանանեանցին, որ այդպէս կանոնաւոր(!!!) կերպով գործը տարաւ և մինչև անդամ «տաքացրեց» նոցա։ Ներկայ եղողները արդարև շնորհակալութիւն յայտնեցին ծափահարութեամբ և կ'աւելացնենք, որ նախագահը այդօր ոչ միայն նոցա էր տաքացրել, այլ և անկելանոցի սառը պատերը։ Այդ անաչառ և անկեղծ մարդիկ աւելի գնահատելով պ. նախագահի վեց ժամուայ գործունէութիւնը, չկարողացան գնահատել և շնորհակալութիւն յայտնել Խորհրդարանի անդամ պ. Ս. Մամիկոնեանին իւր եօթնամեայ անպայման արդիւնաւէտ գործունէութեան համար, որի ժամանակը լրացած էր և այս անդամ հրաժարուեց քէուարկութիւնից։ Ի դէպ, ազատամիտների

թերթում իսկոյն լոյս տեսաւ մի անսաորագիր թղթակցութիւն, որի մէջ ասուած էր, թէ հին անդամներից ոչ ոք չընտրուեցաւ։ Եւ ինչպէս կամ ո՞վ կարող էր ընտրուիլ. հին անդամներից Ս. Շապուխեանն և Ն. Ներսիսեանը մեռած են. մնում էին պ.պ. Զ. Մսերեանցը, որ վաղուց հրաժարուել էր այդ պաշտօնից և Ս. Մամիկոնեանը։ Վերջինս հրաժարուեց քուէարկութիւնից, իսկ առաջնի անունը, չգիտեմ ինչպէս, ջնջուեցաւ քուէարկելիների ցուցակից, ինչպէս և շատ ուրիշ բացակայ ծխականներինը։ Ի հարկէ հներից ոչ ոք չէր կարող վերընտրուել։

Մեղանչած կըլինինք, եթէ այստեղ չխօսենք այն Սանխօ-Պանչոների մասին, որոնք ժամանակի և տեղի համեմատ քամելիոնի պէս կարող են փոփոխուել և մինչև անգամ հասարակական իրաւանց պաշտպան հանդիսանալ։ Դոցանից մէկը սկսեց խօսել այն մտքով, թէ Խորհրդարանի անդամը ընտրվում է հասարակութիւնից, հետևաբար նա պարտական է հասարակութեան հաշիւ տալ. իսկ հիմնուելով Հրահանգի այս կամ այն յօդուածի վերայ հրաժարուել բացատրութիւն տալուց՝ նշանակում է ոտնակոխ անել նոյն հասարակութեան իրաւունքը, որ ընտրել է անդամներին։ Մի անգամ ևս կարելի է և պէտք է ասել, որ Խորհրդարանի անդամները պարտական են բացատրութիւն տալ, բայց ընդհանուր ժողովից դուրս. իսկ եթէ ընդհանուր ժողովում հաշուի մասին այս կամ այն բացատրութիւնը տալիս են, որ կանոնադրութեամբ նոյնպէս արգելուած է, դա չէ նշանակում, որ Խորհրդարանի անդամները պիտի տեղի տան և նպաստեն երկար ու բարակ վիճաբանութիւնների։ Այդպէս խօսողները լաւ կ'անէին, եթէ այդ գործով ապացուցանէին այն ժամանակ, երբ արդարև հասարակութեան իրաւունքները ոտնահարվում էին ճաշէր մարդկանց կողմից։ Հասարակութեան իրաւունքներ պաշտպանողները այն ժամանակ, չգիտեմ, որ ծակն էին

մտել և ինչ խնկարկութեամբ ու փորաքարշութեամբ էին պարապվում։ Ամեն մի լարախաղաց ունենում է և մի ծաղրածու, որ ստորև խեղկատակութեամբ և միմոսութեամբ զբաղեցնում է նայողներին։ Էյ, հայկատակներ, անտման էք դուք ձեր դերում, շարունակեցէ՛ք ձեր գործը, —ձեզ փոխարինող չկայ։

Ինչպէս յայտնվում է եկեղեցեաց պ. հոգաբարձուի զրութիւնից սեպտեմբերի 25-ին կայացած ընտրութիւնները վիճակային կոնսիստորիան(?) բարեհաճել է կանոնաւոր համարել և հաստատել։ Սակայն պէտք է աւելացնել, որ պ. հոգաբարձուի թղթից չէ երևում, նա ներկայացրել է թեմիս կառավարչին ծխականաց բողոքը և Խորհրդարանի եզրակացութիւնը թէ ոչ։

Այսպէս, թէ այնպէս ընտրութիւնները հաստատուած են և այն՝ Վիճակային Կոնսիստորիայի կողմից, որի նախանդամն է արժ. Յուսիկ վ. Մովսիսեանը, իսկ անդամները—երկու քահանայ։ Մեր սեպուհ պարտականութիւնն ենք համարում այստեղ ընդարձակել մեր խօսքը, հրապարակ հանել կատարուած անկանոնութիւնները և ցոյց տալ, թէ որքան իրաւունք ունէր Վիճակային Կոնսիստորիան հաստատելու այդ տեսակ ընտրութիւններ։ Ընտրութիւնների դէմ բողոքել էին երեսուն ծխական և նուաստս, որպէս նոյն Խորհրդարանի անդամ։ Ծխականները իրենց բողոքում ցոյց էին տուել հետևեալ անկանոնութիւնները. 1) Ընդհանուր ժողովին ներկայ էր և մասնակցում էր ընտրութիւններին պ. Մ. Տէրեանը, որ նշանակած 25 տարիքը չունէր համաձայն Բարձրագոյն հաստատուած կանոնագրութեան 4 կէտին, հետևաբար և չէր կարող մասնակցել ընտրութիւններին, և երկու տարի շարունակ չէր եղել ծխականաց ցուցակում, համաձայն Ներք. Գործ.

Նախարարութեան տուած մեկնութեան 1885 թ. մարտի 29, № 1460. 2). Ուշացածների համար մուտքը չէր արգելուած՝ համաձայն Հրահանգի 36 յօդուածին և մի քանիսները ներս են մտել (անունները յիշուած են). 3) Քուէարկութեան չեն ենթարկուել թղթերով ձայն ստացած և ընդհանուր ժողովից բացակայ ծխականները — պ.պ. Զ. Մսերեանց, Է. Պապով և Ա. Մասլով. 4) Համաձայն Հրահանգի 39-դ յօդուածին՝ պ.պ. Մ. Քանանեանցի և Իս. Ծամհարեանցի փոխարէն, որոնք ընդհանուր ժողովից բացակայ էին, չընտրուեցան ներկայ եղողներից անձնափոխանորդներ ի դէպս նոցա հրաժարման. 5) Բացակայ ծխականներից շատերը, որոնք ձայներ էին ստացել տոմսակով, քուէարկութեան չէին ենթարկվում առանց որ և է դրական պատճառի և ով որ կամենում էր, հանում էր իւր բացակայ ծանօթի քուէարկութիւնը:

Բացի այդ դեղծումներից ծխականներից մէկը ցոյց էր տուել և հեռաւորը. պպ. Մ. Մուրադեանը, Ար. Զարգարեանցը, Կ. Կուսիկեանցը և Եր. Թաղիանոսեանցը իրաւունք չունէին ընտրուելու, որովհետև երկու տարի չեն եղել ծխականաց ցուցակում, համաձայն Ներքին Գործոց Նախարարութեան տուած մեկնութեան (1885 թ. մարտի 29, № 1460):

Խորհրդարանի անդամ մանրամասնօրէն բացատրութիւն էի ներկայացրել Խորհրդարանին, թէ ինչ հանգամանքներից դրդուած չէի ստորագրել ընդհանուր ժողովի արձանագրութիւնը: Մի քանի դէպքում ծխականաց ցոյց տուած անկանոնութիւններն և յիշեալ բացատրութեան մէջ առաջ բերած շեղումները միմեանց համապատասխանում են: Սակայն կան կէտեր, որ չեն համապատասխանում: Այսպէս իմ բացատրութեան մէջ ես ի միջի այլոց ասում եմ, թէ լիովին խախտուած է Հրահանգի 42 յօդուածը, որ հիմնուած է Ներքին Գործոց Նախարարութեան տուած

մեկնութեան վերայ (1888 թ. մայիսի 23-իյ № 2681)։ Յետոյ ես ցոյց եմ տուել, որ բժ. Գ. Գասպարեանցի քուէները կիտուել էին քուէատուփի մի կողմում, իսկ միւս կողմը շատ քիչ էր ընկել. բաւականանալ դորանով չէր կարելի և պէտք էր անպայման նորից քուէարկել յիշեալ պարոնին։ Ընդհանրապէս տիրում էր կատարեալ անկարգութիւն. արձանագրութիւնը կազմվում էր առանձին սենեակում և պատրաստ բերին կարդալու. փոփոխութիւն և նկատողութիւն չէր ներմուծվում, միայն որպէս յաւելուած դրին պ. Կ. Կուսիկեանի ընտրութեան արձանագրութիւնը։ Նախագահը ուղեցածի չափ խօսեց, մի ժամից աւել էլ անտեղի վիճաբանութիւնների նուիրեց. պարզ է, որ ժամանակի սղութեան պատճառով մի կերպ պիտի կրճատէր, շտապեցնէր, որ գործը գլուխ գար։

Որքան ես յիշում եմ, Խորհրդարանը այդ բողոքների առթիւ մօտաւորապէս հետևեալ բովանդակութեամբ եզրակացութիւն կայացրեց. 1) Ընդհանուր ժողովում ներկայ է եղել և մասնակցել ընտրութիւններին Մ. Տէրեան, որ, ինչպէս յետոյ իմացուեցաւ աւագ քահանայից, որոշեալ 25 տարիքը չունէր, որպէս զի լիապօր իրաւունք ունենար ներկայ լինելու և մասնակցելու ընտրութիւններին, ինչպէս այդ պահանջում է Բարձրագոյն հաստատուած կանոնադրութեան 4 կէտը։ Խորհրդարանը բոլորովին չէր ենթադրում, որ Մ. Տէրեանը, լինելով համալսարանական, իւր տարիքը կրճատելով և գայթակղութեան մէջ կրձգէր Խորհրդարանը։ 2) Ներկայ եղողների թիւը որոշելուց յետոյ մուտքը արգելուած էր ուշացածների համար։ 3) Որ քուէարկութեան չեն ենթարկուել տոմսակներով ձայներ ստացած՝ ընդհանուր ժողովից բացակայ հետևեալ պարոնները, որպէս անդամ Խորհրդարանի—պ.պ. Զ. Մսերեանց, Գ. Լիանոզեանց, Ս. Զանումեանց, Յով. Ժամհարեանց, Ա. Մասլեան, Կ. Ալաջալեան. որպէս կանդիդատներ—պ.պ.

Իս. Պողով, Տ. Էկիպլէր, Ս. Զանուվեանց. որպէս երէց-փոխ—պ. Ա.ր. Հէջուբեան։ Խորհրդարանը պահել էր այն բոլոր տոմսակները, որոնց վերայ ծխականները գրել էին իրենց ընտրելիներին և վերաստուգելով՝ տեսաւ, որ ոչ թէ երեք-չորս հոգի չէին ենթարկուած քուէարկութեան, այլ շատերը, որոնց անունները մենք առաջ բերինք։ 4) Որ ընդհանուր ժողովից բացակայ պ.պ. Մ. Քանանեանցի և Իս. Ժամհարեանցի տեղ անձնափոխանորդներ չեն ընտրուած ներկայ գտնուող ծխականներից։ Առաջնի համար երաշխաւոր եղաւ ընդհանուր ժողովի նախագահ պ. Գ. Քանանովը, իսկ երկրորդի համար պ. Ա.թ. Ժամհարեանը, ասելով, թէ կարծում է, որ եղբայրը կը համաձայնի ընդունել ընտրութիւնը, եթէ այդ միաձայն լինի։ Տարաբախտաբար ընդհանուր ժողովի արձանագրութեան մէջ այդ հանգամանքն էլ ճիշդ չէ արձանագրուած։

Դառնալով այն հարցին՝ իրաւունք ունէին ընտրուելու պ.պ. Մուրադեան, Զարդարեանց, Կուսիկեանց և Թագիանոսեանց, թէ ոչ, Խորհրդարանը բացատրել էր, թէ չունի այնպիսի ցուցակ, ուր ծխականները առաջուց նշանակէին (Ներք. Գործ. Նախ. մեկ. 1885 թ. № 1460 մարտի 29) իրենց անունները. կայ արդարև հասցէների մատեան, սակայն այստեղ ոչ ոք ոչինչ չէ նշանակում (Հրահ. § 86)։ Սոյն 1894 թ. յունիսի 25-ի նստում Խորհրդարանը որոշել էր ուղարկել բոլոր ծխականներին թերթեր, խնդրելով որ հաղորդեն Հրահանգի 86 յօդուածի պահանջած տեղեկութիւնները. սակայն ամառը՝ շատերի բացակայութեան պատճառով՝ այդ յետաձգուեցաւ մինչև աշուն. իսկ ուսանողներին աւարտելուց յետոյ մնցնում է ծխականաց ցուցակը, աչքի առաջ ունենալով, որ նոքա 4—5 տարի Մոսկուայում են լինում։ Նուաստս բացատրութիւնը վճռուեց քննադատութեան չենթարկել, այլ ուղարկել թեմիս գերապ. կառավարչի բարեհայեցողութեան։

Վիճակային Կոնսիստորիան հաստատելով այդ տեսակ անկանոն ընտրութիւններ, բաւական չէ որ խախտում է ոչ միայն թեմական առաջնորդից հաստատուած հրահանգը, այլ և Բարձրագոյն հաստատուած կանոնագրութեան և Ներք. Գոր. Նախ. տուած մեկնութիւններին դէմ է գնում։ Հարցնում ենք այժմ. իւրաքանչիւր ոք, որ չունի նշանակած 25 տարիքը, կարո՞ղ է ներկայ լինել և մասնակցել ընտրութիւններին, թէ այդ ներելի է միայն մէկին, երկուսին, երեքին։ Ով ում քուէարկութիւնը կամենայ, կարո՞ղ է հանել, թէ այդ կարելի է թողնել այս կամ այն կուսակցութեան, որ իրենց նպատակներին հասնելու համար հանեն բացակաների քուէարկութիւնը և իրենց մարդկանց առաջ տանեն։ Ընդհանուր ժողովից բացակայ բայց ընտրուած ծխականին անձնատիսխանորդ պէ՞տք է ընտրել, թէ կարելի է ամեն մէկի երաշխաւորութեամբ բաւականանալ։ Այս դէպքում մենք չենք տեսնում ոչ մի արդարամտութիւն և հեռատեսութիւն Կոնսիստորիայի կողմից։ Այդ ընտրութիւնների հաստատութեամբ նա պարզ ցոյց է տալիս, որ ապագայում էս այդ անկանոնութիւնները կարելի է կրկնել և ընտրութիւնները կարող են հաստատուել։ Սակայն այդ բոլորի մասին հետաքրքրական է, թէ ինչ պատասխան պիտի տան Խորհրդարանի նոր անդամները և ինչպէս ապագայում պիտի կարողանան այդ տեսակ անկանոնութիւնների առաջն առնել, քանի որ իրենք այդ պայմաններումն են ընտրուած և հաստատուած։

Թո՞ղ յիշեալ պարոնները մի բոպէ մտածէին, որ դուռը կոտրելով և ներս մտնելով չէ կարելի վայելել հասարակութեան համակրանքն և պատիւ ստանալ նորանից։ Այդ է պատճառը, որ երկու երէցփոխան ընտրուածներից և ոչ մէկը չէ կամենում ստանձնել այդ պատուաւոր պաշտօնը, որովհետև տեսնում են, թէ ինչ պայմաններում են կատարվում ընտրութիւնները։ Բայց չէ որ լաւ

երէցփոխանը անհամեմատ օգտակար կարող է լինել եկեղեցեաց համար, քան նոյն իսկ այժմեան Խորհրդարանը մինչև անգամ քառապատիկ աւելի այդպիսի անդամների կազմութեամբ։

Հասարակութեան մէջ լուր է տարածուած, որ ծխականների մի որոշ խումբ առանձին թուղթ է ուղարկել թեմիս գերապատիւ կառավարչի թէ հոգաբարձուի անունով, խնդրելով որ սեպտեմբերի 25-ի ընտրութիւնները հաստատուին, առարկելով թէ բողոքատուների ցոյց տուած անկանոնութիւնները, երևի, տեղի չեն ունեցել։ Ասում են նոյնպէս, թէ այդ թղթին ստորագրել են նոյն ժողովում Խորհրդարանի անդամ ընտրուածներից մի քանիսը։ Մենք դժուարանում ենք հաւատալ այդ բանին, թեև մեզ հաւատացնում են, որ այդ եղել է։ Եթէ այդ ճիշդ է, այն ժամանակ շատ զարմանալի է, թէ ի՞նչ ինքնասիրութիւն և պատուաձանաչութիւն ունին ստորագրողները, որ իրենք իրենց համար աշխատում, խնդրում և աղերսում են, որ հաստատեն, ի հարկէ լաւ իմանալով, որ եթէ այս անդամ էլ չյաջողուի, էլ երբէք չի յաջողուելու, ինչպէս և չէր յաջողվում։ Այն մարդը, որ ընդհանուր ժողովում ընտրվում է 27 ձայնով ընդդէմ 24-ի և որի դէմ 30 մարդ բողոքում է, ի՞նչ պատուասիրութիւն պիտի ունենայ, որ դիմէ և խնդրէ, իրեն հաստատեն, և Կոնսիստորիան առանց՝ այլ և այլութեան հաստատում է։ Մենք չենք խօսում և այն հանգամանքի մասին, որ Խորհրդարանի թղթերը այս դէպքում իրենց կանոնաւոր ընթացքից շեղուել են. . .

Մ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ.

„ՍԱԼԴԱՏՍԿԻ ԲԱԶԱՐԻ“

ՊՈՒԲԼԻՑԻՍՏԻՆ.

«Հանդիսի» հինգերորդ գրքում, խօսելով բար. Արշէն Էրէցի և գեր. Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի յայտնի «Ո՞վ հաւատաց» յօդուածների մասին, մենք մի տեղ ասել էինք. «գտնուեցան և այնպիսիները, որոնք գերադասեցին լռել, որովհետև նոքա միաժամանակ երկու տան կատու կամին լինել»։ Առանց հասցէի մեր գրած այս տողերը ամենաապահով կերպով տեղ են հասել։ Բայց այդ բանը մեզ արժան չնստաւ. մեր մոլորութեան արժանի վարձը առատ կշտամբանքներով ու նախատինքներով ստացանք դերձակների և կար անող կանանց օրգան «Տարազ» շաբաթաթերթից. սակայն մեր պարտքն է ո՛չ թէ վշտանալ չարաձձի երեխաների թեթև ամիտ վարմունքից, այլ նոցա մի բան հասկացնել և մենք՝ յարգելով այդ անտէր «Տարազ» շաբաթաթերթի պ. Հալլուն աշխատակցի գէթ մարդկային արժանաւորութիւնը, կրկատարենք մեր բարոյական պարտքը, ենթադրելով, որ, եթէ ոչ լիովին, գոնէ մասամբ կըհասնենք մեր նպատակին, թէև, ճշմարիտն ասած, քիչ յոյս ունինք...

«Տարազ» շաբաթաթերթը, արժանացնելով իւր բարձր ուշադրութեան մեր հրատարակութիւնը և մեզ, երկու համարում (1894 թ. №№ 35—36) մի ընդարձակ մատենախօսական յօդուած է զետեղել, անողոք և լուրջ քննադատական բովի ենթարկելով, ի հարկէ, ինչպէս վայել է այդ դատարկ կարաս «Տարազ» շաբաթաթերթին։ Մենք երբէք չէինք ենթադրում, որ այդ թերթոնն

էլ ունի վայելուչ, պարտ ու պատշաճ խմբագրութիւն, «ձեռնհաս խմբագրական մարմնի բով», բայց բանից դուրս է գալիս, որ ունի. գոնէ այդպէս պէտք է հասկանալ պ. Հալունի յօդուածից։ Միւս կողմից էլ մարդ շուարած մնում է. եթէ կայ «խմբագրական ձեռնհաս մարմնի բով», այն ժամանակ ինչպէ՞ս կարող էր լոյս տեսնել յիշեալ մատենախօսական յօդուածը, կամ թէ պէտք է ենթադրել, որ մարմինը կայ, իսկ խելք ու միտքը չկայ։ Որքան մենք կարողացել ենք նկատել, պ. Տիգրան Նաղարեանը, մի քանի հրատարակութիւնների այդ եզակի խմբագիրը, միշտ հակառակ է եղել ծանրախոհ ու լուրջ խմբագրական մարմիններին և միշտ էլ աշխատել է «զիզի-պիզի» բաներով բաժանորդներ գրաւել։ Այնու ամենայնիւ մեր շնորհակալիքը յայտնում ենք այդ թերթիկին իւր ցոյց տուած ուշադրութեան համար։ Սակայն չենք կարող չհրաժարուել այն պատուից, որին նա մեզ արժանացնում է, համեմատելով «Հանդէսը» պ. Ս. Գուլամիրեանի «Արաքսի» հետ. ոտովգլխով հրաժարվում ենք այդ պատուից, որովհետև անարժան ենք։ Եւ պէտք է խղճմտանքով խօսել. ո՞վ կ'ուրանայ, որ եթէ մի բան կարելի է «Արաքսի» հետ համեմատել, — այդ անպայման «Տարազն» է։ Երկուսն էլ ներքին բովանդակութիւնից փախչող, արտաքին տեսքի հետևից ընկնող. մէկը պատկերազարդ է, միւսը— պատկերաջարդ, մէկը իւր պատկերներով կամենում է աչք շլացնել, միւսը—աչք քոռացնել. երկուսն էլ դրսից կարմիր, ներսից փթած խնձորներ են։ Բայց ներեցէք, մենք մոռացանք, որ Փարիզում, Լոնդոնում, Բերլինում, Լայպցիգում ահագին քանակութեամբ «Տարազի» պատուէրները դեռ չեն ստացուել, իսկ առայժմ խմբագրութիւնը եօլայ է գնում հին-փթած կլիշէներով։ Անկասկած, երբ բաժանորդագրութեան ժամանակը մօտենայ, նա բեկլամներով հարա՛յ-հրոց կբարձրացնէ և կ'ասէ, թէ ո՛չ մի ջանք չենք խնայիլ նորան շքեղացնելու և հարստացնելու. իսկ միամիտ ժողովրդի համար բաւական է և մի երկու փոքր ի շատէ բաւարար տետրակ հրատարակել... Աստուծով, «խորոզի փոշտով» այդ պատուէրներն էլ կըստացուին, և բաժանորդներն էլ կըհասնեն իրենց մուրազին։

Մենք էլ ենք զարմանում, որ «Տարազի» իմաստուն աշխատակիցը, գտնելով, որ «Հանդիսի» նիւթերը «անմշակ են մեծ մասամբ, գրականական խակութիւններ են, մարսելն այնքան էլ հեշտ չէ», դարձեալ արժան է գտնում երկու համարում երկար

ու բարակ խօսել այդ «անմշակ և անմարսելի գրականական խակուռթիւնների մասին»։ Բաւական կը լինէր, կարծում ենք, մի թռուցիկ ակնարկ և, որ աւելի պատշաճաւոր է, արհամարհանք։ Բայց ոչ, նա շատ է խօսում և խօսում է որոշ տենդենցիայով. իսկ ընդհանուր տպաւորութիւնը այն է, որ գրողն անպայման հիւանդ, զայրացած, դիւրագրգիռ մարդ պիտի լինի։ Գրողի այդ կողմը մեզ համար հետաքրքրական չէ. մենք միայն կամենում ենք ցոյց տալ, թէ որքան անտանելի է, երբ դերձակը մոռանում է իւր արհեստը, թողնում է ասեղն ու մկրատը և սկսում է գրիչ բռնեցնել, այն էլ ոչ տարազի մասին։

Դերձակներն ու կարանող կանայք ի հարկէ միշտ ուշադրութիւն են դարձնում արտաքինի վերայ, որ եթէ իրենց «միւշտերիներին» մի բան պէտք լինի, իսկոյն իրենց ծառայութիւնը առաջարկեն։ Հաւատարիմ է մնացել այդ յատկութեան և «Տարազի» աշխատակիցը։ Նորան հարկաւոր է արտաքին տեսք, նորան դուր չի գալիս, որ «Հանդէսը» «հագնում է մոխրագոյն կերպարանք», այսինքն՝ վատ թղթի վերայ է տպվում։ Դորա առթիւ մենք ասելիք չունինք. մեր նպատակն է եղել միշտ բովանդակութիւնը հարստացնել և ոչ թէ արտաքին շքեղութեան վերայ առանձին ուշք դարձնել։ Խնդրելով աւելուած «Տարազ» թերթիկի ներողամտութիւնը, կ'աշխատենք ապագայում, եթէ հանգամանքները ներեն, այդ պակասը լրացնել։ Թող չվշտանայ «Տարազը» մոխրագոյն կերպարանքից, բայց նորան պէտք է մտածել դեղին գունի էմբլէմայից ազատուելու մասին, որին նա այնքան հաւատարիմ է։

Աչքի է ընկնում նոյնպէս երեխաների թերթի յայտնած այն միտքը, թէ «Հանդիսի» և «Արաքսի» անհամութիւնն էլ այն է, «որ նրանք մի մի մտնում են հրապարակախօսութեան ասպարէզը և խօսում են ժամանակակից հարցերի մասին»։ Այդ թերթից անշուշտ աւելի լայն հայեացք պահանջել մենք չենք կարող, քանի որ նորա զլխաւոր ուղղութիւնն կարուձեւն է։ Տարարախտարար «Հանդէսը» մի անգամ է միայն խօսել հասարակական հարցերի մասին և այդ էլ Սեդրակեան եպիսկոպոսի յայտնի յօդուածի առթիւ։ Թէ ինչումն է կայանում անհամութիւնը, այդ մեզ չէ բացատրում խելօք քննադատը։ Բայց մենք կարծում ենք, որ ժամանակակից հարցերի մասին իւրաքանչիւր ոք իրաւունք ունի խօսելու, եթէ միայն նա վստահանում է իւր ասելիքը հրապա-

բակաւ ասել և յոյս էլ ունի, որ կրկարողանայ իւր յայտնած միտքը պաշտպանել։ Քննել, հերքել, ընդունել կամ մերժել մէկի ասածը անշուշտ միւսը կարող է. բայց թէ ինչու օրինակ՝ «Տարազին» կարելի է հասարակական հարցերի մասին խօսել, իսկ «Հանդիսին» կամ «Արաքսին»—չէ, այդ մենք չենք հասկանում և մեկնութիւն կամ բացատրութիւն էլ չենք գտնում պ. Հաւլունի յօդուածում։ Եւ ինչո՞ւ չկամենալ, որ ուրիշներն էլ իրենց կարծիքը յայտնեն,—դա արդէն կատարեալ անհամբերողութիւն է և մտքի կարճութիւն։ Մի այդպիսի օրինակ էլ «Մշակ» լրագիրն է. երբ մի որ և է նոր թերթ կամ ժողովածու պիտի հրատարակուի, իսկոյն սկսում է ատամները սրել և ամեն կերպ աշխատում է առաջուց կծել։ Դա էլ մեր ազատամտութիւնն է։ Ընդհանրապէս երևում է, որ յարգելի քննադատը աւելի մեծամիտ է, քան հարկաւոր է և վայել նորան։

Խստապահանջ մատենախօսը ասում է, թէ Պերճ Պռոշեանցի գրուածի միտքը մի տողում կարելի է տեղաւորել, բայց և այնպէս հարկ է համարում նորա մասին 75 տող գրել։ Պարզ է, որ պարոնը չի իմանում, թէ ինչ է ասում և ինչ է անում։ Իսկ իւր յօդուածում յայտնած մտքերով ապացուցանում է, որ բոլորովին զուրկ է որ և է գեղարուեստական ճաշակից։ Նոյնը երևում է և «Թադուհու արտասուքը» թարգմանութեան մասին յայտնած կարծիքից։

«Գրքի մէջ տպած ինքնուրոյն բանաստեղծութիւններից մի քանիսը,—ասում է պարոնը,—լաւ աջողած են»։ Սորանից դեռ մենք չենք իմանում, թէ որն է աջող կամ որն է անյաջող, որպէս զի մենք էլ օգտուէինք այդ յօդուածից։ Բայց որովհետև նա ստիպուած պիտի լինի շատ պատասխանատու և ծանր գործի մասին խօսել, և գուցէ չկարողանայ էլ վերջ ի վերջոյ մի որոշ միտք յայտնել, պարոնը բաւականացել է մի քանի անգամ քացի տալով առաջ գնալ։ Նորա վերայ լաւ տպաւորութիւն է գործել պ. Յովհաննէս Կոստանեանցի «Հասարակաց խումբը և աշուղը» վերնագրով բանաստեղծութիւնը և գիտէք գլխաւորապէս ինչու համար,—որովհետև «Տարազին» աշխատակցելու պատիւն է վայելում։ Հակառակ դէպքում նա էլ միւսների վիճակին կ'ենթարկուէր, թէպէտև պ. Կոստանեանցի մասին էլ ոչինչ գրական բան չի ասում և ցոյց չէ տալիս արժանիքը։

Պատմական յօդուածների մասին ասում է, թէ «Հանդիսի»

մեծ մասն են բռնում (ճիշտ 100 երես, այսինքն գրքի քառորդ մասը) և նոցա մասին խոսելիք չունի ո՛չ թէ նորա համար, որ ասելիք չունի, այլ նորա համար, որ տեսութիւնը համառօտ է։ Պարոնը ի հարկէ այնքան պատուասէր է, որ չէ կամենում խոստովանել իւր անպատրաստականութիւնը, այլ պատճառ է բերում տեսութեան համառօտութիւնը։

Ողորմելի և շատ խղճալի է մեր հիւանդ մատենախօսը, երբ խօսում է պ. Ա. Ծատուրեանի մի գրուածքի առթիւ, որ կրում է «Գամառ-Քաթիպայի թարմ շիրմի առաջ» խորագիրը։ Արդէն ինքը վերնագիրը ցոյց է տալիս, որ այդ գրուածքը խոր զգացուած մի սրտի զեղմունք է. բայց սառնասիրտ քննադատը այդ բոլորը «որոտընդոստ, ճրճռան ֆրազներ» է համարում։ Նա զայրանում է, թէ ինչ իրաւունքով հեղինակը ասում է. «Դարեր կըգան, դարեր կ'անցնեն. մէկ սերունդին կըյաջորդէ միւսը, երկրորդին՝ երրորդը, — սակայն ազգային պաշտելի բանաստեղծի կենդանի երգը, որպէս հայրենասիրութեան մի մեծ դաս, հանապազ կ'աւանդուի սերունդից սերունդ»։ Պ. Հաւլունը այդ «լաւ սերտած բառեր և ծակ մարգարէութիւն» է համարում։ Այդ նշանաւոր քննադատը, որ անկասկած իւր չափովն է չափում ուրիշներին, այսինքն իւր ջերմախտի զառանցանքը ուրիշին է վերագրում, արգելում է հրաման արձակել ապագայ սերունդին։ Նա մոռանում է, որ այդտեղ հրաման չէ արձակուած, այլ այնպիսի մի փաստ է առաջ բերած, որ «Տարազի» խմբագիրը իւր բոլոր աշխատակիցների հետ միասին հերքել չեն կարող։ Եթէ պարոն Հաւլունի գրուածը ջերմախտի զառանցանք չլինէր, այն ժամանակ նա չէր կարող այսպիսի բան գրել. «այսօր մեծ է Գամառ-Քաթիպան մեզ համար, անփոխարինելի է. բայց ինչո՞ւ կեղծել, ինչո՞ւ չասել, որ դարերի պատմութեան մէջ մ'ե՛ն ք մի շատ ընչին հետք կըթողնենք»։ Եթէ պ. Հաւլունը, կրկնում ենք, հիւանդ չլինէր, նա երբէք իրեն և մեզ չէր խառնիլ Գամառ-Քաթիպայի հետ։ Պ. Ա. Ծատուրեանը խօսում է Գամառ-Քաթիպայի մասին, պ. Հաւլունը մեր ընդհանուրիս մասին։ Առաջին սխալը անելուց յետոյ, նա կամենում է ապացուցանել իւր խակամտութիւնը։ «Ապացոյց մեզ համար, — ասում է անողոք քննադատը, — հէնց այն մեծամտութիւնը, որով խօսում ենք հեռաւոր դարերի և սերունդների անունից և խօսում ենք ի՞նչպէս. մեր թոյլ, մեր անհաս-

տատ գործը յանձնում ենք նրանց իբրև մի մեծ աւանդ. մեր մտավախութիւնը, մեր նեղ ու սահմանափակ հայեացքները անմահ ենք հրատարակում»։ Քանի որ խօսքը Գամառ-Քաթիպայի մասին է, պէտք է հասկանալ, որ հանգուցեալ բանաստեղծի գրած երգերը թոյլ և անհաստատ են, որ նորա մտավախութիւնը, նեղ ու սահմանափակ հայեացքները անմահ ենք հրատարակում։ Այդպիսի մի անվայել անարգանքի առթիւ, որին ենթարկվում է հանգուցեալ բանաստեղծի յիշատակը, մենք չենք կարող ոչինչ ասել. միայն ներողամիտ կարելի է լինել, որովհետև գրողը ջերմախտի զառանցանքի մէջ է գտնուել։ Եւ այդպիսի մարդիկ յանդգնութիւն ունին իրենց լրբութեամբ հանդերձ ասպարէզ դուրս գալ և ուրիշներին լան սովորեցնել։ Գամառ-Քաթիպան մենք չէ և մենք էլ Գամառ-Քաթիպա չենք. միմեանց հետ շփոթել դոցա կարող է միայն խելքով տկարը կամ զառանցանքի մէջ տառապողը, իսկ այդ անարգանքը մի անջնջելի բիծ կըլինի, որով կըդրոշմուի «Տարազ» թերթիկի ճակատը։ Այո՛, եթէ դուք մտաւորապէս այնքան կաշկանդուած էք, պ. Հաւի լու, որ չէք կարող մի քայլ առաջ անել, այն ժամանակ ձեր խախտուած ուղեղն ու ջախջախուած գրիչը թողէք և հանգիստ նստէք։

Մի և նոյն այդ «Տարազ» շաբաթաթերթը 1892 թ. օգոստոսի 30-ին № 33 տպելով Ռափայէլ Պատկանեանի մահացուցակը, տեսէք, թէ ինչ խօսքերով է ողբում այդ մեծ կորուստը, որպէս զի երկու տարուց յետոյ ամենաանպատկառ լեզուով անուանարկէ հանգուցեալ բանաստեղծի յիշատակը իւր աննման հաւլուն աշխատակցի բերանով։

«Ո՞րքան հեշտ է ասել մեռաւ Ռափայէլ Պատկանեանը։ Բայց մի՞թէ Պատկանեանը կարող է մեռնել, թաղուել։ Ճիշդ է, նա մեռաւ, սառը գերեզմանում նրա մահկանացուն սև հող պիտի դառնայ, բայց նրա երգերը մի-մի կոթող են ամէն հայի հոգու սրտի մէջ։... Այսօր մենք թաղում ենք մեր ամենաքաղցր յոյսերի հղօր արտայայտողին, մեր թանգ մտորմունքի խրախուսողին ու հրապուրողին, մեր հայրենեաց քաջահնչիւն և սրտատոչոր մուզայի ջերմ և աղդու խօսնակին...»։

Ամօթ չլինի հարցնել. ա՞յն ժամանակն էր «Տարազը» անկեղծ և խելք խօսում, թէ այժմ։ Եթէ «Տարազի» աշխատակցի խօսքը լինէր Գամառ-Քաթիպայի գործերին նուիրած մի քննադատական յօդուածի առթիւ և նա անտեղի համարէր անհատական

զգացմունքների արտայայտութիւնը, մենք կարող էինք համաձայն լինել։ բայց քանի որ այդ հիւանդ պարոնը խօսում է մի այնպիսի յոգուածի առթիւ, որի նոյն իսկ վերնագիրը ցոյց է տալիս, թէ դա խոր զգացուած սրտի արտադրութիւն է, այն ժամանակ մենք անկարող ենք բացատրել «Տարազի» այդ այլանդակ վարմունքը, հրէշաւոր ասպետութիւնը։ Այրուբենական ճշմարտութիւն է, որ հերոսը, երբ նա հանդիսանում է որպէս կենդանի օրինակ հայրենասիրութեան, կամ բանաստեղծը, երբ նա իւր երգերում հայրենասիրութեան ուսուցիչ է հանդիսանում և ամփոփում է հայրենասիրութեան գաղափարի բոլոր զգացմունքները, այն բանաստեղծը անմահ է և սերնդէ սերունդ կ'ապրի։ Ինչո՞ւ են այսօր խնկելի և պաշտելի մեզ համար Վարդան Մամիկոնեանը իւր նահատակներով հանդերձ, եթէ ոչ հայրենասիրութեան կենդանի օրինակ հանդիսանալով և նորա համար նահատակուելով։

Անտարակոյս, «Տարազի» խմբագրութիւնը և պ. Հաւլունը լսած կը լինին ժամանակակից ականաւոր քննադատ Գէորգ Բրանդէսի անունը և գուցէ բարեհաճի ընդունել նորա հեղինակութիւնը։ Բերենք նորա խօսքերը Իրլանդացի բանաստեղծ Թոմմաս Մուրի մասին. իսկ Թ. Մուրի և Գամառ-Բաթիպայի մէջ բաւականին նմանութիւն կայ։ Ահաւասիկ ինչ է ասում. «միայն կը-կրկնենք Բայրընի խօսքերը, թէ «Մուրի ներդաշակ երգերը սերընդէ սերունդ անցնելով կ'ապրեն, ինչքան որ կ'ապրի Իրլանդիան, և յաւիտեան կըտևեն, ինչպէս և տևելու են երաժշտութիւնն ու բանաստեղծութիւնը»[1]։ Կարծում ենք, որ Բրանդէսը համաձայն լինելով Բայրընի հետ, կարող է մի քիչ ազդել պ. Հաւլունի վերայ և ստիպել, որ նա իւր անհեղեղութիւնները միւս անգամ այդպիսի անսանձ համարձակութեամբ չյանդգնէ հրապարակ հանել։

Եւ դուք իրաւունք էք համարում ասելու. «մենք անգամ չըգիտենք թէ ո՞րն է լաւ—տգէտ թէ զարգացած եկեղեցականը»։ Այդ նախադասութիւնը մի նախերգանք է այդ անդուռն բերանի կողմից մեր յոդուածի առթիւ խօսելիս՝ զանազան անհեղեղութիւններ ասելու և զարգացած Սեդրակեան եպիսկոպոսին տգէտ պաշտպան հանդիսանալու։ Սակայն գրողը ինքն էլ հասկացե՞լ է, թէ ինչ է գրել։

---

[1] Տես «Արձագանք» № 120, 1894 թ.

Մենք բնաւ չենք վիրաւորվում այն բանից, որ պ. Հալլունը մեզ «նորակոչ հրապարակախօս» է անուանում։ սակայն զարմանալի է, որ մեր հինաւուրց (երևի) պուբլիցիստը բարոյ է համարել թագ կենալ լուի յետև և այդ քա՛ն ստորանալ... չէինք սպասում։ Ո՛չ, պարոն, մենք մեր լուսաւոր հայեացքները չենք կամեցել պարզել, այլ ձեր խնկարկած Արիստակէս եպիսկոպոսի յառաջադէմ և լուսաւոր գաղափարները, որի անունն «Ամուսնական խնդիր» աշխատութեան յայտարարութիւնը ձրի տպագրվում էր ո՛չ միայն «Ծարաղի» իւրաքանչիւր համարում, այլ և «Աղբիւրի» կաղմի վերայ։ Ի հարկէ, երևի, ժողովրդականութիւն ստանալու դա մի նոր միջոց է, բայց և այնպէս անվայել է մի այդպիսի ձրի յայտարարութիւն մանկական ամսագրի կաղմի վերայ։ Դուք այնքան անազնիւ է.ք և երկչոտ, որ իւր ժամանակին, երբ մամուլը զբաղուած էր այդ հարցով, զաքարէական պապանձման էիք ենթարկուել, վախենալով որ ձեր բուրդը կըգզեն. իսկ այժմ, երբ լուութեան է յանձնուած այդ ըմբոստութիւնը, ձեր լեզուն երկար է.ք հանում։ Ո՞վ էր, պարոն, հերքում այն «էական միտքը», որ տպէտ քահանաներ պիտի չլինին։ Մի՞թէ խօսքը դորա մասին էր, մի՞թէ ս. Արիստակէսի անգոսնելի յօդուածի պարունակութիւնը և բուն նպատակը այդ էր. ինչո՞ւ է.ք կեղծում, ինչո՞ւ չէ.ք պարզ խօսում։ Մամուլը չէր կարող և չէր էլ դատապարտում Սեդրակեան եպիսկոպոսին այդ տարրական մտքի համար։ Խո՞ւլ էիք, չէի՞.ք լսում, թէ ինչ էին խօսում ամեն տեղ. քո՞ էիք, չէիք կարդում թերթերը, թէ ինչու էին պախարակում նորա վարմունքը։ Եւ այժմ դուք չէ.ք ամաչում ըրբաբար յեղաշրջում է.ք իրողութիւնը և, հիմք դնելով մի ինչ որ «էական միտք», հանդէս է.ք գալիս ըմբոստներին թև ու թիկունք տալու. նման զնմանն սիրէ։ Հասկացէ.ք, որ այստեղ խօսքը դիսցիպլինայի մասին է, որի բացակայութիւնը մեզանում անսահման է և պէտք է վերջապէս սանձահարել։ Ըմբոստին անհրաժեշտ է սանձահարել, անպայման. պէտք է կարգի հրաւիրել, որպէս զի գայթակղութեան օրինակ չլինի ուրիշներին։ Խօսքը սորա մասին է. ասելու բան ունիք, համեցէ.ք, պատրաստ ենք լսելու և ասելու։

Այո, պ. Հալլուն, «Հանդէս» տպողը իւր բարոյական պարտականութիւնն է համարում իւրաքանչիւրին տալ արժանին. նա միշտ դէմ կըլինի, որ «Ծարաղ» միոտոդները անարգեն ազգի

հանգուցեալ բանաստեղծի յիշատակը այդպիսի լկտի խօսքերով. նա կրտայ և Սեդրակեան եպիսկոպոսի վարմունքի իսկական անունը, որի համար դուք գլուխ էք պատռում։ Ի հարկէ, իւրաքանչիւր փոքրաւոր իրաւունք ունի և պիտի հաւատարիմ լինի, իսկ հարկ եղած ժամանակը՝ պաշտպանել անգամ իւր վարդապետին կամ եպիսկոպոսին, բայց Սալդատսկի Բազարի ո՛չ մի պուբլիցիստին իրաւունք չէ տրուած «Տարազի» մէջ պաշտպան հանդիսանալ այնպիսի մի եպիսկոպոսի, որ համայն ազգին անպատուեց իւր վարմունքով։ Աւելի քաղաքակրթուած երկրներում այդպիսիներին և նոցա թեւ ու թիկունք տուողներին արժանավայել կերպով կը-վարձատրէին, իսկ մեզանում այդ բոլորն անպատիժ է անցնում։ Վերստին կրկնում ենք, հասկացէք, պարոն կապալառու «Տարազ» շաբաթաթերթի, որ այստեղ խօսքը դիսցպիպլինայի, իսկ եթէ կամենաք և «գրականական էթիքայի» մասին է։

«Տարազի» զառանցող աշխատակիցը խօսում է տեղակալութեան ժամանակ ծագած բանակռուի մասին և ասում է, թէ վճիռներ էր կայացնում մի մարդ, որի համար հայոց լեզուն մի կատարեալ terra incognita էր»։ Խելօք քննադատը կարծում է, թէ ով որ գիտէ հայոց լեզուն, նա ամեն բան էլ գիտէ, ամեն բանի մասին էլ կարող է դատողութիւն տալ, ինչպէս և ինքն է անում։ Բայց նա մոռանում է, որ այդ մի մարդը, այսինքն պ. Ղամբարեանը, հայոց լեզուն չիմանալով անգամ կարող էր ուսումնասիրել պօլօժենիէն և իրաւաբանական տեսակէտից քննել հարցը։ Ճիշդ է, նա հայերէն կարող է չիմանալ, կրկնում ենք, բայց նա լիովին իրաւունք ունի իւր մասնագիտութիւնից խօսելու. ինչու դուք ամեն բանի մասին կարող էք խօսել, իսկ պ. Ղամբարեանը իւր մասնագիտութիւնից անգամ իրաւունք չունի խօսելու։ Ցարգոյ պրոֆէսսորի յօդուածի մասին մենք որ և է կարծիք ոչ մի տեղ չենք յայտնել. չենք հասկանում, թէ ինչու համար է պարոնը այդ դէպքը առաջ բերել կամ ինչ համեմատութիւն կարող է լինել Նորա յօդուածի և Արիստակէս եպիսկոպոսի ըմբոստութեան մէջ։ Պարոնը շատ լաւ պիտի իմանայ, որ ուրիշների ասածի համար մենք պատասխանատու լինել չենք կարող, ինչպէս և ուրիշները մեր ասածի համար։ Բայց ի՞նչ արած, երբ պ. Հաւլունին այս էլ պէտք է հասկացնել։ Բարբանջող պարոնը մինչև անգամ բացագանչում է. «Եւ երբ այդքան ապստամբ էք (Աստուած հեռու տանէ, այդ ձեր փեշակն է) ձեւանում հասարակա-

կան և եկեղեցական հարցերի վերաբերմամբ՝ ձեր կողմնակիցներին նոյն իսկ ոչ ձեռնհաս մարդկանց լայն ասպարէզ տալով, ապա ի՞նչ իրաւունքով էք գորգոռում, երբ քահանայական հարցի մասին խօսում է մի եպիսկոպոս...» Այդ հիւանդին հանգստացնելու համար պիտի ասենք, որ ազատամիտ ձևանալ մենք չենք սիրում, ոչ մի կողմնակցի լայն ասպարէզ էլ չենք տուել, և Արիստակէս եպիսկոպոսը քահանայական հարցի մասին խօսելը չէ դրել իւր յօդուածի կէտ նպատակը, այլ նա բանակռիւ է սկսել մի անհամեմատ խոշոր Մեծութեան և իւր անմիջական Պետի հետ։ Այդ վարմունքի անունը, կրկնում ենք, հայերէն ըմբոստութիւն է և նա ոչ մի լուսաւորեալ երկրում անպատիժ չի անցնում։ Իսկ եթէ այս դէպքը անպատիժ անցաւ՝ այդ պէտք է վերագրել Նորին Վ.Հափառութեան անսահման բարութեան և ներողամտութեան։ Պարոննե՛ր, հասկացէ՛ք այդ և գնահատեցէք։ Լաւ մտածեցէք։ Թէ ինչ էք պաշտպանում և ում դէմ էք գնում։

Սակայն ինչ կարելի՞ է սպասել Հալլունի պէս փոքրաւորներից և Մէյդանի պուբլիցիստներից, երբ նոքա տարրական բաները չեն հասկանում և չեն էլ կամենում հասկանալ։ Նա կարծում է, թէ ցոյց տալով այն անկարգութիւնները, որ թոյլատրում են Մոսկուայում հայ քահանաները, եթէ վերացուին, ուրեմն մենք մեր նպատակին հասած կըլինինք։ Որքան յիշում ենք, մեր յօդուածում մենք ոչինչ չենք ասել, թէ որպէս պիտի լինի քահանան և ոչ մի պահանջ չենք առաջարկել։ Ցոյց տալով այդ շեղումները՝ մենք կամենում էինք հրաւիրել Բարձրագոյն Հոգևոր Իշխանութեան ուշադրութիւնը մեր քահանաների վերայ, որովհետև եկեղեցու իւրաքանչիւր ծէսը, իւրաքանչիւր արարողութիւնը իւր խորհրդաւոր նշանակութիւնը ունի և ըստ քմահաճութեան չէ կարելի աղաւաղել։ Սակայն ազատամիտ «Տարազի» աշխատակիցը չէ կամեցել հասկանալ, որ նոցա այդ բոլոր թերութիւնները յառաջանում են տգիտութիւնից։ Կասկած չկայ, որ մեր քահանաները, եթէ փոքր ի շատէ, գէթ պ. Հալլունի չափ, լուսաւորուած ու զարգացած լինէին, այն ժամանակ այդպիսի զեղծումներ չէին լինիլ և ժողովրդին գայթակղութեան օրինակ չէին դառնալ։ Տեսէք, թէ որքան ազատամիտ է «Տարազի» այդ անման աշխատակիցը։ Հեգնելով նա ասում է. «Անշուշտ Մոսկուայի քահանաները «անպատկառ» ածականը չէին սառանալ իրենց պուբլիցիստի բերանից, եթէ բեմի վրայ հագած ունենային

ո՛չ թէ կօշիկներ (հասկացուում է,— բացատրութիւն պ. Հալլունի, — մեր ամենքիս հագած կօշիկը, որ եւրոպական է կոչւում), այլ հողաթափներ։ Ի՞նչ զանազանութիւն կայ այդ երկու տեսակ ոտնամանների մէջ. այդ, ի հարկէ, քաջ յայտնի է վրդովուած պարոնին։ Անչափ շնորհակալ ենք, որ պարոնը մեզ կարեկցում է, բայց մենք ցաւում ենք, որ նորա պէս բթամտի հետ այսօր գործ ունինք։ Ձեր կարծիքով պ. Բարխուդարեանը «իբրև հրապարակախօս իրաւունք չունի այն աստիճան միամիտ լինել, կարծելով թէ շորերի և ծէսերի վրայ է հիմնուած եկեղեցական դասի բարեկարգութեան հարցը»։ Ուրեմն դուք այնքան միամիտ չէք և կարող էք թոյլատրել, որ վաղը մի քահանայ բօտֆօրտներ հագած, շուրջառի տեղ եափնջի վերան ձգած, իսկ սաղաւարտի տեղ ցիլինդրը դրած, արարողութիւն անէ. այդ մենք, խոստովանում ենք, երազել անգամ չէինք կարող, այդքան դեռ ազատամիտ չենք։ Եւ դուք կարծում էք, որ մենք ձեզ կ'ասենք, թէ «անկրօն էք, եկեղեցի քանդող էք»։ Բնաւ, եկեղեցի շինելու, եկեղեցի քանդելու (ի հարկէ խօսքը պատերի մասին չէ, որի համար դուք պիտանի կը լինիք) համար էլ մի անհրաժեշտ պայման կայ—գո՛նէ մի քիչ խելք պէտք է ունենալ, որից, կարծում ենք, դուք. . . .

Մեր առաջ բերած նմուշները ցոյց են տալիս, որ ամենայն իրաւամբ միւս անհեղեղութիւնները կարող ենք անպատասխան թողնել։ Հասկացողին այսքանն էլ բաւական է։

Չենք կարող մեր զարմանքը չյայտնել, որ «Աղբիւր» մանկական ամսագրի «Տարազ» յաւելուածը, որպէս զի միայն ամեն շաբաթ լոյս տեսնէ, հարկ է համարում այդպիսի փթած ուղեղների գարշահոտ վիժմունքներով լցնել իւր համարները։

Մ. Բ.

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐԸ.

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Տպարանական Ժողովից, Օրացոյց ներկայ 1894 թ. Նորին Վեհափառութեան կողմից ի շնորհաւորութիւն Նոր Տարւոյ։

ԽԱՏԻՍԵԱՆ Մ., Նոր ճանապարհի վերայ, վէպիկ. Ս. Պետերբուրգ, 1894 թ. Ի. Ն. Սկորոխոդովի տպարան. գինն է 1 ռուբլի։

ԿԱՐԻՆ, Երգարան, Հայի ցաւալի վիճակը Կարինի երգերի մէջ. Մոսկուա, տպարան Ֆ. Բարխուդարեանի, 1894 թ. գինն է 1 ռուբլի։

ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ, Ներսիսեան Հոգևոր դպրոցի սաների առաջին դպրոցական ճանապարհորդութիւնը, յաւելուածով։ Տփխիս, տպարան Մ. Նարառէի, 1894 թ. գինն է 40 կոպ.։

ՀՈՐԻԶՈՆ, Գրականական հանդէս, 1894 թ. գիրք առաջին. տպարան Յ. Մարտիրոսեանի, Թիֆլիս. գինն է 1 ռ.։

ՐԱՖՖԻ, Պարոյր Հայկազն (Պրոյերեսիոս). Թիֆլիս, տպարան Մ. Վարդանեանի, 1895 թ. գինն է 20 կոպ.։

ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ Հ. ԳՐԻԳՈՐԻՍ վ. Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչև մեր ժամանակը. հատոր Ա. Վիեննա, Մխիթարեան տպարան, 1893 թ. գինն է 2 ֆր. 50 սանտ.։

ՇԱՀԱԶԻԶ ԵՐ., Նոր Նախիջևանի ուսումնարանական գործի անցեալը։ Նոր Նախիջևան, տպարան Ա. Զամինեանի և Վ. Քիրլիեանի, 1894 թ.։

ԹԱՏՐՈՆ, Դրական և թատերական հանդէս, №№ 1 և 2. երկու գրքի գինն է միասին 3 ռ., օտարաքաղաքացիների համար—3 ռ. 30 կոպ., իսկ լուսաքանչիւրը առանձին—2 ռ.։ Թիֆլիս, 1893—94 թ. տպարան Մ. Մարտիրոսեանցի և Ընկ.։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Այսու խնդրում ենք «Հանդիսի» բաժանորդների ներողամտութիւնը, որ հակառակ մեր խոստման և ցանկութեան, մեզանից բոլորովին անկախ պատճառներով այսպէս ուշ է լոյս տեսնում վեցերորդ գիրքը։

«Հանդիսի» VII և VIII գրքերը ամփոփուած կը լինին մի հատորում, որ լոյս կը տեսնէ առաջիկայ հոկտեմբերին, մինչև 40 թերթից բաղկացած։ Բաժանորդագինն է 3 ռուբլի։

«Հանդիսի» հետևեալ գրքում կը տպագրուի ի միջի այլոց Հանգուցեալ Միքայէլ Նալբանդեանի կենսագրութիւնը, որ պատրաստել է մեր աշխատակից պ. Եր. Շահազիզը։

Ներկայ համարում տպագրում ենք «Խօսք» կիսամեայ Հանդիսի յայտարարութիւնը, որ պիտի հրատարակուի Մոսկուայում պ. Ս. Մամիկոնեանի խմբագրութեամբ։ Սիրով ողջունում ենք այդ նոր հրատարակութիւնը և ցանկանում ենք յարատևութիւն։ Ցանկալի է, որ հասարակութիւնը սիրով ընդունէր նորան և աջակցէր խմբագիր-հրատարակչին հատատ հիմունքներով շարունակելու այդ ձեռնարկութիւնը, ամենևին ուշադրութիւն չդարձնելով «Մշակի» պարզ կամ քողարկուած ակնարկութիւններին, որ միշտ զինվում է ամեն մի նոր հրատարակութեան դէմ, երբ միայն անունը լսում է։

Ցայտնում ենք մեր շնորհակալիքը հետևեալ մեծ. պարոն-ներին, որոնք՝ «Հանդիսին» բաժանորդ գրուելով, մի քանի օրինակ էլ թողել են մեր տնօրինութեան ներքոյ։ Ստորև դնում ենք նուիրատուների ազգանունները և ուղարկուած օրինակների քանակութիւնն ու տեղը.

Մեծ. պ.պ. Գենջ-Օղուլեան Ս. Խ.—1 օր. Նոր-Նախիջևանի Արհեստական ուսումնարանին. 1 օր. Պեատիգորսկիի ծխական ուսումն. 1 օր. Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքի դպրոցին և 1 օր. Մուխրան գիւղի ուսումն.։ Ժամհարեան եղբայրներ—4 օր. Շուշու թեմական դպրանոցին։ Խումաճեան Յով.—4 օր. Նոր-Նախիջևանի շրջակայքում գտնուող գիւղերի ուսումն. պ. Յ. Բողդանեանի միջոցով։ Ոսկերչեանց Էմ.—1 օր. Զխար գիւղի ուսումն. 1 օր. Եդեսիայի ուսումն. 1 օր. Կոթի ուսումն. և 1 օր. Արմաւիրի ծխ. ուսումն.։ Շահազիզեան Սմբատ—2 օր. Աղէքսանդրապոլի հոգևորականաց գրադարանին. 2 օր. Աղէքսանդրապոլի հասարակ. գրադարանին. 2 օր. Աշտարակի ուսումն. 2 օր. Օշականի ուսումն. 1 օր. Դաւրիժու Լիլաւա թաղի գրադարանին և 1 օր. Նաւուր գիւղի աղօթարանին։ Շօրշորեանց Մ.—1 օր. Եկատերինօդարի ծխ. դպրոցին. 1 օր. Ցխինվալի գիւղի դպր. 1 օր. Սևանայ վանքի գրադարանին. 1 օր. Դաւրիժու ընթերցասիրաց գրադարանին. 1 օր. Ուռուտ գիւղի դպրոց. և 1 օր. Ներքին-Ախտա գիւղի դպրոցին։ Պագրեանց Գ.—1 օր. Նոր-Նախիջևանի ս. Համբարձման եկեղեցական-ծխական ուսումն.։ Պոպովեանց Մկ.—1 օր. Մայր Աթոռի գրադարանին. 1 օր. Քարվանսարայի ուսումն. 1 օր. Դավրիժու կենտրոնական ընթերցարանին և 1 օր. Ռաշտի գրադարանին։

«Հանդիսի» V գրքում տպագրուած էր պ. Եր. Շահաղիզի «Հայոց մտաւոր կեանքը» յօդուածը։ Այդ յօդուածում սպրդուած են մի քանի կարևոր վրիպակներ, որ և առաջ ենք բերում այստեղ յօդուածագրի ցանկութեամբ. «իւր ժամանակով» պիտի լինի «կարճ ժամանակամիջոցներով» (էջ 120, տող 13 ն.). «վերանորոգելու» — «վերանորոգուելու» (էջ 122, 8 տող ն.). «Կաղարլի» — «Կաղարշի» (123, 5 տող վ.). «եկեալ» — «կեալ» (125, 13 տող վ.). «վերայ» — «համար» (125, 22 տող վ.). «Արաբացիները և Հաղարացիները» — «Արարացիները կամ Հաղարացիները» (128, 22 տող վ.). «ու» — «և» (142, տող). «Ամա նոր» — «Ամանոր» (142, 35 տող). «Գլակայ վանքի վանահայրը» — «Աթանաս Գլակայ վանքի վանահայրը» (143, 19 տող վ.) «աստիճանը» — «աստիճանով» (145, 18 տող վ.). «ու» — որ (137, 9 տող վ.)։

ՀԱՆԴԷՍ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԳՐՔԻ.

I. Նա սպասում է գեռ... պատկեր. Գ. Զուբար։—II. Մի՛ կարծէք որ ես... բանաս. Գամառ-Քաթիպա։—III. Առաջին սէր, վէպ Տուրգենեվից։—IV. Զորս բանաստեղծութիւն. I. Արազն էկաւ, II. Մ-ին, III. Երգչի անէծքը (Ուլանդից) և IV. Կեանք. Յով. Յովհաննիսեան։—V. Անկոչ հիւր, վէպ. Պ. Հ. Ադամեան։—VI. Մտի՛ր կուսաստան, բանաստ. Պ. Հ. Ադամեան։—VII. Մանկական թովիչներ, բանաստ. Դ. Ադայեանց։—VIII. Յիմար ոչխարներ (առակ մեծերի համար), Գ. Զուբար։—IX. Արևելեան զրոյց. Եւրէինովից։—X. Աղջային բանաստեղծ, բանաստ. Աղէք. Ծատուրեան։—XI. Ագեռոս իշխանի պատմութիւնը, վ. Գարշինից. վ. Մ.։—XII. Զեմ աղօթում... բանաստ. Նալբանդից. Պ. Հ. Ադամեան։—XIII. Յարութեան գիշեր, աւանդութիւն, Շչեդրինից. Ա. Ծատուրեան։—XIV. Գիւղի ասպետները, զրոյց Մօնսըլէից։—XV. Մուսա, բանաստ. Ա. Ծատուրեան։—XVI. Կիսրար կամ Մշեցու հայու մը խոստովանանքը. վ. Յ. Մ.։—XVII. Հայ ժողովուրդը, նորա այժմեան լեզուի և մատենագրութեան վիճակը Ռուսաստանում, համառօտ տեսութեամբ. Ստ. Նազարեանց։—XVIII. Հին ցաւ. Գար. Ենգ.։—XIX. Նիւթեր մատենագրութեան պատմութեան համար. I. Ստեփանոս Նազարեանցի թղթերից. II. Ոսկան. վ. կտակը։—XX. Շատերէն մէկը, պատկեր. Սիլիկ։—XXI. Զէյթունցի կինն առ պանդուխտ ամուսինն իւր. Յ. Զաքրեան։—XXII. Խոստովանանք, Կուպէոնաձոռին հացը, Նոր աղօթք, հայրն. Սիլիկ։—XXIII. Վանեցի պառաւ Սառայի խրատն առ Կուտրաթ Խաթունն և Կուտրաթ Խաթունի պատասխանը. Մ. Կ. Միրախորեան։—XXIV. Օձի խածած, պատկեր. Սիլիկ։—XXV. Մատենախօսութիւն. I. Շէքսպիր և իւր Համլէթ ողբերգութեան աղբիւրն ու քննադատութիւնները, աշխատասիրեց Պ. Հ. Ադամեան։ II. Կորած Մարգարիտ, վէպ-նկարագրութիւն Ս. Փիլոյեան։—XXVI. Մահացուցակ Յ. Շիշմանեանի։—XXVII. Բաֆֆիի մահ (մի առաջարկութիւն)։—XXVIII. Հայ գիւղացիների հայեացքը բնութեան երևոյթների վերայ. Յ. Մ. Տուտուխեան։—XXIX. Ակամայ պատասխան։—XXX. Հրատարակչի կողմից։—XXXI. Յայտարարութիւններ։

ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔԻ.

I. Մի կտոր հանած իմ տպելու պատրաստ աշխատասիրութիւնից. Պ. Պոլշեանց։—II. Բանաստեղծութիւններ, Մ. Նալբանդեան։ — III. Մեր Մարկոսը, պատկեր. Լէօ։ — IV. Վերջին փափագ, բանաստ. Ս. Շահազիզեան։—V. Կաճառայ ծռեր, Յիշողութիւն, Տ. Փիրումեան։—VI Ընկե՛ր իմ, բանաստ. Նաղասնից. Յ. Յովհաննիսեան։ — VII. Հասս, պատկեր. Գ. Զուբար։— VIII. Երեք արմաւենի, բանաստ. Լերմոնտովից. Գամառ-Քաթիպա։—IX. Յիշողութիւն, Սենէտ, Ինչպէս քաղցր երազ, բանաստ. Յ. Յովհաննիսեան։ — X. Պոյէտ, բանաստ. Ա. Ծատուրեան։— XI. Հայի ճուտ, երգ. Աշեղ Զիւան։—XII. Երեք զրոյց. I. Վախկոտ. II. Գիւղի Մուրացկան և III. Զինուոր Դիւբիւին, Գիւի զը-Մոպասանից. Ա. Ծատուրեան։—XIII. Երգ, բանաստ. Նժդեհ։— XIV. Մեր դաշտն ու հովիտ... բանաստ. Գ. Բարխուդարեան։— XV. Սիրոյ վշտեր, Զարատանց զոհ, Այս աշխարհին (Հայնէից), բանաստ. Ա. Ծատուրեան։—XVI. Լաւ բժշկեցին, պատկ. Նարդոս.—XVII. Պոէտ և Աստղեր. Սպիտակ զգեստ, բանաստ. Թարգ. Ս. Թանդեան։—XVIII. Արձագանք, Տաճկա-Հայաստան և Հայք, բանաստ. Գ. Բարխուդարեան։—XIX. Ճանապարհորդութիւն դէպի Հայաստան, Ֆր. Բոդէնշտէդտից. Յ. Բարխուդարեանց։—XX. Թէ ովքեր էին ս. Վարդանց և նոցա ժամանակակից Հայ սերունդի դաստիարակիչները. Լօդ։—XXI. Երկու խօսք, Յառաջաբան. Մ. Նալբանդեան։—XXII. Ազգային նկատողութիւնք. Լապտեր Հայաստանի. Ս. Նաղարեանց։—XXIII. Արկողդ ըզլոյս... Գ. Եպ. Այվազեան։ — XXIV. Ցուցակ ստացեալ աղխից... Մ. Թաղիադեան։—XXV. Մատենախօսութիւն — Տեղեկութիւն ի գիրս պատմութեան Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողիկ կոչեցելոյ. Ն. Ն. Բիւզանդացի։ — XXVI. Բանք ի Պողոս Կրօնաւորէ, Ղ. վ. Փիրղալէմեան։—XXVII. Ազգ. Այլ և այլք։

I. Վարժապետ, II. Վարթէվօր. պատկ. Ախտամերկեան։ — III. Սատանայի օգիլ. պատկեր, Սիւլիւկ։—IV. Խօռթլախ, պատկ. Սիւլիկ։—V. Յայտարարութիւններ։

ԵՐՐՈՐԴ ԳՐՔԻ.

I. Ադամայ մութը, աւանդութիւն. Պերճ Պոլշեան։ —II. Բանաստեղծութիւններ Մ. Նալբանդեան։—III. Դոն Քիշոտի իմաստը (Ն. Ստորոժենկո)։—IV. Տղմուտ, Զինուորի մահը, Տեսնում եմ ահա... բանաստ. Յ. Յովհաննիսեան։—V. Առաւօտեան ժամին, սերրիական զրոյց. Լ. Կ. Լապարեվիչից։—VI. Գողթան երգիչներին, բանաստ. Լ. Մանուէլեանց։—VII. Փիլիսոփայական

մանկավարժութեան հիմունքներն ըստ Լինդների. Յ. Բարխուդարեան։—VIII. Երկու վարդ (Մ. Վայդաուից), Մարգարիտներ և Երգեր (Ր. Պրուտցից). Երգեր (Հայնէից). Փոթորկից յետոյ (Ր. Պրուտցից), բանաստ. Ա. Ծատուրեան։—IX. Ինչո՞ւ աշխարհս բարեկարգուած չէ, Կօտ-Մուլիկայից. Մ. Տէր-Զաքարեանց։—X. Մաշան, պատկեր. Սուլթան։—XI. Մարտովից. Օտար պօէտին. Սոկոլովից. Նոր լուրեր Տաճկահայաստանից. Էշը. Եթէ դու մի օր... բանաստ. Ջ. Բալուղեան։—XII. Հանս Շիլդբերգերի կեանքի և ճանապարհորդութեան մասին. Վ. Սուրէնեանց։—XIII. Դաւաճանին. Իմ հայրենիքն... բանաստ. Լ. Մանուէլեանց։—XIV. Կարաբաս, Մօրիս Մօնտրգիւից. Զ. Պ.։—XV. Արծիւ, բանաստ. Սէթ։—XVI. Ուրուականներ, ֆանտազիա. Ի. Տուրգենեվից։—XVII. Ծեր ժամկոչը, գարնանային իդիլլիա. Վ. Կորոլէնկոյից։—XVIII. Թափոր Աւագ ուրբաթ երեկոյեան, բանաստ. Պ. Հ. Ադամեան։—XIX. Վարդանանց պատերազմի պատճառներն և հետևանքը. Եր. Շահազիզ։—XX. Լէօպօլդ Ֆօն Ռանքէ և հայոց Պատմութիւնը. Լօրդ։—XXI. Շահիր Խաչատրի երգերից։—XXII. Մատենախօսութիւն. Սօս և Վարդիթեր, վէպ Պերճ Պռոշեանցի. Մ. Նալբանդեան։—XXIII. Ստացուած գրքեր։—XXIV. Ցայտարարութիւններ։

I. Հայագիտութիւն, հաղորդեց Կ. Եղեանց։

ԶՈՐՐՈՐԴ ԳՐՔԻ.

I. Սպանդանոց, պատկեր. Բաֆֆի։—II. Բաց աչքով երազ, զրոյց (Պօլ Բուրժէից). Տիկ. Մարգարիտ։—III. Բանաստեղծութիւններ. I. Ո՛Հ, կանայք... (Լէօպարդիից). II. Կար մի ժամանակ. III. Բուգրոյի Մադոնայի առաջ. Յ. Յովհաննիսեան։—IV. Վերածնութեան դարու մանկավարժական տեսութիւնները (Ն. Ստօրօժէնկոյից)։—V. Մի մեծ յօդուածից մի հանգուցեալ կտոր. Գառնեցի։—VI. Մի կնոջ խելացի մտքերը. Յ. Բարխուդարեանց։—VII. Բանաստեղծութիւններ, I. Խաղաղութի՛ւն ձեզ (Թ. Մուրից). II. Մելոդիա (Ֆրուգից) Ա. Ծատուրեան։—VIII. Մառգօ, պատկ. Ժիւլ Կլառեսսի. Գ. Զուրար։—IX. Խղճի խայթոցներ, հոգեբ. պատկ. Գ. Զուրար։—X. Դիմակահանդէս, դրամա 4 արարուածով. Լերմոնտովից. Յ. Զանուսեանց։—XI. Բանաստեղծութիւններ. I. Մենք կրովում ենք, II. Կտակ, III. Վահագնայ ծնունդը. Զ. Բալուղեան։—XII. Մոռացուած շիրիմ, բանաստ. Բաֆֆի։—XIII. Հատուցումն, բանաստ. Պ. Հ. Ադամեան։—XIV. Մի երես մեր նորագոյն պատմութիւնից. Ղ. Աղայեանց։—XV. Բանաստեղծութիւններ, I. Կէս գիշեր. II. Սոնետ. III. Թշուառին. IV. Ա՜խ, երանի չէ՞. Աղէ.ք. Ծատուրեան։—

XVI. Բանաստեղծութիւններ, I. Անպտուղ երկունք. II. Է՞հ, սա էլ իմ սէրը. III. Հայու մեծերը. Զ. Բալուշեան։—XVII. Նախարար և նախարարութիւն. Եր. Շահազիզ։—XVIII. Աշուղի երգ։—XIX. Մատենախօսութիւն—Դաւիթ և Մէրի. Լէօ։—XX. Մկրտիչ Էմին։—XXI. Ստացուած հրատարակութիւններ։—XXII. Յայտարարութիւններ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՐՔԻ.

I. Հայրիկը-կաթողիկոս. Ա. Ծատուրեան։—II. Զատկական յիշողութիւններից. Պերճ Պռոշեանց։—III. Թագուհու արտասուքը, աւանդութիւն. Մանին-Սիրիրեակից։—IV. Մի՛ վհատիր, բանաստ. Ա. Ծատուրեան։—V. Բանաստեղծութիւններ, I. Արևմուտքը բորբոքուեց (Լերմնտովից). II. Վէճ (Լերմնտովից). III. Իմ կինը և իմ սուրը (Պէտեօֆից). Գ. Բարխուդարեան։—VI. Նեղդա, պատկեր. Թարգ. Տիկ. Մարգարիտ։—VII. Վարդանանց օրը. I. Երգիր, հոգեակ. II. Քուն եղիր, բանաստեղծութիւններ. Յ. Յովհաննիսեանց։—VIII. Վեցերորդ և եօթներորդ դարերի հայոց մտաւոր կեանքը. Եր. Շահազիզ։—IX. Հրէական մեղեդիներ, բանաստ. Բայրընից. Ս. Ծատուրեան։—X. Բայրընը Մխի թարեանների մօտ. Իւրիյ Վեսելովսկի։—XI. Բանաստեղծութիւններ, I. Բարի հրեշտակ. II. Հալածուած սէր. Ա. Ծատուրեան։—XII. Շոգենաւի վերայ, զրոյց. Թարգ. Տիկ. Մարգարիտ։—XIII. Բանաստեղծութիւններ, I Սրբազան ուղին. II. Աւետեաց երկիրը. III. Հայդուկ. IV. Հասարակաց խումբը և աշուղը. V. Ժողովրդին. VI. Ուխտաւորներ. Յ. Կոստանեանց։—XIV. Մի երես հայոց հնագոյն պատմութիւնից. Եր. Շահազիզ։—XV. Քի քանի խօսք Թէոդոսիայի (Կաֆայի) հայկական հնութիւնների մասին. Ս. Թանդեան։—XVI. Հռաբել, դրամա հինգ գործողութեամբ, գործ Ս. Առնոյի. Յ. Զանումեանց։—XVII. Յուշարարի նամակը Կ. Պոլսից. Յ. Պարոնեան։—XVIII. Ի Զամչեան Հայր Միքայելէ։—XIX. Վանեցի մուրացկանուհուն, բանաստ. Գ. քահ. Մկր ..—XX. Գամառ-Քաթիպայի թարմ շլրմի առաջ, Ա. Ծատուրեան։—XXI. Լեհաստանի և Արևմտեան-Հարաւային Ռուսիայի հայերը. Ի. Ա. Լինիչենկոյից. Թարգ. Խ. Յովհաննիսեանց։—XXII. Անվերջ ասպետութիւն. Մ. Բարխուդարեան։—XXIII. Հրատարակչի կողմից։XXIV. Յայտարարութիւններ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ներկայ 1895 *թուականին*

(ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԸ

Թիֆլիսում

հրատարակվում է նոյն դիրքով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և տօներին հետևող օրերից:

(*Տարուայ ընթացքում «Նոր-Դար»-ը լոյս կըտեսնի առնուազն* 220—225 *անգամ*).

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ը ՍՏԱՆՈՒՄ Է ԵՒ ՍԵՊՀԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 *ռուբլի, վեց ամսուանը՝* 6 *ր., Թիֆլիսից դուրս ամիսը* 1 *ր.* 50 *կ., հատով դուրսը՝* 7 *կ., Թիֆլիսում՝* 5 *կոպ.:*

Եւրոպայի, Թուրքիայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 40 *ֆրանկ:*

Ամերիկայի բաժանորդները վճարում են տարեկան՝ 8 *դոլար: «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի* 1*-ից միայն:*

Թիֆլիսում բաժանորդ են գրւում միմիայն «Նոր-Դար»-ի խմբագրատանը:

Խմբագրութիւնը գտնւում է Պուշկինսկայա փողոց, Սկուեբի դիմաց:

Օտար քաղաքներից բաժանորդ գրուողները դիմում են խմբագրութեան այս հասցէով՝ Тифлисъ, въ редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» *կամ* Tiflis (Caucase), Rédaction du journal «NOR-DAR».

Խմբագիր հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ:

ՆԵՐԿԱՅ 1895 ԹՈՒԱԿԱՆԻՑ

կը հրատարակուի Մոսկուայում մեր խմբագրութեամբ

„ԽՕՍՔ“

ԿԻՍԱՄԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ՀԱՆՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

«Խօսքի» առաջին գիրքը լոյս կը տեսնէ յուլիսի 1-ին, երկրորդը—դեկտեմբերի 31-ին։

«Խօսքի» բաժանորդագինն է 3 ռուբլի Ռուսաստանում, իսկ արտասահմանի համար—10 ֆրանկ։

Բաժանորդագրութեան համար պէտք է դիմել. Москва, Редакція «ХОСКЪ», *իսկ արտասահմանից*—Moscou, Rédaction de la Revue «KHOSC».

Խմբագիր-Հրատարակիչ ՍՏԵՓԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ:

ԹԱՏՐՈՆ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

(*Երկրորդ տարի*)

Բացուած է 1895 *Թուականի բաժանորդագրութիւնը.*

«Թատրոնի» տարեկան բաժանորդագինն է 3 *ր.* 30 *կոպ. Արտասահման* 10 *ֆրանկ. Թիֆլիսում՝ միայն* 3 *ր.։*

Դիմել՝ Тифлисъ, Александру Тарханянъ.

Հրատարակիչ՝ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹԱՐԽԱՆԵԱՆ:

„ԱՐԱՐԱՏ“

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՍՈՒՅՆ 1895 ԹՈՒԱԿԱՆԻՆ

Հրատարակվում է նոյն ուղղութեամբ և ծրագրով:

Բաժանորդագինն է Ռուսաստանում 4 *ր., Եւրոպայում՝* 5 *ր., Հնդկաստանում՝* 6 *ր.։*

Հասցէն՝ Эчміадзинъ, Типографскій Комитетъ.

„ԱՐՁԱԳԱՆՔ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը (Վելամինովսկի փողոց, № 22, տուն Խանդալամեանի) և «Կենտրոնական Գրավաճառանոցում»։

Բաժանորդագինն է տարեկան 10 ռուբլի։

Օտարաքակաղացիք պէտք է դիմեն. Тифлисъ, Редакція «АРДЗАГАНКЪ», *իսկ արտասահմանից.* Tiflis, Rédaction du journal arménien «ARDZAGANG».

Խմբագիր-Հրատարակիչ ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ:

„ՄՈՒՐՃ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ 1895 Թ.

բաժանորդագրութիւնը շարունակվում է

Տարեկան գինն է 10 ռուբլի։

Ուսուցիչների և ուսանողների համար 8 ռուբլի։

Վճարել կարելի է նաև մաս-մաս, սկզբում 5 (կամ 4) ռուբլի, մնացեալը լրացնելով մինչև յունիսի վերջը։

Բաժանորդագրութեան համար դիմել խմբագրութեանը. Тифлисъ, въ Редакцію журнала «МУРЧЪ», *իսկ արտասահմանից՝* Tiflis, Rédaction de la Revue «MOURTCH».

Խմբագիր-Հրատարակիչ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆ:

„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ“

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

1895—Թ. ՏԱՐԻ

Կը հրատարակուի առաջիկայ տարին նոյն ծաւալով՝ աւելի ճոխ և բազմակողմանի բովանդակութեամբ։

«Ամսօրեայ Հանդիսի» տարեկան բաժանորդագինն է 10 ֆրանք=4 ռուբ. Թղթատարամ—Կէս տարուանը՝ 6 ֆր.=2.50 ռ.։

«Հանդիսի» բաժանորդ գրուիլ ցանկացողները դիմելու են կամ գործակալաց և կամ ուղղակի խմբագրութեան հետևեալ հասցէով. A la Rédaction de la Revue «HANTESS». Au Couvent des RR. PP. Méchitharistes

VIENNE (Autriche) VII/2 Mechitharistengasse 4.

ԲԱՑՈՒԱԾ Է

ԲԱԶՄԱՎԻՊԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱՐԴՈՒԹԻՒՆ

(1895 (ԾԳ) ամին

«ԲԱԶՄԱՎԷՊ» ամսաթերթի տարեկան գինն է 10 փռանգ (4 ռուբլի) կանխիկ վճարելի։

Գործակալութեան և բաժանորդագրութեան պայմանքն նոյն կրնան։

Բաժանորդ գրուիլ ցանկացողք կարող են դիմել Տպարանիս Տեսչութեան այսպէս.

DIRECTION DE L'IMPRIMERIE ARMÉNIENNE
de S. Lazare VENISE (Italie).

Էջս տեսաւ

ԳԱՐԵԳԻՆ ՅՈՒԱՆԻ ԼԵՒՈՆԵԱՆԻ

ՀԱՅՈՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

անուն գործք.

Պատմական տեսութիւն սկզբից մինչև մեր օրերը.

(1794—1894)

ԲԱԶՄԱԹԻՒ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ.

(*Արժանացած է Սահակ-Մեսրոպեան մրցանակաբաշխութեան* 1894 *թ.*
ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿԻՆ).

Սոյն երկը բաղկացած է մօտ 600 *մեծագիր երկէջեան երեսներից։ Գինը* 3 *ր. է, կամ* 8 *ֆրանք։*

Դիմել՝ Թիֆլիս «Կենտրոնական գրավաճառանոց», Ալէքսանդրապոլ Հեղինակին, որի հասցէն է՝ Александрополь, Гарегину Левонянцъ *կամ* Alexandropol (Russie) Garekin Léoniantz.

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ.

ՅԱՂԱԳՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՁԱՌ

Այլ ինձ Թուի, որպէս այժմ և առ հինսն Հայաստանեայց լեալ անսիրելուԹիւն իմաստուԹեան և երգարանաց բանաւորաց:

ԽՈՐ. ՊԱՏ. Հ. ԳԻՐՔ Ա. ԳԼ. 3.

ՑԱՒԵԼՈՒԱԾ

„ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԳԻՍԻ“.

ՅԱՂԱԳՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՃԱՌ,

Ճանիջիք զՅշմարտութիւն. և Յշմարտութիւնն ազատեսցէ զձեզ:

Մի՛ ծանր ունիմք թուեսցի՝ եթէ ներեսցուք մեզ մերոյս վասն հայկական դպրութեան ճառի սկիզբն առնել այսու բանիւք, թէ ի նկարագրի մերումն լուսաւորութեանս նշանաւոր հանդիսանայ դարս ինն ուտասներորդ, բերելով յինքեան զնմանութիւն չորրորդ և հինգերորդ Ոսկեղէն ասացելոյն, յորժամ բանականն հոգի առ հայս զարթուցեալ ի բազմաժամանակեայ իւրոյն քնոյ, զհետ լինէր լուսաւորութեան, և հոգի զգեցեալ փութայր, ձեպէր յիմացականն կենդանութեան դարմանատարութիւն։ Քանզի զոր օրինակ անցեալ գնացեալ էին դարքն նախնականք և որք զկնի Քրիստոսի ցչորրորդն մնալեալ և մաղեալ ի սղոց ժամանակին և զնչխարս անգամ հայկական ոգւոյ, յար և նման անցանէին և դարք գոգցես ի չորեքտասանիցն սկսեալ մինչև ցայս վայր, յորում նոր ուրեմն ընութիւն ինքնին ախոյեան յարուցեալ ընդդէմ՝ ողորմ տգիտութեան՝ բանայ ոսկեղէն մատամբ զմուտ նորոյ աշխարհի, նորոյ կենդանութեան՝ առաջի հայկական մանկտւոյն։ Եւ ո՞ւմ արդեօք մրցանակ անվանելի յաղթութեան ի լայնատարր ասպարիզս վիճակեցաւ ընդունել ի գլուխ զդարնեայն պսակ՝ եթէ ոչ այնմ՝ որ կորովի մտացն հնարագիտութեամբ տքնէր, ճգնէր ի նորոգութիւն հայկական դպրութեան,

ուշի ուշով միտ եդեալ ժամանակացն փոփոխութեան և այժմեան դրութեան Ազգիս։ Ասասցեն՝ որ ինչ ցայս վայր հեղինակք ըստ առաջնոցն շաւղաց, իբր թէ արդիւնաւոր գտան, որ և ի կարծիս էին թէ ինքեանց և եթ պահի յաղթանակս, թէ միայն հնար էր յափշտակել զանկապուտ ձիթենին, յաջոյ՝ որ զծանրակշիռն վճարեաց զյաղթութիւն։ Բայց դոքա լուռ կան, համբացեալ ամենեին, որպէս թուի ասիական իմն խորամանկութեան աղագաւ. վասն զի խոստովանելով զայլոցն արդարացի վաստակս և զառաւելութիւն հոգւոյ, իւրեանցն խիթան յապաւել կարծեցեալ գերազանցութիւն, սուտ և ճղճիմ գերազանցութիւն։ Այլ մեք, ըստ քրիստոնէական արդար խղճմտանաց, տալով զԱստուծոյն Աստուծոյ, զմարդոյն մարդոյ, տացուք առնն զոր ինչ քաջ իրաւամբք վայելէ նման. suum cuique. Զէ՛ ումեք ի մերայնոց անտես երկասիրութիւն Ստեփանոս վարդապետի Նազարեանց մակագրեալ «Վարդապետարան կրօնի»՝ ի լոյս ընծայեալ ի Մոսկվա, յամի 1853։ Ուստի և ո՛չ պէտք է ինչ ծանօթաբանութեան զառնէն՝ որոյ մտաց էին այդ արգասիք, քանզի գործն ինքնին քարոզէ զհեղինակին անժխտելի արժանաւորութիւն, ապա ուրեմն ասասցուք որ ինչ ասելի զգործոյն որ և ի խրթնութիւնս դարուց ապագայից որ անցանելոց էին ըստ կարգի ահա անցելոցն փայլեսցի անշէջ, որպէս առ մեզ գործք ականաւոր արանց Եւրոպիոյ, որք զառաջինն իմաստուն գրուածովք կալմեցին զնոր դարագլուխ դպրութեան։

Նշանաւոր յառաջխաղացութեան դարուս իննուտասներորդի ապացոյց տամք մանաւանդ զնոր հայախօսութիւն հեղինակիս, մշակեալ և մաքրեալ յեկամուտ խառնակութեանց ըստ բառից և հնչմանց, և ընդ նմին հասկանալի՝ որոց մտառութեամբն ընթեռնուցուն։ Հարկիմք խոստովանել, թէ հեղինակիս դիտաւորութիւն ուղղեալ էր ի լուսաւորութիւն ազգակից եղբարց, որոց չէ էր ողջունեալ զհին դպրութիւն, և թէ սա ոչինչ համարիւր յաչս նորա փառքն հին հայախօսութեան, որոյ չգոյր այլ խորհուրդ, բայց եթէ զանունիկ իմն ժառանգել հնախօս հեղինակի, հնաբանելով ըստ հեղինակաց հինգերորդ դարու. այս ինքն է ասպարէզ, յորում՝ բազումք ի հեղինակաց յաղթահարեալ յանձին փառասիրութենէ սայթաքեցան և մոռացան, թէ են նոցա և եղբարք զուրկ և ամայի ի հոգեղէն կերակրոց, որոց պիտոյ էր յաւէտ դարման տանել, զառաջինն՝ զի մի սովամահ կորիցին, քան

թէ ապահոտ արարեալ զնոցին պիտոյք փառս անձին որոնել տը-
ղայականս, վասն զի փառք առն՝ օգուտ հասարակաց. և զի՞նչ
փառք, ի տասա՞նց և ի քսանի՞ց նմանապիսի ոգւով ախտացելոց,
որոց դիւրին էր միշտ ժխտել օգտի հասարակութեան՝ քան ան-
ձամբ զանձինն կնքել դատավճիռ, զի՞նչ փառք արդարացի առն՝
որ միայն խօսեսցի ի լեզու հինգերորդ դարու յայժմուս ժամա-
նակի՝ յորում ամենայն ազգք եւրոպէականք ջանահնար լինին
հարստացուցանել զանձինս ուղիղ գաղափարօք և մաքուր հայե-
ցողութեամբ ի բնաւս և իբրև առանձնական և մասնաւոր ինչ
պաշտեն զհին դպրութիւնս Յունաց և Հռովմայեցւոց, այսինքն է
ի պէտս պատմաբանական գիտութեանց, և ոչ թէ առ ի յու-
նարէն կամ հռոմէաբար գրել և խօսիլ յունկն ժողովրդեան։
Նոցին շրջանկատ և առողջամիտ Եւրոպիոյ անմոլար շաւղօք ըն-
թացեալ տեսանեմք զքարոզդ նոր հայախօսութեան, որոյ մի
միայն կէտ նպատակի է՝ մշակել զանշէն մնացեալ բանականու-
թիւնն ընդ նմին աղնուագործելով և մշակելով զնորն բարբառ
հասարակաց հասկանալի, առ ի հնարաւոր կացուցանել զնա լի-
նել յայտարար խորհրդոց մտածողացն։ Այս ձեռնարկութիւն չէ
արդար ինչ մի ի միջակայնոցն, չէ նոյնպէս վերընձիւղեալ յար-
մատոյ անձնասիրութեան և ո՛չ իսկ ի թեթեւամիտ փառամոլու-
թենէ յականաւորացն ի մատենագիրս երևիլ ի կարգի։ Հեղինակն
աշխատութեանս մի և եթ կալեալ իւր առաջնորդ զլուսաւոր
բանականութիւնն, ճախարակեալ եւրոպէական բաղմաճիւղ կոր-
թութեամբք, կատարեալ է գործ մեծ և արժանի անկապուտ
փառաց, որ մի անգամ երևեսցին ի հանդիսիս անձինք՝ թէ այժմ
և թէ առ յապայս մատուցանել հեղինակին զլիարերան գոհա-
բանութիւն, ո՛չ թէ անհատք ոմանք սահմանաւոր թուով յամ-
բողջ ընկերութեանց, այլ ինքնին ազգն, նոյն և մանկտին աղ-
գային, որոց անմերձենալի էր հինն լեզու, թերևս և անպիտան,
առ ոչ ունելոյ յինքեան զկենդանարարն նիւթ յագուրդ տալ
նքողեալ հոգւոյն։ Եթէ ապացուցութիւն բանիս պահանջեսցի ի
հնասիրաց, աղաչեմք տալ պատասխանի հարցմանս, (որ իբրու
վէմ անվանելի յառաջընթացն լինի նորախօսութեան) թէ ո՞ւմ
ումեք ի հայոց հասկանալի է հեղինակութիւն նախնեաց, թո՛ղ
զյոյժ սակաւաթիւ գիտակս ոմանս հնոյն լեզուի, և ո՞ր հայ ա-
ռեալ ի ձեռն զԽորենացւոյն, զԵղիշէին, զՓարպեցւոյն և զայլոց
հեղինակաց վաստակս բերկրեցաւ յոգի, քաղելով անտի աշխար-

հայեաց տեսութիւնս և բեղմնաւոր գաղափարս, ո՛չ ապաքէն ամենօրեայ փորձն ինքնին ակոյեան ելանէ ընդդէմ մոլար հնասիրութեանդ որ վնասակար էր ազգին, ըստ որում՝ ձանձրացեալ ընթերցողին անհասկանալեօքն ի բաց թողու զմատեանն։ Զի՞նչ այժմ նոյն հայ ասասցէ ընթերցասիրելով զՎարդապետարանն կրօնի, մինչ ամենայն դարձուածք բանից ըմբռնելի էին առ ի ընթերցանելեացն առանց և դոյզն բացառութեան, և ո՞վ արդեօք կարէ կորզել յընկերութենէ ազգին զիրաւունս քննելոյ և ճանաչելոյ զքրոնաջան ճիգն հեղինակին և բիւրիցս գոհ ընմանէ լինելոյ, զի նախընտիր վարկաւ զօգուտ հասարակաց քան զսուտ փառս հնձելոյ նմա ի բերանոյ սակաւուց, և այն վասն է՛ր. ո՛չ վասն բեղմնաւոր մտայն և լուսաւոր տեսութեանցն, այլ առ հարթութեան հնախօս ոճոյն գրելոյն։ Զաւակն հայկական ոչ կարելով այլ ևս գնալ զճանապարհ մոլախոտեալ ի դարուց ժամանակաց, և շուարեալ ի վարանս՝ տարակուսի մի՞թէ չունիցի իրաւունս ընթանալ զնոյն՝ որ բաց և արձակ է առաջի նորա, մի՞թէ ուրացի զերախտապարտութիւն առ առաջնորդն՝ որ ուղղեաց զնա ի փրկարարն ուղի։

Հայկական դպրութիւն ի կեանս հրաշագործեալ յունական հոգւով ի դարու մերոց թարգմանչաց՝ տեսանի պահեալ զթերաշունչ կենդանութիւն մինչև ի վախճան երեքտասաներորդ դարու։ Ի սոցա գրաւոր վաստակաց զարդիս հասանեն ի ձեռս մեր Աստուածաշունչ մատեան և քանի մի պատմաբանական մատեանք, իբր ի բաղումս պակասեալք և ի կանոնաց պատմագրութեան և ժամանակագրութեան, զորս, մի խիստ ումեք թուեսցի, բանս, եթէ ասիցեմ արեղայական դերձակաց կարկատանս, յաբեղայական հոգւոյ յղացեալս և ի լոյս ծնեալս նոյնպէս առանց գործակցութեան յաջողակ մանկաբարձութեան առաջնորդականին մտաց, սխալել ոչ համարիմ։ բայց այս գուցէ ներելի արեղայից. ըստ որում պատմագրութեանն հանդէս չէ դոցա, այլ արանց աշխարհականաց և քաղաքականաց, որպիսիք էին պատմաբանք Յունաց և Հռոմայեցւոց և Նորոյս Եւրոպիոյ։ Եւ խուց աբեղայից չէ երբէ՛ք այն դիտանոց, ուստի կարելի էր համբարձեալ զաչս նկատել և ճանաչել զիրողութիւնս աշխարհի։ Զկնի երեքտասաներորդ դարու, խայտաճամուկ կերպարանագործութեամբ ժամանակին՝ կործանի միջարեկ շինութիւն հայկական հնախօսութեան, որոյ զպատճառ անհաղորդ և քաղաքական սեւաբաղդութեան,

զայս թոյլ լեցի ասել (թէև պատրաստ եմք ի պատասխանի ապացուցական փաստիւք որոց այլապէսն խորհեն). որովհետև Հայախօսութիւն Թարգմանչաց աղբերանայր ո՛չ ի կենդանի ոճոյ խօսից պաշտելոյ առ ազգն, այլ ի պղտորեալ վտակաց անագանել Բիւզանդեան դպրութեան, որում՝ գիտակ էին Թարգմանիչք, և այս իսկ է զի Հայախօսութիւն հեղինակացս ոչ այնքան Հայախօսութիւն տեսանի, որքան հելլենաբանութիւն, ամենևին մերկացեալ և օտարացեալ յազգային հարազատութենէ, ուստի որպէս այժմ՝ նոյնպէս և ի ժամանակս յայնոսիկ ոչ երբէք կարող գտեալ արմատ արձակել ի սիրտ և ի հոգի ժողովրդեան, այլ մասնաւոր ինչ անձանց ստացուած, սեփականեալ անհատից ոմանց բիւզանդականացեալ Հայոց. և այս իսկ է պատճառն զի Բիւզանդեանդ ուսումնասիրութիւն առանց պատշաճօրէն Հայացուցանելոյ, պատուաստեալ ի վերայ Հայկական հոգւոյ, մնաց բազմութեանն միշտ օտար և միշտ անմատչելի։ Ազգ Հայոց չէ եղեալ երբէք մասնակից այդպիսի օտարագունակ ազգային դրպրութեան. զի որչափ ինչ հաւանէ տեսողութիւն աչաց, տեսանեմք, զի աբեղայք էին որ հիմն եդին գրականութեան և այն ի ճուաքաղէ յունական այգւոյն, աբեղայք՝ էին որ պահպանողք գտան այդր գրականութեան, ուստի և մինչև այժմ աբեղայական տեսանի գրականութիւնդ այդ. թէպէտ մնալ այդպէս ոչ կարէ, ըստ որում առ դուրս գայ ժամանակին անվեհեր հանիրաւ։ Հետևանք այդ օրինակ բոնաբարական ընթացից մերոցն ընդ հարազատ լեզու ժողովրդեան զի՞նչ. այդպիսի մատենագրութիւն ամենևին խորթ ի Հայկական ոգւոյ քանի՛ վնաս լուսաւորութեան մերայնոցն։ Այդպիսեաք այս յարմարեալ կաղմեցաւ արուեստակեալ մի գրականութիւն Հռոմահայ, բայց ոչ բուն և հարազատ Հայկական, և գրուածք նոցա որպէս աւանդեն նոքին իսկ պատմիչք կէս մի ի Հուր դատեալ, և կէս մի յանել բանդարգելութեան։ Եթէ գրուածք մերայնոցն միանգամայն հասկանալի էին ժողովրդեանն, և թէ թոյլատրեսցուք ոմանց կարծեաց երևիլ իբր հաւանական, թէ ի ժամանակի թարգմանչաց նոյն էր ոճ խօսից և գրերոյն և ժողովրդեանն՝ զի՞նչ ապա հեկեկանք ծերունւոյն Խորենացւոյ առթեալք ի մահուանէ Սահակայ Պարթևի՝ Հայրապետի Հայոց, և ի բարձմանէ թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց. «ով այսուհետև զմերս յարգեսցէ զու-«սումն, ով ուրախասցի ընդ առաջադիմութիւն աշակերտիս, ով

«զՀայրականն բարբառեսցի զուարճութիւն, մասամբ ինչ յաղթա-
«հարեալ յորդւոյս». (Խոր. պատմութ. Հայոց, գիրք III, գլ. 68)
զի՞նչ պէտք որոնելոյ զյարգող՝ ուսման Ներուանդայ, եթէ ժա-
մանակակցացն միահաղոյն նովին առաջնորդեալ էր լեզուախօսու-
թեամբ, որով և այս աւանդէր նոցա զնշխարս հնութեանց ա-
ռաջնոց Հայկազանց։ Ո՞ր անձն բանական ի միտ առեալ իմաստ-
նապէս զգրուածս սորա ո՛չ խիլայր մեծաւ յարգութեամբ զար-
ժանաւորութիւն առնս հանճարեղի, և զի էր սմա յողբսն որ
վասն բարձման Հայրապետութեան ի տանէ Պարթևազանց և
կործանման թագաւորութեան Արշակունեաց, որք յաւէտ գործք
էին քաղաքականք և եկեղեցականք, յաւելուլ զեղերս առ այն
թէ չէ ո՛ք ի միջի որ յարգեսցէ զուսումն և զգիտութիւն[1]։

Առանց ամենայնի գիտակցութեան զհնութեան ախտացեալ
զախտ, չէ դժուար պնդել թէ ի ժամանակի յանցմիկ նոյն էր
ոճ խօսից և գրերոյն և ժողովրդեանն, ուրեմն և ամենայն գրուածք
հեղինակաց ծաղկելոց յՈսկեդէն դարու Հայկականս դպրու-
թեան մերձենալի ամենայն Հայոց որ գիտէր գէթ ընթեռնուլ,
այլ այսպիսի կարծիք պէտս ունին մեծամեծ փաստից և ապացու-
ցութեանց, թերևս աղաչէաք զՀնասէրս ի հանդէս հանել զայնս
առ ի պարզել զայս խնդիր ազգային մատենագրութեան։ Խընդ-

---

[1] Զետեղելով «Հանդիսի» մէջ հանգուցեալ Մ. Նալբանդեանի սոյն աշխատասիրութիւնը, հարկ ենք համարում յիշատակել այստեղ՝ որ ձեռագիրը փոփոխել է հանգուցեալ Ս. Նազարեանցը և լուսանցքներում արել է բազմաթիւ նկատողութիւններ: Ձեռքի տակ չունենալով ներկայումս ձեռագիրը, մենք չկարողացանք և զուգընթացաբար յառաջ բերել այդ նկատողութիւնները: Բերում ենք միայն մէկը:

Ծան. Մ. Բ.

«Այս ամենայն փոխելի է այլապէս. բանք Մովսիսի Խորենա-
«ցւոյն հիմնաւոր են ամենեին. զի ի բառնալ յազգէն պաշտպանից
«լուսաւորութեան, յորոց սակի էր Սահակ Պարթև, և ի կործանիլ
«թագաւորութեան, ի հարկէ չմնայր այլ ևս յարգող և յառաջուցանող
«հայկական ուսման. զի զաւազան իշխանութեան է, որ հովանաւորէ և
«զգիտութիւն և զուսումն ազգի. և ոչ ուրեք ծաղկեցան իմաստութիւն
«առանց ազգային պետութեան:

րեմք ի պատուելի Հասարակացդ իբրու յապացուցութիւն մերոյս ուղղութեան կարծեաց, թէ ոչ յաղագս ի բառնալ ի միջոյ թարգմանչաց և նոցին աշակերտաց և այլոց նոցա հետևողաց դպրութիւնն Հայկական ՆՆՋԷՐ ՂԹԱՆՃՐ քուն[1], մինչև ցՄխիթար Սեբաստացի որ նոր ուրեմն հիմնեալ ի Վենետիկ յամի 1717 զվանս, զմիաբանութիւն, զուսումնարան և զտպարան և տեղի ետ նորոգութեան հին հայախօսութեանն յորմէ հետէ շարունակաբար փոքր քան շատ երևեցան և մատենագիրք և լեզուագէտք։ ԵԹԷ այսմ՝ պատասխանի արասցեն առողջ հայեցողութեամբ՝ ընկալցուք ապա զկարծիսդ իբր հաւանական, ապա թէ ո՛չ զմերն յառաջ խաղացուցանեմք զընթացս բանից, թէ գրոցս այս լեզուաւ եթէ խօսէին, կային այնք ի ժամանակս հայկայ և թէ ընդունելի լիցի ցվախճան իշխանութեան նախնի հայկազանց, իսկ զկնի այսորիկ հնախօսութիւնս սեպհականեցաւ քրմաց և մեհենականաց, այլ և եգիտ զտեղի ի Դիւանս Արքունեաց։ Ժողովուրդն առ հասարակ ըստ հարկին պահանջման ընական ընթացեալ կանոնիւք վարեցաւ աշխարհիկ զարդիս կոչեցեալ նոր հայախօսութեամբ, թէև հետ զհետէ խառնեալ յայն զփոխառեալս յօտարաց անշքացոյց մինչ ի սպառ, և բաղում՝ այն է ըստ քաղաքաց և ըստ աշխարհաց կերպարանագործեաց զհնչմունս բառից, մինչև անհասկանալի կացուցանել զլեզուն՝ որոց յայլմէ գաւառէ էին, զորոյ զփորձ առնումք մեք այսօր իսկ՝ անձամբ անձին։

Հնասէր մատենագիրք դարուս որք ամենաջան խրթնութեամբ գուն գործեն գրել զինչ և իցէ, հետևիլ համարին ուղղութեան հեղինակաց չորրորդ և հինգերորդ դարու՝ սխալին յոյժ, և թէ ոչչափ հակառակ էին ընթացք սոցա ընթացից թարգմանչաց կամ՝ այլոց ժամանակցաց նոցա ցուցանեմք ահա։

Թարգմանիչք մեր լոյս առեալ ի յունաց և ստորկաբար կալանաւորեալ յոճ խօսից Յունականին՝ զնոյն կալան շաւիղ և նոցին առաջնորդեալ տեսութեամբ, առանց միտ դնելոյ սեպհական աղգի պիտոյիցն՝ նախընտիր վարկան որպէս զմատեանն սուրբ, սապէս և սուրբ գրեանս՝ շնորհել աղգին ի լեզու բուն հելլենական ըստ ժամանակին, թերևս և ո՛չ առանց գիտակցութեան, զի առ ասիականս որպէս ցայսօր և իսկ՝ պաշտելի է աւանդու-

---

[2] Պատասխանի. ի քաղաքական պատճառաց, ի վայր ի վերոյ կործանմանէ Հայաստանեայց աշխարհի։

թիւնդ զվերաբերելիս կրօնի և աստուածպաշտութեան ունել խորհրդաբար, և ո՛չ հասկանալի ամենայն ումք, որով հանդիսացուցանէին զնուիրական պաշտամունս իբրև աստուածային բարբառով։ Այլ այս պղտորեալ տեսութիւն էր կելոց ի նախնի դարս, այժմիկ ի լուսաւորեալ 19-րորդ դարու՝ նախատինք էին անլուանալի, որոց սովին սեսութեամբ առաջնորդեալ՝ կամէին փառս որոնել անձանց ի սիրտ ժողովրդեան, առ անհասկանալի նմա գրելոյն, որով և զլեզուին անգործ թողուին պաշտօն։ Եթէ թարգմանիչք մեր առաջնորդեալ եղեն յունական տեսութեամբ, այլ և յաղթահարեալ յընդարձակ ասիական պաշտամանց մատենագրեցին դժուարիմաց, այո՛ և ոչ իսկ հարազատ հայկական հոգւով, մի՞թէ արժան իցէ հնասիրացդ հրաժարեալ ի շաւղաց լուսաւորեալ եւրոպէականաց, իբրև ի ժանտախտէ խոյս տալ ի գրելոյ ի լեզու նոր և կենդանի, արժան իցէ զաչս ընդդէմ փակեալ ճշմարտութեանն լուսոյ, զհետ պնդել խաւար առաջնորդութեան հնոցն, առանց շրջանկատ ուշադրութեան որ ինչ այժմուս հայկական ընկերութեան էին պիտոյք և ժամանակիս արդարացի պահանջելիք, և զի՞նչ այդ պաշտօն հեղինակի, և զինչ այդ կարծիք և տեսութիւն, որպէս թէ հնախօսութիւնն կամ ինքնին է լուսաւորութիւն և կամ առաջին և վերջին հնար լուսաւորութեան, գոնեա զայս լսեմք զոր հանապազ ի հնասիրաց և թէ նորախօսութեամբ կործանի հոյակապ շինուած հին հայաբանութեան։ Զարմանք այս են զի պատուելի հեղինակքդ այդքիկ ցայս վայր ժամանակի ո՛չ մարթացեալ ճանաչել զլուսափայլ ճշմարտութիւնն, դեռ ևս բաղում հանճարոյ և խմացականութեան պէտ ունին առ ի ճանաչել միայն զզիարդն և զորպէսն նոր հայախօսութեան։ Եւ արդարև՝ եթէ չէր դոցա պակասեալ ի հասկացողութենէ հարկ էր դոցա վաղ ուրեմն մերկանդամ տեսանել զայն բաւիղ տարակուսանաց՝ յորում դանդաղէին անխորհուրդ օդաբաղխութեամբ։

Խորհուրդ նոր հայախօսութեան չէ՛ր և չէ իսկ յաղարտ վարել զհիմունս հին հայկաբանութեան, քանզի եթէ յայս կէտ ուղղեալ էր զիւր ընթացս, որ զնորախօսութիւնն քարոզէր, սխալէր չարաչար, վասն զի աւերած բնականին և հնոյն ո՛չ կարէր սատար լինել կենդանութեան և նորոգութեան նորոյն, որ ի շրթունս յածէր ռամկին տարաձայն կերպաւորութեամբ ըստ քաղաքաց և ըստ աշխարհաց։ Լեզու չէ՛ր այլ ինչ՝ եթէ ո՛չ գոր-

ծարան և հնար որով բաւական էր մտածողն զխորհուրդս իւր զգալի կացուցանել, կամ միջնորդութեամբ օգոյ յունկն ընկերին աղդելով, կամ թէ միջնորդութեամբ գրոյ՝ առաջի առնելով ընթերցանելեացն. առաւել քան զայս չիք պաշտօն լեզուի, և ո՞վ այդքան վստահ մինչև նոր օրինակ տրամաբանութեամբ առաջարկելով հետևեցուցանել այտի, թէ առ աղնուագործելոյ և մշակելոյ զլեզուն՝ խաթարել և կործանել կազմած բուն հայախօսութեանն՝ որ միակ աղբիւր ճանաչի առ ի լցուցանել զպակասութիւնս նորոյ լեզուին. Ո՞րով հիմամբ մարթ է մտածել՝ որպէս թէ առաջի կայցէ կործանումն հնախօս լեզուին առ շինութեամբ նորոյն, ուսցուք ի լուսաւորեալ ազգաց, եթէ չզբաղմամբ մեզէն ճանաչել. զի՞նչ այլայլութիւն ձգեաց յինքն Կիկերոնեան լեզու, մինչ ի նմանէ յառաջ եկին այնքան բազմաճիւղ բարբառք Եւրոպիոյ՝ հռովմէական անուանելաք. ո՛չինչ, և կրկին անգամ ասացից ոչինչ. մեռեալն լատինաբանութիւն ո՛չ ևս բաւելով նորանոր հանգամանաց և որպիսութեանց ժամանակին, յար և նման հինն հայախօսութեան առ հայս՝ տեղի ետ ծնելութեան նորոյն, և մի՛թէ նորանոր բարբառքն հռովմէական վնասեցին ինչ մեռեալն լատինախօսութեան՝ որ զինչ և էր, նոյն և մնացեալ է ցարդ ի մատենագրութիւնս հեղինակաց, և այժմուս պաշտի միայն առ սակաւաթիւ ուսումնական ոմանս, և այն մասնաւոր և յոյժ մասնաւոր խորհրդով։ Նոյն բան է և զհին հայկականէն։ Բայց ի սէր Աստուծոյ հարցանեմք աստանօր թէ զի՞նչ. իմանան ուսումնականք հայոց պահպանութեամբ կամ կենդանութեամբ հնոյն լեզուի։ Քաջայայտ է ապաքէն, թէ հին լեզուն մեռեալ է և ի դնի խորս գերեզմանի, ըստ որում չունի կեանք և կիրառութիւն յընկերական կենցաղս, և զայս լեզու մեռեալ, զայս լեզու, (որ չէ լեզու, վասն զի լեզու ասի էապէս այն, որ կենդանի է, յար շարժողական ինչ մի խօսուն և ձայնաւոր ի շրթունս ազգի) կրկին մեռուցանել անհնարին է, բայց գոնեայ պահպանել զայն պարտ էր՝ ասեն իմաստունքն հայոց. և մեք ասեմք. կացցէ և մնացցէ դա անդ ուր էն, այսինքն կապեալ և կալանաւորեալ յիւրում՝ դարաւոր գերեզմանի, զի դորա չի՛ք տեղի ի կենդանեացն աշխարհի, և յայժմուս ժամանակի՝ որ ամենևին այլ է քան զդարս Մովսիսի Խորենացւոյ, Եղիշէի և այլոց հնախօս հեղինակաց։ Բայց խառնել և շփոթել զդարս և զժամանակս, և պահանջել անխորհրդաբար, զի հայք 19-րորդ դարու

հարմամբ կախարդական իմն գաւազանի թռուցեալ փոխադրիցին ի դարն չորրորդ կամ հինգերորդ հայկականս դպրութեան, և այն՝ յայնպիսի որպիսութեան միջի, յորպիսւոջ տեսանեմք զհայս (թէպէտ կոյրք ոչինչ տեսանեն, ըստ որում տեսութիւն չէ դոցա սեպհական), զայդպիսի Բաբելոնեան խառնակութիւն ի խելապատակս հայոց ո՛չ գովեմք մեք, այլ ամենևին հաւան եմք նոցին իմաստուն մտածողացն որ ուշի ուշով միտ եդեալ ժամանակացն փոփոխութեան և այժմեան որպիսութեան ազգին, հնար հնարեն, փորձ փորձեն զնոր բարբառն ազգային ի գործ մուծանել և մշակել զնա ըստ պիտոյից մերոց աւուրս։ Երանի՜ թէ յաջողեալ էր հնասիրացդ այդոցիկ Զանոսեան տեսողութեամբ նկատել զանցեալն և զներկայն, ուստի և ապագայքն որպէս որդիք ի հօրէ ընաւորեալ են յառաջանալ։

Արեղայական տեսութեամբ զարգացեալ՝ Յովհաննէս քահանայ Մ՚իրզոյեան վանեցի, դասատու հայկաբանութեան ի Զմիւռնիա, ի մերումս 19 դարու ելանէ ի բեմ հայկական խրթնաբանութեան իւրովքն երկհատոր տաղաչափութեամբք մակագրելովք «Ոսկի դար Հայաստանի» և «Արփիական Հայաստանի» և միով ճառիւ՝ զսուրբ Նշանէ Վարագայ, և որպէս մեզ թուի՝ նոր ի նորոյ տնկէ ի սրտի արեղայամիտ իմաստնոց հայոց զձգտողութիւն ամենաճիգն լինիլ ի խրթնաբանութեան, զորոյ ապացոյց՝ կարեմք քաղել ի գովաբանութեանց նոցին իսկ վանեցւոյն հետևողաց, որք առանց մտացն լծակաւ կշռելոյ թէ արժանաւորութիւն իմացական ինչ գործոյ չէ այն, զի իցէ յերիւրեալ ամենախրթին բառիւք, և իբր ի բաղումս անծանօթիւք բաղմաց, այլ, սմին հակառակ, պատարուն և ճոխ՝ հոգեսնունդ գաղափարօք, և հասկանալի ընթերցանելեացն. բայց այսոքիկ ոչ պահանջին. դոքա սքանչանան միայն ընդ այս խրթնաբանութիւն և իբրև տկարամիտ համբակս կոյր զկուրայն զհետ միտեն նորին ընթացից։ Աղաչեմք զառողջամիտ ընթերցանելիսն յորոց ի ձեռս անկեալ էին այնոքիկ վաստակք, ասել մեզ թէ զի՞նչ յայնս գտանեն, որ մարթիցի օգտել ի շինութիւն հոգւոյ և սրտի և սնուցանել մտաւոր կենդանութիւն մանկտւոյն. և մեք ի քնին մտեալ ո՛չ մի անգամ, գտանեմք ինոսա պատմական ծանօթութիւնս և եթ՝ աւանդեալս բանաստեղծական ոճով և ամենաջան և միանգամայն անընտել հին հայախօսութեամբ, զի որ ի նոսա են շեղջակոյտք իբր ի բաղումս անգործածական բառից, շարունակելոց յողջոյն ընթացս

գրուածոյն իբրու ընդ մի օղ շարեալ, առ և ո՛չ մի հեղինակ գտանեմք, թո՛ղ զմանս ի նոցանէ երևեալս երբեմն ի վաստակս առաջնոց մատենագրաց, իմա՛ դու զթարգմանիչս մեր։ Ասասցեն պաշտպանք հին հայախօսութեան, և ասասցեն մաքուր խղճմտանօք, թէ ո՞վ ոք ի հայկականս ընկերութենէ կարէ զայն առնուլ ի ձեռն և միթէ հրաճուանք ոմանց հնասիրաց՝ յընթեռնուլն զայն կարէի՞ն լցուցանել զպակասութիւնս որոց տանի և համբերէ զաւակն հայկական ի միջի աղբերաց՝ ծարաւի գտանելով, որպէս ասաց ոմն ի հնոց։ Մինչ յե՞րբ պաշտեսցի առ մեզ ասիականդ մոլորութիւն խօսիլ՝ գրել, երգել, այնպէս որպէս զի հասկացողք գտցին սակաւք, որպէս թէ որչափ սակաւ իցեն հասկացողք, այնքան գերազանց համարիցի բանն. ո՞վ պատմեաց դոցա թէ, զասացեալն գիտութիւն, որ պատկանի հասարակաց մարդկութեանս, պարտ էր պահել ի թագստեան և բանալ միայն հնգից կամ՝ տասանց. լուիցէ որ ունի ականջս լսելոյ, թէ զինչ ասէ հանճարեղ գերմանացին Շլէյդէն. գիտութիւնն պարտի սեպհական լինել բովանդակ մարդկութեան, և ո՛չ իբրև խորհուրդ կամ՝ գաղտնիք՝ յոր նուիրեալ էին սակաւք ոմանք, յորոց կաղմի միաբանութիւն ուսումնականաց։ Գանգատին ապա նոքին իսկ ուսումնականք հայոց՝ թէ չիք առ հայս լուսաւորութիւն, և թէ մանկտին հայկական չէ հակամէտ յուսումնառութիւն, որպէս թէ իրաւունք իցեն դաստիարակել զմանկտին մեռեալ և անծուծ լեզուաւ, և պահանջել ի նմանէ զի ընկալցի նա զայն, մնուսցէ ի հոգւոջ և պտղաբեր գործեսցէ զանդաստան մտաց՝ մինչ ո՛չ հասկանայ և տառապի միայն ընդ աւելորդ բեռամբ անհասկանալեացն։ Գանգատանքդ զհայկական մանկտւոյն յայնժամ և եթ լինէր իրաւացի, եթէ հնախօս լեզուն հայոց գէթ կրէր յինքեան զուսանելիս և զկենդանի դաղափարս՝ որովք ծաղկի Եւրոպա, և թէ հին լեզու կայ մնայ ցարդ մեռեալ և անհոգի, զո՞ր դաղափար կարէր տալ ուսանողին, ասասցեն ինքեանք ուսումնականք՝ թէ զի՞նչ ցայսօր ուսեալ է դոցա ի հին մատենագրութենէ, տոմնակս ոմանս, հրահանգիկս, կամ՝ ճառիկս ինչ և վասն որո՞ց. այժմեան աղգին հայոց որ ո՛չ հասկանայ զայդպիսիս, զորս թէպէտ և հասկանայր, օգտիլ ունէր և ոչինչ, վասն զի այդպիսի մանկունք նախ քան զծնանիլն, մեռեալ էին յարգանդի մարց՝ լոյս տեսեալ զհրապարակի և ահա տեղափոխին իբրու ի մի գերեզմանէ ի միւս գերեզման։ Ի մէջ այդպիսի

իրողութեանց և մերոյս հայկական մանկտուոյ վիճակ ո՞րպիսի ասացէ՝ որ գոնեայ ժամ մի և եթե նուիրեալ այդպիսի խնդրոց վերահասու եղեալ իցէ ճշմարտութեան. բայց ինձ այլապէս թուի, ճշմարտութիւն չի՛ք առ հայոց ուսումնականս, թո՛ղ զայն յոյժ տարակուսելի ճշմարտութիւն զոր ընդունին դոքա ի բերանոյ բարեկամաց, բայց ճշմարտութիւն այնպիսի՝ որ ելանէր ի բերանոյ թշնամեաց, անընդունելի էր. ուստի զհետ գայր, որպէս թէ զճշմարտութիւն պիտոյ էր չափել չափով բարեկամութեան կամ թշնամութեան, որ առ եւրոպացիս միշտ երկրորդական իրք էին, մինչ քննելի էր զճշմարտութիւն կարծեաց որոյ և իցէ առն մտածողի։ Առ հայս ի շրջակայս մեր տեսանի և ճշմարտութիւն մի այլ, ամենևին օտար ի լուսաւորեալ հոգւոյ մերումն ժամանակի, թէպէտ յոյժ ազգակից խաւար ճշմարտութեան պապականաց յընթացս միջին դարուց և անդր ևս. իմա՛ դու ինձ զայն ճշմարտութիւն, որ հաստատի հրամանաւ, սպառնալեօք և հալածանօք, ըստ որում՝ չեն ի միջի ապացոյցք յաղթողք, պատճառք բանաւոր. ողբալի ճշմարտութիւն, դաւազանաւ ապացուցեալ, ըստ որում հակառակորդն, թող զբռնութիւն գալանական, այլ զէն ո՛չ ունի։ Եղկելի՛ ճշմարտութիւն։

Ո՞չ կարացեալ ցայս վայր իմաստնոց հայոց շօշափել զհետին չքաւորութիւն հին մատենագրութեանն, որովք հային ի գիտութեանցն հանդէս, գիտութեանցն ասեմ, որով լուսափայլին միտք, կենդանանայ և սնանի հոգին, և կամ առ անհնարին հընասիրութեանցն յաղթահարեալ ի կրից հնչեցուցանեն, թէ լուսաւորութիւն ազգի կախի զհին մատենագրութենէ, և թէ սա ինքն է առաջին և վերջին հնար բորբոքելոյ զհայրենասիրութիւն, առանց որոյ առաջի կայցէ կործանումն ազգի, մանաւանդ, եթէ մատենագրեսցի նոր և վճիտ հայախօսութեամբ, որ ունի կեանք և կիրառութիւն յընկերական կենցաղս։ Ո՞վ տղայամիտ դատողութեանդ, և ո՞վ ի լուսաւորեալ հայոց՝ որոյ քննեալ և մաղեալ իցէ զհինն դպրութիւն, ոչ տեսանէ ակներև զայս անհիմն և սուտ դատողութիւն, որ չէ այլ ինչ եթէ ոչ հնար իմն արուեստակեալ առ ի խաբել զազգին պարզամտութիւն։ Ասացաք արդէն և խնդիր ի մէջ արկաք, թէ զի՞նչ ուսեալ է դոցա ի հին մատենագրութենէ, կամիմք լսել։ Թո՛ղ խօսեցին պատուելիքդ։ Բայց ցորչափ դոքա լռութեամբ միայն խոստովանին զիւրեանց պարտութիւն, մեք զմերս հրապարակեմք զկարծիս, թէ հին

մատենագրութիւնն բաց ի պահելոյ յինքեան զնուիրական բարբառ, չաւանդէ մեզ ապա եկեղեցս զայլ ինչ, ուստի բաց ի Ազգային պատմութեանցն տեղեկութենէ հնար էր քաղել այնպիսի գիտելիս որովք բարձր ի գլուխ պանծան եւրոպացւոցն մատենագրութիւնք ի մերումս դարու. ո՛չ և ո՛չ կարեմք նոյնպէս համեմատել զմերս հին դպրութիւն ընդ հին դպրութիւնս Յունաց և Հռովմայեցւոց, որ զայն բան ունէին առ մերս հայկական, զոր բան տիւ առ գիշեր. և ոչինչ մխիթարեմք՝ քաջ գիտելով թէ դպրութիւն ազգի միշտ ծառայացելոց և ըստ տրկացելոց այլասեռ իշխանաց, որպիսի եղեալ է Հայոցն, հարկաւ ունէր լինել ինչ մի ի ստորագունիցն յոյժ։

Արժանի էր հարցասիրութեան թէ զի՞նչ իմանան իմաստունքն Հայոց կործանութիւն Ազգի առ շինութեամբ նոր մատենագրութեան, ցաւ է ինձ խոստովանել աստանօր թէ պատուելի իմաստունք մեր դեռ ոչ կարեն հասկանալ՝ թէ ասացեալն Ազգ չէ այլ ինչ եթէ ո՛չ լեզու, առանց որոյ չէ մարթ լինել ազգի. Նա հոգի է ազգի, և ազգ մարդկան առ հասարակ նովաւ կենայ. իսկ լեզու չոր և անծուծ այլ և թաղեալ ընդ փոշով հազարամէից, որպիսի է հինն լեզու՝ ամենևին անկարող է վերակենցաղել զբանականութիւն շնչասպառ։ Զի՞նչ այդ տրամաբանութիւն ամենևին նոր և անբնական առ իմաստունս Հայոց, որք յառաջարկութեանցս՝ թէ Ազգ Հայոց անտէր և անպատսպար՝ մնայ ընդ երկար յետնեալ և պակասեալ մինչ ի սպառ ի լուսաւորութենէ, և թէ հինն լեզու՝ ո՛չ կարելով լինել նմա առաջնորդ ի լուսաւորութիւն, ըստ չունելոյ յինքեան զսննդարարն զայն հիւթ, որպիսի պահանջէ դարս լուսաւորեալ՝ առ ի պահպանել ըստ կարի զկենդանութիւն բանականութեան ազգին և անհասկանալի միանգամայն և անմերձենալի լինելով նոր ժողովրդեանն, պիտոյ էր ուղի հատանել լուսաւորութեան ընդ կենդանին բարբառ դնելով ի նմա ուղ և ծուծ բաւական առ ի կեանս հրաշագործել զննջեցեալ բանականութիւն, ուստի յայսցանէ հետևեցուցանեն թէ կործանի ազգն, եթէ ոչ թարթափեսցի առ նսեմ լուսով հնոյն մատենագրութեան և եթէ ջուացեալ պարարտասցի անդաստան բանականութեան նորա՝ կենդանի բարբառովն, որով վարեն հայք հասարակ ընկերական կենցաղս։ Զգիտեմք բնաւ, և զարմանք զմեզ պաշարեն՝ թէ զի՞նչ պատասխանի տալոց են մեզ իմաստունքդ մեր՝ եթէ ի բանից նոցա առեալ

հարցցուք զնոսա, վասն է՞ր ո՛չ կործանեցան աղինք Եւրոպիոյ, կամուրջ հաստելով լուսաւորութեան՝ զնոր բարբառ հասկանալի առ հասարակ, այլ ի սմին հակառակէ գտեալ զմուտ Նորոյ աշխարհի ծաղկեցան և ծաղկեն օր ըստ օրէ լուսաւոր և պայծառ հայեցողութեամբ ի ընաւս։ Այսու իսկ օտար ի ճշմարտութենէ կարծեաք յերբեմն ժամանակի, այն է ի կատարածի երեքտասաներորդ դարու արեղայամիտ դպրոցականք ախոյեան յարուցեալ ընդդէմ անմահին Դանթեայ՝ որ զԱստուածայինն կատակերգութիւն (Божественная комедія) գրեաց ո՛չ ի լեզու լատին, այլ ի հասարակաց հասկանալի իտալական. ցվերջին ճիգն ճգնեցան խափան արկանել վերանորոգութեան լեզուին, կարկատելով զանհեղեդ պատճառանս, զոր օրինակ առնեն այսօր իմաստունք հայոց հնասէրք և մանաւանդ որ ի նոսա զարգացեալքն էին դպրոցական սահմանափակ տեսութեամբ. և զի՞նչ. կարացի՞ն արդեաք ստանալ զանպարտելի ճշմարտութիւնն՝ որ քարոզիւր բերանով իմաստնոյն Դանթեայ. հալածանք առ ի դպրոցականաց ընդդէմ Նորոյս իտալախօսութեան ոչ այլ ինչ պտղաբերեցին, եթէ ոչ քաջալերելով զժողովուրդն արձան զանմահ երախտագիտութեան կանգնել Դանթեայ և ճանապարհ հարդելով նմա և այլոց հետևողաց առողջ բանի՝ ի կազմել զնոր դարագլուխս լուսաւոր մատենագրութեան, մերկացեալ զխաւար տեսութիւն դպրոցական իմաստակաց։ Այսպէս դատափետեալն ի յանցանս կործանութեան լեզուի՝ հանդիսացաւ գլուխ անկեան հոյակապ իտալախօսութեան։ Եթէ հնասէրք հայոց՝ համարեն զայս ամենայն յանուրջս անցեալ, և ո՛չ կամին զգալ թէ որ ինչ ընդ Եւրոպացիս էանց, նոյն կարէ անցանել ընդ հայս, ըստ որում՝ և հայոցս ազգ չէ արտականոն ինչ բացառութիւն յընդհանուրն մարդկութենէ, մեք հաւատարիմք առնեմք զպատուելիսդ, զի բնութիւնն և ժամանակն միօրինակ և միով անստերիւր կանոնաւ վարին ընդ ամենայն ազգս և ազինս և ոչ ոք ուժէ ճակատ յարդարել ընդդէմ՝ ներգործութեան ժամանակին և պահանջմանն բնութեանն. զանազանութիւն ի նոսա գէթ այս նկատի, զի Եւրոպէականք ոտանակառոյց ունելով ի հող իւրեանց հայրենի արդէն զընթացսն կատարեալ ելին անցին ի գահագլուխս թագաւորութեան գիտութեանց. իսկ հայոցս՝ թէև յօտարութեան նոր ուրեմն շնորհեցաւ զկետ ընթանալ նոցա թերևս և շնորհեսցի յԱմենակալ Տեառնէ՝ եթէ հնասէք հայոց՝ խնամ տարեալ հայ-

կական մանկտւոյն, որ ի բերան առեալ զանուղ և զանծուծ ուղղականն և ստեռականն՝ զզուին և նոգկտան, ցամաքին և չորանան հոգւով զգեցցեն զայնքան գէթ արութիւն առ խոստովանելոյ միայն զճշմարտութիւնս, և ի բաց յանձնէ քեցելոյ զախտ անխորհուրդ հնասիրութեան, որով ի մի հոգի և ի մի կամ բոլորեալ լուսաւոր մտածողայն՝ ձգտեսցեն այնուհետև բերել յանձինս իւրեանց զկենդանագիր ժիր սերմանացանի ի բանականս անդաստան հայկեան մանկտւոյն։

Առողջահայեաց հեղինակ զարդիս ի մէջ ջատագովեալ Վարդապետարանի Կրօնի, զոյն զայս լուսափայլ ճշմարտութիւն վաղ ուրեմն ծանուցեալ ի հրատարակել զՀոգեբանութիւն իւր տպագրութեամբ յամի Տեառն 1851 ի յառաջաբանութեան անդ Նորին յեղու իմաստասիրական ոճով բանից զայս ամենայն ի լսելիս մերայնոց, որոց ունիցին առողջ ականջս լսելոյ, և այսպէս ահա կատարելով արդարապէս զիւր գործ հրատարակէ զառաջինն ի նոր լեզու երկասիրութիւն, մակագրեալ՝ «Առաջին հոգեղէն կերակուր Հայազգի երեխաների համար» զկնի որոյ ի շինութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ ընծայէ ապկին զՎարդապետարանն Կրօնի իմաստուն յառաջաբանիւ։

Թողցի՛ մեզ աստանօր պարզապէս խոստովանիլ զճշմարտութիւնն, թէ այս առաջին անգամ՝ է զի Ազգ Հայոց ի լեզու հասկանալի ընթեռնու և տեղեկանայ իւրոյն պատկանութեանց իւր առ անձն իւր, առ ընկերն, և առ Աստուած և որ ինչ վերաբերին յաստուածային վարդապետութիւն, թէպէտ հարք նախնականք ի սկզբանէ անտի Հայոցս Քրիստոնէութեան առանցիցեն ազգին, եթէ ո՛չ ըստ այս կանոնի, գէթ այլապէս, որչափ զօրեցին, սակայն գոլով նոցա մատենագրեալ ի լեզու հին և անմատչելի Հայոց ժողովրդականաց, կացին և մնացին, որպէս և մնան իսկ այսօր, յանկիւնս վանօրէից և ի մենարանս աբեղայից։ Այո՛, ոչ շատ յառաջ քան զայս տպագրեաց ի Մոսկվա Մսեր Մագիստրոս Զմիւռնացի զիւր Հրահանգ քրիստոնէական վարդապետութեան (զոր աւելի արժան էր ասել քրիստոնէական դաւաբանութիւն (կատիխիզիս), քան թէ Հրահանգ քրիստոնէական վարդապետութեան), սակայն, թէ և ցաւ է մեզ խոստովանելոյ, այդ ևս ըստ օրինակի առաջնոյն էանց գնաց և եղև 'ի մոռացօնս ազգին, զի փոյթ չեղև պատուելի հեղինակիդ խօսել ընդ ազգին ի լեզու զոր հասկանայ և ազգն։ Յայս գործ Մագիստրոսիդ տե-

սանեմ՝ յաւէտ խուռն բազմութիւն վկայութեանց աստի և անտի հաւաքելոց, քան թէ ընթերցանելի բանս առ ի հեղինակէն, Որպէս մեզ թուի՝ կրօնուսոյց մատենագիրք մեր ի գրելն զայսպիսիս ունին իւրեանց կէտ նպատակի կրթել զուիստ եկեղեցւոյն որոց շատ թէ սակաւ հասկանալի է հին բարբառ, բայց եթէ սմին հակառակ ջանք նոցա միտեալ էին ի լուսաւորութիւն ժողովրդականացն առ հասարակ, հարկ էր ապա ընթանալ նոցա զայն ճանապարհ, զոր ընթացան ցարդ, ամենայն քրիստոնեայք, թարգմանեալ զսուրբ մատեանն և զԱւետարանն ի հին լեզուէ ի նորն և հասկանալին ժողովրդեան. Զայսպիսի ամենահարկաւոր հոգաբարձութիւն ոչ ուրեք տեսանեմք առ ի մերոց Աստուածաբան վարդապետաց, որք վայելելով ի վաստակս ազգին, անփոյթ արարին ի ձև պատշաճաւոր ջամբել ազգին զհայն կենաց, և զոր ինչ գործ ինքեանց կար գործելոյ յօգուտ սեփական ազգի, թողին գործելոյ, ով ամօթոյ ազգիս, օտարազնեայց ոմանց, Բազբլեան, ասեմ, Ավետարանական ընկերութեան միաբանից Դիտրիխ և Զարեմբա գերմանական քահանայից, որոց կամեցեալ հասկանալի կացուցանել Հայ ժողովրդեան զբանն Աստուծոյ, տպագրեցին վասն մեր Հայոցս յամի 1836 ի Մոսկվա զՆոր Կտակարան ի լեզու աշխարհիկ. Գործ այս արժանի բիւր շնորհակալեաց առ ի մէնջ, զի որ այն ինչ առաւելագոյն շնորհ, քան ճանապարհ յարգել քրիստոնէին չճանաչելոյ զաղբիւրս իւրոցն քրիստոնէական կրօնից, և ինքնին ուսանելոյ անտի զոր ինչ պարտ էր առնել և թողուլ. Երանի՜ թէ և ի մերայոց ոք նախանձաւոր գտեալ տարածելոյ զբանն Աստուծոյ, առողջ հոգւով, և հմուտ ձեռամբ ընծայէր Ազգին զբոլորամասնեայ թարգմանութիւն սուրբ գրոց, և այնու հասկանալի կացուցանէր զմատեանն հասարակութեան Ազգին. չի՛ք տեղի երկբայութեան թէ կրօնական ուսումն Հայկազանց հիմնեալ հաստատիւր յայնժամ ո՛չ ի վերայ բանից և և քարոզութեանց այլոց, այլ՝ ի վերայ ճիշտ ծանօթութեան Աստուածային ամենապարզ վարդապետութեան՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, այլ և լուսափայլ կերպարանափոխութեամբ ծաղկելոց էր ի գիտութիւնս, որ ինչ զԱստուծոյ՝ և զնորին ստորոգելեաց.

Անտեսեալ զայս ամենայն իմաստնոցն Հայոց, մինչ դեռ հարկ ի վերայ կայր խնամով հոգաբարձու լինել նոցին, արշաւեն ի մարտ պատերազմի ընդդէմ առողջ դատողութեան ոչ կամե-

լով ունկն մատուցանել օրինաւոր բանից և ապացուցութեանց ի մտածողացն կողմանէ, և փողէն զՀնախօսութիւն անվերջ կամակորութեամբ, որպէս թէ ոք, որոյ թարթափեալ էր ի յոյզ և ի խնդիր միոյ միայնոյ հայաբար հնախօսութեան՝ կարող էր մըտածել և խորհել, որ սեպհակա՛ն է լուսաւորելոցն։ Զի՞նչ արդեօք կարէ բարբառել դժբաղդ լեզուն՝ աղաչեմք ասել, եթէ զգայութիւնն ո՛չ թելադրէ նմա անդէն առ նմին զխօսելին, եթէ բանականութիւնն ծածկեալ է գեռ ևս փշովք և մամռովք՝ ոչինչ ունի հանելոյ ի հրապարակ։ Զգիտութիւն միոյ լեզուի և այն՝ լոկ հայկականին չէ բնաւ պիտոյ անուանել գիտութիւն. ամենայն որ և է լեզու, տեսեալ իբրև պահարան գիտելեաց, յարգելի էր և եթ. բայց այն լեզուագիտութիւն, որ ո՛չ ճոխացուցանէ զմիտս ուղիղ գաղափարօք և ճիշդ հայեցողութեամբք ի բնաւս՝ էր միայն անխորհուրդ մեքենայապաշտ ձգտողութիւն գիտելոյ զլեզուն, առանց մշակելոյ զանշէն մնացեալ բանականութիւնն, առանց յղկելոյ զտեսողութիւն նորա, վասն զի՝ լուսաւոր մտածութիւն է, որ նախակարգէ զխօսս. նա՛ է որ տայ կարողութիւն ճանաչելոյ և դատելոյ, մինչ լեզուն իբրև նիւթական մշակ այսր իմացական ներգործութեան կերպաւորէ զձայն մտախորհութեան՝ զգալի գործելով լսելեաց և ընթերցանելեաց։ Եթէ ըստ պատասխանելոյ հնասիրացդ, գիտաւորութիւն դոցա էր ստուգապէս լոյս ընձեռել Ազգային մանկտոյն և բառնալ զնախատինս նորա, ըստ որում մուրողաբար օտարին ապրի ողորմութեամբ, ապա արժան էր զնաւարն լուսով փարատել, և կենդանութեամբ ի կեանս վերակենցաղել զնիրհեալ հոգի հայկական մանկտոյն, որ լինէր ապաքէն հրաժարուելով ի քարուսն ճանապարհէ և ուղևորելով ընդ արքունին ճանապարհ, զի յաւուրս մեր շատ և շատ էին դժուարութիւնքն ծովացեալ և յանհնարինս ճիւղաւորեալ գիտութեանց, առանց ի վերայ կուտակելոյ և զլերինս, դժուար ուսանելի և ապարդիւն հին հայախօսութիւն։ Առ ի վկայութեամբ հաստատելոյ զասացեալսն ցայս վայր, ո՛չ աւելորդ համարիմք քերել հարևանցի զպատմութեամբ գրականութեանս մերոյ, առ ի յուսափայլ կացուցանել զսով հոգեղէն կերակրոց, որ ի նմա, և զքաղց սովալլուկ հայկական մանկտոյ ի նորայն անշքացեալ աշխարհի, յառաջ խաղալով արդէն ի կարգի բանիս։

Արմատական լեզու հայոց, գուցէ՝ և ընդարձակ նախահարց հայկայ բոլորօղեալ յԱյրարատեան աշխարհի՝ բաժանի յոս-

տանիկ և Յեկերականս[1] և որպէս կշռադատութեամբ բաւիմք ճանաչել, գրոցս այս լեզուի հարկ էր գոլ նոյն ինքն ոստանիկ անուանեալ, զի զսա գտանեմք յերգս վիպասանաց, և առ արքունի դիւանաւ Տրդատայ. իսկ դու ինձ զմատենագրութիւն Ագաթանգեղեայ յոյն պատգամագրի. իսկ հեռացեալ փոքր առ փոքր ի միջերկրէից յեղափոխի Յեզերականս. յետոյ ազգս բաժանեալ ի Ստեփանոսէ, զոր յառաջ բերէ Յովհան Երզնկացի ի մեկնութեան հին քերականութեան։ Գրականութիւն լեզուիս, որչափ լոյս տան մեզ նշխարք մնացեալք առ հինաւուրցն Խորենոյ՝ յար և նման առ ամենայն ազգս սկսանի վիպասանական երգովք զքաջագործութեանց դիւցազանց, զորս դեռ ի չորրորդ և ի հինգերորդ դարս երգիչքն ի Գողթան բամբռամբ երգէին[2]։ Հիմեալ հաստատի ապա ի պատմութիւնս, թէ ըստ ժամանակին անգթանալոյ զրկիմք զարդիս ի նոցանէ, շատացեալ յիշատակութեամբքն զորս ի մէջ բերէ Խորենացին, թէ որպէս Մար-Իբաս առաքեալ ի Վաղարշակայ արքայէ Հայոց՝ առ Արշակ արքայ, և յուզեալ զդիւանն արքունի՝ որ ի Նինուէ, քաղէ ի Հելլեն գրոց պատմութիւն ազգիս, և բերէ զայն ի Մծբին առ Վաղարշակ արքայ՝ յոյն և ասորի գրով[3]։

Պատմական և բանաստեղծական յիշատակարանք հին մատենագրութեանն զառաջինն զոհ լինին հպարտութեան և անձնասիրութեան Նինոսի արքայի ասորեաց, որ զինքն կամելով ցուցանել սկիզբն քաջութեան և լաւութեան՝ հրամայէ զբաղում մատեանս և զզրոյցս առաջնոցն ըստ տեղեաց տեղեաց և զոր ուրուք գործոց քաջութեան՝ այրել, իսկ որ առ իւրովք ժամանակաք՝ դադարեցուցանել, և որ ինչ վասն իւրոյ միայնոյ՝ գրել[4]։ Ճողոպրեալք յանփրկաւորն կորստենէ և յաւելեալք մինչև յԵսկիզբն չորրորդ դարու, ի ձեռն Լուսաւորչին Հայաստանեայց դատապարտեալ առ հասարակ իբրու շտեմարան սնոտիապաշտութեան, ընդ երևելի և հաղուագիւտ անդրիս և ընդ մեհեանս Աշտիշատու, Արտաշատու և Բագնաց Գիսանեայ և Դեմետրեայ և

---

[1] Հ. Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն. տպեալ ի Վենետիկ հատ. Գ. էջ. 7—8։—[2] Խորէն. ի Պատմութեան Հայոց. տպեալ ի Վենետիկ 1827. Գիրք Ա. գլուխ ԼԱ։—[3] Խորէն. Գիրք Ա, երես 47—52։ Յովհ. Կաթող. տպեալ ի Մոսկվա 1853. երես 11։—[4] Խորէն. Գիրք Ա, երես 76։

այլոց բազմաց դատին անկնայ ի հուր, ցաւ զանբուժելի թողեալ հնախոյզ բանասիրացն սրտի, որով ընդ մէջ անցելոց դարուց կէսերորդն զկնի Քրիստոսի՝ խտրոց ի մէջ անկանի, վիհ մեծ անանցանելի առ ի մէնջ։ Ոչ շատացեալ ժամանակին և այսու զոհագործութեամբ, ախոյեան յարդարէ ընդդէմ հայկական մատենագրութեան զՄերուժանն Արծրունի, որ թագին ցանկացեալ պատուոյն՝ հաճոյանալ նկրտի Շապհոյ Պարսից արքայի, և այրէ զամենայն գրեանն յունական տառիւք, հրաման տուեալ աշխարհին ուսանել զլեզու և զգիր Պարսից[1]։ Ի թև կատաղի փոթորկացս՝ թռչին ծածկին ի մէնջ և գիտութիւնք ծաղկեալք ի Հայաստան, ի կատարած առաջին դարու՝ առ Արտաշիսիւ երկրորդու, զորոց մանրամասն աւանդէ մեզ զյիշատակ փիլիսոփոսն Մովսէս[2]։

Զկնի այսանակ աղետից անցելոց ընդ իրականութիւնս մեր ի սկիզբն չորրորդ դարու, անցանէ ի նախաթոռ մատենագրաց մերոց սուրբն Գրիգոր իւրով Յաճախապատում երկասիրութեամբ զԱստուած և զաստուածայնոց. յերրորդականն գահ՝ բազմի Ագաթանգելոս յոյն պատմիչ, ճառելով զանցս՝ որք անցին ի տարածանել քրիստոնէութեան ի Հայաստան աշխարհ՝ ի ձեռն սրբոյ Գրիգորի։ Գոգցես ամենայն մատենագիրք մեր, սակաւ յոյժ բացառութեամբ՝ հետևին սոցա, որպէս տեսցուք ի ստորև, մատենագրելով՝ զաստուածաբանական և զպատմաբանական գրեանս։ Հոգին բանաստեղծական թափառեալ անպատսպար ի վերջոյ ի հինգ և ի վեցերորդ դարս գտանէ զապաստանարան յերգս եկեղեցւոյն Հայոց։ Ի սմին չորրորդ դարու սուրբ Յակոբ Հայրապետ Մծբնայ Զգօն կոչեցեալ ի խնդրոյ Վրթանէսի որդւոյ սրբոյն Գրիգորի, գրէ տասն և ութ ճառս Աստուածաբանականս և բարոյականս, որք ի միասին Զգօն կոչեցան յանուն սրբոյն Յակոբայ[3]. այսպէս և Զենոբ Գլակ ասորի գրէ ըստ հրամանի սրբոյն Գրիգորի զպատմութիւն եկեղեցւոյն Քրիստոսի ի Տարօն, յորոյ ի հաստատել և ինքնին գտաւ գործակից սրբոյն Գրիգորի։ Զսոյն զայս զիր շարունակէ յեօթներորդ դարու Յովհաննէս Մամիկոնեան, յաւելեալ ի վերջէ զծանօթութիւնս զմատենագրութենէ

---

[1] Խորէն. Պատմ. Հայոց. Գիրք Գ. երես 452 և 500. Զամչեան, Հայոց Պատմ. հատոր ա. երես 463:—[2] Խորէն. Պատմ. Հայոց. Գիրք Բ. երես 280 և 281:—[3] Զամչեան, Պատմ. Հայոց. հատոր Ա. Գիրք Բ. երես 424:

Հայոց։ Զմատենագրութիւն չորրորդ դարու, որչափ մեզ յայտնի է կնքեն Փաւստոս Բիւզանդացի և Մեծն Ներսէս Պարթև, որոց առաջինն՝ շարունակէ զպատմութիւն Ագաթանգեղոսի, պատմելով զանցս աշխարհին Հայոց ի 344 թուականէ մինչև ց392 թուականն, իսկ վերջինս՝ Աստուածաբանական ճառիւք, այլ և պատրաստելով զսուրբն Սահակ և զՄեսրոպ՝ կարապետ լուսաւորութեան հինգերորդ դարու։

Թղլ տացի մեզ աստանօր, փոքր ինչ ըստ սահման ելեալ ճառիս, առ որով պաշտի համառօտութիւն՝ հանդարտաբայլ ընթանալ ընդ ոսկեղէնս դար, թերևս՝ և հանգուցանել և սփոփել զվշտացեալն սիրտ, ընկճեալ իւր հարուածովք ժամանակին։ Եւ զի չէ մեր գիտաւորութիւն զպատմութիւն աւանդել զՀայոցս գրականութեան, որպէս պահանջեն կարգք և օրէնք, այլ միայն քաղել անտին զկարևոր գիտելիս առ ի վկայութիւն ասացելոցս ի մէջ, ուստի համառօտիւ նախակարգեսցուք աստանօր զոմանս ծանօթութիւնս արժանաւոր տեղեկութեան։

Սեղեխածին Պապ՝ որդի Արշակայ արքայի Հայոց տարփաւորին Փառանձեմայ զկծեցեալ յանսպատ կշտամբանաց Մեծին Ներսէսի, ամօթալի յղանայ զխորհուրդ՝ զկեանս դաւաճանել զսրբոյն (զմօրն ընթանալով զճանապարհ) և դադտ արբուցեալ Սրբոյն զեղ մահու՝ լուծանէ ի կենցաղոյս, թողեալ զերկոսին ամոլակիցսն զորդի սրբոյն Ներսիսի զՍահակ Պարթև և զՄեսրոպ հացեկացի զաշակերտ Մեծին Ներսիսի ի սուգ անմխիթար։ Զկնի ապերախտութեանս գործելոյ երանելին Մեսրոպ թողու ւքանէ զքարտուղարութեանն պաշտօն առ Արքունի դրան, և փութացեալ դիմէ ի ցանկալին միայնակեցութիւն, հոգւով կամելով հոգւոյ հօրն՝ լինել պարակից, և յետ վեց ամաց Խոսրով արքայ Հայոց ի տեղի Ասպուրակէսի Կաթողիկոսի Հայոց՝ յաջորդէ զՍահակ Պարթև, որ ստացեալ զաշակերտս իբրև վաթսնից՝ փոյթ ի մէջ առնու կրթել զնոսա յուսումն և ի գիտութիւն հելլէն դպրութեան։ Սփոփեալ սրբոյն Մեսրոպայ, և սրբեալ զարտասուս ընդ անպարտակիր մահ վարդապետի իւրոյ, տեսանելով զորդին հօրամոյն յաջորդեալ զնա, բուռն հարկանէ զլուսաւորութենէ Ազգին և ի խնդիր ելեալ Հայկական նշանագրաց առ ի կենագործել զդպրութիւնն՝ գայ առ սուրբն Սահակ զելս խորհել իրացն, այլ և զնա ինքն զսուրբն գտեալ ի նոյն անձուկ ճնճերեալ դառնայ յառանձնութեանն վայր Աստուծոյ Ամենակալի

թողեալ զիրսն ապաստան։ Յաւուրսն յայնոսիկ Վռամշապուհ արքայ Հայոց՝ երթեալ ի Միջագետս ըստ հրամանի Վռամայ արքայի Պարսից՝ լուծանել զգժտութիւնն՝ որ ի մէջ Յունաց և Պարսից կրէ նեղութիւն ոչ սակաւ, ի չունելոյ զոք գրիչ ճարտար, զի յետ մեկնելոյ սրբոյն Մեսրոպայ՝ դպիրք առ հասարակ եղեալք առ արքունի դրանն պարսկականաւն վարէին և եթ գրչութեամբ։ Ի դարձ առնել Վռամշապհոյ ի միջագետաց քահանայ ոմն յաղգէ ասորի Աբել անուն խոստանայ նմա զնշանագիրս Հայոց յարմարեալս ի Դանիէլէ եպիսկոպոսէ յիւրմէ մերձաւորէ. այլ Վռամշապհոյ անլուր խոստմանցն եղեալ, յելանել իւրում ի Հայս գտանէ ժողովեալ առ Մեծն Սահակ և Մեսրոպ (որ վերատին գնացեալ էր առ Սահակ) զամենայն զեպիսկոպոսունս առ հոգալոյ զգիւտ դպրութեան Հայոց, և յիրազեկ առնել նորա զժողովն բանիցն Աբելի՝ ադաչէ չլինել անփոյթ, վասն որոյ հրեշտակ վաղվաղակի առաքէ առ Աբել զայր հաւատարիմ Վահրիճ անուն, զկատարումն պահանջեալ խոստմանցն։ Առեալ հրեշտակին զԱբել, և երթեալ առ Դանիէլ՝ հմտանայ քաջ նշանագրացն, և դարձ ի ժողովն արարեալ մատուցանէ Սահակայ և Մեսրոպայ զնշանագիրսն. որոց զկնի ուսանելոյ վերահասու եղեալ՝ թէ նշանագիրքն չեն բաւական առ ի յօգել զամենայն վանկ բառից, առ պակասաւորութեանն զորոց թիւ Ասողիկ դնէ քսան և ինն, իսկ Վարդան քսան և երկու։ Ինքնին սուրբն Մեսրոպ աշակերտաքն հանդերձ գնացեալ առ Դանիէլ չգտանէ ինչ առ նմա աւելի քան զոր ուսան ի ձեռն հրեշտակին կանխաւ առ նա առաքելոյ։ Եւ ո՛չ կամեցեալ ձեռնունայն ի Հայս ելանել թափուր ի յուսոյն եղեալ՝ անցանէ յԵդեսիայ և ընդ Փիւնիկէ, և հասեալ ի Սամոս[1] առ աշակերտ Եպիփանոս-Հռոփանոս անուն որ վարժ էր ի դրականութեան հելլենականին, խնդրէ զձեռնտուութիւն առ ի կատարել զգործն, այլ և ի սմանէ ինչ ո՛չ օգտեալ ինքնին հանճարեղ մտացն առաջնորդութեամբ ստեղծանէ, զորմէ բան պատմի ի Խորենոյ օրինակ. «և տեսանէ (ս. Մեսրոպ) ո՛չ ի քուն

---

[1] Առիթ առեալ Զամչեանին զստէպ կրկնել Կորեանն զանուն Սամոստիա կամ Սամուսատ քաղաքի որ առ ափն Եփրատայ՝ համարի, Ոչ Խորենացին և Փարպեցին ասելով Սամոս չիմանան զկղզին Սամոս յանդիման Եփեսոսի, այլ զՍամուսատ քաղաք։—Պատմ. Հայոց, հատ. Ա. ծանօթ. Բ. զրոց երես 761։ Ծան. Հեղ.

«երազ և ո՛չ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի
«երևութացեալ հոգւոյն թաթ ձեռին աջոյ գրելով ի վերայ
«վիմի Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ի. զի որպէս ի ձեռն վերջք գծին
«կուտեալ ունէր քարն. Եւ ո՛չ միայն երևութացաւ, այլ և
«հանգամանք ամենայն որպէս յաման ինչ ի միտս Նորա հաւա-
«քեցաւ. Եւ յարուցեալ յաղօթիցն եստեղծ զնշանագիրս մեր՝
«հանդերձ հուսիանոսիւ կերպարանաձևեալ զգիրն Մեսրոպայ առ
«ձեռն պատրաստ, փոխատրելով զհայերէն աթուութեան ըստ
«անսայթաքութեան սիւզոբայից հելլենացւոց» (Խոր. Պատմ.
Հայ. Գիրք Գ. գլուխ 53). Ընդ այս ցնծացեալ սրբոյն Մեսրոպայ,
որպէս այր որ գտանէ աւար բազում, անդէն առ նմին աջակցու-
թեամբ աշակերտաց իւրոց Յովհաննու և Յովսեփու լինի ի թարգ-
մանութիւնս առակացն Սողոմոնի, և Նոր Կտակարանի, և գլխա-
ւորեալ զգործն՝ բերէ նշանագրաց հանդերձ ի Հայաստան առ ս.
Սահակ և առ Վռամշապուհ արքայ Հայոց. Այլ զի արանցս այ-
սոցիկ մեծաց՝ վաղ ուրեմն նախանձեալ էր զնախանձ Սատանին,
վասն որոյ հրաման անդէն առնէն ս. Մեսրոպայ բանալ զդպրոցս
և զհետ լինել ծաղկեցուցանելոյ զդպրութիւնն՝ սեպհական նշա-
նագրայն յաջողելով ժողովեալ զաշակերտս ընդունակս ուսման՝
զորոց զյատկութիւնս մանրամասն աւանդէ Քերթողահայրն Մով-
սէս. Յետ աստանօր այսպէս կարգելոյ և կարգադրելոյ հրաւիր-
եալ լինէր ս. Մեսրոպ ի Վիրս՝ առ ի նոյն գործ, որոց ևս արա-
բեալ զնշանագիրս իջանէ յԱղուանս, և ստեղծեալ կոկորդախօս
Գարգարացւոց լեզուին նշանագիրս դարձ անդրէն ի Հայաստան
առնէ, և գտանէ զսուրբն Սահակ ի թարգմանութիւնս հին Կտա-
կարանի յասորւոց ի հայ, վասն զի զյոյն գրեանն այրեալ էր
Մերուժանայ և պարսիկ վերակացուք թոյլ ումեք չտային ի հայոց
յունականաւն վարիլ դպրութեամբ, այլ ասորւոյն և եթ. Որ-
չափ ինչ զօրէ մարդկային մտաց ոյժ, զայն ամենայն շատ աջո-
ղակութեամբ ի գործ եղեալ հոգիացելոցս ի մարմնի, և վտարեալ
զամենայն նեղութիւն և զսատան՝ տարածանէն զգիտութիւն նշա-
նագրացն և այլոց կարևոր ուսմանց ի հայս ի բաժնի Պարսից՝
գիմեն փափագանօք ի նոյն առաքելութիւն և առ հայս, եղեալս
ի բաժնի Յունաց. այլ հանդիպեալ ատելութեան և ո՛չ ընդու-
նելութեան ի վերակացուաց աշխարհին՝ առաքէ ս. Սահակ զՄես-
րոպ և զՎարդան զթոռն իւր ի Բիւզանդիոն տուեալ նոցա տանել
զթուղթս՝ առ Թէոդոս կայսր, առ Ատտիկոս եպիսկոպոս Յունաց,

որ ի Հայոցս ազգէ Սեբաստացի քաղաքաւ, և առ Անատոլիս զօրավար, որպէս զի կայսերական արասցեն հրաման ընդ ամենայն տեղիս Հայոց ի բաժնի Յունաց՝ ընդունել զվարդապետութիւն սրբոյն Սահակայ և զնշանագիրս Մեծին Մեսրոպայ[1]։ Կայրն Թէոդոս զիջանէր ի խնդիրն և հրաման կայսերական տայր յարգել զՍահակ՝ ի յարգի կացուցանելով զվարդապետութիւն նորա, և զդպրութիւն Մեսրոպայ զառաջինն մերժեալ և ծախս դպրոցաց հրամայէր յարքունուստ լինել, ընդ նմին՝ զՎարդան արարեալ ստրատելատ, իսկ զՄեսրոպ գրեալ յառաջին վարդապետն։ Հասեալ հրեշտակացս առ Սահակ խելայեալ ի կայսերէ՝ զանձուկ փափագանաց սրտից նուլ ըղձանան, փոյթ լինին ի վարդապետել որպէս ծարաւի զք տօթակէզ փոյթ լինի ի կենդանի յառաջել գրոց հոսանս։ Այլ Սահակայ զՄեսրոպ բաւական գոլ տեսեալ առ ի կեանս հրաշագործելոյ զդպրութիւն Ազգին յարևմուտս՝ թողու առ նմա զթոռուն իւր, և ինքնին Վարդանաւ հանդերձ անցանէ յԱյրարատեանն աշխարհ, ի դուռն առաքելով Պարսից ըստ քաղաքական գործոց ժամանակին՝ զՍրմբատ ասպետ, և զՎարդան ստրատելատ։ Մեսրոպայ ծնեալ հոգևորն վերածնելութեամբ զորդիս, և ի տեղիս իւր զնոսա յաջորդեալ՝ զՂևոնդ և զԵնովք՝ ի Սպեր, Գինթ ի Դերջան, և զԴանան՝ յԵկեղեաց գաւառի, ինքնին խաղայ յԱյրարատ ի գաւառն Գողթ սրբել զաղանդ հերետիկոսաց զայնու ժամանակաւ երևեալ, և յետ զառաքելականն կատարելոյ զպարտս ելանէ ի Վաղարշապատ առ ս. Սահակ։ Ուստի խորհուրդ արարեալ լուսաւորչացս յաշակերտաց անտի իւրեանց զՅովսէփ և զընկեր նորին ի նմին Կողբ գեղջէ Եղնիկ անուն առաքեն ի Միջագետս յԵդեսիայ՝ առ ի թարգմանել և բերել զգիրս առաջնոց հարց փութանակի ի Հայս, զի ի նդն պաշտօն յղեսցին և ի Բիւզանդիոն։ Այլ սոցա հաւատս ընծայեալ քսութեանց ոմանց՝ որպէս թէ Մեծն Սահակ և Մեսրոպ զայլս ունին ի Բիւզանդիոն առաքել՝ առանց կամաց և հրամանի վարդապետաց իւրեանց դիմեն շեշտակի ի Բիւզանդիոն, և վարժեալ յունական դպրութեամբ՝ ձեռն ի գործ արկանեն ի թարգմանել և ի գրել։ Նախանձաւոր գործոյս գտեալ աշակերտակցաց նոցա, որոց անուանքն Ղևոնդ և

[1] Խոր. Պատմ. Հայոց Գիրք Գ. գլուխ 5—7։ Յովհ. Կաթող. Պատմ. տպեալ ի Մոսկվա. երես 33։

Կորիւն, ինքնակամ իջանեն ի Բիւզանդիոն, ուր հասանեն զկնի՝ և Յովհան, և Արձան, կանխագոյն առաքեալք ի Սահակայ և ի Մեսրոպայ, որոց դանդաղեալ ի Կեսարիայ յուլացեալն էին, Վեցեքին սոքա մարզեալ ի գիտութիւնս յունականին դպրութեան դարձ ի Բիւզանդիոնէ արարին, բերեալ ի Հայաստան զկանոնական թուղթս ժողովոյն Եփեսոսի և զճիշտ օրինակ թարգմանութեան եօթանասնից Հին և Նոր Կտակարանի, զորս առեալ Սահակայ և Մեսրոպայ թարգմանեն վերստին զմիանգամ թարգմանեալն և յաղագս անկատարութեան գործոյն թէ և Մեծն Սահակ վարժ էր քան զամենեսին ի յունականումն, առաքէին ըզՄովսէս Խորենացի՝ զձեռնասուն աշակերտ ս. Մեսրոպայ ընդ այլոց յաջողամիտ արանց յԱլեքսանդրիա՝ «ի լեզու պանծալի, ի ստոյգ յօգնական ճեմարանին վերաբանութեան[1]»։ Եւ այսպէս երևելի արանցս զայս գործ մեծակշիռ վասն ազգայնոյն վճարեալ՝ փութան մի զմիով զպսակ ընդունել առաքելութենանցն ի վերին Երուսաղէմ։ Սերմանեալ զներմն բարի ի բանական բարի անդաստան աշակերտաց իւրեանց, որոց ընդ առաջ ելցուք ի ստորև։

«Հայաստան աշխարհ վերակենցաղեալ նորոգ հոգևոր ծընեալամբ տանի ի գլուխ հինգերորդ դարու զերկոսին զսոսա իբրու պսակ ոսկեփունջ ոսկեղէնն դարու, պարտաւորին որդիք Հայաստանի ցորչափ կանն, և մինչ արև լուսաւորէ զնոսա յանզուգական լարերարս իւրեանց համաթուել, թէ և այլում ումեք ևս ժամանակին յաջողեալ էր կատարել զգործ մեծակշիռ»։

«Խնկեսցի յերկինս անուանդ Մեսրոպ, երկնային քաղաքացի և առաքելականաւդ հեղութեամբ հաճեաց ներել քումդ ապիրատ զաւակաց, որոց բանդագուշեալ ի զառանցանս կրօնամոլութեան և ուսեալ յումեմնէ Խաչատրոյ ժպրհեցին՝ քեզ համապատիւ զնշդեհեալն յԱտրիդեան ալիս՝ դաւանել, թերևս զանպարտականդ՝ պարտաւոր նմին կացուցեալ են քո որդիք, որք զանուն քո ի վեր քան զարն ունին, և քոյովդ նշանագրօք՝ զքո յիշատակ, ի սիրտս իւրեանց դրոշմեն»։

Յաշակերտաց սրբոցս թէ և ըստ պատմութեանն աւանդելոյ շատք գան մեզ ի ծանօթութիւն անուամբ և ևթ, այլ զի գործք նոցա ծածկին ընդ փոշեաւ վանօրէից Հայաստանի, կամ՝ ընդ

---

[1] Խորէն, Պատմ. Հայոց, Գիրք. Գ. գլուխ 61։

փլատակաք նուիրականն հայրենեաց՝ վասն որոյ արժան համարեմք զայսոսիկս մեզ գրուածովք կոչել յայս խրախճան, զանյայտն, թողեալ այլում՝ հայրենասիրի և հնասիրի՝ հանել յերևան։

Եղնիկ Կողբացին ընկեր Յովսէփու, ընդ որում առաքեցան ի Բիւզանդիոն՝ թողու մեզ զերկասիրութիւն իւր մակագրեալ «Եղծ աղանդոց» ի չորս հատուածս տրոհեալ. առաջինն՝ ընդդէմ հեթանոսութեան, երկրորդն՝ ընդդէմ դևերն Պարսից և քաւդէից նոցին, երրորդն՝ ընդդէմ իմաստնոց յունաց, և չորրորդն ընդդէմ Մարկիոնականաց և Մանիքեցւոց։ Որոյ ժամանակակից Կորիւնն վարդապետ, մականուանեալն սքանչելի՝ մոռանէ ի դար ընտիր հեղինակաց գրեալ մեզ զվարս և զկենաս վարդապետի իւրոյ Մեսրոպայ և ս. Սահակայ, զգիւտդ հայկական գրոց, և զիւրոյ իսկ զանձնէ զծանօթութիւն։ Զայսու ժամանակաւ երևի հայրն պատմութեան մերոյ՝ փիլիսոփոսն Մովսէս Խորենացի, զորով չկարեմք առնել զանց, և հարկաւորեմք առ վայր մի զկայ առնուլ և սքանչանալ ընդ այրն և ընդ բազմավաստակ արդիւնս նորա։ Յետ զամս եօթն յԱլէքսանդրիա վարժելոյ ընկերաք հանդերձ յամենայն իմաստս, որ ինչ ժամանակի բանականութեանն էր գիւտ՝ կամեցաւ նաւել յԵլլադա և գնալ յԱթէնս առ աշակերտակիցս իւր, այլ վասն հողմոյն ընդդէմ լինելոյն՝ խոտորեցաւ յԻտալիա, և ելեալ ի Հռոմ եկաց առ ժամանակ ինչ շահեցեալ զգիտութիւն զանազան իրաց, ուստի իջեալ յԱթէնս և ի Կոստանդնուպօլիս՝ փութացաւ յՍիրարատ, տեսոյ վարդապետացն իւրոց կալով կաթողին։ Սուգ անհնարին պաշարեաց զերանելին, այն ինչ ետես՝ թէ բազմերախտ վարդապետք իւր յառաջեալ ի կոչ վերին Կոչողին, թողեալ էին զասպարէզ կենցաղոյս, մինչ ետես՝ զթագաւորութիւնն բարձեալ ի տանէն Արշակունեաց։ Ողբս անդէն յօրինէ ի վերայ չարաշուք դիպուածոցս զորս գտանեմք ի վախճանի պատմութեան հայոց արարելոյ ի սմանէ, և փոյթ լինի ի լրացուցանել զթերութիւն թարգմանութեան սուրբ գրոց։ Սորա հանճարեղ բանականութեան է գործ՝ խնամով աւանդել յետնոցս զպատմութիւն ազգիս՝ սկսեալ յառաջնոց հայկազանց մինչև ցաւուրս իւր, զոր արար ի խնդրոյ Սահակայ Բագրատունւոյ, կցորդեալ յայն և զաշխարհագրութիւն՝ ըստ ժամանակին շնորհելոյ։ Սա՛ տայ մեզ լոյս տեսանել զառաջինն զանցեալս մեր, կարգ ըստ կարգէ լոյս առեալ ինքնին ի ժամանակին զրուցաց և հաւաստի պատմութեանց և արձանա-

գրութեանց որոց քաջ հմուտ զնա գոլ՝ ուսաք ի նորին իսկ գրուածոց, և այլոց նորա ժամանակցաց։ Ցօրինէ ի հայցուածոց ուրումն Թէոդորի զգիր պիտոյից, և զայլ բազում եկեղեցական երգս որք մի առ մի յիշատակին ի յառաջաբանութիւնս շարականաց տպելոց յորում և իցէ տեղւոջ, և զճառ ի Հռիփսիմեանս։

Ցիրաւի, պտուղք այնքան երկարավաստակ աշխատութեանցն սակաւ յոյժ տեսանին, այլ պիտոյ է սակաւիկ մի զաչս դարձուցանել ի վերայ ժամանակակից Արեղենին Հայոց և նոցին գլխաւորացն յետ մահու Մեծին Սահակայ և Մեսրոպայ, յորոց հալածեալ լինէին անինայ երանելիքս այսոքիկ[1], այպանելով ըստ գիտահալած մատեանն Փաթաղիկէս կոչմամբ, և չէ ինչ անհաւանելի, եթէ զորքան յօրինակաց երկասիրութեանցն ի ձեռս բերէին պարեգօտաւորքն զայն ամենայն կամ ի հուր դատէին, և կամ առ ի կուլ գրոց մատնէին, Նինոսին ախտացեալ զախտ, զի մի առաջի որոց գալոցն էին՝ հանդիսացին գործք առաքինեաց և զի մի երևեսցին ընտրեալքն։ Սոցա ձեռաց են անտարակոյս գործք կորնչիլ և չերևիլ զարդիս ուրեք «բանիցն չափաւ յինքն և ի Սահակ Բագրատունի», այսպէս և նղովիցն զոր թողեալ էր գրով ի վերայ գլխաւորաց քահանայութեանն չերկուանամք նոյնպէս սոցա առգրել զպատճառ կորստեան զանազան թարգմանութեանց Մեծին Մովսիսի, յորոց անպարապ գտաւ այրն Աստուծոյ ցնորին ալևորութեան[2], գուցէ և այսոքիկ իսկ են մատեանքն տգիտահալածք զորս յիշէ Փարպեցին Փաթաղիկէս կոչմամբ յաբեղենէն վերապատուեալ։ Յետ մահու Եղնկայ Կողբացւոյ գլխաւորք քահանայութեանն՝ երանելոյս տուեալ զեպիսկոպոսութիւնն Բագրևանդայ, իբրև զեղ մահու հեղձուցանեն ինմին, և զի ընդ այս նոցա ամենաձի խաբէութիւն արդարապէս ցասուցեալ սրբոյն՝ ի ժամ՝ վախճանին ասացեալ էր զահաւոր նզովս ի վերայ գլխաւորաց քահանայութեանն, յայն սակս պարեգօտաւորք սեղանակապուտ ձեռօք ընդ ոսկերս սրբոյն մարդ եդեալ՝ հանէին ի գերեզմանէն և ի գետ ամպին զորոց յիշէ երանելին Ղազար ի թղթի իւրում առ Վահան զայս օրինակ. «Երանելի փիլիսոփոսն Մովսէս, որ արդարև մինչ դեռ էր ի մարմնի՝ ցանկ երկնային զօրացն էր քաղաքակից. ոչ ապաքէն ի տեղւոջէ ի տեղի

---

[1] Թուղթ Ղազարայ առ Վահան, տպեալ ի Մոսկվա, 1853։

[2] Խորէն, Պատմ. Հայոց, Գիրք Գ. գլուխ 65։

‹ աբեղեանդ Հայոց Հալածական արարին, ո՞չ զԼուսաւորիչն և
‹ զգետահալած զգրեանն առ անգիտութեան «փաթաղեկէ» կո-
‹ չէին. և այլ բազում ինչ իրօք թշնամանեալ՝ յետոյ ապա
‹ յաղագս այլոց ամենոյ զնաբէական զեպիսկոպոսութիւնս նման
‹ դեղոց արբուցեալ սրբոյն՝ հեղձուցին, որոց ի ժամ վախճանին
‹ զի՞նչպիսի ահաւոր նշովս գրով ի վերայ գլխաւորաց քահա-
‹ նայութեանդ ասացեալ է՝ ձեզէն իսկ գիտէք տեղեկացեալք...
‹ Զոսկերսն ի գերեզմանէն հանել տային և գետ արկանել, ըզ-
‹ հրեշտականման այրն զտէր նոյն՝ անհանգիստ հալածանօք վախ-
‹ ճանեցուցին, որք այժմ դեռ ևս անյագութեամբ գինով ընդ
‹ մեռելոյն կագին» մի՞թէ հնար է ընդ ապերախտութիւն պա-
‹ րեգօտաւորացս քստմնիլ› . . .

Մամբրէ վերածնող եղբայր Մովսիսի Խորենացւոյ աւանդէ մեզ զքանի մի ճառս, յորոց երկուք դեռ տեսին զլոյս, ի յարութիւնն Ղազարու, և ի գալուստ Քրիստոսի յԵրուսաղէմ աւանակաւ։

Դաւիթ, կոչեցեալն անյաղթ, կամ փիլիսոփայ յորդեգրեաց Մեծին Սահակայ և Մեսրոպայ և քեռորդի Մովսիսի Խորենացւոյ ստացեալ զուսումն և զգիտութիւն յԱլեքսանդրիայ յԱթէնս և ի Բիւզանդիոն՝ թողու զկնի իւր զքանի մի երկասիրութիւնս, որպիսիք են «Ցաղագս սկզբանց» թարգմանութիւն Արիստոտելին Պորփիւրոսին, սահմանք փիլիսոփոսականք և այլ այնպիսիք, հայախօսութիւն հեղինակիս օտար է բոլորովին ի հայախօսութեանց այլոց հայկաբանից, ոճ գրութեան ստրկացեալ յունական բաղդասութեան։

Ղազար Փարպեցի, որոյ կենաց և վարուց եթէ ոք վերահասու լինել կամիցի՝ կարէ տեսանել ի թղթի նորա առ Վահան, տէրն Մամիկոնէից տպեալ ի Մոսկվա յամի 1853, աշխատութեամբ արգոյ գիտնականի Մկրտչի Էմին վերագրաւս. «Մեղադրութիւն ստախօս Աբեղայից»։ Այս Ղազար Փարպեցի արարեալ է զպատմութիւն Հայոց ի 388 թուականէ մինչև ց 484 թուականն զկնի Քրիստոսի, ուր նկարագրէ զգիւտ գրոց Մեսրոպայ, զլուսաւորութեանն տարածել, զթարգմանութիւն սուրբ գրոց, զպատերազմ Հայոց ընդ Պարսից, զարգաւանդութիւն Այրարատայ, զբարօրութիւն ազգին ընդ մարզպանութեամբ Վահանայ Մամիկոնէի իւրոյ պաշտպանի։ Ոգի հեղինակի անվեհեր, և գրուածք սորա ամենայնիւ ճշգրտապատուք, ի հայկաբանութեանն մասին

համարի ընդ առաջինն, թէպէտ ի տեղի տեղի ցուցանէ ճապաղ ոճ խօսից և ամենևին հակառակ ամփոփախօս Մովսիսի Խորենացւոյ։

Եղիշէ եպիսկոպոս Ամատունեաց, աշակերտ Սահակայ Պարթևի և Մեծին Մեսրոպայ, քարտուղար Վարդանայ Մամիկոնէի սպարապետի հայոց, ընդ որում գտաւ ի խռան մարտին ընդդէմ Յազկերտի երկրորդի Պարսից արքայի, որ զՀայաստան հրապուրէր ի կրօնս մոգութեան։ Ոգի հեղինակիս զուարթ, պայծառ, և հեզ, գրուածքն ի հայկաբանութեան մասին անզուգական, և ինչ ոչ մեղանչեմք և ո՛չ ըստ չափ ինչ զանցանեմք եթէ կոչել զսա համարձակեսցուք «Ոսկի լեռան» առ հայս, զի որ սորայս են պարզութիւն ոճոյ լծորդեալ ընդ փիլիսոփայականին, առողջ և կենդանի հայեցողութիւնք, առ և ո՛չ մի ընկերակիցս նորին գտանեմք։

Յատկութիւնք հոգւոյ առնս մեծի՝ նկարագրին վաւերաբար, առաջի՝ որոց ընթեռնուն զպատմութիւն պատերազմին Վարդանանց՝ ընդ Սասանեանս, որում, որպէս և կանխեցաք ասել, ինքնին հեղինակս գտաւ անձամբ անձին ականատես վկայ։ Զայս պատմութիւն երգեալ է սորա ի խնդրոյ Դաւթի երիցու. են սորա և այլ ճառք, աստուածաբանականք՝ և բարոյականք, այլ մեք յառաջ ընթացցուք զկարգ բանիս։

Զոսկի դար մատենագրութեանս՝ իմա դու ինձ զՀինգերորդն, կնքեն Յովհան Մանդակունի կաթողիկոս հայոց Մեծաց զկնի Գիւտայ, և Խոսրով։ Առաջինն ի սոցանէ կարկառէ մեզ զարդիս, զաստուածաբանական ճառս թուով քսան կամ աւելի և զայլ բարոյական խրատս։ Իսկ Խոսրով գրէ վասն մեր զպատմութիւն վարուց սրբոյն Սահակայ։ Զսոյն զայս Խոսրով գիտէաք մեք մինչև ցայսօր՝ ընկեր Ընձակայ, ընդ որում գնացեալ էր ի Պաղեստին վասն թարգմանելոյ ի հայ լեզու զգիր առաջնոց հարց, և որ՝ այլ այսպիսի ինչ է. այժմիկ արժանի էր հարցասիրութեան, արդեօք այս այն Խոսրով իցէ, զոր Ղազար Փարպեցի յիշէ ի թղթի իւրում առ Վահան Մամիկոնեան զորմէ յիշեցաք. յասելն յերես 65 «անարատ և յամենեցունց յարգելի յոյսն տէր Խոսրովիկ, « չև ևս հասեալ ի սահման մեր՝ մինչդեռ գայր ի Ճանապարհի « և լուան, (պարեգօտաւորք հոյոց) որպէս ի վերայ թշնամւոյ « ընդդէմ զինեցան՝ ասելով. «ահա ո՞ր գայ միւս թարգմանն»։ « Եւ օրհնելոյն ի հեռաստանէ լուեալ զդոնչիւն մահաձայն ա- « ղեղանցն՝ աղօթեաց առ Բարձրեալն և վաղվաղակի ընկալաւ

«զենդիրն, որում տենչալի նշխարացն այլք՝ և ոչ մեք, արժանի «եղեն ընդունակութեան»։

Ի սկզբանէ Հարևանցի պատմութեան հինգերորդ դարուս, տնտեսեալ մեր զհամառօտութեամբ՝ ակնկալաք միխիթարութեան հանդիպել հոգւոյ. և յիրաւի՝ ոչ իսկ վրիպէաք ի յուսոյ, եթէ Արեղենին գործք՝ ոչ կսկծեցուցանէին զսիրտ մեր։ Այլ եթէ յոսկեղէնն դարուս, գոնեա՛ և առ անգամ չկարացաք այնմ՝ պատահել, ի յաջորդն յուսալ՝ չէ առն բանագիտի գործ, յորս դուն ուրեք երևին արք ականաւորք, ի բանս արգասաւորս։ Այլ զի զընթացսն կատարեսցուք բեր յիշել որոց յայտնի են մեզ գրածք։

Վեցերորդն դար անցանէ, առանց թողլոյ մեզ զկնիք հետոց նշանաւոր գտեալ միայն վերանորոգութեամբ (չէ կարդացվում) ի ձեռն Մովսիսի երկրորդի կաթողիկոսի եղիվարդացւոյ։

Եօթներորդ դար, թէև բազդատութեամբ առ այլ հոծ և հարուստ դարս անբերրի և ամուլ գտաւ ի ծննդականութենէ, սակայն բարձեալ տանի ի գիրկս իւր քանի մի անձինս որք շատ կամ սակաւ ծանեան զլուսաւորութիւն և ողջունեցին զմերս գրականութիւն սակաւաւոր գրուածովք, յորս Անանիա Շիրակացի որ ուսեալն էր զմաթեմատիկական ուսումն առ Տեւկիքոսի Բիւզանդացւոյ ի Տրաբիզոնդ, յօրինէ զաստուածաբանութիւն, զքերականութիւն, զճարտասանութիւն ի փոխ առեալ զայս ամենայն ի Յունաց և ի Քալդէացւոց, գրէ և զանազան ճառս ի խնդրոյ հարց միանձանց։

Թէոդոս Քռթենաւորս ինքնացեալ վարժութեամբ հելլենական դպրութեան, և ըստ ժամանակին տեսութեանց՝ հմուտ աստուածաբանական գիտութեանց, սա թողու մեզ քանի մի Աստուածաբանական ճառս՝ ընդդէմ Յովհաննու մայրոյ վանեցւոյ և աշակերտի Նորին Սարգսի Բուխարացւոյ։

Մովսէս Սիւնի եպիսկոպոսդ քերթող առ մեզ անուանեալ յաղագս յօրինելոյ զքերականութիւն, զճարտասանութիւն և զայս հռետորական ճառս, վարժ գտաւ սա ի դպրութեան հելլենականին, և առաւել ևս՝ ականաւոր ի հայկաբանութեան մասին, մինչև բազմաց ի կարծիս լինել թէ սորա է գրած գիրն «Պիտոյից» արարեալ ի հինաւուրց Խորնոյ, որպէս և զքերականութիւն սորա և զհռետորական գիտութեանցն կանոնս առ գրեն ի դարձ փոխարինին պատուական ծերունւոյն։ Այլ մեզ թուի՝ թէ համանունութիւն երկոցունց սոցա տուեալ է տեղի կարծեացդ,

քան թէ արժանաւորութիւն Մովսիսի Սիւնեցւոյ՝ որ և ժամանակաւ և գրուածոցն պատուականութեամբ քաջ իբաց հեռի է ի Մովսիսէ Խորենացւոյ։

Մովսէս Կաղանկատացի ելանէ ի Հանդէս ի կատարած եօթներորդ դարուս իւրով Աղուանից պատմութեամբ զոր ընդ ձիգ ժամանակս համարէին կորուսեալ։ Արժանաւորութիւն հեղինակիս չափի և կշռի անկողմնասէր ստուգութեամբ աւանդելոցն և յատկութեամբ ոճոյ բանիցն։ Զսոյն զայս պատմութիւն գաղափարեալ յընտիր օրինակէ խոստանայ հայրենասիրաց արգոյ Մկրտիչ Էմին տալ տպագրութեամբ ի լոյս։ Զմատենագրութիւն դարուս կնքէ Յովհաննէս Մամիկոնեան, շարունակեալ զգրած Զենոբայ, զորմէ յիշեալ ենք կանխաւ, հանդերձ հաւելուածովն որ ի վերջոյ՝ զմատենագրութենէ հայոց։

Վասանգեալ հայաստանի անիշխանութենէ, յութերորդ դարու՝ հանէ ի հրապարակ գէթ զերկուս հոյակապ անձինս, թարգմանիչս յունական դպրութեան, որոց աջողաձեռն յաջողութեամբ բերէ յինքեան զտիպար հինգերորդ դարու։ Մին ի սոցանէ Յովհան Օձնեցի, կաթողիկոս ամենայն հայոց, որ ըստ մտացն խոհականութեան և արգասաւոր բանիցն, և վարժութեան ի փիլիսոփայականին, Իմաստասէր կոչմամբ վերապատուեցաւ։ Սորա յաթոռ ամբարձեալ հայրապետական յամին 718, զամենայն ճիգն ճգնեցաւ խաղաղեցուցանել զեկեղեցի մեր, և մաքրել ի խժական հաւատադիտութեանց հերիսիովտաց, որք զայն ժամանակաւ երևէին։

Ականաւոր գրուածք սորա համարին. ա) Ճառ զոր խօսեցաւ ի ժողովն Դունի յ719 թուականի յերկրորդ ամի կաթողիկոսութեանն. բ) Ճառ ընդդէմ երևութականաց, որ յարաբերի մանաւանդ մարդեղութեան Քրիստոսի և երկուց և անշփոթ և անբաժանելի բնութեանց, ի մի Քրիստոս միաւորելոց. գ) Ճառ ընդդէմ արևորդեաց, որոյ հետք նշմարէին դեռ ի հայաստան մինչև ցութերորդ դարն։

Երկրորդն Ստեփանոս Արք եպիսկոպոս Սիւնեաց, որոյ երկասիրութեանց շատք վասն մեր համարին կորուսեալ, իսկ որ պահին առ մեզ՝ են՝ սոքին, թարգմանեալք ի յունականէն Դիոնեսիոսի Արիսպագացւոյ՝ յաղագս երկնայնոցն Քահանայապետութեանց. Գրիգորի Նիւսացւոյ բանք Աստուածաբանականք. Կիւրղի Աղեքսանդրացւոյ գիրք, և այլ բազումք։

Յիններորդն դարու Հայաստան աշխարհ սրբեալ զարտասուս կարեկցութեամբ իմաստուն իշխանացն Բագրատունեաց, որք բազմաք սատարեցին լուսաւորութեան Նորա՝ երևեցուցանէ ի միջի այլոց զՅովհաննէս կաթողիկոս պատմաբան վերակոչեալ Իմաստասէր. սորա քաղեալ ի հին և ի կենդանի աղբերաց պատմութեան ազգիս, գրէ զպատմութիւն Հայոց սկսեալ ի վաղնջուց ժամանակաց մինչև յաւուրս իւր, անդր քան զչափն ճոխաբանութեամբ։ Պատուելի հայր Մխիթարեանք, ի թիւս այլոց հեղինակաց հնոյն Հայաստանի ոչ կամեցան և զսորայս պակել պատմութիւն, համարեալ զնա հակառակ Քաղկեդոնական ժողովոյն։ Տպագրութիւն սորա տեսաւ յԵրուսաղէմ, այլ տպեալ յաղաճատ օրինակէ, զոր յամին 1853 նոր ի նորոյ տպագրեաց յընտիր օրինակէ արգոյ Մկրտիչ Էմին ի Մոսկվա քաղաքի։ Զկնի սորա յառնէ Թովմաս Արծրունի պատմաբան, որ ըստ խնդրոյ Գագկայ Արքայի յազգէն Արծրունեաց յօրինէ զպատմութիւն Արծրունի տոհմին, տրոհեալ զայն ի հինգ գիրս, տպագրեցաւ այս ի Կոստանդնուպօլիս յամի 18—։

Տասներորդն դար հասանէ, բարձեալ բերելով ի գիրկս՝ զԳրիգոր, այր՝ յաւէտ երկնային քաղաքացի քան Նարեկացի, որոյ աստուածաբարոյ աղօթք առ մեղ Նարեկ անուանեալ, գործ արդարև անզուգական, առաւել ըստ մտացն բարգաւաճութեան և վսեմութեան ոճոյն, սորա գործ են դարձեալ մեկնութիւն երգոց երգոյն Սողոմոնի, զանազան ճառք ի ս. Կոյսն Մարիամ, յառաքեալսն ի կենագործ խաչն Քրիստոսի։ Այսմ դարու պատկանին նոյնպէս Ստեփաննոս Ասողիկ, հեղինակ պատմութեան Հայոց, ի սկզբանէ ազգիս ց 1000 ամն, որ առ ճշգրիտ տարեգրութեան համարի նախապատիւ քան զայս։ Ղևոնդ երէց, հեղինակ պատմութեան Մահմեդի և խալիֆաց արաբացւոց։

Ի սկիզբն մետասաներորդ դարու եկաց (չէ կարդացվում) վարժ քաջ ի մաթեմաթիկական ուսմունս։ Սա ըստ խնդրոյ Անանիայի՝ եպիսկոպոսի Վաղարշապատեցւոյ գրեաց զճառ մի վասն տումարի և զգիրս վասն քրիստոնէական հաւատոյ։ Գրիգոր Մագիստրոս Պահլաւունի[1], որոյ ոճ կարի ծանր ստրկացեալ միանգամայն յու-

[1] Զբառդ «մագիստրոս» պիտի իմանալ ոչ ըստ մտաց այժմեան գործածութեան նորա առ եւրոպացիս, իբրև ուսումնական աստիճան, այլ քաղաքական վերապատուութիւն. հայք առ հասարակ չունելով զհա-

նական դպրութեան, են սորա նամականիք վերաբերեալք ի քաղաքական կառավարութիւն, ի պատմական և փիլիսոփոսական գիտութիւնս. սոյն նա յայտնի է մեզ իբրև թարգմանիչ յոյն և ասորի գրեանց, զորս թէև ըստ ժամանակին անգթանալոյ կորուսեալ եմք։

Ի սմին մետասաներորդ դարու եկաց և Արիստակէս Լաստիվերտացի, հեղինակ պատմութեան Հայոց յ 988 թուականէ ի թագաւորութենէ Գագկայ առաջնոյ ի տանէն Բագրատունեաց մինչև ց 1071 թուականն։ Պատմէ նա զաղետալի կործանումն Անւոյ և Շիրակայ գաւառի։ Գրիգոր վկայասէր թարգմանիչ վարուց սրբոց յասորի և ի յոյն լեզուաց, որոյ վասն և վկայասէր կոչեցաւ։

Ցերկոտասաներորդ դարու Գրիգոր Պահլաւունի ուղղագործեալ զտովմար և զտօնացոյց Հայոց, և երգեալ զշարականս թողու զաթոռ Հայրապետութեան յաջորդել կրտսեր եղբօր իւրոյ Ներսէսի Շնորհալւոյ որ վասն ի Հռոմկլայ բնակելոյն անուանեցաւ և Կլայեցի։ Բազմաթիւ են գրուածք սորա, և առ ուսումնական և աստուածաբանական գրուածոցն, հարկաւորեմք պատկառ ակնածութեամբ ասել զայս արդարև հօտապետ և մխիթար Ազգային եկեղեցւոյ։

Ի չափաբերական բանաստեղծութեանց սրբոյս ականաւոր են. «Յիսուս Որդի», «Ողբ Եդեսիոյ», ի պատճառս աւերման քաղաքին ի յարձակմանէ խմայելացւոց յամին 1144, պատմութիւն Հայոց և եկեղեցական երգք ի զանազան դէպս։ Յարձակ շարադրութիւնս նորա զառաջին տեղի ունի գիրքն կոչեցեալ Ընդհանրական, տպեալ ի Սանկպետերբուրգ։

Իգնատիոս վարդապետ մեկնիչ Ղուկասու աւետարանի, իսկ Սարգիս վարդապետ առ քաղցրութեան բանիցն և խորին ուղղամտութեան Շնորհալի անուանեալ մինչև կաթուղիկեայց։

Մատթէոս Ուռհայեցի քահանայ, գրող պատմութեան

մալսարան և զակադեմիայ, չունին և զուսումնական մագիստրոսս կամ վարդապետս, զորս և ունել չկարեն չև յարուցեալ զամբարտակ համատարած գիտութեան ի սեպհական համալսարանս. յիրաւի է կարեն հայք մագիստրոսական հասանել պատուոյ, այլ այն կամ ուսեալ յօտար համալսարանս, և կամ վկայեալ ի կաթողիկոսէն Հայոց, որպէս ըստ վերջնոցս Մսեր Զմիւռնացի։

խաչակիր զօրաց, և թագաւորութեան Աշոտայ. պատմութիւն սորա սկսեալ ի 952 թուականէ աւարտի ի 1132 թուականի. ոճ գրութեանն առ հասարակ պակասեալ ի բուն հին հայախօսութենէ, չունելով զհարթութիւն առաջնոյ հայկարանից՝ նշմարին և հետք այժմեան նոր հայախօսութեան։ Աւելորդ համարելով մեզ յիշել աստանօր առանց բացառութեան զամենայն հեղինակս որպէս երկոտասաներորդ, նոյնպէս և հետևեալ դարուց, շատանամք յիշելով զգլխաւորս և եթ, յորոց կարեմք արդէն եզրափակել զոյժ և զկարողութիւն գրականութեան մերոյ, ի վկայութիւն ասացելոցս ի մէնջ։ Եւ այսպէս թողեալ զայլն յիշեմք զՆերսէս Լամբրոնացի այր խրոխտ քաջալեզու և գիտուն յոյն և լատին դպրութեան ի 23-երորդ ամի կենաց իւրոց արժանացեալ վերատեսչական պատուոյ յամի 1179 ի ժողովն Տարսոնի, խօսի զՃառ վասն միաւորելոյ զեկեղեցին հայոց ընդ Յունաց։ Ճառս այս արժանի ծանօթութեան ըստ լեզուին ճոխութեան և ըստ իմաստիցն բարգաւաճութեան տպագրեալ ի Մխիթարեան հարց, իսկ միւս ճառք նորա ի վերայ հոգւոյն Աստուծոյ և համբարձման Քրիստոսի գտանին յամենայն ճաշու գիրս հայաստանեայց եկեղեցւոյ։ Ոճ սորա և ազդութիւն իմաստիցն պատճառս տայ գոնէ մեզ՝ նմանեցուցանել Ղազարայ Փարպեցւոյ, առ որոյ տեսանեմք զհատու իմաստից զեղմունս։ Ի կատարած երկոտասաներորդ դարու Մխիթար առակախօս, մականուանեալ «Գօշ», մնանէ ի թիւ հեղինակաց հայկական դպրութեան իւրով բարոյական առակօք և համախմբութեամբ քաղաքական իրաւանց, հիմնաւորելոց առ հասարակ ի վերայ օրինաց եղելոց ի Թէոդոսէ և ի Յուստինոսէ և զանազան ճառիւք ի վերայ կարգաց և ծիսից հայոց եկեղեցւոյ։

Յերեքտասաներորդ և չորեքտասաներորդ դարս թէպէտ և երևին ի պատմութեան գրականութեան մերում անձինք որք շատ կամ սակաւ կարկառեն մեզ զերկասիրութիւն իւրեանց, սակայն անհամեմատելի զանազանք ի կորովաբանելի հայախօսից, որպէս Գրիգոր Սկևռացի աշակերտ Ներսիսի Լամբրոնացւոյ, սորա ժամանակակից Մխիթար Անեցի, Արիստակէս հեղինակ քերականութեան և համառօտ բառարանի հայկական լեզուի։ Յովհան Վանական, Վարդան Բարձրաբերդեցի, Կիրակոս Գանձակեցի, Վահրամ Եդեսացի քարտուղար Լևոնի Արքայի հայոց։ Յովհան Երզընկացի պլուզ որ մանաւանդ յայտնի ի հանդիսի հայկական

դպրութեան մեկնութեամբ քերականութեան, և աստղաբաշխական գիտութեամբ, զորմէ գրեաց ի խնդրոյ իշխանին Վրաց Վախթանկայ և եպիսկոպոսին Տփխիսայ յամին 1284։ Ի սմա դադարեալ տեսանեմք զոճ հայախօսութեան Խորենացւոյ և Եղիշէի։ Ստեփանոս Օրբէլի պատմաբան որ յաւէտ ի յարգի է վասն ճշգրիտ ժամանակագրական ծանօթութեանցն, զորս առ նմա գտանեմք. երևին և ի գրածս սորա հետք այժմեան նոր հայախօսութեան։ Գրիգոր է կաթողիկոս հայոց՝ նորոգիչ տոմարի մերոյ ըստ տոմարի Յունաց և Լատինացւոց։ Յաւուրս սորա ծաղկի Խաչատուր վարդապետ Կեչառացի, երգիչ եկեղեցական շարականաց։

Հայկական դպրութիւն կենագործեալ յունական հոգւով, երբեմն երբեմն յընթացս ամրողջ ութն կամ ինն դարուց՝ այն է սկսեալ ի հինգերորդէ մինչև ցվախճան երեքտասաներորդ դարու պերճացեալ ընտիր հայախօսութեամբ կործանի ի սպառ ի չորեքտասաներորդ դարու, զի ի հնգետասաներորդ դարուն միայն Թովմա վարդապետ Մեծոփեցի ճառէ զանցս ադետից անցելոց ընդ Հայաստան, յարշաւանաց Լանկթամուրայ որ անշքացոյց գոգցես զԱրևելեանն Ասիա։ Յպրիացեալն Հայաստան և ի թագաւորութենէ և ի մատենագրաց, ինչ ոչ տեսանեմք այնուհետև բայց եթէ հարուած վերահաս յասպատակութեան Թաթարաց և պլոց հետ զհետէ յորս էանց զչափ անգթութեան առաւել քան զամենեսին դժոխածին Լանկթամուր, որ ճակատ յարդարեալ ընդդէմ Խաչին Քրիստոսի՝ կործանեաց զեկեղեցիս, յաւուր առ զանօթս սպասահարկութեանց, գերիսեաց զբնակիչս և զամենայն մատեանս եղեալս յաշխարհին հայոց՝ կապեաց յանիկ աշտարակի ի հայրենի քաղաքի իւրում ի Սմրղանդ, հրաման տուեալ մի ումեք համարձակել հանել անտի զգրեանն որպէս առանդեն մեզ յիշատակագիրք ժամանակին։ Անիշխանութիւն հայաստան աշխարհի յանուսումնութենէ և յանդաստիարակութենէ յառաջացեալ և արմատացեալ անմիաբանութիւն հայոց՝ յամենայն բարի գործս, անխորհուրդ, յիմարական նախանձ սոցա առ միմեանս, կրկնապատկէ զցաւ և զվիշտ հայաստանի, այն որ երբեմն յաւուրս Արամայ նահապետի իւրոյ հրովարտակ առնէր ընդ ամենայն սահմանս պետութեան հայկականաւ վարել լեզուախօսութեամբ, այժմ ենթարկեալ յեղափոխութեանց ժամանակին ստիպի ինքն կորուսանել զնուիրականն բարբառ, աւանդ հայկա-

կան։ Եւ այսպէս տեղի տուեալ անիմաստութեան և տգիտութեան՝ ամայանայ մինչ ի սպառ մատենագրութիւն։ Այլև ժամանակն ինքնին սկսանի ճանապարհ յարդարել դէպ ի նոր հայախօսութիւն՝ որոյ հետք ահա նշմարեալ եղեն ի մետասաներորդ դարու և անտի օր քան զօր յառաջ խաղալով՝ ձևակերպեցին զմերոց աւուրց բարբառ աշխարհիկ, զանազան ըստ տեղեաց և աշխարհաց, և շատ կամ՝ նուազ մօտ յստակ հայախօսութեան, թէպէտ առ հասարակ պիտոյ է ասել թէ հին հեղինակացն բարբառ չէ այնքան այլայլեալ ի շրթունս հայոց, որչափ ինչ հինն լատինախօսութիւն ի շրթունս Իտալացւոց, Գալլիացւոց և Հռոմէական ասացեալ ազգաց։ Զսորայս հակառակն պիտոյ էր ենթադրել միտ եդեալ անեզը և անվերջ յեղափոխութեանց և սասանութեանց եղելոց ի Հայաստանեայց աշխարհի։

Անպտղութիւն և առ հասարակ սով ի մատենագրութեան մերում ի վեշտասաներորդ և յեօթեւտասաներորդ դարս և լեզուին աղճատել ապացուցանի եթէ ո՛չ ի մէջ բերցուք զայլս պատմագրութեամբ Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, զոր Ոսկան վարդապետ տպագրեաց ի Հոլլանդա ի տպարանին՝ զոր կառոյց Մատթէոս սարկաւագ Ծարեցի առաքեալ ի Յակոբ Կաթողիկոսէ Հայոց յամի 1655։ Արհեստ տպագրութեան առ Հայս տեսանի զառաջինն ի Կոստանդնուպօլիս, այլ ո՛չ հաւանեալ ընդ այն Յակոբայ Կաթողիկոսի հոգ տանի յղել յԵւրոպայ զայր՝ առ ի կերտել տալոյ զգաղափարս մաքուր գրոց, վասն որոյ զայր հաւատարիմ գտեալ զՄատթէոս Ծարեցի առաքէ ի Վենետիկ, ի Հռոմ և յԱմստերդամ որ ի վերջնումս գտեալ զայր արհեստագէտ փորագրել տայ զտառսն և անկեալ ընդ պարտուք մեռանի թողեալ զգործսն յԱւետիս և յՈսկան Երևանցիս ապաստան, որք լրացուցեալ զշինութիւն տառիցն ի թիւս զանազան եկեղեցական գրեանց տպագրեն նաև զառաջինն առ Հայս զԱստուածաշունչ մատեանն, թէև ցաւելով պիտոյ էր խոստովանել՝ աղճատելով զայն ըստ սահմանաւոր յոյժ տեղեկութեանց, յոյն և լատին դպրութեան, զոր յետոյ նոր ի նորոյ տպագրեաց յընտիր օրինակէ Մխիթար վարդապետ Սեբաստացի առաջնորդ ուխտի սրբոյն Ղազարու ի Վենետիկ։ Մատենագրութիւնն մեր և առ հասարակ կենդանութիւն լեզուին, իմա դու ինձ զբառդ անձուկ նշանակութեամբ՝ մնայ վայրենացեալ մինչև ցսկիզբն 18-երորդ դարու, յորում ըստ վերնախնամ տնտեսութեան նախա-

խնամողին Մխիթար վարդապետ Սեբաստացի մեկնեալ ի Հայոց Մեծաց, և յետ բաղում տառապակրութեանց անկանի ի Վենետիկ Իտալիոյ՝ հիմնել և հաստատել ի կապոյտ ալիս Ադրիտեան ծովու՝ զհաստահիմն կայարան հայկական հնախօսութեան, և իբրև ի լապտերէ խմբէ լոյս տալ ազգին անխոնջ երկասիրութեամբ։ Զփառս առնս մեծի որ անձնագրաւ նահատակեցաւ ի լուսաւորութիւն ազգին նսեմացուցանեն ընթացք նորա, այն է՝ հերձել նորա յեկեղեցւոյն Հայոց և անկանիլ ի գոգ պապին Հռովմայ, այլև աղճատել զգրածս նախնեաց մերոց ի դաւանաբանական մասին, թէև դատելով իբրև մարդ առողջահայեաց չունիմք զնրաւունս եպերելոյ զնա, վասն զի թողեալ և լքեալ յիւրայոցն՝ այն ինչ զօգնութիւն եգիտ յօտարաց, ի հարկէ ստիպեալ գտաւ այնուհետև պաշտել և զդաւանութիւն որոց հիւրասիրութեամբ ընկալանն զնա. ցաւելի էին մեզ ընթացք Մխիթարայ Սեբաստացւոյ, զայդ ոչ ուրանամք. բայց պատճառ ցաւելի իրողութեանս էր նոյն իսկ ուսումնատեաց և ուսումնահալած բարք հայկական Աբեղենին, ըստ որում՝ (չէ կարդացվում)։ Բայց թէ այսպէս և թէ այնպէս հայկականս դպրութիւն աճիւնացեալ ի վեշտասաներորդ և յեօթևտասաներորդ դարս բորբոքեցաւ վերստին ի կայծէ զոր ելոյց Մխիթար Սեբաստացի հանճարեղ մտացն ծընընդականութեամբ։

Յաշակերտաց առնս մեծի և երևելւոյն սկսեալ ի հիմնարկութենէ ուխտին ցայս վայր երևեցան հոյակապ հայերէնագէտք, որք բաւականին գրեանս ըստ այլ և այլ առարկայից թարգմանեցին ի լեզու հայ յօտարաց, յորս ըստ իս որչափ պատահեալ եմ գրուածոց նոցին առ հասարակ կորովարան թուին հարք՝ Վրթանէս Ասկերեան, երկոքին եղբարք Աւգերեանք, Զահրջանեան, Ինճիճեան իւրով հրաշալի[1] աշխատութեամբ «Ստորագրութիւն հին հայաստանի, և հնախօսութիւն հայաստանեայց», Այվազովսքի իւրով պատմաբանական գրուածովք, ընտիր հայախօսութեամբք զոր առ սակաւս և եթ ոմանս տեսանեմք. այո՛, չկարեմք նոյնպէս մոռանալ զՄիքայէլ Զամչեան և զպատմութիւն նորա յերիս մեծամարմին հատորս, այլ եթէ ուսաք զճշմարտութիւն պաշտել, բեր ապա ասասցուք աստէն, զի նա, որպէս վկայեաց այսմ ի նորումն «Եւրոպա» լրագիր Վիեննայի, 1853 առաջին թերթ յու-

[1] Նազարեանց—տաժանելի։

նուար 20, ելեալ ի ծոցոյ պապին, առեալ զգրիչ վասն պապին, ջանացեալ է միշտ պղտորել զընթացս հատ ու կոտոր աւանդութեանց, ազգային պատմութեանն վերաբերելոց, քանզի առ նմա գտանեմք ո՛չ միայն զմասնաւոր ինչ ստութիւն, այլ ի բովանդակ ընթացս բանին զամբողջ առասպելս, հոովմէական եղջերուաքաղաք։ Կաթողիկոսք մեր և առ հասարակ եկեղեցին լուսաւորչական մինչ հերքեն զկարծեցեալ գլխաւորութիւն պապին Հռովմայ և զանտեղի իշխանութիւն նորա ի վերայ ընդհանուր եպիսկոպոսաց իբրև փոխանորդ Քրիստոսի և գործակալ Պետրոսի, պատուելի Զամչեանն ըստ քմաց նկարագրէ, որպէս ինքն կամի, այլ ո՛չ որպէս իսկութիւն գործոյն ցուցանէ։ Թո՛ղ զի պատմութիւնն ողջոյն պակասեալ է յոյժ և յոյժ ի պատմական արժանաւորութենէ. ոչինչ տարադէպ համարիմք առ տեղեաւս խօսիլ սակաւուք զպատմութենէ հայոց, եթէ միայն կարելի էր անուանել զայն պատմութիւն։ Ուստի՝ մանրիմք առ հասարակ ի լուսաւորեալ ազգաց, եթէ պատմութիւնդ անուն պարտի անշուշտ ունել ըստ գործարանաւոր մարմնոյ նախ քան զամենայն ընթիւթ, զկերպ, զգործարանս և առ հասարակ զկազմած, յար և նման կազմութեան գործանաւոր մարմնոյ, որպէս զի նիւթն ունելով զկերպ գործարանաւորեսցի և ի ներքուստ աճեսցի անսայթաք յերիւրմամբ ճիւղոց, առանց խառնափընդորելոյ զկազմածն։ Այս ամենայն պայմանք, որք անհրաժեշտ են ի պատմութեան՝ չէք ի պատմութեան հայոց. զայս ասացեալ չկամիմք բնաւ մատնանիշ առնել ի թերութիւնս Զամչեանին թէ զընկեալ է պատմութիւն նորա առ հասարակ ի պատմաբանական կարգաց (systema), այլ և սակաւուք խոստովանիմք, զի կեանք ազգի մերոյ չեն բնաւ եղեալ պատմականք զորպիսի առ այլս նկատեմք, այլ՝ ընդհատեալ, հատուկոտոր, ըստրկացեալ և ենթակայացեալ ազդեցութեան այլոց իշխանութեանց, և այն՝ թէև ցաւ է մեզ խոստովանել՝ առ տարբացեալ ի հայս դժոխային իմն հոգւոյ անմիաբանութեան և անմիտ նախանձու ընդ յառաջադիմութիւն ընկերին։ Ըստ ազգին լինի և պատմութիւն նորա, որպէս և ի պատմութենէ անտի՝ մակաբերել հարկիմք զորպիսութիւն, զհոգի որ և իցէ ազգի, որպէս զմասն ինչ ի բոլորէն միայն հասկանալ զօրեմք։ Այլ ի վերայ այսր ամենայնի ո՛չ եթէ միայն անօգուտ էր, այլ և հարկաւոր և կարի հարկաւոր զնշխարս ուսանդութեանց, զգործոց նախնի հայկազանց ի հանդէս դնել առաջի նոր հայոյն, որպէս պահան-

ջէին կարգք և օրէնք պատմաբանականք. չէք յայսմ՝ տարակոյս եթէ զայս ամենայն պիտոյ էր տալ նոր հայոյն և նոր յոճ խօսից, հասկանալի առ հասարակ, վասն զի հասկանալիքն կարէին օգնել նմա, իսկ յանհասկանալեացն զի՞նչ օգուտ։ Կրկին ասեմք զի՞նչ օգուտ. խօսողին պիտի լսող և հասկացող, ուրեմն և խօսողն պարտի խօսել ի լեզու հասկանալի, այլ թէ ոչ ասողն լեցի խուժ և լսողն դուժ։ Մատենագիրք մեր ցայս վայր ժամանակի թողին լքին զայս, թէպէտ և անհաւան էին ընդ խառնափնդոր պատմութիւն Զամչեանին, և այս իսկ է պատճառ զի ժողովուրդ մեր չգիտէ զպատմութիւն իւր, զգործս իւրոց նախնեաց, չգիտէ զհարս՝ որոց է որդի։ Անհոգութիւն առանց պատասխանի տալոյ։ Քաջայոյս եմք, թէ գերապատիւ Ստեփանոս վարդապետ Նազարեանց ո՛չ անարժան համարեսցի զայս գործ իւրումն աշխատասիրութեան, եթէ միայն հասանէին ի Թիկունս ազգասիրական քաջալերք առողջամիտ հայրենասիրաց։ Ի հարկէ ոչ հրամայելով նմա որպէս իւրեանց ծառայի, այլ ի պատուոյ ասպարէզ հրաւիրելով զայրն գիտնաւոր և քան զբազումս արժանի։ Այլ հերիքասցին առ այժմ բանք զպատմութենէ հայոց. դարձցուք վերստին ի կարգ մերոց բանից։ Խնդիր ի մէջ ելանէ, այո և հարցասիրութիւն իսկ, եթէ միարանութիւնն Մխիթարեան՝ զի՞նչ գործ վասն ազգի վճարեաց, այսմ՝ մարթ է պատասխանի առնել, եթէ միայն անբիծ իցեն սիրտք մեր յամենայն կրօնամոլական ախտից և աչք մեր՝ ազատ ի մեկուսի հայեցուածոց։ Թէպէտ չկարեմք դատապարտել զՄխիթար Սեբաստացի առ ուրացութեան զեկեղեցին հայոց, բայց և ոչ գովեմք զայրն այդպէս ընթացեալ։ Ինձ թուի, թէ առ ի ոչ անիրաւել առ Մխիթար հաւատափոխ, պարտ էր միտ դնել բըռնակալ հանգամանաց ժամանակին, իբրև ի վերայ մարդոյ միշտ ծառայողի, զորոց կախին ամենայն անցք ընդ մարդկութիւնս և դատաւոր նստիլ ի վերայ նորա, հանգամանաց աշխարհի, և ո՛չ իբրև ի վեր գերաշխարհիկ իմն էակի. այլ որպէս կարիցեմք թողուլ անբասիր զկրօնամոլ և զաբեղայամիտ յաջորդս նորա և զաշակերտս, որք անպատկառ և աներկիւղ յԱստուծոյ քարաձիգ եղեն ի ծնողական եկեղեցին՝ արկեալ զանձամբ զաբեղայական սքեմ աղճատեալ եկեղեցւոյն Հռովմայ, յորում՝ ոչ այնքան Աստուածայնոյն պաշտեն պատուէր հրամանի, որքան գիւրագայթ և սխալական մարդոց զորս փոքր մի ևս և աստուածացուցանել ախորժէին դոքա անսխալական (risum teneatis, amici) զեկեղեցին

հռովմայ առձայնելով։ Դիցուք թէ Մխիթար իբրև այր 16 և 17-երորդ դարուց, առաջնորդեալ եղև միջին դարուց տեսութեամբ, և կամ՝ իբրև այր ո՛չ ուսումնասէր և ցանկացող լոկ ուսման և ո՛չ իբրև ինքնացեալ ուսումնական չկարաց անպղտոր աչօք տեսանել զմայրենի եկեղեցին, այլ մաքրթ ինչ ելցէ արդեօք հաւատալ այսմ՝ ի 19-երորդ դարուս, թէ պատուելի հարք Մխիթարեանք ինքեանք իսկ ո՛չ տեսանեն զանպատեհութիւն գործոյս, և թէ եկեղեցին Հայոց եթէ մաքրութեամբ իւրով չէր ի վեր քան զՀռովմէական եկեղեցին, չէր և ոչ ինչ ստոր կամ նուազ քան զայն։ Եւ զեմ՞ զարթ՝ ցէ մեզ լուեալ զայսպիսի անարժան բանս ի բերանոյ պապական Հայոց, ի կարծիս լինել, որպէս թէ ջանք և վաստակք Մխիթարեանց Հայէին յօգուտ ազգին տեսեալ ստուգապէս, քաւ լեցի մեզ մոլորել յայդպիսի օդակառոյց կարծիս. զի քաջ գիտեմք և չիք յայսմ տարակոյս եթէ զկենդանութիւն ազգին պահեն թագաւորութիւն, կրօնն և լեզուն. առ մեզ կորուսեալ է առաջինն և չիք յայժմուս. մնայ ուրեմն ապաստանել ի կրօնն և ի լեզուն, այլ եթէ պատուելի Մխիթարեանք ընկալեալ զինքնակոչ ազգասէր վերապատուութիւնդ անամնթեցան ձգել զբազմութիւն Հայոց յեկեղեցին Հռովմայ, ասասցեն ապա թէ ի՞ւ ունին պահել զկենդանութիւն ազգին, լեզուաւ միայն՝ այդ չէ բաւական, մանաւանդ զի անհասկանալի է ազգին հինն և նուիրականն, իսկ նորն առ նոսա աղճատեալ՝ ցայն վայր զի դժուար էր ականջաց լսել զնժալուր բարբառդ։ Մխիթարեանք կատարեցին վասն ազգի զայս և եթ գործ, զի վերականգնեցին զմիջաբեկ շինուած հին Հայախօսութեան, այդորիկ վասն ոչ ուրանալ զմեր շնորհապարտութիւն առ նոսա. այլ թէ այդ վերակենցաղութիւն հնոյն լեզուի ունէ՞ր ընդհանուր ինչ բան առ ազգն Հայոց, զա՛յսմանէ է բովանդակ ճառս։ Այո՛, ո՛չ պակասին և առ մեզ նախապաշարեալ անձինք, որք արտաբերեալ զբառդ Վենետիկեան միաբանութիւն կամ լոկ Վենետիկ իմացեալ սովին զուիտն Մխիթարեան՝ համարին զնա բազում՝ ինչ վճարեալ, այլ այս որպէս ասացաք կարծիք է անհիմն ոամկական, և այն սեպհական ոչ բոլորից՝ այլ ոմանց նախապաշարեալ անձանց։ Եկեսցուք այժմ ի քննութիւն թէ միաբանութիւնն Վիեննայի, որ դուստր էր արժան իւրումն Վենետիկեան մօր, զի՞նչ գործ վճարեսցէ վասն Հայոց ազգի։

Պաշտօն նորա, ջանք և վաստակք, եթէ ըստ խղճի մնաց

վկայեսցուք, եղև միայն աղճատել և թեքթեքել զհին լեզուն մեր իւրով անդուլ և կամակոր զդասիրութեամբ և փիւրասիրութեամբ. Նոքին հայացուցին քանի մի հատակոտոր գրեանս զեւրոպէական լեզուն (l) ի զաղ թարգմանեալ և զի (f) ի փիւր, ահա վաստակ նոցա. իսկ ի կրօնամոլութեան մասին և ազգատեցութեան վատթար քան զՎենետկեցիս, որք փոքր քան շատ գիտեն գէթ վարագուրել զամօթալի գործ իւրեանց։ Այսուհետև տեսցեն պատուելի ազգակիցք մեր՝ զնպատակ լատինացեալ միաբանութեանց հայոց, տեսցեն և ծանիցեն և մի՛ յուսասցեն ի Հռովմէական տատասկէ թուզ կթել. հոգ կալցեն ինքեանք ձեռնտուութեամբ միմեանց պատրաստել վասն զուսակաց իւրեանց զսեպհական հնարս առ ի լուսաւորել զնոսա, զի լոյս ցոլացեալ յօտարաց չարէ, քան զսեպհական խաւար, ի հարկ եթէ առողջ բանականութեամբ քննէր այր իւրաքանչիւր զխորհուրդ բանիս։

Քերեալ զպատմութեամբ գրականութեան մերոյ հարեւանցի ի սկզբանէ ծագման լեզուին մինչ ցայս վայր, մնայ դեռ մեզ յիշել աստանօր զազգային օրագիրս և լրագիրս, որք հրատարակին ի զանազան միաբանութեանց և անձանց՝ ի Կոստանդնուպօլիս, ի Զմիւռնեայ, ի Կալկաթայ, ի Սինկափոր, ի Վենետիկ, և ի Վիեննայ։

Նախապատիւ քան զամենեսին օրագիր Զմիւռնիոյ իրաւամբ կրեալ զանուանդ «Ազգասէր» թէ հարթութեամբ ոճոյ նոր հայախօսութեանն, և թէ առողջ դատողութեամբ գտաւ ցայս վայր պտղաւէտ և օգտակար և ըստ այսոցիկ անժխտելի յատկութեանց շահեցաւ զսիրտ ազգին։ Օրագիրդ այդ հրատարակեալ ի գիտնական Պալդաղարեանէ յուսամք թէ յարատևեսցի անդուլ յառաջադիմութեամբ նա զի ուսումնասէր հասարակութիւնն մեր, որ ի Զմիւռնեայ ոչ թողցէ զաշխատութիւն քրտնավաստակ հեղինակին անվարձ որպէս և ազգն ողջոյն գրաւեալ մաքուր խրղճմտանօք առ ի նմանէ։ Երանի թէ ողջոյն օրագիրք մեր Նովին ընթանային կանոնօք դնելով առաջի հայկական ազգին մաքուր որքան և որչափ կարելի էր ըստ տեղւոյն հանգամանաց, զհոգեղէն կերակուրս։ Այո՛ խոստովանեալ խոստովանեմք զարժանաւորութիւն հայ օրագրաց Կոստանդնուպոլսոյ «Նոյեան աղաւնի» և «Մասիս», և պատուելի հեղինակաց օրագրացդ չկարեմք ժխտել զմեր շնորհակալիս, զի և նոքին իսկ ըստ պարոն Պալդաղարեանի փոյթ տարան զնոր բարբառն ազգային ի յարգի կացուցանել և

նովին ճանապարհ հարթել ընդ անշքացեալ անապատ հայկական լուսաւորութեանն թէպէտ մինչև այժմ ի մասնաւոր սահմանի լրագրութեանց։

Գիտնական հայրենակից մեր պարոն Մեսրոպ Դաւթեան Թաղիադեանց, ոչ սակաւ քան զայր աշխատասէր զանազան աշխատութեամբք (որք անագան յոյժ յետ տպագրութեան հասեալ են առ մեզ առ աշխարհին հեռաւորութեան, յորում գտանի ուսումնական ազգակիցն մեր), այլ և հեղինակութեամբ յիրաւի Ազգասէր տառն օրագրոյն Կայկաթայի հաստատեաց զևր Ազգասիրութիւն, թէև ցաւելով խոստովանեմք թէ ուղղութիւն առնդ ուսումնականի չէր ամենևին համաձայն ազնիւ նպատակի նորա, գրոցդ այդ լեզու անհասկանալի էր հասարակ ժողովրդեան և պիտանի մասնաւոր յոյժ անձանց, որք ըստ իս պաշտօնեայք համարին նուիրական տաճարի հնոյն հայախօսութեան, և ոմ արդեօք յերկուանալ իւրում ոչ խղճահարեսցի, թէ պարոն Թաղիադեանցն զվառ և զսուր ծնունդս մտաց իւրոց ճախարակեալ յանդիման կացուցանէր ի զգեստու 19-երորդ դարու, լինէր վասն ազգի գործ մեծ վճարեալ, այլ ազգն մեր ըստ ժամանակին ազդեցութեան ո՛չ ճանաչէ զտարազ զգեստու հնոցն յորոց սակի համարի և լեզուախօսութիւնն հայկական չորրորդ կամ հինգերորդ դարուց։ Այլ յաղագս ապագայ հարցասիրաց և խուզարկուաց հինն հայախօսութեան յիշեալ հեղինակն ո՛չ երբէք կորուսանէ զևր արժանաւորութիւն և ո՛չ նսեմացուցանեն. . . . անուան նորա մատենագրութիւնք նորա ծերացեալ հայախօսութեամբ, զի ոչ ոք ի հեղինակաց 18 և 19 երորդ դարուց աշխատեցաւ պաշտել զներգործութիւն ժամանակին ի վերայ լեզուին որպէս պարոն Թաղիադեանցն։ Առ հասարկ ապագայ հնախոյզք առեալ ի ձեռին զմատենագրութիւնս ի հին լեզու՝ հինգ և 19-երորդ դարուց չգտանիցեն ի նոսա զզանազանութիւն և զյարաբերութիւն առ դարսն յորս կեցին հեղինակքն, գուցէ մինն քան զմիւսով արժանաւոր զոցի վճիտ կամ խրթին հայախօսութեամբ։ Այլ զայսմանէ չէ խնդիրս. այդ ամենայն կարեն պատահիլ և յամենայն դարս, զի ի հինգերորդ նուիրական դարու ոչ ամենոք Եղիշէ, ոչ ամենոք Խորենացի և այլն. այլ գտան և այնպիսիք՝ որք ի հայկաբանութեան մասին բազմաք յետնեալ են յարդեան հեղինակաց որպիսիք եղեն և են՝ Աւգերեանք, Ջախջախեան, Ասկերեան, Ինճիճեան, Այվազովքի և այլք, զորս չէ տեղւոյս յի-

շել, միակ պարոն Թաղիադեանն լոյս տացէ ապագայ խուզարկուաց թէ զեմարդ հայեցաւ դարն 19-երորդ ի հին լեզուն. այլ այս ամենայն լցուցանեն գէթ զցանկութիւն և պատասխանի տան ուսումնական հարցասիրաց, այլ ժողովուրդն առ հասարակ զի՞նչ օգտի ի սմանէ՝ ոչինչ և կրկին անգամ՝ ասացից ոչինչ։ Հինդ այդ լեզու զրկեալ է յերաւանց ժամանակին, չունի կեանք յընկերական կենցաղս, և ամենայն հայ, թէ ուսանի և թէ պարտաւորական էր զայդ ուսանել ուսանի և ուսցի, որպէս Եւրոպացւոց մանկունք զլատինականն և զյունականն, բայց նմա պիտի լեզու այլ, նոր և կենդանի լեզու աշխարհիկ, շինեալ և մշակագործեալ հեղինակացն ջանիւք իբրև գործարան ազգային լուսաւորութեան։ Այս էր առաջին պահանջելին, բայց մնայ և մի այլ պահանջելի, որում մինչև այժմ ոչ ոք ի հայս Ռուսաստանեայց ուշադիր եղև և լինել կամի, այս է՝ շինութիւն հայկական ուսումնարանաց վասն հայաբար աւանդելոյ ի նոսին զուսանելիսն բովանդակ. զի կենդանի բարբառ ուսուցչին այլապէս գիտէ ներգործել ի սիրտ և ի հոգի աշակերտին քան թէ գրուածքն լոկ. թող թէ բազում՝ են և յաշխարհիկ մատենագրութեան առանց ի վերայ յաւելլոյ մեկնաբանութիւն ուսուցչին, անհասկանալի էին մնալոց հայկական զաւակին, բայց խելացի հարք մեր դժուարութիւն ի վերայ դժուարութեան բարդելով կարծին գործ մեծ կատարել և այդպէս իւրեանց իսկ ձեռօք փակեն և կցեն զամենայն դրունս լուսաւորութեան։ Բայց ըստ դոցա լեզու հայոց և լուսաւորութիւն երկու որոշ որոշ իրք տեսանին, մեծ ինչ երևին դոցա քանի մի աղքատին բեկորք հայ հնախօսութեան, մինչ խելապատակ մանկանց դատարկ և ամայի և անանունդ մնալ ի հոյակապ գիտութեանց մերումս դարու։ Այլ և մանուկն հայոց կարօտի հասկանալի լեզուի, որով կարիցէ ուսանիլ և զհին լեզուն իսկ՝ որ անհասկանալի է նմա, թէպէտև բաղումք ի կամակոր հնամոլաց և զայդ փորձ փորձեցին և փորձեն հնոյն զհինն ուսուցանել որ է մեռելութեամբ զմեռելութիւն ի կեանս հրաշագործել, այլ այդոքիկ ամենայն կապեալ կաշկանդեալ են դարձեալ ընդ սահմանաւոր և պղտորեալ տեսութիւնս իմաստական դարուց յորս կեցին դըպրոցականք։ Եւ ոչ յաջողեցաւ այդպիսեաց տեսանել զցանկութիւն իւրեանց կատարեալ, թող զսակաւ բացառութիւնս որք դարձեալ միջնորդութեամբ յաւէտ այլոց լեզուաց, իմա դու ինձ օտարաց, թագաւորեցին ի վերայ լեզուին շատ կամ սակաւ, եթէ

թագաւորեցին։ Զունիմք բան ասելոյ վասն ուստ մեասէր օրագրին Սինկափորայ, զի ոչ կարացաք ցայս վայր ժամանակի ճանաչել զնպատակ նորա։ Օրագիր այդ յաւէտ քան զայլս թուի մեզ զարմանալի, մինչև ինքնին ոչ բացայայտեսցէ զիւր նպատակ և պատճառ այդուանակ ուղղութեանն։ Եկեսցուք այժմ ի զննել Բազմավէպ օրագրոյն Մխիթարեանց անցանելով զկնի յԵւրոպա Վիէննայի։

ԶԲազմավէպ օրագիրդ ի սկզբանէ անտի գոյութեան նորա մինչև ցնոր աւուրս ընթերցեալ եմք անընդհատ, և ծանուցեալ զայս և եթ, զի այդ օրագրութիւն ճանապարհ էր շահաստացութեան և վաճառականութեան միայն, քանզի չունի նա տպագրութեամբ քանի մի հին ազգային տաղերգութեանց և դամբանական ոտանաւորաց, որք յաւէտ քան զայլ առարկայս տեսանին, արդարանալ առաջի կրիտիկական սուրբ դատաստանի, բնական հատուած օրագրիդ կերակրի միշտ ի շտեմարանէ պիտանի գիտելեաց Զմիւոնիդ, երբեմն հրատարակելոյ, զոր իւրաքանչիւր ոք ի մէջ կարէ տեսանել և ի վերայ հասանել ճշմարտութեան ասացելոցս, իսկ դատողութիւն պրական, իմաստ և կարծիք, գաղափարք կենդանիք և հայեցուածք յազգս ազգս գիտութեանց, որովք լուսափայլին միտք և անանի հոգին, տարագիր է յօրագրէ անտի յորում ոչ զվերջին տեղին ունին ամնական առեղծուածք Մխիթարեանց, հանելուկ վերտառութեամբ պատուասիրեալ, թող զանախորժ կազմուած լեզուին, զոր ի վերջին աւուրս փոքր ինչ մարդացուցին։ Իսկ Եւրոպա լրագիր Վիէննայի թուի մեզ զբօսանաց աղագաւ յարուցեալ յաղագս պատուելի Մխիթարեան միաբանութեան տեղւոյն, և կամ իբրև հնար տարածանելոյ զանալի կարծիս և զդատողութիւնս Աբեղայամիտ հեղինակացն յորոց սակի համարի և 1 թերթն յունուար ամսոյ 1853 թուականի, յորում անամօթաբար պարտական կացուցանէին զսուրբն Մեսրոպ Մխիթարայ Սեբաստացւոյ, որ քար հանդիսացաւ գայթակղութեան ձգեալ զկնի զբազմութիւն դիւրագայթ ոմանց հայոց ի մոլորական եկեղեցին հռովմայ։

Այսոքիկ ամենայն տխուր յիշատակարանք հայկական ողորմ տգիտութեան կսկծեցուցանէին զսիրտ մեր, այլ թագուցանել զայս քաղցկեղ, որ ճարակէ և զառողջ մարմին ազգին, չէր առն բանականի գործ. վասնորոյ տեսանել տեսցեն պատուելի հայրենակիցք մեր, զջանս և զվաստակ Մխիթարեանց որք վարձինք գտա-

նեն զարդիս Հանդիսացեալ ազգի մերում որոց չէ փոյթ գալուստ գայլոյն, նա զի և ինքեանք ոչինչ նուազ փողոտեն զգառինս մակաղեալս ի վայրի հանգստեան Հայկական բուն եկեղեցւոյ, եթէ միայն լուրջ հովիւք որոց պատկանին ոչխարք տացեն թոյլ, այլ շնորհիւ Ամենակալին բերանք մեր բացեալ են առ ամենայն հակառակորդս ճշմարտութեան և աղեղունք լարեալ վանել և խորտակել զամենայն նենգ և մանգ ոչխարազգեստից, որոց հերիքասցի որչափ յագեցուցին զսովալլուկ հռովմէական քաղց հայկական արեամբ։ Տեսցեն պատուելի հայրենակիցք մեր և մի յուսասցեն ի մրրոյ աղխոյն, զոր պատրաստեն սուտ ազգասէրք քամել գինի անոյշ և զուարթարար, ուսցեն ինքեանք վասն զաւակաց իւրեանց կերակուր պատրաստել սեպհական ձեռամբ և իւրեանց յատուկ բանականութեամբ լոյս հնարաւորելով առ ի լուսաւորութիւն իւրայնոց, չև զայս արարեալ սուտ է ամենայն հայութիւն, սուտ և ազգասիրութիւն որոյ անուն ընդ օդ գէթ հնչի հանապազօր։

Առ ի զընթացս գլխաւորել բանիս ասասցուք և զհեղինակաց մերոց առ Ռուսահայս, թէպէտև դժուար և կարի դըժուար էր որոնել և գտանել զնոսա յաղագս անարդիւն և ժլատ վաստակոց դոցա։ Պատճառ իրողութեանդ գաղտածածուկ էր առաւել քան թէ երևի նկատողացն հարևանցի աչօք։ Ուսումնական ընկերութիւնք առ հայս Տաճկաստանի եթէ շատ ինչ ոչ արարին վասն ազգի, գոնեայ ոչ վերջացան ի

հետէ գուն գործել ցուցանել զեռանդն ազգասիրութեան։ Հեղինակք առ մեզ ի Ռուսահայս արժանաւոր են յոյժ թուով յորոց սակի Միքայէլ եպիսկոպոս Սալլանդեան, Խուդաբաշեանց, Մսեր Զմիւռնացի, Մկրտիչ Էմին և այլք ոմանք, յորոց Միքայէլ եպիսկոպոսն Սալլանդեանց ինքնացեալ ի դըպրութիւնս այլ և այլ լեզուաց և յԱստուածաբանական գիտութիւնս դպրոցական ոճոյ ի հանդէս գայ իւրով կրօնագիտութեամբ և ճարտասանութեամբ, զորս տպագրեաց մինչդեռ զուսուցչութեան ունէր պաշտօն ի տեարց Լազարեանց ճեմարանի։ Մանրամասն պատմութիւն առնս ոչ նուազ երևելոյ ի խումբս եկեղեցականց մերոց չէ առ տեղեաւս պատշաճաւոր գրել, այլ ի պատմութենէ նորին զայս և եթ արժանի համարիմք ծանօթութեան, զի ի մանկական տիոց դաւաճանեալ ի լատինացեալ արեղայից անկեալ էր ի գոգ եկեղեցւոյն հռովմայ, յորում և ընկալեալ

զքահանայութիւն. այլ ի վերջէ լքեալ զօտարին եկեղեցի, ոչ տարակուսեցաւ գիմել առ իւրն և ախոյեան հանդիսացեալ ընդդէմ լատինահայոց՝ այսմ անկաշառ վկայք են գրուածք նորա, կրօնագիտութիւնն և այլ կրօնական յօդուածք ինչ ի գիրն կոչեցեալ Մուղայք Արարատեան։ Ճշմարիտ է այրս այս համեմատելով իւրոցն կարգակիցս առ հեգևորս հայոց, գերազանց էր յԱստուածաբանական և ի պատմական գիտութիւնս և կարող էր զայն ամենայն ըստ իմիք արդիւնաւոր կացուցանել վասն ժամանակցաց իւրոց և ապագայից, եթէ զոր գրեցան, գրեալ է ի լեզու առ հասարակ հասկանալի ժողովրդեան, և միթէ ընթերցողք ճառիս չգիտեն և չխոստովանիցեն ընդ մեզ, թէ երկասիրութիւնք նորա թաղեալ և թաքուցեալ պահեն ի խորշս մատենադարանաց ի վայելս անբանից որդանց քան թէ բանականաց։ Հեղինակ հայ-Ռուս բառարանի տպելոյ ի Մոսկուա յամի 1832 Աղեքսանդր Խուդաբաշեանց իւրով աշխատասիրութեամբ օգնեալ օգնեալ է բազմաց ի թարգմանութեան մասին որոց գայթ ի գայթն ընթանալ ի գիտութիւնս հայ և Ռուս լեզուաց և չէ անօգուտ գործդ մանաւանդ վասն Ռուսաց, որ կամիցին ուսանել զլեզու հայոց, բայց առ ուսանելոյ հայոց լեզու Ռուսաց յաւէտ պիտանի էր բառարան ի Ռուսաց լեզուէ ի հայ քան ընդհակառակն, որպէս արարին Ցարութիւն Վարդապետ Սլամդարեանց և պարոն Երեցփոխեանցն ի նորումն, թէև չէր ախորժելի ասել վասն վերջնոյս, թէ բազում ուրեք գթեալ ի սխալանս և ի յանցանս ընդդէմ հայկական լեզուախօսութեան կազմեալ յինքեանէ զբառս և կամ հետևեալ աղճատանաց Մխիթարեան միաբանութեան Վիէննայի, որք առանց յաջ և յայեակ նայելոյ գուն գործեն գէթ թարգմանել զԳերմանական բառս առանց զուգակշիռ ունելոյ զպայմանս լեզուի մերոյ, թէ կարէր արդեօք տանել զայս ամենայն. ցայս վայր իւրաքանչիւր ոք յընթերցողաց ճառիս քննեալ և ստուգեալ է, վասն որոյ աւելորդ էր ինձ յերկարել ի բանս անդր քան զսահման դհամառօտաբանութիւն։

Աւագ ուսուցիչ հայկական դպրութեան՝ ի Տեարց Լազարեանց ճեմարանի Մսեր Գրիգորեան Զմիւռնացի զորմէ յիշեալ եմք սակաւուք յիւրում տեղւոջ, այն է ի սկզբան ճառիս, ունի տրպագրեալ քանի մի գրեանս վերաբերեալս ի կրօնականն հանդէս, որոյ գիտութիւն հայ լեզուի գուցէ մեծ և անփանաքելի, բայց միշտ հատակտոր և կցկտուր ի նեղ և ի փոքրիկ հրապարակս ե-

ըևեալ, հանգոյն փոքրիկ նաւակաց յածելով միշտ ի ծովու խորշ առանց գարձակավայրս ծովուն թեւակոխելոյ։ Պատուելի հեղինակդ չգիտեմք թէ վասն էր, միթէ յաղագս ստանալոյ զփառս հայագէտ առն միայն, գրեալ է հին հայախօսութեամբ անհասկանալի առնելով զբանն Ազգին։ հարցանեմք և ունիմք իրաւունս հարցանելոյ. եթէ գիտաւորութիւն պատուական առնդ էր զազգ հայոց ի մերումն դարու ուսուցանել և դաստիարակել ի դաւանաբանական գիտութեան, ընդէ՞ր ոչ մատենագրեաց ի լեզու հասկանալի և գործածական յընկերական կենցաղս։

Զարմանամք, թէ ո՞ր ուշաբարձութեամբ մոռացեալ է. . .

. . . . . .

Այլ արդեօք օգտեալ ինչ իցէ ազգն յայդպիսի երկասիրութեանց, որք չեն այլ ինչ եթէ ոչ բացայայտութիւնք իրաց այլով տարալու, փոփոխեալս զտեղիսն, զձև գրութեան և միանգամայն զոճ բանին. զայդ ի վճռել ոչ գոյր դժուարութիւն, այլ զայսմանէ բան լիցի գկնի։ Գուցէ պարոն Մսեր Զմիւռնացի անհաւան ընդ ճշմարտախօսութիւն մեր գտեալ, մատնացոյց եղիցի մեզ յիւր փոքրիկ տետրակս և «Հաւատապատում» գրեալս իբր նոր հայախօսութեամբ. այլ այդոքիկ տետրակք, ըստ խոշի մտացն վկայելոյ, չեն այլ ինչ եթէ ոչ խառնուրդ հին և նոր հայախօսութեան, ոչ սառն իմն և ոչ ջերմ՝ այլ գաղջ.... Լսելով լուիցեն զբարբառ ազգին որպիսին վարի ի հասարակ կենցաղս, լուիցեն և քննեսցեն զայն թէ որ հայք և յորում՝ տեղւոջ ի գործ դնեն յաշխարհաբառնն զտառս ղ որպէս հայցականացուցիչ, զոր ամեն ուրեք տեսանեմք ի տետրակս պարոն Զմիւռնացւոյն։

Յառաջաբանեալ հեղինդակիդ ի սկզբան մատենկացս փողէ զանձնէ մաքրեալ զնորն հայախօսութիւն ի բաց վտարելով զներկայացուցիչ մանիկս «ում» և զապառնիացեալ մանիկս «կը» և յաւելու թէ այդոքիկ խժականք էին. գործեալ է դորա այդ արդարև, այլ խորհուրդ նորա իրագործեալ է ոչ նորոգութեամբ հին լեզուի, այլ նորոյն հնագործութեամբ, յերկուց աստի մարմնացեալ է յունական գենդաւրոս ոչ հին և ոչ նոր, այլ յաղագս անուանելոյ նորա զմանիկքս ում և կը խժականս, աւելորդ համարիմք մանրախուզիւ դատապարտել զկարծիսդ ներողամիտ գտեալ առնս վասն այն միայն, զի անտեղեակ էր այլոց լեզուաց և չէր ձեռնհաս քննել և ճանաչել թէ ո՞րպիսի ահարկու կերպարանափոխութեամբ կազմեցան ի հնոց՝ նոր լեզուք առանց կրե-

ղոյ վեսժական տիտղոսդ։ Ժամ է արդէն զաչս դարձուցանել յաշխատութիւնս պատուելի Մկրտչի Էմին՝ վերատեսչի Տեարց Լազարեանց ճեմարանի։

Զիերականութենէ Նորա, որ արտադրութիւն էր ի Սալանթեան և ի Գաբրիէլեան քերականութեանց, աւելորդ ինչ էր խօսել և խուզարկել, զի որ ոք և տեսցէ զայն, անդէն առն մեն ճանաչէ զսեպհականն յիշեալ հեղինակացն և զկարկատանս պարոն Էմինայ հանդերձ սխալականաք, զորմէ ինքնին, որպէս գիտեմք, վկայեսցէ Նորոգ տպագրութեամբն, ուղղագործելոյն, այլ արժան էր խօսել ըստ մասնէ զքննութենէ Նորա «Վէպք հնոյն Հայաստանի» տպեալ ի Մոսկվա յամի 1850. վասն մեր, Հայրենակցացս պարոն Էմինայ քաղցր էր տեսանել զբանասիրական քննութենէ (ոչ վասն ազգին առ հասարակ, այլ Հայագիտաց), զի ամենայն որ գիտուն է դպրութեան հայոց, ջան դիցէ լուսափայլ կացուցանել զինդիրս, զմթութիւնս վերաբերեալս առ լեզու մեր և առ գրականութիւն, այլ պատուելի հեղինակդ զարմանամբ թէ ուստի առեալ զբանսդ յերես 5 ասէ. «որոց գոյութիւն (ազգային երգոց) առ մեզ, չգիտեմ էր վասն, միակամ յամենեցունց ժիտի»։

«Այդ կարծիք՝ ներելի ի շրթունս օտարաց, անթողլի է մե-
« բայոց, որք ինքնակամ հրաժարին ի Հայրենի ժառանգութե-
« նէ» հետևեցուցանէ յերեսս 93—94... «ի մի ժողովել... հա-
« մարձակեցայ զհիմն ի վեր տապալեալն զարմանակերտ շինուած
« երգոյն վիպասանաց, նման մանկանն Վարդգէսի, որ անդ ուրեմն
« ի հնումն հատուած գնացեալ... ի Տուհաց գաւառէն, զիասաղ
« գետով, զՇրէշ բլրով զԱրտիմէդ քաղաքաւ, զիասաղ գետով,
« կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի»։

Ցառաջ քան զքննութիւն պատուական հեղինակիդ և մերայինք և օտարք ասացեալ են ի շարադրութիւնս իւրեանց ըստ նախնական երգոց և դեռ ի մէջ բերեալ զբուն երգս ի Ծերունոյն Խորենոյ և ոյք էին արդեօք ժխտողք երգոցս և հրաժարողք ինքնակամ ի Հայրենի ժառանգութենէ, որպէս ասէ պարոն Էմին, զի առիթ եղուն նմա դուն գործել որդիական սիրով հընոցն մերոց... ի մի ժողովել. երես 93—94։ Մեզ թուի այդմ գէթ երևակայութիւն լինել, կամ թէ այլ ինչ՝ գոնէ յայտնի միայն պատուական հեղինակին։

Ոչ ուրանամք բնասիրութիւն Նորա, զորոյ ապացոյց կարեմք ի մէջ բերել զՅովհաննէս կաթողիկոս և զթուղթն Ղազա-

բայ Փարպեցւոյ առ Վահան Մամիկոնեանց տէր, զորս տպեաց ի Մոսկվա յամի 1853 յօգուտ հնասիրաց և ի ծանօթութիւն հայերէնագիտաց հանդերձ յառաջաբանութեամբք զհեղինակացն և զհեղինակութեանցն և խոստովան լինիմք . . . . դորա զնութիւն տպագրութեամբ հին հեղինակաց, այլ դադարեաց ի բանս զպատմութենէ գրականութեանս մերոյ, յառաջեսցուք անդրէն ի կարգ բանին, զոր կոչեաց Հարևանցի հայեցողութիւն մեր ի պատմութիւնն գրականութեան։

Ահա գլխաւորաբար ի սկզբանէ անտի, որ ինչ ցայսօր հեղինակք մեր և նոցին հեղինակութիւնք, ցորս հաղիւ ուրեք գտանեմք զայնպիսի ինչ, որ կարող էր մշակել զանշէն մնացեալ բանականութիւն ազգի մերոյ։ Անապատացեալ միանգամայն կեանքն հայկական պէտս ունի շատ և շատ մշակութեանց լոյս առեալ առ հասարակ յԵւրոպէականացն փորձութենէ։

Քարոզութիւն լոկ հայկական լեզուի, հարկադրել զմանկունս սերտել զուղղականն, զկոչականն՝ ընդ նմին գրաբառ դարձեալ պատասխանել առ հարցուածս վարժապետին՝ ըստ մեզ համարին ողորմելութիւն և ողորմելութիւն արտասուելի։ Եթէ ինքեանք վերապատուեալ վարժիչք հայկական դպրութիւն, որոց շնորհեալ է գէթ գիտութիւն լոկ հայկականին, կարող էին ի համարի գոլ լուսաւորելոցն և յայնժամ ևս չէր արժան դեգերեցուցանել զմանկտին ընդ անմատչելի առապարս մոլախոտեալ յերեքտասան դարուց հետէ։ Թող զի ո՛չ երբէք կարող էին ըզմտաւ անգամ ածել այդպիսիք, զորոց գեղեցիկս ի յառաջաբանութենէ Ճարտասանութեան իւրում Միքայէլ եպիսկոպոս Սալանթեանց «որ զհայերէն միայն գիտէ՝ ոչինչ գիտէ»։

Ցեսցեն պատուելի իմաստունքն հայոց զԵւրոպիոյ լուսաւորութիւն, քննեսցեն զհոգի և զուղղութիւն հեղինակաց նոցա և զկնի բարւոք վերահասու լինելոյ առանձին մաքուր խղճմտանաք, թէ զաւակն հայկական ընդ բիւր հարուածովք ժամանակին կարէր արդեաք ուսանելով զհին դպրութիւն հայոց՝ կենդանանալ և սնանիլ հոգւով և ընդ նմին թագաւորել ի վերայ գիտութեանց, որովք լցեալ է Եւրոպա։ Գիտեմք քաջ թէ ի դէմս ածիցեն մեզ զքաղաքական կենդանութիւն նոցա, զբաղմութիւն ժողովրդեան, զգրասիրութիւն նորա և զբիւր հանգամանս, յորոց զրկեալ եմք առ հասարակ, ընդունիմք և խոստովանիմք զայդ ամենայն մեք ինքնին թէ մեք ոչ երբէք կարեմք զուգընթաց լինել արշաւ-

նաց Եւրոպիոյ ի գիտութեանցն ասպարէզ, այլ զայս և եթ իբրև սիրող ազգի և ճշմարիտ ցաւող ընդ ողորմ դրութիւն նորա ասեմք, թէ մի՞թէ՝ եթէ չէր մարթ զմեծն կատարել և զփոքրն պիտոյ էր անտեսել, եթէ չկարէաք հիմնել հաստատել զմեծ ուսումնական ընկերութիւնս՝ զհամապատասխան զակադեմեայ և այլն, մի՞թէ արժան էր զրկել զմանկտին և ի փոքր ի շատէ լուսաւորութենէ, զոր կարողք էաք հաղորդել նմա լոյս առեալ յԵւրոպականաց։ Անգրասիրութեան և արմատացեալ ուսումնատեցութեան առ հասարակ ազգի մերոյ ականատես վկայք են և քարողք ինքեանք պատուելի հնասէրք՝—ցայն վայր, զի որ և է հայ ուրախութեամբ գնել համոզի քան զորպիսի և իցէ պատմութիւն Յովհաննու կաթուղիկոսի՝ զվիպասանական ինչ գրուած յօտար լեզուս... զի՞նչ էր պատճառ զի հայք առ հասարակ հակադրական հոգւով հայէին ընդ գրականութիւն իւրեանց, և մի՞թէ չէ լուեալ դոցա զօրհանապազն գանգատ ժողովրդեան առ ոչ հասկանալոյ նորա զգրուածս ի լեզու հայ. մի՞թէ չգիտեն պատուելի հեղինակք մեր թէ այն օտարացուցիչ զօրութիւն, որ հարկադրէ զազգ մեր ուրանալ զիւր լեզու է այն, զի չունի զմուտ ի նուիրականդ այդ տաճար, որոյ փականք ըստ գեղեցիկ ասելոյ գերապատիւ Ստեփաննոս վարդապետի կորուսեալ է անգիւտ ի յորձանս դարուց անցելոց (յառաջ. «Հոգեբանութեան» տպեալ ի Մոսկվա 1851)։

Ազգն մեր անտէր և անխնամ, ցիր և ցան ընդ համատարած մակերևոյթ երկրի քամէ զմրուր բաղդին, զոր խառնեցին նախնիք նորա բնաւորեալ անմիաբանութեամբ, նախանձու, քսութեամբ, և շատ այն է կամակոր տգիտութեամբ, չունի նա ըզհնար նուիրել զանձն ի գիտութիւն իւրոյ լեզուի, զի պիտին նմա ամբողջ հինգ կամ վեց ամք առ ուսանելոյ զնա. ամենայն հայորդի չև յարբունս հասեալ հասակի պարտաւորի զկենցաղականս հայթհայթել, զի ժամանակն պահանջէ զայդ ամենայն, վիհ աստի, վիհ անտի և մահ առաջի ըստ կորովաբան Նարեկացւոյն... ո՞ր ապա հնար էր և այն միակ, որ կարէր կակղել զվայրենութիւն հայկական բանականութեան, սերմանել յանկոխ անապատս զսերմն բարի ջուր տալ և սնուցանել առ պտղաբեր գործելոյ եթէ ո՛չ խօսել ընդ ազգին լեզուաւ՝ որոյ ուսանելոյ վասն չունէր ծախսել նա ժամանակ, զոր գիտէր արդէն ստացեալ ընդ կաթին ի դայեկէն և ո՞ր հայ հրաժարեսցի ի գրասի-

բութենէ և յուսումնասիրութենէ, եթէ հասկանայցէ զայնս առեալ ի ձեռին անկարօտ մնալով մեկնութեան ոմանց թերակիրթ անձանց, որք առ հասարակ սովոր են յազգի մերում միջամուխ լեալ ի խումբ ռամկին ստանձնել ինքեանց զԿիկերոնեան ամբիոն։ Զայս առնելով ոչ իմանամ՝ թէ Հայք իսկ և իսկ ընդ Նորոգել գրականութեանն մերկացին զանսիրելութիւն իմաստութեան որ որպէս այժմ և առ հինսն Հայաստանեայց լեալք ուսանիմք ի ծերունւոյն Խորենոյ[1], այլ այս ցրտութիւն նորա ջեռցի տակաւ առ տակաւ և աստիճան առ աստիճան, իսկ մինչ դեռ պաշտօնակատար գտանէ հինն բարբառ, սուտ է ամենայն ջանք և զուր են քրտունք իմաստնոց Հայոց առ ի լուսաւորութիւն ազգին, զոր ի գործ դնեն. եթէ դնեն առանց ամենեին գիտակցութեան անձնապահութեան և եթ աղագաւ, զի եթէ ստուգապէս դիտաւորութիւն կամ լաւ ևս ուղղութիւն իմաստնոցդ Հայոց էր անդընդասոյզ միանգամայն ի յատակ անյուսութեան, ապա արժան էր զցրտութիւնն ջեռուցանել ոչ սառնամանեօք, այլ հրով, լուսով զխաւարն փարատեալ, այսինքն հիմնարկելով զնոր հաստարան նոր հայախօսութեան։ Այլ յետ բազմիցս յընթացս ճառիս յիշելոյ զնորդ հայախօսութիւն, արժան համարիմք խօսել զկազմութենէ նորա թէ զիարդ արժան էր գործանաւորել և լինել հնար և կամուրջ լուսաւորութեան։ Բառիս նոր հայախօսութիւն չիմանամք երբէք զխարխարեալն և զխառնակեալն եկամուտ օտարաձայնութեամբ[2], այլ մաքրեալ մշակեալ և զպակասութիւնս ի հնոյ անտի լցուցեալ ոչ տարաձայն կերպարանաւորութեամբ ըստ քաղաքաց և ըստ աշխարհաց, այլ զմի և եթ կալեալ շաւիղ հասարակաց հասկանալի՝ որոց ի սփիւռս նշտեհին Ասիոյ և Եւրոպիոյ ըստ ժամանակին շնորհելոյ։

Արք ոմանք որք ի բանագիտաց համարի զանձինս ունին առ անձնապահութեան և եթ ախոյեան հանդիսանան երկնային ճրշմարտութիւնս, թէև չէր արժան ցաւել վշտանալ ընդ այս զի բնական էր անտանելի լինել ճառագայթից արևու, որոց (չէ կարդացվում) էին։ Մինն ի նոցանէ վերամբարձեալ զինքն ըստ հայկական առակին ի (չէ կարդացվում) հայոց և ո՛չ առ երես նետեալ զաբեմ աբեղայութեան աղաղակէր ռամկախօսութիւն լինել իսկ, միւս ոմն

---

[1] *Խորեն. Պատմ. Հայոց. Գիրք Ա. գլ. 3։*—[2] *Տես Սայաթնովա, տպեալ ի Մոսկվա* 1852։

փիլիսոփայ քան զնա, թէ վասն էր խառն ընդ բառից հին լեզուի, այս ամենայն խօսք և զրոյցք լսելի եղեն զկնի տպագրութեան «Առաջին հոգեղէն կերակրոյ հայազգի երեխաների համար», զոր հրատարակեաց գերապատիւ Նալբանդեանց։ Եթէ աշխարհիկ լեզու հայոց, յարդարեալ և մշակեալ ըստ պիտոյից աւուրցս ունելոց էր զանունդ ռամկախօսութիւն, ապա ուրեմն և այլ ամենայն լեզուք, որք ի Լատինականէն ելեալ կերպաւորեցան ի զանազան բարբառս Եւրոպիոյ են ռամկախօսութիւն, և նոյն ինքն որ դատագիտէ զայս՝ ռամիկ, զի բաց ի լատինականէն գիտէ և զայլս՝ ծնունդս լատինականին։ Իսկ միւսն ոմ հիւանդութեանս մտաց ցայն վայր յետնեալ դտաւ ի ճշմարտութենէ առ անձնապահութեան և եթ... զի ո՛չ կարաց դատել, թէ չէր արժան զպակասեալս յաշխարհիկ լեզուի փոխ առնուլ ի Պարսից կամ յԱրաբացւոց, այլ ի սեպհական հին լեզուէ, եթէ վերահասու լեալ էր նորա կազմութեան հռովմէական լեզուաց, չեմք յերկբայս թէ նա ինքնին աչօք բացօք տեսանէր զվտանդաւոր արտեան քարակտուր լերին, յորոյ ի վերջին շուրթն մղեալ ի հողմոյ տգիտութեան՝ հանդերձէր սուզել գահավէժ ի վիհ կորստեան համատարածն ովկիանու։

Իմաստունքն հայոց զանգիտեալ ի կերպարանափոխութեանց զորս ունի նորն բարբառ, երկնչին և երկուանան թէ մաքրի էր արդեօք մշակել զնա և բերեալ ի խելացնոր յուսահատութիւն յօժարին փոշիանալ հնախտութեամբ, ըստ որում նորն լեզու չէր կազմ և պատրաստ, ասացին հնամոլքդ այդոքիկ. թէ որ լեզու անդստին ի նորոգմանէ իւրմէ յայտնեցաւ յական թօթափել՝ լրացեալ կատարելութեամբ, որ լեզու զառաջինն ոչ կակաղեաց, տակաւ առ տակաւ չմշակեցաւ։ Ստեղծագործութիւն լեզուի ե՞րբ արդեօք կատարեցաւ ընդ ձեռն միոյ միայնոյ անձին և այն ի նշանակեալ ժամու որպէս թէ ըստ օրինակի առ հասարակ երկասիրութեանց՝ մարթ էր կազմել զլեզու, ըստ ամենայնի կազմ և պատրաստ և ընդ նմին դնել զայն ի շրթունս ազգին ի միում և եթ ժամու։ Զոր ինչ ստուար խումբ դարուց, և ընդ նմին խառն ամբոխին աղճատել աղճատեաց զլեզուն, անհատ ոք անկարանայ ուղղագործել, առ այս պիտին ժամանակ և բազում գրողք։ Մերձ է առ մեզ եթէ չունիմք զայնքան համբերութիւն զաչս դարձուցանել յարևմտեանն Եւրոպիոյ ազգն Ռուսաց, կարող եմք առանց իրիք նեղութեան քննել և քրքրել զպատմութիւն

նորոգութեան լեզուին և զարձակել նորա ի Սլաւոնական կապանաց ինն և տասն դարուց, կարեմք համեմատել զդպրութիւն ազգիս, զոր ինչ յառաջ քան զքսան ամ ընդ այժմեան դպրութեան և հերիք են եղբակացութիւնք արտադրեալք ի քննութիւնս վկայութիւն ասացելոցս ի մէնջ։ Այլ այս է յաւէտ ամենեն և խայտառակութիւն զի թէ անտեղի էին առ լուսաւորեալ ազգս ապացուցանել, թէ գիշերն խաւար է, իսկ տիւն լոյս, առ մեզ պէտս ունի ապացուցութեան՝ լարեալ թերևս զկարելին յժ և զկարողութիւն՝ տրամաբանութեան առ ի խելամուտ առնելոյ զիմաստունս մեր։ Այո՛, չունիմք ամենևին իրաւունս եպերելոյ զնոսա վասն այսր, արդէն անժխտելի ճշմարտութիւն է գործդ ի նոցին կողմանէ, զի զոր չհասկանայ ոք, զնոյն անկարանայ նա դատել և քննել, իսկ իմաստունքն հայոց չհասկանան տակաւին զխորհուրդ վերանորոգութեան լեզուին, ուրեմն և չէին իսկ կարողք դատել և կշռել զօգուտն և զվնասն ընդ որս և զճշմարտութիւն բանիցս, զոր հնչեցուցանեմք անդուլ արդարասիրութեամբ, կամ գուցէ հզօր է առ նոսա կամակորութիւն քան զառողջ դատողութիւն կամ անձնական օգուտ քան զհասարակացն թէ այսպէս և թէ այնպէս ի վերայ այսր ամենայնի բազմապատիկ փաստից և ապացուցութեանց ոչինչ օգտիմք, զի սիրտք հընամոլացդ այդոցիկ բերեն յինքեանս զնմանութիւն որձաքարի, յոր ոչ երբէք ծաղկեցաւ ծաղիկ և ոչ իսկ խոտ դալարի։

Հին սովորութիւն է, որպէս առ ամենայն ազգս և առ մեզ, զի պատուելի հեղինակք բամբասեն զժողովուրդն առ անուսումնասիրութենէ նորա, որպէս թէ չէ կարող նա դատել և ճանաչել զարժանաւորութիւնս քանքարաց հսկայից իւրոց, որք առ մեզ համարին պարոն հեղինակք հնախօս գրուածոց. առ տեղեաւս չէ տարադէպ եթէ տալ յօժարեսցուք պատուական հեղինակացդ յի կշռով զպատշաճ պատասխանին։

Լսել ցանկամք ի խորախոհիցդ այդոցիկ, թէ զինչ վարձ ունէին դրբա առ հասարակ վասն հեղինակաց Սինէացւոց, զորոց զլեզուս չգիտէին, և յաղքատ մատենադարանի դոցա քանի՞ գրեանք գտանին ի Սինէացւոց լեզու, եթէ ծանուցեալ էր դոցա զյարգ և զպատիւ, նաև զարժանաւորութիւն հեղինակաց Սինէացւոց մինչ չգիտէին զլեզուն նոցա, ապա իրաւունք էին դատապարտել զժողովուրդ մեր առ անգրասիրութեանն, զի որ ինչ վասն իմաստնոց հայոց հեղինակք Սինէացւոց յար և նման վասն

ժողովրդեան մերոյ ինքեանք հայկական Սինէացիք։ Ժողովուրդն մեր դատապարտելի է վասն անմիաբանութեան և անազգասիրութեան միայն. ի նմա բնակի ոգի ինչ ոչ աստուածային, որ միջնորմ արկանէ ընդ ընկերս, օցտէ և փեռեկտէ զմարդիկ յիրերաց. առ մեզ, որպէս և առ կիսալուսաւոր ազգինս, բաժանեալք այդոքիկ ունին զիւրեանց յատկութիւնս, զառանձին կերպ կենաց, զայլ տարազ զգեստու, զեղանակ մտածութեան և որ ողբալին է և չար քան զամենայն, զայլ ոճ խօսից. առ ի ապացուցանել զայս կարծիք պիտոյ է գէթ հրաւիրել յիւրաքանչիւր անջատ վիճակացդ այդոցիկ զմի մի այր, որպէս. ազնուական, հոգևորական, ուսումնական, ուսանող, հին հայագէտ, վաճառական, քաղաքացի և գիւղական, լսել ապա կարծեաց նոցա իւրաքանչիւրոյ, և տեսանել, թէ դոքա իբրև անդամ միոյ ազգի ունէին ամենեքին զմի նպատակ վերաբերութեամբ առ լուսաւորութիւն ազգին, քաւ լեցի. գիտէի՞ն և հասկանալ կամէին արդեօք, զի՞նչ է լուսաւորութիւն ազգային։ Ազնուականն զշշոտեալ աստիճանաւ իւրով և բարեծնունդ վերապատուութեամբ խորհի գէթ զհնար առ ի կեցութիւն այնպիսի, յորում չպակասէր ոչինչ. նա չգիտէ թէ որոյ ազգի է զաւակ, և գիտել չկամի. չեմք նաև յուշ ածեալ թէ պարտական էաք ըստ բարոյական իրաւանց ոչ միայն զանձինս հոգալ, այլ և զընկերն. իսկ առ մեզ հոգևորականն, ուսեալ ի դրունս եկեղեցւոյն զշարական և զսաղմոս առանց ամենայն գիտակցութեան և ընտրութեան, յառաջ բերէ յամենայն խնդիրս, թէև չունէր զոչինչ յարաբերութիւն առ այն զդաւանաբանական գիտելիս, բազում այն է անդուլ կրօնամոլութեամբ, և ջատագով գիտակցութեանցդ հանդիսացեալ արհամարհէ զայլ ամենայն ուսումնականութիւն, արտաքին զնոսա և երկրորդականս անուանեալ, այլ թէ դէպ լինէր հարցանել, թէ զի՞նչ ապա պիտոյ էր ուսանիլ, ցուցանէ գէթ զսրբազան պատմութիւն և ըստ հրահանգ որպիսի և լցէ միոյ արեղայի, որպէս թէ ամենայն գիտութիւնք ցարդ յայտնագործեալք յաշխարհի պարունակէին ի նոսա։ Ո՞վ համարձակի ժպրհիլ, ասել թէ չէր պիտոյ զսրբազան պատմութիւն և զաւետարան ուսանել անխառն ի մարդկային կանոնադրութեանց, որք համեմատութեամբ առ երկնային Վարդապետութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հող էին և մոխիր անարգ, բայց այդ յիւրում կարգի և տեղւոջ։ Մինթէ հոգևորականք մեր սակաւս ներգործէին և ներգործեն ի վերայ

ժողովրդեան, եթէ միայն գիտէին զզիարդն և զորպէսն. ամենևին ոչ, եթէ կամեցեալ էր դոցա յորդորել և քարոզել զժողովուրդն, տալ նմա զայնպիսի ուղղութիւն, զի նպատակն լինէր լուսաւորութիւն ազգի, անժխտելի բան է թէ ժողովուրդն հետզհետէ ուսանէր մտածել և խորհել զազգային լուսաւորութենէ. այլ զի՞նչ հոգևորականք մեր, առ ի՞նչ արդեօք ձգտեն միտք դոցա, եթէ ոչ համոզել զժողովուրդն արծաթով պատել զորպիսի և իցէ պատկերս յեկեղեցւոջ, որպէս թէ մեծ առաքինութիւն և քաջագործութիւն էր. ուրացեալ զօգուտն հասարակաց վատնել զդրամն ի բարեզարդութիւն քարեղէն և փայտեղէն կերտուածոց յորս, որպէս ասաց Աստուած, ոչ բնակի ինքն որպէս ի ձեռագործս, այլ ի հեզս և ի խոնարհս և որք դողան ի բանից նորա. ուսումնականն և ուսանողն ողբան զանձինս գիտակցութեամբ հոգւոյ, տեսանել տեսանեն զկորուստ ազգին ընդ հարուածովք ժամանակին անտէր և անպատրաստ, այլ արդեօք կարէին առնել ինչ,—միանգամայն ոչինչ, զի հազարաւոր խոչընդակք ընդ առաջ ելանեն ի մերայնոց իսկ և խափան արկանեն հնարից ազգային լուսաւորութեան. Այսպէս իմա՛ և վասն այլոց անձանց, որք յայլ մէ վիճակէն էին. Այլ այս ամենայն աղբերանայ յայնմանէ, զի ժողովուրդն մեր անմասն գտանի ի կրթութեանց, զի պատուելի հեղինակք մեր խօսին վասն նոցա Սինէական հայախօսութեամբ, զոր և փոքր ևս և ինքեանք չհասկանային, այլ թէ այսմ՝ չեցէր այսպէս և պատուելիքդ այդոքիկ միով միաբանական հոգւով գուն գործեալ ճգնէին հաղորդել զժողովուրդն գիտութեանց, տալով զայնս ի լեզու հասկանալի նոցա, յայնժամ՝ այր իւրաքանչիւր ճանաչէր զյարդ և զպարտականութիւն իւր և ընկերին, և այսպէս աջակից գտեալ միմեանց՝ նորոգէին փոքր մի զհոգեկան կենդանութիւն իւրեանց, ի սպառ կործանեալ.

Հայք առ հասարակ գաստիարակեալ ընկերատեցական հոգւով և Հայրենի ժառանգական նախանձու առ միմեանս չունին զուսումնասիրական ընկերութիւնս, յորմէ աղբերանայ չունել և զուսումնարանս սեպհականս ի կրթութիւն կարգեալ հայկական մանկտւոյն. Թող զայս զի բոլոր անձինք ի զանազան վիճակաց հայոց չկարէին միանալ և մաքուր սրտիւ կազմել զմիաբանութիւն, այլ և եթէ ուսումնականք և ուսանողք ինքեանք գէթ կազմէին զայս ընկերութիւն ի լուսաւորութիւն ազգի, այլքն որ տարանջատ են ի նոցանէ ամենայնիւ որպէս ի վերոյ թուեալ

եմք զծաղու գան թերևս, յար և նման կատականաց արեղայից Հայոց ի հինգերորդ դարու, զոր ուսանիմք ի թղթոյ Ղազարայ Փարպեցւոյ որ առ Վահան տէրն Մամիկոնէից, այն ինչ լուան զգալուստ միոյն ի թարգմանչաց Խոսրովկի, թէ «ահա ուր գայ միւս թարգմանն» կամելով ասել թէ առ ի լուսաւորութի՞ւն ազգի. ո՞չ ապաքէն հալածանաք վախճանեցուցաք զփիլիսոփան Մովսէս և մարտ թերևս ընդ ոսկերս եդեալ արկաք ի գետ, ո՞չ ապաքէն զՂազար մերկ ողորմելի ի վանացն արտաքսեցաք յափշտակեալ և զգրեանն և զայլ ինչ նորա սեպհական, և այժմեան հակառակորդք լուսաւորութեան որդիք են առաջնոցն, որք զայս արարին.

Առ հայս Ռուսաստանի միակ գերդաստան է և այն գերապատիւ Լազարեանց, որ զօգուտն ազգի ծանուցեալ հիմնեալ է գէթ իւրովք ծախուք զուսումնարան և զտպարան, թէև ի նմա ևս գժբաղդաբար պաշտի հինն դպրութիւն, և առ հասարակ լեզուն գործական օտար է հայոց. բայց ի վերայ այսր ամենայնի իրաւունս ունի գերդաստանս այս ասելոյ ազգին. ահա մեք և վաստակք մեր. Այլ միթէ Լազարեա՞նք լցեն միայն պարտաւոր պաշտել զազգասիրութիւն, միթէ Լազարեանք միա՞կ կաղմեն զազգն ողջոյն, ո՞ւր է հոգաբարձութիւն ազգի, ո՞ւր լցեն սիրողք լուսաւորութեան, է՞ր վասն անխնայքն յորդիս իւրեանց և կորզեալ զնոսա ի գրկաց մարց արկանեն գէշագէշ ընդ գարշապարաք անիմաստութեան, տգիտութեան և միանգամայն անբանութեան. Լազարեանք միակ շատարար են համեմատութեամբ առ ազգն ողջոյն, նոքա զառաջինն բացին զԱթենեան տաճար առաջի հայկական զաւակաց, այլ թէ հետևանքն չլցեն ըստ նպատակի հիմնողին, անգատապարտ է նա, և խիղճ մտաց նորա ջինջ է քան զհայելի սուրբ, արար նա, զոր ինչ կարաց, սիրող գտաւ զաւակաց ազգի, սիրող լուսաւորութեան և հանդուցիչ տառապեալ որբոց ընդ հարկաւ տաճարին գիտութեան. Մի՞թէ չլցէ արժան տեսեալ հայոց Ռուսաստանեայց յորս գտանին մեծատունք հարըստականք զթշուառ և զողորմ՝ դրութիւն հայկական որդւոց, որք ի խնդիր աւուրն պարենի անբանացեալ չլցեն աղքատ, ողորմելի, առաջնորդեալ բնական ազգեցութեամբ քան բանականութեամբ, որ սեպհական է ամբողջ կենդանական թագաւորութեան, հոգ տանել, ժողովել, և գգուել զնոսա հայկական սիրով, ընդունել զնոսա իբրև զորդիս միոյ իսկ գերդաստանի, որում՝ և

ինքեանք պատկանէին ճանաչել զնոսա և հնար տալ առ ի լուսաւորութիւն։

Դիցուք եթէ նախնիք այժմեան Ռուսահայոց անխնամ թողեալ զայս գործ զընթացս լցին կենցաղոյս և զի՞ պիտի ներկայիցն օրինակ պար առնուլ ի նախնեաց. բնական է զի ներկայն ծնունդ է անցելոյն և ծնող ապագային, բայց և ժամանակն ունի զիւր ներգործութիւն յիւրում՝ կարգի առ հասարակ ի վերայ ենթալուսնէից, եթէ այսմ չիցէր, սապէս զպատմութիւն մարդկութեան ոչ հանդիսացուցանէր զխայտաճամուկ ծիր ի սկզբանէ անտի իւրոյ գոյութեան կամ լաւ ասել որչափ պատմութիւնն լոյս տայ մեզ, այլ ընդհակառակն ամենայն ազգք և աղինք ի բաց առեալ զԱփրիկեան և զԱսիական բարբարոսս և զմարդակերս հարաւային Ամերիկոյ փոխադրեալ են հետզհետէ ի խաւարէ ի լոյս, և այս փոխադրութիւն չէ վճարեալ լոկ օդաբաղխութեամբ, այլ զոհիւք և նուիրագործութեամբք ըստ պիտոյից հանգամանաց։ Լուսաւորութիւն՝ լուսաւորեալ ազգաց՝ գինք են անգուլ ճգնաց, կամ թէ լաւ ասել գինք արեան. իսկ հայք ի հարկէ ծայրագոյն պակասամտութեամբ մտածեն, եթէ մտածեն, թէ Նախախնամութիւնն առանց ամենայնի ի կոչմանէ ազգին աշխատութիւն հեղուցու զիմաստութիւն ի խելապատակս հայոց իբրև զանձրև յերես երկրի անձրևեալ, իսկ եթէ ոչ այսպէս, ուրեմն տարագիր է ի մտաց հայոց մինչ ի սպառ և ակնկալութիւն լուսաւորութեան, զի այլ ազգ չմարթի լինել։ Այլ այսմ ամենայնի տխուր և ամենաթշուառ վիճակի ազգին՝ միակ ճանաչի աղբիւր, զի չունի նա զլեզու. ներեսցի մեզ խոստովանել զճշմարտութիւնս մերկանդամ թէև բազումք առ տկարութեան աչաց չկարէին յայս հայել. այո՛, չունի զլեզու ասեմք վերստին, զի ունել այնպէս որպէս հայք զհին բարբառ՝ համարի վասն հասարակութեան չունել և որով վարի նա ի հասարակ կենցաղս անտեսեալ է այլ յիմաստնոց հայոց, որք չկամին անգամ զթիւ դարուցն համարեալ զգալ թէ դարս ներկայ, չէր հինգերորդ այլ իններեւտասներորդ։ Նստել ի տան յորում ճրագն եղեալ էր ընդ գրուանաւ, նշանակէ նըստել ի խաւարի և չունել զլոյս, այսպէս և ունել լեզուի հայոց համարի չունել, զի որպէս գրուանն խափանարար լինի շառաւիղաց լուսոյն ցոլանալ ի լոյս աչաց նստելոցն ի տան, սապէս ամբողջ դարք խափանարար լինին ժողովրդեան հասկանալ զլեզու առաջնոց հայկազանց։ Եւ գուցէ՞ արդեօք թշուառութիւն ինչ

վնաս որ և իցէ ազգի չարագոյն, քան զկորուստ լեզուի, որ հոգի է ազգի, որ վերջին և միակ հնար է պահելոյ զկենդանութիւն նորա, Հայք հարուածեալ են յետ բազում հարուածոց և պատժոց նաև կորստեամբ լեզուի, զոր չկամին և մանաւանդ իմաստունք նոցա չկամին յետոս դարձուցանել զնորն յարդարեալ և մշակեալ, զոր պահէր դեռ ազգն,

Կորուստ լեզուին, կորուստ քաղաքական կենդանութեան եղեալ է պատճառ կորստեան բանաստեղծական հոգւոյ առ Հայս, թէպէտ պիտոյ էր խոստովանել զճշմարտութիւն թէ Հայք և ի ծաղկեալ վիճակի քաղաքական կենդանութեան մինչ զդրացի թագաւորութիւնս ահաբեկ դղրդեցուցանէին, այսու ամենայնիւ զրկեալ էինք բանաստեղծական քանքարոյ՝ գոնէ չերևին նշխարք, թէև մնացորդք երգոց զրոս ի նախնումն բամբռամբ երգէին ի ցուցս . . . . ըստ ոմանց ապացոյց համարին բանաստեղծական յօրինուածոց, որոց լեալ կարծեն ի նախնումն, երևի ի ժամանակս նախնի Հայկազանց, այլ այս՝ կարծիք է և եթ, մանաւանդ յառաջ ի հնասիրաց առ ի զօշոտել զաչս հասարակաց։ Ըստ մեզ Հայք իբրև ժողովուրդ ոչ պատմականք (իմս դու ինձ զբառդ անձուկ նշանակութեամբ) չկարէին ունել և զայնպիսի կորովի բանաստեղծութիւնս, զորպիսիս առ այլս տեսանեմք, զի որպէս ըստ մեզ, սապէս ըստ լուսաւոր կարծեաց այլոց, աղբիւր բանաստեղծութեան ճանաչէ քաղաքական կեանքն ազգի, ուրեմն կ պատմութիւնն, Հայք ի սկզբանէ անտի ծագման թագաւորութեան Արշակունեաց գոլով ենթակայացեալ և ստրկացեալ ազդեցութեանց այլոց պետութեանց, որպէս Պարսից, Յունաց և այլոց շատ կամ սակաւ՝ հայեցեալ ի դարսն, որք անցին զնոքօք, հարկաւ պարտէին վիճակել վհատեալ և անհանգիստ հոգւոյ, որոց և բանաստեղծական բղխուածք կարող էին լինել որպէս և են ողբք, հառաչանք, կոծ և սուգ, սկսեալ ի ժամանակաց իմաստնոյն Խորենոյ՝ «ողբամ՝ զքեզ, Հայոց աշխարհ», ի ժամանակաց Շնորհալւոյն՝ «ողբացէ՛ք, եկեղեցիք» և այլն յորս, լսին գէթ վայ, կականմունք և յուսահատ հոնդիւնք մեռանողաց և այս իրաւամբք, զի բանաստեղծութիւնն հայելի իմն է, յորում՝ ցոլանան շառաւիղք կենդանութեան ազգի. անդատապարտ են բանաստեղծք մեր ի թողուլ մեզ զերկասիրութիւնս, որք տխուր յիշատակարանք էին կործանութեան մերոյ, անբնական է առն մնալ ի տուն մեռելոյ պարել որպէս ի հարսանիս, այսպէս և մուսայն ոչ

երբէք մերձենայ, եթէ ոչ շարժեալ ի հանգամանաց և ի զօրութենէ գործոյն։ Բայց այս է յաւէտ զարմանալին և ցաւելին, զի հայք ենթարկեալ ազդեցութեան չարաշուք արկածից՝ ունէին և զչարաշուք յիշատակարանս, յորոց ըղխէին բանաստեղծութիւնք արտասուեցուցիչք և վհատեցուցիչք, զի ողբք և հառաջանք, լաց և արտասուք ոչ երբէք կարեն առաջնորդել յանվհերութիւն և ի քաջութիւն, այլ ի միակ և եթ կորուստ, այն է ի կնաբարոյ վհերոտութիւն, որ համարի մահ քաղաքական կենդանութեան։ Հոգի, որով կեայ ազգն, շնչաւորէ զպատմութիւն և սա զբանաստեղծութիւն, ուրեմն որպիսի ազգ, այնպիսի և պատմութիւն, և որպիսի պատմութիւնն ըստ այնմ և բանաստեղծութիւն։ Այլ այս ամենայն հողմոց հնչիւնք էին յականջս իմաստնոց հայոց, որոց շատ և կարի շատ էր, եթէ միայն սքանչանային ընդ բառից բաղդասութիւնս ոմանց հեղինակաց յորս մանաւանդ դերբայն ի վերջոյ քան զնդիրն և կամ՝ ի գործ ածեալ էին գոյական անուանք, արմատք ներգործական և ներգործակերպ բայից ընդ նոյնաձայն բայից, որպիսի զքուն ննջել, հարկ հարկանել, գերի գերել և այլն, թող պարարեսցին քիմք դոցա և նմանապիսեաց այդունակ կերակրովք, եթէ միայն կարելի էր իրօք պարարել և կերակրել հանգոյն աղուիսուն սառուցակերի, որ զկոկորդն միայն սառուցեալ ի սառն կերակրոյն, յորովայնն զջուր և եթ արկանէր։ Առ ի՛նչ դոցա հոգալ զլուսաւորութենէ ազգի։ Հերիք է զաւակաց ազգի, եթէ միայն կարող էին իմանալ զքանի մի մեռեալ և փտեալ ի բառս հին հայախօսութեան, որք ըստ կարծեաց նոցա կարեն փոխանակել զամենայն ազգ գիտութեանց, որովք բարձր ի գլուխս պանծան Եւրոպացի մանկտիք։

Դէպ եղև մեզ երբեմն խօսիլ ընդ ուրումն հնասիրի, (որ շատ թէ փոքր շահեալ էր զվարկ ժողովրդեանն) ի վերայ խնդրոյ մատենագրութեան, և յայտնացուցանել մեր զօգտակարութիւն և զանհրաժեշտ հարկ մշակելոյ զլեզուն։ Պատուելի հնասէրն ի ջատագովութիւն բանից իւրոց յաւել մեզ ասել, թէ ազգն կործանի և չքանայ մինչ ի սպառ, եթէ նորն լեզու լոցի կիրառական ի մատենագրութեան, ուրեմն և հինն անտեսեալ, այլ ի հարցանել մեր զվասն էրն՝ շարունակեաց, թէ հայք Ռուսաստանի առեալ ի ձեռին զտաղաչափութիւնս և առ հասարակ բանաստեղծութիւնս հեղինակաց Ռուսաց, որպիսիք են Պուշկին, Ժուկովսկի, Լերմոնտով, Գոգբլ և այլն, սքանչանան և հրճուին զճաշակ

առեալ քաղցրութեան լեզուին, որ փոքր մի աղնիւ էր քան զհասարակացն բարբառ. առ մեզ հինն լեզու կրէ յինքեան զայս արժանաւորութիւն. զի աղնուագոյն է քան զկիրառականն, իսկ թէ մատենագրեալ եղեցի նոր և հասարակաց հասկանալի բարբառով, ժողովուրդն մեր զրկի ի հոգեպարար զուարճութեանց, զորս կարէր գտանել ի գրականութեան Ռուսաց և ի հին հայկական դպրութեան. Առ այսոսիկ անտեղի պատճառանս յիշեալ իմաստնոյն հայոց տուեալ զպատասխանիսն ո՛չ անարժան համարեմք զնոյն կրկնել աստանօր, մի՝ զի ժողովուրդն մեր չհասկանալով զհինն լեզուն չկարէր հրճուել և զուարճանալ, երկրորդ՝ զի հոգեկան զուարճութիւն, զոր պատճառէր ընթերցող մատենագրութիւնն Ռուսաց, չէր միայն աղբերացեալ ի յորդութեան կամ՝ ի ճոխութեան լեզուին, այլ ի բանաստեղծական գեղեցիկ մտացն, որք առ մեզ բնաւին չիք. և թէ տացեն ևս այսպիսի գաղափարք զգեստու ժողովուրդն ոչ ճանաչէ և ոչ հասկանայ, իսկ մեք գիտեմք արդէն, թէ որ ինչ անհասկանալի է ի մէնջ, չկարէ նոյն առթել զհրճուանս, զի զգայութիւն մեր ոչ ենթարկի կրաւորաբար նորին ներգործութեան և երրորդ՝ զի հնար էր հետզհետէ խօսիլ նոր հայախօսութեամբ կիրթ և մշակեալ ոճով, և զամենայն գրելիս աւանդել ազգին այնու, զոր ընթերցեալ ոչ խելամուտ լինէր գրելոցն, այլ և հրճուէր և զուարճանայր ի յոգի, և այսպէս հետզհետէ նոր ուրեմն հայանայր հոգւով և մտօք. Զկնի այսքան մերոց ձայնարձակութեանց զինդրոյ մատենագրութեանս, և զկնի կամակոր ընդդիմութեան պատուելի հայկական իմաստնոց, հրամայեալ լիցի զաչս դարձուցանել ի ժողովուրդն, և զամենայն զգայութիւնս ի լսող դարձուցեալ գործարան լսել զգանգատ նորա զհինն լեզուէ, զհին հեղինակաց, որոց տեղեակ է մտածութեանց թէ առ անձնասիրութեան և եթ անիրաւ ճէին խօսել ընդ ազգին հին լեզուաւ, անհասկանալի զբանն կացուցանելով. Ազգն ինքնին խոստովան լինի, թէ օտարացեալ է ի սեպհական գրականութենէ և օտարին ապրի ժառանգութեամբ, նա զօրհանապազ ցուցանէ այսմ առիթ գոլ, զգատապարտելի միանգամայն կարծիքդ իմաստնոց հայոց, և պահանջէ (և ունի իրաւունս պահանջելոյ, եթէ միայն մեք պահանջէաք ինման ընթեռնուլ զգրուածս մեր), զի գրուածքն մեր լիցին նմա հասկանալի, կիրթ և մաքուր նոր հայախօսութեամբ, զոր ընթերցեալ և աճեսցի բարոյապէս և աճեցուսցէ զբողբոջ լեզուին, որ նոր ուրեմն յետ երեքտասան

դարուց ձմեռան զտկեալ ի ստեղունս, և խոստանայ զպտուղ շատ տալ, թէ միայն մշակողք մշակէին զտունկն ըստ արժանւոյն, այլ հաւանական է թէ միայն հեղինակք, թէև լինէր նա երկնային ոք և անձն առ ի լուսաւորել զՀայրենակիցս պատարագեալ, ի վերայ այսր ամենայնի նորա արժանաւորութեան ոչինչ կարէր վճարել, չև ստացեալ զժողովուրդն ինքեան աջակից և ծակից. մի զի զոր կարէր հեղինակն պատրաստել վասն զաւակաց ազգի, չկարէր զնոյն տպագրեալ յաղքատ քսակէ իւրմէ ձօն հանել ազգին. երկրորդ, զի և միտք ժողովրդեանն պարտին ուղղեալ լինել յայնկոյս, յոր բևեռեալ ունին բանագէտ մարդիկ զնուրեանց միտս, այս է ի միակ և եթ նպատակ ազգային լուսաւորութեան. հեղինակն առանց ժողովրդեան և ժողովուրդն առանց հեղինակի չզօրեն ինչ առնել, այլ միացեալ ի կամն և հոգի բազում ինչ ի լուսաւորութիւն համազգեաց.

Ոչինչ անտեղի համարեմք լուսափայլել առաջի Հայկական հասարակութեան և զայլ ինչ վերաբերեալ առ լուսաւորութիւն զաւակաց. Ի հերուն հետէ սովորութիւն է առ մեզ թէ շատ և եթ փոքր այսու ամենայնիւ զհետ լինել կրթելոյ զորդիս միայն, թէև միանգամայն թիւրաթեք ուղղութեամբ. սակայն զի՞նչ և իցէ գոնէ բնական ազգեցութեամբ համարեն զայն կրթել զորդիս, տուեալ զնա առ եկեղեցական ոք սերտել անգիր զսաղմոս և զշարական և զայլ նմանապիսիս. իսկ կրթութիւն վասն գստերաց անտեսանելի է միանգամայն, երբ և կարի հարկաւորն էր ի պահպանութիւն լեզուին, ըստ որում և ամենայն լեզու համարի մայրենի, և մեք զառաջինն պապակիմք հետեալ ձայնարձակութեան մարց. ի հարկէ բարոք յոյժ լինէր, եթէ պատուելի հայրենակիցք մեր ազգասիրաբար խնամ տարեալ կորստեանս, բանային ի զանազան հայաբնակ քաղաքս զուսումնարանն վասն աղջկանց, յորս զառաջինն եթէ չէին քաղաքացիք բաւական կարգաւորել զայն ըստ օրինակի իգական դպրոցաց Եւրոպացւոց, լինէր գէթ նոր լեզու ազգային, լեզու ռուսաց, մասնաւոր թուաբանութիւն, աշխարհագրութիւն, ազգային պատմութիւն, կրօն, տնարարութիւն և կաքաւ. Բայց մինչ չիք այս ամենայն, խորհուրդ սուրբ տանք պատուելի հայրենակցաց մերոյ գոնէ ուսուցանել գստերաց իւրեանց զընթերցանութիւն և զգրութիւն ազգային անպատճառ և տալ նոցա ի վերածնութիւն, զերկասիրութիւնս գերապատիւ Ստեփաննոս վարդապետի Նազարեանց «Ա-

ռաջին հոգեղէն կերակուր հայազգի երեխաների համար» և ըստ Վարդապետարան կրօնի, և զայլ ինչ նոր տպելի նոր հայախօսութեամբ։ Քաջայոյս եմք թէ պատուելի հասարակութիւնն մեր զկնի սակաւ ժամանակաց ինքնին զփորձ առնուցու թէ ո՞րպէս աղջկունք նոցա օր ըստ օրէ սնանին և ուռճանան հոգւով, և թէ զնա՞ւրդ կրթին ի նորն բարբառ մշակեալ, յոր թէև գտանին ինչ ինչ անսովոր ականջաց նոցա, բայց ոչ երբէք սատար լինին յառաջանալոյ ի նոր հայախօսութեան և որք հետզհետէ շինեսցին և յարդարեսցին որչափ և որքան հնար գոյր առձեռն և այսպէս կրթեալ աղջկունքդ այդոքիկ մայր եղեալ երբեմն զաւակաց կարէին զնոսա հաղորդել նոր հայախօսութեան, կորզել ի բերանոյ նոցա զօտար բառից խառնմունս, ի բաց վտարել միանգամայն զթաթար, զՄաճիկ, զՊարսիկ և զայլ նմանապիսի բառս, և վարել զնոսա հայկականաւ և եթ լեզուախօսութեամբ։ Իսկ հոգատարութիւն վասն առ հասարակ դպրոցաց ի կրթութիւն և արական սեռի, որ չիք այժմ առ մեզ, հարկաւոր է անշուշտ, յորում պարտի լինել միջնորդն գիտութեան կամ այլովք բառիւք ասել լեզուն գործական՝ նորն, հասկանալի ամենայն ումեք, մի երբէք յուսացին հայք հանդիպել փրկակար լուսաւորութեան, չև զսեպհական ամբարձեալ գիտութեանց ամբարտակս առանց օտարին ձեռն կարկառելոյ առ որս զարդիս դեգերեմք մուրողաբար, եթէ կերակուր այլովք ձեռովք հասուցեալ ի բերան կարէր ունել զնոյն ճաշակ, զորպիսին զդամք, մինչ իրքդ կատարին սեպհական գործարանք, ապա և լուսաւորութիւն միջնորդութեամբ օտարին լեզոյ կարող էր ջարդել և փշրել զկեղև տգիտութեան թանձրացեալ յերեքտասան դարուց հետէ։ Ցայս ամենայն հայեցուցեալ զպատուական և զսիրելի հայրենակիցս մեր ոչ վերջանամք յառաջ բերել և զայս զի առ ի լուսաւորել զմանկտին հայկական սեպհական լեզուախօսութեամբ, պէտք գոն հայկական նորախօս մատենից, յորս աւանդեալ լիցին այն ամենայն գիտութիւնք, որք հասարակաց են այժմուս յԵւրոպայ, ուրեմն պիտի և փոքր աշխատութիւն ի կողմանէ հասարակութեան տալով աշխատասէր հեղինակաց զգիտնական քաջալերութիւնս ի շինութիւն զաւակաց իւրեանց, ուրեմն և ամբողջ հայկական ազգի, զի ի մանուանս թաքչին մեծք, զորս չկարեմք տեսանել բացերև և ոչ զյաջորդս, որք ի թագչողս խսկ թագուցեալ են ի բնութենէ։

Այլ դադարեսցին բանքս զՀայկական մատենագրութենէ, և մի լիցի մեզ ընդ վայր զժամանակն կորուսանել մինչ կարող էաք ի գործ դնել զայն մատենագրութիւն ի նոր լեզու, մանաւանդ զբնական գիտութիւնս, որք աւանդեն մեզ ի կայսերական համալսարանին Մոսկվայու. աւելորդ համարիմք նոյնպէս ասել զվանէրն ճառիս ի լեզու հին լինել, սակայն կարևոր դատիմք խոստանալ թէ վերջինն լինելոց է այս ի մէջ ի լեզու առաջնոց Հայկազանց, այլ որ ինչ այսուհետև նոր և հասկանալի ժողովրդեան համաձայն պահանջմանց ժամանակին և այլոց բիւր հանգամանաց, յորոց միջի գտանիմք մեք։ Զեմք նոյնպէս ապացոյցս թէ պատուելի հայրենակիցք մեր ընկալցին զգրածս մաքուր խղճմտանաք իբրև բղխուածք ազգասէր սրտի առանց իրիք կողմնապահութեան և կամ այլ ուխտից, որ ապականիչք էին մարդկային ազնուութեան, յուսամք թէ ջանք մեր խօսք և խոսուածք, որք Հայէին ի լուսաւորութիւն տառապեալ ազգի մերոյ ընդ երեսս երկրի, արդարասցին առաջի դատաստանի արդար և արդեամբք ազգասիրաց, չասեմք հին հեղինակաց, որոց վասն չիք ճշմարտութիւն յաշխարհի։ «Որ զշար գործէ, ատեայ զլոյսն զի մի յանդիմանեսցին գործք նորա։